







ՊՂՈՒՏԱՐՔԵԱՅ

ՔԵՐՈՎՆԱՑՒՈՑ

ԶՈՒԳԱԿՇԻՌՔ



ՀԱՏՈՐ Բ.



[illegible] p. 236

Rizzardini inv.e dis. *A. Viviani inc.*

ԳԱ.ՈՐՏԱՐԳԵԱՑ

Զուգանկիր

ՀԱՏՈՐ. Բ.



Viviani inc.

Եր. 224.

Ի Վենետիկ

Ի Սուրբն Ղազար

— 1833 —


ՊԼՈՒՏԱՐՔԱՅ

ՔԵՐՈՎՆԱՑՒՈՅ

ԶՈՒԳԱԿՇՌՈՒՔ


ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ԲՆԱԳՐԷՆ
Հ. ԵՂԻԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԹՈՄԱՃԱՆ
Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

ԱՐԴԵԱՄԲՔ ՔԱՋԱՓԱՅԼ ՍԱՊԵՏԻ
ՊԱՐՈՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ՌԱՓԱՅԷԼԻ
ՂԱՐԱՄԵԱՆ



Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

ՌՄՁԲ.



ՊԼՈՒՏԱՐՔԵԱՑ

ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

ՊԵՐԻԿՂԵԱՑ

ԵՒ

ՓԱԲԻՈՍԻ ՄԱՔՍԻՄՈՍԻ

2 1

ՊԵՐԻԿՂԵՍ

ՕԵԿՍ ոմանս բազմահարուստս 'ի Հռոմ քաղաքի տեսեալ երբեմն Կեսար, զի ակռունդս և կորիւնս կապկաց 'ի գիրկս իւրեանց բարձեալ բերէին և փայփայեալ գգուէին, 'ի ձայն արդեօք հարցանէր՝ եթէ մանկունս արդեօք ո՞չ ծնանիցին առ նոսա կանայքն: Կարի իմաստութեամբ իբրև իշխան խրատէր հրահանգէր, որք զանկանելից բնաւորեալն 'ի մեզ զսէր և ըղ-գութ և զգորով առեալ յանասունս ծախեսցեն՝ զոր պարտէին առ մարդիկ: Արդ՝ թէպէտ և ազգդ շանց և կապկաց ուսումնասէրք հանդիպեսցեն լինել և զննասէր, այլ հոգիս մեր այս անդատին 'ի բնութենէն մկձակեալ այնմ՝ պատճառս ունիցի արդեօք եպերել զորս միանգամ չարաչար վարեսցին նոքաւ լսել և զննել

զուամպէտսն և զվայրավաճառսն, անփոյթ ըզ-
գեղեցիկսն առնելով և զպիտանիսն։ Քանզի
զգայարանաց մերոց այսոցիկ՝ այն որ առ-
ձեռն յինքեանս ձգել ընտաւորեցան զա-
ռարկայիցն տպաւորութիւն՝ որ զինչ և ի-
ցէ, թերևս հարկ 'ի վերայ կայցէ՝ զամե-
նայնն միանգամայն որ երևէինս՝ եթէ 'ի պի-
տանեաց իցէ և եթէ յանպիտանեաց՝ դի-
տել զննել։ Սակայն զմիտսն և զբանն՝ այր
այր իւրաքանչիւր իշխան է՝ որպէս և կամի՝
վարել 'ի պէտս. և ընտաւորեալ իսկ է ցանգ
ճոխաբար իշխանութեամբն առնուլ և շըր-
ջել զանձն՝ որպէս և զիարդ հաճոյ իցէ
նմա։ Ուստի և պարտ և արժան է նմա լա-
ւագունիցն պատկառ կալ, զի մի միայն
տեսցէ և զննեսցէ, այլ և 'ի զննութենէն
ճարակեալ սնանիցի։ Քանզի զորօրինակ
աչաց մեր այս՝ փարելն յոյժ է երանգ գու-
նոցն ծաղկափթիթ և բերկրական՝ զուար-
թագին գործեալ զանսանելիսն և ճարա-
կեալ, սոյնպէս և զխորհուրդ մտաց մերոց
արժան է առնուլ ածել 'ի տեսութիւնս
և 'ի զննութիւնս, որք հանդերձ բերկրու-
թեամբն առ անկանելից բարւոյն զնա առեալ
հրաւիրեսցեն։ Իսկ այս տեսութիւնք հասն
բարեաւ կան 'ի գործսն՝ որ յառաքինու-
թենէն անտի իցեն. որք 'ի պատմութեան
իւրեանց նախանձ գեղեցիկ և յօժարու-
թիւն ազդոյ 'ի ներքս բերեն բաղձալեն նը-
մանող լինել այնոցիկ։ Այլ է ուրեք՝ զի
թէպէտ և հիացեալ սքանչանայցեմք ևս
ընդ գործն, ոչ անդէն զհետ գալ ընտա-

ընցաւ և եռանդն ցանկութեան 'ի գործել զնոյն. է բազում անգամ և զհակառակն ուսանել, զի խնդամբք ուրախացեալ ընդ գործն և անարգեալ արհամարհեմք զգործաւորն, ըստ որում յանուշունս իւղոց և յերանգս ծիրանեաց. քանզի հեշտացեալ բերկրիմք 'ի նոսա, այլ զներկարարսն և զիւղագործսն 'ի ծառայականաց կարգի դնեմք և 'ի տաժանելեաց։

Վասն որոյ և գեղեցիկս ուրեմն Անտիսթենէս՝ լուեալ եթէ քաջ քնարահար է Իսմենիաս, ասէր. «Այլ սակայն և այր տաժանականիր է նա. զի թէ այնպէս չէր, քաջ քնարահար չլինէր արդեօք»։ Իսկ Փիլիպպոս առ որդին իւր՝ որ 'ի կոչունս իմն ուրեք բերկրեալ նուագս դայլայլիկս երգէր և արուեստականս, ասէ. «Ոչ ամաչե՞ս դու այդպէս գեղեցիկս երգել»։ Քանզի շատ է առն թագաւորի պարապել ունկնդիր լինել նուագածուաց. և շատ արդեօք շնորհս ընծայեսցէ Մուսայիցն, եթէ ինքնին 'ի զնին կայցէ՝ յորժամ այլք մրրցեսցին յայնպիսեաց անուանս։ Այլ եթէ և ինքնին պարապեսցի 'ի փանաքիսն յայնոսիկ, վկայ այնուհետև զիւրոյ խօթասարտութեան 'ի գեղեցիկսն՝ ինքնին 'ի նեղս ընծայէ ջանեալ յանպիտանսն յայնոսիկ։ Եւ արդեօք ոչ ոք 'ի քաջամոյն երիտասարդաց՝ եթէ երբեք հայեսցի 'ի Պիզա յակն արկանիցէ զԱրամազդն, ցանկասցի լինել Փիդիաս. կամ թէ զՀերայն տեսեալ յԱրգոս՝ փափագեսցի լինել Պողիւկղետոս. և

ո՛չ դարձեալ բաղձայցէ լինել Անակրէոն, կամ Փիլեմոն, կամ Արքիղոքոս, թէպէտ և բերկրեալ հեշտասցի նա ընդ քերթուածս նոցա ։ Քանզի թէպէտ և գործն ինքնին իբրու գեղեցիկ զուարճացուցէ, սակայն ո՛չ վասն այնորիկ և հարկ 'ի վերայ դնէ՝ գործողին փութալ լինել նմանող ։ Ուստի օգտեն և ոչինչ այսոքիկ տեսանելեացն. քանզի ոչ ձգեն 'ի գեղեցիկ նախանձ նմանողութեան, և ո՛չ յեռանդն շարժեն դիմագրաւ բուռն հարկանել 'ի նմանօրինակ գործս ։ Սակայն առաքինութիւնն ինքնին 'ի գործս իւր արագ արագ բնաւորեցաւ վառել. որպէս զի միանգամայն և զարմանալ հիանալ ընդ գործսն, և նմանող նախանձաւոր լինել գործելեացն ։ Քանզի 'ի բարիս բախտին սիրեմք ժառանգել և վայելել. իսկ յառաքինութեանն՝ սիրեմք գործել. զառաջինսն կամիմք յայլոց առնել, իսկ զվերջինսն՝ զի այլք առ 'ի մէնջ կալցեն ։ Քանզի գեղեցիկն առ ինքն հզօրապէս ձգեալ յանդուցանէ, և եռանդն գործունեայ անդէն ծնանի 'ի ներքս. և այլ յայլմէ գործէ զտեսողն ո՛չ նմանողութիւն, այլ նովին իսկ պատմութեամբ գործոյն յօժարամիտ ընծայեցուցանելով զկամսն ։

Այս և մեզ ինքնին բարուոք թուեցաւ պարապել յարձանագրութիւնս վարուց. և զայս առաջիկ տասներորդ Գիրս կարգեցաք, զվարսն Պերիկղեայ և զՓաբիոսի Մաքսիմոսի, այն որ մարտս եդեալ կռուեցաւ ընդ Աննիբաղայ. և ունի այս զարանցն՝

որ միմեանց հանդուժանօղք գտան յայլ-
ւոյ ինչ առաքինութիւնս, իսկ մեծապէս 'ի
հեզութեան և յարդարութեան և 'ի գի-
տել տանել համբերութեամբ զապաշնորհ
զկիրսն զիւրեանց ժողովրդոց և զիշխանակ-
ցաց, մեծապէս օգտակարք լինելով իւ-
րեանց աշխարհին։ Այլ թէ մեք ուղղա-
պէս արդեօք եկաք 'ի կշռութիւնս յայս,
'ի դէպ իցէ գտանել 'ի գրելոցս առաջիկ։

Քանզի էր Պերիկղէս յԱկամանտեան
ցեղէ, և 'ի Քողարգեան ժողովրդենէ, ազ-
գաւ և զարմիւ ըստ երկաքանչիւր ևս մա-
սին՝ առաջին և բարձրերէց։ Քանզի Քսան-
թիպպոս՝ որ 'ի Միւկաղէ վանեաց եհար
զզօրավարս արքային, ած 'ի կին զԱգարիս-
տէ զԹոռն Կղիսթենեայն, այն որ վանեալ
հալածեաց զՊիսիստրատեանսն, և քաջա-
ցեալ բնաջինջ արար զբռնաւորութիւնն.
և օրէնս կարգեաց եդ, և քաղաքականու-
թեան կարգ հաստատեաց քաջավայելուչ 'ի
մի միաբանութիւն և 'ի փրկութիւն քաղա-
քին։ Արդ Ագարիստեայ մօր նորա թուէր
իմն 'ի քուն՝ ծնանել առիւծ. և յետ ա-
ւուրց սակաւուց ծնաւ նա զՊերիկղէս՝
ողջ և անվթար յամենայն դիտակս մարմ-
նոյն, այլ 'ի գլուխն կարի երկայնաձիգ և
անչափակից։ Եւ առրին աղագաւ գոգցես
ամենայն պատկերք արձանաց Պերիկղեայ
'ի սաղաւարտս պատուրեալ պահեն ըզ-
գլուխն. քանզի ոչինչ կամեցան Ճարտարք
արուեստին՝ որպէս հաւանեալս եմ՝ նշա-
նակել զայլն։ Իսկ Ատտիկեցի քերթողք

կոչեցին զնա Սխինոկեֆալոս, այն է՝ Ծովա-սոխագլուխ. Քանզի զՍխինոս, այն է՝ Ծովասոխ, է ասելոց՝ զի կոչէին նոքա և Ատտիկեցիք: Իսկ կատակերգակ քերթողն Կրատինոս 'ի Քերոնեան քերթուածին այսպէս ասէ.

Ազգ անգղ Հերձուածն, անգղ և Կռոնոս
  հնաւուրցն այր,
Գիրկս տան միմեանց, եկեալ զուգին
  սխրատապատօր.
Իսկ 'ի խառնիցն ըղբըռնաւոր
  վեհագըն ծընեան,
Որում և դիք՝ Գըլխահաւաք 1
  անուն կարդան:

Եւ դարձեալ միւսանգամ 'ի Նեմեսեան քերթուածին, այսպէս կատակէ.

"Արի եկ, ով Արամազդ, վանատուր և երանելի":

Զնոյն և Տելեկլիդէս է զի ասէ, եթէ Պերիկլէս 'ի բազմադէմ զբաղմանց գործոյն 'ի վարանս մնացեալ, այնպէս բազմեալ կայ 'ի քաղաքին՝ Ծանրագլխեալ. և է զի ասէ, եթէ 'ի Մետասանանկողնեան գլխոյ անտի աղմուկ անհնարին միայն 'ի դուրս յարձակի: Իսկ Եւպողիս 'ի Դեմեան քերթուածին հարցուածս արարեալ վասն միոյ միոյ յառաջնորդացն անտի՝ որ 'ի դժոխոց 'ի վեր ելեալ գային, յորժամ 'ի վերջէ ամենեցուն լուաւ զանունն Պերիկլեայ, ասէ:
"Դու մեզ աւասիկ զնախագլխաւորն Անդընդականաց ածեալ բերեր":

Բայց վարժապետս Պերիկղեայ յերաժըշտականն բանագիտագոյնք 'ի մատենագրաց ասեն կարգեալ զԴամոնիդ. զորոյ զանունն առոգանանել սովոր է' ասեն' սղելով զառաջին վանկն: Իսկ Արիստոտել ասէ, եթէ առ Պիւթոկղիդեայ վարժեցաւ Պերիկղէս յերաժշտականն: Այլ թուի թէ Դամոնիդ' որ խորամանկ էր յոյժ զերաբանակցեալ, ընդ անուանբ երաժշտութեանն առեալ պատրուակէր 'ի ռամկէն զքաջարուեստութիւն անձինն. և զորհանապազ մերձ կացեալ առ Պերիկղէս լինէր առ մի որ յաղթողաց' օծեր խաղեր զնա 'ի քաղաքականն և մարզէր հրահանգէր: Այլ սակայն ոչինչ կարաց Դամոնիդ ընդ քողով քնարին խուսալ ողջոյն ծածկել զանձն, այլ երբև այր կարի մեծամտեալ և բռնաւորասէր' խեցեկոյր վճռով աքսորական եղև, և առ կատակերգակ քերթողացն պատուր նա զբօսանաց խաղուց: Ըստ որում և Պղատոն կատակերգակ 'ի քերթուածին խօսեալ զայր ոմն 'ի մէջ առեալ ածէ' հարցանել զԴամոնիդ' զորինակ զայս. "Այլ դու առաջին ինձ զայն ասա, աղաչեմ զքեզ. Դու ըստ ինքեան' որպէս համբաւեն' ով Կիրոնիդ 2, սնուցեալ մարզեցեր զՊերիկղէս":

Աշակերտ եղև Պերիկղէս և Զենոնի Եղէացւոյ, որ իմաստասիրեալ բնախօսէր խորս զՊարմենիդեայ. և 'ի պայքարս բանից այնպիսի բնաւորեցաւ նա վարել զփինակ հերքման, որպէս զի և 'ի վարպետս անելու առնել պատշաճէր զհակառակորդն.

ըստ որում և Տիմոնն Փլիասիոս ասաց վասն այսորիկ այսպէս. «Ցերկպաքանչիւր եա լեզուն 3 մեծազօր Զենոն և ոչ խաբեբայ, հնարագէտ հնարիմաց յամենայնի»: Իսկ որ բաղուամն կենակից կենցաղակից եղև Պերիկղեայ, և մեծապէս պերճ և արդոյ յարդարեաց զնա, և խորհուրդս կորովամիտս համեմատոյ ուսոյց նմա ատենաբանել առաջին ժողովրդեան, և զխոմհն 'ի վեր առեալ 'ի ծայր անդր հասոյց զշուք և ըզփառս վարուց նորա, էր ինքնին Անաքսագորաս Կղազոմենացի: Զսա մարդիկ ժամանակին անուանեալ կարդային Միտք. զի ոչ միայն զքանչացեալ էր մեծիմաստ և առաւելահրաշ հանճար առն 'ի բնախօսել նորա, այլ զի և նախ քան զամենեսեան՝ սա այս Անաքսագորաս ոչ զդիպուածն և ոչ դարձեալ զհարկն եդ սկիզբն և պատճառք կարգի տիեզերաց, այլ Միտս ինքն սուրբ և յստակ և անխառն, որ զատուցեալ և որոշեալ իցէ զհամանմասունսն 'ի խառնել շփոթել նոցա ընդ այլոցն ամենայնի: Ընդ սա մեծապէս զարմացեալ էր ինքնին և Պերիկղէս, որ և լի և պատարուն վարժեալ 'ի սմանէ 'ի վարժս երկնայնոցն բնագիտութեանց և 'ի տեսաս բանից վեհագոյնս, արդեօք ոչ միայն միտս կորովիս ժառանգեաց անձին, և ատենաբանութիւն բարձր և սուրբ 'ի բանդագուշեալ բեմբասացութենէ ռամկին, այլ և պերճութիւն գիտակի երեսացն անխորտակելի 'ի ծաղր. և հեզաքայլ ընթացքն,

և յարդարարուն պատուանուանն, և պարկեշ-տութիւնն 'ի խօսս՝ անվրդով յամենայն 'ի կերպս, և հաստատուած ձայնին հեշտ և անշա-ռաչ, և որ ինչ միանգամ 'ի սոցին սակի, առ հասարակ զամենեսեան սքանչելապէս յափշտակութեան կրթէր։

Է՛ր երբեմն՝ զի Թշնամանօք և յերգս ընդդէմ արձակէր Պերիկղեայ այր ոմն 'ի արհեստից և 'ի սառահակաց զաւուրն ողջոյն. լսէր Պերիկղէս և համբերութեամբ տանէր լռիկ և կայր միայն անդէն 'ի հրապարակին՝ պարապելով միանգամայն 'ի գործ ինչ իւր կարևոր։ Իսկ ապա յերեկոյանալ աւուրն դնէր երթալ գնայր 'ի տուն իւր մեծապէս պարկեշտութեամբ. զհետ իւր ունէր և զինւոն զայն այր՝ որ 'ի Թիկանց կոչէր հայ-հոյութիւն զամենայն Թափէր 'ի Պերիկ-ղէս։ Իբրև հանդերձեալ էր մտանել 'ի ներքս 'ի տունն, քանզի խաւար էր՝ հրա-մայեաց միում ումեք 'ի ծառայիցն լու-սանել 'ի ձեռս, և յուղարկաւոր մինչև 'ի տուն անդր առն ածել տանել զնա։ Այլ քերթողն Յովն ասէ՝ եթէ գոռոզ և փքու-ռոյց էր Պերիկղեայ կենսակցութիւնն. և ընդ մեծապանծ պարծանաց անձինն՝ խառն էր և արհամարհել և անդոսնել զայլովք. Իսկ զԿիմոնինն 'ի գովութիւն առնու զքա-ջավայելչութիւնն և զքաղցրութիւնն և ըղ-շնորհաշուք զոխային 'ի քաղաքավարութեան նորա։ Այլ Թողցուք մեք զՅոնն, այն՝ որ իբրու զՈղբերգականին վարժս՝ խնդրէ զի և առաքինութիւնն ինքնին կալցէ ինչ մի

յեղըփծաստանական մասնէն : Իսկ որք ըզ-պերճութիւնն Պերիկղեայ փառատենդրու-թիւն կոչէին և գոռոզութիւն, խրատէր զնոսա Զենոն՝ զի և նոքա յայնպիսեաց փա-ռատենդրութեանց 'ի դէմս բերցեն. որպէս զի և այդ կեղծաւորել՝ տակաւ գաղտաբար 'ի ներքս սպրդեսցուսցէ զդեղեցիկ նախանձ զբարեացն և զսովորոյթն : Այլ ո՛չ զայսո-սիկ միայն պտղաբերեաց Պերիկղէս 'ի կե-նակցութենէն Անաքսագորայ, այլ թուի թէ և սնապաշտութեանն գլխովին գեր 'ի վերոյ գտաւ. որ 'ի միջօդէից սաստի երևու-թից արհաւիրս գործէ 'ի նոսա՝ որ միան-գամ անգէտքն իցեն նոցուն պատճառաց, և յաստուածականն անդր զարհուրեալք 'ի վեր հանիցեն զքանն և տագնապեսցին վասն անփորձութեան իւրեանց. զոր բնա-խօսական բանն 'ի բաց մերժելով փոխա-նակ ահաբեկ և ոգեւանջ սնապաշտու-թեանն՝ զանդորրաւէտ բարեպաշտութիւն 'ի ներքս առեալ ընծայէ հանդերձ գեղե-ցիկ յուսովն :

Այլ պատմեն՝ եթէ անգամ երբեմն առ Պերիկղէս 'ի գաւառէն միեղջիւր գլուխ խոյի : Իսկ անդամանոր գուշակն Լամպոն ա-նուն՝ իբրև յանկն տեսանէր զեղջիւրն զպաղթ և զհզօր բուսեալ 'ի միջակէ անտի ճակա-տուն, ասէր՝ եթէ քանզի կրկին են 'ի քա-ղաքին պետութիւնք հզօրեալք՝ Թուկի-դիդեայն և Պերիկղեայն, 'ի միում ումեք եկեալ ամփոփեսցի տէրութիւնն՝ առ ո-րում գտաւ նշանդ այդ : Իսկ յայնժամ

Անաքսագորասու ընդ մէջ կարգեալ դիպուածին՝ ցուցանէր յայտնի, որ ուղեղ գլխոյն բովանդակ չէր լցեալ զխելապատականն. այլ սրածև երկար ձու յամենայն կողմանց ամանոյն 'ի մի գործեալ ժողովեալ կայր 'ի վայրն՝ ուստի արմատք արձակեալ էին եղջերին: Եւ զարմանացաւ յայնժամ Անաքսագորաս՝ յորոց մերձն կային. իսկ յետ սակաւուց և Լամպոնին ինքնին գլխովին, յորժամ անկաւ ընկաւ Թուկիդիդէս՝ և առհասարակ զտէրութիւն քաղաքին զօրութեամբ կալաւ Պերիկլէս: Այլ ոչինչ արգելու՝ որպէս ասա կարծեմ՝ եթէ և երկոքին ևս քաջապէս ընթացան՝ բնախօսն և գուշակն. մինն պատճառի իրացն ճշգրիտ 'ի վերայ եկաց, և միւսն՝ վախճանին: Քանզի բնախօսին պաշտօն այն էր, գիտել՝ եթէ յինչ պատճառաց ծագեալ իցէ, և զիարդ առաջեաց բուսեալ իցէ. իսկ գուշակին՝ նախապատուամ լինել, առ ինչ այնպէս բուսեալ իցէ, և զի՞մ իմիք առաջեաց նշանակ իցէ: Իսկ որք ասեն՝ եթէ գիւտ պատճառին բարձումն է նշանին, այնպիսիքն ոչինչ խելամուտ լինին՝ եթէ 'ի միասին ընդ աստուածայնոցն նշանս և զարուեստականսն 'ի նշանակաց 'ի միջոյ 'ի բաց բառնան. քանզի որում զղօղանն ձայն աղմկելոց և զլոյս լապտերաց և զարեգականն ժամացուցաց զստուերացուցութիւն ալայքաց. քանզի մէն մի 'ի սոցանէն ունի իւր պատճառս և ճարտարութիւն արուեստի, սակայն և կարգեալ կայ լինել 'ի նշանակ: Այլ այդ պայքարք Թերևս այլում

տեղւոյ և ժամանակի թողլը եղեն 'ի ճառել ճշգրտագոյնս ։

Բայց Պերիկղէս մինչդեռ տակաւին երիտասարդ էր, մեծապէս յոյժ պատկառ կայր ժողովրդեան ։ Քանզի թուէր իմն զՊիսիստրատեայ բռնաւորի զկերպարանն յանձին բերել. և քանզի և ձայնն քաղցր էր Պերիկղեայ, և լեզու նորա դիւրահոլով յոյժ 'ի խօսելն և արագաթև, վասն այսոցիկ նմանութեանց այսպ՝ որ կարի ծերագոյնքն էին 'ի քաղաքին, զարհուրեալք իմն էին ։ Եւ զի ընչաւէտութեամբն և զարմիւն յոյժ ականաւոր էր Պերիկղէս, նաև բարեկամագոյնք 'ի բարեկամացն զօրաւորք և յաղթէք էին, երկուցեալ զանգիտէր 'ի խեցեկոյս վճռոյ անուն տարագրութեանն. ուստի և 'ի քաղաքական իրս ոչինչ լինէր միջամուխ, այլ 'ի մարտս պատերազմի այր քաջ էր նա և արի և դիմադրաւ 'ի վտանգս ։ Իսկ իբրև մեռաւ Արիստիդէս և վտարանդի եղև Թեմիստոկղէս, և Կիմոն ինքնին բազում ժամանակ զբաղեալ կայր 'ի մարտս արտաքոյ Եղլադայ, այնուհետև Պերիկղէս չոգաւ առ ժողովուրդն, և փոխանակ մեծատանց և սակաւուց ընտրեաց առ յինքն զաղքատութիւն խուժանին և զաղքատացն՝ հակառակ բնոյս բարուց անձինն՝ որ ռամկական ամենևին չէր ։ Այլ որպէս հաւանեալս եմ՝ երկուցեալ զանգիտէր զի մի բռնաւորութեան ինչ կարծիս 'ի ներքս տացեն վասն նորա ։ Եւ զի տեսանէր ևս զԿիմոն կուսակից աւագացն,

և մեծապէս սիրելի արանց լաւաց և առա-քինեաց, միաբանեցաւ ինքն 'ի կողմն ռամկին՝ անդորրութիւն անքոյթ հանդերձել ան-ձին, և բազուկ բառնալ ընդդէմ Կիմոնի. և անդէն վաղվաղակի՝ և այլ ևս կարգ-քաղաքավարութեան կենաց սահմանեաց եդ անձին իւրում: Քանզի տեսանէին զանդ զՊերիկղէս 'ի քաղաքին ընթացեալ 'ի միում անդ պողոտայն՝ որ հանէր 'ի հրապարակն և յատեան խորհրդոյն: Դադա-րեալ և զհրաւիրանս կոչնոց և ընթրեաց՝ և որ ինչ յայսպիսեաց առնի զամենայն հիւրամեծարութիւն և զկենակից քաղա-քավարութիւն միանգամայն կարճեաց: Որպէս զի և զհարուստ ժամանակն զայն զիւրոյ իշխանութեանն 'ի քաղաքին՝ և ոչ առ մի ոք 'ի բարեկամաց անտի իւրոց եր-բեք չոքաւ նա 'ի կոչունս և յընթրիս, բայց միայն 'ի հարսանիս եղբօրորդւոյն իւրոյ Եւրիպտողեմայ. և եկաց նա անդանօր մինչև 'ի ճաշակ նուիրացն, ապա ել վաղ-վաղակի և գնաց: Քանզի տաժանելի հիւրա-մեծարութիւնք բնաւորեցան նկուն առ-նել զամենայն սերձութիւն. և 'ի կենա-կից քաղաքավարութիւնս գժուարին իցէ արդեօք պահել զծանրաբարոյութիւն՝ որ արդեայ բնաւորեցաւ ընծայել զունողն իւր:

Այլ՝ թէպէտ և 'ի ճշմարիտ և 'ի սոյգ առաքինութեան՝ առաւել տեսանելն ա-ռաւել են գեղեցիկ երևի, ուստի և արք բարիք և առաքինիք ոչ ինչ այնպէս զարմա-նալիք են օտարացն, որպէս որոց միանգամ

զօրհանապազ կենակիցք կենցաղակիցք են նոցա. այլ նա յանդուղ կենակցութենէ ռամկին խոյս տուեալ փախչէր, զի մի թերևս յագեալք յափրասցին. առ այս՝ և ոչ վասն ամենայն ինչ իրաց խօսէր ընդ նոսա, և ոչ դարձեալ ցանգ երևէր նա 'ի մէջ բազմութեան ժողովոյ. այլ (իբրու զեռամթի նաւն Սալամինոյ՝ ասէ Կրիտողայոս) վասն մեծամեծ պիտոյից 'ի ներքս ընծայէր զանձն. իսկ զայլ ինչ իրս՝ 'ի բարեկամացն ձեռս և 'ի հռետորացն մննդակցաց իւրոց 'ի գլուխ տանէր: 'Ի սոցանէն զմին ասեն լեալ և զԵփիալտէս, այն որ եղծ քակեաց զտէրութիւնն Արիսպագին խորհրդոյ, առատ և անապակ՝ ըստ առատացութեանն Պղատոնի՝ մատռուակելով ազատութիւն քաղաքացեացն. որով որպէս Կատակերգակքն ասեն՝ քերթողք՝ իբրու զերիվար սէգ սատամբակեալ այնուհետև խուժանն, չառնոյր յանձն հպատակ կալ իշխանութեանց. նա՝ և զԵւբիաս խածատէր, և 'ի կղզիս անդր վազս առեալ ճախրէր:

Արդ կամեցեալ Պերիկղէս՝ ընդ քաղաքավարութեան կենացն և ընդ մեծութեն հանճարոյ մտացն ներդաշնակել՝ իբրու նուագարան՝ և զյեղանակ ճարտարախօսութեանն, բազում անգամ 'ի մէջ առեալ մեկնէր զԱնաքսագորայ վարդապետութիւնն. և իբրու հռետորական շուրջ ոսկեալ երանգ՝ այնպէս առեալ դնէր զբնախօսութիւնն: Քանզի այն բարձրա-

խորհուրդ համաձայն նորա՝ զամենայնն միան-
գամայն 'ի գլուխ տանող, որպէս տատանա-
ծայրենն ասաց Պղատոն, 'ի միասին ընդ բա-
ջանոյն բնութեան բարութեանն՝ մեծապէս օժան-
դակեալ 'ի բնախօսութեանն վարժից, և
անդուստ զդէպսն և զդէպեցիկն ածեալ
յարուեստ ճարտասանութեանն, յորժ
գերազանցեալ զամենեսեանն. վասն այսո-
րիկ և մականուանեալ զնա Ողիմպիոս, որպէս
ասեն: Թէպէտ և կէսք համարին՝ եթէ 'ի
պատճառս շինութեանցն՝ որովք զարդա-
րեաց զքաղաքն. և կէսք զարտաքոյ եթէ 'ի
պատճառս զօրութեան կառավարութեանն 'ի
քաղաքին և 'ի պատերազմի զօրաց, անուն կար-
դացին նմա Ողիմպիոս: Այլ ոչինչ արգել-
լու՝ եթէ շատ ինչ էրք զատն զուգընթացք
զնոյն փառս անուանն կարդացաւ առաւել ասէնն:

Բայց Կատակերգակք առասպելանք քեր-
թողաց ժամանակին, որ յանկարծակի՝ դար-
ձեալ և ընդ կատակս՝ ձայնս շատ արձա-
կէին 'ի Պերիկղէս, յայտ առնեն եթէ յա-
ւէտ 'ի պատճառս ճարտարախօսութեանն՝
այս մականուն եղաւ նմա. քանզի ասեն
այսպէս՝ եթէ յատենաբանել խօսուն Պե-
րիկղէս որոտայր և փայլատակէր, և ահա-
գին շանթ կայծական բարձեալ ունէր 'ի
լեզուի իւրում: Եւ առ այս 'ի յիշատակ
բերեն և զխօսս զԹուկիդիդեայ որդւոյն Մե-
ղեսեայ, զոր ասաց նա ընդ խաղ յաղագս
հզօր ճարտարախօսութեանն Պերիկղեայ:
Քանզի այս Թուկիդիդէս էր 'ի քաջաց և
յառաջնեաց արանց, և շատ ժամանակ

հակառակ ընդդէմ ամբոխնայր Պերիկ-
ղեայ 'ի քաղաքականութեան մասին. Իբրև յաւուր միում հարցանէր զնա Արքիդամոս Թագաւոր Լակեդեմոնացւոց, արդեօք ո՛ որ 'ի նոցանէն իցէ քաջ գօտեմարտիկ, Պերիկղէս, եթէ ինքն, ետ պատասխանի և ասէ. « Մինչ ես ինքն գօտեկռուեալ ընդ նմա և յաղթեալ՝ զգետնեմ զնա, նա զիմախօսեալ պայքարի՝ եթէ չեմ անկեալ, և յաղթէ. և 'ի նոյն ածեալ հաւանեցուցանէ զտեսողսն »: Այլ սակայն և ինքնին Պերիկղէս յոյժ պարկեշտացեալ և զգոյշ էր 'ի բանս. որպէս զի և ցանգ յելանել իւրում յատեան հրապարակախօսութեան, յաղօթս կայր առ դիս՝ զի մի ինչ Թերևս յակամայ կամս բան և զրոյց ելցէ 'ի բերանոյն անյարմարադիր յաւաջիկայ պէտսն: Բայց արձանագրութիւնս բանից ոչինչ եթող մեզ Պերիկղէս՝ բաց 'ի վճռոց հրովարտակաց իւրոց. և յիշատակին նորա ինչ ինչ բանք նուազունք յոյժ, ըստ որում այն՝ զի խրատ տայր նա, Զեգինէ 'ի բաց առնուլ 'ի Պիրէասէ՝ իբրև ղէիծ աչաց. և այն դարձեալ զոր ասէր, եթէ՝ Ահաւասիկ թուի ինձ նշմարել զմարտն, որ յառաջադէմ խաղայ 'ի Պեղոպոննիսոսեայ: Եւ էր երբեմն՝ զի Սոփոկղէս զօրավար գոլով ընդ Պերիկղեայ նաւէր 'ի միասին, և սկսաւ Սոփոկղէս 'ի գովութիւն առնուլ մանուկ մի գեղեցիկ. առ որ ասէր Պերիկղէս. Զօրավարին պարտ է՝ ոչ ձեռացն միայն անարատ ունել, ո՜վ Սոփոկղէ, այլ և զաչս: Իսկ Ստեսիմբրոտոս պատ-

մէ՝ եթէ յորժամ Պերիկղէս 'ի բեմէ ան_ տի ներբողիւ գովեստ էր զմեռեալսն 'ի Սա_ մոս, ասաց՝ եթէ անմահացեալ նոքա իբրև զաստուածս. քանզի մեք զնոսին՝ ասէ՝ զաստուածսն ոչինչ տեսանեմք, այլ պա_ կային 'ի շքոյն զոր ունին և 'ի բարեաց ան_ տի զոր ժառանգեն՝ խելամուտ լինիմք ե_ թէ անմահք են նոքա. արդ զայդ ամե_ նայն մեք 'ի ներքս ընծայեմք ասէ՝ ամենե_ ցուն նոցա, որ միանգամ վասն հայրենի աշխարհին եդին զանձինս իւրեանց:

*Այլ քանզի Թուկիդիդէս հաստատու_ թեամբ գրէ, եթէ ազնուապետական էր քաղաքականութեան կարգն Պերիկղեայ, և անուամբ չափ միայն էր ռամկապետու_ թիւն, իսկ արդեամբքն՝ միոյ առն իշխա_ նութիւն՝ որ նախաթոռ էր 'ի քաղաքին. իսկ և այլք բազումք ասեն՝ եթէ առաջին 'ի նորա ձեռս խուժան ռամկին ժառան_ գեալ կալաւ անձին զվիճակս գետնոյն և զհասս տեսարանացն և զպաշխս վարձուցն, և չարաչար ապա սովորեցաւ՝ և վասն օրի_ նադրութեանցս այսոցիկ դարձաւ նա 'ի շռայլութիւն և 'ի զեղխութիւն, այն որ պարկեշտացեալ յառաջագոյն՝ և ձեռօք իւրովք պաշտէր զօրապահիկն. մեք յար_ դեանց անտի գործոցն խելամուտ լիցուք պատճառի փոփոխութեան Պերիկղեայ: Քանզի անդստին 'ի սկզբանէն՝ ըստ որում և կանխեցաք ասացաք՝ հետամուտ 'ի մէջ եկեալ Պերիկղէս ընդդէմ փառացն Կի_ մոնի, խնդրեաց յինքն զժողովրդն յան_*

կուցանել: Այլ սակայն նկուն եղեալ յանչաւէտութենէն Կիմոնի և 'ի ճոխութենէն, որով նա խնամ ածեալ սփոփէր զաղքատս, և ընթրիս հանապազորդեայս պատրաստէր Աթենացւոց կարօտելոց, զարձեալ և զծերս հանդերձէր զգեցուցանէր. առ այս՝ և յանդոց իւրոց և յագարակաց 'ի բաց բարձեալ էր զցանգո պատուարացն, զի ում միանգամ կամք իցեն՝ քաղեսցեն առցեն զպտուղս նոցա: Ցայսոսիկ ապա անձեռնհաս Պերիկղէս հաճոյանալ ռամկին, դարձաւ բուռն եհար նա զբաշխելոյ զդրամսցն հասարակաց, որպէս և զհաղորդ խորհրդոյ էառ նմա Դեմոնիկիդէս Ցոփացի՝ որպէս պատմէ Արիստոտէլ. և վաղվաղակի 'ի տուրս դրամոցն տեսարանաց և դատաստանարանաց և այլոց ևս պարգևաբաշխութեամբք և ծրիւք կաշառեաց զխուժան ամբոխին, և 'ի նոցա ձեռն ամբարձաւ ընդդէմ Արիսպագին խորհրդոյ, յորում և ոչ միան և բաժին ունէր նա. քանզի չէր նմա վիճակեալ լինել ոչ իշխան ոք և ոչ յօրէնսապահաց անտի ոք, ոչ արքայ էր 'ի վերայ զոհիցն, և ոչ զարձեալ առաջնորդ պատերազմի. քանզի յայս աւագութեանց վիճակաւ տային 'ի ձեռն ըստ վաղնջուց սովորութեանն, և որք միանգամ յաջողակ ընտիրք գտանէին, յետ այնորիկ ամբառնային յաւագութիւն Արիսպագին: Վասն որոյ և մեծապէս զօրացեալ Պերիկղէս 'ի ժողովրդեան, նկուն արար նուաճեաց զԱրիս

սպառն. որպէս զի և շատ ինչ յառաջնոց դատաստանաց 'ի բաց կասեալ 'ի նմանէ 'ի ձեռն Եփիալտեայ, զԿիմոն ինքնին գլխաւորն իբրև Լակոնասէր և ժողովրդատեաց խեցեկոյտ վճռով եւս վտարանդի առնել. այն՝ որ ընչաւէտ ճոխութեամբն և զարմին քաջութեամբն բնաւից մեծագոյն, և յաղթութիւնս գեղեցիկս ընդդէմ բարբարոսացն տարեալ էր, և բազմահամբար ընչիւք կապուտ կողոպուտ աւարօք զքաղաքն լցեալ էր. ըստ որում 'ի վերս անդ նորա գրեալ կայ: Այսչափ էր աւագութիւն տէրութեանն Պերիկղեայ 'ի մէջ ժողովրդեան: Իսկ խեցեկոյտ վճիռն տասնամեայ վտարանդութիւն սահմանէր ըստ օրինացն կարգի:

Բայց 'ի հոլովել ժամանակիս այսորիկ՝ զօրու ծանու Լակեդեմոնացիք ելեալք յարձակէին յերկիր Տանագրեայ. և Աթենացիք անդէն վաղվաղակի չու արարեալ խաղացին 'ի վերայ նոցա. յայնժամ և Կիմոն ինքնին 'ի վտարանդութենէն եկեալ հասանէր 'ի վաշտ անդր, 'ի զէն զարդ վառեալ 'ի բանակին հանդերձ իւրովք համհարզիւքն՝ խնդրէր յարգեանց անտի զօրծոյն քերել յանձնէն զԼակոնասիրութիւն, և նիզակակցութեամբն 'ի նոյն վտանգ խառոց քաղաքացեացն արկանել զանձն: Այլ բարեկամք Պերիկղեայ ընդդէմ դարձեալ Կիմոնի, ընդ կռուանն դարձուցին զնա իբրև վտարանդի: Վասն այսորիկ սակս թուի թէ Պերիկղէս յոյժ կորովի քաջութեամբ

մրցեալ խառնեցաւ 'ի մարտս պատերազմին այնորիկ՝ բնաւից զօրագլխաց և յոյժ անւանաւոր, ոչինչ ամենևին խնայեալ յանձն: Անդանօր 'ի մարտին տապաստ անկան առհասարակ ամենայն բարեկամքն Կիմոնի, զորոց և զնոցանէն ամբաստանեալ իսկ էր Պերիկղէս իբրև զկուսակցաց ոմանց Լակեդեմոնացւոց: Այլ յորժամ 'ի սահմանս Ատտիկոյ 'ի պարտութիւն մատնեցան Աթենացիք, յայնժամ ապաշաւ սաստիկ և ատենչն Կիմոնի մեծապէս զրաւեալ կալաւ զնոսա. Նա՛ զի և մեծի պատերազմի նշան սպասեալ մնային 'ի գալ գարնայնոյն: Իրազգած Պերիկղէս եղեալ՝ ոչինչ դանդաղեցաւ առնել զկամս ամբոխին. անդէն հրովարտակ գրեաց նա, և ինքնին հրաւիրեալ կոչէր զայրն: Դարձաւ եկն Կիմոն և անդէն առնէր խաղաղութիւն քաղաքին այնորիկ, քանզի մտերմութեամբ էին Լակեդեմոնացիք ընդ Կիմոնի. իսկ ընդ Պերիկղէս խեթիւ հայէին և ընդ այլս ոմանս՝ որ միանգամ կուսակիցքն էին ռամկին: Իսկ կէսք ասեն՝ եթէ զհրովարտակ դարձին Կիմոնի ոչ գրեաց Պերիկղէս, մինչև յառաջագոյն պայմանք դաշանց գաղտնի ոչ կնքեցան ընդ մէջ նոցա 'ի ձեռն Եղպինիկեայ քեռն Կիմոնի. իբրև այն՝ զի Կիմոն նաւս երկերիւր առեալ ընդ իւր՝ ելեալ ծովագնաց լինիցի 'ի քաղաքէն. և անդ արտաքոյ զանձամբ զզօրավարութիւնն առեալ բանակին՝ յաւարի առցէ զսահմանս Թագաւորին. իսկ Պերիկղեայ 'ի ձեռս

կայցէ մնասցէ իշխանութիւն քաղաքին։ Այլ թուի թէ և յառաջ քան զայս՝ առ ինքն Եղպինիկէ հեզագոյնս յարդարեաց զՊերիկղէս առ Կիմոն, յորժամ անդ 'ի մահուան վճռոյ ճողոպրեալ զերծաւ Կիմոն։ Քանզի յորժամ և զՊերիկղէս ինքնին իբրև զմի 'ի դատախազիցն Կիմոնի յառաջ ընծայեաց ժողովուրդն, յայնժամ Եղպինիկէ եկեալ առ Պերիկղէս յոտս անկեալ աղաղակէր. ասէ Պերիկղէս ժպտելով. “Ո՞վ Եղպինիկէ, պառաւեալ յոյժ է քո՝ առ 'ի գլուխ տանել գործս իմն մեծամեծս“։

Բայց յայսր ամենայնի վերայ՝ միանգամ միայն յաղթեաց յատենի Պերիկղէս ատենադանել. և հարկանիցի արտաքսեալ զիշխանն Կիմոնի, և սակաւս քան զայլս 'ի դատախազիցն ամբաստանեալ զնմանէ, ել և գնաց։ Եւ զխօ՞րդ ապա հաւասոս ոք երբեք ընծայեսցէ Իդոմենեայ, որ ամբաստան կայ զՊերիկղեայ՝ եթէ զԵփիալտէս ինքնին զամենապահն բարեկամ իւր և զհաղորդ բաժանորդ խորհրդոցն Պերիկղեայ 'ի քաղաքականութեան կարգս, նենգաւ սպանեալ իցէ Պերիկղէս. իբրու այն՝ որ 'ի նախանձ վառեալ խանդացայ զփառս նորա։ Ո՛չ գիտեմ, ուստի արդեօք Իդոմենէսդ այդ զայդոսիկ կուտեաց մթերեաց, և իբրև մաղձ դառնութեան առեալ ժայթքեաց ընդդէմ առնն, որ թերևս և ոչ անպարսաւ յամենայնի զգլխովին եկաց արդեօք, սակայն և խորհուրդս ունէր նա ազ-

նուականս, և ոգի մոլեալ գեղեցկին զհետ պատուոյ, յորս երբեք ոչինչ բնաւորես-ցին արդեօք այդչափ անագորոյն կերպ և գազանամիտ: Այլ որ ճշմարիտն է, քանզի Եփիալտէս անհարկու յոյժ էր առա-պետական կողմանն, և որք միանգամ հարստահարէին զժողովուրդն՝ սաստիկ և անողոքելի էր յամբաստանել զնոցանէն և հալածել, դարան գործեցին նմա թշնամիք նորա, և 'ի ձեռն Արիստոդիկեայ Տանա-գրացւոյ գաղտ 'ի ծածուկ սպանին զնա, որպէս պատմէ Արիստոտէլ: Իսկ Կիմոն վախճանեաց զկեանս անդանօր 'ի Կիպրոս 'ի զօրավարութեան իւրում:

Բայց Աւագապետականքն իբրև տեսին եթէ մեծացաւ 'ի բարձրութիւն Պերիկ-ղէս՝ և նախաթոռ բարձերէց եղև 'ի քա-ղաքացիսն, իբրև կամեցան զի 'ի ճակատա-մարտ ընդդէմ նորա կայցէ ոք 'ի քաղա-քին, և զզօրութիւն նորա հարեալ վատեա-ցէ՝ զի մի 'ի միապետութիւն գլխովին կըր-թեսցի բանն, առեալ զԹուկիդիդէս Աղա-ւեկացի զայր զգաստ և ազգական Կիմոնի՝ հակառակ ընդդէմ արձանացուցին Պե-րիկղեայ: Սա այս Թուկիդիդէս թէպէտ և 'ի պատերազմական մասին նուազեալ էր քան զԿիմոն, սակայն առաւելեալ յատե-նականին և 'ի քաղաքականին՝ զտեղի ա-ռեալ և բնակեալ 'ի քաղաքին, և յատեանս ժողովոց 'ի վէգ 'ի պայքար եկեալ ընդ Պե-րիկղեայ, անդէն զքաղաքականութեն կարգն 'ի հաւասարակշռութիւն ածեալ կացուցա-

նէր ։ Քանզի ոչինչ թոյլ տա՝ զի որ լաւ և առաքինին որպէսն էին այնպէս ցանկալի խառնեալ կայցեն 'ի խուժան ամբոխին երկուս զառաջինն, և 'ի յօգնութիւ բազմութենէն այնպէս նուաճեցեալ կայցէ շուք փառաց նոցա ։ այլ ուրոյն զատուցեալ զնոսա և 'ի մի վայր ժողովեալ զամենեցուն զզօրութիւնն, այնուհետև յաղթ և բուռն գործեաց՝ երրու մէտ 'ի լուծս կշռոց ։ Քանզի այն՝ որ անզատին 'ի սկզբանէն ընդ ռամկին և ընդ աւագանւոյն խառնախեալ ծալք և կրկնել՝ զօրօրինակ բնաւորեցաւ 'ի մաղմին երկաթոյ, գաղտաբար 'ի դէմս ընդրէր զատաբերութիւն կամաց և խորհրդոյ երկաքանչիւր կողմանն ։ իսկ յայնժամ այս եւ և ելք զմիմեանք և այսպ քաղք երկոցուն ասցա՝ Պերիկղեայ և Թուկիդիդեայ՝ խորադայնս 'ի ներքս կորեաց երկփեղկեաց զհատուած քաղաքին, զմի կողմն անուանեալ կոչեաց Ժողովուրդ ։ իսկ զմիւս կողմն Նուազունք ։ Վասն որոյ և յայնժամ մեծապէս թողացուցեալ Պերիկղէս խուժանի ռամկին զերասանակն, նկատէր ցանկ 'ի շնորհս նոցա հնարիմանց խորհրդով, է զի մեքենայէր տեսարան աշխարհաժողով հանդիսի, է զի կոչունս խնճոյից, դարձեալ և տօնախմբութիւնս հասարակաց 'ի քաղաքին ։ և սթափեցուցանէր զքաղաքն 'ի զբօսանս ոչինչ անպատկանաւորս ։ իսկ վաթսուն թուով նաւս եռամթից ամի ամի հանէր արձակէր արտաքս, յորս բազումք 'ի քաղաքացեացն

ամբարձեալք ծովագնացք ամիսս ութ առնուլին թոշակս, միանգամայն և վարժեալք մարդկին 'ի վարժս նաւականս։ Առ այսոսիկ գործեալ և հազարս 'ի քաղաքայնոց զաղթականս առեալ արձակեաց 'ի Քերրոնեսս. և հինգ հարիւր գործեալ 'ի Նաքսոս, և կիսովն չափ յԱնդրոս, և հազար մի 'ի Թրակիա բնակակիցս Բիսալտեանց. և զայլս ոմանս յԻտալիա՝ բնակեցուցանել զՍիբարիս, որ և ապա անուանեալ կոչեցան Թուրիացիք։ Եւ զայս ամենայն գործեաց նա 'ի թեթևացուցանել զքաղաքն յանգործ և 'ի դատարկ խուժանէն՝ որ պարապորդ ամբոխս յուզէր. առ այս՝ և 'ի թիկունս հասանել աղքատաց և կարօտութեան ժողովրդեանն. միանգամայն և զաղթականացն բնակութեամբ առ նիզակակից ժողովուրդս՝ ահ երկիւղի և պահանգ արկանել 'ի նոսա՝ մի ինչ առնել 'ի նորութեանց։

Իսկ որ առաւել քան զհեշտութիւն Աթենացւոց 'ի ներքս եբեր և զարդ գեղեցիկ, և որ զամենայն մարդիկ առհասարակ մեծապէս յափշութիւն կրթեաց, մի միայն վկայ ճշմարիտ Ելլադայ՝ թէ ո՛չ սուտ ինչ է արդեօք՝ որպէս զհամբաւի հարեալ է՝ մեծութիւն զօրութեան Ելլադայ և վաղեմնուց ճոխութիւն ընչաւէտութեան նորա, այն ինչքն էր կանգնել հոյակապ շինութեանց նորա։ Ոյց աղագաւ առաւել քան զամենայն նախատակութիւնս Պերիկղեայ խանդայքն թշնամիք նորա, և 'ի ժողովս և

յատեանս դատաւորաց առնէին զնա, բա-
ղըք բարձեալ՝ եթէ անփառաւորութիւն մեծ է
ամբոխին և նշաւակութեան ամօթ, զհա-
սարակաց զայն դրամս զհելլենացւոցն փո-
խեալ 'ի Դեղոսէ՝ ուր միթերևալն կայր՝
առ ինքն ամփոփել կուտել. և թէ՝ զոր
միանգամ զգեղեցիկ պատրուակ ունէին
նոքա ասել առ դատախազսն՝ եթէ զան-
գիտեալ 'ի բարբարոսացն բարձին անտի
զմթերս դրամոցն՝ առ 'ի պահել յանդոր-
րու զհասարակաց զինչսն, զնոյն պատճա-
ռանս կարծեաց այժմու հերքեալ 'ի նոցանէն
Պերիկղէս: Եւ թէ՝ թուի թէ բանիւք
այդուիկ մեծապէս թշնամանեցաւ Ելլա-
դա առհասարակ. և յայտնի են հարստա-
հարեցաւ նա՝ տեսեալ զի զբաժ դրամոցն
հարկեալ 'ի նմանէ 'ի պէտս պիտոյից մար-
տից պատերազմաց, մեք Աթենացիքս վա-
րեմք յոսկի համակել և օծանել և զարդա-
րել պաճուճել զքաղաք մեր զայս, որ-
նակ կին՝ ինքն բամբիշս գոռոզս՝ զարդուք
շուրջ հեղեալ կախեալ կայցեն ակունք
պատուականք. առ այս՝ և դրօշեալս և
ձօնս կռել ձուլել և արձանս կանգնել
հազարատաղանդեանս: Բայց անդուստ և
Պերիկղէս յայտ առնէր ժողովրդեան, ե-
թէ զդրամոցն դաշնացեալ ոչինչ պարտական
է նիզակակցաց ժողովրդոցն տալ զհամար,
քանզի մարտս եղեալ նոքա պաշտպան կան
նոցա, և զխուժդուժսն վանեալ սանձա-
կոծեն. և այն զի նոքա ոչ երիվարս հար-
կեն նոցա, ոչ նաւս, և ոչ դարձեալ սպառ-

ռամկէնս, այլ զինչս միայն՝ որ չէինն արժա-
նի հետեւ ուսուցողացն, այլ աւանդողացն՝ յորժամ
'ի գլուխ տարեալ կատարելն աւանդեալն զայն
ինչ՝ ույր առաջադրաւ առնին զգործաւորն։ Եւ թէ՝
պայման և արժանի է՝ ասէր՝ յետ շատ ինչ
հանդերձեալ քաղաքին 'ի կարեւորսն 'ի
մարդս պատերազմի, այնուհետեւ ինչք և
մեծութիւնք նորա ծախեսցին՝ յորոց միայն
զատ փառս յաւերժական հանդերձի նմա
յետ կատարելոյ իւրոցն. իսկ մինչչև կատա-
րեալ՝ շահավաճառութեան պատերազմա-
կան առ զօրս կայ նորա։ Քանզի զունակ
գունակ գործք և ձեռնարկութք 'ի մեր երկրին
յայնժամ, և աղբ աղբ ակնարկից առ ան-
դեռ ան զամենայն ծառայութիւն արուես-
տից զարթուցանեն, և զամենայն ձեռս ա-
ռնեալ շարժեն, և գրեթէ ողջոյն զքաղաքն
իւրեւ վարձաւոր յարդարեն գործեն. որ
անձամբ զանձն յայնժամ միանգամայն և
պճնէ զարդարէ և կերակրեալ բուծանէ։
Քանզի որք միանգամ յորդորեն հասակի
հասեալք էին և կարողք զէն շարժել, նո-
քա 'ի զինուորութեան խառնեալ վայելէին
'ի հասարակացն գրամոց. իսկ խուժան
մարդկանն՝ որ 'ի զինուորութեան գրեալք
չէին և արուեստաւորք էին, կամեցեալ
Պերիկղէս զի մի և նոքա անմասն 'ի բաժ-
նէն մնասցեն, և զի մի անգործք և պարա-
պորդք առ 'ի նոյն վայելեսցեն, զամենայն
արար նա զնոսա 'ի շինութիւն մեծամեծ
կերտուածոցն, և 'ի բազմաժամանակեայ
գեղեցկանս գործոց բազմարուեստ ծառա-

րաց. որպէս զի ոչինչ պակաս քան զնաւաստիսն և քան զպահակսն և քան զզինուորսն՝ ունիցին և առ ամենն մասնակցելոյ պատճառս՝ օգտել շահել և հասարակաց դրամոց բաժանորդ լինել։

Քանզի էին էին անդանօր նիւթք պատրաստականք, քար, պղինձ, փղոսկր, ոսկի, սալնխազ, նոճի. գործեալ և որ յօրինելի վարպետակքն և գործեքն՝ արուեստք, տախտակագործ հիւսունք, բրուտք, պղնձագործք, անդրիագործք, ներկարարք, ոսկերիչք, ճարտարք փղոսկրեայց, կենդանագիրք, ասղնագործք, ճախարակագործք։ Առ այսոցիկ՝ էին և որք բարձեալ բերէին զայնոսիկ ընդ ծով, վաճառականք, և նաւավարք, և ղեկավարք։ Դարձեալ և որք ընդ ցամաքն՝ սայլորդք, ջորեպանք, կառավարք, չուանագործք, գաղատոպք, և խաղախորդք, և ուղեհորդք, և մետաղագործք։ Առ այս՝ և մէն մի յարուեստից առաւել քան զօրավար ոք զզօրն՝ հպատակեալ ունէր ընդ ձեռամբ զամբոխ գործաւոր և զչինական մարդկանն, որովք իբրև գործեաւ ումեք և մարմնով պաշտէր զգործն։ Եւ որպէս բանիւ կարգ է ասել, միանգամայն այս պէտք և ձեռնակերտք ըստ հասակաց հասակաց և վիճակաց մարդկանն առնեալ բաշխէին իւրաքանչիւր զլիահավաճառութիւն։

Այդ իբրև կանգնեցան ամբարձան շինութիւնք գաստակերտաց հոյակապք և ըսքանչելիք մեծութեամբ, և ձևով և գեղով աննմանք, այն էին ճարտարք և արուես-

տաղէտք մի զմիով երևելս առնէին գերա-
զանցել 'ի ձեռնակերտան գեղեցկութեանց
արուեստին, մեծապէս սքանչացեալ յայն-
ժամ և առատութիւն ճարտարացն : Քան-
զի ուր կարծէր իմն՝ եթէ մէն մի 'ի շինու-
թեացն յետ բազմաժամանակեայ հոլով-
մանց և հասակաց հազիւ ուրեմն յանգել
գործոյն ժամանեացէ, այն ամենայն ընդ
գեղեցիկ առաջնորդութեանց միոյն Պե-
րիկղեայ բոլորեալք պսակեցան : Ըստ ո-
րում և յայնժամ, ասեն՝ եթէ Ագաթար-
քոս կենդանագիր ճարտարն մեծապէս
պանծայր յարագութեան ձեռին և 'ի յա-
ջողութեան 'ի նկարս կենդանեաց . և զայն
լուեալ Զևքսայ ճարտարին, ասէ . Իսկ ես
պանծամ 'ի երկարում ժամանակին : Քանզի յա-
ջողաձեռնութիւն և արագութիւնն 'ի գոր-
ծել՝ անդադականութիւն անվանելի չինա-
ւորէ 'ի գործն և ոչ ճշգրտութիւն գեղե-
ցիկ . իսկ ժամանակին երկարութիւն 'ի
միասին ընդ վաստակոց ձեռինն 'ի գործել,
կորովութիւն 'ի ներքս բնաւորեցաւ ըն-
ծայել 'ի պահպանութիւն գործոյն : Ուս-
տի և մեծապէս սքանչացան գործքն Պե-
րիկղեայ, որ 'ի սուղ ժամանակի գործե-
ցան և ժամանակս ձիգս կացին մնացին :
Քանզի մէն մի 'ի գործոց անտի անդստին
'ի շինութենէն յայնժամ իբրև վաղնջուց
գործ երևէր 'ի գեղեցկութեանն . իսկ մինչ
չև ցայսօր ժամանակի իբրև այն ինչ ծնեալ
և նորագործ յառոյգութեանն . այնպէս
'ի դէմս բարձեալ բերեն նոքա կերպարան

անվթար իբրև նորակերտք անդրձեռնելք 'ի ժամանակէն, իբրու թէ շունչ անթառամ և ոգի անծերանալի խառնեալ կայցէ 'ի գործսն անդր։

Եւ էր Պերիկղեայ առաջնորդ Ճարտարապետ յամենայնին և տեսուչ ամենեցուն՝ Փիդիաս. թէպէտ և գործ իւրաքանչիւր ունէր իւր Ճարտարապետս մեծամեծս և բազմարուեստս։ Քանզի զՀարիւրոտնեան Պարթենոնն՝ այս է՝ զԿուսանոցն 4, կանգնեաց Կալլիկրատէս և Իկտինոս. իսկ զխորհրդարանն Նուիրական յԵղևսինէ՝ սկսաւ շինել Կորիբոս, և նինքն կանգնեաց զսիւնսն 'ի վերայ յատակացն, և յօդեաց ընդ վերնատանսն. իսկ 'ի մեռանել նորա Մետագենէս Քսիպետեցի եդ 'ի վերայ զգօտին և զվերին կարգ սեանցն, իսկ զլուսանցոյցն 'ի վերայ գմբէթին կառոյց 'ի գագաթանն Քսենոկղէս Քողարգացի։ Բայց զերկայնաձիգն զայն պատուար յանձին կալաւ շինել Կալլիկրատէս. յորմէ սակս և ինքնին Սոկրատէս ասէ լուեալ՝ մինչդեռ զիւր կարծիսն 'ի ներքս բերէր Պերիկղէս վասն շինութեանն այնորիկ։ Զշինութիւն զայս պատուարին՝ իբրև գործ յոյժ դանդաղագործ Կրատինոս կատակերգակ խաղ առնէ օրինակ զայս. “Քանզի 'ի վաղնջուց իսկ հետէ Պերիկղէս զնոյն գործ յառաջադէմ վարէ բանիւք, իսկ արդեամբք անշարժ գլխովին կայ գործն”։ Իսկ Ովդիոնն, այն է՝ վայր Երգեցողացն, որ 'ի ներքին կողմն իւր բազմանստարան է

և բաղդամանեան, և յարկ իւր խորհրդանայարկ շուրջ կչեալ պատրուակեալ՝ մի միայն ունելով ծայր զգագաթան. և ասեն՝ եթէ 'ի նմանութիւն չմնեցաւ այն վասնի աղապաց արքայքն, և զործայս նա այսմիկ վերաբերացու եղև ինքնին Պերիկլէս։ Վասն որոյ և Կրատինոս զայրձեալ 'ի Թրասակեան քերթուածին խաղ ասէ զՊերիկլէս, այսպէս. «Մկնաոխագլխուկն Արամազդ ասացիկ հասեալ զայս առ մեզ Պերիկլէս՝ զՈդտիանն 'ի վերայ գլխոյն ունելով, յորժամ հեռէ զերծ է նա 'ի խեցեկայս վճռոյն»։ Բայց յայնժամ առաջին պատուասիրեալ Պերիկլէս, եւ վճիռ առեալ՝ զի 'ի Պանաթենեան տօնսն երաժշտական մրցանք մրցեսցին. և ապա ինքն կարգեալ հանդիսադիր մրցանացն, կարգս և սահմանս դնէր՝ եթէ զիարդ արժան իցէ մրցանաւորացն քնար հարկանել կամ նուագս ածանել կամ թէ կիթառս բաղխել։ Եւ կատարեցաւ այս հանդէս երաժշտական մրցանաց յայնժամ և առ յապայ՝ յՈդէոնին յայնմիկ։

Իսկ նախադրունք զամաթոց գրեցին կատարեցան զամս հինգ. և էր ճարտարապետեան Մնեսիկլէսս։ Այլ դէպք ինչ հրաշալիք պատահեալ 'ի շինութեանն յայնմիկ, յայտ արար եթէ ոչ մերժեալ կայր անտի և դիցուհին, այլ և ինքնին նա միջամտեալ գործակից էր 'ի կատարումն. քանզի այրն անդամոր ժիրաժիր յարուեստաւորս և մեծագոյնս յօժարեալն՝ գլթեալ անկանէր 'ի բարձանց անտի, և խօթանայր

[illegible]

հրամանն զայդ նմա՝ միջամտարդս առնուլ ա-
ռաքել կանանցն՝ առ որս մտանէր Պե-
րիկղէս ։ Իսկ զի՞նչ ապա զարմանայցէ ոք ընդ-
դրերան՝ որ երգիծաբանք բնաւորեցան 'ի
կեանս խաղերանց, և յերգս և հայհոյու-
թիւնս ընդդէմ քաղաց և առաքինեաց՝
ցանգ և անդուլ յաղէն՝ իբրև զկեց ունեին՝
մախանաց խուժանին. ուր և Ստե-
սիմբրոտոս Թասացի մեծ իմն ամբարշտու-
թիւն և սոսկալի յանդգնեցաւ բանդադրու-
չել ընդդէմ Պերիկղեայ և 'ի կին անդր
որդւոյն իւրոյ ։ Եւ այսպէս ապա կարի
դժնդակ է և դժուարաձեռնարկելի 'ի վե-
րայ կալ ճշմարտութեան պատմութեանն.
քանզի զկնի եկեալ պատմագիրքն առ 'ի
հաստատութենէ ժամանակացն անցելոց խա-
փանեալ են 'ի ճշգրիտ ծանօթութենէ ի-
րացն ։ Իսկ որ ժամանակակից պատմու-
թիւնն է գործոց և կենաց մարդկան, է զի
առ նախանձու և թշնամութեանն՝ և է
զի առ շնորհելոյն՝ խաթարէ և վեր 'ի վայր
զճշմարտութիւնն շրջէ ։

Բայց յայնժամ իբրև առաձնարանք Թու-
կիդիդեան կողմանն բողոք բարձեալ աղա-
ղակէին ընդդէմ Պերիկղեայ, եթէ վատ-
նեալ ծախէ զսա առաւելին զգանձս և սպա-
ռէ զհասարակաց զմուտս և զհասս, ժողով
արարեալ Պերիկղէս՝ հարցանէր զժողո-
վուրդն. “Զիա՞րդ թուի ձեզ՝ թէ բազում
ինչ ծախեցա՞ն արդեօք”. Եւ ուրոյն պատաս-
խանի և ասեն. “Այո՛ և բազմապատիկ յոյժ”.
Կրկնեաց ապա Պերիկղէս. “Մի ձեզ ինչ

ուրեմն զերեսցին ծածկէք, այլ կնոջ գլխո-վին . և զիւրոց անձին առանձին տալոց ես առ-ձանապարհել զմերատառութիւնն 'ի մերոյ զաստուածակերպարանացդ " : Իսկ զայս ասաց Պե-րիկղէս, Նոքա միանգամայն և ընդ մեծ-անձնութիւնն հիացեալ պանչացեալ, և փառաց զաստուածակերպարանացն այր զորոյ հե-տեւութեամբ, ձայն բարձեալ աղաղակէին՝ հրա-մանս տուեալ 'ի հասարակաց զանձէ անտի առնուլ և տալ և խնայել և յօրինել : Իսկ 'ի վերջէ 'ի վէճ ընդ Թուկիդիդեայ եկեալ՝ մինչև խեցեկոյր վճռով հարկ լինել վտա-րանդութեան միոյ ուրուք 'ի նոցանէն, եւ Պերիկղէս առաջագիր առնել զԹուկիդի-դէս . և այնուհետև բարձաւ 'ի միջոյ յայնժամ երկպառակութիւն կողմանցն :

Իսկ այսպէս ամենայն հակառակու-թիւն բնաջինջ բարձաւ, և քաղաքն գլխո-վին անդորրացեալ 'ի մի միաբանութիւն դարձաւ, այնուհետև առհասարակ զԱ-թէնս յանձն իւր առեալ զրաւեաց Պե-րիկղէս, միանգամայն և որ ինչ Աթենաց-ւոցն էր անկ հոգաբարձութեան, հարկ և բաժք, և զինուորութիւնք և նաւք, և եռամթիոց նաւք, և կղզիք, և ծով. և մեծ եղև զօրութիւն իշխանութեանն նո-րա առ Հելլենացիս, մեծ և առ բարբա-րոսս իսկ նոյնին . և հաստատահարուստ ամրա-ծուկ լինէր 'ի հնազանդելոց անտի ազգաց, և 'ի բարեկամութենէ թագաւորաց, և 'ի նիզակակցութենէ քաջաց : Իսկ այնուհետև իբրու զառաջինն չէր Պերիկղէս, և ոչ

հեշտընկալ էինչ խուժանի ռամկին, և ոչ դիւրաւ զիջանէր նոցա, և կամ անձնատուր երբէք առ ղէ ասյր ըղձից ամբոխին՝ իբրու բազմահնչակ հողմոցն շնչմանց. այլ զմեղկն զայն և զզոյծ իշխանութեան ռամկին զերասանականն՝ իբրու զթուլական և զկակուղ ներդաշնակութիւն գործւոյն՝ ձգեալ ոնդեաց յոգնուպետականն և յարքայական քաղաքականութեան կարգ. և ցանգ ուղիղ և անսասխեալ քաղաքավարութեամբ 'ի լաւագոյնսն թեակոխեալ, այնպէս ապա բազում անգամ զամբոխն անբռնադատ մատչիւրագոյնս հնազանդեցուցանէր գեղեցիկ յորդորակօքն և խրատուն: Այլ էր զի և յակամայ կամս նուաճեալ բուռն առնէր նմա հպատակել և պատկառ կալ օգտակարագոյն և պիտանեաց, զնմանութիւն բերելով յանձին ճշգրիտ զճարտար բժշկի, որ 'ի բազմօրինակ խօթութիւնս և 'ի բազմաժամանակեայս՝ է զի ըստ ժամուն պիտոյից զհեշտալիս և զդիւրընկալն վայելչեղ. և է զոր ձեալ 'ի դէպ ժամուն՝ ըզբարկն և զսաստիկն, որ զփրկութիւն նաւթձէ հիւանդին: Եւ քանզի՝ որպէս 'ի դէպ է կարծել՝ բազմադէմ կիրք և ախտք բնաւորեալ էին յամբոխ ժողովրդեանն այնորիկ՝ որ զայնչափ լայնատարածման տէրութիւնն զբռնամբ ունէին, միայն սա այս Պերիկղէս գիտաց ճշգրիտ և գեղեցիկ տանել թերել զմէն մի 'ի նոցանէն. և առաւել յուսով և երկիւղիւ՝ իբրու կոկին ղեկօք՝ է զի սանձահարելով զժպիրհ խեռութիւն

'ի նոսա, և է զի արձակերասան խրախոյս քաջալեր կարդալով անարի վաստակատութեան նոցա. և եցոյց յայտնապէս յանձին իւրում եթէ հռետորականն՝ ըստ Պղատոնին՝ իշխան է 'ի վերայ ոգւոց տանել բերել զնոսա. և մեծապէս գործ պաշտաման նորա՝ գեղեցիկ կարգաւ հասանել ունել 'ի բուռն զբազմադէմ զբարս և ըզկիրս մարդկանն՝ իբրու ձայնս և ոլորակս և աւաչս հոգւոյն, որոց յոյժ ճարտար մատանցն պէտք իցեն շարժել հարկանել և հնչեցուցանել զնոսա:

Իսկ էր պատճառք՝ այսորիկ ոչ լոկ մեծի ճարտարախօսութեանն Պերիկղեայ ոյժ, այլ որպէս Թուկիդիդէս ասէ՝ շուք փառաց և հաւատք առն 'ի քաղաքավարութենէ անտի կենաց նորա, որ ակն յայտնի անկաշառաուաքեկ էր այլոյն, և ամենայն պարգևաց և զօշաքաղութեանց գեր 'ի վերոյ: Եւ որ զքաղաքն զլխովին զմեծն՝ ամենամեծ կարգեաց եդ և ամենահարուստ, և որ զօրութեամբ աւագութեանն 'ի վերոյ գտաւ քան զԹագաւորս բազումս և զբըռնաւորս, յորոց կէսք և վասն որդւոց արգեօք Թողլին ինչ 'ի գոյից իւրեանց. սա այս Պերիկղէս և ոչ միով դիդրաքմայիւ չափ աւելացոյց զգոյս ընչիցն՝ զոր եթող նմա հայրն իւր: Եւ այն զի զզօրութիւն աւագութեան նորա քաջ իսկ 'ի դէմս բերէ մեզ Թուկիդիդէս. իսկ անդուստ և Կատակերգակք քերթողք ըստ լեզուագար բարոյիցն զնոյն հաշակ հարկանեն. քանզի

զընտանիսն և զմտերմական Պերիկղեայ ա-
նուանեալ կոչէին նորա ոմանս Պիսիստրա-
տեանս. իսկ նմին Պերիկղեայ տան երդումն
կալեալ՝ զի երբէք զբռնաւորութեան ինչ
թեկն մի ածցէ. յայս արարեալ՝ եթէ ա-
ւագութիւն իշխանութեանն Պերիկղեայ
անչափականց ուրեմն էր ռամկապետու-
թեանն կարգի և անկշիռ: Իսկ Տեղեկղի-
դէս պատմէ՝ եթէ ապաստան 'ի ձեռս ե-
տուն Պերիկղեայ Աթենացիք զքաղաքացն
զհարկս և զբաժս, դարձեալ և զնոյն իսկ
զքաղաքսն գլխովին. ըստ հաճոյից կա-
մացն զկէսս կապել, և զկէսս արձակել.
'ի քարանց պատուարս՝ է զի շինել կանգ-
նել, և է զի զկանգնեալսն՝ հիմն 'ի վեր
առնել. առ այս՝ և զդաշինս պատերազմաց,
և զզօրութիւն աւագութեան, և զտէրու-
թիւն իշխանութեան, զխաղաղութիւն,
զմեծերս ընչից, և զգլխովին իսկ զերջանկու-
թիւն անձանց: Այն զի՝ և ոչ ժամանա-
կին ինչ քաջադիպութիւն գոյր 'ի մէջ
վասն այդորցիկ. և ոչ դարձեալ ըստ սուղ
ինչ ժամանակ այդպիսիկ՝ այն ինչ առոյգ և
հեշտալինեալ բարգաւաճէր նորածաղիկ իշ-
խանութիւն առն. այլ գլխովին ըստ ժա-
մանակս ամաց քառասնից նախաթոռ իշ-
խան բազմեցաւ Պերիկղէս, թէպէտ և Ե-
փիալտէսք էին յայնժամ և Ղէոկրատէսք
և Միւրոնիդէսք և Կիմոնք և Տողմիդէսք և
Թուկիդիդէսք: Առ այս՝ և յետ նուաճու-
թեանն Թուկիդիդեայ և վտարանդու-
թեանն, ոչինչ պակաս քան զամս հնգե-

տաստան վարելոց նա փքչխանութեանն. և յանձն իւր ժողովեալ միանգամայն զա-մենայն զօրութիւն և զպերճութիւն՝ որ 'ի տարեւոր ռամկական բաժանեալ կայր, ա-նբաւանելի պահեաց զանձն և անվանելի յընչաքաղցն կրից :

Այլ սակայն և ոչ զլխաւորին անդորր պարապաղարդ կայր 'ի անտեսութեան գոյիցն, այլ զի մի թերևս հայրենի ժառանգու-թիւնն և առաքաւոր մեծութիւնն յանփոյթ-ութենէն նուաղեալ վատնեսցի. և մի զարգելեալ շատ ինչ զբաղանս և զեղեբանս նորա անպարապաղութեանցն 'ի նեղս բեր-ցէ, գեղեցիկ տնտեսութեամբ առեալ հանդերձեաց զայն, որչափ ինչ միանգամ հեշտին թուեցաւ նմա և ճշգրտագոյնս : Քանզի միանգամայն զամենայն պտուղս և զհասս իւր տարեւորս անդէն վաճառէր, և ապա առուր առուր որ ինչ միանգամ կա-րեւորն էր՝ գնէր 'ի հրապարակէն. և տան-մեան կենաց և զախտոյից զայս կարգեալ տան իւրում : Այսպիսի պարագաւ ոչ ինչ հաճոյ զտանէր Պերիկղէս առաջի որդւոց իւրոց՝ որ 'ի չափն հասեալ էին, և ոչ կա-նանցն, զի ոչ առատապէս էր տնտեսու-թիւնն. այլ քրթմնջիւն էր՝ զի որ ըստ օ-րեայ ծախքն այնչափ իսկ ճշգութեամբ անտեսանէին. և զի և ոչ մի ինչ առատութիւն զտանէր անդ 'ի ներքս, ըստ որում և վայել էր այնպիսում մեծի տան, և որ այնչափ հարուց անբաւելից ժառանգորդ էր. այլ ա-մենայն ելք և ամենայն մուտք անդանօր՝

թուով էին և չափով և կշռով։ Եւ որ զայս ամենայն զմեծապէս ճշգութիւնն 'ի գլուխ տարեալ կատարէր, էր մի ոմն 'ի պաշտօնէից տանն նորա Եւանգելոս անուն. որպէս զի և ոչ ոք այլ այնպէս քաջապէս անդատին բնաւորեալ էր յայն գործ. և կամ թէ 'ի նմին իսկ 'ի Պերիկղեայ վարժեալ հրահանգեալ էր նա 'ի տնտեսութիւն անդր։

Այլ այս ամենայն ընդդէմ եղանէր իմաստութեանն Անաքսագորայ, այն՝ որ և զտուն բնակութեան իւրոյ ինչն լքեալ, և զագարակս իւր թողեալ էր 'ի բացի անգործ անմշակ՝ կարգեալ յարօտ խաշանց՝ առ գեղեցիկ մոլութեանն իմաստասիրականին և բարձրագունեցն խորհրդոց։ Սակայն որպէս ինձ թուի՝ ոչ նոյն և մի է սահման կենաց տեսականն իմաստասիրին և առն քաղաքականի. առաջինդ անպէտ 'ի գործեաց և անկարօտ արտաքնոցն նիւթոց՝ շարժէ և տանի բերէ զխորհուրդ միտացն 'ի գեղեցիկսն. այլ վերջինդ՝ քանզի 'ի պէտս կենցաղօգուտս մարդկանն առեալ միջամուխ խառնէ զառաքինութիւն անձինն, է ուրեք զի ոչ կարեւոր միայն հանդիպեսցի նմա ընչաւէտութիւնն, այլ և գեղեցիկ և վայելուչ, ըստ որում և նմին իսկ Պերիկղեայ. այն՝ որ 'ի թիկունս օգնականութեան հասանէր բազմաց չքաւորաց, և նմին իսկ Անաքսագորայ։ Քանզի պատմեն՝ եթէ 'ի պատճառս մեծի անպարապութեանն Պերիկղեայ, էր երբեք զի անփոյթ

լքեալ եկաց Անաքսագորաս 'ի ծերութեան հասակին խորում, վասն որոյ և զգլուխն իւր ածեալ ծածկեաց նա ձորձովն. կամէր այնուհետև անսուաղութեամբն վճարել զկեանսն: Ա՛յն ինչ իմացեալ բանին եկեալ Պերիկղէս և խռովեալ 'ի հոգին, դիմեաց ընթացաւ առ Անաքսագորաս, և անդ դամենայն աղաղականաւ աղաղակէր առ նա. Մեծապէս ցաւէր նմա ոչ վասն նորա ինչ այնչափ, որչափ վասն անձինն՝ եթէ երբեք զկնի մեռանիցէ յայնմանէ առնէին, որ խորհրդականն քաջ էր 'ի քաղաքականութեան կարգս: Ցայնժամ 'ի բաց զձորձն առեալ Անաքսագորաս, ասէր առ նա. Ո՞Վ Պերիկլէ, նոյն և որք լապտերին պէտս ունին, իւղ արկանեն 'ի նմա:

Բայց իբրև Լակեդեմոնացիք սկսան խեթիւ հայել ընդ բարգաւաճ փառսն Աթենացւոց, Պերիկղէս յաւելու 'ի վեր առնել տանէր զնոսա խորհել մեծամեծս և քան զնոսին, և մեծամեծ եւս ուղղութեանց նահատակութեանց արժանի առնել զանձինս. վասն որոյ և վճիռ մի եւս առաւ զօրել, զի ամենայն Հելլենացւոց՝ ժող և միաբանեալ ընկերութիւն կազմեալ իւրեանն յԾովարարս կամ յԱթէնս 'ի մեծամեծ քաղաքս և 'ի փոքունս՝ հրաւէր կարգադրեցին առնուլ առաքել յատեան ժողովոյ Աթենացւոց պատուիրակս, խորհրդակք խորհել վասն հելլենական մեհենիցն՝ զոր հրկէզ 'ի մեր տապալեալ էին բարբարոսք. և յաղագս զոհից նուիրացն՝ զոր պարտէին 'ի գնել նոցա

ուխտս առ գիս վասն Ելլադայ, յորժամ մեղօք եղեալ կռուէին ընդ բարբարոսս. և յաղագս ծովուն՝ որպէս զի առ հասարակ ամենեքեան յանդորրութեան նաւարկեալ վայելեսցեն 'ի խաղաղութեան: Եւ յաղագս այսորիկ արք քսան թուով որ զյիսնամենիւք անցեալ էին՝ արձակեալ առաքեցան յԱթենայ: Հինգն 'ի նոցանէ հրաւիրականք չոգան Յոնիացւոց և Տորիացւոց՝ որք յԱսիա, և Կղզեացւոցն մինչև 'ի Լեսբոս և 'ի Ռոդոս: Հինգ դիմեալ գնացին առ որս 'ի Հելլեսպոնտոս և 'ի Թրակիա՝ մինչև 'ի վայրսն Բիւզանդիոյ: Եւ հինգ դարձեալ 'ի նոցանէն 'ի Բիովտիա և 'ի Փոկէա և 'ի Պելոպոննեսոս, և անտի անցեալ՝ ընդ Լոկրացիս 'ի սահմանակից վայրսն մինչև յԱկառնանիա և յԱմբրակիա արձակեցան: Իսկ մնացեալքն յուղի անկան ընդ Եւբիա առ Եոտացիս և 'ի ծոցն Մելեայ, առ Փթիավացիս և առ Աքայեցիս և առ Թեսաղացիս, ածել հաւանեցուցանել առ հասարակ զամենեսեան՝ գալ և հաղորդ բաժանորդ լինել խորհրդոյն, վասն խաղաղութեան և հասարակաց շինութեանն Ելլադայ: Սակայն կատարեցաւ և ոչինչ, և ոչ 'ի մի վայր եկեալ ժողովեցան քաղաքք. քանզի Լակեդեմոնացիք հակառակեալք ընդդէմ դարձան՝ որպէս ասեն, և զառաջինն 'ի Պելոպոննեսոս խափանեալ հերքեցաւ առաջարկութիւն խորհրդոյն: Այլ ես զայս 'ի պատմութեանս կարգեցի, 'ի դէմս բերել ընթերցանելեացն զՊերիկղեայ զգե-

դէպի հանճարոյն՝ նոյն և զմեծութիւն ոգ-ւոյ առն առաջին:

Իսկ 'ի զինուորական արշաւանսն՝ առա-ւելապէս զգուշանայր հարկեալ էր նա 'ի պատճառս անձնապահ զգուշաւորութեան. քանզի մարտ պատերազմի՝ որ անյայտու-թիւն բարդեալ յինքեան բարձեալ ունի և վտանգ, նա մտադիւր կամէր չառնուլ յանձն երբէք. դարձեալ և ոչ նախանձա-ւոր և հետևող կամէր լինել զօրավարացն այնոցիկ՝ որ յանդուգն ձեռնարկեց երևեալք 'ի վտանգս՝ առաւ բախտ բարեկամն բերելով քաջացեալք տարան զյաղթանակն և պերճ-ջալան փառս մեծամեծս տանէին: Եւ ասէր նա առ քաղաքացիսն ցանկալ դոյս լինել, ե-թէ իւրովսանն նոքա միշտ և հանապազ անմահք կացցեն մնասցեն: Այլ ասեալ Պերիկղեայ՝ զի Տողմիդէս որդի Տողմեայ յաղագս առաջին խոլոյ յաղթողական երևելոյ, դարձեալ և 'ի պատճառս մեծամեծս շքոյ պատուոյն 'ի զինուորական միջավայրացն 'ի մեր վաղեալ, 'ի պէտս յաճախեալ ձեռնար-կեց խնդրէր արշաւել 'ի Բիովտիա, և 'ի նոյն անձեալ հաւանեցուցեալ երիտա-սարդս քաջս և կորովիս և պատուաւորս իբրենական նահատակել 'ի զինուորութեան, որ էին նոքա թուով հազարք, թող զայլ զօրն զբազմաթիւ. արդ զոյն գործէր ջա-նայր Պերիկղէս անձնել զայրն 'ի խորհրդ-դոյն և խրատէր յորդորէր և զնա 'ի հրա-ժարակէ, և ասէր առ նա զզերահռչակեալ-եալն զայն զբան. « Եթէ Պերիկղեայ՝ զա

ոչ անսայ, գոնեա անկենկալեալ ապաստանեցէ ամենիմաստ խորհրդականին՝ ժամանակի, և մի մեղիցէ“։ Այդ յայտնժամ զգաւն զայս Պերիկղեայ չափով ’ի զօրութեան առնին. իսկ առաջ յետ սակաւ աւուրց երկու գործ եհաս, եթէ և Ցողմիդէս ինքնին անկաւ ’ի մարտին, և մեռ ’ի Կորոնիա ’ի պարտութեան մատնեալ տապաստ անկեալ արք բազումք և քաջք և առաքինիք ’ի քաղաքացեաց անտի, մեծապէս փառաւորք այնուհետև և սկզբան յաղագս բանին այնորիկ յաղթեցին զՊերիկղէս իբրև հանճարեղ այր և զգօն և քաղաքական։

Այլ ’ի մարտից արշաւանաց առաւելապէս ’ի զօրութեան առաւել է մարտ պատերազմին նորա վասն Քեռոնեսեայ, որով յանդորրու եհան զՅոյնս զբնակեալս ’ի նմա։ Քանզի ոչ միայն ամրութեամբ մեծապէս հանդերձեաց քաղաքացն այնոցիկ, զաղթականս մի քաջորդերոյն Աթենացւոց հազար թուով ածեալ ’ի նմա, այլ զի և զխորշն զայն ոզջոյն ’ի ծովէ մինչև ’ի ծով պատեալ յամուրս աշտարակաց և մահարձանաց, արգել ամենայն զասպատակս հենեաց Թրակացւոց՝ որ շուրջ հեղեալ կային զՔեռոնեսեաւ, և փրկեաց զգաւառն ’ի տառապանաց և ’ի հանապազօրեայ մարտից, յորոց տագնապէր նա զամենայն ժամանակն. քանզի խառն բնակեալ էին ’ի նմա և մերձաւոր բարբարոսք. և լցեալ եւս էր յաւազակաց անտի սահմանակցաց և ’ի բնակակցաց։ Նա արտաքինն՝ և յայտ հռչակեալ

սքանչացուցանէ և հռչակէ համբաւ զնոսա ազգք օ-
տարք. քանզի 'ի Պեղեայ Մեգարացւոց
հարկեալք եռանթեալք դիմեաց նա 'ի Պելո-
պոնեսոս. և ոչ միայն յաւարի էառ նա
զքաղաքս ծովեզերեայս, ընդ որում և յա-
ռաջագոյն Ցողմիդէս, այլ և 'ի խորս անդր
խաղաց նա 'ի ծով հանդերձ զօրու նաւուցն,
և արհաւիրս արկեալ՝ որպէս զի և առ հա-
սարակ 'ի զարմանանէին նորա յամենայն ա-
տուաւորաց իշխանաց միաբանեալք զօրէցին. իսկ 'ի
Նեմէա Սիկիոնացւոցն ընդդէմ դարձեալ
նոսա մարտիւ, նա բռնի զօրութեամբ վա-
նեաց զնոսա՝ նշանս յաղթութեան կանգ-
նէր։ Յետ այսորիկ զօրաժողով յեռանթեան
առեալ յԱքայեայ՝ որ նիզակակիցն էր
նորա, դիմեաց 'ի հանդիպակաց ցամաքն
անդր, և նաւեալ շուրջ զԱքելովեաւ՝
ապականեալ յաւարի առնոյր զԱկառնա-
նիա, և եկեալ շուրջ փակեաց արգել զՕ-
նէացիս 'ի պատուարս խրամանց. այլ յա-
ղարտ մարեալ զանդս և զագարակս նոցա,
եկն դարձաւ 'ի տուն. ահարկու ցուցեալ
զանձն առ հասարակ Թշնամեացն, և ապա-
հովք այլ և քաջ խորոց քաղաքացւոցն.
քանզի և ոչ ընդ դիպուած ձախողակի ինչ
եղք յայնժամ պատահեցան զօրականին։
Յետ այսորիկ և 'ի Պոնտոս ծովակողմանց
բերեալ նա 'ի հանդէս նաւուց՝ մեծ և շքեղ
և բազմահանդերձ, որոց կատարեաց զա-
մենայն կամս քաղաքացն Յունաց, մարդա-
սիրութիւն մեծապէս ցուցեալ առ նոսա.
դարձեալ և շրջակայ բարբարոս ազգաց և

նոցուն արքայից և նախարարաց ճոխապար ապանծանօք ցուցանէր զզօրութիւնն, նոյնու- այն՝ որ մեծապէս արուեստիւք այնպէս ծովակալնաց լինէին նոքա՝ ուր և միանգամ հաճոյ էր նոցա, և 'ի բանին առ հասարակ ունէին զծովն: Այլա եւ թող առ Սինոպա- ցիս յիւրոց անտի նաւս երկոտասանս, և զԼամաքոս իշխան 'ի մերոյ, և զորս եւս ըն- դէմ ունէր բռնաւորին Տիմեսիլեոսի, այն՝ որ փառաւորանօք խոկ էր համագործ խոնարհա- նելոյն բարոյ. առ այս՝ և եւս վճիռ զի Աթէ- նացիք վեցհարիւր թուով ինքնակամ նա- հատակեալք չու արտաքսեն 'ի Սինոպ, և բնակակից լինելին Սինոպացւոց, և բաշխեալ բաժանեցին յիւրեանս զտունս և զկա- լուածս, զոր զրաւեալ խոկ էին բռնաւորքն յառաջագոյն:

Այլ սակայն և ոչ գլխաւորին զիջանէր Պերիկղէս 'ի թափ ընձից քաղաքացեացն, և ոչ նաւաստ ինչ լինէր նոցա՝ որ 'ի բարե- բաստիկ եղեցն և 'ի զօրութեանն բարձրա- պատրանաց զնայլին. որպէս զի և կրկին նոքա հետամտուեալ խնդրէին ընդ բռնաւք ունել զԵգիպտոս, և զծովեզերեայ սահմանսն զարքային. նա և բազումք 'ի նոցանէ ձա- խողակի ցանկութեամբ ըղձականէք էին առ Սիկիլիա. և յայն ցանկութիւն աստ- ուել բորբոքեցին զնոսա հռետորք Աղկի- ւխադեայ կողմանն. խոկ և կէսք 'ի նոցանէ զՏիւրրենիա յերազանայքին և զԿարքեդոնն, մեծապէս յուսով փառահացեալք 'ի լայ- նատարածեան տէրութեան իւրեանց և 'ի յա-

Ջոջութեան նոսա հաստատութեանն ։ Այլ Պերիկղէս կարծէր զայնպիսութիւն և սահմանէր զառնութիւն կրիցն յերաժշտին մեծապաշտա գործոց, և զայժ զօրութեանն ընչէր 'ի պահել և յանդորրութ կազմուցանել՝ զոր միանգամ առաջնեալ խոհ էին նոքա. եւ 'ի մեծի գործ մեծ կատարել, եթէ երբեք յաղթեսցի նոցա վանել զԼակեդեմոնացիսն՝ որոց և զգերամբքն հանդարտականութ ամբարձեալ խոհ էր, ընդ որում 'ի բազում ինչ գէպս յայտ արարին նա ։ և առաւել եւս՝ 'ի նաւիրականն անդ մարտին ։ Քանզի յորժամ զօրաժողով զինեցին Լակեդեմոնացիք 'ի Դելփիս, և զառաձեռն անդրէն դարձուցին առ Դելփեացիսն՝ զոր ունէին յայնժամ Փոկեացիք, անդէն 'ի մեկնել նոցա՝ խաղաց անդր Պերիկղէս և միւսանգամ դարձոյց զՓոկեացիսն ։ Առ այս դարձեալ՝ քանզի Լակեդեմոնացիք 'ի ճակատու գայլոյն պղնձի՝ առեալ արձանացուցին զնախահարցութ զիշխանութիւնն 5, զոր ետուն նոցա Դելփեացիք. զնոյն՝ և Պերիկղէս զիշխանութիւն զայն առեալ և խնքնին վասն Աթենացւոց, քանդակեաց զայն յաջոյ կողմն գայլոյն ։

Բայց յայնժամ յերկից իրացն հաստատութիւն եղև, եթէ ուղղապէս խորհրդով առկայացուցեալ ունէր Պերիկղէս յԵլլադա զզօրն Աթենացւոց. քանզի առաջին Եւբէացիք յապստամբութիւն դրդեցան, ուստի նա զզանազան զօրուն խաղացոյց 'ի մերայ նոցա. և ապա անդէն գուժկան եա համանէր ապստամբութեան Մեգարաց-

ւոց 'ի մեծագոյն պատերազմն. և թէ՛ 'ի սահ-
մանս Ատտիկէոյ զօր մեծ թշնամեաց հա-
սեալ կայ, և զօրավար Նոցա Պղիստոնակ-
տէս արքայ Լակեդեմոնացւոց: Հանդէպ
Պերիկղէս 'ի շտապոյ տագնապի խորհրդոց յԵւ-
բեայ 'ի մեծագոյն պատերազմն յԱտտիկէ. սա-
կայն 'ի մեծապէս ոչ մարտեցաւ ընդ բազմութիւն
և քաջամարտիկ զօրականացն՝ որ ձայն էս
տարբերին Նոսա: Իսկ և ծանեաւ Պերիկղէս՝ զի
Պղիստոնակտէս պատանեկան՝ խորհրդոցն
վարի Կղէանդրիդեայ, զոր Պարտէզ եդեալ
Նոսա պահապան և առաջնորդ յարդարաւ ան-
կարող հատուկին, գաղտնաբար եւս փորձ
փորձել զԿղէանդրիդեայ, և կաշառացն
արարեալ զնա՝ համոզեցոյց 'ի բաց յԱտ-
տիկէոյ ածել խաղաղութեամբ զՊելոպոն-
նեսեանն զօրն: Այսպէս ապա եւ զայն՝
իբրև ցանեալ սփռեցաւ զօրն ընդ քաղաքս
քաղաքս, 'ի խոր խռովեալ՝ 'ի պատճառս թիւն
բարկեցան Լակեդեմոնացիք. տուգանեցին 'ի
մեծոյ կարգեցին թագաւորն տուգանաց
դրամոց ծանր, որպէս զի և ոչինչ ձեռն-
հաս գոլով նմա 'ի հատուցանել, տեղի ետ
'ի Լակեդեմոնէից. իսկ զԿղէանդրիդէս փա-
խուստական՝ 'ի մահ դատապարտեցին: Սա
այս Կղէանդրիդէս հայր էր Գիլիպպոսի,
այն՝ որ վանեաց զԱթենացիսն 'ի Սիկիլիա.
և կարծեցաւ ոչ արդեօք՝ եթէ բնաւորական
թիւնքն՝ իբրև զախտ ժառանգաւոր ազգա-
կից՝ և 'ի սա ինքն 'ի Գիլիպպոս բնաւորեաց
զընչասիրութիւնն, յորում մեծապէս ա-
նարգանօք ընկեցեալ սորա 'ի չարութեանն՝

վաճառականութեան եղև 'ի Սպարտացւոց · բայց զայսու-
ախել մեր 'ի վարսն Լիւսանդրեայ մեկնեն առ-
ձանձրացուցեալ է :

Իսկ յորժամ ընդունուց մարտականն զայնո-
րիկ եւս Պերիկղեա ըհանման իւրն տաղան-
դաւոր տաստնեց, և վկայեաց ևս եթէ 'ի կա-
թողութն ծախսեցան և 'ի վայելչութեան, հաւա-
նեցան ժողովուրդք, և ոչ ևս խնդրեցին
հեռաւորութեան զպատերազմն նորա : Այլ կէսք
պատմեն՝ յորոց մի է և Թէոփրաստոս ի-
մաստասէր, եթէ առաքէր Պերիկղէս ամի
ամի տասնհինգ տաղանդ 'ի Սպարտացիս և յինքն
յանձնառուցանէր յառաջադիմութիւն և առաջնոր-
դեալ 'ի մարտսն · և առաջս որքանակ զայս զնոյ
առանձինն նա ոչ զանազանութիւնն, այլ զծա-
մանակն · զի պատրաստ զօրեալ կարգաւորեալ
պատերազմականութեանն՝ քաջ ևս առաջս մեծաւ-
գի 'ի մարտսն : Ըստ որում և մտանեմ զաւ
զինեալ 'ի մերոյ պատերազմականացն, և անցեալ
յԵւբէա յնուռն նաւուք և հինգ հազար
զօրականօք, նուաճ արար զքաղաքսն : Աս-
տա՝ և 'ի Քաղկիդոնացիս վանեալ վաճառեաց
զայնոսիկ՝ որ անուանեալ կոչէին Իպպո-
բոտեանք · և էին նոքա բարեկամ հարուստք և
անուանաւորք · և առհասարակ զՀեստացիս
եհան 'ի գաւառաէն իւրեանց, և բնակեցոյց
ընդ նոցա զԱթենացիս միայն · խնայեաց
և ոչինչ 'ի նոսա՝ քանզի կալեալ նոցա նաւ
մի ատտիկեցի՝ ընդ առն համեալ էին զա-
մենայն մարդիկն :

Բայց իբրև ընդ ամն երկուսն խաղա-
ղութիւն հաստատեցաւ ընդ Աթենացիս և

ընդ Սպարտացիս, եւ Պերիկղէս տալ վճիռ
արշաւանաց ծովու ընդդէմ Սամոսացւոց.
իբրու որ ոչ հնազանդեցան նոցա դադա-
րել 'ի մարտէն ընդդէմ Միղեսացւոց: Այլ
քանզի համբաւ հռչակ հարեալ էր վասն
արշաւանին այնորիկ Պերիկղեայ իբրու 'ի
շնորհս Ասպասիայ, ոչինչ արդ դժպատեհ
իցէ քննել 'ի ժամուս՝ եթէ զինչ արդ-
եօք հնարիմաց խորհրդով և մեծապէս զօ-
րութեամբ յաղթողեցաւ կինդ այդ նկուն
իւր առնել զճոխս քաղաքին. առ այս
դարձեալ՝ եւ և իմաստասիրաց դասուն ոչ
ինչ անկած և ոչինչ անպաճոյճ խօսել
զնմանէ բանս: Այդ՝ միաբանին առհասա-
րակ, եթէ Միղեսացի էր Ասպասիա՝
դուստր Աքսիոքոսի: Եւ ասեն՝ եթէ
զնմանութիւն բերելով սա յանձին զԹար-
գեղեայ ուրումն 'ի վաղնջուց անտի կա-
նանցն Յադացւոց՝ ընչաւէտ արանց ցանգ
զհետ մտեալ էր. քանզի Թարգեղիա հրա-
շադեղ 'ի գիտակ պատկերին և շնորհաշուք
և հանճարեղ՝ բնակակից եղև բազմաց Յու-
նաց, և հաւանեցուցանէր զորս միանգամ
մերձենայինն առ նա՝ Թիկունս տալ ար-
քային Պարսից. և 'ի ձեռս աւագացն այ-
նոցիկ և ճոխից նա գաղտաբար ցանեաց 'ի
քաղաքս հրապոյրս՝ զկուսակցութիւն Մա-
րաց: Իսկ կէսք ասեն՝ եթէ Պերիկղէս մե-
ծապէս խնամով շուք դնէր Ասպասիայ.
զի էր նա կին լի իմաստութեամբ և վարժ
'ի քաղաքականին. ասուի և Սոկրատէս
ինքնին ստէպ յայց եղանէր առ նա համ-

դերձ ծանօթիւք. և որք մտերմիքն էին նմա՝ ածէին առ նա և զկանայս իւրեանց լսել Ասպասիայ. Թէպէտ և ինքն ոստիկան ՚ի վերայ կայր անփառաւունակ և դժպատեհ պատասաւորութեն՝ ՚ի մտուցանել աղջկունս ըկտրիս: Եւ Եսքինէս ինքնին ասէ, եթէ և Լիսիկղէս խաշնավաճառ այր անուսումն և անկած ՚ի բնութենէն՝ գտաւ նախաթոռ յԱթենացիս ՚ի պատճառս մերձաւորութեան իւրոյ ընդ Ասպասիայ յետ մահուանն Պերիկղեայ: Իսկ ՚ի Մենեքսենոս մատեանին Պղատոնի, թէպէտ և ընդ խաղ գրեալ իցէ սկիզբն մատենին, սակայն և պատմութիւն գտանեմք մեք ՚ի նմա՝ եթէ բազումք յԱթենացւոց կենցաղակից լինէին Ասպասիայ՝ զի քաջավարժ էր ՚ի հռետորականին: Այլ յայտ ամենայնի վերայ՝ թուի թէ մտերմութիւնն Պերիկղեայ ընդ Ասպասիայ՝ տռփանաց կերպ էին: Քանզի Պերիկղէս ունէր կին հարազատ՝ որ կին լեալ էր Իպպոնիկոսի, որում և ծնաւ ըզԿալլիաս զընչաւէտն. և ծնաւ սմա Պերիկղեայ զՔսանթիպպոս և զՊարալոս. իբրև ոչ ևս կամեցան բնակակից լինել՝ ետ զնա Պերիկղէս ՚ի կին այլոյ ումեմն՝ զոր և կինն ինքնին խնդրէր. և ածեալ իւր ՚ի կին զԱսպասիա՝ սիրեաց զնա յոյժ. քանզի և յելանել իւրում՝ որպէս ասեն՝ և ՚ի մտանել ՚ի հրապարակէ, ցանող ողջոյն տայր նմա և համբուրէր. ուստի և ՚ի Կատակերգակ ստասպանս անուն կարդային Ասպասիայ՝ է զի Նոր ան Ոմփաղէ, է զի՝ Դէյանի-

րէ, և է զի՝ Հներա: Իսկ Կրատինոս ի Քիրոնսն յայտնապէս կոչէ զնա բազ՝ այսպէս. «Ծնեալ նի սակէ՝ զՀերա զԱսպասիա՝ զկաթոտան զայն Բող շանտագէմ»: Այլ Թերիսս և այլ պատմիչքորդի 'ի նանանէ ծներալ էջէ Պերիկղէս. որը աղաղաւ Եւպողէս 'ի Դեմոսեան քերթուածին սոյն Պերիկղեայ հարցանել այսպէս. «Իսկ այն իմ աղջիկորդի կեցցէ սակառեքն». և սոյ պատասխանի Պեւրոնիդէս. «Նա և 'ի վաղուց հետէ արդեօք այր եղեալ էր, եթէ չէր նա զանգիտեալ 'ի կորից պտունկի մօրն»: Եւ պատմեն եւս՝ եթէ այնչափ իմն ախանասար և զհանճարե հարաւ սա այս Ասպասիա. որպէս զի և Կիւրոս կրտսերն՝ որ կռուեցաւ ընդ արքային գրաւել զանէրութիւնն Փոկեցւոց, Ասպասիա անուան կարդայր հարճին՝ զոր առաւելն սիրէր. և անուն էր յառաջն Միղոնէ՝ Փոկեացի աղջկան դուստր Եռմոտիմեայ. իսկ իբրև Կիւրոս անկաւ 'ի մարտին, ածաւ Միղոնէ առ արքայ, և յառաջադէմ էր առ նմա: Այդ որ ինչ միտանգամ աստանօր յարձանագրութեանս իմն 'ի միտս եկն, արդեօք տմարդութիւն էր՝ եթէ երկէք ընդ լռութեամբ անցանէի:

Այլ յաղագս մարտին պատերազմին ընդդէմ Սամոսացւոց՝ մեծապէս մեղադրեն ըզնին Պերիկղեայ, զի 'ի թախանձանաց անտի Ասպասիայ 'ի շնորհս Միղեսացւոցն եկն 'ի նոյն: Քանզի այս երկու քաղաքք մարտ եղեալ կռուէին ընդ միմեանս վասն Պրիենեայ. իբրև յաղթական էին Սամոսա-

ցիք՝ հրամանն տային նոցա Աթենացիք դա-
դարել 'ի մարտէն և 'ի նոսա առնել դատաս-
տան. Իսկ և ոչինչ անսացին Սամոսացիք, և
Պերիկղէս խաղաց 'ի վերայ. անդ ազնուա-
պետութիւնն նոցա լուծանէր 'ի Սամոս,
և 'ի պատանդս առեալ արս յիսուն 'ի
գլխաւորաց և մանկտւոյն նոյնչափ, արձա-
կեաց զնոսա 'ի Լեմնոս՝ թէպէտ և այր այր
'ի պատանդիցն՝ որպէս ասեն՝ յօժարեալ
էր տալ իւրաքանչիւր տաղանդ մի 'ի փրը-
կանս. և շատ ևս այլք խոստացեալ էին
նմա՝ որք ոչն կամէին ռամկապետութիւն
'ի քաղաքի. առ այս դարձեալ և Պիսու-
թնէս այր Պարսիկ բարեկամ Սամոսաց-
ւոցն՝ առաքեաց առ նա տասն բիւր և ա-
ղերսէր վասն քաղաքին: Բայց Պերիկղէս
պարգևաց ինչ յանձնեալ երբեք ոչ առաք,
և գնացեալ ընդ Սամոսացիս ըստ խորհըր-
դոց կամաց իւրոց, և կարգեալ անդանօր
ընկերհաշտութիւն, նաւեաց դարձեալ յԱ-
թէնս: Իսկ այս եղև, անդէն Սամոսացիք
ծընկեցք յապստամբութիւն դարձան.
քանզի Պիսուաթնէս գողացեալ՝ գաղտ 'ի
Պերիկղեայ զպատանդսն՝ դարձոյց առ Սա-
մոսացիս, և այսպէս նոքա ամենայն կազմու-
թեամբ 'ի կռիւ պատրաստեցան:

Համայն անդրէն միաբանգամ ծովագնաց
լինէր խաղայր 'ի վերայ նոցա Պերիկղէս.
նոքա յանձնեալ երբեք ոչ տեղի ինչ ետուն,
և ոչ զահի ինչ հարան. արձանացան կա-
ցին վաստակեալք՝ կռուել ընդ նմա և մըրցա-
նալ ծովուն: Իսկ նաւամարտութիւն առա-

տիկ գրգռեցաւ 'ի Նոսա մտօ 'ի Տրագիաս կղզի, քաջաբար զյաղթութիւնն տանէր Պերիկղէս. և Նաւուք քառասուն և չորիւք եհար խորտակեաց զեօթանասունսն զՍամոսացւոց՝ յորոց քսանքն էին զօրականին: Այսպէս զհետ մտեալ՝ տիրեաց և Նաւահանգըստին Նոցա, և եկեալ պաշարեաց զքաղաքն Նոցա. Նոքա և 'ի քաղաքէն իւրեանց արտաքս ելեալ քաջութեամբ՝ ժամ ընդ ժամ 'ի կռիւ կաքաւէին ընդ Պերիկղեայ 'ի Ներքոյ պարսպացն: Իսկ յետ այսորիկ իբրև բազում այլ Նաւք հասանէին անդր յԱթենայ, և ամենայն ուստեք 'ի Ներքս ընեալ փակեցան Սամոսացիք, առեալ յայնժամ Պերիկղէս ընդ իւր եռաթիս վաթսուն՝ խաղայր 'ի խորս անդր 'ի բացուստ զդէմ ունել՝ որպէս բազումք ասեն՝ Նաւացն Փիւնիկեցւոց որ դիմեալ գային 'ի թիկունս Սամոսացւոցն. կամ թէ՝ ըստ որում Ստեսիմբրոտոս ասէ՝ դիմել խաղալ 'ի վերայ Կիպրոսի, որ թուի ոչինչ հաւանելի: Այլ զիարդ և իցէ Նորա խորհրդմտացն, քաջ իսկ սխալեաց Պերիկղէս. քանզի անդէն 'ի մեկնել Նորա, Մեղիսսոս որդի Իթագենեայ այր իմաստասէր՝ զօրավար յայնժամ 'ի Սամոս, յընչաց քերեալ զսակաւութիւն Նաւուց Աթենացւոցն և զանհմուտ զզօրավարսն՝ որ կացեալ մնացեալ էին անդէն, ածէր հաւանեցուցանէր զՍամոսացիսն խուռն հորդան 'ի վերայ տալ Նոցա: Իբրև մարտն խառնեցաւ, յաղթական լինէին Սամոսացիք, և զբազումս

յԱթենացւոցն 'ի գերութիւն վարեալ և շատ 'ի նաւացն խորտակեալ՝ տիրացան 'ի վերայ ծովուն, և ժողովեցին ամբարս վասն մարտին՝ զոր ոչ ունէին յառաջագոյն : Այլ Արիստոտէլ պատմէ՝ եթէ և Պերիկղէս ինքնին յառաջագոյն 'ի պարտութիւն մատնեալ էր 'ի Մելիսսոսէ 'ի նաւամարտութեանն : Իսկ արդ Սամոսացիք փոխարինեալ զնշաւակութիւնն, յառակ գերւոյն Աթենացւոց՝ առեալ Բու խարանեցին 'ի ճակատ նոցա. քանզի և Աթենացւոցն խարանեալ իսկ էր 'ի ճակատ Սամոսացւոցն՝ Սամէնա : Եւ է այս Սամէնա ազգ նաւու զինջագոյն յառաջակողմն, գոգաւոր մեծ և լայնորովայն՝ քաջադէպ 'ի խորս ծովուն և արագընթաց. և անուն զայս կարգացին նմա, զի առաջին 'ի Սամոս տեսին զնա գործեալ 'ի Պողիկրատեայ բռնաւորէ : Եւ ասեն եթէ զխարանն զայս ակնարկէ Արիստոփանէս, այսպէս. Սամոսացւոց ժողովուրդդ՝ բազմագիր է :

Իսկ անդուստ Պերիկղէս լուր առեալ աղէտից զօրուն, դիմեաց վաղվաղակի 'ի թիկունս. և 'ի պարտութիւն մատնեալ զՄելիսսոս 'ի ճակատամարտի և 'ի փախուստ դարձուցեալ զՍամոսացիս՝ պաշարեալ փակեաց զնոսա 'ի պատուարս իւրեանց. խնդրէր մանաւանդ՝ քան 'ի վէրս և 'ի վտանգս քաղաքացւոցն՝ մեծապէս ծախու և բազմաժամանակեայ պաշարմամբ առնուլ զքաղաքն : Այլ իբրև տաղտկացան նոքա գեգերել անդէն, և բորբոքեալք 'ի

կռիւ՝ դժուարէին ընդ նման, առեալ ՚ի գունդս ութ բաժանեալ զամենայն զբազ-մութիւնն վիճակաւ։ Այնք որոց վիճակեցան ելանէր վիճակաւ Բակլայ սպիտակ, զանզի կացեալ նոքա պարապէին ՚ի խրախուճան՝ մինչդեռ այլք զմարտն մղէին։ Եւ յայս-մանէ առաս՝ որպէս ասեն՝ որք ՚ի գրգանս անցուցանեն զօրն, անուն կարդալ այնմ՝ Օր ողէփոն՝ ՚ի սպիտակ բակլայէն։ Բայց Եփո-րոս պատմէ՝ եթէ ՚ի մարտին յայնմիկ ՚ի գործ վարեաց Պերիկղէս և մեքենայս իմն որոց ընդ նորութիւնն և Պերիկղէս ինքնին հիացեալ էր. և էր նոցա ճարտարապետ Արտեմոն մեքենայագործ. և քանզի ՚ի պատճառս կաղութեան առն բարձեալ բերէին զնա ՚ի վերայ աթոռակի ՚ի պէտս գործոցն, անուն կարդացին նմա Փէրիֆօ-ռիտօս, այն է՝ Պարայածեալ։ Այլ յան-դիմանէ զայս Հերակղիդէս Պոնտացի, քան-զի ՚ի քերթուածի ուրեք Անակրէոնին դտանէ նա անուն Արտեմոնի Փէրիֆօրէ-տեայ՝ բազում դարուք յառաջ քան զմարտ պատերազմին Սամոսի, և որ անդամնօք նա-հատակութիւնք։ Արդ այս դարձեալ և ա-սէ, եթէ էր սա այս Արտեմոն այր փափ-կանկեաց և գիրգ և անարի վատասրտոտ. և կայր նա դադարեալ ՚ի տան, ուր երկուք ոմանք ՚ի ծառայիցն առեալ վահան պղնձի հովանացեալ ունէին ՚ի վերայ գլխոյն, զի մի ինչ թերևս ՚ի բարձանց հասեալ անկցի ՚ի նա. և թէ երբեք հարկաւորէր ելանել նա արտաքս, առկախեալ շալակաւ քեր

լեալ առ երկիւղաւ՝ այնպէս բարձեալ շրջե-
ցուցանէին զնա, յորմէ և անուն կալաւ նա
Փէրիֆօրէտօս:

Բայց յամսեանն իններորդի յանհնարս մնացեալ Սամոսացիքն՝ անձնատուր լինէին. յայնժամ Պերիկլէս առեալ հիմն ՚ի վեր քանդեաց զպարիսպս նոցա. առ եբարձ զնաւսն, և զտուգանսն ՚ի վերայ կարգեաց տուգանս սաստիկ դրամոց. նոքա կէս մի հատուցին ՚ի ժամուն, և զկէսն ուխտ եդին լնուլ ՚ի ժամանակակէտս, և ետուն նմա պատանդս: Սակայն Դուրիս Սամոսացի շատ ինչ եղերերգականս բարդէ ՚ի պատմութեանն, բազումս բարձեալ զՊերիկլեայ և զԱթենացւոց՝ խիստ զանագործութենէ ոմանց. զորմէ ոչ Թուկիդիդէս և ոչ Եփորոս և ոչ դարձեալ Արիստոտէլ յիշատակ երբէք շարադրեն. այլ թուի թէ Դուրիս ոչ ինչ ճշմարտախօսէ: Քանզի պատմէ՝ եթէ խաղս ՚ի հրապարակ ածեալ Միղեսացւոց ած Պերիկլէս զզօրավարս եռաթիոցն և զնաւամարտիկսն Սամոսացւոց, և պրկեաց զաւուրցոյց զնոսա ընդ ատաղձս տախտակաց աւուրս տասն, մինչև նոքա անդ այնպէս յոգնոց տառապեալ պատուհասան եղեն, եւ հրամանն՝ զի գաւազանեալ զնոսա ընդկառափունսն՝ այնպէս սպանցեն, և զդիակունսն քարշեալ ՚ի բաց ձգեսցեն անթաղ: Այլ եթէ Դուրիս՝ թէպէտ և ոչ ՚ի կրից անձին ձգեալ ինչ՝ ընդաւորեցաւ ՚ի պատմութեանն եղանել ըստ ճշմարտութիւնն ; քաջ իսկ հաւանեալ եմ՝ եթէ առատանօք

կամեցաւ նա աճեցուցանել զաղէտս զիւ-րոյ աշխարհին՝ առ 'ի բանսարկութեանց աղաղակել զԱթենացիսն ։

Յետ հիմնայատակ առնելոյն զՍամոս, դարձաւ Պերիկղէս յԱթէնս. և անդ դիւ-հանս գերեցիկս առնէր վասն անկելոցն 'ի մարտին, և դամբանականն նա՝ որպէս և ցայսօր սովորութիւն է՝ կարդայր 'ի վերայ անկելոցն նոցա, ուր աղաղաւ և սքանչացաւ նա ։ Իսկ իբրև 'ի բեմէն իջանէր Պերիկղէս, անդանօր կանայք առհասարակ բազում հիւրամեծարութեանց ժողովէին զնա՝ կա-լեալ զաջոյ նորա, և առեալ պսակս պսակս բոլորէին 'ի գլուխ նորա և վարսակալս՝ իբ-րու յաղթանակաւորք ախոյեանի ։ Իսկ յայն-ժամ Եղպինիկէ մօտ եղեալ առ նա՝ ասէր. “ Սքանչելիք են այդոքիկ՝ ով Պերիկղէ՝ և պսակաց արժանիք, որ մեզ բազումս և ա-ռաքինիս և քաջս 'ի կորուստ մատնեցեր քաղաքացիս. ոչ ընդ Փիւնիկեցւոց 'ի մարտ մատուցեալ և ոչ ընդ Մարաց, որպէս իմ եղբայրն հարազատ Կիմոնն, այլ զմեր նիզա-կակիցսն և զազգականս հիմն 'ի վեր տապալե-ցեր քաղաքս “ ։ Իբրև զայս ասաց Եղպինիկէ, պատմեն“ եթէ ժպտեալ Պերիկղէս՝ ասաց նմա հեզաբար զԱրքիղոքոսեանն զայն, “ Ո՛չ արդեօք քեզ՝ պառաւ գոլով քո՝“ 'ի դէպ էր օծանիլ իւղովք “ ։ Բայց յետ վանելոյն ըզ-Սամոսացիսն, 'ի վեր վարեալ Պերիկղէս և սքանչելի զանձն համարէր՝ որպէս ասէ Յոնն, իբրու այն որ ընդ ամիս ինն նկուն արար զառաջինն և զզօրաւորն Յոնիացւոց.

ուր Ագամեմնոն ամս տասն ծախէր 'ի նո-ւաճել զքաղաքս մի բարբարոսաց : Եւ ար-գեօք ոչ անիրաւ ինչ էին պարծանք Պե-րիկղեայ • քանզի ելք մարտին Սամոսա-ցւոց անյայտութեամբ լի էր և վտանգօք, նա զի՝ և ըստ Թուկիդիդեայ բանին՝ վայ-րկեն մի եւս Սամոսացւոց քաղաքն զծովուն տէրութիւն հանէր 'ի ձեռաց Աթենացւոց :

Իսկ յետ այսորիկ իբրև մարտ պատե-րազմին յուզէր Պեղոպոննեսեան, հաճեաց Պերիկղէս զմիտս ժողովրդեան առաքել 'ի թիկունս Կերկիւրացւոցն՝ ընդ որոց մարտ եղեալ կռուէին Կորնթացիք, և յինքեանս յանգուցանել զկղզին զայն հզօր յոյժ 'ի նաւականին. նա զի և մտացաւ առ դուրս կայր նոցա մարտն Պեղոպոննեսեան : Իբրև զքուէ այն արկին ժողովուրդք տալ ձեռն օգնականութեան, յայնժամ արձակէր Պե-րիկղէս անդր զԼակեդեմոնիոս զԿիմոնի որ-դին տասն միայն նաւուք 'ի Թշնամանս • քանզի զարմն Կիմոնի մեծապէս մտերմու-թեամբ էր ընդ Լակեդեմոնացիս : Արդ նաւս նուազունս տուեալ 'ի նորա ձեռս արձակէր յակամայս նորա , զի առաւել խէթ զԼակոնասիրութեանն կալցէն վասն Լակեդեմոնիոսի , եթէ երբէք ինչ մի 'ի մեծաց նահատակութեանց և 'ի հոյակա-պից ոչ առաքինասցի նա 'ի նոյն արշա-ւանսն • քանզի և ցանց զուն գործէր Պե-րիկղէս խափանել զպարգաւաճել որդւոցն Կիմոնի , իբրու այն որ չէին հարազատք՝ և ոչ անուամբք չափ , այլ խորթք և օտարք •

քանզի մին կոչէր Լակեդեմոնիոս, և միւսն Թեսաղոս, և միւս այլ՝ Եղէոս. և համբաւ հարեալ էր առ հասարակ՝ որպէս լինել նոցա կնոջ ուրումն Արկադացւոյ։ Այլ իբաղդյած եղեալ Պերիկղէս՝ զի ուժգյս առնէին նմա վասն տասանց եռաւթիոցն. և ըստ սակաւաձեռն օգնականութեանն՝ զոր ետ կարօտելոցն՝ մեծապէս յաւելցաւ զընմանեկ ամբաստանութիւն թշնամեացն նորա, առնելով անդրէն արձակէր 'ի Կերկիւրոս նաւս բազմագոյն ևս քան զառաջինն. և հասին նոքա անդր յետ մղելոյ մարտի պատերազմին։ Այսպէս 'ի տրտմութիւն բարկութեան բրդելով Կորնթացւոյն և ամբաստան զԱթենացւոյն եղեալ 'ի Լակեդեմոն, 'ի նոյն յաւելյան և Մեգարացիք դանդատ կալեալ զԱթենացւոյն, զի արգելուին նոցա միջամուխ լինել 'ի վաճառս իւրեանց, և առկայանալ 'ի նաւահանգիստս իւրեանց, և 'ի բաց ևս մերժէին ըզնոսա անտի ընդդէմ հասարակ իրաւանց և երդմնակուռ դաշանցն Հելլենացւոց։ Այս և Եգինացիք չարչարեալք և հարստահարեալք յԱթենացւոյն, բողոք բարձին և նոքա 'ի ծածուկ առ Լակեդեմոնացիսն. քանզի ոչինչ համարձակէին յայտնապէս ամբաստան լինել զնոցանէն։ Զայսու ժամանակաւ և քաղաքն Պոտիդիա գաղթական Կորնթացւոց ընդ ձեռամբ Աթենացւոց՝ ընդվզեալ պաշարեցաւ 'ի նոցանէ. և սոքա ևս մեծապէս փութացուցանէին զմարտ պատերազմին։

Այլ յայսր ամենայնի վերայ՝ Թէպէտ և արձակեցան գեսպանք յԱթէնս, և Արքիդամոս արքայ Լակեդեմոնացւոց զան գործէր բազում մասամբք լուծանել զամբաստանութիւն և ամբոխէր զնիզակակիցսն, Թուի թէ և երբէք ոչ գրգռէր մարտ ընդ Աթենացւոցն, եթէ յետս նահանջեալ էր նոցա զկշիռն որ ընդդէմ Մեգարացւոց և'ի հաշտութիւն եկեալ ընդ նոսա։ Այլ քանզի յաւէտ իսկ Պերիկղէս ընդդէմ գործոյ այնմ, և 'ի նոյն յորդորեաց զամբոխն, և պնդեալ կայր ընդդէմ Մեգարացւոցն, ուստի և Պերիկղէս միայնակ համարեցաւ պատճառ մարտին այնորիկ։ Իբրև հասին գեսպանք 'ի Լակեդեմոնէից յԱթէնս, պատմեն՝ եթէ յորժամ Պերիկղէս օրէնս 'ի գէտս եբեր նոցա՝ որ արգելուր բառնալ 'ի միջոյ զտախտակն արձանագրութեան նորուն վճռոյ, ասէ Պողիւարկէս մի 'ի գեսպանացն, ասէր առ Պերիկղէս, “Դու զտախտակն մի երբէք բարձցես 'ի միջոյ, այլ շրջեսցես 'ի ներքս զտախտակդ. քանզի չիք օրէնք 'ի միջի՝ որ արգելուցու քեզ զայդ”։ Այս բանք՝ Թէպէտ և հեշտ և բաղձալի, ոչինչ այնպէս շարժեցին զՊերիկղէս 'ի խորհրդոց անտի իւրոց. ուստի և Թուի թէ ոխերիմ ոսոխին էր նա ընդ Մեգարացիս։ Ապա աշխարհահաս և յայտնի փութացեալ յարուցեալ 'ի վերայ նոցա, իբրու այն՝ որ ակօսաբեկ արարին նոքա զնուիրականն գեափնին, արձանագրեալ վճիռ՝ արձակել առ Մեգարացիս Քարոզ, և զնոյն դարձեալ

առ Լակեդեմոնացիս ամբաստան զՄեգարացւոց։ Եւ է այս վճիռ նորուն իսկ Պերիկղեայ գրեալ բարեհամբոյր և մարդասէր իրաւաբանութեամբ։ Բայց երթն արձակեալն Քարոզ Անթեմոկրիտոս անուն մեռանէր, և թուէր եթէ 'ի դաւելոյ անտի Մեգարացւոցն, ապա Քարինոս արձանագրէր այլ վճիռ ընդդէմ նոցա՝ եթէ անպայման է այնուհետև թշնամութիւնն և անողոքելի. և զի՝ որ միանգամ 'ի Մեգարացւոց անտի հասցէ յԱտտիկէ, անդէն մահու մեռանիցի. և զի՝ և զօրավարք 'ի կալել անդ զհայրենի զերդումն՝ երդնուցուն ևս երթալ երկիցս 'ի տարւոջն ապատակել զՄեգարայիս. և զի՝ և Անթեմոկրիտոս առցէ թաղումն մօտ 'ի դրունսն Թրիասեան, և կոչի այժմ տեղին Դիպիւղոս։

Բայց Մեգարացիք 'ի չքմեղս եղեալ վասն մահուան սպանութեանն Անթեմոկրիտեայ, միանգամայն զամենայն զմեղսն արկին 'ի վերայ Ասպասիայ և Պերիկղեայ, առ այս և 'ի ներքս ընծայեցին զհռչակելին զայն և զհամբաւեալ տողսն քերթուածոյն Ակարնեան 6, " Իսկ զպոռնիկն զՍիմէթա գնացեալ 'ի Մեգարս պատանիք զինեհարբեալք գողանան։ Ապա ընդդէմ և Մեգարացիք ցաւով սաստիկ ըմբռնեալք՝ երթան գողանան յԱսպասիոյ պոռնիկս երկուս "։ Եւ այսպէս ոչ հեշտին ինչ է իմանալ, եթէ յինչ պատճառաց արդեօք դրդուեցաւ պատերազմն. սակայն և առ-

հասարակ ասեն՝ եթէ ինքնին Պերիկղէս եղև պատճառք՝ զի մի յետս նահանջեսցեն զվճիռն զայն։ Իսկ կէսք ասեն՝ եթէ զդէմ եկաց այդմ Պերիկղէս՝ քաջախորհուրդ մեծանձնութեամբ լաւագունին զհետ կրթելով. քանզի համարէր՝ եթէ խնդիր հրամանին այնորիկ Լակեդեմոնացւոց առ 'ի փորձ ինչ իցէ. զի թէ երբեք անդի առցեն Աթենացիք, զտկարութիւն անձանց խոստովանեսցին։ Եւ կէսք դարձեալ ասեն՝ եթէ յանձնապաստան 'ի վէգ եկեալ այնպէս արհամարհեաց Պերիկղէս զԼակեդեմոնացւովք։ Այլ ամենայն որ առաւել դըժպատեհ պատճառք մարտին այնորիկ՝ որպէս վկայեն բազմագոյնք՝ այսպիսի ինչ էր։

Փիդիաս ճարտար յանձին կալեալ էր գործել զդրօշեալն Աթենասայ, որպէս կանխեցաք ասացաք. և քանզի մեծապէս 'ի շնորհս էր նա Պերիկղեայ, վասն այնորիկ և խեռսայլին ընդ նա, և 'ի թշնամութե ևս դարձան ընդ նմա։ Արդ՝ թշնամիք նորա փորձ կամեցեալ փորձել 'ի նմա՝ զիարդ խուժանն ինքնին հակամիտեալ իցէ 'ի Պերիկղէս, և ճշգրիտ 'ի վերայ կալ մտաց ամբոխին, առեալ հրապուրեցին զՄենոն ցգործակիցն Փիդիայ գնալ 'ի հրապարակ անդր և խնդրել յամբոխէն՝ յապահովս առ բասասան զՓիդիասայ լինել [7]։ Իբրև հաճեալ հաւանեցան ժողովուրդք ընդ այդն, և յատենի քննեցին զՓիդիաս՝ ոչինչ կարացին ըմբռնել զնա 'ի վնաս գողութեանն. քանզի նա անդստին զամենայն ոսկին 'ի

զօրուն անձամբ վարեալ, ընդ նախապատուեալս խորհ-
րդոյն Պերիկղեայ այնպէս իմն աղա-
ցեալ էր 'ի դրօշեալն, որպէս զի և հեշտութն
բառնալ զամենայն և ցուցանել զկշիռն,
ընդ որում և յայնժամ հրաման ատայր ըստ
րախօսացն Պերիկղէս առնել զայն։ Յայսը
ամենայնի վերայ՝ շուք հասարակաց հրաշա-
կերտութեանցն Փիւդիոսյ՝ ընդ նախանձաւոն
կերպս առնել գրաւեալ զայսքն, և առա-
ւել եա զատապարտեա առնելեքն զնա, զի 'ի մեր-
ձին Ասպազիոնայ քանդակեալ զխելեցիկ յառա-
պարի դղրօշելոյն, և զանձինն եա կերպարան
'ի նոյըզս երբեր Փիւդիաս՝ իբրև զծերունւոյ
առն կնտաակի՝ վէմ կալեալ երկոցումբք
ձեռօքն. և զի՝ և զՊերիկղեայ գէմն քան-
դակեալ չքնաղագեղ, այն իւչ 'ի մարտ
մարտուցեալ էր նա ընդ Ամազոնեսն. և ըզ-
ձեռն բազկին Պերիկղեայ յառաջանալ ըզ-
անէք նիզակին այնպէս ճարտարապետութեան
կենդանաանդրելով՝ որպէս զի և ձգել զերե-
սըն, իբրու կամեցեալ Փիւդիաս ծածկել
զնմանութիւնն՝ յերկոցունցն եւս կողմանց
երևելի։ Այլա 'ի բանտ արկեալ Փիւդիաս՝
անդստին մեռանի հիւանդացեալ. կամ թէ
որպէս կէսք ասեն՝ դեղեալ 'ի թշնամեաց.
զի զպատճառս առաջ կարգեն ամբաստանու-
թեանն զՊերիկղեայ։ Իսկ յայնժամ ժողո-
վուրդն ընդ առաջարկութեանն Գլիւկո-
նեայ՝ ապահարկ առնէր զամբաստանողն Մե-
նոն. առ այս և պատուիրէր զօրավարացն
խնամ ունել աներկիւղութեան առնն։
Զայնու ժամանակաւ և Ասպազիա ինք-

Նմին ամբաստանութեանն յատենին խօսել ամբաս_ ընդդէմ յԵղպինիկեայ աղաչեալ կառավարեցաւ գեղեցկու_ թեամբ. առ այս՝ թէ և զառաջին կանանց որ երբե_ մնն առ նա՝ անձամբ առ ինքն ընդ կանանց Պերիկղեայ: Իսկ և Իդոմենեւս մեղադրէ զնա գրելով յայտնեալ, եթէ սպանող է մեծին և զօրաւոր լինելով ժողովրդականն՝ որ միաբանեալ առ հասարակութեանն ինչ զառաջնորդականն, կամ թէ ձեռն 'ի մէջ առեալ զնա եղեռնա_ բարոյ. սպանել զնա գործելով Իդոմենեւս կե_ ղակացուցելով յարդարականն զՊերիկղէս 'ի սպան_ ման Աղիստոդիկոսայ: Իսկ ժողովրդականք մեծազօրք ընդկալեալն զառաջնորդութիւնն, եղեւ և այլ ևս մեծի՝ զոր գրեաց Դիոնո_ նոյնպիսիս; զի զառաջնորդ Պրիսամասնեայց 8 հասարակ առնէ՝ Պերիկղէս զժողովուրդն՝ զոր ծախսեաց. և զի՝ զառաջնորդ խնդրեսցէ 'ի մէ_ ջէ ամենայն առնել զօրութեան՝ 'ի քաղաքի ամեն առաջնորդն զառաջնորդն: Այլ Ադրոն ե_ րարեալ զայս 'ի մեծամեծ ամենայն, և գրեաց թէ՝ զի զառաջնորդ թուով հարիւր և հինգ հա_ րիւր զառաջնորդն զօրացն. որ զինչ և կամեր_ ցի որ կոչել զինուորն՝ եթէ զօրութիւն և կարգաւ, և եթէ զարդարել անմխիթարութիւն: Բայց յայնժամ յաղթողեցաւ Պերիկղէս յամե_ նայն հանել զԱդրաստոս. քանզի՝ որպէս առնէ Ելլենացւոց՝ 'ի ժամու զառաջնորդութեան նո_ րա շատ զօրավարութեանց եղեալ Պերիկղէս առաջնորդեաց վասն նորա զօրավարութեան: Այլ վասն Անաքսագորայ զանգիտեալ՝ եւ նմա մեծին 'ի քաղաքէն և խնդրեն յորդորելոյ զնա: Այլ քանզի զժողովուրդ եղեն ընդ_

նաև ժողովուրդք 'ի պատճառս Փիդիոյ՝ երկեաւ 'ի դատաստանէ անձինն, ուստի և զհանդերձեալ մարտ պատերազմին՝ որ ծուխ 'ի ներքոյ արծարծէր՝ արծարծեալ բորբոքեաց. այն կամեցաւ յուսայր՝ 'ի բաց յանձնէն քերել զամբաստանութիւնն և նկուն առնել զկիրս նախանձուն, եթէ 'ի չահատակութիւնս յայն 'ի մեծամեծս և 'ի վտանգս՝ առ ինքն միայն դիմեալ աղաւինեսցի քաղաքն առ մեծի աւագութեանն և զօրութեանն։

Այլ պատճառք զայսոսիկ ասեն՝ որք աղագաւ ոչինչ թոյլ ետ Պերիկղէս Աթենացւոց տեղի տալ Լակեդեմոնացւոցն. այլ ստականքն անյայտ է ճշմարիտն։ Սակայն Լակեդեմոնացիք խելամուտ եղեալ, զի թէ Պերիկղէս միայնակ նկուն լիցի, Աթենացիք յամենայնի հեշտալուրք լիցին, հրաման ետուն Աթենացւոցն քաւութե սրբութեան 'ի նզովիցն, որում և ինքնին Պերիկղէս պարտաւոր էր ըստ մայրենի զարմին, որպէս ասէ Թուկիդիդէս 9։ Այլ ե՛լք իրացն ընդ հակառակն պատահեաց ստախացն. քանզի փոխանակ ընդ խեթին և ընդ բամբասանութեանն՝ մեծ ևս շուք պատուոյ կալաւ Պերիկղէս առ իւրսն՝ իբրու այն որ մեծապէս ատելի և ահարկու էր նա Լակեդեմոնացւոց։ Վասն որոյ և Պերիկղէս՝ մինչչև Արքիդամոս ընդ Պեղոպոննիսացւոց ասպատակեալ յԱտտիկէ, ասէր կանուխ առ Աթենացիս. զի թէ երբեք Արքիդամոս յաղագս վարելոյ զայլոցն կալուածս

զինուորն անպարտելի թուէր հիւպատոսածառայութեանն , կամ թէ առ 'ի պատճառս սուղ թշնամեացն աշխատասիրութեանն զնմանէ , քինքն մտադիւրաբանութեամբ ընծայեցաւ քաղաքին ողջոյն զինուր զերանին և զդատաւորութեանն :

Ցետ այսորիկ խորհրդոցն զնոցին Լակեդեմոնացիքն զօրու ծանու հանդերձ նիզակակցօք արշաւեցին յԱտտիկէ . և էր նոցա զօրավար Արքիդամոս արքայ . և յառաջի անկեալ զդաշտսն՝ մտեալ 'ի ներքս մինչև յԱքարնաս . անդ բանակեալ նստէին ակնկալեալք Աթենացւոցն , զի առանձնեալք նախանձախնդիր 'ի վերայ աշխարհին իւրեանց և մարտիցեն : Սակայն դժնդակ էր Պերիկղեայ ընդդէմ վեցից բիւրուց մարտիկաց Պեղոպոնէսացւոց և Բիովտացւոց (քանզի այսչափ էր բազմութիւնն՝ որ առաջինն արշաւեցին յԱտտիկէ), մարտ դնել կռուել 'ի վերայ քաղաքին : Այլ Պերիկղէս առնել ամենայն զԱթենացիսն՝ որ ոչ կին հանդուրժեալք աստղաբանութեանն խնդրէին զմարտ . զոյն զործէր ամոքել զնոսա զեղեցիկ , և առնէր այսպէս . Նաւաք սաստաքանցք և յամենայն՝ վերաբերեալն առաջ բաժանեալ . ոչ նոյնպէս էին մարդիկ 'ի մեծ սաստիկ լաւագոյնք , զորս ոչինչ հեշտին է փոխանակել զնոսա : Ուստի և ոչ կամեցաւ նա յառաջեան խաղալ զմ ողորմելութեան , զանձկանալ թերեւս ընդդէմ խորհրդոց իւրոց հարկաւորեցալ զործել ինչ . այլ զոր օրինակ քաջ զեկավար նաւու՝ այն ինչ հողմ ուժգնակի անկեալ 'ի ծով՝ ինքն զերեցկա-

պէս զամենայնն յաղթահարեալ և զզէնսն կապ-մեալ ծովին յաղթութեան ղեկավարութեամբն, ո՛չ արտասանութեանցն երբեք ինչ ասանէ և ոչ պատգամաւորաց նաւաստեացն՝ որ մեծապէս յանձ և 'ի տագնապ ընկղմեալք լեզեն. սա-պէս յայնժամ Պերիկղէս փակեալ ամբա-րտակին զբնականն, և ընդ ամենայն կարգեալ պարտէզս և պահպանաց յառաջահոսիլ, վա-րէր ծովապատր 'ի խորհրդեանն, ոչ ձայնից միոյ եղեալ աղաղակելն և քրթմնջմանց. Թէպէտ էին էին և 'ի բարեկամաց բազումք՝ որք աղաչանօք մատուցին, և 'ի թշնամեաց զայրացեալ՝ որ սպառնային 'ի վերայ կապե-լին և չարախօս եւս կային. առ այս և շատք յերգ 'ի քնար և յառակ ասնուլին զայլն, խրատ որ անարի վատասարթա 'ի զօրավա-րութեանն՝ յառ և յապուր թշնամեացն լքեալ թողեալ լինէ զամենայն: Այլ և Կղէոնն՝ լինելովն զօրհանապար թշնամանօք յարձակեալ 'ի նա՝ խնդրէր համարձակել ռամկին, քանզի անանէր զդատաւորութիւն բարկութեանն զԱթենացւոցն. ըստ որում և Եղմիպպոս յայս առնէր 'ի Վերջաւանին իւր՝ այսպէս.

Դու Արքայ քաղից Պարկաց,
Եւ որ Ըահապք են վայրաց,
Ար ինչ դու երբեք չառնուս
'Ի բուռն ընդունել նիզակաց:
Այլ մարտից և մրցմանց,
Մեղ վերջերբ բան ճարտար,
Եւ զոգին ընՏեղեանեայ 10

Ցանձին բերես հիքապարտ ։
Եւ պատ թէ անհնարինս
Սուր սուսերին ստուգին ազգը ,
Դու զօրաց՝ թեպէտ խածեալ
'Ի Կղէոմենէն այն հրաժարա ։

Այլ ոչինչ յայսպիսեացս ասացն ոչ շարժեաց զՊերիկղէս. ամենայն անհաւատալեացն հեղձամաց եւ անշշունջ, եւ ապա առեալ արձակէր 'ի Պեղոպոննեսոս հանդերձ մի նաւաց հարիւրոց. ինքն քնեալ անդր՝ այլ կայր մնալ առ անձին եւ տնտեսութեան քաղաքին, մինչեւ ապա 'ի վերջէ ելեալ 'ի բաց մեկնեցան Լակեդեմոնացիք ։

Այլ զզուանութիւն զԱթենացւոցն յառաջադրեալ անձին՝ ամոքեալ Պերիկղէս, առաջ բաշխէր նոցա զդրամս եւ ժառանգութիւնս առհմանէր նոցա ։ Քանզի վանեալ զամենայն Եգինացիսն՝ առեալ զերկիրն նոցա բաժանէր յԱթենացիսն վիճակաւ ։ Առ այս եւ սփոփանս մեծամեծս 'ի ներքս բերէր նոցա տրկած աղէտից թշնամեացն. քանզի անդ նաւաստարտիկքն հարիւր նաւուց 'ի Պեղոպոննեսոս շատ ինչ 'ի գաւառէ անտի գիւղս եւ աւանս յաղագս վարեալ քանդեցին. դարձեալ եւ ինքնին Պերիկղէս ընդ ցամաք խաղացեալ 'ի Մեգարա՝ յամենայն աւանս կացուցանէր առհասարակ ։ Եւ անշուշտ այս՝ եթէ Լակեդեմոնացիք շատ բաղում հասուցեալ Աթենացւոց եւ 'ի նոցանէն դարձեալ բաղում կրեալ 'ի ծովու, ոչինչ այնպէս յերկարագոյնս մղէին

ղմնարան, նաև և այլոց նկուն ընկերն՝ ըստ ա-
րուեստ նախատպատուամ եղև Պերիկլէս, ե-
թէ երբեք աստուածաբանութեան չկայր ընդ-
դէմ խորհրդոյ մարդկան : Քանզի նախ
քան զամենայն՝ արածութեան ճարտարեցաւ
՚ի քաղաքին . և միանդամայն [illegible] և
[illegible] երկրաբանութեան նորա յառաջա-
նութեան զարմացուցանէր . և առ հասարակ
յոգւոյ և ՚ի մարդկին հարստն այնուհետեւ Ա-
թենացւոց, ՚ի պատմութեան [illegible] ընդ
Պերիկլեայ . որպէս որք ընդդէմ բաժնէին
կամ հօր առ ցաւոցն մոլեգնինք լուսաւոր
արձակեցին, այսպիսի քնչ էին նոքա՝ հրա-
պուրեալ ՚ի թշնամեաց անունն նորա . հա-
մարեցան եթէ ՚ի բարձրութեանն դաւեհին և
զիւղական մարդկանն՝ որ հոգուն ՚ի քա-
ղաքն եսոս՝ ճարտարեցաւ [illegible] . առ այս՝
զի և յեղանակ [illegible] խառնակեալ
[illegible] ՚ի ընտանութեան անձնուէր և ՚ի
[illegible] [illegible] խառնեալ
[illegible] . և մխիթարանակ ընդ առուքք և
ընդ բարեկամաց կեանսն՝ [illegible] նո-
քա կեանս [illegible] ընդդատուն և անզգործ :
Ուստի և զպատմածս այսպիսին ՚ի Պերիկլէս
՚ի մերս հանդերձ, որ մասնաւոր ՚ի դաշ-
տին առ երբեր զխռովութիւն զայն հողոցն ՚ի
ներքս ՚ի պատերազմի . ոչ ՚ի զործ [illegible]
[illegible] զհոտս, այլ [illegible] զհօտս [illegible] [illegible]-
կեալ զհոտսն՝ ՚ի չարաչար ճարտարութեան [illegible]
[illegible] . առ այս և ոչ այլ [illegible] [illegible]
զհոտս, և ոչ զարձեալ զերեր յանխոնջն ՚ի
ներքս երբեք նոցա :

Այսպէս 'ի [illegible] պատերազմի և 'ի [illegible] Աթենացւոց՝ համեմատե[illegible] յարմարեալ Պերիկլէս նաւս հարիւր և յիսուն, և 'ի նոսա հետևակ բազում և այրուձի 'ի քաղաքաց և 'ի կողմանց. և այնպէս [illegible] և պատրաստ [illegible] ծովագնացց ուղւոյ՝ յորս [illegible] 'ի [illegible] քաղաքացեաց [illegible] պատրաստութեանն, և [illegible] մեծամեծս 'ի [illegible] Աթենացւոցն: Իսկ [illegible] պատրաստ[illegible] և [illegible] հաստատուն [illegible], և [illegible] Պերիկլէս ել յնաւաթեն [illegible] շուրջ ծովա[illegible], [illegible] 'ի ժամանակն քաղաքին [illegible], և [illegible] հաստատուն [illegible] կայլու. և [illegible] 'ի մեծաց նշանաց: Իսկ [illegible] Պերիկլէս հաստատուն [illegible] և 'ի [illegible], [illegible] 'ի հանդէ[illegible] նորա և քաղաքակեալ հարցանէր [illegible], եթէ [illegible] մինչ [illegible] բանն, կամ թէ [illegible] մինչ [illegible] նշանն [illegible]. Իսկ [illegible]՝ եթէ ոչ. [illegible] Պերիկլէս. «Ոչ [illegible] 'ի [illegible]. բայց [illegible] մեծ [illegible] է [illegible]՝ որ 'ի ժամանակս [illegible]»: Այլ [illegible] 'ի [illegible]: Բայց [illegible]՝ [illegible] մեծամեծս պատրաստութեան [illegible] նաւահանգստեան Պերիկլէս. և [illegible] Իսկ [illegible]

զնուաճողականն Եղիփտոսուրաս և ամէն ուրեք ամբողջ ամբողջ ընկալանել զնա, 'ի գերելս ելեա-նել 'ի յաւաղջն վասն ամբաստին՝ որ ծառայակեր ոչ 'ի նաւաս միայն, այլ և առ հասարակ յառ-աջնականութիւն կարգել՝ զորս միանգամ մերձեմնայցն 'ի զօրականն։ Եւ քանզի մե-ծամէնս արտնեցան ընդ նա Աթենացիք, դուռն գործեր ամրացել և քաղձանալերել. առ-կայն և կարգաց ինչ ոչ չինջանցանել զոտաւոր բարեկամութեանն կամ փոխել ինչ զնաւս 'ի խորհրդոց, մինչև արկեալ քաշեաց և առ ընդունելի կատարեցին 'ի նմանէ զզօրավարու-թիւնն, և առաջադրեաց և արծաթոյ առաջա-նեցին զնա. կէսք նաւագին զթիւն՝ իւրեա հեղեսաստան տապալանդաց, և կէսք զարձեամբ առաջաբերումն՝ իւրեա յետնոյ։ Եւ ելից զա-ռաջնորդ Կղէոն յատենի՝ որպէս ասէ Իդո-մենէս. կամ թէ Միկթիաս՝ որպէս ասէ Թէոփրաստոս. այլ Հերակլիդէս Պոնտա-ցի գրէ՝ եթէ Լակրատիդէան էր։

Այլ հասարակաց իրք ամբողջ ամբողջ այ-նուհետև հանդարտէին. քանզի իւրեա ըդ-խայթոց ընդ հարուածոյն՝ եթող ելքն 'ի խուժանն Պերիկլէս զարտաքնութիւն բար-կութեանն. սակայն առ ամէն իրք Պերիկ-լեայ հիացեալ էր. քանզի ոչ սակաւք 'ի արժանութեանն առաջարար անկան յաղզա-կանաց անտի նորա. առ այս՝ և 'ի հարուստ ժամանակաց 'ի հերձուած և 'ի խառնակ ծփայր տուն նորա։ Քանզի Քսանթիպպոս երէ-ցագոյն հարազատ զաւակաց նորա՝ վատ-նիչ գոլով անդամեն 'ի ընութեանէն ամէն

[illegible]

մեծայր Պերիկղէս, նաև յաղթականութեանց իւ-րոց և 'ի բարեկարգութեանց բարուց՝ որ մեծապէս նպաստէր էին նմա յառաջնորդութիւն քա-ղաքին : Այլ յայսր ամենայնի մերոյ ոչինչ բերկրեալ անկեալ Պերիկղէս, և ոչ ապշեալ առ-կածից՝ մտացն նորա և մեծութեան ոգւոյն անձնատուեցին ինչ . այլև ոչ արտասուեաց, և ոչ գլխահակ ասաց, և ոչ 'ի թաղումն ու-րուք 'ի կարելոց ազգականացն ցուցաւ նա երբեք, մինչև 'ի մահ անդր Պարալոսի՝ որ էր նորա միայն մնացեալ նշխար 'ի հարազատաց զա-ւակացն : Քանզի յայնժամ նկուն այնու-հետև գտաւ յաղէտից զաւակին . Թէպէտ և պատասխանէր կա զանձն խրոխտ զառաւելինն անձնատուան 'ի մեծանձնութեան իւրում, ոչ կարաց . այլ յորժամ զպսակն դնէր 'ի գլուխ որդւոյն՝ անկեալ բերկեալ յաղէկէկ զորովելոյն 'ի սրտին, հեծեծեաց զանձնապէս և յորդւոց հանէր և զդերբարտուոյն բազմաց յայնժամ յաչաց իւրոց, զոր երբեք չէր նո-րա արտաքսեալ յամենայն 'ի կեանս իւր :

Այլ յետ այնորիկ փորձ փորձեալ քա-ղաքին զայլոց զօրավարաց և ճարտասանա-ցից, գտանէր և ոչ զոք զուգակշիռ Պերիկ-ղեայ և համբերատարութեան, առաջնորդեալ 'ի ձեռս առնուլ զմեծ իշխանութիւնն . ուստի և միաբանեալ ընդհանրականն Պերիկղեայ, և կոչէին զնա 'ի բեմն և 'ի զօրավարու-թիւն քաղաքին . առ այս՝ և Ալկիբիադէս խնդրեցին և այլք ևս 'ի բարեկամացն նորա, համոզեցին զնա ելանել արտաքս 'ի տանէն՝ ուր թաղեալ նստէր նա 'ի սուգ :

Իսկ կերպն և ժողովրդականութեան թշնամին վերջ ՚ի
նեղութիւն երկեր ընդ ամուսնացեալ կնոջն առ. Պե-
րիկլէս, միաբանեալ ընդ յառաջին կարգաւ ու-
սումնականն քաղաքացին. և կալեալ ՚ի դը-
րանվարդ՝ եռ անդէն լուծանել զօրէնսն զոր
նա ինքն արձանագրեալ էր վասն ան-
հաւատարմութեան. որպէս զի ՚ի նուա-
ճել խաղաղութեան պատերազմութեանն, մի պա-
կասեսցի անուն ամսն նորա և ձեռն նորա:
Իսկ օրէնքն՝ զոր եդ նա և եւլյծ, այսպիսի
ինչ էր: Իսկ ՚ի հաստատութեան ժամանակաց ան-
ցեալ բարձրագոյնաձեւ Պերիկլէս ՚ի քաղաքական-
նութեանն, և որպէս կանխեցաւ առաջագոյն՝
էին իսկ նորա որդիք հարազատք, կարգեաց
եդ նա օրէնս՝ զի նոքա միայն լիցին Աթենա-
ցիք, որք միաբանեալ ծնունդք լիցին յերկուց
Աթենացւոց: Իսկ առաքեր կերպն արքայ Եգիպ-
տացւոց առաքէր ՚ի պարգև Աթենացւոց
դրկեալ ցորենոյ բեռինս չորս՝ զի բաշխեսցեն
՚ի քաղաքացիսն անդր, անիրաւութիւնք
առաւել շատ յաւելցան ընդդէմ անհարազա-
տիցն ՚ի պատճառս օրինացն այնոցիկ՝ որ
ցայն վերջ ծածկեալ էին և անհոգա-
ցեալք. առ այս և բազումք եւս շարժեցան
ընդդէմ շատից: Ուստի և որ միաբանեալ
առաւելեցան յայնժամ՝ վաճառեցան որդիք
կերպն հինգ հազարք. իսկ բնաւ մի և չորք
հազարք և քառասունք մնացին քաղաքացիք
և հաստատեցան Աթենացիք: Եւ արդ՝ թէ-
պէտ և զժնդակ էր՝ եթէ օրէնք որ այնչափ
ինչ զօրացեալ յաղթեալ ընդդէմ այնչափ
մարդոյն, զնոյն դարձեալ լուծցէ՝ որ կար-

զետոյն զնա. յայսր ամենայնի վերայ՝ առա-
ռաւելն արկանէր Պերիկլեայ 'ի մեծամեծս ախ-
տակցութիւն շարժեցին զԱթենացիս, իբ-
րու եթէ զպերճութեանն և զզօրաւորութեն
պատուհաս այնուհետև լուծեալ էցէ Պե-
րիկլէս. և թուէր ինն այնպէս Աթենա-
ցւոցն՝ եթէ 'ի վրէժառու Քաջաց անուն որք
ատատկապէս ընդ-հարեալ խռչատանգեացըղ-
նա, և արժան այնուհետև էցէ ափոփանս
առնուլ նմա առ 'ի մարդկանէ. և այնպէս
ապա շնորհեցին նմա զոյն 'ի զայրն իւր
զանհատապատ զիւր որդին, և զխրատականն
նա անուն առաւ նմա: Եւ էր առ այս որդի
Պերիկլեայ, որ 'ի գլուխ հարեալ նաւամարտ
առութեանն եհար զԼակեդեմոնացիսն մերձ
յԱրգինուսեան կղզիսն. բայց ապա դա-
տակնիք մահու ընդունէր յԱթենացւոց
հանդերձ նիզակակցօք զօրավարօքն 12:

Այլ թուի թէ 'ի ժամանակին յայն-
միկ և Պերիկլէս ինքնին հարաւ արածու-
թեամբն, թէպէտ և ոչ ինչ այնպէս սաստիկ
և բուռն՝ իբրու այլքն. սակայն խօթու-
թիւն տակաւ վարակեաց զնա, և այնպէս
յերկարաձգեալ բազմազէմ ախտիւն՝ հիւ-
ծէր մաշէր մեղմով զմարմին նորա, և վա-
տէր զխորհուրդ մտացն նորա: Արդ Թէո-
փրաստոս 'ի բարոյականսն՝ 'ի պայքար մը-
տեալ եթէ արդեօք ընդ բախտին փոփո-
խեսցին և բարք. և թէ արդեօք բոյս բա-
րուցն 'ի ծուփս ախտից մարմնոյն թօթա-
փին յառաքինութենէ, զայս ինչ անդանօր
արձանագրեաց մեզ՝ եթէ Պերիկլէս 'ի խօ-

թուլութեան խնդրում, միում ումեք 'ի բարե-կամացն՝ որ յայց եկ՝ առեալ ցուցանէր ըզ-գրիձն, զոր կանայքն ինքնին կախեալ էին նորա զդարդարանացէն, իբրու եթէ սաստիկ եւ տանջել նմա 'ի խօթութենէն՝ յորժամ 'ի վերայ իւր բարձեալ բերէր զանմտու-թեան զայն բժժանսն: Իսկ իբրեւ 'ի վերջինս վտանգեալ կայր Պերիկղէս, շուրջ զնովա-եկեալ նստեալ աւագորեար Աթենացւոց եւ բարեկամքն. Ճառ արկեալ խօսէին նոքա ընդ միմեանս վասն առաքինութեանն Պե-րիկղեայ եւ առաջնութեանն, եւ համարէին զքաջութիւն նահատակութեանց եւ զյաղ-թանակացն թիւ. քանզի թուով ինն կանգ-նեաց նա վասն քաղաքին 'ի զօրավարու-թեանն եւ 'ի յաղթութեան խնդրում: Զայ-սոսիկ բարբառէին նոքա առ միմեանս, իբ-րու ոչինչ լսիցէ Պերիկղէս զգայութիւն 'ի դժար գոլով: Այլ նա իմանայր քաջիկ զա-մենայն զխօսսն եւ ընդ միջեալ զբանսն ասէր նոցա, եթէ հիացեալ զարմանայ՝ զի զա-մէն եւ յիշատակ առնեն նորայոցն՝ որ հա-սարակք են եւ բաղդին, եւ զոր բազումք եւ այլք 'ի զօրավարացն նահատակեցան. իսկ զգեղեցիկն առաւել եւ զմեծագոյն պար-ծանսն ոչինչ յիշատակեն նոքա. “Իբրու այն՝ զի (յաւել նա ասել) յԱթենացւոց անտի եւ ոչ մի ոք յիմ պատճառս՝ 'ի թուխս երբեք հանդերձեցաւ“:

Եւ արդեօք մեծապէս զքանչացաւ Պե-րիկղէս ոչ միայն մարդասիրութեամբն եւ հեզութեամբ ոգւոյն՝ զոր առաքինեցաւ

նա բաղդաւոր անձամբ, և 'ի սաստկին եւս թշ-
նամութիւնն յաւելուածոյ առ 'ի նոյն. այլ և գեղեցիկ մեծութեամբն՝ զի յա-
ռաջելն նախահաստատութիւնն մեհենայն հա-
մարեցաւ գործ՝ անդի երեւէր ոչ առել 'ի մե-
ծի առաւելութեանն՝ ոչ նախանձու և ոչ բարկութեանն. և զի՝ և առ խոր թշնա-
միս երեւէր նա ոչ զոսա ոխերիմ անհաշտ: Վասն որոյ ինձ թուի, եթէ միայն վասն հեզութեանն ոգւոյն և քաղաքավարութեան կենացն՝ զոր յայնչափ առաւելութեանն պար-
զութեամբ և անարատութեամբ վարեաց, աննախանձաւոր մտօք և 'ի ձեռն զանուանդ-
րոյգ նոր և չքնաղ կարգադրեցին նմա՝ Ողիմ-
պիոս: Զոր օրինակ և զդաստեալ աստուածոցդ՝ որ անդամորին 'ի բնէն պատճառք գոն բա-
րեաց և ոչ երբեք չարեաց, նոյնպէս արդարեւ արժանիս համարիմք՝ իշխանութեան ունել և թագաւորութեան գեհեցս, այլ ոչ արդարեւ ըստ օրինակին՝ զոր քերթողքդ միապատա-
նեն. այն որ խռովս և ամբոխս հարկանեն 'ի մեր միտս՝ անյարմարապատշաճք իւրեանց կար-
ծեօքն. միանգամայն և նշաւակեալք ըմ-
բռնեին նոքա 'ի քերթուածս իւրեանց: Քանզի զի անուանեալ կոչեն նոցա աթոռ և ան-
քոյթ կայան և անդորրելի՝ զվայրն, զոր ասեն առանց բնակութեան աստուածոցն. Իսկ 'ի հողմոց բռնութենէ երբէք ոչ ծփեալ վայրն, և ոչ դարձեալ յամպոցն զուարթե-
լոյ երբէք նսեմանայ, այլ եթերքն անդա-
նօր անսուր են. և զի՝ անդ զամենայն ժա-
մանակին առ հասարակ անդորու և անայլայ-

լոկ լոյս փայլատակեալ ճաճանչէ սուրբ և անխառն, որ զի և կայան այդպիսի՝ քաղա-վայելուչ արդեօք իցէ անմահական և երանելի նոցա բնութեանն։ Բայց առաս յետ այսոցիկ նոյն քերթողք մեզ զնոսին զաստուածսն 'ի զէնս բերեն լցեալս ամենայն զժտութեամբք և կռուովք և նախանձու և բարկութեամբ, և այլ ևս բազմադիմակ կրիւք, որ և ոչ մտաւոր մարդկանց երբէք 'ի ճահ բնաւորեցաւ։ Այլ այսոքիկ թերևս այլում 'ի դէպ կարծեսցին մատենագրութեան։

Բայց առ յապայ յերաց անուն խելամուտ եղէն Աթենացիքն իմանալ ճշգրիտ զՊերիկղէս, և մեծապէս ըղձիւ փափագել նմա։ Քանզի և որք միանգամ առ կենդանութեամբ նորա ընդ ակամբ հայէին ընդ զօրութիւն աւագութեան նորա՝ իբրու այն որ առաւելածս ածիցէ նոցա, անդէն վաղվաղակի իբրև 'ի միջոյ բարձաւ նա՝ և նոքա զայլոց ոմանց զհռետորաց զփորձն առին և զառաջնորդաց ժողովրդեանն, խոստովան եղեալ վկայէին եթէ չէր ոք 'ի մարդկանէ իբրու զՊերիկղէս՝ չափաւոր 'ի պերճութեան աւագութեանն, և պերճ և արգոյ 'ի հեզութեանն։ Եւ որ նախանձաբեկն առնէր մեծութիւն զօրութեան նորա՝ զոր միապետութիւն յառաջն կոչէին և բռնաւորութիւն, արագ արագ տեսին յայնժամ՝ իբրու որ պատուար անդրժելի էր նա փըրկութեան քաղաքին։ Այնչափ իմն ապականութիւն և խուռն չարիք հորդան առ-

ունեւալ յետ այնորիկ վարդաւելերչին գաղթաղաղին.
ղողա լինելին Գերիկեղեա առ կենդանու-
թեամբն հարսեալ վարդմարդկը և արդեղելոյ
աանձկը, գունչ ձորաարառ ձառաղելոյ՝ ան-
բուժերլոյ այնուհետև լինելին։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Միոյն ատեղծեալ ընդ կատակս՝ Իւ-րու Գլուխս հաւաքիչ բազմաց գլխոց, 'ի նշանակել զմեծութիւն գլխոյն Պերիկլեայ. որովհետև և 'ի տաղն այլ ոմն՝ իբրև մետասանեան անկողնոց բազմականն՝ կատակէ զգլուխն զայն զմեծ:

2. Քանզի յն. Χειρων, նշանակէ՝ Չարագոյն: Դարձեալ՝ և անուն է մարդոյ:

3. Այսինքն՝ և 'ի հերքելն զբան, և 'ի հաստատելն:

4. Այս է՝ զՏաճար Աթենասայ. և յայտ է՝ եթէ կոյս ասելով, զդիցուհին զայն իմանան Աթենացիք:

5. Այս իշխանութիւն՝ էր իրաւունք հարցանելոյ պատգամս 'ի դիցն Դեղփեայ՝ նախ քան զայլս ամենեսեան, զոր Յոյնք կոչեն՝ Προμαντεία:

6. Են այս տողք Արիստոփանեայ կատակերգակ քերթողի:

7. Իբրու եթէ գողացեալ իցէ Փիդիաս յոսկւոյ անտի դրօշելոյն Աթենասայ:

8. Պրիտանէայք, էր անուն ծերակուտի Աթենացւոց:

9. Եւ էին այս նորոգք վասն յանցաւորութեանն առ Կիւղոնիւ. տե՛ս 'ի վեր 'ի Սողոն: Եւ էր մայրն Պերիկլեայ 'ի զար-

մէջն Մեղադիկեայ ուղղափառն Աղեքսանդրի, որ եղև առաջնորդ յանցաւորութեանն ։

10. Ասեն զՏեղերս զամն՝ այր հանճարաւոր անսայրի վարդապետութեան ։

11. Հինգ այդ են միջանկեալ առ Հեղլենս. Բանականութիւն, Վարք, Ուսումն ; Ձիր բնաւորականաց, և Գործնականութիւն ։

12. Էր առաքինասիրութեանն մարտուցմամբ, զի անախտութեամբ եղեն 'ի Թագաւորին Սեւերոսին. և զնայք եղեն բանիւ՝ քանն և չորս ամօք յետ մահուան Պետրոսեայ ։

ՓԱԲԻՈՍ ՄԱՔՍԻՄՈՍ

ԱՅՍՊԻՍԻ որք գոլով Պերիկղէս 'ի յի-շատակաց արժանիս՝ որպէս աւանդեցին մեզ, այսուհետև 'ի Փաբիոս առեալ դար-ձուցուք մեք զպատմութիւնս ։ Ասեն՝ ե-թէ 'ի Յաւերժահարսանց մի ոմն, իսկ կէսք՝ եթէ 'ի գաւառացի կանանց անտի առ Տի-բերիս գետովն եկեալ խառնեալ ընդ Հե-րակլեայ՝ ծնեալ լեալ զՓաբիոս, այն՝ որ բազմաթիւ և հռչակելի զարմին Փաբեանց նախածնող եղաւ 'ի Հռոմ քաղաքի ։ Իսկ կէսք պատմեն՝ եթէ 'ի զարմէ սորա սե-րեալքն՝ 'ի նախնումն անուանեալ կոչէին Ֆօդիի ․ քանզի նախնիքն նոցա յորս երէոց պարապեալ էին 'ի փոսս ․ քանզի այսպէս իսկ մինչև ցայսօր ժամանակի զփոսս Հռով-մայեցիք կոչեն Ֆօսսէ ․ և զփորելն՝ կոչեն Ֆօդէռէ ։ Իսկ յետ ժամանակաց կրկին տառից փոփոխմամբ անուանեալ կոչեցան Ֆաբիի ։

Այրդ մի ոմն 'ի բաղդմանց անտի և 'ի մե-ծամեծ ազանց 'ի սերնդոց տոհմ՝ զկնի Ռու-լլոսի մեծի՝ որում անուն կարգային Հռով-մայեցիք Մաքսիմոս այն է՝ Եռամեծ, էր չորրորդ այս Փաբիոս Մաքսիմոս, զորմէ առնելոց եմք առաջիկ 'ի պատմել : Զսա 'ի մարմնոյն նշանակէն մականուանէին Վեռուկո-սոս. քանզի գորտնուկ 1 (զոր նոքա կոչեն Վեռուկոսս) ելեալ էր 'ի շրթան նորա : Բայց նորա և միւս անուանն Օվիկուլա՝ նշա-նակէ Ոչխարակ, վասն մեծապէս հեզու-թեան նորա և հանդարտութեանն՝ մինչ-դեռ տակաւին մանուկ էր : Քանզի այն-չափ անդորրացեալ էր նա 'ի հոգին և լռա-մնջիկ., և չափաւորութեամբ ես պարա-պեալ 'ի տղայոց խաղուն, և յուշիկ և տա-ժանեալ վարժէր 'ի վարժս, և հեզաւորուր և հլու յոյժ էր առ ընկերսն, որպէս զի և որք արտաքինքն էին՝ կարծէին զՓաբիոս ապուշ և անմտի վատասրտոյ . և նուաղունք խելամտութեան էին՝ զի խորախորհուրդ մտաց ծնունդ էր մեծապէս հանդարտութիւն նո-րա, և նշմարէին ես 'ի բոլոր բարուց նորա զմեծանձնութիւն զառիւծուն և զարիու-թիւն միանդամայն :

Այլ անդէն իսկ յարդարումն հասանէր Փաբիոս՝ և մտանէր ես յերս քաղաքին, խելա-մուտ լինէին առնէր և զամենեսեան առ հա-սարակ՝ եթէ կարծեալն 'ի նմա անմարի վա-տասրտութիւն էր զգլխոյն անվրդովութե-ազդի . և մեծապէս զգուշաւորութիւնն՝ ողջմտութիւն խորհրդոց նորա . և անդոր-

բաւէր խաղաղութիւնն՝ անսասանելի հաստատութիւն նորա յամենայնին ։ Ապա այնուհետև զմտաւ ածեալ Փարիաս զմեծութիւն աւերութեան քաղաքին , և զանդուլ զմարտան , և խիզնին 'ի մրցմունս մարտից առեալ կրթէր զմարմինն՝ իբրու զէն տնկակից 'ի մեզ . առ այս՝ և 'ի ճարտարաբանութիւն հրահանգէր զանձն՝ իբրու գործեառամամբ համոզակեր յանդուցանել զխուժանն , և 'ի դէպ քաղաքավարութեան կենացն յարմարէր զնա ։ Քանզի ճարտարաբանութիւն Փարիասի անբաւ էր 'ի գեղազարդ մեղուարից և 'ի մնոտխապատուաստ հրապարակագոյժ սեթևեթից . այլ ողջամիտ և լի և պատուարուն պերճ իմաստաբանութեամբք , յորում և համդունմատոխ յոյժ զնա ասեն լինել Թուկիդիդեայ . քանզի և է իսկ՝ բան մի նորա Արձանական հրապարակախօս 'ի նեբրոդ որդւոյն՝ որ մեռաւ յետ հիւպատոսութեանն ։ Եւ ընտրեալ կարգեցաւ Փարիաս հիւպատոս հնգիցս անգամ . յառաջնումն յաղթանակեաց նա 'ի վերայ Լիգիւրացւոց , եհար զնոսա 'ի հարուածս մեծամեծս , և 'ի նեղն ըծեալ փակեաց զնոսա 'ի ներքս անդ յԱլպեանսն . և ապա դադարեցին նոքա ապստամբել 'ի սահմանակցութիւնս Իտալիոյ ։

Իսկ իբրև հորդան եա խաղաց Աննիբաղ 2, և եկն եմուտ յԻտալիա , առաջին նշան յաղթութեան կանգնէր մօտ 'ի գետն Տրեբիա , և առեալ խաղացուցանէր զզօրն ընդ Տիւրրենիա յաւարի առնուլ զգաւառն , և

յարհաւիրս մեծամեծս արկանէր նմա յայն-
ժամ զՀռոմ քաղաքս: Նա և նշանք երևա-
նէին յայնժամ, կէս մի՝ որ ասպարականք
իսկ էին հռովմայեցւոց՝ իբրու շանթք կայ-
ծականց. և կէս մի՝ ստապարանիք և ահա-
ւորք. քանզի ասէին՝ եթէ վահանք և աս-
պարք ինքնին արիւնաշաղախք լինէին. և
թէ՝ մօտ յԱնտիոն գաւառն 'ի հնձանս հասկք
արիւնաբերանք. և թէ՝ յօդոց անտի վէմք
կայծականաբորբոք և հրաշէկ 'ի վայր անկա-
նէին. և թուէր իմն այնպէս՝ եթէ և 'ի վե-
րոյ Փալերեանց պատառեալ ցելուն եր-
կինք, և աստ անդ 'ի վայր օցանեալ ցանե-
ցան պնակք բազումք գրաւորք, և 'ի միում
անդ արձանագրեալ երևէր բան բառին այս-
պէս. Շարժէ ատուրն Արէս զզէնսն: Այլ
ոչինչ յայսպիսեաց աստի ահաբեկ եղև
Գայիոս Փղամինիոս հիւպատոս, այր սըր-
տեայ անդստին 'ի բնութենէն և պատուա-
սէր. առ այս՝ և պերճացեալ ևս էր նա 'ի
գերագոյն նահատակութեանցն՝ զոր նահա-
տակեցաւ նա յառաջագոյն արտաքոյ յու-
սոյ անհնարութեանն. քանզի յակամայս
ծերակուտին և իւրոյ իշխանակցին՝ որ քար-
ընդդէմ լինէր նմա, ինքն զինակցաւ մարտ
եդեալ կռուեցաւ ընդ Գաղատացւոց և 'ի
պարտութիւն մատնեաց զնոսա: Իսկ և Փա-
բիոս ինքնին 'ի հրէշից անտի ահաբեկ խու-
ժանին՝ ոչինչ խռովեցաւ, և յունայնից
կարգի դնէր զնոսա: Սակայն իրազգած ե-
ղեալ Փաբիոս՝ զի սակաւաթիւ են թշնա-
միք և անպաշարք, խրատ տայր Հռովմայե-

ցուոց զանեղի ունել, և մի՛ 'ի մեծարս կազդուրել ընդդիմել սան՝ որ զօրավար կացեալ էր զօրականին փութով և հմուտ 'ի պատերազմ պատերազմունս. ասէ այս՝ և ձեռն օգնականութեան ասացել նիզակակցացն, և այնպէս ասա զմեծութեանց քաղաքացն 'ի բանին ունելով, կալ մնալ զի նմանեսցին տակաւ սպառեալ վտանգեցոյց զօրքն Աննիբաղայ, խորաբոց՝ որ 'ի նեղութիւն Ճակատեցաւ 'ի գուղձանակեցայս և 'ի փոքրոգութիւն:

Այլ յայսր ամենայնի վերայ՝ ոչինչ կարաց նա ածել 'ի նոյն զփորձմիննիս. զի և համբերութէր խակ ոչ նա՝ զկոխու մեծարանն առնուալ ածել մինչև 'ի դրունս անդր Հռովմայ, և առաս 'ի քաղաքէն մեծարս եղեալ կրուել 'ի վերայ քաղաքին՝ որպէս անդուրեմն Կամիլլոս: Համայս հրամանն տայր հազարապետացն առաքել զզօրսն խաղացուցանել, և ինքն յարուցեալ մերձեալ առատանակէր. երթև անդ յերակարծումն յաչինչ պատրաստաց զարհուրեալ չուեալ երեվարն, և ինքն կործան 'ի վերայ գլխոյն անկանէր, ոչինչ այնպէս յետս կացեալ՝ ըստ առաջին խորհրդոյն անդրէն խաղայր զնայր 'ի գլուխ հարկանել Աննիբաղայ: Եկին և Ճակատեցոյց զզօրսն մեծ 'ի լիճ անդր Տիւրենեան, որ անուանեալ կոչի Թրասիմենոս: Երթև խաղին խառնեցաւ, գէթ եղև ահագին իմն գետանաշարժ, որպէս զի և չէին տեսանելեալ քանդեցան, և գետոց հոսանք շրջեալ փոխեցին զընթացս, և լերանց առատանք զդղրդեալք հատեցին. սակայն և ոչ

որք 'ի կռուելն խնայեալ էին, Թէպէտ և այն֊
պէս բուռն և անհնարին էր շարժումն ։ Իսկ
անդադրօր Փղամինիոս նախանձիւ բարգաւաճ
գործելոյ և նախահասարակութեամբ , անկանէր
'ի մարտսն՝ և առ նովաւ պարծենալ քաջք և
առաւելինքն 'ի զօրականացն ։ Բայց որք միան֊
գամ 'ի փախուստ խուճապեցան՝ հարան
սաստկապէս . քանզի բիւր մի և հինգ հա֊
զար յայնժամ տապաստեալ անկանէր 'ի Հռոմ֊
մայեցւոց , և նոյնչափ գերեալ 'ի գերու֊
թեան վարեցան ։ Այլ Աննիբաղ պատուա֊
սիրելոյ զխնահանն տալ Փղամինեայ և շուք
պատուոյ վասն առաջինի նախահաստատութե
նորա . խնդրելոյ յուղարկել , այլ 'ի բաղձան֊
կոյս զդիականայն ոչինչ կարաց գտանել զնա ,
և ոչ ևս զխնամքին՝ զինաւորք անհետացաւ նա
'ի միջոյ ։

Այլ յաղագս հարուածոյն որ առ Տրեբ֊
բիաւ , ոչ զօրավարն 'ի գրին առ ծերա֊
կոյտն՝ և ոչ գուժկանն ուղղապէս պատ֊
մել , այլ յաղթեաց եթէ տակաւին ան֊
վճար և կերպակարծ է յաղթութիւնն . առ֊
կայն խորհուրդ Զդորեալ լուր էառ Պոմպոնիոս
զօրավար , անդէն 'ի մի վայր խմբեալ զժո֊
ղովուրդն՝ յառաջ մատեաւ և անպատրաստ
և պարզախօս բարբառեցաւ մեծին , և աս֊
ացէր . " 'Ի պարտութեան մեծամեծացուք ո՛վ արք
Հռովմայեցիք 'ի մեծի պատերազմին . բա֊
նակ զօրուն հարաւ սաստկապէս , և Փղա֊
մինիոս հիւպատոս գլխապաստ անկաւ ։
Այլ դուք ինքնին խորհուրդ առէք այսու֊
հետև վասն փրկութեան և անվրդովելու֊

թեան անձանց"։ Զբան զայս Դոմետիանոսո յայտնեալ իբրև զհողմ բանդութեան արկեալ 'ի ծով մեծ յորձանաթիւ խուժանին այնորիկ՝ յուզելոց և խռովեալ ամբոխելոց զգաւառաքն, և արհաւիրք երկեղ և յանկարծութ կրթեաց առ հասարակ. սակայն և՛ ի մի խառնուրդ եկեալ հասարակեցին մտաւորան, եթէ իշխանապետութեան այնուհետև պէտք են իրացն, զոր նորա Տիբերիանոս կոչէն. և իշխանապետութ առն՝ անմիջանց պէտք են լինել և անդադարհաւրել, և է նա ինքնին միայն Փաւստոս Մաքսիմոս՝ որ համեմատ և պերճութիւն ոգւոյ յանձին բարձեալ բերէ զուգակշիռ մեծի բարձրոց այրորիկ. ունի և զանս հասարակին քաղաքայնիւ՝ յուրումն մտացին առաւել և կորովի զերկեցինս արդիւնացուցէ զխորհուրդս հոգւոյն, և աշխոյժք արտին ուղղեցին առ 'ի համեմարոյ անօր առնն ։

Իբրև հաճոյ թուեցաւ առհասարակ, առին կարգեցին զՓաւստոս իշխանապետ ։ Սա կարգեցաւ զՂեւկիոս Մինուկիոս 'ի զօրավար այրուձիոյն, առաւելին խնդրեաց 'ի Մինուկիոսէն յերիվար աշտանակել 'ի բանակի զօրուն. քանզի չէր օրէն բանին և խափանեալ նա էր 'ի վաղնջուց օրինաց. կամ զի այնպէս կամէին հինքն Հռովմայեցւոց՝ զի մեծապէս ոյժ բանակին կայցեալ 'ի հետևակ զօրուն, և զօրավարն ինքնին անմեկնելի արձանացի առ փառանդին. կամ թէ վասն ինքնիշխան տէրութեանն և մեծի աւագութեանն կամեցան նոքա՝ զի զմնեա

'ի բանիդ յայդմիկ կարօտ ժողովրդեանն եցէ իշխանապետի : Այլ կամեցեալ Փաբիոսի անդէն 'ի հանդէս բերել զաւագութիւն բարձին 'ի մեծապէս հլութիւն խուժանին, եւ ինքնին արտաքս 'ի հրապարակ անդր յառաջոյ իւր տանելով զաւագանակիրս .քսան և չորս թուով. և այն ինչ անդուստ 'ի հանդիպոյ մի ոմն 'ի հիւպատոսացն գայր ընդառաջել նմա, նա անդէն արձակեաց զմի 'ի պաշտօնէիցն ասել նմա՝ զի 'ի բաց զվարոցաւորսն արձակեսցէ յիւրմէ. և զհիւպատոսութեան զնշանակսն 'ի բաց եդեալ՝ այնպէս իբրև զմի 'ի ռամկանաց ընդառաջեսցէ նմա : Իսկ յետ այնորիկ գեղեցիկ կարգաւ սկիզբն արարեալ յաստուածայնոց անտի՝ ազդ զայս ինչ առնէր ժողովրդեան, եթէ ոչ արդեօք 'ի պատճառս ինչ անարի վատասրտութեան զօրականին՝ այն հարուածք եկին հասին 'ի վերայ նոցա, այլ յարհամարհութենէ զօրավարին յաստուածակոյս կողմն անդր. ապա խրախոյս քաջալերէր տայր նոցա մի ինչ 'ի թշնամեացն զարհուրել, այլ մեծարել զաստուածսն և հաշտս և մարդասէրս առադրել զնոսա. սակայն և ոչ բանիւն սնապաշտութիւն 'ի ներքս խառնէր նոցա, այլ և մեծապէս ևս զօրացուցանէր զառաքինութիւնն 'ի ձեռն բարեպաշտութեանն, և մերժէր 'ի նոցանէն զահ և զերկիւղ թշնամեացն, և քաջալերութիւն 'ի ներքս բերէր ապաստան 'ի խնամս աստուածոցն : Յայնժամ շարժեցան նոքա և շատ ինչ հարցա-

նել 'ի մատենից անտի՝ որ սիբիլեանք յորջ-
են նոցա և 'ի գաղտնեաց ասէին, որոց անուան
կարգադրեալքն ՍԻԲԻԼԼԵԱՆՔ։ Եւ ասեն՝ եթէ ինչ
ինչ 'ի պատգամաց անկանելոց 'ի նոսա յորժ
ճանհողակի գայլին պատահարաց և գործոց
ժամանակին այնորիկ. սակայն և չէր օրէն
զպատահեալն 'ի նոսա լսել ումեք առնել։

Այսպէս հանդիպեցեալ երկիւղածութեանն, մինչ դեռ ժողովուրդք առ հասարակ 'ի մի խռնեալ կային, ուխտս դնէր աստուածոց՝ յաղէլ նոցա միաւորակացին զամենայն ծընունդս տարւոյն՝ զայծեաց և զխոզից և զխաշանց և զարջառոց, որ ծնանիցին արօտակերացն 'ի գալ գարնանայնոյն, որչափ ինչ բուծանեն յարօտս լերինք Իտալիոյ և դաշտավայրերինք և գետք և մարգք։ Եւ այս գործեալ՝ և ուխտս դնէր ծախել 'ի հանդէսս երաժշտական և թատերական տեսութեանց՝ սեստերտիոն երեքհարիւր երեսուն և երեք, և դենարս երեքհարիւր և երեսուն և երիս և երրորդ մի. և զխառնուրդ այս 'ի դրամականչինս ութ բիւր, և դրամակչիռք դարձեալ երեք հազար հինգհարիւր և ութսուն և երեք և դանկ երկու։ Այդ՝ զժուարին որոշեցք լցէ տալ պատճառս այնչափ թիւն ճշգրիտ սահմանելոյ թուոյ ծախուցն այնոցիկ, եթէ ոչ կամեցցի ոք թերևս զզօրութիւնն յարգել երրորդակի թըւոյս. քանզի անդստին 'ի բնութենէն այդ թիւ կատարեալ է, և առաջինն է 'ի կըճատից և սկիզբն է բազմաւորութեանն, և ունի զառաջինս տարբերութիւնս և զառ-

հաստատուն թուոց զստուգերան խառնելով և յօդելով յինքն :

Իսկն այսպէս 'ի վեր առեալ հաստատեալ Փաբիոս զմիտս ժողովրդեան յաստուածայինն անդր, սկսաւ քաջալէր առնել նոցա 'ի լաւագոյնն յուսացուցանել զնոսա վասն հանդերձելոցն. և ինքն մեծապէս քաջալերեցաւ յանձն իւր՝ 'ի յոյս յաղթութեանն. համոզեալ 'ի միտս եթէ աստուածութեամբ և հանճարով հանդերձեցի առ յաստուածոյ յաջողութիւն 'ի գործս : Համայն յարուցեալ խաղայր ընդդէմ Աննիբաղայ, ոչ եթէ 'ի մարտ եդեալ մարտիւ պատահել նմա և պարտել, այլ ժամանակաւ տակաւ վատնել աղքատել զզօրութիւն նորա, և ընչաղքատութեամբն զչքաւորութիւն նորա վատթարել, և բազմամարդութեան մեծ՝ զսակաւութիւն նորա հարկանել վանել : Վասն այսորիկ և ցանկ 'ի վերայ բարձանց կալեալ Փաբիոսի զզօրն, բանակ հարկեալ նստէր 'ի լեռնոտս վայրս, ուր մի թերևս 'ի վերայ նորա դիմեալ անկանիցի այրուձի թշնամւոյն. զանեղի կալեալ մնայր, եթէ առկայանայր Աննիբաղ. իսկ եթէ շարժէր, խաղայր և ինքն և յածեալ շրջէր 'ի վերայ բլրոցն. և ցանկ զթշնամեացն ինքն սպառ առնոյր անդուստ 'ի բացեայ, ուր մի ինչ ամենևին ստիպեսցի 'ի մէջ գալ ընդ նոսա. միանգամայն և 'ի գերէլ իւրում այնպէս ահ արկանէր 'ի նոսա՝ գուցէ յանկարծակի յեղակարծումն անկցի մարտիւ 'ի վերայ նոցա :

Իսկ և հպարտաստ ժամանակ օրինակ զայս ժամանակավաճառ լինէր Փաբիոս, ակնածն այնուհետև առհասարակ յանհնարից քերել զնա՝ որպէս զի և յաղթելի զօրականանէն թշնամանաց ձգեցան 'ի նա. և թշնամիք ինքնին իսկ և անկարի վաստակեալ ուժեղին զնա, բայց յԱննիբաղայ. միայն նա ճշգրիտ 'ի միջոյ եկաց հնարիմաց խորհրդոց նորա՝ որով կռուէր ընդ նմա. զոր և գործէր Աննիբաղ խորամանկութեամբ և բանութեամբ ևս ածել զայսն 'ի կռիւ մարտի. քանզի և մեծարեալ իսկ էր այնուհետև վասն կարգեգոնացոյցն. քանզի յորս միահաղոյնք էին նոքա քան զչարամախնեցեան՝ 'ի զէնսն, ոչինչ կարէին յայնժամ վարել զնոսա. իսկ յոր ինչ խանդարհաղոյնք էին՝ 'ի զօրս և յինչս, նշքին օր ըստ օրէ սպառեալք վասնէին 'ի նմանէր: Այսպէս զամենայն հնարս զգուշութեանն հնարէր Աննիբաղ, և փորձ զամենայն զինչզանացն փորձէր, թեակոխեր իբրև ընդէջ քաջ անմուտ որսալ զՓաբիոս. յարձակէր 'ի գիւղս, խառնէր հարկանէր 'ի նա, ապրատակ կայրէր, և յայնկոյս յայն կոյս ատեալ տարուբերէր զնա. խնդրէր յետոյ զնա 'ի խորհրդոյն նհանջել յանկոյթ և յանհերկեան: Բայց Փաբիոս կայր մնայր հաստատուն և անշարժելի 'ի խորհրդուն, զի և զայն համարէր լաւ 'ի ժամուն. իսկ որ միշտ մեծապէս հասուցանէր նմա, էր ինքնին Մինուկիոս զօրավար այրուձիոյն: Սա այս Մինուկիոս զժպաստէհս յօժարեալ 'ի կռիւ անդր, շուրջ գայր և խօս-

խոյս զօրականացն կարգեալք որ ունէին զնէքին նոսա, և յանդգնագոյնս և պատրաստ յուսումն առնելով վաւերէր զնոսա. ուստի և նոքա՝ հեգնելով զՓաբիոս, և ձաղանօք անուան կարգայոյն նմա՝ Մանկոնթոս Աննիբաղայ. և զՄինուկիոս ինքեանց ունէին իբրև զմի 'ի հոյակապ արանց, և քաջ իսկ 'ի գէտ Հռովմայեցւոց՝ զօրավար առաջնոյն: Յայս ամենէ առաւ Մինուկիոս 'ի վեր վարելով՝ յամբարտաւանագոյնս ունէր աղաղակելով ծիծաղէր՝ զի այնպիսի բանակս հաստատեալ նա շրջէր 'ի վե-րայ բարձանց, իբրու որ 'ի խնդիր եղեալ իցէ լեռնանցն 'ի բարձունս զերեւելին զհրապարակաց՝ անդուստ 'ի զնին կալ աւեա-նել զաւերումն և զհրայրելոյս Իտալիոյ. և խնդրէր հարցանէր Մինուկիոս զզօրա-կաւենն Փաբիոսի, զի՞նչ միտք զի՞նչ կամք ի-ցեն Փաբիոսյ. առնո՞ւլ թերևս զբանակ զօ-րունն անձրեռնալ մինչև յերկինս 'ի վեր, իբրու յուսահատ այնուհետև յերկրէ ե-ղեալ, կամ թէ զամպս և զառամպոտս և զմէգ-մառախուղ առնելով զուամպարեսցէ զնա ընդ-դէմ, և ինքն փախուցեալ աղաղակի յերե-ւաց թշնամեացն:

Իբրև զայս բանս բարեկամք Փաբիոսյ պատմեցին յունէկն նորա, և խրատ եւս տային նմա զանպատուութեանն արգել յանձնէն՝ միջամտեալս 'ի միտսն, եւ պատասխանի Փաբիոս և ասէ. “Քա՛ջ իսկ արդեօք եմ անարգի վատասիրտ՝ քան զոր երեւեալս ասա-ցիկ, եթէ երբեք երկեալ այպանութեանց և ձա-ղանացդ արարեալ՝ յետս նահանջէի յիմոց

խորհրդոց: Նա արդեօք զանգիտեալ վասն հայրենեաց՝ գեղեցիկ է. այլ զարհուրել 'ի կարծեաց և 'ի բամբասանաց մարդկան և 'ի նախատանաց, չէ գործ առն՝ որ զքաղաք զայս զանձամբ առեալ իցէ, այլ որ ծառայութիւն համարի՝ յորոց վերայ տիրանալն պարտ իցէ, և զխորհուրդսն նոցա զձախողականս սանձել արժան իցէ":

Քանզի անդէն զհանճարոյն հարուստ այս 'ի տղայութեան ժամանակին, խոյս խրատատուաց ընդ մեծէր հասեալ յԱղկիբիադեայ արհամարհանաց արուեստին և արհամարհողին. ուսաւ և խափանեալ ձեռաց արուեստն և տարապանքի յաղագագական կրթութեանցն, և յուսանողեալ ասակե զզեցաւ արհինքն :

Այլ 'ի Թշնամանման Անտիփոնեայ գրեալ կայ, եթէ Աղկիբիադէս 'ի տղայութեանն փախուցեալ 'ի տանէն' չոգաւ առ Դեմոկրատէս ոմն սիրելի իւր. և կամեցեալ Արիփրոնի քարոզ կարդալ զնմանէ, արգել զնա Պերիկլէս և ասէր. եթէ նա մեռեալ է' աւուրբ կանուխ 'ի ձեռն քարոզին յայտնի գոյցէ զա. ապա եթէ կենդանի է' ողջոյն կեանքն անկենդանն եղիցի զմա: Սոյն այս Անտիփոնեանեւս գրէ զառաձեալ, եթէ զմի ոմն յարբանեակացն սպան Աղկիբիադէս 'ի հարուած գաւազանի յամբշամարտին Սիբրտիանոսն: Այլ այսպիսիք ոչ իմիք Թերևս ևրէն արժանահաւատ. քանզի այր ուխտեալ Թշնամանութեամբ Աղկիբիադեայ ասպհանդերձ զայդ :

Այլ քանզի բազում աստղաբաշխտ և արհամարհելք եկեալ խառնեալ' շուրջ մեծամեծս զնէին Աղկիբիադեայ, յայտնի էր ամենայն ամենաներըետոյն' եթէ անկանել ոգւոց ընդ դէմ դնոյն' այնպիսես աւագաս հարկանէին նմա. սակայն մեծութիւն սիրոյն Սոկրատայ' վկայութիւն մեծ 'ի ներքս բերէր առաքինութեան և զեղեցիկ բնութեան տղայոց մանկանն, զոր ինքնին Սոկրատէս յայտնա-

այնս նշմարէր 'ի գեղոյ կերպարանաց նորա. և զանգիտեալ յանձնառութենէ և 'ի փառաց պատուանուոյն, զի և առաւել բաղձայր 'ի քնարեաց և յերգոց և 'ի նուագարանաց շուրջ գալոյ զնուագս չնթել և 'ի հրապուրոյս հաճարեկերս կանխեալ գրաւել զմիտս նորա, առաւել և ցանկ Սոկրատէս հակէր 'ի միտս նորա, և առանց թողուլ չկամէր զնա՝ խրթին առաւելն մարդասիրութեանն՝ որ 'ի ծագմանն անդէն խառնեալ պատուականութեանց եղելոցն: Քանզի և ոչ ոք առաջնորդէր 'ի մարդկանէ այնպէս պաշտպանեալ 'ի բանաւորն բարեաց, և առաջնորդելով անխռովելի մնալ յիմաստասիրութեանն նորա, կամ յաղթել հաճոյականն յանձնապաշտն բանից, որպէս Սոկրատէս անդադարն 'ի տղայ առնոյն փառասիրացեալ լուծեալ 'ի զբօսանս և պաշտպանեալ 'ի բարեմասնութեան ողջոյնն՝ որ առգելուլն զնա 'ի գեղեցիկ հրահանգաց մարժամանակաւ: Այլ առակայն նա բնա քաղցրագոյն բարուցն քնքշութեան եկեալ ծանօթացաւ ընդ Սոկրատայ. և առ խեղ ժողովեալ զնա՝ 'ի բացեայ յայլոց կարգուցանէր զանձն խիր և յանձնառէր և 'ի առհաւաց առաքինածանաց. և ներբանեալ ընդ նմա և լուեալ 'ի նմանէ բանս ոչ զառարկուածոց՝ որ կենսամարդկան զբօսանաց զհեռա կըթեալ իցէ և հաճարակելոց և հրա. պարուկեց, այլ որ բանիւ զառակականութեան հոգւոյն նշանակեսցէ, և զառաքինապաշտն և զծանծաղամիտն զառողութին ընդունեալ կոխեսցէ, "Նկուն եղեալ յայնժամ իբրև զաքաղաղ պարտեալ՝ թողոյր այնուհետև մեղկացեալ զթեւն":

Եւ արդ յայն հատուածեցաւ Աղկիբիադէս, եթէ ամենայն գործք Սոկրատայ՝ անշուշտ ապաստանաւորութիւն է աստուածոց 'ի խնամս և 'ի փրկութիւն արանց պատանեաց: Ուստի և անձամբ զանձն արհամարհեալ, և առ Սոկրատէս յանձնեալ երթեալ, և զնորա զխնամատարութիւն ընկալեալ և զառաքինութեանն պատուական կացեալ, ժառանգեաց և ինքն զրօշեալ իմն սիրոյ, կամ թէ՝ որպէս Պղատոն ասաց, սէր փոխադարձ. որպէս զի և առ հասարակ զարմանայքն, անսեալ զԱղկիբիադէս ճաշակից Սոկրատայ և զօրամարտակից և մրցանակից. դարձեալ և անբնելի առ այլս 'ի ստորակածուաց, և կեանցն ճոխապատ երջանկութեան ունեհար. ըստ որում և առ Անիտոսն Անթեմիոնեանն գործեաց նա:

Քանզի դէպ եղև՝ զի այս Անիտոս սարփածու Աղկիբիադեայ ընթրիս տուեալ ատարոց՝ հրաւիրեաց և զԱղկիբիադէս. այլ նա չառեալ յանձն երթալ և կացեալ 'ի տան և զինեհարբեալ ընդ ընկերացն, եւ ատեալ չոքաւ յայգատարադոյնս իմն առ Անիտոս. և անդ առ սեղանն սենեկին ընթրեաց արձանացեալ, անսեալ զոսկեղէնն լի 'ի նուագս ոսկւոյ և արծաթոյ՝ հրամայեաց ծառայիցն երթալ բառնալ զկէսն 'ի նոցանէ և բերել առ նա 'ի տունն. զայս արարեալ և չմնացեալ 'ի ներքս՝ անդրէն եւ գնաց: Իբրև դժկամակեալք ընդ բանն լինէին կոչնականքն՝ զի զրկեաց Աղկիբիադէս և ստահակեցաւ առ Անիտոս, եւ պատասխանի Անի-

տոս և ասէ։ "Դու՛ հեզգաբար մարդասպանեցեր Աղկիբիադէս. քանզի որ զբոլորն տանել բաւական էր, զկէսն աւարէկ եթող մեզ"։ Օրինակ զայս վարեցաւ նա և առ այլս 'ի տարփածուաց. բայց մի ոմն 'ի բնակաց ան-ուր ոչինչ այնպէս ընչաւէտ՝ որպէս առեն՝ վաճառականաց զամենայն զոր ունէր, և զդէնն հարիւր տաղանտաց առեալ եբեր առ Աղկի-բիադէս և աղաչէր ընդունել. Նորա ժպտ-եալ և բերկրեալ և յընթրիս եւս հրաւի-րեալ զայրն, խորն մեծապէս հիւրասիրու-թեամբ կատարեաց զընթրիսն, առեալ զարծաթն 'ի նա դարձոյց. և պատուիրեաց եւս նմա 'ի գալ առաւօտն յառնել երթալ առ կապալառուսն քաղաքին և բարձեալ ամե-նեցունց զդէնն՝ յինքն առնուլ զկապալն։ Իսկ պատճառէր այրն, եթէ բազում առ-նելոց է վաճառն, սպառնացեալ 'ի վերայ կացեալ Աղկիբիադէս տալ զնա խարա-զանել, թէ ոչ արասցէ։ Եւ եկն յայս Աղ-կիբիադէս 'ի սակս գժտութեան ինչ խոր ընդ մաքսաւորսն ընդ այնոսիկ։

Այլ 'ի գալ առաւօտն յարուցեալ այրն եկն 'ի հրապարակ անդր, և բարձեալ ա-ճեցոյց զդէնն կապալաւին՝ տաղանտ մի։ Անդ մաքսաւորքն առ հասարակ 'ի բարկութեան բորբոքեալք՝ սկսան զայրն տալ երաշխա-ւոր. կարծէին՝ եթէ գտանէ և ոչ զոք այլոն։ Մինչդեռ նա միջամբեալ կորանոց անդէն տայր 'ի վայրացն, անդուստ 'ի բա-ցուստ ձայն բարձեալ Աղկիբիադէս առ իշխանսն՝ ասէր. "Զիս յինքնին գրեցէք.

դաւ բարեկամ է իմ. եւ կամ զմա՛ երաշխաւոր“ ։ Զայս լուեալ ժողովուրդն 'ի մեծ վարանս ըմբռնեցան. քանզի եւ ցանգ սովորեալ էին նոքա յերկիւղի վտանգաց անկանել վճարել զպատուհասն. ուստի եւ յանել առաւելայս պաշտպանեցան նոցա ։ Սկսան աղաղակել զայրն եւ արծաթ մատուցանէին նմա. իսկ Աղկիբիադէս թոյլ չետ նմա առնուլ 'ի նոցանէ պակաս քան զտաղանդ մի. իբրեւ զայն առաւելի մատուցին ժողովուրդն, հրաժարեալ տալոյ առնուլ զայն եւ զնուլ 'ի բաց ։ Եւ զգինաւ զայս շահեցոյց զայրն ։

Բայց Սոկրատէս՝ որ 'ի մանկութեան իւրում առ նա նախանձայոյզս ունէր բազումս եւ մեծամեծս, էր՝ զի տխրանայր 'ի վերայ Աղկիբիադեայ բարեմոյն բարուցն՝ բարեղգեաց եւ ազգու բանիւքն, որպէս զի եւ յարատաւորս եւ ցնդել զնա. այլ էր զի եւ մեղադրելութեանց երեւս արարեալ Աղկիբիադէս 'ի նոցա հրապոյրսն, խոյս տայր 'ի Սոկրատայ ։ Այլ Սոկրատէս զհետ մեռեալ նորա իբրեւ արդարեւ բարւոք որսորդ կան, ունէր զԱղկիբիադէս. այն՝ որ իբրաւայէս 'ի նմանէն միայն ակն ածեալ պատկառէր, զայլոցն ամենեքումբք ունէր արարեալ ։ Բայց Կղէանթէս ասէ, եթէ նա զսիրեցեալն՝ զականջացն ունէր. բայց այլոց նախանձորդացն էին եւ ունկունք այլ՝ անհուպք 'ի նմանէն, իբրու պարանոց՝ այլոցն հանդերձ ։ Եւ արդեօք յոյժ էր հակամիտեալ Աղկիբիադէս 'ի հեշտութիւն. եւ անշափութիւն նորա 'ի կեանս

մարմնոյն՝ ըստ Թուկիդիդեայ՝ յորս կարծիս ձգէ զմեզ։ Սակայն խանդարիչք վարուց նորա՝ յաւէտ 'ի փառաւորութենէն և 'ի պատուաւորութենէն ընտանեցին զնա, և զորդէին զնա 'ի տարաժամու ձեռնամուխ 'ի մեծամեծս լինել. և ասպրէին ես նմա՝ առաւելորածս բաւել ածել 'ի հասարակաց գործսն՝ ոչ այլոց միայն զօրավարաց և հռետորաց, այլև քան զաւագութիւն ես զՊերիկղեայ և զփառսն՝ 'ի վեր անցանել 'ի մէջ Հելլենացւոց։ Նա արդ՝ զորօրինակ երկաթ 'ի հուր անցեալ, միւսանգամ առ 'ի ցրտոյն պնդեալ և զհուրական մասունսն ժողովեալ ներանեցի. սոյնպէս և զԱղկիբիադէս զլոյծ և զմեղկ՝ առեալ Սոկրատէս ըանահնար բանիւքն անդրէն պնդէր և ներածէր. և խոնարհ և հլու յարդարեալ զնա՝ խելամուտ ես առնէր, զիարդ նուազեալ իցէ, և քանի՞ ինչ իւրոց նմա պէտք իցեն յառաքինութիւն անդր։

Այլ ըստ տիս մանկութեանն եղեալ Աղկիբիադէս, չոգաւ երբեմն առ վարժապետ ոմն քերականի. և դիրս զՀոմերոսեանն խնդրեալ 'ի նմանէ, իբրև լուաւ՝ զՀոմերոսեան ինչ ոչ ունել, եհար բռնցի զվարժապետն և անց գնաց. իսկ իբրև անդուստ այլ ոմն ասէր ցնա՝ ունել իւր զՀոմերոս ուղղագրեալ, ետ պատասխանի Աղկիբիադէս. "Նա առ ի՞նչ դու տառս ուսուցանես, բաւական քո գոլով զՀոմերոսն ուղղագրել. հնի՞մ դու ոչ զնաս զպատանիսն դաստիարակես"։ Ե՛ր զի կամեցեալ ըն-

րան 'ի բերան խօսել ընդ Պերիկլեայ, իբ-
րև չոգաւ առ դուրան և լուեալ՝ եթէ պա-
րապեալ 'ի ժամուն մտածող լինի զիարդ
զհամար տալ Աթենացւոց, 'ի մեկնել իւ-
րում ասէր Ալկիբիադէս. « Եւ զի՞նչ,
ո՞չ լաւ եւս էր նմա մտածող լինել, զիարդ
ո՛չ տալ նոցա զհամար զայն »: Իսկ պա-
տանեակ տակաւին գոլով նա՝ զինուորե-
ցաւ 'ի մարտ ընդդէմ Պոտիդեայ. ունէր
և զՍոկրատէս առ իւր նիզակակից յիւ-
րում վրանի: Եւ 'ի դժնդակ յայս մարտ
պատերազմի երկոքեան նոքա արութիւնս
գեղեցիկս 'ի դէմս բերին. իսկ իբրև ան-
դանօր խոցեալ Ալկիբիադէս՝ յերկիր ան-
կանէր, Սոկրատէս արձանացեալ պաշտ-
պանէր նմա. և առաւելն եւս առ հասարակ՝ զի
նա փրկեալ ապրեցոյց ո՛չ զանձն նորա եւեթ,
այլ և զզէնսն: Արդ մրցանակ քաջութեանն
թէպէտ և իրաւապէս անկանէր Սոկրատայ,
այլ զօրավարացն յօժարեալ՝ զպսակն
զայն տալ Ալկիբիադեայ 'ի պատճառս
ազնուութեանն, կամեցեալ Սոկրատէս
յորդորագոյն եւս առնել զնա 'ի նահատա-
կութիւնն՝ առաջին եղև վկայեաց վասն
նորա, և այլոց եւս յորդոր լինէր պատուաւ
պսակել զնա, և ողջ առաքինութեան մի
ընծեռել նմա: Յետ այսորիկ և 'ի մարտի
պատերազմին Դելեայ՝ ուր 'ի փախուստ
խուճապեցան Աթենացիք, յերիվար աշ-
տանակեալ Ալկիբիադէս՝ անդուստ յանկն
արկանէր զՍոկրատէս հետի ընդ կրունկն
դարձեալ ընդ նահանջողաց պարանոց. ո՛չ զանց

սորայ՝ այլ ցանկ առ Սոկրատաւ քերելով երկիւղածութեան, պաշտպանէր նմա 'ի թշնամեացն՝ որք հեռանալով հարուածս մեծամեծս գործէին։ Այլ այսպիսի յետոյ ուրեմն գործեցան։

Իսկ էր երբեմն՝ զի Իպպոնիկեայ հօրն Կալլիասայ՝ այր առաջ և հարուստ ընչաւէտութեամբ և զարմանալի ազնուութեամբ, եւ Ալկիբիադէս հարուած բռնցի. ոչ 'ի ատամնութեան ինչ բարկացեալ և ոչ 'ի կամամտութեան ցեալ, այլ զի ընդ խաղ զրուցակից լինել էր ընդ ընկերացն։ Իբրև ընդ քաղաքն հռչակ հարուած ատահարկութեանն, և քաղ պատմեալ էին առ հասարակ ընդ բանն, յարեւու Ալկիբիադէս վաղ քաղ ընդ առաւօտն՝ գնաց երթեալ զհայր 'ի տունն Իպպոնիկեայ. բախեաց զդուրսն, մտեալ 'ի ներքս, եդ 'ի բացեայ զհանդերձն և մերկ զմարմինն իւր տուեալ առաջի 'ի ձեռս Իպպոնիկեայ, ժամեր գանելս հարուածել զնա և պատուհասել։ Այլ Իպպոնիկոս շնորհեալ զմիտսն և զիջեալ 'ի բարկութենէն, ներա և զդուստր իւր զԻպպարետէ առեալ տայր նմա կնութեան։ Իսկ կէսք ասեն, եթէ ոչ Իպպոնիկոս՝ այլ Կալլիաս որդի նորա եւ նմա զԻպպարետէ հանդերձ տասնտաղանդիւք տուեալ. և Ալկիբիադէս յետ ծննդեանն դստերն Իպպարետեայ, այլ ևս տաղանդս տասն պահանջէր 'ի Կալլիասայ ըստ պայմանաւորեալ գաշինսն՝ եթէ ծնանիցի զաւակ. և թէ՝ Կալլիաս զանգիտեալ 'ի դաւաճանաց՝ յանդիմանեալ ժողովրդեանն ժառանգ զԱլկիբիա-

գէս ատենէր և ամենայն գոյիցն և տանն՝ եթէ անպատուանս ելցէ ինքն յաշխարհէ։ Բայց Իպպարիտէ կին պարկեշտ և այրասէր ուղիղ հանդուրժեալ, որ և առ այս 'ի կանանց 'ի պոռնկաց և յեկաց մտանէր Աղկիբիադէս, ել 'ի տանէն և չոգաւ 'ի տուն եղբօրն։ Իսկ Աղկիբիադէս ոչ փոյթ ինչ արարեալ՝ արարաքէր 'ի զբօսանս։ Բայց պարտ և արժան էր ինքնին կնոջն՝ և ոչ 'ի ձեռն այլոց առուք յանդիմանն եղեալ իշխանին յայտանել զգիր արձակմանն։ Այդ իսկ շրջաւ կինն յանդիմանն լինել ըստ օրինացն, անդ 'ի միջոյ հասեալ Աղկիբիադէս և առեալ զնա յինքն՝ բերէր 'ի տուն 'ի միջոյ հրապարակին, և իշխեաց և ոչ ոք հանել 'ի ձեռաց զկինն։ Եւ ապա եկաց մնաց առ նմա կինն մինչև ցօր մահուան իւրոյ. և մեռաւ ոչ յետ բազում ինչ ժամանակաց՝ զկնի նաւելոյն Աղկիբիադեայ յԵփեսոս։ Այլ այս բռնութիւն Աղկիբիադեայ՝ ոչ անիրաւութիւն ինչ կարծեցաւ և ոչ զարմանալ մարդկանապարդոյ կերպք. քանզի և օրէնքն իսկ թուի թէ վասն այնորիկ պատուիրէր կնոջն ապաձակելոյ յանդիմանն գալ հրապարակին, որպէս զի յայտնութիւն առցէ առն զգանել զնա և ունել։

Եւ էր Աղկիբիադեայ շուն մի աքանչելի մեծութեամբ և գեղով, զոր եօթանասուն մնասից առացեալ էր. և առեալ կտրեաց զձետ շանն թուանման և գեղեցիկ. Իսկ իբրև մեղադրէր ընկերքն ընտանիքն՝ որ առհասարակ զանձնականս այպանէին զնա

վասն շանն, նա ժպտեալ ասէ. « Ըստ կամեցայ ուրեմն յաջողին եղեւ. քանզի կամիմ Աթենացւոց զրուցել զայդ, զի մի 'ի յոռեգունից ինչ խօսեսցին վասն իմ »։ Այլ առաջին պատճառք մեծահամբաւ լինելոյն Աղկիբիադեայ 'ի ժողովուրդն, ասեն զդրամաբաշխութիւնն, ոչ կամակարութեամբ՝ այլ ըստ դիպաց. քանզի անցեալ նորա երբեմն ընդ վայր ինչ ուր խառնամբոխ աղաղակաւ Աթենացւոց, հարցանէր՝ զինչ պատճառք իցեն աղաղակին. իբրեւ ուսաւ եթէ դրամս բաշխեն, անդ յառաջ եւ ինքն եւս զնոյն բաշխէր։ Իսկ անդանօր կայթս եւ ծափս հարեալ Աթենացւոց եւ ձայն բարձեալ, պատահէր՝ եթէ Աղկիբիադեայ առ խնդին մոռացօնք եղեւ լորամարգին՝ զոր պարուրեալ ունէր 'ի հանդերձսն. ուստի եւ թռչունն վարեալ յայսկոյս յայնկոյս թռչէր արձակեալ փախչէր. յայն անեալ առաւել եւս բարձրացեալ աղաղակին՝ բազումք եւս զհետ պնդէին ունել զթռչունն. եւ կալաւ զնա Անտիոքոս ոմն զեկավար, եւ առեալ բերէր առ Աղկիբիադէս, եւ սիրեաց զնա յոյժ վասն այնորիկ։

Արդ թէպէտ 'ի քաղաքականսն դրունք լայնատարր բաց էին նմա 'ի քաջութենէ տոհմին եւ յընչաւէտութենէն եւ 'ի նահատակութենէ մրցանացն, առ այս՝ եւ 'ի բազմութենէ բարեկամացն եւ ընտանեացն. այլ եւ ոչ զմի ինչ յայսցանէ 'ի ձեռս ոչ եառ նա ճոխանալ իշխանութեամբ 'ի ժողովրդեան, բայց զզօրաւորութիւն բանիցն եւ

զշնորհն. իսկ թէ 'ի ճարտարախօսութեան հզօր էր նա, վկայեն մեզ ինքնին և կատակերգակ քերթողք և ճարտասանից մեհագոյնն յառաջնախօսութեան իւրում ընդդէմ Մեդեայ, ուր ասէ՝ գերազանցել Ալկիբիադեայ ճարտարաբանութեն զամենեսեքումբք: Եւ եթէ Թէոփրաստոսի ընծայեմք հաւատս, այն՝ որ գեր 'ի վերոյ ամենայն իմաստասիրաց հետաքնին է և բաղմավէպ, կարողն էր Ալկիբիադէս աւաւել քան զամենայն մարդ 'ի գտանել զարժանն խօսելոյ և 'ի խորհել իւրում: Իսկ 'ի խնդրելն ասել, ոչ միայն զարժանն՝ այլ և զիարդ արժան իցէ ըստ անուանցն և ըստ բառիցն, իբրև վարանէր՝ բազում անգամ զկայ առնոյր. և 'ի խօսել իւրում՝ 'ի սպառնալ բառիցն՝ լռէր և հանդարտէր, և յուշ ածեալ միասանեալ ոտնձայր զբանն:

Զհամբաւի յոյժ հարաւ նա և 'ի ձիադարմանս երասանակաց, և 'ի բազմութեան կառաց. քանզի և չեկաց ոք առաջեօք 'ի սպականաց կամ 'ի թագաւորաց, որ կառս եօթն թուով ընթացոյց յՈղիմպիականն 'ի մրցանակն, բայց միայն Ալկիբիադէս: Իսկ անդամանոր տանել նորա զառաջինն յաղթութիւնն և զերկրորդն, և զչորրորդն ըստ Թուկիդիդեայ, և զերրորդն ըստ Եւրիպիդեայ, այս ապա գեր 'ի վերոյ գտաւ 'ի շուքն և 'ի փառսն առհասարակ քան զամենայն պատուաւորութե՛ 'ի մրցանսն յայտնապէս: Եւ զայսոսիկ Եւրիպիդէսն ինքնին երգեաց 'ի նուագի անդ իւրում, այսպէս.

«Քեզ նուագ հարկանեմ
Ո՛վ որդի դու Կլինեան.
Գեղեցիկ է արդեօք
Մարտ առնել յաղթական.
Նո՛ր ես ընտաղ, զոր Հելլէն
Այր չետես կառընթաց,
Յառաջին և յերկրորդ
Եւ յերրորդ մրցանաց։
Իսկ 'ի վազս երագոտնս
Դու անցքերան անվտանակ,
Ըզգլուխեդ 'ի բոլորս
Ձիթենւոյն 'ի պսակ,
Զարդարեալ քեզ երկիցս
Հար քարոզին ըղհըռչակ։

Այլ զայս փառս նորա չքեղ եւ յաղթակերցին ախոյեանքն ինքնին 'ի պատուաւորել զնա։ Քանզի Եփեսացիք խորան մի հոյակապ և չքնաղ հարկին նմա. իսկ Քիոցւոց քաղաքն զապաւորս պատարագաւորաց մատուերկիւղալրաց նորա, և ոչխարս պատարագ յաղթանակեաց։ Իսկ Լեսբացիք գինի և զայլն ամենայն առատ ջամբականութիւն առատաբերցին նմա 'ի կոչունսն՝ զոր առատապէս ետ նա բազմաթիւ ուխտերոյն։

Այլ ամենայն կամ յայլոցն բանաստեղծութեանց կամ թէ 'ի խեղկատակաց ինչ բանիցից անձինն՝ պատճառս առնեն ասել շատ ինչ բամբասանս զպատուականութիւն նորա յաղթանակ։ Քանզի պատմեն՝ եթէ յԱթենս այր մի Դիոմիդէս անուն՝ բարեկամ այր և բարեկամ Աղկիբիադեայ՝ ցանկա-

ցեալ յաղթութիւն տանել յՈղիմպիականսն, լուր եհաս զհոյակապ կառաց արքունի յԱրգոս. աղաչեաց զԱղկիբիադէս գնել զայն կառսն վասն իւր՝ իբրու որ ձեռնհաս էր առ Արգոսացիս և ունէր նա անդ բազումս 'ի բարեկամաց: Աղկիբիադէս գնեալ զկառսն և փոյթ ոչ տարեալ Դիոմիդեայ՝ կալաւ զայն վասն իւր. գանացաւ Դիոմիդէս ընդ արհամարհութիւնն, և բողոք բարձեալ վկայ կոչէր առ հասարակ զաստուածս և զմարդիկ: Այլ Թուի թէ և յատենի հետաքննեցաւ բանն. քանզի գոյ ճառ և ատենաբանութիւն մի արձանագրեալ յԻսոկրատեայ վասն կառաց ինչ 'ի պաշտպանութիւն պատանեկին Աղկիբիադեայ. այլ անդ ոչ Դիոմիդէս, այլ Տիսիաս անուն կարգեալ դատախազին:

Իսկ իբրև եհաս նմա միջամտուխ 'ի գործս լինել քաղաքին, Թէպէտև պատանին՝ յաղթահարեաց զամենայն ճարտասանսն. իսկ որք և այնպէս 'ի գլուխ հարկանէին նմա, էր Փէակէս միայն Էրասիստրատեան և Նիկիաս Նիկերատեան. մերձինքն՝ հին առաւել և 'ի քաջաց զօրավարաց. իսկ Փէակէս՝ այն ինչ Թևակոխեալ իբրու զԱղկիբիադէս, 'ի հոյակապ հարանց՝ այլ 'ի խոնարհ քան զնա 'ի ճարտարաբանութեան և յայլ ինչ ևս. քանզի 'ի զրոյցս բազմականսն առանձինն և 'ի համոզականսն՝ առաւել յաջողեալ էր նա, քան 'ի պայքարս ատենից. քանզի և էր իսկ՝ ըստ որում Եւպոլիդեան ասաց. "Քա՛ջ 'ի զրուցել, անճառական յօժ

'ի խօսել'': Այլ է մեզ 'ի ձեռին և սատ-նախօսութիւն այլ ընդդէմ Աղկիբիադեայ և փէակեայ. յորում՝ հանդերձ այլովք է և այս, զի Աղկիբիադէս զապասս ոսկւոյ և զարծաթոյ զհանդիսից քաղաքին՝ վարէր զօրհանապազ 'ի պէտս իւրև զխւրան:

Բայց էր 'ի ժամանակին յայնմիկ այր մի Խպերբողոս Պերիթիդէս անուն, զոր և Թուկիդիդէս յիշատակէ իբրև 'ի սինըը-քորայց ումանց, որ և պատճառս 'ի ներքս ընծայէր զբօսանաց առհասարակ կատա-կերգական քերթողացն. քանզի ցանգ 'ի Թա-տերս ձաղեալ կատակէին զայն, իսկ ինքն անխռով և անցաւ 'ի լուտանս անձին, առ ոչինչ ամենևին զփառսն դրելով. Թէ-պէտ և լրբութիւն և ապշութիւն իցէ բանդ, համայն և այնպէս գեղեցիկ յանդգնու-թիւն և արիութիւն կարդան ումանք: Սա այս այր Թէպէտ և ոչ ումեք ընդունելի, սակայն և բազում անգամ գործի 'ի ձեռս լինէր խուժանին ընդ վայր հարկանել և բամբասել զոք յաւագաց քաղաքին: Արդ 'ի սորա համոզակեր զօրացան դրդել յայնժամ 'ի վճիռ խեցեկայս, վտարանդի հանել զլոյժ փառաւորան քաղաքին՝ առ 'ի դիւր նախանձուն կրից՝ քան եթէ եր-կիւղին, յայտնի էր սպա ամենայն տեսա-նելեացն խեցեկայս վտարանդութիւն մեծաց ուրուք յերևցունց աւագացդ: Ապա չո-քաւ Աղկիբիադէս և բերան 'ի բերան խօ-սեալ ընդ Նիկիասայ և միաբանեալ զհեր-ձուածսն, զխեցեկայս վճիռն կուռէր 'ի

զգլուխն Իպերբողեայ. իսկ կէսք ասեն՝ ոչ ընդ Նիկիասայ խօսել՝ այլ ընդ Փէակեայ. ընդ որում միաբանեալ տարագիր վտարեաց զԻպերբողէս՝ որ ոչինչ ակնկալեալ մնայր պատուհասին այնմիկ. իբրև ոչ ոք այր անշքաւոր և ոչ անփառաւորեալ ոք այր երբեք անկաւ ընդ դատաստանաւ ընդ այդուիկ, ըստ որում և Պղատոն ասաց կատակերգականն՝ յիշատակ առնելով զԻպերբողեայ այսպէս. "Թէպէտ և զարժանին զվարուցն առ զգաստանկինքը, այլ անարժան բուսոյ բարուց անձինն: Քանզի ոչ այսպիսեաց ոմանց ադաղագաւ հնարեցաւ երբեք խեցեկոյտդ այդ": Այլ յաղագս այսոցիկ այլուր ամփոփ պատմեալ է մեր:

Սակայն Ալկիբիադեայ զժողովրդեանքն էր Նիկիաս՝ որ ոչինչ պակաս 'ի Թշնամեաց անտի հրաշացեալ էր, քան թէ յիւրոց իսկ քաղաքացեացն պատուեալ այլն: Քանզի Թէպէտ և հիւր առ հասարակ Լակեդեմոնացւոցն եղեալ Ալկիբիադէս՝ խնամած գերելոյն նոցա 'ի Պիւղոս, սակայն և հաշտութիւն արարեալ նոցա 'ի ձեռն Նիկիասայ. և զգերիսն առեալ յիւրեանս, առաւել քան զամենեսեան սիրէին նոքա զՆիկիաս. առ այս դարձեալ՝ և յընդհանուրս զայս ասէին Հելլենացիք. Պերիկղէս մղեաց զմարտն, և Նիկիաս՝ ելոյծ զմարտն. և զհաշտութիւնն զայն անուանեալ կարգային բազումք՝ Նիկիասեայ: Վասն որոյ և 'ի նախանձուն կրից և յանձկութենէն մտախոհ լինէր Ալկիբիադէս լուծանել զերդ-

Միաւորութեան դաշնեանն ։ Այսպէս լուր առեալ առաջին զԱրգոսացւոց՝ վտարանջել 'ի Լակեդեմոնացւոցն առ. առաւելութեամբն և երկիւղին, գաղտաբար յուսացուցանէր զԱրգոսացիսն ունել խորհուրդ նիզակակից և զԱթենացիսն. և սրտապնդէր զնոսա 'ի ձեռն պատուիրակաց, և յորդորէր դարձեալ երկուսեան ընդ. առաջս նոցա, մի՛ ինչ՝ առնէր՝ զարհուրել և մի երկնչել անդի առ Լակեդեմոնացւոցն, այլ յանձնել յԱթենացիսն և դեգերել առ ժամն, քանզի և Աթենացիք՝ առնէր՝ փոյթ պատրաստեալք լուծցեն զհաշտութիւնն ։

Իսկ յետ այնորիկ Լակեդեմոնացւոց միաբանեալ ընդ Բիովտացիս, և դարձուցեալ անդրէն առ Աթենացիս զՊանակտոն ոչ կանգուն որպէս պարտէրն՝ այլ քանդեալ, զայն դէպ ժամանակ որսացեալ Ալկիբիադէս զպատմութեամբ Աթենացւոցն, առաւել ևս վառեաց և գառնացոյց զնոսա ։ Եւ տայր աղմուկս չփոթից յուզէր ընդդէմ Նիկիասայ և ամբաստան կայր, և առնոյր խառնէր յամբաստանութիւնս և բանս իմն կարծեալ բանաւորս. քանզի մեղադրէր լինէր Նիկիասայ՝ զի 'ի զօրավարութեանն ոչ հաւանեալ կալաւ զթշնամիսն ըմբռնեալս 'ի Սփակտերիա. նա և 'ի շնորհս Լակեդեմոնացւոց ազատ արձակեաց զձերբակալեալսն յայլոց ։ Առ այս դարձեալ՝ զի բարեկամ գոլով նոցա՝ ոչ հաւանեցոյց զնոսա մի առնել միաբանութիւն ընդ Բիովտացիս և ընդ Կորնթացիս. և արգել առն

Հերքլէնացւոց՝ թէպէտ և կամեցան՝ ընդդիմել պատերազմել և Նեպտանոսեանց Աթենացւոց, եւ-թէ ոչինչ էս ոչ համայն թշնամւոյն Լակեդե-մոնացւոցն։ Յայտնանէն իբրև ձախողակի գնացին իրեն Նիկիաայ, գետ եղև բանագե-ղեցին բարեկաց յայնժամ զայլ համանել զԱթենս հրեշտակացն 'ի Լակեդեմոնէ. անդրանում զգոյշ բերելով հեռ և հեշտա-լութա, ասելին՝ եթէ ինքնահրամանէ հրեշ-տակութեանն համեմալ զամն՝ զամենայն մէծ և զխոյարգար համաձայնել արդար և իրաւ։ Իբրև մասնաւորապէս ժողովեան զնոա ծերակոյտն, և ժողովրդեան համեմատեալ էր եկեղեցանալ յաւուրն եկեղեցին, գան-գիտեալ Ալկիբիադէս յերեց իրացն՝ հնարս հնարեցաւ և յաղթողէր, որ առաջին ընդ-նա եկեղեալ խօսեցին հրեշտակքն։ Իբրև եկին առ նա, խօսել սկսաւ ընդ նոսա և ասէ. « Զի՞նչ գործէք այդ Սպարտացիք։ Ո՞չ իցէ գիտէք՝ եթէ ծերակոյտն համա-պազ 'ի շնորհս ամենայն զանձն, մարդա-րութեանք ժողովն զմերձեցեալն. այլ խուժանն զառաջութեանն կայ և ցանկ-ղեմծաց թէկին ած է։ Արդ եթէ գոյք իբ-րև ինքնիշխանք ոանք զձեզ համեմալ այլոց, խուժանն խոստովանել գնացէք՝ հրա-մայել և բռնան եւ առնել ձեզ։ Այլ սակէ գուք՝ 'ի բաց զպարզամտութիւնդ եղեալ, թէ կամիք 'ի շնորհս զԱթենացիս առնել նել և մի՛ ինչ բանադատել ընդդէմ խոր-հրդոյն, վարեցէք 'ի բանս իբրաւանց՝ իբ-րու ոչ ինքնահրամանք ամենք։ Եւ մեք

գործակիցք ձեզ եղիցուք՝ շնորհս Լակե-դեմոնացւոցն տարաբերալ“ ։ Զայս ասաց Աղկիբիադէս, և երդմամբ չափ հաւատար-մացուցեալ՝ ուծացոյց զնոսա 'ի Նիկիա-այ. և յինքն յանգուցեալ մեծապէս ա-ներկեանուԹեամբ՝ սքանչացոյց զնոսա ընդ-ուշիմուԹիւն մտացն և ընդ հանճարն, ո-րով և ոչ 'ի գուզնաքեաց ոք ընծայեցոյց նա յայնժամ զանձն ։

Իսկ յաւուրն երկրորդի խմբեցաւ ժո-ղովուրդն, և եկին մտին հրեշտակքն յա-տեան, մարդասիրաբարոյս յայնժամ հար-ցանէր ասէր առ նոսա Աղկիբիադէս, ե-Թէ որո՞վ իշխանուԹեամբ հասեալ իցեն անդր. իսկ ոչ եւ ասացին նոքա՝ եԹէ ինքնակալք իշխանուԹեամբ հասեալ իցեն 'ի վայրն, յայնժամ Աղկիբիադէս հառա-ձեւելով յարուցեալ մեծաւ ձայնիւ և ա-ղաղակաւ յարձակէր 'ի նոսա, իբրու ոչ անիրաւեալ առ նոսա՝ այլ անիրաւեալ առ 'ի նոցանէ. բողոք բարձեալ կարդայր զնոսա ուխտադրուժս և յեղյեղուկս՝ որք եկեալ հասեալ իցեն ինչ մի 'ի բարեաց ոչ ասել և ոչ առնել ։ Ցասուցեալ անդ և ծերակոյտն ինքնին զկնոմին և 'ի պատմու-Թիւն բրդեցան ժողովուրդք. իսկ անդուստ Նիկիաս քամահարէր ընդ եղև Թաղծու-Թեամբ՝ տեսեալ զայնչափ փոփոխուԹիւն զարանցն զայնոցիկ զաւաղաց. քանզի ան-տեղեակ էր դաւաճանուԹեանն և խաբա-նացն Աղկիբիադեայ ։ Եւ այսպէս իսկ հերքեալ մերժեցան Լակեդեմոնացիք ,

անդէն 'ի զօրավար ընտանակէն կարգեալ Աղ-կիբիադէս՝ նիզակակից առնէր Աթենացւոց զԱրգոսացիսն և զՄանտինեացիս և զԵղեացիս միանգամայն ։

Այլ զգործ զայս ոչ ոք գովեաց և ոչ ոք. սակայն և գործ մեծ գործեաց, զի այնպէս յանկարծակի ածեալ երկփեղկեաց և դղրդեալ սասանեցոյց զամ ողջոյն զՊեղոպոննէսոս. և 'ի միում անդ աւուր առաջարար այնչափ ճակատեցոյց ընդդէմ Լակեդեմոնացւոց առ սահմանօքն Մանտինեայ, և յԱթենացւոց 'ի բացեայ՝ 'ի մարտ պատերազմին և 'ի վտանգն առնել Թակարդեաց զԼակեդեմոնացիսն. որք թէպէտև յաղթականք, սակայն և ոչ մեծ ինչ շահեցան. այլ եթէ յանկարծ 'ի պարտութիւն մատնեալ էր նոցա, հազիւ արդեօք ապրեցուցեալ էր և զնոյն զիւրեանցն Լակեդեմոնին ։

Բայց վաղվաղակի յետ մարտին պատերազմին միաբանեցան յԱրգոս հազարապետոք քակել զժողովրդութեան ռամկին, և հաստատել կացուցանել զքաղաքն. և այնպէս ապա Լակեդեմոնացւոցն ձեռնտուութեամբ՝ որ հասին անդր՝ խափան 'ի միջոյ բարձին նոքա զընկերհաշտութիւնն ։ Իսկ կրկին միաբանեալ զինուորեալ զօրացաւ խռովժամն, հանեալ 'ի մերայ Աղկիբիադէս հաստահաւատ գործէր զնա. և սաստէր եւ նոցա՝ պարիսպ հարուստ միջոցաւ ածել մինչև 'ի ծով անդր, և այնպէս կապել զքաղաքն ընդ զօրութեանն Աթենաց.

ւոյց. առ այս՝ և ճարտարս հիւսանց և զա-ղատոսս յԱթենայ առեալ առաքէր առ նոսա. և այսպէս զամենայն փոյթ 'ի մէջ առեալ՝ շնորհս և զօրութիւն ժառանգեաց անձին իւրում և քաղաքին: Ած հաւանե-ցոյց նա՝ և զՊատրասացիս առնուլ կցել և զիւրեանց քաղաքն ընդ ծովուն երկայնա-ձիգ պարսպաւ: Իսկ երբեք այր ոմն ասէր առ բնակիչսն Պատրասայ զայս ինչ, եթէ "Աթենացիքդ կլափեսցեն զձեզ", եւ պատասխանի Աղկիբիադէս և ասէ. "Թե-րևս սակաւ և յոտնուց անտի. այլ Լակե-դեմոնացիքդ 'ի սնարէցն առհասարակ և միահաղոյն": Առ այս դարձեալ՝ խորհուրդ-տայր նա իւրոցն Աթենացւոց ստանալ զե-տին, և արդեամբք հաստատել զերդումն՝ զոր 'ի հանդրուանս կուէին երիտասարդքն: Քանզի երդմնի լինէին նոքա ունել 'ի սահ-մանս Ատտիկոյ ցորեան և գարի և այգիս և ձիթենիս, զի ուսցին նոքա սեփականել 'ի վե-րայ անդոց մշակելոց և պտղաբերաց:

Այլ Աղկիբիադէս միանգամայն ընդ քաղաքական կարգաւցս և ընդ հանճարեղ խորհրդոցն և գեղեցիկ ուշիմութեանն՝ կեանս վարէր լոյծ և գրգանօք լի. շուայ-տէր և անկշտանայր 'ի տռփանս, գնայր գոռոզութեամբ և արհամարհանօք, քար-շէր երկայնաբար զատորոս ծիրանեացն 'ի հրա-պարակս, էր բազմահանդերձ յոյժ 'ի ծախս, տայր յեռաթիւն 'ի բաց զատախտակամած զանկողինսն կարել, զի գորգադոյնս եւս ըն-կողմանեսցի. յորժամ ոչ 'ի տախտակացն

մերայոյ անկողմնակալ լինիցին նոցա, այլ 'ի մերոյ ապաստանողականացն պատրաստելոց ։ Եւ այս գործեալ՝ և փոխան մի ոսկեխրապաստ եակաւել, և նշանն ոչ այլ ինչ 'ի հայրենականացն ասպար քանդակել 'ի նմա, բայց Սիրողին մի շանթակրի ։ Այլ տեսեալ զայսոսիկ անձնեալ լրու գործոցն, ոչ եպերէին միայն և ատէին, այլ և զանգիտեալ եւս խիթային ընդ յանդ և ընդ օրինազանց գնացսն՝ իբրև ընդ բռնաւորական վայելչութիւնս ։ Այլ թէ ուր ևս զխորհուրդ էր խուժանին, ոչինչ անհնարագունագոյն նկարեաց Արիստոփանէս, յորժամ ասաց . « Ցանկայ արդեօք նմա, այլ ատեայ զնա, սակայն և կամի զնա » ։ Իսկ առաւել զարմանալ յաւէտ իմն ասնհայր լինի յարուցանելին, ասացեալ . « Քաջ չէ արժան առիւծին առիւծ բուծանել 'ի քաղաքի ։ Ապա եթէ իցէ ոք՝ որ բուծանէ, պարտ է այնուհետև ապա ծառայել բարուց նորա » ։

Քանզի առատաձեռն պարգևքն նորա, և հանդիսադրութիւնքն ևս 'ի նմանէն հանդէսք, և պատուասիրութիւնք ևս քաղաքին դերազանցեալ յոյժ, և փառք նախնեացն նորա, և պերճութիւն ճարտասանութեան նորա, և անձնադեղ կերպարան նորա, և 'ի պատերազմունս ձեռնհասել ոյժ և կորովութիւն նորա, այս ամենայն այլովքն հանդերձ տային Աթենացւոցն զներելի չափով բերել յանցաւորութեանց նորա . որոց և անուանս իմն կարգաւորին նոցա հեշտալուրս, իբրու խաղս և զբօսանս և մարդասիրու-

թիւն: Ըստ որում և յորժամ փակեալ արգել՝ առ իւր զԱգաթարքոս կենդանագիր, և չէր թող նմա ելանել մինչև ոչ նկարեաց նա զտունն իւր. և ապա պարգևատուեղեալ արձակէր զնա: Եւ յորժամ Տաւրէասայ ուրումն՝ որ 'ի մեծատանց հանդերձանս եղ և եւս զնովաւ առնէր՝ ապտակ ած նմա: Եւ յորժամ 'ի գերւոյ մարտին առեալ կին մի Մեղիա անուն, զաւակ ունէր 'ի նմանէ. և զայս խուժանն մարդասիրութիւն կարդայր: Բայց Աղկիբիադէս պատճառաւք մեծապէս եկաց խռոխողելոյ երիտասարդացն. Մեղոսի՝ ձեռն տուեալ վճռոյն այնորիկ: Իսկ անդ և Արիստոփանէսի նկարեալ զՆեմեա. և 'ի գիրկս առեալ նմա զԱղկիբիադէս, խռնէր յայնժամ խուժանն 'ի զնելն անձկանօք նկարուն այնմիկ: Այլ սակայն հինաւուրց որեարն յոյժ դժկամակութեամբ բերէին զիրսդ, իբրև բռնաւորական ոմանս և օրինազանցութիւնս. և կարծէ յիշաւուոնս ասէր Արքեստրատոս. [illegible] [illegible]: Իսկ իբրև յաւուր միում ելանէր նա յատենէն խրախամիտ յաղթեալ և ամբոխ բազում շուրջ զիւրև, պատահէր 'ի Ճանապարհին Տիմոնն մարդատեաց. ոչ զանց արար կամ խոյս ետ, ըստ որում բնաւորեցաւ Տիմոնդ այդառ մարդիկ, նա՛ դէպ ուղիղ երթեալ Աղկիբիադեայ, և կալեալ զաջոյն՝ ասէր. «Ա՛ղէ դու որդեակ, աճեա՛ց լե՛ր բարգաւաճ. քանզի 'ի բարգաւաճութենէդ

չարիք մեծամեծք հասցեն ամենեցուն զո-ցա“: Մինչդեռ կէսք ծիծաղեցան 'ի բանն, և կէսք հայհոյէին, իսկ և կէսք՝ յոյժ խռո-վեցան 'ի միտս իւրեանց: Եւ այսպէս սայ-գայթ 'ի գայթս և անհամաձայնան էր կարծիք վասն Աղկիբիադեայ 'ի պատճառս յեղյե-ղուկ բարուց նորա:

Այլ մինչդեռ տակաւին կենդանի էր Պերիկղէս, հազ ընկէին Աթենացիք ունել զՆիկիասն. իսկ մեռանել՝ նորա զօրանայր 'ի գործ առաւել մերթ ընդ մերթ զօրականս իւրով 'ի Թիկեսունս և 'ի Նիւղակականցութիւն արձակեէին՝ առ որս անդամնոր հարստահա-րեալքն էին 'ի Սիրակուսացւոց. և օրինակ զայս՝ առաջ անդր հարդէին բազմաձեռն կա-տարշանանէին: Իսկ որ խաղաղ վառեալ զեղձն նոցա, և տարզրեալ հաւանեցոյց մի տակաւ այլ միախառնեալ տառապ նաւաստորմիղ առ-նուլ՝ խաղալ և ունել զկրգլին, էր ինքնին Աղկիբիադէս. յուսացուցանէր քաջ զխու-ժանին 'ի մեծամեծս, և ինքն զնա մեծամե-ծացն թեւէն առնէր: Քանզի մեծախորհ լի-նէր, եթէ առուածն Սիկիլիոյ սկիզբն նա-հատակութեանցն եղիցի՝ զոր 'ի միտս ունէր կատարել, և ոչ կատարած՝ ըստ որում այլքն կարծէին: Բայց Նիկիաս զժնդակ յոյժ զխանելով զառումն Սիրակուսայ, զուն գործէր խափանել զժողովուրդն: Իսկ Աղկիբիադէս՝ որ զԿարքեդոն յերա-զէր և զԼիբիա, և յետ զրաւելոյ զաւա-ռացն այնոցիկ՝ շուրջ առեալ մտանէր և զԻտալիա և զՊեղոպոննիսոս, գրեթէ իբրև

համբերութեանց մնացածն ապաւինութեանցն համա-
րձեր իւր զՄելքիսեդէկ : Այսպէս խոստացաւ եկեղեց-
տարգալոց անձնատուութք 'ի նոսա, խորախորհ-
ներալք յանձինս՝ բազմեալ ամենայն գնեցին
ծերունեացն՝ որ հրաշալիս Հաւատ ապրեալ
խոստէին վասն աղաչանացն այնմիկ, և հա-
ւատարմութեան ցուցանէին նա՝ որպէս զի բազումք
այնուհետև նստեալք յառաջարկեցին ընթացս
և 'ի կենսակրթէս դեդերեալք՝ պարապէին 'ի
հովանաւորել զձև զօրաւոր կղզւոյն և ըն-
դհանուր կայից զՆիկիոյ և զԿարբեդոնին : Ասե-
ասեն՝ եթէ ոչ Սոկրատէս իմաստասէր և
ոչ Մետոնէն աստեղագէտն՝ օգտէին անձին ջրա-
նէին քաղաքին յարշաւանաց անտի : Սա-
կրատէս ինքնին խելամուտ լինէր. բանին
Թերևս 'ի ձեռն կենդանւոյն իւր Փոլքին՝ որ
մերձ կայցեալ նմա նախապատուած լինէր :
Իսկ Մետոնէն զանգիտեալ վասն. համարեա
ձեւլոյն եթէ 'ի խելամուտ համեմատին, և
թէ 'ի գուշակական վարժիցն, կեղծաւորե-
ցաւ խելագարութիւն . առեալ ջահ բո-
րբոքեալ՝ հուր հարկանէր զտանն : Բայց
կէսք ասեն՝ եթէ ոչ խելագարեալ առ 'ի
կեղծ, այլ զիջերի հրձիգ 'ի տունն եղեալ՝
ընդ այգն ելեալ յարտաքս անկանէր՝ վասն ա-
զէտից տանն՝ աղաչել զորդին իւր առնել
յարշաւանաց անտի, և այնպէս յաղթանէր
այլոյն՝ խաբեալ զզօրավարացն :

Յայնժամ Նիկիաս կարգեցաւ 'ի զօրա-
վարս. Թէպէտ և կամէր իսկ ոչ առնենլին,
և տեղի տայր միաբանութեան մեծա-
նութեանն միաբանութեան և մեծամտութեանն :

Այլ Աթենացւոցն՝ այնպէս համայն թուեցաւ 'ի գեղեցիկ ելս իրացն՝ մի միայն 'ի խելսն Ալկիբիադեայ ապաստանան զմտաւորն առնել, այլ զնորա զարիութիւնն խառնել ընդ զգօնութեան Նիկիայ։ Քանզի Լամաքոս՝ որ երրորդն էր 'ի զօրավարս, թէպէտ և չէ հասակաւն՝ աւագոյն 'ի մրցմունս ոչ ինչ սակաւ քան զԱլկիբիադէսն հրաբորբոք էր և դիւրագրգիռ։ Իսկ 'ի խորհրդաժողովն Աթենացիքն յաղագս համարոյ զօրականին և յաղագս հանդերձանաց մթերանին, միւսանգամ Նիկիաս դարձեալ գործէր խափանել 'ի խորհրդոյն. դէմ կալաւ Ալկիբիադէս՝ խօսեցաւ և յաղթահարեաց. ապա և Դեմոստրատոս հռետոր՝ սահմանեաց առաջին ասէր, եթէ պարտ և արժան է զօրավարացն ինքնիշխանս լինել 'ի հանդերձանս մթերանցն և 'ի մթերանս զօրականին։ Իսկ քուրմերայս արտաքոյ հատանեցելոց ժողովուրդք և առ հասարակ կարգելոցն պատարագամատուցան ծածկեալ լինել, անոր էր տեսանել խորս ոչ ինչ բարեգուշակս, և առաւել՝ 'ի ատենի յայնմիկ։ Քանզի և յաւուրսն յայնոսիկ դէպ լինէր տօնախմբութեանցն Ադոնիսի. և յայնժամ բազում ուրեք 'ի տեղիս տեղիս դիցշեանս խնկեր մեռանելեցն առաւելք կանանցն, յորս երեւելութեանցն զխորհուրդս ունէին. և կանանցն կոծ և ճիչ եղելոց զթաղմանն՝ որոց և առաջնորդ երգէին։ Այլ այս դարձեալ՝ և 'ի միում գիշերի յանկարծ ծածկաբար կոճատեալք լինէին արձանքն Հերմեայ, և բազ-

մնաց 'ի նոցանէ գլխաւոր երեւելւոյն փշրեալ և խաթարեալ։ Եւ այս առաւել միջամտեալ ահաբեկ առնէր շատ զոք և 'ի մարդկանէն՝ որ այսոցիկ ոչինչ առնէին։ Այլ ասացին և լուր հնչէր, Կորնթացւոց թերևս ինքնին առնել յայտնապէս ասեն 'ի շնորհս Սիրակուսացւոց՝ գոլով նոցա գաղթականք. զի զգուշասցին ելս մարտին խափանեսցեն 'ի նշանաց անտի, կամ թէ իսպառ խախանեսցեն արդեօք։

Բայց ժողովուրդք ոչ հաւանէին անայլին, և ոչ որոց զժնդակ ինչ չերևէր նշանն. այլ թէ երիտասարդք անառակք է զի ընտրութեամբ են յայսպիսի, յորժամ անառակաբար զինեալք՝ անկիրթաբանին և 'ի թշնամանաց անգամ՝ խաղու ընդ խաղս։ Սակայն և 'ի ցասումն բարկեալք, և զանգիտեալք ևս զոչէ երկծնակաւ զաշխատարաց ինչ լինել յանդգնութեան մասն մեծաց իրաց, զատանաչէս այնուհետև 'ի քննին մատուցանէին զամենայն կասկած. ուստի և 'ի սակաւ աւուրս բազում անգամ խումբ ժողովեցաւ ծերակոյտն, և ժողովք բազմաց գումարեցան ռամկին։ Այսու յայնժամ Անդրոկղէս հռետոր յառաջ մատուցանէր զոմանս 'ի ծառայից և 'ի բնակաց անտի Աթենայ վկայել յաւէտ, եթէ և այլք ևս 'ի դրօշելոց զատան այնպէս ծաղրանեալք. և թէ ուրեք 'ի գինարբուս՝ նմանութեան հանդէս գործեցաւ նուիրական խորհրդոց. և ամբաստանեալ կային զԱլկիբիադեայ և զընկերակցացն, եթէ Թէոդո-

բռա ամն անուան անդամնոր զկերպարանս բե-
րեր զՔաղաքին, և Գոդիոսինես ամն՝ զՋա-
հընկալի, և Աղկիբիադէս ինքնին զՔահա-
նայն • իսկ այլք յունկերացն մերձ կացեալ
անդ վարժեցին 'ի նմանէ 'ի նոյն խորհուրդս՝
երբև արդարև իւղոզանելոյ անանս : Քանզի
զի այս բանք արձանագրեցան յամբաստա-
նութեան անդ Թեսաղոսի Կիմոնեան ընդ-
դէմ Աղկիբիադեայ՝ երբև ամբաստանելոյ
ուրումն յաստուածականն անդր :

Այնուհետև 'ի պատանութեան բարկու-
թեան բրդեալ ժողովրդեան ընդդէմ Աղ-
կիբիադեայ, և գրգռեալ ևս յԱնդրոկ-
ղեայ (զի էր սա ոխերիմ թշնամի Աղկի-
բիադեայ), զառաջինն զդատաւորի հարեալ
կայր Աղկիբիադէս • այլ առաջ ըուր առեալ
զնաւատորմս առհասարակ 'ի չուն Սիկիլեան՝
զի մեծամեծս մարտութեանց ենն ընդ նմա •
և զի զօրականք՝ յԱրգոսացւոց դարձեալ
և 'ի Մանտինեացւոց՝ հաղորդք ողջ ապստա-
նէինք, յայտնապէս ասէին 'ի շնորհս Աղկի-
բիադեայ չու առնել 'ի առաջադէմ յայն
զինուորութիւն և յայնկոյս ծովուն • և զի՝
ունէր առն եթէ ունակք երկէք հաստատա
հաստատութիւն հասցէ Աղկիբիադեայ, քա-
ջալերեցաւ և 'ի ժամուն յանդիման լինէր
ամենեցուն ապստամբութեան առնել վասն ան-
ձին : Զանդիմանեալ թշնամեացն՝ եթէ խոռ-
ժանին զառարկինեք հեռացոյն 'ի ներքս բեր-
ցէ վասն ժամանակին՝ յորում Աղկիբիա-
դեայ ակեաք էին նոցա, 'ի հնարս հայթայ-
թանաց 'ի մէջ մտատուցին 'ի հռետորաց

անկանի՝ որք 'ի վերջին երեսս ոչինչ թշնամիք
Աղկիբիադեայ, այլ 'ի սորին [illegible] նորա
ոչինչ պակաս քան զնուն թշնամիսն. հրա-
պուրեցին [illegible] խօսել առ ժողովուրդն՝
[illegible] ոչ պարտ ոչ արժան եթէ առաջ-
նորդ [illegible] զօրավարս՝ այն [illegible] [illegible]
զօրականութիւն և նիզակակցացն, նա [illegible]
[illegible] ժամանակին հանդէպ 'ի ձեռաց, մինչ և
[illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible]. այլ թէ պարտ և արժան է նմա յառա-
ջել նաւել յաջողակի, և 'ի վերադարձանել
մարմնոյն նովին օրինօք յանդիմանեն լինել զա
պատասխանատու առնել վասն անձին:

Բայց Աղկիբիադէս խեղաթիւրս եղեալ
զատուածասուցութեան պեղպեղումեանցն՝ յառաջ
մատուցեալ ասէր, եթէ զժողովն է՝ անիր-
ձայր թողեալ զամբաստանութիւնս և զզր-
պարտութիւնս՝ այժմէն առնուլ արձակել
զնա խէթ 'ի մեծի հանդերձ մեծաւ բանա-
կաւն. քանզի և մահ են արդարք առ զուր
կայցէ նորա՝ [illegible] որ ոչ եղեւ զամբաստա-
նութիւնն. իսկ պատասխանատու առն-
յեալ և արգելեալ զանձն՝ չու առնուցէ այ-
նուհետև ընդդէմ թշնամեացն անմտորոր 'ի
պատերազմեացն: Այլ եղեւ ոչինչ կարող
համանեցուցանել զժողովուրդն, և պա-
տուէր են եսասն խաղալ զնաւ, անկասկ նա
յուղի ընդ նիզակակից զօրավարացն՝ առ-
եալ ընդ իւր եռամթիւ հարիւր քառա-
սունս, զօրականս ոչ [illegible] հինգ
հազար և հարիւր, և այլ եւս եղեւ հազար
մի և երեք հարիւր յաղեղնաւորաց, 'ի պարս-

սուսերաց և 'ի թմբթկաղէն զինուորաց, և զայլն ամենայն կազմած համբաւոյ մեծահամ գերոճ և շքեղ։

Իբրև եկեալ եհաս յԻտալիա, և մերձ եղեալ 'ի Ռեգիոն՝ մերկացաւ զխորհուրդ անձանց վասն մնալոյ պատերազմին, ընդդէմ զօրաժողով Նիկիասու․ իսկ համաձայնութեամբ [illegible] Լամաքոսու՝ դէմ եդեալ այնուհետև նաւելոց 'ի Սիկիլիա, և առնգէն զԿատանէ առնէր [illegible]․ առակայն և նա հաստատութեան այլ ոչ նաւհատանելեցաւ․ քանզի փութանակի յատեանն անդր յետս կոչէին զնա Աթենացիք։ Քանզի անդ զառաջինն՝ որպէս ասացաք՝ ցուցան էին կասծիք ամբաստանութեանն ընդդէմ նորա 'ի ծառայից ուրուք և 'ի բնակաց Աթենայ․ բայց առաւ 'ի չգոլն նորա, ատեանն և բուռն յարձակեցան 'ի նա թշնամիք․ և 'ի միասին ընդ մեղուաց զբօսելոյն Հերմեայ բարդեալ և զանարգականացութիւնն, խորհուրդս գործք առաքելական 'ի նոյն և 'ի մի եղանելական զանձնաւորութենէ՝ նորութեան խռնդեալ 'ի կարգ քաղաքին, [illegible] և ձերբակալ ապարելեալ 'ի բանտ արկանէին առ հասարակ զամբաստանեալսն՝ անգամին [illegible]․ և ցանէր յոյժ նոցա՝ զի յայնժամ զԱլկիբիադէս ոչ քարշեցին 'ի դատաստան, և ոչ փութացին 'ի վերայ կարգեցին զմեծաց ամբաստանութեանցն։ Եւ այսպէս առաւ՝ որ միանգամ ընտանեաց նորա, և կամ բարեկամ ոք և կամ ընկեր կենակից ոք, ամբաստանութեանն այնմիկ համե

զինուորաց Աթենացւոց՝ անողորմաբերելս ամանս և զժողովրդականս զառանելով զնոսա: Իսկ զզօրավարսն՝ Թուկիդիդէս զանոնց ասէ ա-նուանել մեզ, առակողն այլք ամենք ա-նուանեալ կոչէին զնոսա Դիոկղիդէս և Տեւ-կրոս. ըստ որում և Փրինիքոս կատակեր-գակ քերթէ այսպէս.

"Դուռ Հերմէս յայժ անձնչահալ,
Պահ կաց անկանիլ զոռ Հերմէս.
Պատսպարեալ կաց, մի վայր անկեալ
Ըզքիթդ քնքնելին խաթարեսցես:
Գուցէ որ այլ բանսարկու՝
Մեզ յարուսցէ Դիոկղիդէս,
Եւ գտան մեծ՝ չարիս տուգանս
Ածեալ բերցէ նոյնպէս:
Զգուշացեալ կամ ես պահեմ,
Զի ոչ կամիմ Տեւկրոսին
Մատնութեան վարձ տալ ձեռին՝
Արտնախանձ օտարոյն":

Թէպէտ և զառաւօտեանցն նշանելին ոչինչ հաս-տատուն և ոչ զօրաւոր լինէր զարմանեալ բա-նակացն եղեն 'ի բերել յասանելին: Նա զի՝ և մի ոմն 'ի նոցանէն հարցեալ, եթէ զինչ-նա ծանեաւ 'ի գիշերաց զայրսն՝ որ զՀերմէս ծակծակեալ լինէին, կարև պատասխանեաց եա-սլիրն՝ եթէ 'ի լոյս լուսնին, հաւանեցան նշա-նակեցաւ. քանզի 'ի նորին լուսնին զտօ-ծեցան էին:

Եւ յայսմ ժամանակէ ապաւինել չկարօթեց յուղե-ցին մնասցոր մարդկեն, այլ խռովեան ժո-

[illegible]

տուեալն ըմբռնեցի. և թէ՝ երբ գաղտնապատմութիւնք անհնարին է ամենեցուն, իսկ ճանաչելն և աւանդաց տրամից՝ յոյժ անհնարին է. և թէ՝ լաւ է տալ խնչ և աղտեղացուցանել զանձն, քան այլոցն տեսլեամբ անօրէնապատար զմանս ընդունելի. և զի՝ որ 'ի հասարակացն շահ գլխոյ ակն ունիցի, արժան է 'ի կարգաւոր գնացս ամենայն անխտիր աճելոյ և զեկեղեցականսն՝ առ 'ի փրկել 'ի մահահաշտ երկից պատերազմաց 'ի քաղաքաց և յաւարառութեանց: 'Ի քաղաքէն ասոյ Տիսափեռնեսի և 'ի խորամանկէին ածեալ Ալկիբիադէս՝ և անձկատարարն կացեալ մեծն անձին և մեծն այլոց, խնդրէն անդրատուհաւ ազդակկեցաւ 'ի մտաւոյն. ասպարէզն աւհասարակ՝ զորոց մեծամեծամբ դաւաճանեալ նա՝ 'ի մահ մատնեցան, քանզի 'ի փրկութենէն. քանզի Ալկիբիադէս առ 'ի հաւատարմութեան զոյժս գործել նա և յետոյ անուն ծառայից առնել անուանեաց ընդ մեծամեծարանն:

Այլ յայսր ամենայնի մերայ՝ ոչ զեկեղանեալ խուժանն 'ի մոլեգին քաղաքութեան. այլ զերան մՃարեալ զանազանակարգաց հերոսաց, այնուհետև բռնանաւորակ զմթերեալ պատմութիւնն հեղեղաւ ընդդէմ Ալկիբիադեայ: Այլա 'ի մէջ զՄարդամենեանն նաւն առնել արձակեն առ նա՝ պատուէր առնել խոստովանութեանք պատուհասակաց մի ձեռն մխել 'ի նա և մի խնչ բռնան առնել նմա, այլ հեղաւար բանակաց ապա առնել՝ զալ մտադիւր զկնի նորա և յանդգնանն երկրայ ամենեցուն՝ հանել զժողովուրդն. Քանզի երկեւան՝ գոյցէ ամենա յուզեցցէ

'ի զօրաւոր ժողովրդեան Թշնամեաց. և [illegible] Ալկիբիադէս [illegible] ձեռնահաս էր 'ի բանին՝ եթէ կամէր. քանզի և 'ի մեկնել նորա 'ի քաղաքէն՝ [illegible] զօրականք, և 'ի [illegible] զօրավարութեանն ժամանակաւ [illegible] 'ի մարդկանն [illegible]. [illegible] 'ի մարդկանէ նախա[illegible]թեան [illegible] էին. զի թէպէտ և Լամաքոս այր մարտիկ և քաջ էր, այլ 'ի [illegible] [illegible]թեանն՝ [illegible]թիւնս [illegible] էր այլոց, և 'ի [illegible]թիւնս:

Այլ փառաւորութիւնն Ալկիբիադեայ մնացեալ 'ի նոսա և մեկնելով 'ի քաղաքէն, [illegible] զԱթենացւոցն [illegible] զՄեսսինէ. քանզի [illegible]՝ 'ի ձեռս նորա հանդերձեալ [illegible] [illegible]. և [illegible] [illegible] 'ի վերայ [illegible] [illegible] Սիկիլիայ [illegible], և այնուհետև [illegible] ընդ հաւանին: Իբրև եկին եհաս 'ի Թուրիոն, էջ 'ի նաւէն և [illegible] [illegible] 'ի խնդրողացն: Իսկ [illegible] այր ոմն ծանուցեալ զնա, ասէր այսպէս. «Չե՞ս [illegible] 'ի քոյին հայրենի քաղաքացիս Ալկիբիադէ»: Եւ պատասխանի ետ. «Ես [illegible] իսկ քաջ յայլն ամենայն. իսկ վասն անձին իմոյ և ոչ 'ի մայրն իմ [illegible]. մի թերևս զսևն [illegible] փոխանակ սպիտակին արկցէ անխորհրդաբար»: Իսկ իբրև լուաւ՝ եթէ մահու դատապարտեցին 'ի վերայ [illegible] նորա քաղաքացին, ա-

ռէ. Այլ ես խնդրեմ ցուցից նոցա՝ եթէ չեն֊ դանի եմ: Բայց դատաստանագրութիւնն Աղկի֊ բիադեայ օրինակ զայս արձանագրեցաւ. «Թեսսաղոս Կիմոնեան Ղակիադէս՝ վասն Աղկիբիադեայ Կղինեան Սկամբոնիդեայ դատաստանագրեաց, եթէ անիրաւեցաւ առ դիցուհիսն՝ առ Դեմետր և առ Օրիորդն (Պերսեփոնէ). նմանութեամբ հանդէս գործելով նուիրական խորհրդոցն, և ցու֊ ցանելով զայնոսիկ ինքոցն ընկերաց յիւ֊ րում տան. պատմուճան արկեալ զանձամբ՝ զորօրինակ Քահանայն արկեալ զիւրեաւ ցուցանէ զարդուեթեան նուիրա֊ կանն. և անուանեալ կարդաց զանձն իւր Քահանայ. իսկ զՊողիւտիոն՝ Ջահընկալ, և զԹէոդորոս Փիւղէացի՝ Քարոզ. իսկ զայլս ունկնդիր ընկերացն՝ Խորհրդակիցս և Վերատեսուչս յորջորջեաց, հակառակ օրինաց և սահմանադրութեանցն Եւմոլ֊ պիդեանց և Քարոզից և Երիցանցն Եղեւ֊ սինեայ»: Եւ այսպէս առեալ դատապարտ֊ եալ զԱղկիբիադէս, զինչս նորա հրապարա֊ կեցին. և սահմանեցին ևս՝ անեծանսն քրմաց և քրմուհեաց անէծս կարդալ ի վերայ նորա. յորոց մի ոմն միայն Թէանօ անուամբ քրմուհին դուստր Մենոնի Ագրաւ֊ ղացւոյ՝ պատասխանեաց՝ եթէ պէտ է գործել աղօթս, ասէր. Զաղօթից՝ և ոչ զանիծից քա֊ հանայութիւն առեալ եմ:

Այլ մինչ նորա զդատապարտութիւն եդաւ, նա դեգերէր կայր յԱրգոս. քանզի առ աւելին փախստականեայ գնացեալ ի Թուրիայ՝

[illegible]

[illegible] ... թէ [illegible] 'ի [illegible] կամ թէ [illegible] կամ թէ 'ի Միջերկրական [illegible] ։

Քանզի [illegible] այս Անգղիական [illegible] ... և [illegible] ... 'ի [illegible] ... 'ի [illegible] ... Անգղիական [illegible] ... 'ի Լ[illegible] ... 'ի [illegible] ... 'ի [illegible] ։

Ա[illegible] ... 'ի [illegible] ... 'ի Լ[illegible]

[illegible] [illegible] նորա, որ [illegible] [illegible] յանկն [illegible]՝ ասէր [illegible] զնմանէ, եթէ «Ո՛չ որդի Աքիլլեայ է դա, այլ Աքիլլէս [illegible] [illegible]՝ զոր Լիկուրգոս [illegible] [illegible] կեալ լեալ է». բայց 'ի ներքինն նորա յառնել, և կրիցն և [illegible] համօրէն 'ի [illegible] կացելոյ, ասասցէ ոք, եթէ «Այն [illegible] կինն է դա»։ Քանզի [illegible] [illegible] նա զՏիմէա զկինն [illegible] Ագեայ՝ որ յայնժամ [illegible] [illegible] [illegible] [illegible], մինչև յղացաւ կինն յԱղկիբիադեայ և ոչ ժխտէր. [illegible] [illegible]՝ որ ծնաւ արու, [illegible] [illegible] [illegible] կոչ[illegible] Լէոտիքիդէս. իսկ զոր առ անձին անուանն կոչէր նա [illegible] հծծելով [illegible] [illegible] և [illegible], էր Աղկիբիադէս։ Այսչափ [illegible] [illegible] զկինն անձին Աղկիբիադեայ. որ և [illegible] ասէր՝ ոչ [illegible] [illegible] [illegible] զայսն, և ոչ 'ի [illegible] [illegible] [illegible] և [illegible], այլ զի [illegible] [illegible] [illegible] Լակեդեմոնացւոց [illegible] առ 'ի նմանէ։ Բայց [illegible] [illegible] զԱղկիբիադեայ [illegible] յայնժամ [illegible] [illegible] Ագիսայ. և [illegible] նա՝ [illegible] [illegible] [illegible]՝ [illegible] [illegible] [illegible] Ագիս 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ընդ կինն, և [illegible] [illegible] առ նա [illegible] [illegible]՝ մինչև ծնաւ Լէոտիքիդէս, և ոչ ծանեաւ զնա. և նորին [illegible] և Լէոտիքիդէս [illegible] [illegible]

ապա մերժեալ 'ի բաց վտարեցաւ 'ի թա-
գաւորութենէն։

Այլ յետ արկածից Աթենացւոց 'ի Սիկիլիա, Քիացիք և Լեսբացիք և Կիզիկե-ցիք՝ միաբանութեամբ առաքէին հրեշտակս 'ի Սպարտա խնդրել ձեռն օգնականութե. քանզի կամէին ապստամբել յԱթենաց-ւոց։ Անդ Բիովտացիք աղերս մատուցեալ վասն Լեսբացւոցն, և Փառնաբազ վասն Կիզիկեցւոցն, Սպարտացիք առաջնեալ յԱղկիբիադեայ՝ առաւելին առ Քիացիսն ա-ռաքէին օգնութիւն. անդանօր ինքնին և Աղկիբիադէս հասեալ՝ վաղվաղակի մի ևս զՅո-նիա ողջոյն յապստամբութիւն դրդէր, և կացեալ անդ ընդ զօրավարս Լակեդեմո-նացւոց՝ զեան բազում հասուցանէր Աթե-նացւոցն։ Եւ յայսմանէ Ագիս ոխերիմ նմա վասն անարգանաց անկողնոյն, 'ի նախանձութիւն դառնայր և ընդ փառսն նորա. զի և զհամբաւ հարկանէր այսպէս՝ իբրև գեղեցիկս ունել ելս իրացն 'ի ձեռն նորա։ Առ այս՝ և այլոց ևս աւագացն Սպարտաց-ւոց և ձոխից գժտութիւնս բերեալ էր Աղկիբիա-դէս, և խեռութիւն ընդ նմա. ուստի և սաս-տիկ և բուռն ստիպեցին զիշխանսն, որպէս զի և 'ի Յոնիա գրել նոցա՝ զի սպանցեն զԱղկիբիադէս։ Այդ նմա 'ի ծածուկ եղեալ բանսն՝ զգուշ հարեալ կայր. Թէպէտ և յամենայն 'ի գործս ձեռնտուութ էր ընդ Լակեդեմոնացւոցն, սակայն և մեծապէս զգուշացեալ անձնապահ լինէր։

Ապա յանդորրու կացուցեալ զանձն՝

չոգաւ առ Տիսափեռնէս նախարարն ար-քային, և անդէն առաջին բարձի և պատուութեան հասանէր առ նմա։ Քանզի և բարբարոսն ինքնին՝ ոչ պարզ գոլով մտօք այլ չարաբարոյ և չարասէր, հիացեալ իսկ էր ընդ բազմահնար և ընդ սաստիկ խորագիտութիւն նորա. զի և 'ի հանապազորդեայ կենակցից և 'ի մարդասէր քաղաքավարութեանն՝ միանգամայն զամենայն բարս և զամենայն բնութիւն՝ շնորհիւն յինքն որսայր և յանգուցանէր. նա և որոց միանգամ զանգիտէինն 'ի նմանէ և խեռայինն ընդ նմա, նոցուն դարձեալ հեշտ և բաղձալի էր կալ ընդ նմա և տեսանել զնա։ Եւ Տիսափեռնէս ինքնին անագորոյն այր և հելլէնատեաց առաւել քան զամենայն Պարսիկս՝ այնպէս խիստ յանդուգեալ էր 'ի շնթերցն Աղկիբիադեայ, որպէս զի և փոխադարձ մարդահաճութեամբն ինքն զանցանէր զնովաւ։ Քանզի և դրախտին՝ որ գեղեցիկ ևս գոյր յամենայն դարաստանս նորա վասն ջուրցն վտակաց և առողջ և զուարթարար մարգաց, և վասն ձեմելեաց և հովանաւոր վայրաց, գործ արքունի և յոյժ քաջարուեստ, դրախտին այնմիկ ինքն անուն կարգայր՝ Աղկիբիադէս. սակս և այլքն նոյնպէս անուանել կարգային։

Իբրև այնուհետև յուսահատ 'ի Սպարտացւոցն լինէր Աղկիբիադէս, և զանգիտեալ ևս էր յերեսաց Ագիսայ, խնդրելոց տուգանս 'ի վերայ ածել նոցա. կայր և բամբասէր զնոսա առաջի Տիսափեռնեայ,

և զայսր նմա թոյլ տալով յաղթութեան հա-
սանել նոցա, զի մի՛ խափանս խորտակեսցին
Աթենացւոցն. խորհուրդ տայր նմա՝ զերդե-
րել զամբաստանեալն, զի այնուհետև տակաւ ան-
կեալ նոցա յուժոյ և առ 'ի միմեանց մաշ-
եալս կարեվերեալք, երկոքեանքն կողմանքն միաբան-
դամայն ընդ ձեռնասուն նկուն լիցին արքային:
Իսկ Տիսափեռնէս հեշտանաւ յանձնէր 'ի
բանսն. քանզի և առեն յայտնի յոյժ սիրե-
լի էր նմա Աղկիբիադէս և զարմանալի, որ-
պէս զի և 'ի նա խնդրն ակնկալութեամբ էին առ-
հասարակ Հելլենացիք. իսկ Աթենացիք
ձախորդակի հանդիպեալք եղեն՝ [illegible]
ընդ խորհուրդն զոր խորհեցան նոքա ընդ-
դէմ նորա. և խնդրէին դարձեալ Աղկիբիա-
դէս վշտացեալ յոյժ էր և զանգիտեալ էր, դա-
ցէ հիմն 'ի վերայ տապալեալ Աթենայ՝ ընդ
ձեռնասուն զօրացեալ կացցէ Լակեդեմոնաց-
ւոցն տանելեաց նորա:

Զայնու ժամանակաւ Աթենացւոցն զօ-
րութիւն ամենայն առ կայացեալ էր 'ի Սա-
մոս. և անդուստ նոքա յարձակեալ նա-
ւաց հանդիպէին՝ միւսանգամ 'ի բուռն ար-
կանէին զկասարանձեալսն, և պահ ևս զդա-
շութեան կարգեալ 'ի վերայ այլոց՝ զի մի՛
յապստամբութիւն մտածեսցեն. քանզի
և տակաւին էր նոցա զօրք համարատար ծո-
վամարտիկ ընդ թշնամեացն լինել: Սակայն
և զահի հարեալ էին նոքա 'ի Տիսափեռ-
նեայ և յեռանաւոց անտի Փիւնիկեցւոց
հարիւրից և յիսուն, որոց և ըստ համբաւոյն
ժամ 'ի ժամ ակնկալեալ մնային, յա-

տարեկ այնուհետև եղեալ 'ի փրկութենէ քաղաքէն 'ի գալըստեան նոցա ։ Որում խրագ-գած Ալկիբիադէս եղեալ՝ գալոց առաքեր 'ի Սամոս առ առաջնորդսն Աթենացւոց՝ յորս առաջին գնէր նոցա հաշտ և բարեկամ ընդ նոսա ըՏիսափերնէս յորդորեալ. ոչ եթէ զխոստմանն կամեցեալ ինչ հաճել, կամ թէ այնուհետև վստահ ինչ 'ի նոսա լինել, քան եթէ 'ի շնորհս առաջնորդոյն. եթէ երբէք գոռոզացեալք նոքա ապրեցու-ցեալ զհասարակացն և զքաղաքն, քաղու-թեանս առանձնակործեցեն զգոռոզացեալ խեռութիւն ռամկին ։

Այսպէս անդէն առաջնորդեար Աթենաց-ւոց սերտիւ միաբանեալ ընդ Ալկիբիա-դեայ, մի ոմն 'ի զօրավարացն Փռինիքոս Դե-րադիոտէս Ըղէմ գաղձաւ. կասկած 'ի մտի եդ (որպէս և էր իսկ), եթէ Ալկիբիա-դեայ ոչ փոյթ ինչ է՝ խոստմանցն կամ թէ առաջնորդոյն առաջնորդել քաղա-քին. այլ թէ այսպիսեօք խոստմամբն խնդրէ դա զդիւրանդամ հրաւէր 'ի քաղաքն անդր՝ յինքն զառաջնորդեալն յանդգնուցանելով ։ Այլ յաղթեալ 'ի խորհրդոյն Փռինիքոս, և յայտնի եւս թշնամի եղեալ Ալկիբիա-դեայ, առաքեաց գաղտ առ Աստիոքոս նաւապետ թշնամեացն. աղդ առնէր ըղ-դուշանալ յԱլկիբիադեայ և ձերբակալ առնել զնա, իբրու այր սուտակապատ երկկողմանի։ Այլ մատնիչն քաջ իսկ սխա-լեալ բանադնաց լինել ընդ մատնչի։ Քան-զի Աստիոքոս մեծապէս պատուէր Տի-

ստիպերինեայ տեսեալ զԱղկիբիադէս 'ի շուք պատուոյ առաջին նորա, 'ի վեր հանէր նմա զզանանս Փռինիքեայ: Նա անդէն վաղվաղակի առաքեալ 'ի Սամոս ամբաստան լինէր զՓռինիքոսէ. տեսեալ Փռինիքոս զի առհասարակ 'ի պատմութիւն բարկութեան բռնեցան ընդդէմ նորա, եւ չգըտեալ անձնապուր լինել 'ի մօտալուտ վըտանգէն, դարման տանէր նա յայնժամ չարին՝ մեծ եւ չարեաւ:

Քանզի միւսանգամ յղեալ առ Աստիւքոս գանգատէր դառնապէս վասն մատնութեանն, եւ խոստանայր եւ նմա 'ի ձեռս տալ նորա զԱթենացւոց նաւսն եւ զզօրն: Այլ զեան եւ ոչ մի լինէր Աթենացւոցն յայնմանէ. քանզի անդրէն մատնատու դաւանեալն լինէր Աստիոքոս առ Աղկիբիադէս: Իսկ Փռինիքոս նախազգած ակնկալեալ երկրորդ ամբաստանութեանն Աղկիբիադեայ, կանխեաց ազդ առնէր Աթենացւոց զմօտալուտ ժամանել նաւուց Թշնամեացն, եւ խրատ տայր զգուշութեան նաւաց եւ ամրութեան բանակին: Մինչդեռ 'ի նոյն պատրաստեցան Աթենացիք, անդուստ դայր հասանէր դարձեալ նամակ յԱղկիբիադեայ ազդարար վասն Փռինիքեայ, իբրու որ մատնատու հանդերձեալ է լինել նաւուց 'ի ձեռս Թշնամւոյն. այլ նոքա ոչ հաւատացին՝ իբրու այն որ քաջիկ գիտելով Աղկիբիադէս զկազմած եւ զխորհուրդս Թշնամեաց, պատճառաւ իմն յանիրաւի ամբաստանել զՓռինիքոս: Այլ ապա յետ

ժամանակակցաց իւրոց մի ոմն 'ի պատահականաց քաղաքին Երմեսին անուամբ՝ տարան զՓրիւնիքեոս 'ի հրապարակին հարկեալ դատաստանաւ, յայնժամ 'ի քննին առնեալ զպատճառն՝ զմահն Փրինիքեայ կրկնեցին իւրոց զմասնակցի տան, և բաղձեալ ազատեցին զԵրմեսին և զընկերս նորա։

Այլ որ 'ի Սամոս առաջնորդէին՝ բարեկամք Ալկիբիադեայ՝ առեալ արձակեցին յԱթէնս զՊիսանդրոս երթալ փոփոխել զդեկավար քաղաքին, և խրատել տալ առաջացն առանձնակ զառաջնորդութիւնն և լուծանել զընկերհաշտութիւնն՝ ըստ պայմաննին Ալկիբիադեայ յարդարել զՏիսափերնէս նոցա բարեկամ և նիզակակից. քանզի զայս պատուէր և զխոստ առնին յայնժամ Առաջնորդապետականքն։ Այլ իբրև զգուշացեալ յԻմբրոսեան զզօրավարն յանձնուցեալն՝ որ առնուանեալքն կոչէին Հինգ հազարք, թէպէտ և չորեքհարիւրքն էին թուով, ոչինչ այնուհետև պատուական կարծին Ալկիբիադեայ. և զանձնապաշտ և 'ի մեկին՝ զանձնիշխանեալքն 'ի նոցանէ որ զժողովականին եղեն ընդ փոփոխել իրացն. և զի՝ և զՆաւերդեմնացին զառաջնորդականսն նոքա հաշտ առնէին։ Իսկ խուժանն Աթենայ առ ահին նաւեր համբարձեալ. քանզի և ոչ նուաղութիւք ամենայ յայնժամ որ ընդդէմ պատրաստ չորեքհարիւրոցն, 'ի ձեռն վարեցան։

Բայց որք 'ի Սամոսն էին լուր առեալ զիրացն և 'ի բարկութեան բորբոքեալ՝ հաւանեցին անդէն խաղալ նաւել 'ի Պիրէա, և կոչ յղեալ առ Ալկիբիադէս և զօրավար

կարգեալ՝ 'ի ձեռս եւսոյն նորա զիշխանութիւնն խաղալ նկուն առնել զբռնաւորսն. այլ ոչ հաճոյ թուեցաւ Ալկիբիադեայ յայնժամ։ Բայց անշուշտ ոք յանձն առեալ էր զբանդ՝ այնպէս յանկարծ յայն աւագոյն բարձրութեան հասեալ 'ի ժողովրդոց. խորհու եթէ արժան իցէ արդեօք համձել զպատուագիր որեարն, և մի զդէմ դառնալ այնոցիկ՝ որ զվտարանդի զոմն և զփախստեայ՝ առաջնորդ և զօրավար կարգեալ իցեն յոքնաթիւ նաւացն և բանակին և տասուար գնդին։ Այլ որպէս առաջ իշխանին վայել էր, այնպէս ընդդէմ դարձաւ յայնժամ Ալկիբիադէս՝ որոց 'ի պատմութիւն բերեալ էին, և արգել սանձեաց մի ինչ յանցանել. որով և քա՛ջ իսկ Ալկիբիադէս 'ի ժամուն փրկեալ ապրեցոյց զքաղաքն։ Քանզի եթէ յայնժամ չու արարեալ 'ի Սամոսայ գնացեալ էր Աթենացւոցն 'ի տուն իւրեանց, անդուստ թշնամւոյն փութապէս տիրացեալ էր անդէն անկռիւ առհասարակ 'ի վերայ Յոնիոյ և Հելլեսպոնտոսի և Կղզեացն, մինչդեռ մարտ Աթենացիքն ընդ Աթենացիսն եդեալ կռուէին 'ի քաղաքին. զոր և ինքնին Ալկիբիադէս յայնժամ արգել կնքեաց՝ ո՛չ համոզակեր բանիւքն միայն և հրապարակախօս խրատուն, այլ և յաղերս եւս անկեալ և կշտամբանօք եւս 'ի վերայ կայեալ միոյ միոյ 'ի նոցանէն առանձինն։ Նմա գործակից 'ի նոյն նահատակեցաւ յայնժամ և Թրասիբուղոս Ստիրեցի՝ արձանա-

ցեալ 'ի միասին, և աղաղակ մեծամեծս բարձեալ. քանզի և էր իսկ այս Թրասիբուղոս՝ որպէս ասեն՝ յոյժ բարձրաձայն և աւագաձայն 'ի մէջ ամենայն Աթենացւոց։

Իսկ երկրորդ գեղեցիկ նաւհանգստութեան նաւհանգստեցաւ նա, յորժամ զՓիւնիկեան նաւսն զորքայսն՝ որոց մնայրն Լակեդեմոնացիք՝ խոստացեալ դարձուցանել առ Աթենացիսն, կամ թէ և զԼակեդեմոնացիսն միաբանեցուցանել, ինքն փութաալէս նաւերաց ընդ առաջ. և Փիւնիկեանցն համեալք յԱսպենդոս՝ ոչ ետ Տիսափերնեայ ածել զայնոսիկ առ Լակեդեմոնացիսն. և 'ի դերևս համեէր զնոսա։ Բայց զԱղկիբիադէս ինքնին պատճառս կալան, զի անպարտ յօգնականութենէն եղեն միանգամայն և Աթենացիք և Լակեդեմոնացիք, և մերձենքդ առաւել քան զառաջինսն. մեղ եղեալ զի սադրեաց նա այնպէս բարբարոյսն, զի առ 'ի միմեանց հարեալ վտաթարեսցին Հելլենք։ Քանզի և յայսմ իսկ՝ որ ոք յերկոցուն կողմանց զնաւախումբն զմեծ յինքն արկանէր, նա զծովուն տէրութիւն համէր խաղաղ 'ի ձեռաց ընկերին։ Եւ յայսմանէ նկուն եղեալ նաւամենցան չորեքհարիւրքն. քանզի բարեկամք Աղկիբիադեայ մտադիւրադոյնս նպաստակակից եղեն մարդկանն՝ որ կուսակիցքն էին ռամկին։ Ուստի և քաղաքացիքն հրամանս տուեալ դարձին Աղկիբիադեայ, խորհեցաւ ոչ դատապարտեալն դառնալ 'ի շնորհս ժողովրդեանն, այլ փառօք մեծաւ։

Digitized by Google

Այսպա զառաւաջինն սակաւ նաւուք ելեալ 'ի Սամոսայ, չոգաւ շուրջ յածէր 'ի Կնիդիոն և 'ի Կով. և անդ լուր առեալ՝ թէ Մինդարոս Սպարտացի հանդերձ ամենայն բանակաւն ծովագնաց խաղայ 'ի Հելլեսպոնտոս, և Աթենացիք հետամուտ լինին նորա, 'ի շտապ տագնապալի խաղայր գնայր Աղկիբիադէս ձեռն տալ զօրավարացն Աթենացւոց: Հասանեալ ութ և տասն նաւուք 'ի ժամուն՝ յորում երկոքեան կողմանք միջամտեալք նաւամարտիկ լինէին առ սահմանօքն Աբիւդոնի, և երկոքեան միանգամայն 'ի միում թևի անդ յաղթողք և 'ի միւսումն յաղթեալք՝ սաստկապէս մղէին զդառն մարտին մինչև 'ի տարաժամել աւուրն. իբրև երևեցաւ նա, անդ կողմանք երկոքեան ներհակաբար կարծեալ զկարծիս, թշնամիք խրախուսեցին, և Աթենացիք տրտմեալ լինէին: Իսկ անդէն յաւագ նաւէն նշան բարեկամութեան ամբարձեալ Աղկիբիադէս զԱթենացւոցն, 'ի նոյն և աճապարեալ անկանէր սաստկութեամբ 'ի վերայ Պեղոպոննիսացւոցն յայնմ կողմանէն՝ ուստի նոքա յաղթականք զհետ մտեալ էին Աթենացւոց: Անդանօր Լակեդեմոնացիք ընդ կըրունկն 'ի փախուստ խուճապեալք յերեսաց նորա, զայլն անկանէին 'ի ցամաքն. Նա զհետ մտեալ վանէր հարկանէր զնաւս նոցա, և խոցէր վիրաւորէր որք 'ի լող անկեալ փախստեայ գնային, մինչդեռ անդուստ յափանցն շտապաւ Փառնաբազ ձեռն տայր նոցա, և անդ առ ծովափանեայքն

մարդոյ եղեալ կարօղէր փրկել զնաւսն : Ա-
պա Աթենացիք նաւս երեսուն կալեալ 'ի
Թշնամեաց, և զխորտակեալսն ևս 'ի բուռն ար-
կեալ, նշան յաղթութեան կանգնեցին :

Իսկ Աղկիբիադէս յետ գեղեցիկ նահա-
տակութեանն պատուաւորեալ շքով յան-
դիմանն լինել Տիսափեռնեայ, 'ի պարգևս
և 'ի տուրս հիւրամեծարս չոգաւ առ նա
հանդերձ պարգևօքն ըստ արժանի առաջնորդու-
թեանն : Սակայն ձերբակալեցաւ 'ի յուսոյն.
և քանզի գիտէր իսկ քաջ Տիսափեռնէս
ամբաստանել լինել 'ի Լակեդեմոնացւոց 'ի հա-
րուստ ժամանակաց, և զանգիտեալ՝ եթէ
երբէք առ արքայի ամբաստանեսցեն զնմանէ լի-
նելոյն, դէպ ժամանակ գտեալ զգալստեանն
Աղկիբիադեայ՝ ետ անդէն ձերբակալ առ-
նել զնա, և 'ի զգուշութիւն բանտին. տայր
'ի Սարդիս. զմտաւ ածէր՝ եթէ անիրա-
ւութեամբն ապրեսցի յամբաստանութեանցն
Սպարտացւոց : Իսկ աւուրք երեսուն 'ի
մերոյ անցանէին, երիվար մի ունելով զը-
տեալ Աղկիբիադէս և Մանտիթէոսիւր եղեալ
'ի պահապանացն, փախուցեալ գայր 'ի
Կղազոմենէ. քսութիւն մատուցանէր ըզ-
Տիսափեռնեայ՝ եթէ ինքնին նա թող ետ
նմա փախչել : Անդ առեալ նաւեաց և եկն 'ի
բանակին Աթենացւոց. լուր առեալ եթէ
Մինդարոս և Փառնաբազ են 'ի Կիւզիկոն,
գրգռէր զզօրականսն և հարկ ևս ցուցանէր
այնուհետև մարտ պատերազմի կարգել
ծովամարտս և ցամաքամարտս. առ այս՝ և խա-
ղալ և [illegible] ևս կռուել ընդ

թշնամեացն. իբրեւ զի՝ եթէ ոչ զյաղթու-թիւն ոչ տարցին, ոչ արծաթ եւ ոչ այլ ինչ այնուհետեւ գացեն նոքա։ Այսպէս ՚ի ներքս ՚ի նաւսն հորդան տուեալ զօրականին, անկանելոյ յոյժ. հաւանեալ ՚ի Պերիկլեանս՝ հրամանն տայր զմանաւանդ ՚ի նաւաց ՚ի մի-ջոցին խառնել, մեծապէս զգուշացեալ անշըշ-շունչ ամենեւին զանխուլ ՚ի թշնամեացն շրջ-ատանել։ Այդ դէպ եղեւ յայնժամ՝ զի եւ յեղակարծ անպատսպարան անձրեւոյ եւ բամ-բիշն որոտմանն եւ մեծայլ օդոցն այնպէս գործակիցք յաղթողեցան խորհրդոյն եւ ՚ի ծածուկ կալան զպատրաստութիւնն. զի եւ ոչ թշնամիք միայն չզգացին շուրջն, այլ եւ Աթենացիք ինքնին ՚ի նաւսն՝ չիմացան զառ-ձակել նաւացն։ Իսկ վայր մի առաջ պայծ-զեալ օդոցն, տեսանէին զՊեղոպոննեսեաց-ւոց նաւսն խառնիխուռն արկեալ հանդէպ նա-ւահանգստին Կիզիկեցւոց։

Խորհեցաւ Աղկիբիադէս, գուցէ թշ-նամիքն առ ՚ի բազմութենէ նաւացն իւրոց ՚ի փախուստ խուճապեսցեն ՚ի ցամաք անդր, հրաման ետ զօրավարացն առկայա-նալ ՚ի վերջէ եւ ապա խաղալ յուշիկ, եւ ինքն քառասուն նաւուք յերեսն եկեալ ձայն տայր յասպարէզ։ Նոքա ՚ի խաբա-նաց անտի արհամարհեալ զսակաւութիւն նաւացն Աթենացւոց, ճակատ յարդա-րեալ՝ անդէն ձեռնամուխ նաւամարտի լինէին։ Իսկ իբրեւ ՚ի ժամ կռուոյն եւ այլք ՚ի նաւացն եկին երեւեցան, առհասարակ ապա զահի հարեալք ՚ի փախուստ դառ-

նային ։ Ցասուցեալ զինեալս խաղաղոց Աղկիբիադա զէս նաւորդացն քաղաքն նաւուք և մտեալ ՚ի ծովեզրն և ելեալ ՚ի ցամաք, անկանէր ՚ի վերայ՝ որ ՚ի նաւաց անդր փախուստեայն՝ և հարկանէր զբազումս ՚ի նոցանէ ։ Նկուն արարեալ զպարտէր և զՄինդարոս և զՓառնաբազ, որ ձեռն օգնականութեան տային նոցա ․ հզօրապար կռուեալ առ եւսեղ զիտապաստ զՄինդարոս արկանէր, և զՓառնաբազ վանեալ ՚ի փախուստ դարձուցանէր ։ Եւ այսպէս առաւ զզօրավարաց զիականց զատ և զառաւելս ժողովեալ և զզինուց, ՚ի բուռն արկանէրն և զամենայն իսկ զնաւսն. և հալածեալ կոտորեալ և զԿիւզիկոն թափուր յօգնականութենէն Փառնաբազազայ և Պելոպոննիսեցւոց որ տապաստ անկան, ոչ ՚ի Հելլեսպոնտոս միայն ամրացան ազնուական յաղթանակաւ, այլ և ՚ի ծովէն առ հասարակ վանեալ հալածեցին զԼակեդեմոնացիսն բուռն զօրութեամբ ։ Յայնժամ և նամակ մի կալան նոքա Լակոնացի ոճով գրեալ Պարկաւաց զձախողակ բախտին. և էր պատճէնն այսպիսի. «Տեղի եռաւ զեղեցիկն. Մինդարոս անկաւ. Քաղցեալ կայ որեարդն. Վարանիմք՝ զինչ արասցուք իցէ գործել» ։

Իսկ ոյք յայնժամ ընդ Աղկիբիադեայ ձեռնամէին զինուորեցան, այնպէս ՚ի վեր վարեալ և գոռոզացան իբրև անպարտելիք ոմանք, զի և արժան չհամարեցան զատ խառնիլ ընդ այլ զօրականսն՝ որ բազում անգամ ՚ի պարտութեան մատնեալ էին ։

Քանզի ոչ շատ ինչ յառաջ 'ի խորտակելոյ
Թրասիւղոսի առ սահմանօքն Եփեսացւոյ,
Նշան յաղթութեան 'ի պղնձոյ յանդար-
ձութեան Աթենացւոց կանգնեցին Եփե-
սացիքն: Այդ զայս յերկուս Թրասիւղեանցն
հարեալ Աղկիբիադեանքն և յօրացեալք
յանձինս և յիւրեանցն զօրավարն՝ ոչինչ կա-
մէին հասարակից զյաղթանան մտանել ընդ-
նոսա և բանակակիցք լինել նոցա: Իսկ իբրև
անդրուստ Փառնաբազոյ մեծաւ աճապարել հե-
ծելակաց և այլուստ ձիոյն անկանէր 'ի վերայ
առաջապահականաւոր զօրականին Աղկիբիադեայ
'ի սահմանսն Աբիւդենացւոց, յայնժամ 'ի
միասին ընդ Թրասիւղեայ զինուց Աղկի-
բիադէս ձեռն ատալ նոցա. և առեալ զՓառ-
նաբազոյ հալածական ասանէին մինչև 'ի ժամ
գիշերոյն. և յայսմանէ եկեալ միաբան նո-
քա, զարձ առեալ միահաղոյն 'ի բանակ
անդր և մարդասիրեալք ուրախանային առ
միմեանս: Բայց յաւուրն երկրորդի նշան
յաղթութեան կանգնեալ, խաղացոյց զնայր
Աղկիբիադէս յաւարի առնուլ զգաւառն
Փառնաբազոյ, և 'ի գիւղի հարկանէր նոսա և
ոչ ոք: Կալաւ նա անդէն և քուրմս և
քրմանոյշս, այլ անդրէն յազատութիւն
արձակէր առանց փրկանաց:

Այսպէս շուտ առեալ զինեալս 'ի մարտ ընդդէմ
Քաղկեդոնացւոց որ ապստամբեալ էին յԱ-
թենացւոց, և ժողովեալ առ իւրեանս ըն-
պահակ զօրուն և զզօրավարն Լակեդեմո-
նացւոց: Անդանօր լուր առեալ զապաս-
տանեացն՝ թէ զամենայն հասս երկրին ամ-

փոփոխեալ 'ի պատահ եղծին առ Բիւթինիացւոց քաղաքականս, խառնելով ընդ 'ի սահմանսն նոցա, և յառաջնոյ քաղաքաց արձակեալ բաղդք առաջնոյն ընդդէմ Բիւթինիացւոց. Նորա զաւակք հարկեալք Թրակին 'ի ձեռս նորա՝ զոր 'ի պատահ կալեալ էին, և յաւիտ քաղաքականութեան մասին ընդ նոսա: Բայց երբեմն պատահեալ մի 'ի ծովէ մինչև 'ի ծով զՔաղկեդոնիա պատմէր Աղեքսանդրէս, անդրադարձ զայր հասանէր Փառնաբազայ քաղէր ընդ աշխարհն. 'ի նոյն և Հիպոկրատէս զօրավարս 'ի մի զօրուն խոնարհեալ՝ և 'ի քաղաքէն և անկաւ 'ի մերձայ Աթենացւոց: Հանդէպ Աղեքսանդրէս ընդդէմ երկուց նորա Ձանկաս յորդնեալ, անդէն զՓառնաբազայ անդրադարձ 'ի փախուստ դարձուցանէր, և զՀիպոկրատեանս իմաստն առաջատ արկանէր, հարուածս 'ի մերձայ ածեալ նորա առաւել զնդին:

Այնց առաջ նաւուց եկին 'ի Հելլեսպոնտոս ժողովեալ կոչնեալ արծաթ. և հասեալ կալեա զՍելիւբրիա՝ ոչինչ զդաւաճանեալ անձին պատերազմ ժամանակին: Փոխեալ ուր մնացեալ քաղաքին հանդերձեալ էին ըննել նոսա, ժամանակեցին զհասարակ զխրձերու Զաւհ մի առաջնոյ 'ի նշան. առաքեալ առ աւհին՝ զի 'ի դաշնաւորաց մի ումն փոխեցաւ յանկարծ 'ի խորհրդոյն, առաքեացան կանխեալ քան զժամանակն: Այսպէս զինչ ածեալ Աղեքսանդրէս, մինչդեռ առաքեալ կարծ չէին զօրականք, առեալ 'ի նոցանէ երկոտասան չափ, զինեաց փութապէս 'ի նորոգ պատրաստին, հրաման առեալ

այլոցն զհետ իւր խաղալ տուեալ տուեալ։ Իսկ և զրուցք բազմաց նմա, և յերեւութական ժամանակեալք յաւելան և այլ ևս քանիք տարապարտութք, յարձակեալ 'ի նորքս առատ կուսթեանք՝ լուր էառ զՍիկիլիացւոց զինու զարդու հասեալ 'ի գլուխ հարկանել նմա։ Իսկ և յոյս փրկութեան չերևէր՝ եթէ 'ի գլուխ հարցի նոցա, զարձեալ ևս անպարտելի ցայն վայր յամենայն արշաւանսն՝ Թիկնապարձոյց լինել շաւնորդ յանձն, 'ի ձայն փողոց անդէն լաւութիւն հրամայեալ՝ պատուէր տայր միում ումեք յիւրոց անտի բարձր գոչել. Մի Սիկիլիացիք ժամեսցին ինչ զէն ընդդէմ Աթենացւոցն շարժել։ Ցայս բարբառ ձայնի կէսք արգելեալք սանձեցան 'ի գոռէն, իբրու եթէ թշնամիք միաբանեալ 'ի նորքս խռովեալ իցեն. իսկ կէսք՝ հեղգացեալք անկենկալեալ միայնին յուսոյ հաշտութեան։ Մինչդեռ այնպէս երկպառակէր կողմանքն զքանիսք անկեալ էին, զայլ ապա հասանէր զօրն Աղկիբիադեայ. անդանօր մնացերեալ՝ որպէս և էր իսկ, եթէ հաշտութիւն խնդրեսցեն Սիկիլիացիք՝ զանդիտէր Աղկիբիադէս վասն Թրակացւոց՝ թէ յաւարի զքաղաքն առցեն. քանզի էին իսկ նոքա բարեկամք, և 'ի սէրն Աղկիբիադեայ մասնադիւրագոյնս զինուորեցան ընդ ձեռամբ նորա։ Այսպէս առեալ զնոսա առհասարակ արձակէր 'ի քաղաքէն, և Սիկիլիացւոց ողորմութեամբ վնաս և ոչ մի ինչ հասուցեալ, առեալ 'ի նոցանէ արծաթ և կար_

գտեալ անդէն պատահմամբս, ինքն յարու-
ցեալ այնուհետեւ յուղի անկանէր ։

Իսկ որ զօրագլուխք պաշտպանեանն կային Քաղկեդոնի՝ այսպիսեանս եդին ընդ Փառնաբազայ զայս ինչ, որ չափ զօրանոց հատուցանէ նոցա, և Քաղկեդոնացիք միաբանեալ ընդ Աթենացւոց, և Աթենացիք ինքնին ոչինչ հասուցանեն զեան գաւառին Փառնաբազայ, և Փառնաբազայ դեսպանացն Աթենացւոց առ արքայն ուղեցոյց տայցէ համ գերձ անփորձականութեամբ ։ Իսկ և Փառնաբազ խնդրեաց 'ի հաստատութիւն և զերդմնն լինել Աղկիբիադեայ 'ի դարձին նորա, զանէր Աղկիբիադէս ոչ երդնուլ՝ մինչև հաստատուն երդուեալ լիցին նոքա ։ Իսկ և կնքեցան երդմունքն, ապա խաղաց զինեաց Աղկիբիադէս 'ի վերայ Բիւզանդացւոցն ապստամբելոց, և պատեաց պատնէշ զքաղաքաւն ։ Անդանօր Անաքսիղայոս և Լիկուրգոս ընդ այլոց դաշնաւորք լինէին տալ նորա 'ի ձեռս զքաղաքն՝ պայման եդեալ 'ի փրկութիւն անձանց ։ Վասն որոյ և համբաւ հարկեալ յայնժամ Աղկիբիադէս, իբրու աղմուկ շփոթից յուզեալ առ Յոնեաւ՝ անդանօր հարկ լիցէ խաղալ նմա, եւ անդէն զցերեկ համօրէն նաւուքն . այլ զցայգ դարձ անդրէն դարձեալ՝ էջ 'ի ծովեզրն առեալ ընդ իւր զհետեւակազօրսն . մերձ եկեալ 'ի պարիսպն՝ անդէն հանդարտիկ զանձրի առնոյր ։

Իսկ և նաւուքն հասեալք մնանէին 'ի նաւահանգիստն, և անդուստ աստակապէս

գործելին զպարծանկութիւն 'ի մեծ գուշկան և 'ի շուինդն ամպաւ աղաղակին, առհասարակ զահի հարեալ Բիւզանդացիք ընդ անակընկալ պատահումն. յայնժամ զաշնաւորք ժամ գտեալ 'ի ներքս առին յանդորրու զԱղկիբիադէս, մինչդեռ առհասարակ ձեռն տայ 'ի նաւահանգիստ անդր զխմբեալ ընթանային և 'ի նաւսն: Սակայն և ոչ անպատերազմ լռեն վճարեցան յայնժամ. քանզի Պեղոպոնէսեայցիք և Բիօտտացիք և Մեգարացիք 'ի Բիւզանդիոն՝ յետս ընդդէմ վանեալ զորս 'ի նաւաց անտի, անզգրէն 'ի նաւսն տագնապեցին զնոսա. և լուեալք՝ եթէ և 'ի քաղաքն միջամուխ եղեն յԱթենացւոց, կարգեցան կացին՝ մարտ եդեալ կռուէին ընդ նոսա և զօրացեալ խաղմն սաստիկ և բուռն. այլ յաղթական եղանէր Աղկիբիադէս՝ զօրավարեալ զաջոյ թևն, և Թերամենէս՝ զձախոյն. և որ միանգամ ապրեցան 'ի թըշնամեաց իբրև երեքհարիւր՝ առհասարակ 'ի գերութիւն վարեցան: Իսկ յետ կռուոյն՝ 'ի Բիւզանդացւոց ոչ զոք 'ի մահ վարեցին, և ոչ վտարանդի արարին. քանզի և որք զքաղաքն 'ի ձեռս եւտուն՝ զայն պայման եդեալ էին մի ինչ անձնակին զրկել զնոսա 'ի սեպհական գոյից: Ուստի և իբրև մատնութեան ամբաստանեալ Անաքսիղայոս 'ի Լակեդեմոն, անպարտգիւտ եղոյց զգործն բանիւն. քանզի ասաց՝ եթէ ոչ Լակեդեմոնացի է, այլ Բիւզանդացի. և զի ոչ Սպարտայոս տագնապեալ էր 'ի վտանգին,

այլ Բիւզանդիոն ամենայն ուժովք պաշա-
րեալ՝ որպէս զի և չէր հնար մուծանել
ինչ 'ի ներքս, և զամենայն քաղաքին սպա-
ռեալ Պեղոպոննիսացիս և Բէովտացիս, ան-
դուստ ամփոփեալ ամենեքեան Բիւզանդացիք
'ի միասին ընդ որդւոց և ընդ կանանց. ա-
պա ոչ մնացեալ երկայն նա հայրենեացն՝
'ի ձեռս տալով Թշնամեաց, այլ փորձէ և
ազատել քաղաքին 'ի մահուանէ և յարկա-
ծից աղէտիցն, զինուորութիւն բերելով զա-
ւաքինեացն Լակեդեմոնացւոց և զԲա-
շաց, որ զերծեցին մի միայն և ազատեալ՝ զօգ-
տակարն զաւակին զհայրենեաց: Զբան զայս
լուեալ Լակեդեմոնացւոց, պատուհասաւեցան
և արձակեցին զայրն:

Բայց Ալկիբիադէս խիղճ առատին բերեալ
ամօթ հայրենեացն լինել, նաւ առնել
անուն քաղաքացւոցն իւրոց՝ զի այնչափ
յաղթութիւնս տարաւ զԹշնամեացն, յա-
ռուցեալ յուղի անկանէր: Նա և զարդա-
րեաց շուրջ զնաւաթիւն Ատտիկեցւոց 'ի
բազմաճակոյթ ապարապանց և յանհնար աւարացն.
զհետ իւր ձգէր քարշէր և շատ նաւս զե-
րեալս, և բիւրաւոր նշանաց և դրօշուց
դրօշուց նաւացն՝ զոր եհար և վանեաց,
որ և առ հասարակ ոչինչ պակաս էին քան
զերկերիւր: Այլ Դուրիս Սամոսացի՝ որ
յԱլկիբիադեայ զարմէն ասէ զինքն, յա-
ւելու յայսոսիկ և ասել, եթէ անդանօր
Քրիսոգոնոս Պիւթեան մրցանականորն
արնդահար լինէր Թիավարացն շարժման 'ի
շու անդր. իսկ հրամանատար չուոյն էր

ինչնեին Կալլիստրատեայ էս գերասան Ոլեւրբեա-
կացն՝ արկեալ զանձամբ ձորձ և զարկեալ
պատմուճան և զայլն ևս զարդ զանասարա-
նեն. և թէ՝ ծիրանի պարզեալ առագաստ
առաջ նաւուն Ալկիբիադեայ՝ այնպէս մտա-
նէր 'ի նաւահանգիստն, և էին որ ասէին երգ-
րև խնծղալիցք ոմանք առհասարակ և կայ-
թահարք 'ի գինարբուս:

Այլ զայսոսիկ մեզ ոչ արձանագրեցին ոչ Թէոպոմպոս, ոչ Եփորոս, և ոչ Քսենոփոն: Եւ ոչ 'ի դէպ ինչ արդեօք՝ եթէ նա այնպէս ամենայն Աթենացւոցն լեալ էցէ 'ի դարձին՝ յետ վտարանդեալ տարագրութեանն և այնչափ աղէտիցն: Նա՛ զի և ահիւ յառաջ խաղայր նա, և հասեալ 'ի ծովեզրն՝ ոչ իջանէր յեռանաւթիւն. Նախ արձանացեալ 'ի վերայ տախտակամածին՝ եւտես զԵւրիպտողեմոս զեղբօրորդին և ըզբազմութիւն բարեկամաց և զընտանեաց ընդ առաջ իւր աղաղանկանս և հրաւիրեալ 'ի քաղաքն անդր: Ցետ այնորիկ ելեալ Ալկիբիադէս, առհասարակ մարդկեին ընդառաջ ընթացեալք՝ փոյթ ինչ ոչ արարեալ այլոցն զօրավարաց՝ 'ի նա միայն այր զարամբք ակնկառոյցք մեծաղաղաչ կարդայինն, ողջոյն տային, և զհետ ընթացեալք պսակս բոլորէին. իսկ որք մերձենալ չկարէին՝ 'ի բացուստ անտի յանխիմանն յակնծիւս կային. և պատանեաց ծերքն հնաւուրց մատնանիշ ցուցանէին զնա: Սակայն մեծապէս առն ցնծութեան քաղաքին յայնժամ՝ խառնեցաւ և 'ի գերբարտուդալից ակամբ. այն

Քիչ նոքա յերկեալ հասեալ խնդութեանն յուշ կա ածէին անձանց զամբաւ աղէտանն՝ որ անցին ընդ նոսա. և զայն կա քաջ տեսանէին՝ եթէ չէր արդեօք Աթենացւոցն 'ի զերիս ելեալ 'ի Սիկիլիոյ, և ոչ վրիպեալ ամենայն յոյս ակնկալութեան նոցա, եթէ Աղկիբիադէս զօրավար յայնժամ առաջնորդ կացեալ էր իւրեանց բանակին. քանզի և 'ի ժամանակին՝ յորում էառ նա զանձամբ զքաղաքն՝ որ վայրիկ մի և 'ի ծովական տէրութենէն կապեալ էր և 'ի ցամաքին զարուարձանեայն միայն ունէր ընդ ձեռամբ, և 'ի ներքս յամբոխից ծփեալ և պատառեալ էր, նա ինքն զնա 'ի սին նշխարաց նորա և 'ի անկելքարաց 'ի վեր կանգնեալ միասանգամ, ոչ ծովական միայն՝ այլ և 'ի ցամաքին յաղթական 'ի վերայ թշնամեացն կացուցանէր: Իսկ առաջին յայնժամ զվճիռ դարձին նորա արձանագրեաց և քարոզեաց Կրիտիաս Կալլեսկրոսեան. ընդ որում և ինքնին քերթէ նա յՈղբսն իւր, յուշ ածեալ Աղկիբիադեայ զերախտիսն՝ այսպէս. " Իսկ զվճիռն՝ որ զքեզ աստ մեզ ած եբեր, զնոյն ես առաջին հրապարակին կարդացի. և արձանագրեալ՝ զգոյն գործ 'ի գլուխ տարայ: Բայց կնիքք մերոյն լեզուի 'ի գրաւ վասն իւրացդ պահեցի առ քեզ":

Ցեա այսորիկ 'ի մի վայր խմբեալ առհասարակ զեկեղեցին, եկն եհաս անդր Աղկիբիադէս, յարտասուս հարեալ ընկերս աղէտիցն, և վայրիկ մի և չափաւոր

մեզ եւ գնէր ժողովրդեան, յետքն հակառա-
կակ զամենայնն 'ի վեր տանելով բանիւ, և
Քաղցին ուսմամն ընծայելով խանդաղատողի : Ա-
պա ծառ. առաւել գերգեցին յաւսոյ ընդդէմ
Թշնամեաց, խորամանկոյս քաջանալեր կարգադրք .
և այնպէս պատակ ոսկի առաւել բոլորէին
նմա Աթենացիք, և զօրավար ինքնիշխան
ընդ ծով ընդ ցամաք կարգեցին զնա : Ա-
պա՝ և վճիռ եռտուն դարձուցանել զամե-
նայն զոյս նորա . և զի՝ Եւմողպիդեանք և
Քարոզք պարզացեալ նզովսն յետոս առ-
ցեն 'ի նմանէ . խրդեւ այլք լուծին զնզովսն,
եւ պատասխանի Թէոդորոս քահանայն և
ասէ . « Այլ ես ինչ մի 'ի չարեաց ոչ մաղ-
թեցի նմա, եթէ ոչինչ անիրաւեցաւ նա
առ քաղաքն » : Բայց թէպէտ և այսպէս
մեծապէս յաջողեցաւ Աղկիբիադէս, համ-
մայն և այնպէս կէսք պատճառս առնէին
թաղծութեան 'ի ժամանակէ դարձին նո-
րա : Քանզի յաւուր մուտ նորա 'ի նաւա-
հանգիստն՝ Պղինտերեան տօնք կատարէին
դիցուհւոյն . յորում 'ի քսաներորդի հին-
գերորդի Տարգելիոնամսին՝ Պղինտերիդեան
քուրմք ծէսս ինչ կատարեն ծածուկս, և
'ի բաց մերկեալ զամենայն զարդն, և ըզ-
դրօշեալն քողածիգ առնեն . ուստի և յոյժ
վատաբաստ և անյուշ զօրն զայն զանգործ
համարին Աթենացիք : Արդ թուէր իմն
նոցա, եթէ ոչ հաճութիւ և մարդասիրա-
պէս ժողովեալ յայնժամ դիցուհին զԱղ-
կիբիադէս այնպէս քողածիգ ընկալողն, և
մերժեալ զնա : Այլ յայսր ամենայնի մե-

րայ ամենայնն յաջողեցաւ ըստ կամաց նորա ․ և 'ի կազմ կալ յայնժամ եռամթիոցն Թուով հարիւր՝ խաղալ ընդ նմա , նա զտեղի առնոյր 'ի գեղեցիկ պատուասիրութեն մինչև 'ի ժամանակ նուիրականացն ։

Քանզի յորմէհետէ ամրութիւն ածաւ Տեկեղեայ , և թշնամիք կալեալ էին զանցսն Եղեւսեայ , ոչ ևս հանդիսանայր տօնախըմբութիւնն ․ քանզի պա՛րտ էր անցանել ընդ ծով , և 'ի հարկէն խափանեալ կային զոհք և կայթք և կաքաւք , և այլ ինչ ևս շատ 'ի նուիրականացն 'ի յուղւոջ՝ յորժամ արտաքս առեալ բերեն զԵակքոսն 3 ։ Արդ գեղեցիկ թուէր Աղկիբիադեայ և 'ի դէպ աստուածակողմանն և փառաց ևս մարդկանն՝ 'ի հայրենաւանդն կարգ դարձուցանել զտօնն , ածելով զթափօրն հետևակ զօրու և ախդաւոր գնդաւ ընդդէմ թշնամեաց ։ Քանզի և այսպէս կամ մեծապէս ստուերածս հասանէր ածել Ագիսայ և նկուն առնել՝ եթէ չդայր 'ի վէճ ընդ նմա․ կամ եթէ խլրտէր ինչ , մարտ նուիրական և աստուածասէր մարտնչէր այնուհետև ընդ նմա Աղկիբիադէս վասն սրբազանիցն և մեհազանիցն ակն յանդիման հայրենի քաղաքին , առհասարակ զքաղաքացիսն վկայս իւրոցն նահատակութեցն կալեալ ։ Զայս այսպէս սահմանեալ՝ կանուխ ազդ արար Եւմողպիդեանցն և Քարոզից ․ կարդեաց եդ դէտս 'ի կատարս բարձանց , ապա ընդ այգն յառաջ արձակեաց կարապետս , և ինքն առեալ զքահանայս և զիւղագլխեալսն

և զիւղագլխոցն , և պահ եդեալ՝ 'ի զէն զարդ զօրականին ածէր զԹափօրն անշշունջ և զեղեցիկ կարգաւ. և անդ էր տեսանել տեսիլ մեծափառ և աստուածավայելուչ զզօրավարութիւն զայն, զոր և յայնժամ աննախանձ մարդիկն քահանայութիւն անուանէին և նուիրագործութիւն։ Որպէս յայնժամ 'ի Թշնամեաց երևեցաւ և ոչ ոք, նա յանդորրու դարձոյց զԹափօրն 'ի քաղաք անդր. և բարձրապարանոց առեալ մեծացուցանէր և զիւր զօրականն իբրև անկռուելիս ոմանս և անպարտելիս։

Յետ այնորիկ քա՛ջ իսկ յաջողեցաւ նա յինքն յանդգնեցուցանել և զանհաւատ ոռեարն և զաղքատ, զի և մեծաւ ցանկութեամբ փափաքեցան նոքա զնա ունել տէր. էին էին՝ և որք յայտնապէս ասէին զայն, և խորհուրդս տային նմա առնել զյաշտադանան և լուծանել զվճիռսն և զօրէնսն և զշաղակրատ մարդիկն՝ պատճառս աղէտից քաղաքին, և ինքնին յանդորրու 'ի յաշտարկոտաց ըստ հաճոյս տանել բերել զամենայնն։ Իսկ թէ զինչ միտք էին նորա յաղագս ինքնիշխան տէրութեանն այնմիկ՝ անյայտ է։ Սակայն աւագք քաղաքին և ճոխքն զահէ հարեալք՝ արագ արագ տային նմա մեկնել անտի հանդերձ եռաթիոմբքն, և շնորհեցին նմա զամենայն խնդրուածսն և զնիզակակիցսն՝ զոր կամէր։

Արդ անկաւ նա յուղի հարիւր նաւուք, խաղաց գնաց և յարձակեցաւ յԱնդրոս. և 'ի կռուին 'ի պարտութիւն մատ-

նէր զԱնդրոսացիս, և որ անդանօր՝ զԼակե-
դեմոնացիսն. սակայն ոչ կալաւ զքաղաքն
նոցա. և այս ապա առաջին պատճառ եղ
թշնամեացն ամբաստան լինել զնմանէ։
Այլ որպէս հաւանեալս եմ՝ եթէ ար-
գելք իցէ ոք այլ՝ 'ի փառաց անտի Ալկի-
բիադեայ տապալեալ, դա ինքն է անշուշտ
Ալկիբիադէս։ Եւ քանզի մեծապէս էր
փառք նորա և խելք քաջ և հանճարեղ
ունէին զնա վասն գեղեցիկ նահատակու-
թեանց. ուստի եթէ երբէք չյաջողէր նմա,
խիթային ընդ յուլութիւն ջանիցն. ոչինչ
կարէին հաւատալ՝ եթէ ձեռնհաս ոչ իցէ,
և երբէք 'ի գերեւս ելցեն ջանք նորա։ Իբրև
այնպէս ակնկալեալ միայն Աթենացիք
լսել՝ եթէ գրաւեաց նա զՔիացիս և զող-
ջոյն զՅոնիա, սրտմտեալք դժկամակս բե-
րէին ընդ անագանել համբաւոյն իրացն.
զմտաւ ինչ չածէին՝ եթէ արծաթ պակա-
սեալ նմա 'ի կռուել իւրում ընդ մարդ-
կանն՝ որոց ամբարապետն էր ինքնին Թա-
գաւորն մեծ, նա 'ի հարկէն բազում ան-
գամ լքեալ զբանակն՝ շուրջ յածէր պատ-
րաստել ռոճիկ և պաշար զօրուն. և այս
ապա եղև նմա վերջինն 'ի միասս ամբաս-
տանութեանն։ Քանզի յայնժամ 'ի Սպար-
տացւոց առաքեալ Լիսանդրոս 'ի զօրա-
վար նաւացն, տայր նա միոյ միոյ 'ի նա-
ւաստեացն քառադանկս յարծաթոյն Կիւ-
րոսի փոխան եռադանկաց. իսկ Ալկիբիա-
դէս հազիւ ուրեմն բաւական իւրոցն տալ
եռադանկս՝ մեկնեցաւ 'ի Կարիա կու-

ռել արծաթ, իսկ զհոգ նաւացն Թողուլ յայնժամ Անտիոքոսի. եւ սա ղեկավար քաջ, այլ խորհրդակորոյս այր եւ խեռ: Պատուէր տայր նմա մի կռուել՝ Թէպէտ եւ առաջարկեսցեն Թշնամիքն կարդասցեն. այլ նա ունելով առաջեալ հրամանին՝ ընդդէմ զօրավա-նաց զեռուաթեամբ իւր եւ զայլ մի եւս 'ի նաւացն. խաղացոյց զնաւս դէմ եդեալ յԵփեսոս, մերձ քերելով զառաջնակողմամբք նաւաց Թշնամեացն՝ մեծապէս խեռութեամբ 'ի գործ եւ 'ի բան եւ ապերասան խեղկատա-կելով: Անդ Լիւսանդրոս զառաջինն եւեթ սակաւ նաւուք հետամուտ նմա, անկեալ զյանդուգն նաւաց Աթենացւոցն յօգնութիւն զալ Անտիոքեայ, խաղաց ամենայն նա-ւուքն եւ զյաղթութիւնն առեալ զապա-նանէր զԱնտիոքոս, եւ նաւս բազում եւ մարդիկ 'ի գերութիւն վարեալ՝ նշան յաղ-Թութեան կանգնէր: Լուր առեալ Աղկի-բիադէս դարձեալ 'ի Սամոս, հապճեպով խաղաց զիմեաց ամենայն նաւուքն, եւ հա-րեալ՝ ձայն կարդայր Լիւսանդրոսի. նա կայր մնայր լռ եւ պատրաստուն յաղթու-Թեանն, եւ խլրտեցաւ ինչ ոչ:

Ապա յետ այնորիկ Թրասիբուղոն Թրա-սոնեան Թշնամի մեծ Աղկիբիադեայ 'ի բանակին, չոգաւ յԱԹէնս ամբաստան զնմանէ. եւ անդ գրգռեալ զԹշնամիսն՝ հրապարակախօս լինէր, եԹէ Աղկիբիա-դէս վեր 'ի վայր տապալեաց զամենայն եւ կորոյս զնաւսն. անհանճարաբար յիշխա-նութեանն տայր զօրավարութիւն զնաւաց

'ի ձեռս մարդկանն՝ որ 'ի գլխաւորութեան շուայ-
տեալք և 'ի նաւաստեական բանակադաշտանս
մեծապէս զօրացեալ էին առ նոսա. զի ա-
պա Լինգէն պատրաստեալ նաւուցս շուրջ յան-
գործութ կուտել արծաթ, և աղուանել և
արգելեալ՝ բնակականեց ընդդէմն ըմբերով Աթէ-
նացւոց և Յոնիացւոց, մինչդեռ վարանեալ
մի անգամ 'ի բացեայ բանակեալ կայր Թշնա-
մին: Ար այս և 'ի յանկարծս գրեցին նոքա,
զի անդ 'ի Թրակիայ շինեալ դղեակ մի 'ի
Բիւզանդիոն առ եզր ապաստանի. խորհուրդ որ
ոչ կարասցէ կամ ոչ կամեսցի բնակել 'ի
հայրենի քաղաքին: Իսկ Աթենացիք հա-
ւատոս եղեալ՝ զայլս 'ի զօրավար կարգեն
ընդ նորա, յայտնապէս ցուցեալ առ նա
զապարկութիւնն և զդառնութիւն: Աղ-
եղեալ նմա, զանձն հատեալ թողոյր բա-
նէր խաղաղու զբանակն. և ժողովեալ զօ-
րաց, ինքնին մարտ եղեալ կռուէր ընդ
անթագաւոր Թրակացիսն, և կուտեալ ա-
ւարեաց արծաթ բազում. անդ և զՀելլե-
նացիսն սահմանակիցս յանդորր հանէր 'ի
ձեռաց բարբարոսացն:

Իսկ զօրավարքն Աթենացւոցն Տիդևս
և Մենանդրոս և Ադիմանտոս համադերձ
ամենայն նաւուքն առկայացեալք 'ի գետանն
Եգեայ, յարուցեալ ընդ առաւօտս առա-
ւօտս խաղային գնային և ձայն կարդային
Լիւսանդրեայ՝ որ զԼակեդեմոնական նաւսն բա-
նակեալ. և ապա անդէն դարձ առնեալ՝
զօրն 'ի բուն անցուցանէին այնպէս ան-
կարգք և անհոգացեալք՝ խորհուրդ արհամար-

հողք ունանք: Բայց Աղկիբիադէս որ անդ մերձ կայր՝ ոչինչ անհոգացեալ զանց առնէր. եղեալ յերիվար՝ եկն եգիտ զզօրավարսն, խրատէր ազդ առնէր եթէ ոչինչ բարւոք նոքա այնպէս առկայացեալ նաւօքն 'ի վայրս՝ ուր ոչ նաւահանգիստ կայ և ոչ քաղաք. այլ 'ի բացարձակ վայրաց 'ի Սեստոսէ պատրաստեն նոքա անձանց զկարեւոր պաշարն, և անհոգացեալ կան՝ զի նաւամարտիկքն այնպէս ցանեալք ցրուին 'ի ցամաքի Թափառականք. մինչդեռ անդուստ 'ի հանդիպոյ նաւախումբ Թշնամւոյն արձանացեալ՝ 'ի հրամանէ միապետ իշխանին անշշունջ կատարէ զամենայնն: Այլ զօրավարք ոչինչ անսացին Աղկիբիադեայ խորհրդոյն՝ չու առնել 'ի Սեստոս. նա և Տիւդեւս արհամարհանօք հրամայէր նմա տեղի տալ 'ի վայրացն, իբրեւ որ յայլս՝ և ոչ 'ի նա իցէ ապաստան զօրավարութիւնն: Այսպէս Աղկիբիադէս տեղի տուեալ մեկնեցաւ, զանգիտեալ եթէ նենգ լարեսցեն նմա. և ընդ ծանօթան որ 'ի բանակէն զհետ չոգան նորա՝ ասէր, զի եթէ այնպէս անհնար նմա չէր լեալ զօրավարացն, քան սակաւ մի ժամանակ անցեալ՝ նա 'ի նեղ արկեալ էր զՍպարտացիսն ակամայ միջամուխ 'ի նաւամարտն լինել, կամ զնաւսն Թողուլ լքանել: Կիսոց՝ տարապարտ պարծանաց Թուեցաւ բանն. և կիսոց՝ հաւանական, եթէ երբէք անդուստ 'ի ցամաք կուսէն ամբոխ ածեալ նա Թրակացւոց զհեծելազանց և քաջաձիոց, մարտ եդեալ կռուեցի և մեր 'ի վայր

զՂակեդեմոնացւոց բանակին շարժեսցէ ։ Բայց առաւել առաւել արդիւնքն վկայեցին, զի ուղղապէս խելամուտ եղև Ալկիբիադէս անփորձութեան զօրավարացն ։ Քանզի յան-կարծակի յեղակարծումն ժամու 'ի վերայ անկեալ նոցա Լիւսանդրոս, անդ ութ-նաւք միայն յեռաթիոցն մազապուրծ ճողո-պրեցան ընդ Կոնոնի. իսկ եռաւթիս իբրև երկերիւր 'ի գերութիւն վարեալ համե-գերձ երեքհազար արամբք, զորս և խող-խողեաց Լիւսանդրոս ։ Ցետ սակաւուց գի-մեալ կալաւ նա և զԱթէնս, և հրկէզ ա-նէր զնաւսն, և քանդէր ջարդէր զերկայնա-ձիգ զպարիսպսն ։ Այսպէս յահէ եղեալ Ալ-կիբիադէս 'ի Լակեդեմոնացւոց՝ զի տիրա-ցան միաբանդամայն ընդ ծով ընդ ցամաք, անց 'ի Բիւթինիա. զանձ բազում առեալ ընդ իւր, և շատ ևս թողեալ անդէն յա-մրոցսն՝ յորս բնակէր ։ Իսկ 'ի Բիւթինիա դարձեալ ոչ սակաւ կորուսեալ 'ի գոյիցն և կողոպտեալ 'ի Թրակացւոցն՝ որ անդ, եդ 'ի մտի յառնելով երթալ առ Արտաշէս. թերևս վարձ զնորա փորձեալ արքային՝ ոչինչ յոռեգոյն քան զԹեմիստոկլէս գտցէ զնա. իսկ լաւագոյն ևս՝ զպատճառաւ չուոյն ։ Քանզի ոչ իբրև զնա զօրավիգն խնդրեալ յարքայէ ընդդէմ քաղաքացեացն, այլ թշնամեացն ընդդէմ՝ վասն հայրենի աշ-խարհին ։ Այսպէս զմտաւ ածեալ՝ եթէ Փառ-նաբազեայ 'ի ձեռն հեշտաւ և յանդոր-րու յաջողեսցի ուղին, չոգաւ առ նա 'ի Փռիւգիա. եկաց առ նմա, մեծարանս

գնէր նմա, և ինքն դարձեալ շուք պատուոյ ընդունէր առ 'ի նմանէ ։

Բայց Աթենացւոցն ցաւեալ յոյժ՝ էր մերկացեալ 'ի տէրութենէն. իսկ իշխել և զօրավարութիւնն եբարձ 'ի նոցանէն Լիւսանդրոս. և արանց երեսնից 'ի ձեռս ետ զքաղաքն, զայն զոր չկարհեցանն յորժամ առ ձեռն կային փրկութիւնն՝ յայնժամ 'ի սպառասպուռ կորուսեալն 'ի միտ ածանէին. յուշ ածեալ լացին զմեղս խաբեանց և զամեհանմար զխորհուրդն. և մեծագոյնս յանցաւորութիւն համարեցան զերկրորդ բարկութիւն խաբեանց ընդդէմ Աղկիբիադեայ, զի ոչ վասն անիրաւութեան ինչ իւր մերժեցաւ նա, այլ զի պատմեցան նորքա ընդ դղրդացեալն ընդ այն՝ որ անարգապար կորոյս սակաւս 'ի նաւաց, և ինքեանք անարգագոյն ևս յաւաքինն և 'ի գոռ զօրավարէն զմեկեցին զքաղաքն ։ Սակայն և յայն աղէտսն յոյս ևս ընդ աղօտ ծագէր նոցա, թէ ոչ իսպառ տապալեսցին իրք Աթենացւոց, մինչդեռ սակաւքին կենդանի կայ Աղկիբիադէս ։ Զանզի և ակն ունէին եթէ որ յառաջինն վտարանդութեանն ոչ անդորր և պարապորդ վարեաց կեանս, նոյն և յերկրորդումս՝ որչափ ինչ բաւական իցէ նմա, ոչինչ լքեալ թողցէ այնպէս զհայրենի քաղաքն նշաւակեալ 'ի Լակեդեմոնացւոցն և նկուն յերեսնից անտի արանցն ։ Եւ արդեւք ոչինչ տարադէպ այնպէս յերազանային, այն ինչ և երեսունքն ինքնին առ ահին հետախոյզ մանր քննէին

զգնացուն Ալկիբիադեայ, և ճչացելոց 'ի մերայ կողմն նորա ամենայն գործոց և խորհրդոց ցնորաց ։

Այլ 'ի վերջէ Կրիտիաս զայս ինչ ազդէր Լիւսանդրեայ, եթէ յաղթահարեալ յայն ժամ տիրապետեն Եղլադայ Լակեդեմոնացիք, յորժամ խապառ բարձցի ընկերհառութիւնն Աթենացւոց. և թէպէտ և Աթենացիքն հպատակ կացցեն առաջնորդութեանն, սակայն կենդանւոյ առակաւոր զոլով Ալկիբիադեայ՝ թոյլ ոչ տացէ նոցա երբեք հանդարտել։ Այլ 'ի բանից առաւել ոչ շարժեցաւ Լիւսանդրոս, մինչև զայս հասանէին նմա 'ի տանէն Սկիւտաղայն և յիշխանաց տեառն՝ բառնալ 'ի միջոյ զԱլկիբիադէս. կամ զի երկուցեալ զանդեռէին նորա յաշխուժից սորա՝ բաւականն 'ի նահատակութիւնս մեծամեծս. կամ զի ինչ մի հաճոյանալ կամեցան Ագիսայ։ Իբրև զայսպատուէր զայս Լիւսանդրոս 'ի Փառնաբազ առաքեաց առ նա, նա զգործն յանձն առնէր Մագէոսի եղբօր իւրում և Սուսամիթրայ քեռւոյն։ Այլ էր յայնժամ Ալկիբիադէս 'ի գիւղ մի Փռիւգացւոց աշխարհին՝ ընդ նմա և Տիմանդրէ պոռնիկսւոր իւր, և տեսանէր 'ի քուն երազ։ Թուէր նմա ունել զհանդերձ Տիմանդրեայ. և Տիմանդրէ 'ի մէջ բազկացն կալեալ զգլուխն՝ պաճուճէր զերեսն 'ի ներկս և 'ի շպարս իբրև զկնոջ։ Իսկ կեսք ասեն՝ 'ի քուն տեսանել զՄագէոս կտրտելով՝ որ հատանէր զգլուխն և զմարմինն մաս

նէր 'ի հուր։ Եւ ասեն ո՛չ բազմօք յառաջ քան զմահն տեսանել նմա զերազն։ Իսկ որք առաքեցանն սպանանել զնա, ոչինչ համարձակեցան մտանել 'ի տունն, այլ շուրջ պատեալ հուր հարին։ Իբրև զգաց Աղկիբիադէս, առեալ 'ի մի պատատեաց շատ ինչ 'ի հանդերձից և յանկողնոց, և արկեալ 'ի հուրն՝ ապա և զահեկան պարուրեալ զքղամիդն և աջոյն ձգեալ զդաշոյնն, վազեաց 'ի դուրս անկէզ 'ի բոցոյն՝ մինչչև այրեալ հանդերձիցն. և անդէն յերևել իւրում փարատեալ պուղէր ըզբարբարոսսն. Իշխեաց և ո՛չ ոք զտեղի ունել կամ 'ի մէջ ընդ նմա գալ, այլ այնպէս բացուստ 'ի բաց նետահարք և վիքնահարք լինէին 'ի նա։ Իբրև այնպէս տապաստ անկաւ Աղկիբիադէս և բարբարոսքն տեղի տուեալ մեկնեցան, եկեալ Տիմանդրէ ժողովէ զդիակն և պատեալ և ծածկեալ իւրովք հանդերձիւքն՝ գեղեցիկ շքով յուղարկաւորութիւն տայր ըստ ժամու բաւականին։ Ասեն Տիմանդրեայ դուստր զԼայիդէն՝ որում անուն կարդային Կորինթիա, գերի վարեալ յԻկկարոյն աւանէն Սիկիլիոյ։ Բայց կէսք թէպէտ և ընդ ամենայն պատմութիւն մահուն Աղկիբիադեայ հաւանեալ են, սակայն պատճառք մահուն ո՛չ զՓառնաբազ ունին և ո՛չ զԼիւսանդրոս և ո՛չ զԼակեդեմոնացիս. և ասեն՝ եթէ զաղջիկ մի յականաւորաց պղծեալ Աղկիբիադէս և առ իւր կալեալ, ոչինչ հանդուրժեալք թշնամանացն եղբարք աղջը-

կանին, գիշերի հրձիգ 'ի տունն լինէին՝ յո-
րում կայր Աղկիբիադէս. իսկ 'ի հրոյն
արտաքս վազեալ՝ անդ տապարաւ արկանեն
զնա ըստ օրինակին՝ զոր ասացաք ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Արիստոփանէս կատակերգակ գերթող ունի զայս հատուած հնարիմաց յոյժ 'ի յունականն։ Քանզի ոչ կարելով Աղկիբիադէս արտասանել զտառդ ռ կամ ր. քերթողն աստ 'ի կծանել զԹէորոս զոմն այր սուտակապաս, տայ Աղկիբիադեայ թոթովել օրինակ զայս, զի փոխանակ ասելոյ χοραχος, որ է՝ ագռաւու, ասէ՝ χολαχος, որ է՝ մարդեղուզի. քանզի Քօռաքս, է Ագռաւ. և Քօլաքս, է Սուտակապաս, մարդեղուզ։ Ըստ որում և զառաջինն թոթովէ Աղկիբիադէս. փոխանակ Տեօէ՞ր, ասէ Տեօէ՞լ. և փոխանակ զԹէօրօս, ասէ զԹէօլօս։ Այսպէս՝ զի արդեամբք մարդեղուզ էր Թէորոս, վասն այսորիկ 'ի վերայ բերէ, եթէ ուղղապէս թոթովեաց Աղկիբիադէս։

2. Մազայ Սպարտացւոց, էր զանգեալ յալերէ, 'ի ձիթոյ, 'ի ջրոյ, և 'ի կաթանէ։

3. Յն. Ἴακχος. այն է Բաքոսն։ 'Ի թափօրական հանդիսին յայնմիկ խառնագոյշ մարդիկն ցնծային և կայթէին. զի և Եակքոսն ունի արմատ զբայն՝ Ἰάχω, որ է՝ գոչել, աղաղակ բառնալ։

4. Անուն Հրամանատարին Սպարտացւոց. տես 'ի Լիւկուրգ. 'ի ծան։

ՄԱՐԿԻՈՍ ԳԱՅԻՈՍ ԿՈՐԻՈՂԱՆՈՍ

ՄԱՐԿԻՈՍԵԱՆՑ զարմն 'ի Հռոմ բազում արս փառաւորս ընծայեաց 'ի պատրիկաց անտի. յորոց մի էր ինքնին և Մարկիոս Գայիոս 1 ծնեալ 'ի դստերէն Նումայի, և որ թագաւորեաց զկնի Տուղղիոսի Ոստիլիոսի: Մարկիոսեանքն էին և Պուպլիոս և Կուինտոս, որք զառատահոսն զայն զջուր և զյորձ զեղեցիկն ածին բերին 'ի Հռոմ քաղաք. նոյն և Կենսորինոս՝ զոր երկիցս անգամ կարգեաց հասարակաց ժողովուրդ Հռոմայեցւոց. և այսպէս նա ինքնին ածեալ հաստատեցոյց զնոսա տալ վճիռ և օրէնս՝ մի այնուհետև զայն աւագութիւն երկիցս տալ միում ումեք: Բայց Գայիոս Մարկիոս՝ զորմէ առեալս եմք 'ի պատմել՝ որբ մնացեալ 'ի հօրէն և դաստիարակեալ յայրի մօրէն, քաջ իսկ եցոյց եթէ որբութիւնն է՝ զի չարիս բազում 'ի ներքս ածէ,

սակայն և խոչընդոտն չէ 'ի լաւութիւն և յաջողութիւն անդր. և յոյլքն միայն մեղ դնեն որբութեանն՝ իբրու որ նոցուն ապականութեանն պատճառք իցէ՝ անբաժք 'ի դաստիարակութենէն մնալով։

Սա այս Մարկիոս հաւատարմացոյց և զորս ասենն՝ եթէ բոյս բարուց գեղեցիկ և քաջամոյն՝ այլ 'ի դաստիարակութենէ անմասն, ընդ բարւոյն շատ ինչ և 'ի յոռեացն բնաւորեցաւ բուսուցանել, իբրու արդաւանդ երկիր անբաժ 'ի մշակութենէ։ Քանզի հաստատութիւն նորա քաջամուր յամենայն 'ի խորհուրդս՝ սաստկապէս վառէր զնա 'ի նահատակութիւնս մեծամեծս. և ներհակաբար դարձեալ՝ յորժամ թափ բարկութեանն սանձակոտոր առնէր տանէր զնա, և 'ի պայքարս մեծապէս անդէր, յայնժամ ոչինչ հեշտին էր կենակից կենցաղակից լինել նմա. որպէս զի և որք միանգամ սքանչացեալ իսկ էին ընդ բարոյն՝ աննկուն 'ի դրդմանց և 'ի քրտանց և 'ի զօշաքաղութենէ, և յայտնիկ պարկեշտութեան նորա՝ անուն կարդային ժուժկալութիւն և արդարութիւն և արիութիւն, նոքին դարձեալ դժկամնակս կենցաղակից լինէին նմա 'ի քաղաքականս, իբրու դժուարաբաւականի այր և անշնորհ և պերճ։ Ուստի և շահ ոչինչ այլ այնչափ կթեն մարդիկ 'ի պարգևաց Մուսայիցն, որչափ հեշտ և հեզ զոնկակից բարոյն յարդարելով 'ի մարժից և 'ի կրթանաց անտի, 'ի չափաւորել զանձն և 'ի ծայրայեղ խոտորմանցն

խոյս տուաւ։ Իսկ որ առաւել արդարոյ յայն-ժամ 'ի Հռոմ՝ էր ինքնին առաքինու-թեան մարդոց և զինուորութեանց. և մեծայն ևս նոցա, զի յաղթութեան անուանեն՝ զա-ռաքինութիւնն յորջորջեցին. և զի՝ այր-անուն հասարակ՝ կոչեցաւ և անձին ա-րիութեանն 2։

Արդ Մարկիոս մեծապէս հակամի-տեալ 'ի մրցմունս, անդստին 'ի տղայ տիոցն մարզէր 'ի զէնս. այլ զմտաւ ածեալ եթէ զէնք մարմնացածոյք օգտեսցեն ինչ ոչ՝ որոց կազմ և պատրաստ չիցեն ընդա-բոյսքն և անկապտելիքն, վասն որոյ և առաւել զմարմինն կրթէր վարժէր յազգ ազգ մար-տի. վազէր թեթևընթաց, ըմբռնէր բռնւոն անկողոպտելի, և 'ի գոռաւն գօտեկռուէր ան-պարտելի. զի և որք այլ զօրաւորք 'ի մեծ-մեծանդամ գայցեն ընդ նմա յաղթութեան և յառաքինութեան, 'ի պարտութիւն մատ-նեալք՝ պատճառէին զանձանձնելին կորո-վութիւն զմարմնոյն և զանխոնջելին։ Այսպ առաջին ել շրջաւ նա 'ի մարտ պատերազ-մի՝ մինչ դեռ տղայութիւն պատանեկան էր. 'ի ժամանակին՝ յորժամ ընդ Տարկուինիոսի որ թագ կալեալ 'ի Հռոմ և ապա աւա-րեալ վարեցաւ, և յետ բազում մարտից և հարուածոց՝ զվերջինն խաղու աւել՝ ար-կանէր քուեայ, խաղացին եկին 'ի վերայ քաղաքին բազումք և 'ի Լատինաց և յայլոց ևս Իտալացւոց մարտ զնել կռուել ոչ 'ի շնորհս ինչ նորա, քան թէ նկուն զՀռո-մայեցիսն առնել, զի նախանձին զանդի-

տեսալ ընդ բարգաւաճել նոցա: Այդ 'ի նմին մարտի՝ յորում բաղձացեալ փոփոխեցան բախտք յերկոցունց կողմանց, Մարկիոս հզօրապէս կռուեալ յանդիմանն իշխանապետեաւքն, այն ինչ յանկն արկանէր զայր Հռոմայեցի զգետնեալ մեռ եւս, ոչ զանց առնէր. եկաց արձանացեալ հանդէպ տան և պաշտպանեալ՝ զախոյեանն տապաստ արկանէր: Իսկ զօրավարն զյաղթութիւնն տարեալ՝ ընդ նահատակն զՄարկիոս պսակէր պսակաւ կաղնւոյ. քանզի պսակ այսպիսի սահմանեն օրէնք՝ որ զքաղաքացին 'ի մարտի ապրեցուցեալ իցէ: Կամ առ 'ի շուք կաղնւոյ 'ի շնորհս Արկադացւոցն՝ որք 'ի պատգամաց աստուածոյն անուան կալան Կաղնաքէլք. կամ զի կաղնիք յամենայն իսկ 'ի վայրս հեշտիւն առ ձեռն կայ զինուորացն. կամ՝ զի պսակ կաղնւոյ նուիրական է Արամազդայ քաղաքապահի, 'ի դէպ առեալ տան զայն վասն փրկութեան քաղաքայնոյն: Առ այս դարձեալ՝ տունկ կաղնւոյ 'ի վայրենիսն՝ բերաւորագոյն է պտղովք, իսկ ընտանիսն՝ քաջաճոճ. և էր երբեմն 'ի նմանէն կերակուր՝ կաղինն, և ըմպելի՝ մեղրախառնն. և 'ի սպաս ևս կերակրոյ կաղնիքդ այդ ընծայէր զբազումս յարօտականաց և 'ի թռչնոց, զգործի որսոյն յինքն բարձեալ բերելով զոստոյն:

Ասեն՝ եթէ 'ի մարտին յայնմիկ երեւութացան և Դիոսկուրոսք 3. և փութապէս յետ մարտին ձիաւորեալք և սաստիկ ընդ քրտամբ մնեալ՝ 'ի հրապարակին աւետեցին

զյաղթութիւնն, մերձ առ աղբիւրն ուր այժմ կայ մեհեան նոցա. ուստի և զօրն զայն յաղթական 'ի յուշիկ անմոռանալի՝ նուիրեցին Դիոսկուրեանցն ։ Այլ առակայն շուք պատուոյ պատուանեացն 'ի դէպ ժամու ընծայեալ՝ թուի թէ՝ չինչուցանել ընտանութեան և առաջ ընդ զգայացն և զծառայսն՝ որոց միանգամ 'ի վերին երեսս պատուոյ անուանեցելոցն. Իսկ որք կորովամտացն էղեն և քաջամարտիկութեանց՝ առաւել եւս յայնժամ յարգարելոցն 'ի շուք պատուոյն՝ իբրև 'ի հասարակաց խնամել չծերալոյն՝ նահատակութիւնս ակնածութեան 'ի նոցունց ընթեր ։ Քանզի ոչ իբրև զընդգանեալ առնուլն զմեծատունցն այնուհետև, այլ իբրև զդրաւականս առաւելութ՝ զամենից հարկաւորեն այնուհետ լինել թշնամեաց զերծանն, և ոչ բարդատումն եւ առնուլ զնոսա զործողս խաբեանց ։ 'Ի նոյն նահատակելոյ և Մարկիոս, եղ 'ի մէնի արութեամբ քաջութեամբ՝ զմիաբանել իսկ զամենայն եղեալ առնուլ նորանոր արդեանքս. բարեացեալ նահատակութիւնս 'ի վերայ նահատակութեանց, և առաւել մրցանակս 'ի վերայ մրցանակաց. և զօրավարս իւր ետես 'ի վէճ եկեալ զվերջինսն ընդ առաջնոցն՝ առ 'ի շուք դնել նմա և մեծայս փառաց լինել նմա ։ Քանզի և քաջ իսկ 'ի բազմադէպ մարտս պատերազմաց Հռովմայեցւոց 'ի ժամանակին յայնմիկ՝ առ հասարակ յամենայնէն պատուական զարմանա Մարկիոս և մրցանակաւոր ։ Իսկ եթէ այլք 'ի մարդկանէ զքաջութեան վախճանեն

'ի փառս, նա զմօրն հրճուանս կէտ նպատակի փառացն եդ առաջի. քանզի լսել մօրն զգովութիւն նորա, և պսակաւոր տեսանել զնա, և 'ի խնդութենէն արտասուել գրկել ընդ խառն ընդ նմա, այն էր նմա մեծագոյն շուք և երանութիւն: Այսն և զԵպամինոնդայ ասեն զկիրս զայս առ. ծնողսն. զի և երջանկութիւն մեծ համարէր՝ եթէ հայր նորա և մայր կենդանիք՝ յաղթական տեսցեն զնա զօրձեալ 'ի մարտէն Լեւկտրեայ՝ յորում զօրավարեաց: Այլ Եպամինոնդայ եհաս տեսանել զերկոսին միանգամայն ծնօղացս և բարձանորդս գեղեցիկ բախտին. իսկ Մարկիոս՝ նաև զօր առ. հայրն զպարտիս շնորհացն՝ 'ի ներքս բերելով մօրն, ոչինչ յագէր շուք զնել Վոլումնեայ և խնծղանս պատրաստել նմա. առ այս և 'ի թախանձանացն նորա և 'ի խնդրոյն ած իւր կին, և ծնեալ ևս որդիս՝ 'ի նմին տան բնակէր ընդ մօրն 'ի միասին:

Արդ փառս մեծագոյն և զօրութիւն ժառանգեալ Մարկիոս 'ի քաղաքին առաքինութեամբն, զայնու ժամանակաւ ծերակոյտն 'ի կողմն եղեալ ճոխից՝ հերձայր ընդ ժողովրդեան, որ դժկամակս բերէին զվայրենի զկիրս զվաշխառուացն: Քանզի զչափաւոր մեծատուննն կապուտէին վաշխառուք միանգամայն յամենայն գոյից՝ 'ի դրաւ եդեալ և 'ի վաճառ հանեալ. իսկ զչքաւորսն բանտարգել առնէին, այլ՝ որ և այլոց բազումս ունէին 'ի մարմինս իւ-

րեանց 'ի մարտից անտի պատերազմաց 'ի վերայ հայրենի քաղաքին. և 'ի վերջէ՝ 'ի մարտին Սաբինացւոց յորդորեցան նոքա խաղալ 'ի խոստմանէ ճոխիցն՝ չափաւոր վարել ընդ նոսա, և խոստմանն երաշխաւոր եկաց իշխան ժամանակին Մարկոս Վալերիոս 'ի հրամանէ ծերակուտին: Բայց ապա 'ի մարտին քաջապէս կռուեալ նոցա և 'ի պարտութիւն զթշնամիսն մատնեալ; մարդասիրութիւն և ոչ մի տեսին նոքա 'ի վաշխառուան, և ոչ ծերակոյտն ինքնին թուէր յուշ այնուհետև զպայմանսն ածել. Նա և թոյլ ևս տայր միւսանգամ զրաւել և 'ի բանտս վարել, և այնպէս աղմուկ անհնարին ամբոխից յուզեցաւ 'ի քաղաքին: Իսկ անդուստ ոչ 'ի ծածուկ ինչ գոլով 'ի թշնամեաց խռովութիւն ժողովրդեանն, դիմեցին խաղացին միանգամայն 'ի հուր դատել զգաւառն: Յայնժամ յարուցեալ հիւպատոսք 'ի մարտ հրաւէր կարգային՝ որոց միանգամ յառաջուստ հաւանեալ էին, այլ պատասխանի ետ և ոչ ոք. և յայնժամ յայտնապէս պատառէր ատեանսն: Կէսք 'ի դէպ համարէին տեղի տալ աղքատաց ժողովրդեան և թոյլ առնել խստութեան օրինացն. իսկ կէսոց ներհակաբար եղեն կարծիքք, յորոց մի էր և Մարկիոս. որում և ոչ այնչափ ինչ փոյթ էր վասն ընչիցն, այլ յորդորէր զնոսա՝ իբրև զմտաւորս փութալ հանդարտել զաղմուկն, և կարծել զսկիզբն ստահակութեան խուժանին առօրէնան: Իբրև վասն սորին խրաց 'ի սուղ

առաւելու բազմութեամբ անգամ խմբեցաւ ծերա-կոյտն և եւս կրայցն ոչ զատանէր, անդ յանկ-կարծակի աղքատաց ժողովրդեանն միահա-ղոյն ձայն տուեալք միմեանց՝ թողին լքին ելին 'ի քաղաքէն, հասեալ կալան զլեառն՝ որ այժմ անուանեալ կոչի Նուիրական. և անդ զանեգի կալան առ Անիէն գետովն: Ոչ բռնութիւն արարին, ոչ աղմուկ յու-զեցին, միայն ձայն բարձեալ աղաղակէին, եթէ Ճոխք քաղաքէն անդրուստ 'ի հա-րուստ ժամանակաց վտարանդի արարեալ իսկ էին զնոսա 'ի քաղաքէն. և թէ՝ Իտա-լիա՝ ուր և հող՝ բաց օդ. և ջուր տայցէ նոցա և տեղի գերեզմանի. իսկ 'ի Հռովմ բնա-կեալք չունէին այլ՝ բայց վէրս և մահուանս, մարտ եդեալ և կռուեալ 'ի վերայ Ճոխիցն:

Զահի հարաւ ծերակոյտն, և առեալ արձակէր առ նոսա 'ի ծերոց անտի արս ա-ւագս՝ հեզս և ռամկասէրս: Իսկ որ 'ի հրեշտակութեանն յայնմիկ յառաջադէմ գտաւ 'ի խօսել, էր Մենենիոս Ագ-րիպպաս. սա շատ յորդոր անկաւ առ ժո-ղովուրդն, և շատ ևս բարբառեցաւ ազա-տօրէն 'ի կողմն ծերակուտին. ապա կնքէր զբանն հռչակեալ առակաւն. Էր երբեմն՝ ասէ՝ զի անդամք առհասարակ մարդոյն ամենայն ընդդէմ որովայնին յարուցեալ՝ բողոք բառնային, եթէ նա միայն պարա-պորդ անգործ և անհոգ նստեալ կայ 'ի մարմնի, մինչդեռ նոքա առհասարակ պատ-րաստեալք շատ ինչ վաստակեն և յոգնին լրումն տալ բաղձանաց նորա: Ծիծաղե-

ցաւ տրտմեալ յինն ընդ անհնազանդութեան նոցա՝ զի թէպէտ եւ զամենայն կերակուրն յինքն առնու ամբարէ, այլ սակայն առանց արժա-կէ յղփանէ եւ բաշխէ զնոյն 'ի մասունս մա-սունս մարմնոյն։ Այսպէս յառակելով 'ի բանսն՝ ասէր Ագրիպպաս. “Զայս օրինակ ապա ձեզ քաղաքացիքդ՝ է բան Սինկղիտոսաց առ ձեզ. քանզի 'ի գեղեցիկ անտեսութենէն նոցա՝ խորհուրդք եւ գործք ամենեցուն առն եւ բաշխեն իւրաքանչիւր զպիտանիսն եւ զօգ-տակարսն”։ 'Ի բանից աստի զիջեալ նոքա եւ 'ի հաշտութիւն եկեալ խնդրեցին 'ի Սինկղիտոսէն, եւ առին իւրեանց արս ա-ւագս հինգ Թուով պաշտպանս 'ի պէտս իւրեանց, որ անուանեցան կոչին այժմ ժո-ղովրդապետք, այն են՝ Տրիբունք։ Այս առաջին ընտրեալ կարգեցան յայնժամ գլխաւորք հերձուածոյն այնմիկ՝ այսոքիկ, Բրուտոս Յունիոս եւ Սիկինիոս Բելլու-տոս։ Եւ այսպէս միաբանեալք՝ առ հա-սարակ 'ի զէն ընթացան, եւ կացին զօրա-վարք 'ի գլուխ՝ կամակարութեամբ խաղալ գնալ վառեալք 'ի մարտ պատերազմի։ Իսկ անդանօր Մարկիոս՝ որ դժկամակն իսկ էր ընդ զօրանալ խուժանին եւ ընդ նուազել աւագապետութեանն, տեսեալ՝ զի եւ բարձրանք այլք 'ի պատրիկաց համա-շունչք են 'ի նոյն միտս, յորդորէր մի նկուն յարութեան երկել քան զխուժանն 'ի կախ մարտից հայրենեացն. այլ քաջ 'ի դէմս ելեալ՝ զի քան յանդուգնութեան՝ առաւել մեծ հզօր իցեն յառաջինութեան։

Այդ էր յայնժամ մարտ պատերազմի նոցա ընդդէմ Վոլուսկեանց ազգին, որոց քաղաք էր երեւելի և մեծ՝ Կորիողանոն։ Իբրև զայս քաղաք նոցա պատեալ պաշարէր յայնժամ Կոմինիոս հիւպատոս, անդ նոքա առ հասարակ 'ի մի վայր խմբեցան զահի հարեալք. 'ի կողմանց կողմանց խաղային յօգնութիւն ընդդէմ Հռոմայեցւոց, մարտ պատերազմի պատրաստականս առնուլ ընդ նոսա 'ի հանդիպոյ քաղաքին, և առաջի և անդի անկանել 'ի վերայ նոցա։ Հանապա Կոմինիոս յերկուս զբանակն բաժանեալ, կիսովն խաղայր դիմէր ինքն ընդդէմ որ արտաքոյ Վոլուսկեանց հրոսակին, թողեալ զկէսն 'ի պաշարմանն 'ի ձեռն Լարկիոսի Տիտոսի Հռոմայեցւոյ՝ առն աւագի և քաջի։ Իսկ Կորիողանացիքն արհամարհեալք զորս անդէն մնացինն, ելին խուժեցան արտաքս 'ի քաղաքէն և անկեալք 'ի վերայ՝ 'ի ժամուն 'ի պատրաստութեան մարտնէին զնոսա, և զհետ նո մնեալք հալածէին զՀռոմայեցիս մինչև 'ի պատնէշապահակ անդր նոցա։ Բայց անվեհեր Մարկիոս զինեալ սակաւաձեռն զնդաւ, տապաստ յերկիր արկանէր զախոյեանսն, և զյարձակումն սանձեալ՝ ձայն մեծապէս բարձեալ կարդայր զՀռոմայեցիսն։ Քանզի և էր իսկ Մարկիոս՝ որպիսի արդեօք կամէր Կատոնն լինել զօրականին, ոչ 'ի բազուկն միայն և 'ի հարկանելն, այլ և 'ի գոչիւն ձայնին և 'ի դէմս երեսացն ահարկու թշնամւոյն և դժուարամերժելի։ Իբրև շառք ոմանք եկին խառնեցան զնովաւ, զա-

հի հարկեալ թշնամեացն ընդ կրունկն դառնայքին, այլ Մարկիոս զհետ եւ մնեալ վանէր զնոսա. մինչ զեռ նոքա անկարգ հրոսակաւ 'ի փախուստ խուճապէին, նա վանեաց հալածեաց զնոսա մինչեւ 'ի դրունսն:

Անդ երբեմն յետս նահանջեցան Հուռնայեցիք 'ի ատրպատարանի նեանց պարապացն, և ուրուք 'ի նոցանէն երբեք 'ի միոս անգամ չանկանէր' 'ի միջաւին ընդ փախստէիցն հարկան 'ի ներքս տալ 'ի քաղաքս անդր' ուր և խուռն 'ի սապատաւէն թշնամեաց, Մարկիոս անդէն արձանացեալ քաջաբար խրախոյս 'ի ներքս կարգայր նոցա. երբեմն զի 'ի գերդեցին ժամանն' քան փախստէիցն' հետամնուիցն տուաեալ քաղաքդ սաստիկ առաջին բացեալ կայ: Արդ թէպէտ և նուաղունք յաջմնժամ քաջացան զհետ խաղալ նորա, նա 'ի մէջն խոյացեալ թշնամեացն հարկանէր ճանապարհ. սաստկապէս դիմեալ մտանէր ընդ դրունսն 'ի ներքս ընդ նոսա, ուր և ամենեքին որք ոչ իշխեաց 'ի դիմի հարկանել նմա կամ զանգի ունել: Անդ ուստ զետեղն 'ի վեր ամբառնայր Մարկիոս, տեսեալ զի նուաղունքս են կարի յոյժ 'ի խուռն անդ բարեկամացն և թշնամեացն' օգնականք և նիզակակիցք նորա 'ի քաղաքին, պատմէին' նորապաքանչ գործեալ նորա 'ի ժամանն նախանձիւրս սաստկութեամբ ուժոյ բազկացն և թեթեւընթաց վաղելուք ոտիցն և անվանելի արութեամբ սրտին, որպէս զի և նկուն զախայրեանն առհասարակ ատանելով, զինէս 'ի նոցանէն վարէր

վառնէր մինչև 'ի վերջին ծայրս քաղաքին, և զկէսս դարձեալ վաստակաբեկ պարտասեցուցանէր զէնընկէց զէնընթաց լինել, մինչև ժամ պատեհ տայր Լարկիոսի Կ, աներկևանութեամբ արտաքուստ 'ի ներքս զՀռոմայեցիսն խաղացուցանել:

Իբրև այսպէս առրացան քաղաքին, և անդ բազմադոյնք 'ի զօրականէն կապուտ կողոպուտ ըղձանային առնել զքաղաքն, պամնեալ ցանոյր Մարկիոս՝ ձայն բարձեալ աստանէր. կարէ անարժան և գժպատեհ իրք իցեն առնել, մինչև անդանօր հիւպատոսն և քաղաքացիք նորա մարտ եդեալ ընդ թշնամիսն կռուեսցին, նոքա պարապեալք զառ և զապուր ժողովեսցեն. կամ թէ պատճառս զայն առեալ՝ 'ի մարտէն խուսեսցեն: Իբրև նուաղունք անսացին նմա, նա ընդ իւր առեալ զորս զհետն չոքան, խաղաց դիմեաց ընդ նոյն ուղի հատտածի բանակին՝ որպէս զիարդ և լուր էառ. խրախուսէր քաջալերէր զնահատակսն ընդ իւր, և աղաչէր առէպ աղերսէր զգլխսն՝ մի ապաժամանն 'ի կռուոյն լինել, այլ 'ի դէպ ժամուն հասեալ նիզակակից և նախահատակակից եղբարցն գտանել: Արդ՝ զայնու ժամանակաւ սովորեցան Հռոմայեցիք, 'ի ճակատամարտին կարգեալք՝ մինչդեռ զասպարն 'ի բուռն առնուլ հանդերձեալ էին, և զօտէպինդք զզաւառասուկն հանդերձ ճէրին, կտակ առնել անգիր և ժառանգս յանուանէ կարգալ լսու 'ի լու երից և չորից արանց: Իբրև յայն գործ պարապէր

դրդռականն՝ զէմ յանդգնեան ճակատու. Թըշ-
նամեացն, հատեալ ժամանէր Մարկիոս.
զառաջինն կէսք 'ի նոցանէն սպառազէն լի-
նէին, զի այնպէս ընդ սակաւուց արանց ա-
ճապաղելոց անդր ողջ յարիւն ապաժոյժ
և սաստկապէս ընդ քրտան մնեալ. իսկ իշ-
խք ընթացեալ Մարկիոս առ հիւպատոսն՝
ցնծագին զաջ իւր կարկառէր նմա, և քա-
ղաքին առանձն աւերումն լինէր, Կոմինիոս
զիրկս ածեալ համբուրէր զնա. և առ հա-
սարակ լսեալ քաջալերութեանց՝ որք զնա
հաստատութիւն զայն զնորա լուան, և որք
զարձեալ ընդ միտն նկարէին, ձայն տու-
եալք խրախուսէին՝ փութապէս ձեռն 'ի
գործ առնել 'ի պատերազմ: Այլ Մարկիոս
հարցումն առնէր հիւպատոսին, զինչ
կարգեալ յօրինեալք իցեն զինուորու-
թիւնք թշնամեացն, կամ թէ յորում կող-
մանն քաջամարտիկքն ճակատեալ կայցեն.
Իսկ նա զայն ինչ պատասխանի առնէր Կոմի-
նիոս, եթէ վաշտք Անտիացւոց քաջա-
մարտից կարծեմ և որք արութեամբ
քաջութեամբ նոքա զառաջնորդ յաչս զնեն,
թուի թէ 'ի միջոցին յօրինեալք կայցեն,
ասէ Մարկիոս. "Աղաչեմ և խնդրեմ 'ի
քէն, ընդդէմ զմեզ ճակատեցուսցես ա-
րանցդ այդոցիկ": Զարմացեալ Կոմինիոս
ընդ անմեհեր յօժարութիւնն, և շնորհէր
նմա անդէն զխնդիրն:

Իսկ ժամ նիզակացն լինէր արձակելոյ,
և արդնընկէցք տէգընկէցք խաղային նա-
հատակքն, յառաջ զիմադրաւ վազեաց

Մարկիոս, և որ 'ի ճակատումն կարգեալ Վոլուսկեանք՝ ոչինչ հանդարտեցին առաջի նորա. Նա անդէն արագ արագ զկողմն փաղանգին՝ յորում սաստկապէս խառնեցաւ՝ պղծէր և փարատէր: Իսկ իբրև որք 'ի թեւան անդ կային, եկին շրջան առեալ 'ի ներքս զայրն փակեցին զնոսա զարդու, երկեաւ Կոմինիոս զի 'ի վտանգ պաշարեցաւ Մարկիոս՝ փութապէս զարս քաջս կորովիս 'ի զօրականէն հատեալ ձեպեաց նմա 'ի թիկունս: Եւ էր անդ գոռ ահագին ոտսանել և սաստիկ 'ի վերայ Մարկիոսի, որպէս զի և արագ յական թօթափել բազմակոյտ յոյժ դիականց թաւալգլոր յերկիր խառնայլին. և 'ի շատալ մեծի տագնապին քաջապէս կռուեալ՝ զթշնամիսն յետս ընդ կրունկն նահանջէին, մինչև հետամուտք հալածական տարեալ զնոսա, ապա սկսան այնչէլ զՄարկիոս՝ զի այնպէս վտանգաւորեալ այրն խոնջ և նուաղ 'ի սաստիկ հոսելոյ քրտանցն և 'ի բազում վիրացն՝ վայր մի ոտեղի առեալ մեկնեցաւ 'ի բանակ անդր: Նա արժան չէ՝ ասէր՝ յաղթականացն երբեք վաստակել, և անդէն հետամուտ զկնի փախստէիցն պնդէր: Եւ այնպէս հարեալ խորտակեալ և մնացորդաց բանակին նոցա, գլխապատառ բազումք անկան, և բազումք ևս 'ի գերութիւն վարեցան յայնժամ:

Իսկ յաւուրն երկրորդի եկեալ առջանացեալ Մարկիոս յանդիման հիւպատոսին, էին անդ առ նմա և 'ի զօրականէն,

եւ եկաց հիւպատոսն 'ի բեմն և բարեբա-
նութեամբ զերկեցելս հաստատեցեալ զէց 'ի մե-
ծի նահապետութեանն, դարձեալ 'ի Մար-
կիոս կայր՝ գովութեան արժանաչեղաւդես տայր
նմա զքերքաւնացն՝ զոր իւրեանն խաւսելք իսկ
աչքը եաես 'ի մեծի պատերազմին, և զոր
դարձեալ իւրեանն Մարկիոս ծառա ապրեալ
պատուէր և վկայէր: Հրամանն տայր հիւպա-
տոսն՝ զի զատանեսցեն տացէ յիւրեն Մար-
կիոս զերիվարացն և զգերեալսն, և միանգա-
մայն իսկ զմեծի աւարին՝ մինչեւ բաշխել ե-
ղեալ զորականեսին. Թող զայս, և միցանակ
քաջութեանն երիվար նժոյգ վառեալ
զարդարեալ 'ի նորքս մատուցանէր նմա:
Իսկ աւահասարակ ուրախ եղեն ընդ բանն,
յառաջ մատեաւ Մարկիոս. առնուլ առա-
նորը զնժոյգն, և շնորհս ունէր բարեբա-
նութեանցն իշխանեսին. իսկ զայլ ինչ՝ վարձս
համարեալ քան թէ շուք պատուոյ՝ չառա-
նոյր յանձն, իբրեւ աւրէնէր եցէ նմա զհաւա-
կանն առնուլ բաժին 'ի բաշխսին՝ իբրեւ զմի
'ի զորականեանն: Այլա յաւելեալ 'ի բանս
իւր ասէր առ հիւպատոսն. " Բայց իսկ
շնորհս իմն մեծ խնդրեմ եւ 'ի քէն, այլ
և աղաչեմ առնուլ: Է 'ի Վոլուսկեանցդ
այր ինձ հիւր և բարեկամ, այր լաւ և բա-
րի. զա ձերբակալ եղեալ այժմ՝ ընչա-
ւէան և երջանիկն՝ արդ 'ի ծառայից կարգ
անցեալ կայ: Եւ արդ յաղէտս վիշտաց զա-
րա 'ի բազմապատկեսն՝ զմին զայն դիւրեսցես
նմա. մի վաճառականաւր լինիցի":

Զայս ասաց, և ձայն աղաղակին բարձ-

րացաւ վասն Մարկիոսի. և քան որք ընդ-քաջութիւն նահատակութեանն, բազումք այն էին՝ որ յոյժ զքանչացան ընդ մեծու-թիւն ոգւոյն՝ զոր ոչ պատուեաց արծաթ: Քանզի և որք սակաւ մի յառաջ խեթիւ հայէին ընդ նա վասն մեծաշուք պատուոյն, նոքին զարմացեալ վկայեցին՝ եթէ առաւելա-պէս արդեօք արժանի գտաւ զա առնուլ զմեծամեծսն, զի ոչ էառ. և քան զնահա-տակութիւն՝ որով արժանի գտաւ, մեծ ևս համարեցան զառաքինութիւնն՝ որով ար-համարհեաց զմեծամեծ պարգևսն: Եւ արդեօք՝ քան զպաշտպանս վարել զինուցն, գեղեցիկ ևս լինէր բարւոք վարել զինչսն. իսկ քան զվարել ընչից՝ մեծագոյն ևս է ոչինչ ցանկալ ընչիցն: Այսպէս իբրև ձայնք լռեցին ամբոխին, խօսել սկսաւ Կոմինիոս և ասէ. “Դուք իշխանք ո՛վ նիզակակիցք, ոչինչ կարէք արդ բռնանալ առնուլ առնն ՚ի պարգևաց յայդոսիկ՝ զոր չառնու և չկամի: Ո՛ն մեք՝ զոր ոչն կարասցէ մերժել, պար-գև զայն տացուք դմա. տացուք վճիռ՝ զի անուամբ կարդասցեն դմա Կորիողանոս. եթէ արդեօք և նահատակութիւնդ ինքնին զայդ-նախ քան զմեզ չէ՛ տուեալ դմա“:

Եւ յայսմանէ նա երրորդ անուանս կո-չեցաւ Կորիողանոս. ուստի և քաջայայտ է՝ եթէ յերից անուն անուանցն սեպհա-կան նմա Գայիոսն է, երկրորդն՝ Մարկիոս, հասարակ տան կամ զարմին. իսկ երրորդն զոր կարդացին նմա ՚ի վերջէ՝ յայնմպիսեաց անտի է որ մակձայնեին ՚ի պատճառս նա-

հաստատութեան ինչ կամ բաղդի, կամ կերպարանաց մարմնոյն կամ առաքինու-թեանն. ըստ որում Հելլենացիքդ ընծայա-բերցան՝ մականուանս իսկ կոչել ըստ նա-հաստատութեան տրդեանցն, որպէս Սոտէր՝ Փրկիչ. և Կալլինիկոս՝ Բարեյաղթ։ Ըստ կերպարանաց մարմնոյն՝ որպէս Փիսկոն՝ Քամղթեղ. և Գրիպոս՝ Արծուաքիթն։ Ըստ առաքինութեան ազգայն՝ որպէս Եւէրգէ-տէս՝ Բարերարն. և Փիլադելփոս՝ Եղբայ-րասէր։ Իսկ ըստ գերերջանիկ բաղդին, որպէս Եւդեմոն՝ Բարեբաստիկ, մականուանեալ երկրոր-դին ՚ի Բատտոսեանց (սերընդոց Կիւրենեաց)։ Իսկ և ՚ի կատակաց մականուանեցան թագա-ւորք. ըստ որում Անտիգոնոս անուանե-ցաւ Դոսոն, այն է՝ Տաց, (զի խոստանայր և ոչ տայր). և Պտղոմէոս՝ Լաթիրոս, այն է՝ Ըսպառակնուտ։ Զնոյն օրինակ վարեցին առա-ւել և Հռոմայեցիք. ըստ որում ՚ի Մետե-ղեանց մնոյն զմի անուանեցաւ կապա-ցին Տիադէմատոս. քանզի բազում ժամա-նակ կեղը ունելով բոլորակ ինչ պատեալ կապէր զճակատն։ Դարձեալ և զայլ ոմն անուանեցին Չելեր, զարմանացեալք ընդ ա-րագութիւն հանդերձանաց տան. քանզի փութապէս յոյժ կարգեաց մրցանս զամ-բանական զՄենամարտիկացն՝ յետ առուրց սակաւուց վախճանի հօրն։ Եւ մինչև ցայ-սօր ժամանակի նոքա անուանս կարգեալ մար-դոյ՝ և ՚ի դիպաց ծննդեանն։ Քանզի Փրո-կուղոս կոչեն զմարդ՝ որ պանդխտան գոլով հօրն ծնեալ իցէ. և Փոստումոս՝ որ զկնի

վախճանի հօրն։ Դաստիարակեալ և Վոլֆիափոսա, որ յերկուորեկաց ծնելոց մէն կենդանի մնացեալ էր 'ի մեռանել մօրայն։ Դաստիարակեալ և մանկանութեան ուսմանն նորա ըստ համեղանման մարմնոյն՝ ոչ միայն Սիւլլայ և Նէկրի, այլ և Զէնէոնի և Քլեոփինի․ այն է՝ Կողոք և Կաղաք․ և խմաստութեանք գործեն․ մի առ անարգանս և առ Թշնամանս ինչ ունել զկուրութիւն աչացն կամ զխեղղութիւն անդամոցն, այլ կարգալ ևս զնոսա այնպէս իբրու աստուածային իւրեանց անուանքն։ Այլ այսպէսիկ այլոց մանանաւորութեան առ զերդ Թող մի եղեն։

Բայց յայնժամ յետ վճարելոյ մարտին, խաղաղութեանց խուժանին անդրէն միանգամ ազգութիւն յարուցանէին, ոչ նոր ինչ ունելով պատճառս գրգռութեան և առաջնոյ խռովութեան, այլ բարուրս ամբոխեց ընդդէմ պատրիկացն զկարեւոր ազէտան պատճառեցին՝ որ յառաջին հերձուածոյ անտի։ Քանզի բազումք այն էին յանդգաամանց՝ որ անմեղակ և անաեքին խառապնացան․ և 'ի մարտին սակս՝ այլուստ ոչինչ հերձեալ պատերազմեցան ամենայնք։ Ուստի և սով մեծ յաջորդեալ զկնի և վաճառք ցորենոյ նուազեալ, և Թէ էր ևս՝ պակասեալ և սղեալ 'ի գնել, ապա խաղաղութեանց չարախօս գճախիցն ընդեալ և բերել կարկամել, իբրու որք քննախանդիք առաջին Թշնամութեանցն՝ կամին նորա սովելով զծողովրդեան առնիցեն։

Զայնու ժամանակաւ զայլն հասանէին

հրեշտակք 'ի Վոլսկեացւոց. անձնատուրք
'ի Հռովմայեցիս. առաքեցին՝ զաղթականս
մի առնուլ արձակել 'ի քաղաքս անդր նո-
ցա. քանզի պատահմամբ սաստիկ ճարա-
կելոյ 'ի նոսա՝ հարուած և ապականու-
թեան զարծեաց, զի և հազիւ ուրեմն տաս-
ներորդ մասնկանն նշխարել միայցին։
Յայնժամ մտաւոր մտադրէին ըստ պիտոյից
քաղաքայինքն և 'ի դէպ ժամու համարեցան
զարկանելն Վոլսկեացւոց. քանզի և Հռով-
մայ ալէտք էին թեթեւութեան խռովմանն
յայնժամ 'ի մեծի կարօտութեանն. մինչ
զամենայն և ակն ունէին 'ի բաց զաղմնականն
փարատել չքաւորից՝ մաքրել զքաղաքն
յաղմկարարաց ամբոխից, խորհ 'ի խռովուաց ա-
պականչաց։ Այսպէս հիւպատոսք 'ի համար
զաղթականսն գրեալ զնոսա, արձակէին
'ի բաց. և այլոց զարմտել հրաման կար-
գային զօրաժողով լինել ընդդէմ Վոլսկ-
եանց, զի այնպէս ասա հասցեն զապստա-
մբաց խռովութեանց. զմտաւ ածին՝ եթէ
միանգամայն 'ի դէն զինուորել նորզակա-
կիցք մեծք և աղքատք, ժողովրդականք և
պատրիկք, այնպէս հեզաբար և գերեզցին
մարտ ուղխ առ միմեանս։ Սակայն ամբարտաւան
Սիկինիոս 'ի ժամուն, ամբարտաւան և Բրու-
տոս՝ խաղաղարարք ժողովրդեան, կացին և բա-
ղաք բարբառին՝ խորհ զործ անարգութեան 'ի ներքս
բերեն հիւպատոսք. անուն զաղթականի 'ի
բերան առեալք հեշտ և բաղձալի՝ 'ի մէջ
զօրաց ամբառ աղէտից առնել խարդա-
խանսն նոքա զաղքատս ժողովրդեան. 'ի

քաղաքք մի առեալ արձակեն՝ որ օդոցն ժանտութեամբ մահահոտ վարակեալ է-ցէ, և՛ի բազմակոյտս անթաղ դիականցն նե-խացեալ լիցէ, անդ երթալ բնակակից ու-մեմն լինել օտարի և ոխերիմ և մարդա-խանձ Վոլսկի. և իբրու եթէ շատ ոչ լիցէ կիսոցն խուժանին սովամահ կորնչել, և կիսոցն պատահութեամբն մեռանել, Նոքա և մարտ ըստ քմաց դրդուեն պատերազմի. զի միանգամայն ևս յամենայն աղէտս ե-կեալ պաշարեալ քաղաքն, զի չէառ յանձն ապա Ծոխիցն հարկանել։ Իբրև զայսօրինակ բանիւք բարձեալ հեղին լցին ՚ի լուր խուժանին, անդաստանեալ հեռացին Նոքա զօրաժողով հրամանին հիւպատոսաց, և ոչ ևս ՚ի չու գաղթականին խլանեցան ելին։

Անդանօր Մենենիոսն ՚ի վարանս տա-րակուսի վասն բանիս այսորիկ, Մարկիոս ապերձութեամբ Ծոխացեալ՝ որ և խոր-հուրդս յածէր բարձրագոյնս և մեծամեծս, և զբանչացեալ ևս էր յաւագանւոյն, յայտ-նի ընդդէմ դարձեալ խաղաղասիրացն, անդէն տայր արձակել զգաղթականն ՚ի սպառնա-լիս սաստիկ պատուհասի՝ առհասարակ զամենեսեան որոց միաբանեալ էր ընդ Ծխականն։ Սակայն ՚ի մարտ պատերազմի գլխովին ընկրկէց անհաստատեալ խուժանին, առեալ ընդ իւր Մարկիոս զիւր արբանեակսն և զորս հաւանեցոյցն, Նոքօք հանդերձ աս-պատակ սփռէր յերկիրն Անտիացւոց. անդ ամբար գտեալ ցորենոյ և աւար յոյժ զա-նազանց և զգերեաց, ոչինչ պահեալ ան-

ձեռին՝ զօրաց առաջ 'ի քաղաքին հանդերձ զօ-
րականօքն՝ որ բարձեալ ընկէցին զաւարն
զայն զմեծ ։ Ցնծացաւ այդոցն գիտութիւնն,
աշխարհակալքն՝ զի ոչ խաղաղեցին ընդ նոսա,
և խռովեցին ևս. խաղաղացան և ընդ Մար-
կիոս, խաղաղացան ընդ փառս զօրութեան
նորա, իբրու որ բաղդատական առն՝ զեան
գործեալ է խուժանին ։

Այսպէս յետ առնլոյ խաղս հիւպատո-
սական բարձին հեռացմունս ընծեր Մար-
կիոս, բաղդատեալ այն էին՝ որ կուսակիցք էին
նոցա. և խուժանն ճիչելին զանօթի հարկա-
նէր՝ եթէ առաւ այն այր զաղագս և առա-
քինութեանն բարձերեց ընդդիմանեալ ան-
պարտելոցն յետ մեծաց նախահաստակութեանցն ։
Քանզի և առաջնորդութեան էր որոց միաբանեալ
բարձին հեռացմունքն էին, իշխեալք 'ի հրա-
պարակ անդր՝ մատնեալ 'ի ժողովրդոց, պատա-
մուճանն արկեալ զանձնական անշաւանկ. կամ
զի առաւել խառնաղոս և նկուն կերպարա-
նաւն առաւելի ժողովրդեան 'ի դէմս ընկել
զմեծութեանն. կամ զի յաղաչաւորացն կեցոք
առակս միւսոց 'ի մասնակիցն տանելով մերկա-
պարտանաց աղաւաղեն զայնսական իբրու նշա-
նակս յայտնելոյ խոցելեանց քաջութեանն ։
Քանզի այնպէս զգուշացեալ և անշաւանկ հրա-
պարակեալ աղաչաւորքն այնմիկ առաւելի
քաղաքացեացն, չէր այնուհետև կասկա-
ծելի՝ կաշառամբք զոք առնել արժանաւոր
և ընծայիւք ։ Զի և հարցաւոր ժամանա-
կաց զկնի՝ 'ի ներքս մտեալ աշխարհեալն վա-
ճառաշահութիւնք այգուցեալ. և զնաց

այնուհետև արծաթին և խառնեցաւ ընդ քուէայսն յատեանս ժողովոց, և անդուստ յառաջագէմ խաղաց կաշառաբեկութեանդ և 'ի տունս դատաստանաց և 'ի բանակս զօրաց, և բունացաւ 'ի վերայ քաղաքին. քանզի զզէնսն նկուն արար պատրաստեաց արծաթին. ուստի և գեղեցիկ ասաց՝ որ ասացն, եթէ՝ Նա առաջին տապալեաց զժողովուրդն, որ առաջին կոչնատէր եղև նմա և պարգևատու: Եւ այս տակաւ և սողընխեթի այս կերպ սպրդեցին, տակային և ոչ անդէն նշաւակեցան 'ի Հռոմ. քանզի և գիտեմք խակ ոչ՝ ո՞ առաջին 'ի նմա օրինակ զայս կաշառաբեկ արար զժողովուրդն կամ զատեան դատաստանին. ըստ որում որ առաջին յԱթէնս արծաթ մատոյց դատաւորաց՝ ասեն զԱնիւտոս Անթեմիոնեան, այն՝ որ ամբաստանեցաւ իբրև մատնու Պիւղոսի 'ի կատարած մարտին Պեղոպոննէսեան. յորում ժամանակի տակաւին՝ Ոսկէ-դարի և հրապարակ անշաղախ՝ էր տեսանել 'ի Հռովմ քաղաքի:

Արդ անդանօր սակս բազումս 'ի մարմին իւր ցուցանէր Մարկիոս զբազագուամ պատերազմաց, ընաւից վեհագոյն նահատակեալ զամս եօթնևտասն 'ի զինուորութե. և Հռովմէացեցիք մեծապէս երեսս առնէին առաքինութեան առն, բանս արկեալ խօսէին ընդ միմեանս՝ իբրու որ պատշաճաւոր գոյնք իցեն շուք զնել առն և ընտրել զնա: Այլ իբրև օր ընտրութեանն հասանէր, և ինքն 'ի հրապարակ իջանէր մեծաշուք փա-

ուոք յառաջնոյ ղդաւ ունելով զՍինկղիտո_ սին՝ պարապեալ 'ի պատերազմացն. և յայտնի էր ամենայն ռամկաներեացն, զի յոյժ խնա_ մոսք և ժիրաժիրք երևեցան նոքա վասն Մարկիոսի. իբրև զայն ինչ յանկն արկանէր խուժանն, խորշեցաւ սարսեալ՝ և միա_ անգամ ուծանայր 'ի Մարկիոսէ, նա և խեթիւ ևս հայէր ընդ նա՝ զուցէ այնպիսի ոք այր ուսապետականն և իշխանատպանծ 'ի պատրիկս՝ յանկարծ բարձին այնմիկ ունէր եղեալ, զգլխաւորն այնուհետև յազատու_ թենէն անբաժ կացուցէ զժողովուրդն։ Արդ զայս զմտաւ ածեալ՝ հերքեալ մեր_ ժեցին զՄարկիոս. և իբրև 'ի ատեղին զայլս անուանեցին, ծանրացաւութեամբ լինէր Սինկ_ ղիտոսն, իբրու որ քան զՄարկիոս՝ ինքն առաւել թշնամանեցաւ։ Իսկ յայնժամ Մարկիոս ոչինչ զեղեցիկ և հեզաբար տա_ րաւ կրեցն. քանզի և էր իսկ բնաւորեալ առաւել ասպաս առնել ցասմնականին և սանձակոտոր մասին ոգւոյն, զոր մեծան_ ձնութեան մասն համարէր և արիութիւն. և ոչ ևս 'ի հանճարոյ բանին և 'ի դաստիա_ րակութեանն մարզից՝ զանդրձութիւնն և զհեզութիւնն առնլեաց, որ ընդ միմեանս խառնեալ և պատշաճեալ զքաղաքականն 'ի ներքս բերեն զառաքինութիւն բազմա_ գոյն մասամբ. և ոչ դարձեալ խելամուտ եղև նա՝ եթէ որում զհասարակաց գոր_ ծոցն բեռն հարկեալ իցէ և կենակից կեն_ ցաղակից մարդկան լինել հանդերձեալ ի_ ցէ, նախ քան զամենայն պէտք են նմա

փախչել յանձնապաստանութենէ, այն՝ որ բնականակից միայնութեան է, որպէս Պղատոն ասաց: Դարձեալ և պէտք են նմա՝ սիրող անյիշաչարութեան լինել և ժուժկալել 5, թէպէտ և շատք այսպէս արտաքսեալ ծիծաղեցին:

Այլ նա ցանկայր նոյն և մի կացեալ, և աննկուն և անդրդուելի, կարծէր խմն այնպէս՝ եթէ բնաւորին յաղթել և 'ի վերոյ կալ՝ զօրն տկարութեան քաղցութեան, և ոչ կերպք տուսուցել իւրեն մեղկաղէս և ափսոս, որ 'ի խռովէ և 'ի վատնեալ մտանէ անձին ոգւոյն՝ իբրև փուշք և այտուցմն 'ի վեր գնդաշունչ բարկութեանն փոքրանեալ գինդացուցանիցէ. ուստի առաջ և լի անձնապերճ խոռովութեամբ և բարդման խեթիւ ընդդէմ ժողովրդեան՝ այնպէս անդրէն եւս մեկնեցաւ 'ի վաղորդեայ անտի: Իսկ յայնժամ երիտասարդք 'ի պատրիկաց՝ քաջութեամբ զարմին յառաջադէմք 'ի քաղաքին՝ բարձրապարանոցք և անպարտականք, որ միշտն յօժարականքն 'ի Մարկիոս, և 'ի ժամուն առաւել ևս յանդուգնեալք յարեցան 'ի նա. և ոչ 'ի լաւութեան ինչ սակս եկեալք առ նա զգածմպէս ախտակիցք կարեկիցք, այնպէս առաւել ևս վառէին զհուր բարկութեան նորա: Քանզի և էր իսկ նոցա 'ի բանակի զօրաց Մարկիոս միանգամայն և զօրավար և վարժապետ 'ի մրցանակս, ձգէր ընդ միմեանս և այր զայրանք վառէր զնոսա 'ի նահատակութիւնս աննախանձաբար:

Յայսու ժամանակաւ գայր հասանէր 'ի

[illegible]

ընդ առաքելոցն գործել՝ առ որս լալ ըն-
կերպնաշաշուութիւն է, խեռնութեան խու-
ժանելին ճարպակ է 'ի ապառասպուռ կործա-
նումն հասարակաց: Քանզի ոչ եթէ շնորհս
համարեցաքին ողբս զայն և յանցանացն նե-
րումն՝ որով անսասանեցին զողբս յորշա-
ւանսն, և վասարանչեալք թողին լքին և
մեռան եղեն հայրենի քաղաքին, և զգամ-
բասանեան ընդդէմ ծերակուտին լռեան և
ընկալեան. այլ թէ մեք առ անհի երկիւղի
շնթեռմք ողջս և ընձեռեմք զոցս յայսպի-
սեաց առատ, ակն եւ կալցեն զողբս ցանկ-
մերում քաղցրութեան, և ապերասան
կրեցն վախճան երբեք չարասցեն և հեր-
ձուածոցն և ամբոխեցն: Վասն որոյ և մե-
ծի անմնութեան խոս կարծեմ ձեռն առալ
բանեխող այդմիկ: Իսկ արդ՝ եթէ խել ս'ի մեզ
խառնել կամէք եղեն, բարձցուք զժողովուր-
դապետութեան կարգ զոցա՝ որ տառապել է
առապէկ զհեղապատուացն զառապութիւն,
և երկփեղկեալ հերձու զքաղաքդ 'ի զե-
զեցիկ միութենէն՝ որպէս էր երբեմն յա-
ռաջնմէ, և կրճիմն արկանէ 'ի մեզ՝ հա-
մաչնչութեանս մերոյ և միաբանութեանս
մերոյ, անդուլ զաղէտաւդ և զխռովութիւ-
ունելով առ միմեանս": Իսկ շատ [illegible]
յայսպիսեաց առատ բարբառեցա. Մար-
կիոս, և 'ի նոյն բարբառ սքանչելապէս յան-
դուցանէր առ հասարակ զերիտասարդսն,
և վայրիկ մի և զծոխս քաղաքին առհասա-
րակ, որք ձայն բարձեալ առաւ այր զՄար-
կիոս կարդային 'ի քաղաքին՝ ախոյեան.

անպարտապանելը և անսասան ՝ի մեծարգահաճոյ
կրկեցն ։ Սակայն ՝ի ծերունեաց կէսք՝ կամ-
խառնեալք հանդերձելոցն ընդդէմ զարմանն
խորհրդոյն ։ Եւ արդեօք ոչինչ ՝ի լուսոյ
պատահեցան յետ այնորիկ ։

Քանզի ժողովրդապետացն՝ անդ մերձ կա-
ցեալք յառաջնոյն՝ անտի նոյն եւ թէ յաղթեաց
խորհրդոյն Մարկիոսի, ՝ի գուշակս վարեալք
խռովեցուցանեն ՝ի խուժան ամբոխն, ձայն
բարձեալ խրախուսայ առ հասարակ կարդային
ձեռն առնել նոցա ։ Իսկ եւ բազմութիւն խռո-
վեալ շուրջ կացեալ պատեցին զնոսա, եւ
նոքա զՄարկիոսն՝ բռնի ՝ի բռն պատանե-
ցին ուժով, վայրկեան մի եւ անխիղճ ժողովր-
դեանն ՝ի պատմութիւն բարեկութեան
խուժէին անկանէր ՝ի նորբջա ՝ի ծերակոյտ
ամբոխ, այլ հանդարտեցին ժողովրդապետացն.
միայն զՄարկիոսն բռնըք բարձեալ առա-
ջեցին կոչել զնա՝ գալ յանդիմանեալ պա-
տասխանել առնել վասն անձին ։ Իսկ նա
թշնամանօք մերժեաց զպատուիրակսն ,
մինչեւ նոքա չոքան հանդերձ հանճարա-
պետացն բռնի առնուլ ածել զնա ։ Ա՛յն
մինչ ձեռն մխեալ ՝ի նա , յարեան միաբան
պատրիկք ՝ի զօրավիգն նմա , յետոյ ընկըր-
կեալ վանեցին զժողովրդապետսն, եւ հա-
րուածս եւ ՝ի մերոյ հանճարապետացն
զնեցին ։ Եւ արդ այս աղմուկ անհնարին
եղեալ յայնժամ, քանզի երեկոյն ՝ի վե-
րայ հասեալ կայր ։ Իսկ այն մինչ յառաջա-
լուսին առաւօտն անտի հրապարակաւ՝ զի խու-
ժան ժողովրդեան զառաւօտակ սրտմտեալ՝

'ի կողմանց կողմանց 'ի հրապարակ անդր ընթանայր խուռներ, զանզի հարկաւոր վասն քաղաքին՝ 'ի մի վայր ընտրականացն խորհե-ցին. խորսս տային 'ի խորհրդոց մտանել ամբոխել հանդարտել ժողովրդեան հեղու-թեան բանիւք և մեղադրանօք կարգաց. զի թէ երբեք զգօնք էցեն և առաքինիք՝ չէ ժամու առնեն վասն փառաց պայքարելոյ, այլ 'ի քաղաքավարութիւն մեծահանճարոյ ժամա-նակին խորհրդոց 'ի ներքս խառնել առ-ժան է՝ ներողութեանց լի և մեղադրանացու-թեանց: Իսկ և քաղաքադոյնք հաւանեցան ընդ բանն, մինչ նոքա երկերայս առ ժո-ղովրդեան՝ բանիս անցաք 'ի մէջ արկեալ խո-սեցան, և զեղեցիկ ևս զաստուածանութիւն 'ի բաց քերեցին, և շարժմամբ ևս խորասա և զանգատս 'ի ներքս արկին նոցա: Իսկ յա-ղագս ցորենոյն գնոյ և այլոց վաճառուցն, բանն մի՝ ասեն՝ ամենեքին և արժան չէ խօսել:

Իսկ և շատք 'ի խուժանէն ամբոխեալք հանդարտեցին, քանզի և համառօտ և լռին ունկնդրութեան 'ի գէմս բերին նոցա զհեղգանալ սրտին և զպանդխտել. յարեան ա-պա ժողովրդապետք և ասէին, եթէ՝ չա-փաւորութիւն զեղեցիկ զոյգ ցուցեալ ծերակուտին, այնուհետև և ժողովրդեան ասելի տացեն նմա 'ի գէպս և յարժանս: Սակայն խնդրեմ՝ զի Մարկիոս մինչ յանն-գիտման լիցի պատասխանի առնել վասն անձին, և ասել՝ եթէ ոչ մինչ առաջնեալ լինի լիցէ ծերակուտին խառնել հարկանել 'ի քաղաքին և անհնար ժողովրդեանն լինել.

և թէ՝ ինքն անսասանեալ ոչ իցէ 'ի կոչ ժողովրդեանն. և թէ՝ առաջ 'ի հայրուածոյ անտի և 'ի թշնամանաց համբարառնայեացն յատենին՝ ինքնին խափանմանն պատճառք լեալ իցէ խաղմին այնորիկ և զինուորութեանն խուժանին։ Զայս ինչ խնդրեցին նոքա 'ի նմանէ, կամ զի նկուն առնել երեւեսցի Մարկիոս՝ և զբռնաւոր բարուցն հպարտեալ ընդդատանեսցէ զդատաւորութիւնն՝ առաջի հպարտեալ ժողովրդեանն. կամ թէ ինքն անկասկած ապերասանութեանն յորդն կացցէ՝ անշէջ այնուհետեւ զհուր վառեսցէ զդատաւորութեան խուժանին. և մերձընթացն մանաւանդ ակին ունէին նոքա՝ ուղղապահս խերեմնեա եղեալ բարոյից առնն։

Այլ եկն եւ Մարկիոս՝ իբրու պատասխա-խանել վասն անձին առնել. իբրև առ հասարակ 'ի լռութիւն դարձան ունկն դնել նմա, նա՝ յանդգնաբար որերոյն՝ որ բանս հեշտ և ողոքաւոր մտայինն լսել 'ի նմանէ՝ խօսել սկսաւ խոշորս և անձնախոտորս, և բանս զառաջախօսս. և քան պարզերես պատասխանատուութիւն՝ առաւել ևս տրտմաձայն էր բողոքանն, և զխրատկ երկեացն անժպիրհ և խոժոռադէմ՝ բարձրագոյն և արհամարհոտ, մինչչեւ անգութս գազանացեալ մղձկեցին ժողովուրդք, և ամենայն բանն ընթանոյ նոցա զժտութիւն էր նոցա, և ծանուցանութիւն լինէին 'ի խօսել նորա։ Յայնժամ Սիկիննիոս խրոխտ և խիզախ 'ի ժողովրդապետացն՝ իբրև վայրկ մի խօսեալ ընդ պաշտօնակցացն, եկն արձանա

ցաւ՝ բարբառեցաւ 'ի ձայն բարձր, եթէ ժողովրդապետքն ինքնին մահու դատապարտենք եռուն Մարկիոսի. և անդէն հրաման տայր համբարապետացն, առնուլ ածել զնա 'ի ծայր բարձրաւանդակին, և անդուստ փութապէս 'ի վայր 'ի վիհ անդր հոսել զնա։ Իբրև համբարապետքն դիմեցին ձեռն մխեցին 'ի նա, անդանօր և շատից 'ի խուժանէն քստմնելի երևեցաւ գործն և յայրատագոյն։ Իսկ պատրիկք յայնժամ համբուն յայլ խելս եղեալք և 'ի ցաւոցն մղձկեալք, մեծապէս սաստկութեամբ և աղաղակաւ զայրոյթ տուեալ դիմեցին ձեռն տալ նմա. կէսք բազուկ 'ի գործ առեալ՝ վանէին մերժէին զորս 'ի բուռն ունէին զՄարկիոս, և առեալ թափէին զնա յիւրեանս. և կէսք մատունս տարածեալ յողոք խուժանին անկանէին։ Եւ, քանզի յանհնարին աղմուկ շփոթից ոչ բան բաւական էր և ոչ աղաղակ, ապա բարեկամք և կարեւորք ժողովրդապետացն տեսեալ՝ եթէ զՄարկիոս 'ի վայր պատուհասին ածել չէր հնար առանց կոտորածի շատից պատրիկաց, ածին հաւանեցուցին զնոսա բառնալ 'ի պատուհասէն զդժպհին և զդժոխամբերն. մի բուռն առնել նմա, և մինչչև փութայցեն 'ի գլուխ ելեալ՝ մի 'ի մահ վարել զայրն, այլ ապատատան զկամենն 'ի քուեայս առնել խուժանին։

Յայնժամ հանդարտեալ Սիկինիոս, 'ի մէջ եկեալ հարցանէր զպատրիկսն, յոր դէմս նոքա զՄարկիոս 'ի ձեռաց հանեն

խռովութեանն՝ որ պատուհաս ածէ զնա : Իսկ և պատրիկք ընդդէմ դարձեալ հարցանէին. “ Եւ դուք ինքնին յոր դէմս 'ի պատուհաս անապատոյն և անխրատ այնպէս վարէք զայդ լաւ Հռովմայեցի և զքաջ, մինչև կորքեալ խռովանաց դատաւորանին”: Եւ պատասխանի Սիկիննիոս և ասէ . “ Այդ մեզ, բարբառք և ոչ մի կայցէ խռովութեան ձեր առ ժողովուրդդ . զձեր խնդիր դա ձեր չնորհէ ասացին, զի օրինօք զաա վարեսցի նորա : Եւ քեզ ինքնին ով Մարկիէ, պատուէր տամք յանդիման լինել հրապարակին յաւուրն երրորդի . եթէ քո ինչ անիրաւեալ ոչ իցէ, քանզի խաբ խեղամտօ արասցես զքաղաքացիսդ, որ քուեալս արկեալ դատեսցեն զքեզ”: Հաւանեցան պատրիկք ընդ պայմանն, և առեալք զՄարկիոս յիւրեանս՝ մտադիւրութեամբ մեկնեցան 'ի վայրաց անտի :

Այլ 'ի ժամանակի անդ աւուրցն երից հանդիպեալ համախոհութեան, (և առ ների Հռովմայեցիք զհամախոհութիւնն զայն յանձնայն ինն աւուրս, և կոչեն նոքա զայն Նոնդինայս) . արդ յայնժամ ակն ունէին պատրիկք զերծանել Մարկիոսի 'ի դատաստանէն 'ի պատճառս արշաւանին ընդդէմ Անտիացւոց, և թուէր ձգել երկայնել արշաւանին . որպէս զի և խռովութեանն հեղանալ և զհուր բարկութեան կարծել կամ թէ իսպառ շիջուցանել վասն անպատրաստութեանն և մարտի պատերազմին : Այլ իբրև փութանակի 'ի հաշտու-

թիւն բերեալք ընդ Անտիատացիսն՝ դարձան յետս, ըմ եղեն ահիւ պատրաստք, և առեալք յաճախս խմբեցան. դուռն գործէին՝ զինչ զՄարկիոս տարբերացուցանել, 'ի նոյն և 'ի խաղաղութեան զժողովրդապետսն և զժողովուրդն պահել: Ցայնժամ Ապպիոս Կղաւդիոս այր կարծեալ յոյժ ռամկատեաց՝ բողոք բարձեալ վկայութիւն դնէր, եթէ անձամբ անձին նոքա տապալեալ քակեսցեն զՍենկղիտոսն, և յաղէտս ամբոխս պաշարեսցեն զքաղաքն, եթէ երբէք նոքա զիջեալ իշխան զժողովուրդն գործեսցեն տալ քուէայ ընդդէմ պատրիկաց: Իսկ որք տուեալ հինաւուրց էին 'ի պատրիկս և ռամկասէրք, ներհակաբար ունէին զկարծիսն, եթէ ոչինչ արդեօք դժնդակ և անհաճոյր, նա հեզ և համեստ և մարդասէր յարդարեսցի խուժանն յիշխանութենէ անտի: Քանզի ոչ եթէ արհամարհեալ անարգէ զա զծերակոյտդ, այլ կարծէ իմն այնպէս արհամարհեալ առ 'ի նմանէ. վասն որոյ և 'ի շուք պատուոյ և 'ի մխիթարութիւն եղիցի դմա դատաստանդ այդ. որպէս զի և յառնուլ իւրում 'ի բուռն զքուէայսն, անդէն և 'ի բարկութենէն զիջեալ հեզասցի:

Արդ տեսեալ Մարկիոսի՝ զի 'ի մարանս տարակուսի պաշարեալ կայ Սենկղիտոսն, քանզի և մարդասիրեալ խնայէր 'ի նա. դարձեալ և երկուցեալ զանգիտէր 'ի խուժանէն, հարցանէր ցժողովրդապետսն՝ զի՞նչ ամբաստանութիւն ունիցին նոքա ա-

սել զնմանէ, կամ՝ վասն [ի՞նչ] իրաց 'ի դատաստան ածեն զնա առ ժողովուրդն. Իսկ նոքա պատասխանի ետուն, եթէ բռնաւորութիւնն է ամբաստանութեան մեղաւորն, և անշուշտ նա բռնանալ հաստատեալ է 'ի միտս. ամենքն վաղվաղակի յարուցեալ՝ մեծաղաղակութեամբ՝ ասէր՝ այնուհետև երթալ ժողովրդեանն, պատասխանի տալ վասն ամենայնի. քանզի և ոչինչ խոյս տալ յատենէայն կամէր դատաստանին և ոչ զարձեալ յատենէայն պատուհասէ՝ եթէ երբէք ըմբռնեսցի 'ի յանցանս. « Բայց թէ՝ ասէր՝ զայդ միայն ամբաստանութիւն կամիցիք զուր զինէն, և մի՛ ատեանքն ծերակուտիդ »: Իսկ հաւանեցան ընդ այսմանն, առաջ թոյլ երկ դատաստանին. իսկ երթեալ 'ի մէջ վայր խռնեցան խուժանն, անդ նոքա առաջին բուռն աղաչէին, զի ոչ ըստ խնդրեցին. այլ ըստ ցեղից նորին քուէարկութիւնն. և քանի ըղձեցին և զամբոխաւորսն և զաղքատութեան, ամբոխ աղքատաց և խառնակութեանց և որոց լաւութեանն փոյթ ինչ չէր նոցա՝ նախապատուէր յառաջ արկցեն զքուէարկութիւն: Բայց նոքա զամբաստանութիւն բռնաւորութեան մեղադրանաց 'ի բաց թողեալ՝ զոր ոչն կարէին ցուցանել, դարձեալ միւսանգամ զնոյն բանսն յուշ ածեալ յերդեցին՝ զոր յառաջագոյն յատենի խորհրդոյն ասացեալ իսկ էր Մարկիոս. և զի՛ արգել խափանեաց զգինեան վաճառել աղքատացն. և զի՛ խորհուրդս տայր նա խնդրելին լուծանել քակել միան-

զամենայն զժողովրդապետութիւնն 'ի սահմանէն Հռովմայ:

Դարձեալ և նոր առաքինաստանութիւն առաքինաստանեցին զնոսանէ, այն՝ զի բաշխեաց բաժանեաց զկարգուրս կարգարութեան՝ զոր հանէր նա 'ի սահմանաց Անտիոքացւոյն. ընթերց մատոյց 'ի հասարակաց գանձարանն, այլ բաշխեաց նա ողորմականսն որ ընդ իւր: Իսկ 'ի վերայ այսորիկ՝ ասեն, եթէ կարգի յայժ 'ի խոր խոնարհութեան Մարկիանոս. քանզի ոչինչ անձնականեաւ առատանէր, և ոչ եւս անդէն առ ձեռն զմասն նոցա բանիւ՝ խելամտութեան առնել զխոստմանն. այլ կարգէ 'ի գործութիւն էառ նա զողորմականսն՝ որ ընդ իւր չոգան, խոստմեալ խնդրոյն ընդ նա. քանզի բազմագոյնք այն էին՝ որ ոչն չոգան ընդ նմա: Այլ 'ի վախճանի՝ յորժամ զգուշացեալն եղաւն ցեղքն, երկիւղ չառի առնել՝ անդի եղխօս զատապաշտութիւնն. և էր պատուհաս զատաանկելոյն նորա՝ վտարանդութիւն 'ի քաղաքէն անդարձ:

Այդ 'ի հրապարակել զատաանկելոյն, երբէք 'ի յաղթութիւնս մարտից պատերազմաց ոչինչ այնպէս հրճուեալ ցնծացաւ խուժանն, որպէս յայնժամ խնդացեալ և խայտացեալ 'ի բաց մեկնէր 'ի վայրաց անտի: Իսկ զդաս Սինկղիտոսին յասասանեալ և սրտատրոփ առնել զորաւէր. տարջացաւ ապաշաւեաց և թախծէր, զի ոչ յառաջագոյն զամենայնն միաբանգամայն գործեաց և կրեաց, մինչև զթշնամանեան զայն թշնամանեալ էր 'ի խուժանէն, որ

[illegible]

խառնէր զնոսա հաւանեցուցանելութեամբ ամենեւ, մեծին, եւ փութացեալ ելեալ 'ի ամենեցն յուղի անկանէր 'ի դուռն քաղաքին, եւ ցայն վայր ուղեկիցք նորա էին առ հասարակ պարապորդք. անդրանոր Մարկիոս ոչինչ առեալ 'ի նոցանէ եւ ոչ խնդրեալ ինչ՝ այնպէս եւ պարապքս 'ի քաղաքէն, առեալ ընդդէմ զերկուս կամ զերիս յարդանեկաց իւրոց:

Այսպէս զօրեղին առեալ ասպար առկաւ 'ի կայլուածս սպարապաց իւրոց՝ անդ յուղէր ծփանս 'ի խորհուրդս բազմամբոխ, ազդեալ 'ի սպառնութենէ բարկութեան, ոչ զերծեցին ինչ եւ կամ այլուստ ինչ ունելով զկէտս նպատակին. այլ քաջալեր եւ հպարտ հնարէր քինահան համեմատեցուցանել ընդ: Այսպէս հասարակութեան 'ի միտս՝ ահագին զօրս պատերազմի եւ մեծամեծ առաւելութեամբ յաղթել շարժեալ ընդդէմ նոցա: Եւ շուրջ առաջին առ Վոլսկեանսն, իբրեւ որք առեալ էին հարուստ էին նոքա եւ յաղթք զօրութեամբ եւ ընչաւէտութեամբ. եւ զայն եւս զհետա ածէր՝ եթէ որ առեալ մի յառաջ ադեալ հարուածոցն, քան վառեալ զնոսա՝ առաւել մոլեգնեալ եւ զայրացեալ յարդարեցին զնոսա: Այդ էր յայնժամ 'ի քաղաքին Անտիոսաց Տուլլոս անուն Աւֆիդիոս՝ այր առաջ ընչաւէտութեամբ եւ քաջութեամբ եւ հոյակապ զարմիւն՝ իբրեւ թագաւոր կարծեալ 'ի մէջ ամենայն Վոլսկեանց: Գիտէր իսկ քաջ Մարկիոս՝ թէ առաւել քան զամենայն Հռովմայեցիս ատեալ նա զնա. քանզի թէպէտ զայն՝ թէ բա-

զօրամ անդամ նոցա այլ ընկերի արդարանա-լից ածեալ և ձայն տուեալ էին միմեանց մեծարանօք՝ ըստ որում քաղաքավարութիւնքն յերկարատարրաց հետամտութեան փառաց, 'ի վերայ այսր և թշնամութեան առանձնին էր նոցա ընդ միմեանս։ Յայսր ամենայնի վե-րայ՝ աւելեալ Մարկիոս զի այլ մեծանձն է Տիւղղոս և մեծախորհուրդ, և առաւել քան զքաջազգականութիւն ինքն մեծապէս ձեռայր քաղաքավարութեան ժամանն՝ համեալ 'ի հառ-մայեցաւոց զիջեալ առաւաղանացն, ինքնին եւ վկայութեան այնմ՝ որ ասացն. «Ընդդէմ բարկութեան մարտ եղեալ կատուել դժընդ-դակ է. քանզի զոր և կամեսցի նա՝ և կե-նօք չափի գնեսցէ»։ Քանզի արկեալ զիւրն զգեստ և համեղերձանս իմն այնպիսի յանն-ծանօթս 'ի տեսանելեաց, իբրու Ոդիսե-ւսն «Զղջուս եմուտ 'ի քաղաքն անդր ա-ռանց թշնամեաց» 6։

Էր ժամ երեկոյին, և թէպէտ և բա-զումք հանդիպեցան՝ այլ ոչ ոք ծանեաւ զնա։ Ապա գնեմ եղեալ զնայր Մարկիոս 'ի տուն անդր Տիւղղոսի. և անդէն մտեալ 'ի ներքս՝ յառաջեաց նստաւ առ կրակա-րանին լուռ և անշշունչ, և անդէն կայր հանդարտաբարոյիկ քողածիգ գլխով։ Զարմացան ընտանիքն, այլ ոչինչ իշխեցին 'ի բաց մեր-ժել զնա. զի և կերպարանն և անշշունչ լռութիւնն պատկառելի գործէին զնա. ապա չոգան պատմեցին Տիւղղոսի զայսն, մինչդեռ նա բազմեալ կայր յընթրիս։ Յարուցեալ Տիւղղոս և մատուցեալ առ Մար-

կլոս՝ հարցանէր ո՞ ոք իցէ և զի՞նչ այնոք ի-
ցեն նմա: Ցայնժամ Մարկիոս քօղաղերծ
եղեալ, և վայր մի լռիկ կացեալ՝ բարբա-
ռեցաւ և ասէ. "Եթէ տակաւին և դու
ո՞վ Տիւղղէ չճանաչես զիս, և զոր տեսա-
նեսդ՝ չհաւատաս, հարկ է ապա անձամբ
անձին ծանօթս տալ: Ես ինքնին իսկ եմ
Գայիոս Մարկիոս, որ տուգանս ածի ան-
հնարինս 'ի վերայ Վոլուսկեանց. և մակա-
նուանդ իմ զոր բարձեալ բերեմ՝ Կորիօղա-
նոս, ո՛չ ինչ ներէ ինձ յուրաստ լինել զայդ:
Բազմապէմ քրտանց և վտանգացն ոչինչ
այլ տարայ մրցանակ, բայց կնիք իմոյ առ
ձեզ թշնամութեանն զանուանդ զայդ:
Այդ միայն կայ մնայ ինձ աւադիկ անզըր-
ժելի. այլն ամենայն բարձաւ յինէն 'ի
մախանաց և 'ի խեռութենէ խուժանին,
և 'ի վատութենէ և 'ի մատնութենէ աւա-
գանւոյն և իմոց բարձակցաց: Արդ աւա-
դիկ վտարանդի եղեալ իմ՝ եկի առ քեզ
ողոքաւոր ընդ քոյին մարդակօք. ո՛չ անեւ-
կեանութիւն գտանել անձին և կամ փըր-
կութիւն, (քանզի առ ի՞նչ ապա եկեալ
էր իմ այսր, եթէ երկեաք երկուցեալ էր 'ի
մահուանէ), այլ 'ի ցանկութենէ ձգեալ
վրէժխնդրութեան տարապարտողացն. և զա-
մադիր լինիմ՝ զքեզ ինքնին տէր աւադիկ
իմոյ առնելով անձին: Արդ եթէ մարտ
խնդրես պատերազմի ընդ քոյ թշնամիս,
գործի 'ի ձեռն՝ ո՞վ քաջդ՝ զաղէտս իմ
առցես դու. և յիմ ձախողակ բախտէն
բաղդ գեղեցիկ պատրաստեսցես անհա-

ամրական Վոլուսկեանց : Մարտ եղեալ կատարեցայց 'ի վերայ ձեր այնչափ լաւ եմ՝ քան ընդդէմ ձեր, որչափ ինչ քան զան_ ուեղեակսն՝ լաւ եմ մարտիկներն որ ուեղեակքն իցեն իւրաց թշնամեացն : Ապա եթէ համայն և այսպէս ոչինչ քաջալերեսցիս, չէն և ինձ կամիք այլ զարկ ստանանել. և ո՛չ քեզ ինչ գեղեցիկ իցէ ապրեցուցանել զայր մի՝ երբեմն քեզ թշնամի և մարտապանիր, և զար_ գիս՝ քեզ անշահ և անպիտան": Զայսո_ ւիկ լուեալ Տիւղղոս՝ մեծապէս յանձն իւր զուարճանայր, և կալեալ զաջոյն նո_ րա, ասէր. "Արի՛ ով Մարկիէ, և քաջա_ լերեա՛ց դու. քանզի անձնատուր լինելով քո մեզ՝ մեծապէս բարի պատրաստեցեր մեզ. այլ մեօք դու ակնկալեալ մեծ եւս բարեաց 'ի Վոլուսկեանց աստի": Ապա ուտեալ մարդասիրապէս ժողովէր զնա. և յաւուրսն յայնոսիկ խորհուրդ 'ի մէջ առ_ նուին նոքա ընդ միմեանս վասն մարտի պատերազմի :

Բայց անդանօր 'ի Հռոմ քաղաքի աղ_ մուկ յուզէր պատրիկացն ընդ խուժանին, առաւել եւս 'ի պատճառս դատակնքոյն Մարկիոսի : Առ այս դարձեալ և հրէշս իմն գուշակականս ահարկուս զհամբաւի հար_ կանէին իղձք և գուշակք և քահանայք և տօնականք. յորոց զմին ասեն՝ օրինակ զայս : Էր յայնժամ Տիտոս Լատինոս ա_ նուն ոմն՝ ոչինչ ակնածուոր 'ի միջակայնոց անտի որերոյն. հանդարտեալ առանձինն, և մեկնեալ 'ի սնապաշտութենէ և առա_

նել նա յաղթապատուանութենէ ։ Այսու ե-
րեւութացեալ Արամազդ, հրամանն տայր
երթալ ասել Սինկղիտոսին, եթէ 'ի նուի-
րական հանդիսին յառաջ զոմն կաքաւիչ
արձակեցին նման յառաջոյ և անհամբոյր
յոյժ ։ Իբրև տեսեալ զայն երազս, զառաջինն
ոչինչ փոյթ տարաւ Լատինոս՝ որպէս ա-
սէր . այլ իբրև կրկնեալ և երեքկնեալ տե-
սիլն՝ անփոյթ լինէր, մեռանէր որդի մի
նորա լաւ և ընտիր, և անդամքն հօրն յան-
կարծակի լուծեալք հաշմէին ։ Ապա բար-
ձեալ զայն 'ի վերայ շալակի և եկեալ առ
Սինկղիտոսն և պատմեալ զտեսիլն, ասէ՝
եթէ վաղվաղակի հաստատեցան անդամքն,
և յարուցեալ գնայր ինքնին և ընթանայր ։
Այս եղեն սքանչելեօք աւագանին, և ճըշ-
գրիտ քննութիւն 'ի վերայ կարգեալ ի-
րացն հաստատութեան, զորին օրինակ զայս ։
Զծառայ իւր տուեալ ուրումն 'ի ձեռս
ծառայակցացն, հրաման տայր ածել զնա
'ի հրապարակ անդր 'ի հարուածս գանից,
և ապա սպանանել զնա ։ Նոքա մինչդեռ
տանէին զնա գանեալ և խարազանեալ,
նա առ 'ի ցաւոցն ընդ ամենայն կողմն ծա-
մածռեալ գնայր և շարժէր, գելոյր և
գալարէր անհեթեթս և անհամբոյրս . անդ
ըստ դիպաց զհետ նորա հանդիսացեալ
գայր Թափօր, և բազումք 'ի հանդիսակա-
նացն մեծապէս դժկամակ լինէին ընդ ան-
նուէր տեսիլն և ընդ անհամբոյր շարժ-
մունսն . սակայն և ոչ ոք վրէժխնդիր լի-
նէր, միայն յիշոցս և նզովս արձակէին ընդ-

գիտել աստուածաբանական վասն զանազանութեանս սրբու-
թեան : Քանզի սոյն ուսմամբ հինգն համաձայնեցաւ հեղինակութեան բազմաց ցու-
ցանելեօք ստ. ծառայոյ, և ընդդիմադրութեամբ ըն-
դէմ, և մեկնաբանութեամբ և համեմատութեամբ վարուց ընդ նոսա և կենդանւոյ կենդանագրութեամբ ըն-
դէմ ընդ նոսա : Եւ յանդգնութեան ծառայից մեծ են պատմիչ պատմութեան յայտնեալ այն էր, որոց ասմունք նորա պարապմանց ընդ մերձաւորաց վարդապետ զգօնութեան կատարեալ՝ որով համառօտագրել այնպիսի զգիտութիւն : Քանզի ծա-
ռայն 'ի պատանեկութեան յայտնեալ առաջնոյ յիշատակարանն և 'ի մերձաւորաց, անդրանիկ 'ի հնագոյն էր այժմու հեղինակ . և անուամբ կարգադրելին նորա Փորփիւրիոս, այն է՝ Երկ-
մուսակեր . զի զոր հելլենացիք Փիւրիւ-
դէս կոչեն և Ասորիք, այն է՝ Մալքոս և Նեղացի, համաձայնեցին ասեն՝ Փորփիւ այն է՝ Երկմասնեան : Ապա 'ի պատանեկ Լօ-
ղինոսի նորա աշակերտն, և 'ի նորա վարդա-
պետն վասն անհամեմատ և յետոյ կոչեցին՝ յառաջագոյն զնոյնպէս թագաւորին, կէսք յայտ-
նի յաւէտ ամենեցուն զգօնախորհրդութիւն զայն պատ-
մութեան ծառայից, զոր այնպիսի խորհրդա-
ծական վարդապետ ընդ հրապարակին՝ սոյնպէս ասացանելին զնա : Իբրև յայս ևս միաբանե-
ցան քննութեանք, պատմիչ պատմութեան 'ի մերոյ աստուածաբանին կատարեցին . իսկ ըղ-
ձալիքն զայն և զհամեմատ անդրանիկն նորա զանազան կատարեցին առաջնոյ :

Այլ մուծ մէ Նումենոս՝ իբրև ամենի-
մաստ հեղինակ պաշտամանցն նախնեաց-

նոցա, յորժամ գեղեցիկ օրինագրեաց նոցա 'ի բարեպաշտութիւն և զայն՝ զի 'ի կատարել անդր իշխանաց կամ քահանայից յաստուածայնոցն ամենից, յառաջոյ քարոզն 'ի ձայն բարձր գոչեսցէ. Հօ՜ ոճէ, այս է՝ Զարթուն: Որով և պատուիրէ նա՝ 'ի նուիրական յայն պաշտօն միայն ուշ ունել, և ոչ այլ ինչ գործ 'ի նոյն խառնել, և ոչ դարձեալ յայլ ինչ պէտս անպարապանալ. Խրատու որ շատք այն իցեն 'ի գործոց մարդկան, որ 'ի հարկէ և բանի յանդ եղեալ կատարեսցին: Բայց բնաւորեցան Հռոմայեցիք միաբանեալ զանձնել կատարել զնոյն զոհան և զհանդէսս նուիրականս՝ ոչ միայն 'ի մեծաց պատճառաց, այլ և 'ի դուզնաքէից: Քանզի եթէ երեւեալ մի 'ի ձգողաց անուր զնուիրական կառսն՝ զոր նոքա կոչեն Թենսա, խոնջ և պարապանեալ երևեսցի, սակայն եթէ և կառավարն ահեկան զերասանականն կալեալ իցէ, վճռաւորին միաբանեալ հանդիսին: Այլ և առվերջնականքն՝ կրկնեցին և երեքկնեցին և չորեքկնեցին եւ զնոյն զոհ մինչև ցերեսուն անգամ, քանզի ցանգ թերութիւն կամ խոչընդոտ թուէր նոցա հանդիպեալ 'ի նմա: Ա՛յսչափ ինչ պատակառ կային Հռովմայեցիք բարեպաշտութեանն յաստուածականն անդր:

Իսկ անդուստ Մարկիոս և Տիւղոս դառտաբար բանս 'ի մէջ արկեալ խօսէին ընդ մեծի աւագորերոյն՝ մարտ պատերազմի յարդարել ընդդէմ Հռոմայեցւոց, մինչ-

դեւ. նոցա զաշակերտսն զայլսն ընդ միմեանս :
Այլ եւ երանելի աստուածապաշտութեան ընթերցեալ զամա-
նակս՝ քանզի զսուրբ աստուածպաշտին աշակերտա-
նեալ էր երկամեայ, յանձնեալ աստուածային
կամաց 'ի վերայ երկնիցս 'ի Հայաստանեայց
աշխարհ. քանզի 'ի կատարածանաց կամ թէ 'ի
բանաստեղծութեան զրուցեալ նոցա՝ եւ առեալ
քարտէզ կայսերական 'ի Թէոդոսէ եւ 'ի մեծամեծաց,
որ առ Հայաստանեայս Վաղարշապատայ դարձեալ-
ցեալն 'ի Հայոց՝ երկրին արարողաց միջնորդ ա-
րեալն մնացեալ էր : Կէսք առեալ 'ի դասա-
նացն Մաշթոցի հանդերձեալ բանիւն, առ ա-
ստուածատուրն վասն աշակերտացն՝ երթալ առ
'ի ժամանակ Թարգմանչացն միաբանեալ
երկրին աշխարհել 'ի վերայ Հայաստանեայց եւ
'ի հայոց զաւակի զքաղաքն : Այդ 'ի քաղաքն
աստուածային զգուշութեան Վաղարշապատայ,
առաջնորդ եւ Տիգրանոս արձակեալ զամենն
եւ աստուածոց եւ դարձեալ զնոսա . եւ 'ի վերջին
հաստատեալ եւ զնոսա՝ առաջնորդ խնդ-
րել 'ի Հայաստանեայց զառաջնորդ եւ զքա-
ղաքն՝ զոր հաստատէ նոցա 'ի Վաղարշապատայ
'ի մեծամեծ աստուածապաշտին : Նորին զայն բնակն
Հայաստանեայցն 'ի հիւսիսակողմ աշխարհ, 'ի յա-
րանց բարձրացն . եւ առեալ աստուածախառնի՝ որ
թէպէտեւ առաջինքն 'ի գլուխ զկնմնադրութեան
ցին Վաղարշապատ, վերջինքն երկրին Հայ-
աստանեայց 'ի բաց գնաց զեկեղեցին :

Այսպէս ժողով մեծ 'ի մի վայր խմբեալ
Տիգրանոս, եւ սահմանեալ մնալ աստուածապաշտ-
ին, խորհուրդ առաջի անդրանիկ կոչել եւ
զՄաշթոցն՝ 'ի մտաւորական քաղաքին դարձու-

[illegible]

[illegible] ...ութիւն նոքա արտա- [illegible] ...Թեան և գոյից իւ- [illegible]

Զայս [illegible] Մարկիոս, [illegible]

նստուցաք ըմպելին, ոչինչ մխտատեաց նոցա։
Անեալ խաղաղ յաւուրս առնուլ զդատաւան
Լատինաց. ակն ունէր՝ եթէ անդամնօք ընդ-
նմա 'ի կախ կոչաւեացեն Հռովմայեցիք 'ի
մերայ Լատինաց նորդակակցացն՝ որք և ըստ-
ուեալ 'ի զօրավիգն կոչելն զնա։ Այլ
քանզի վարապատեալ էր նոցա, և հիւպա-
տոսացն ինքնին ժամանակ ակաւ 'ի մերայ
կայր 'ի բաց դէշխանութիւն զնել, ոչինչ
կամեցան նորքա վառանդել զանձինս, և պատ-
ուիրակք Լատինացն զատապարտանօք
զարձան։ Այսպէս Մարկելլոս հոգևորն առ-
եալ 'ի քաղաքս նոցա, և սասանեցուցանէր դո-
րութեանք հանեալ կապեալ զՏոլեկրինա-
ցիս, և զԿ կիկանեցիս, և զԳեղանեցիս և զԴո-
ղանեցիս՝ որք ընդդէմ զարձան նորա, 'ի
դերութիւն վարեաց զանդրանկն և զկինս
նոցա յաւուրս առնելոյ։ Իսկ անձնաւորք
որեսրոյն խնամ մեծապէս ածէր, և ընդա-
խակ անդրժելն ապահեալ զնոսա՝ 'ի բացեալ
յորժ 'ի նոցանէն բանակ հարկանէր և ըղ-
դուշանայր զատաւորն նոցա։ Իսկ յաւա-
րի էառ նա և զԳայլլաս քաղաքս՝ ոչինչ առե-
լի քան զհարկէր ապաստրեզ հեռի 'ի Հռովմ-
մայ, և աւար բազում աւարեաց 'ի նմա և
զամենայն զօրաւարս նորա զոդցեա առեալ
խողխողեաց, և Վոլուսկեանք 'ի քաղաքաց
քաղաքաց խորամանկեալք զինու զարդու
հասանէին առ Մարկելոս, խնդրու որ միայ-
նակ առաջնորդ զօրավար կայցէ նոցա,
յորժ ապա զհանգուել հարկանէր Մար-
կելոս ողջոյն ընդ Իտալիա, և յորժ պքան-

չացուց անուն քաջութեան նորա, որ 'ի փախել ուղղորջէ 'ի ուեղի միոյ միայնոյ առն՝ փափկութիւն նորապչանչ 'ի գործոն 'ի ներքս արկանէր։

Բայց հռոմայեցւոցն խոք յանկարգութեան կային, և երկէք խորախուսւեցան ոչ 'ի մէջ գալ ընդ նմա, համառաղառ 'ի համաշնչութիւնս ամբոխից Թևակոխելոյք և 'ի պայքարս այր ընդ ընկերի. մինչև լուր առեալ եթէ զԼաւինիոն պաշարեալ պատեցին Թշնամիք՝ մայր առանդից հայրենի դիցն Հռոմայեցւոց, ոստոսի և զերեանց ծագումն զիւռէին նոցա, առաջին քաղաք դաստակերտ Էնէասայ։ Անդ էր այսպասանել սքանչելի և յեղակարծ փոփոխումն մտաց զխուժանին, և յոյժ օտարախորթ և անկարծ՝ ըզպատրիկացն։ Խուժանն ըղձակաթ յանխնմամ առ Մարկիոս, զարձ անդաստապատառ խնդրէր զնորա կրկին 'ի քաղաք անդր. իսկ ծերակոյտն 'ի խորհուրդ մտեալ՝ ընդդէմ դարձան և արգելին։ Կամ զի պնդեալք էին նոքա ցանգ հակառակ ամբառնալ կամաց խուժանին. կամ զի ոչինչ կամեցան եթէ շնորհս նոցա կալցէ Մարկիոս վասն դարձին. կամ զի Թերևս ատեցին ևս զնա, իբրու որ ոչ յամենեցուն հարստահարեալ՝ առհասարակ ամենեցուն չարիս հասուցանիցէ, Թշնամի ամբարձեալ հայրենի քաղաքին՝ յորում լաւորեարն և աւագ ախտակից կարեկից էին նմա և 'ի միասին Թշնամանեալք ընդ նմա։ Այլ զխորհուրդ զայս զծերոցն կար.

գացեալ 'ի հրապարակին, ոչինչ այնու-հետեւ բաւական եղեւ խռովութեանն քուէրայ արկանել եւ սահմանն կարգել՝ մինչեւ հրա-մայեալ 'ի Սինկղիտոսէն։ Նորա այս ամե-նայն աղաղակի հասանէր առ Մարկիոս, զարմանացաւ յոյժ եւ 'ի խոր խոցեցաւ. ե-թող երկեք զաղաչաւորութիւն, 'ի սպառնաւորութիւն մեծ բարկութեան չու արար խաղաղ դէպ առ-ւելիզ զինեալց 'ի Հռոմ. եւ անդ մերձ 'ի խրամսն Կղիլեան բանակ հարկանէր քա-ռասուն ասպարէզօք 'ի բացեայ 'ի քաղա-քէ անտի։

Իսկ յերեւել անդ Մարկիոսի՝ արհաւիրք մեծամեծք եւ անճառ շփոթութիւն տարածեալ էր զբռնացեր զքաղաքն. սակայն եւ երկպառակու-թիւն հերձուածոյն լուծաւ յայնժամ. քանզի եւ ոչ յիշխանացն ոք եւ ոչ 'ի ծե-րոցն ոք ոչ ժամեցաւ այնուհետեւ ընդդէմ դառնալ 'ի դարձուցանել զՄարկիոս. այլ անդ յանկն արկեալ զկանանիսն յարակայս յայնիկայս վազելով ընթացեալ ընդ քաղաքն, անդ եւ զծերունիսն զաւս զաւս զերդարառու-բայեց 'ի մայլթանս հեծեալ 'ի մեհեանս, եւ զքաղաքայինսն առ հասարակ ընկեցեալ լուծեալ փարանեալ առ երս փրկութեան անձանց, քանզի իսկ սպա 'ի վերայ կացին՝ եթէ զերդերցին խորհրդով հանկարծուեցաւ խռովութեանն հաշտ առնել զՄարկիոս. Իսկ Սինկղիտոսն ինքնին խորհրդականօքս գլ-խաւ. յործամ հանդարտեալն լու էր, յայն-ժամ սպառնաւորութեան բարկութեանն ըն-կեցին առնէր եւ յիշաչար կրկին։ Այսպէս հա-

[illegible]

խանի. և արձակեալ զնոսա, և ինքն փու-թայէր չուոյ հրաման տայր բանակին 'ի գաւառէ անտի:

Եւ յայսմանէ առեալ առաջին ամբաս-տան լինէին զնմանէ Վոլուսկեանք. այնք՝ որք և անդստին ոչինչ կարացին հանդուր-ժել փառաց զօրութեան նորա, և խան-դային ևս ընդ նմա. այլ և Տիւղղոս ինքն-նին: Ո՛չ զի խէթ առանձին պատերազ-մաց ինչ նմա Մարկիոս, այլ զի և ինքն Տիւղղոս ընդ կրիւք գրաւեցաւ մարդկա-պէս: Քանզի և մեծապէս ցաւէր նմա, տե-սեալ զի բնաւ նսեմացան փառք նորա, և զանց զնովաւ առնէին Վոլուսկեանք, իբ-րու որ ամենայն ինչ նոցա Մարկիոս ինքն-նին իցէ միայնակ, իսկ այլոց շատ իցէ ա-ռաջանալ՝ որչափ ինչ նա տացէ նոցա: Ուստի և յուղեցան 'ի ծածուկ ամբաստա-նութիւնք զնմանէ, և ընդ միմեանս քրթմն-ջէին վասն նորա, և զչու զայն զբանակին՝ Մատնութիւն կարդային. ո՛չ զի դղեակս դքաղաքաց կամ զէնս զգինուորաց 'ի ձեռս մատնեաց թշնամւոյն, այլ զի ժամն և տուր եղև քաղաքախպութեան ժամանա-կին. որով որպէս զայլ ինչ, և զատոյն դար-ձեալ բաւական իցէ ոք փրկել և դարձեալ կորուսանել, դուլ տալով մարտին զա-ւուրս երեսուն. ուր և յաւուրս նուա-զուն՝ մեծաց ևս արդեօք մարթ իցէ պա-տահել փոփոխութեանց: Բայց և ո՛չ յայնժամ պարապորդ ինչ կայր Մարկիոս, այլ ասպատակ սփռեալ աւերէր զերկիր

պաշտօնաւորաց թշնամեացն, և տարածէր ձգէր յառաջադէմ առ սահմանօքն, և քաղաքս եօթն մեծամեծս և բազմաժողովս հաստատէր 'ի նոցանէ ։ Իսկ անդուստ Հռոմայեցիք ոչինչ համարձակեցան ձեռն տալ նոցա, այլ ողջք նոցա 'ի նուաստ յոյժ էին վատեալք և նուաղեալք 'ի կռուել, ոչինչ ընդհատք 'ի մարդկանէն՝ որ հաշմք էին և խեղանդամք ընդարմացեալք ։

Իսկ երբ ժամադրութիւն աւուրցն կատարէր, և Մարկիոս յերեւան հասեալ կայր հանդերձ բանակաւն, առեալ միանգամ հրեշտակս արձակեցին Հռոմայեցիք. յորդորք անկեալ ամոքել զդառնութիւն բարկութիւն նորա, և 'ի բաց զՎոլուսկեանսն տանել 'ի գաւառէն, և առնել և տալ՝ զոր միանգամ ինքն լաւ համարեսցի երկոցունց կողմանցն. քանզի և առ ահի երկիւղին Հռոմայեցիք անգի երբեք ոչ տացեն. այլ եթէ նմա այնպէս հաճոյ իցէ շնորհս առնել Վոլուսկեանցն, արասցեն՝ յօժարամ զինուորութեան լինիցին նոցա ։ Այլ Մարկիոս լուեալ զայս, ասէր՝ ոչինչ ամենևին պատասխանի ոչ առնել նոցա երբեք զօրավար Վոլուսկեանց. այլ երբ քաղաքայքն Հռոմայեցի խրատ և խորհուրդ 'ի ներքս մատուցանէ նոցա՝ ցածնուլ պարկեշտանալ 'ի խորհուրդս, և զկնի աւուրց երից դառնալ առ նա միւսանգամ և կամակատար խնդրոյն լինել՝ զոր յառաջագոյն ցուցեալ իսկ է նոցա. ապա եթէ այլազգագոյնս ինչ խորհեսցին՝ ոչինչ ան-

վրստանեղ լինելցի նոցա այնուհետև գալ անդրէն 'ի բանակ անդր՝ ժամանակավաճառ բանիւք շատախօսութեան։

Իբրև դարձան հրեշտակք և զբանսն Մարկիոսի պատմեցին, անդանօր ապա Սենեկլիտոսն՝ իբրու որ յանհագին մրրկաց և 'ի բազմակոհակն ալեաց քաղաքն ողջոյն ծփեալ էցէ՝ առնոյր ձգէր այնուհետև զնուիրական խարիսխն։ Քանզի որչափ ինչ յայնժամ 'ի քաղաքին դասք քահանայից աստուծոց կամ խորհրդակատարք կամ նուիրապետք կամ որք վարժապետք հայրենատուր և վաղնջուց հաւահմայ արուեստին, առ հասարակ զնոսա առեալ արձակէր առ Մարկիոս՝ հանդերձեալս զարդարեալս 'ի նոյն տարազ, որպէս նոցա այր այր օրինադրեցան 'ի նուիրագործութիւնս իւրեանց, աղաչել փարելի առնել՝ 'ի բաց 'ի նոցանէն տանել զկռիւ մարտին, և այնպէս ապա խաղաղաւէտ անդորրութեանց վասն Վոլուսկեանցն խօսել ընդ քաղաքացեացն։ Այլ Մարկիոս թէպէտ և ժողովել ժողովեաց զայս զաւուրսն զայնոսիկ 'ի բանակ անդր, ոչինչ հանդարտեալ ամոքեցաւ ոչ արդեամբք և ոչ բանիւք. կրկնէր երեքկնէր՝ կամ զխաղաղութիւնն հաստատել 'ի պայմանս դաշանցն՝ զոր խօսեցաւ, կամ 'ի կռիւ պատրաստել պատերազմի։

Իբրև այնպէս յետս դարձան նուիրական դեսպանք, լաւ համարեցան Հռոմայեցիք անդէն 'ի քաղաքին հաստատուն զտեղի ունել և պարսպացն պահակս հանել և

զգուշութիւն վանել, ակնկալեալ բազմահո-
լով ժամանակին և յարափոխ նորաստեղծ
բախտին. քանզի և կարէին իսկ ոչ յայն-
ժամ յաջողել՝ ի փրկութիւն անձանց, այլ
քաղաքն նոցա ողջոյն վեր 'ի վայր յուզեր
ծփայր, արհաւիրք լի և անբարի համբա-
ւովք. մինչև դէպ լինէր ինչ մի և յայնպի-
սեաց անտի ատեանել յայնժամ՝ զոր առէպ
վիպեաց ինքնին Հոմերոս. թէպէտ և խա-
ժամուժն ոչինչ այնպէս համօրէն 'ի վերայ
կայ ատացելոցն: Քանզի յորժամ այն քեր-
թող 'ի մեծամեծս և 'ի նորատեսիլս քեր-
թեալ՝ այսպիսի ինչ ասէ, եթէ “Նմա
յուշ դիցուհին ածներ խաժակն Աթե-
նաս“. և թէ՝ “Այլ շրջեաց զմիտս յան-
մահից ոմն, որ յուշ զհամբաւն ածէր խու-
ժանին“, և թէ. “Կամ ինքն խորհեցաւ
այնպէս, կամ թէ և Աստուած այնպէս
ազդեաց“. Խառնաղանձն լուեալ յայս-
պիսեաց ատի, ապերէ՝ իբրու որ անհնա-
րինս և անհաւատալիս 'ի վէպ առեալ Հո-
մերոս, անհաւատալի իմն կարծեցուցէ
զանձնիշխանութիւն մարդոյն, զոր երբէք
չառնէ Հոմերոս. այլ որ ինչ միանգամ 'ի
գործոց հատարակք և սովորականք բանա-
ւոր մարդկանն, զայն նա անձնիշխանու-
թեանս մերում տայ. ուստի և առէպ ա-
սէ. “Այլ ես ըստ մեծանձնութեան սըր-
տիս խորհեցայ“. և թէ, “Զայս ասաց.
և յոյժ ցաւեաց Աքիլլէսին. և սիրտն նո-
րա 'ի թաւամազ 'ի լանջսն՝ 'ի կրկին տա-
րակոյս երկփեղկէր“, և դարձեալ, “Սա-

կայն և ոչինչ կարող հաւանեցուցանել զքաղաքախորհուրդն զողջախոհն Բելլերօ-փոն»։ Իսկ որ ինչ 'ի գործս նոր և չքնաղ և օտար և խորհրդակորոյս, որոց գեղեցիկ իմն մոլութեան պէտք իցեն և այլ յայլմէ լինելոյ, առեալ նա յայնժամ մուծանէ զԱստուած՝ ոչ 'ի բառնալ զանձնիշխանութիւնն, այլ 'ի շարժել և 'ի խրախուսել. ոչ եթէ թինդս և թափս յաւելլով 'ի մեզ, այլ երևակութիւնս իմն զթափոցն զայնոցիկ ծնանելով 'ի մեզ. որով և ոչ եթէ ըզգործն ակամայ յարդարեացէ, այլ կամաւորին տայ ընձեռէ սկիզբն, և աներկիւղութիւն և յոյս ևս 'ի վերայ բարդէ։ Ապա թէ ոչ՝ կամ պարտ է գլխովին 'ի բաց զաստուածայինն օտարացուցանել միանգամայն յամենայն պատճառէ և 'ի սկզբնէ գործոց մերոց, կամ թէ՝ ո՞ր տպա այլ ինչ օրինակ իցէ արդեօք՝ որով սատար նոքա մարդկան լինիցին և գործակից։ Զի ոչ եթէ զմարմինն մեր զայս յօրինեալ կազմեալ 'ի ձև յարմարեն, և ոչ զարձեալ զձեռս մեր և զոտս մեր նոքա ըստ պիտոյից գործոյն առնուն և շրժշրժեն, այլ սկզբամբք առնամբք և երևակութեամբք և խելամտութեամբք արծարծեն գրգեն զհոգևոյս մերոյ զգործնականն և զանձնիշխանականն, կամ թէ ներհակաբար՝ յետս 'ի գործոյն նահանջեալ կասեցուցանեն։

Արդ 'ի տագնապ տարակուսին այնորիկ 'ի Հռոմ քաղաքի՝ կէսք 'ի կանանց հետևեալք ընթանային 'ի մեհեանս մեհեանս,

այլ բաղումք այն էին 'ի Նոցանէն և ակա֊
նաւորք՝ որք յողդք անկեալ պաղատէին ա֊
ռաջի բազմին կապետոլեանն Արամազ֊
դայ: Էր 'ի Նոսա անդ և Վաղերիա քոյր
մեծին Պոպղիկողայ, այն որ շահ օգտի
հարստութեան 'ի ներքս եբեր Հռոմայե֊
ցւոց 'ի կռիւս մարտից և 'ի կարգս քաղա֊
քաց: Այլ Պոպղիկողաս վախճանեալ իսկ
էր, (որպէս և յարձանագրութեան վա֊
ւերուցն պատմեալ է). իսկ Վաղերիայ մե֊
ծապէս էր շուքն 'ի քաղաքին. իբրև քաջ
իսկ Թևակոխեալ էր՝ մի Թերևս վասու֊
Թեամբ ինչ յամօԹ զշարմն առնել: Արդ՝
սա այս Վաղերիա անդանօր կիրս իմն կրեալ՝
զոր կանխեցի ասացի՝ աստուածային գոդ֊
ցես ազդմամբ վառեալ յինչ մի ալիտանի,
յարուցեալ յանկարծ և ընդ իւր խրախոյս
առհասարակ և կանանւոյն տուեալ, դէմ
եդեալ գնայր ընդ Նոսա 'ի տուն Վոլում֊
նիայ մօրն Մարկիոսի: Մտեալ 'ի ներքս, և
անդ գտանէր զՎոլումնիա Նստեալ 'ի միա֊
սին ընդ Նուոյն՝ 'ի գիրկս զողայսն ունե֊
լով Մարկիոսի. ապա շուրջ զիւրև բոլո֊
րեալ Վաղերիա զկանայսն, խօսել սկսաւ
և ասէ. "Մեք կանայք առ ձեզ աւասիկ
ով Վոլումնիէ և Վիրգիլլիէ՝ հասեալ կամք
առ կանայսդ, ոչ 'ի Սենկղիտոսին պատգա֊
մաց, և ոչ 'ի հիւպատոսին հրամանէ. այլ
քանզի Աստուած ինքնին՝ որպէս հաւա֊
նեալս եմ՝ 'ի գուԹ շարժեալ 'ի մերոց պա֊
ղատանաց՝ դրդեաց զմեզ դիմել առ ձեզ,
աղերսել զձեզ 'ի գործ ինչ փրկութեան

մերոյ և առ հասարակ քաղաքին. որ և ձեր ինքնին՝ եթէ 'ի հաւան գայցէք՝ քան ընդաներացդ. Մարկիոսացւոյ փառս տալով 'ի ներքս ընծայեսցէ. յորժամ նորա ընհարս խաբեանց և զայրս ատելով 'ի բաց 'ի կռուոյ մարտին լռեցուցին՝ առնել սէր և խաղաղութիւն: Ա՛հա դուք արիք ընդ մեզ՝ 'ի միաբան գնասցուք առ Մարկիոս. յաւրք անկեալ վկայութեան ճշգրտիւ 'ի ներքս բերէք, եթէ քաղաքս մեր այս առ 'ի նմանէն այսպիսի չարչարեալ՝ ինչ մի 'ի դժնդակաց ընդ ձեր առ զայրացս դատին չանցցոյց և ոչ խորհեցաւ երբեք. նա՛ զձեզ ողջեկ առնել դարձուցանէ առ նա՝ թէպէտ և անձն չունիցի ինչ առ 'ի նմանէն մարդասիրութեան »:

Զայսպիսաց Վալերիա, և առ հասարակ զոմեցին զնա: Իսկ Վոլումնիա ետ պատասխանի և ասէ. « Քաջ իսկ 'ի հասարակաց աղէտսն և մեք ինքնին մեկ կամեսցուք՝ բաժանորդք եմք: Սակայն և կերպ եւս մեզ սեփական առանձին; իբրեւ որդւք մնացուք մեք առաջին յառաջինութեան և 'ի փառաց Մարկիոսի. և զայրոյթս զօրացեալ դառնա բաժ կալեալ են թշնամիք, քան անձնապահապետս նմա ընձեռ՝ տալով եւս պատճառ զբռնութեան ունել: Այլ անձնարքին ազէտք այն են, զի քաղաքդ ասպատակ յաւուրց պատերազմ կայ՝ որպէս զի և զբերդս կալ 'ի մեզ 'ի կանայս առնէ ապաստան: Քանզի և գիտեմ իսկ ոչ արդեօք՝ եթէ փոյթ ինչ զնէնէջ արասցէ Մարկիոս, որում փոյթ

չէ նմա վասն հայրենեացն՝ զոր քան ըզմայրն ինքնին առաւել համարէր և քան զամուսինն և քան զորդեակս ։ Այլ համայն և այնպէս առէք դուք զմեզ գործի 'ի ձեռս և տարայք առ նա. անդանօր ասա՝ եթէ և այլ ինչ ոչ, գոնեա 'ի պաղատանս վասն հայրենեացն վայրիկ մի ոգի առցուք մեք ". Ասաց, և զՎիրգիլիա յոտին կանգնեալ՝ և զմանկունսն առեալ հանդերձ այլովք կանանեօք, այնպէս գաս կապեալ առ հասարակ գնային նոքա 'ի բանակ անդր Վոլուսկեանց և մերձենային ։

Յայն տեսիլ և Թշնամիք ինքնին գորովեալք՝ պատկառ կային լուռ և անշշունջ ։ Իսկ 'ի ժամուն կայր բազմեալ Մարկիոս յիւրում բեմի 'ի միասին ընդ զօրապետայն. իբրև անդուստ յակն արկանէր ըզգալուստ կանանւոյն, յոյժ հիացեալ կայր. իբրև և զամուսինն ետես և ծանեաւ՝ որ յառաջոյ ընթանայր, ընդ անձին ոգորէր՝ անդրդուելի զտեղին ունել և անողոքելի յիւրում խորհրդեան. սակայն 'ի կրկին յաղթեալ խռովեալ ընդ տեսիլն՝ ոչինչ հանդուրժեաց այնուհետև կալ մնալ այնպէս մինչև 'ի մօտել նոցա առ նա. արագ արագ մեծաքայլ 'ի վայր վազեալ 'ի բազմոցէն՝ ընթացաւ յառաջ, և առաջին մօրն գիրկս ածեալ՝ այնպէս հարուստ մի ժամանակ, ապա յետ այնորիկ և ամուսնոյն և զաւակացն՝ գերարատօր սաստիկ հեղոյր Մարկիոս, և ոչ դադարէր սիրել գգուել զնոսա, այլ իբրև յուղխից հոսանաց այն֊

պէս ամենայն ընկերք նորա 'ի կռւոյ սպանային: Իսկ իւրքն զերծ ցանկութեամն ընդոր, և մնացին անվնէն խօսել կամէր, եւ կոչել զառաջաւորսն Վոլուսկեանց՝ և կայր 'ի լռել:

Յայնժամ Վոլումնիա բարբառեցաւ և ասէ. « Յոր առանձնական առնել կարգոյց զմեզ 'ի մերում իսկ առան քոյին վտարանդութեան, և առանց ինչ մեր խօսելոյ դու ինքնին ո՛վ որդեակ քաջ իսկ խելամուտ ես 'ի մերոց աստի ձորձոց և 'ի վշտահար կերպարանէ մարմնոցս: Եւ արդ մեք զիր, զինչ որ հեղեցաւ յայժմ եկք մեք առաւելեալ քան զամենայն կանանայս. քանզի որ զուարթութեան մեզ հասանելոյ լինել տեսանելն, նոյն առաւելեալ ըստ ձախողակ բաղդին՝ ահարկու յայժմ է. իւրքն եւ զորդի տեսանելոյ, և առ ինքն՝ զայր, որ զպարիսպս զիւրոյ հայրենի քաղաքին պաշարեալ նստի: Եւ որոց յայլոց մխիթարութեանց՝ 'ի ձախողակման և յաղջեաս վշտին յաղօթսն խնդրեանց առ աստուածս՝ ընդոց իսկ անպատճ եմք. զի և հնար չէք աղօթիցք խնդրել յաստուածոց միանգամայն յաղթութիւն վասն հայրենեաց և փրկութիւն վասն քո. այլ որչափ ինչ խնդիրք թշնամեաց ընդդէմ մեր, նոյն խառնեալ է և յաղօթս մեր. քանզի հարկ 'ի վերայ կայ կամ 'ի հայրենեացն և կամ 'ի քէն զրկանալ որբանալ քոյին զաւակաց և քոյ ամուսնոյն. զի վասն իմ չխնդրեմ կեանս՝ տեսանել զվախճանն մարտիս: Այլ եթէ 'ի հաւան չգայցես՝ 'ի բաց զինէ թողեալ և զկապ՝ զալ 'ի միաբանութիւն

և 'ի միամտութիւն , և քան օրհասաբեր միումն՝ առաւել ես լինել բարեգործ երկոցունց ես կողմանցն , դիտասցես քաջ՝ զի չէք քեզ հնար անցանել առաւել զհայրենեաւն՝ մինչև քո նախ առաւթուր զմարմին կոխեալ զվախճանելոյ մօրդ . և աստէն իսկ դու 'ի դոյն պատրաստեա՛ց : Քանզի և ոչ առուրն սպասեմ տեսանել՝ յորում նշան յաղթութեան կամ հայրենիք կանգնեսցեն յիմ որդւոյն վերայ , կամ որդին իւքնին՝ 'ի վերայ նորա : Եթէ իմ՝ չարաւ Վոլուսկեանց խնդրեալ էր 'ի քէն ապրեցուցանել զհայրենիսն , իբր մի 'ի դժնդակաց և դժուարինս խնդրեի արդեօք . քանզի չէ արժան զհայրենիսն տապալել , չէ իրաւ և մատն ապաւինելոյն լինել . այլ մեք զարդիս միայն յաղէտից ատոր աղերսեմք անձնապուր լինել , որ և փրկաւէտ արդեօք երկոցուն կողմանցն , այլ եւս գեղեցիկ և շքեղ վասն Վոլուսկեանցդ . իբրու որ յաղթականք՝ զվեհագոյնսն 'ի բարեաց շնորհեսցեն մեզ , զխաղաղութիւնն ասեմ և զբարեկամութիւնն . և դոքա իւքնեին ոչինչ պակաս կալցեն քան զմեզ : Եթէ այդ երբէք յաջողեսցի , դու իւքնին եղիցիս պատճառք բարեաց . ապա թէ այլազգագոյնս՝ դու իւքնին բամբասեսցիս յերկոցունց կողմանց : Սակայն և անյայտ գոլով ելից պատերազմիդ այդորիկ , այս իմ յայտնի կայցէ . զի թէ յաղթեսցես՝ այր անյուշ և աղաջուր լինիցիս քոյին հայրենեաց . ապա եթէ յաղթեսցիս՝ համարեսցիս այր բար-

քոյ յաղթութիւնդ գեղեցիկ վասն հայրենեացն՝ օրհասաբեր է վասն իմ. բայց 'ի քէն միայն յաղթեցայց ես": Զայս ասաց, և առանձին ապա վայր մի խօսեալ ընդ մօրն և ընդ կնոջն, արձակեաց զնոսա 'ի Հռոմ՝ զոր և խնդրէինն իսկ:

Իբրև այգն մերկացաւ, 'ի բաց 'ի վայրաց անտի առեալ խաղացուցանէր զբանակն. և անդ Վոլուսկեանք ոչինչ միապէս մտաբերէին 'ի ժամուն: Կէսք այպանեալ եպերէցին զայրն և զգործն գլխովին. և կէսք դարձեալ որ 'ի հաշտութիւն անդր հակամիտեալքն էին՝ անբամբաս կալան առհասարակ զգործն և զգործօնն. և շատք ևս՝ որ թէպէտ և ընդ գործն չհաճեցան, այլ և ոչ սրտնեցան ինչ ընդ Մարկիոս, իբրու որ արժան 'ի մեծաց պատճառաց հարկաւորեցաւ 'ի ներել: Բայց ընդդէմ դարձեալ և ոչ ոք՝ առհասարակ զհետ չոքան նորա, քան ընդ իշխանութիւնն՝ զարմացեալք ընդ առաքինութիւն առն:

Իսկ եթէ քանիօն էր ահ երկիւղին և վտանգ Հռոմայեցւոց ժողովրդեանն 'ի մարտին յայնմիկ, քաջ իսկ ցուցին նոքա յազատանալն իւրեանց: Քանզի անդէն որք 'ի վերայ պարսպացն կային՝ իբրև զչուն տեսին զբանակին, արագ արագ ընթացեալք՝ բացեալ միանգամայն զամենայն մեհեանն՝ պսակս բոլորեցան և զոհս կատարէին, իբրու որք յաղթութիւն մեծապէս տարեալք իցեն: Եւ անդ 'ի դրդել և 'ի դըղգուել ծերակուտին և խառնաղանճ խու-

ժամերն զկանանցն զայն՝ անպատուել զքն-
ծաղու քաղաքին, և ձայն բարձեալ՝ պատա-
ճառք և առաւել փրկութեան առ հասարակ
կարգադրայքն զնոսա ։ Այսպէս երբեմն և Մինուկի-
ոսեան մշիրս սրայր, զամենայն զինուորս ըն-
կանանենյն ընթերցել խոկանացն 'ի շուք նո-
ցա և 'ի պատիւ պատուականացն, ուրեմն այլ
խնդրեցին նոքա՝ բայց մեհեան մի կանգ-
նել Կանացի Բաղդին, յանձանց երկերանց
զծախսն տալով զշնորհութեանն. այլ զնուէ-
րադարձութեանցն սակս և զքաղաքավարու-
թեան պատուոյն սատարութեան՝ Գիւխոսականն
առնացէ ։ Բայց Մենեկղէսոսեանն զաւեւել զքա-
ղաքութեան սորա կանգնեցին, 'ի հասարակաց
անձանց զանձաբարանէն կանգնեցեր մեհեանդանոյն
և զատուծարն և զարձանն. սակայն և կա-
նայքն ինքեանք հանդամանեալ զարձանն՝ կանգ-
նեցին և այլ դրօշեալ երկրորդ ։ Եւ զայս
դրօշեալ 'ի կանգնել անդ 'ի մեհենին՝ ա-
սեն հռոմայեցիք բարբառեալ այսպիսի
ինչ. Աստուածահաճոյ կրօնաւորութեամբ զիս
ով կանայք նուիրեցէք. և զայս ձայն երկիցս
լսել երդեալ կցկցեն նոքա. և կամին նոքա
զանհնարինս ունանց նմանն լինել և զդժուարա-
հաւատալիս հաւանեցուցանել մեզ ։

Քանզի զդրօշելոցն քրտնեալ երեւել հաւել
և արտասուս թափել և կաթս իմն արիւնա-
րանգս ասիրաել՝ չէ ինչ անհաւատալի ։ Քանզի
փայտք և քարինք բազում անգամ առնու
յինքեանս ժողովել ձգեն՝ պատաձնաւք
խոնաւութեան ստացկութեանն. շատ ինչ և գոյնս
արձակեն յիւրեանց, որք և ներկեն և ե-

բանիւք սաստկաւ տաղտկալիցն 'ի չքմեղանս օ-
գտին. որովք և խօս ինչ նշանակել 'ի Քա-
ղքին՝ ոչինչ արդարև արդիւնաւորս կարծել:
Այլ այս գործելով՝ մարթի և ձայն մի նման
օրինակ ծիծաղոյ և հեծութեան՝ արձակել
դիւրաշէկելոցն՝ 'ի խորտակելոյ անտի կամ 'ի
սաստկիկ ձեռքելոյ մասանցն՝ որ 'ի խորս
անդ նոցա: Սակայն յօդուածոր ձայն և
բարբառս այսպիսի յաստակամձայն և անմիթար
և պարագայից հնանդիմել յանհամաձայնաւոր
նիւթեան՝ բնաւ իսկ յանհնարինցն է: Քանզի
ոք և ոչ հոգին և ոչ գործելով Աստուած՝
անձրած 'ի դարձուցաներոյ մարմնոյ և որ
բարբառաւորականն մասնաւորացն յարմարելով
զատնելով ոչ իցէ, ձայն արձակել բա-
նական իցէ և խօսել բարբառաւել: Իսկ ուր
ուրեք պատմութիւնն ստիպեսցէ՝ կարծի մեզ
հաւանել մեզ 'ի բազմաց անտի և յարժանա-
ւոր վկայից, յայնժամ ասել անհնարին իմն
զզայութեանս մեր այլազգի կերպ նեղանդո-
ծելով յերեւակայականն հոգւոյն՝ այնպէս տալ
մեզ կարծեցուցանել. բաստ որպէս և մեք
ննջմունս յերազի կարծեմք լսել՝ զոր ոչն
լսեմք, և տեսանել՝ զոր չտեսանեմքն: Հա-
մայն և այնպէս՝ որք միանգամայն ջերմեռանդս
մեռանձնութեամբ և ախտով վարելով են յԱս-
տուած, չկարեն ինչ մի յայսպիսեաց ստ-
ուգ անհաւատանիմ և կամ մերժել երբեք,
և հաստատոց խարիսխ ասենեն զօրավիզն՝
զմեծն զայն և զմեծանշնորհն և զաննմանականն
մեզ զԱստուծոյ զօրութիւնն: Քանզի եր-
բեք իմիք 'ի մարդկայնոց նման նա նմանի

չէ, ոչ 'ի բնութեանն, ոչ 'ի շարժմանն, ոչ յարուեստին, ոչ 'ի զօրութեան. ուստի եթէ և ինչ մի արարացէ յանդգործելոյն մերոց և զանհնարինն հնարաւորեսցէ՝ չէ ինչ առարակելի: Նա աւանիկ յամենայնի 'ի մէնջ ընդդհատ՝ մեծապէս յոյժ նա 'ի գործս իւր աննմանն է մեզ և օտար զգլխովքն: Սակայն և շատ ինչ իրք՝ ըստ Հերակլիտոսի՝ 'ի մէնջ անծանօթք սպրդեալ փախչին վասն անհաւատութեան մերոյ:

Իսկ իբրև դարձաւ եկն Մարկիոս յԱնտիատն 'ի բանակէ անտի, Տիւղղոս՝ որ ատեայր զնա և դժոխացեալ ևս էր նմա ան երկիւղի առն, խորհեցաւ վաղվաղակի սպանանել զնա. իբրու որ զայն դէպ ժամանակ եթէ 'ի ձեռաց հանցէ, ոչ ևս այլ բաւական իցէ գտանել: Այսպէս իբրև շատ զօրս յուղեաց և յարոյց ատեան Մարկիոսի, հրամայեն տալ նմա 'ի բաց զիշխանութիւնն դնել, և Վոլուսկեանց յանդիմանն համար տալ զգործոյն: Երկուցեալ Մարկիոս իբրև զմի 'ի ռամկականաց լինել 'ի ժամուն՝ յորում զօրավարութեանն երկեալ էր Տիւղղոս 'ի մէջ քաղաքայնոցն, եւ պատասխանի՝ 'ի բաց զիշխանութիւնն դնել, յորժամ և Վոլուսկեանք հրամայեսցեն. իբրու որ 'ի հրամանէն նոցա առ հասարակ կալաւ զիշխանութիւնն: Բայց 'ի համարոյն ոչինչ խուսափէր՝ անդէն իսկ տալ Անտիատացւոցն եթէ կամեսցին: Իբրև առ հասարակ 'ի մի վայր խմբեցան, յարեան ատենաբանքն խռովժանին զրգռել ընդդէմ նորա. իսկ իբրև

յարեաւ և Մարկիոս, անդ 'ի շուք մեծարանաց երեւայց առն՝ այնպէս 'ի լռութիւն հեզութեան հաստաւ խուժանն, որպէս զի և համարձակ աներկեւանութեամբ խօսել Մարկիոսի. անդուստ և Անտիացիք որ միանգամ քաջախորհուրդք 'ի նոսա և խաղաղասէրք՝ յայտ առնէին մարդասիրապէս լսել նմա և ուղղութեամբ դատել: Բայց երկուցեալ զանգիտէր Տիւղլոս 'ի պատասխանատուութէ Մարկիոսի, քանզի ճարտարախօս յոյժ էր այրն: Առ այս դարձեալ և առաջին նահատակութիւնք առն մեծապէս սատար էին՝ քան զոռնհարութիւն վերջին ամբաստանութեան 'ի խաստուն. նա՝ և այն գլխովին վկայութիւն էր մեծութեան արգասեաց առնն, քանզի և ոչինչ արդեօք կարծէին զանձինս անիրաւեալք վասն ոչ ընդ բուռն զՀռովմ ունելոյ, եթէ 'ի Մարկիոսի ձեռն չէր նոցա առ դուրս ունել զնա: Ապա ոչինչ լաւ համարեալ երկայնել ձգել և զխուժանն սադրել հրապուրել, այլ որք առաւել յանդգունք 'ի սատանան Մարկիոսի բողոք բարձեալ և աղաղակ, իբրև չէ արժան դմա ունկն դնել, և ոչ մատնոտու առնն թոյլ տալ բռնակալել 'ի վերայ Վոլուսկեանց, և զի և յանձն չառնու դա մերկանալ յիշխանութենէն, խուռն և համբուռ դիմեցին 'ի վերայ առն և զնա անդէն խողխողեցին. և ձեռն տայր նմա 'ի ժամուն և ոչ ոք: Իսկ թէ բազմադոյնք ոչինչ հաւանեցան ընդ գործն՝ յայտ արարին, զի 'ի քաղաքաց քաղաքաց խուռն-

ընթացք հատանէալք 'ի վերայ մարմնոյն՝ առնին և շարժել թափեցին զնա . և զշեղեալ նորա երբեմն զքաջամենապատիկ ման և զզօրավարին՝ զինու զարդու և 'ի կապուտ կողոպուտ յօրինեալ զարդարեցին :

Իսկ երբև լուր 'ի Հռովմ հասանէր մահուան Մարկիոսի , ոչ շէջ կերպարան 'ի դէմս բերին առ նա և ոչ զպարկեշտութեանն , այլ թողլ եռանն անկելոց քաղաքին՝ որ կամեցան՝ սուգ առնուլ զամիսս տասն բոլոր որում և սովորութիւն էր նոցա խարազանչեալ առնել 'ի մահու հօր և զաւակի և եղբօր . քանզի և այս սահման ժամանակի կնքեցաւ երկայն սգոյն 'ի Նումայէ Պոմպիղեայ , որպէս 'ի նորա պատմութեանն յայտ արարեալ է : Բայց յետ այնորիկ երք Վոլուսկեանցն յոյժ հիքացեալ՝ Մարկիոսի խղճ լինէին . քանզի առաջին ընդ Սիկանացւոց 'ի վաճեր եկեալ ընդ Նիզակակցացն և բարեկամացն վասն զօրավարութեան , մինչև վէրս և մահուանս 'ի վերայ եդին միմեանց . ապա և 'ի մարտի պատերազմի նկունն 'ի Հռովմայեցւոց եղեալ՝ անդդիմապատասն անկանէր Տիտղոս և առ նովաալբինոսիր զօրականին . մինչև 'ի պայմանս անարգաբար հաշտեալք՝ նուաճեցան ընդ ձեռամբ նոցա , և յանձն առին կատարել զպայմանս հրամանին նոցա :

ԶՈՒԳԱԿՇՌՈՒԹԻՒՆ

ԱՂԿԻԲԻԱԴԵԱՑ ԵՒ ԿՈՐԻՈՂԱՆՈՍԻ

Արդ առդ կարգեալ մեր առաջիկ ըզ-գործս նահատակութեան գոյա, զոր միանգամ պատմութեան և յիշատակաց արժանիս համարեցաք, է մեզ զարդիս տեսանել՝ զի պատերազմականն մրցանկք երկաքանչիւրոց գոյա ոչ շատ ինչ առդեզք 'ի միոյն կողմն ձգեն զմեզ կշռոյն. քանզի հաւասարապէս երկոքեանն գործս բազում արութեան քաջութեան, բազում ինչ և արուեստից հանդէս և հմտութեան՝ 'ի զօրավարութեան 'ի դէմս բերին ։

Բայց թէ թերևս ոք զԱղկիբիադէս ինքնին՝ որ ընդ ծով և ընդ ցամաք 'ի մրցմունս բազումս՝ յաղթութիւնս առեալ 'ի գլուխ տարաւ և նահատակութիւնս, խնդրեսցէ վեհագոյն ընծայեցուցանել զօրավար ։ Սակայն և երկաքանչիւր դոքա յորժամ մերձ

կայլին և զօրավարեսցին, յայտնի արդար ցանոց զգեղեցիկս նա հասարակեցան երբ ընտանեացն. և յայտնագոյն եա՝ մատնեալք հարուածե-ցան՝ յորժամ նոքա 'ի բացեայ էին։

Իսկ զքաղաքականութեան կարգ զԱղ-կիբիադեայ՝ իբրու կարի մեծի և գեղեց և ոչինչ անարատ 'ի ցոփութենէ և 'ի շողո-քորթութենէ 'ի շնորհս քաղաքավարեալ խուժանին, որք ողջախոհք այպանեալ խառնեցին։ Իսկ զՄարկիանն զանհամբոյրն զայն և զսէգն և զակերձն և զխէթն՝ յոյժ ատեաց ժողովուրդ Հռոմայեցւոց։ Այլա և ոչ մին 'ի նոցանէ գովանի է։ Բայց որ միաբանեալ շնէթէ և մարդահաճէ խուժա-նին, նուազ արդեօք բամբասելի իցէ քան զնոսա՝ որք առ չերկնչել մարդահաճոյք՝ ընդ-վայր հարեալ ռանհայր լիցին խուժանին։ Քանզի արդեօք անարգ իցէ մարդելուղու-թեամբք անկարծելին, խնդրել իշխել 'ի վերայ նոցա. իսկ ահաբեկութեամբն բռնանալ 'ի վերայ և հարստահարել և նեղուն առնել, ոչ անարգ միայն իցէ՝ այլ և անիրաւ։

Այլ 'ի քաղաքավարութեան կենացն՝ քաջ իսկ պարզ և անկեղծ էր Մարկիոս և անշար. իսկ Աղկիբիադէս 'ի քաղաքական-նութեան իւրում խորամանկ և նենգա-ւոր։ Այլ մեծապէս ամբաստանեն զչա-րաբարութիւն նորա և զնենգն, յորժամ խորամանկեալ զՂակեդեմոնացւոց հրեշ-տակսն՝ որպէս Թուկիդիդէս պատմէ՝ եղծ զխաղաղութիւնն։ Սակայն և այն քաղա-քականութիւն արար՝ Թէպէտ և անզգէն

[illegible]

[illegible]

զոր օրինակ Արիստիդէս մեծապէս 'ի գովութիւն առեալ է՝ յոր ինչ միանգամ գործեաց նա ընդ Թեմիստոկղէս, զնոյն և Աղկիբիադէս՝ ինքնին մերձ եկեալ առ զօրավարսն որ չէին իսկ նորա բարեկամք, և կացեալ խօսէր նոցա զարժանն և խրատէր ուսուցանէր: Իսկ Մարկիոս յառաջ զամենայն զքաղաքն առեալ յաղէտս պաշարէր, այն՝ որ ոչ յամենեցունց արդեօք կիրս կրեաց. որպէս զի և լաւարերարն անդ և աւագ՝ իբրև զոյգ նմին անկրաւեալ այնպէս կարեկից ախտակից լինէին առնն: Եւ առ այս՝ և բազում հրեշտակութեամբք և խրնդրուածովք՝ որք ապաքինեալն խնդրէին զոխ բարկութեան նորա, ոչինչ ամոքեալ հեզացաւ և անողք եւս. քաջ իսկ եցոյց՝ եթէ առ ամսոյի զհայրենիսն կարդել և 'ի քանդել, և ոչ 'ի ժառանգել և 'ի դառնալ՝ զանհնարին զայն և զանհաշտելին յուզեաց 'ի վերայ զգոսն:

Բայց այսուիկ ոք ասասցէ արդեօք տարբերեալ զնոսա: Քանզի Աղկիբիադէս խորամանկեալ 'ի Սպարտացւոց, առ ահին միանգամայն և առ ատելութեան առ նոսա՝ դարձեալ փոխեցաւ առ Աթենացիսն: Իսկ Մարկիոսի՝ որում շնորհս զամենայն ցուցին Վոլոսկեանք՝ չէր արդեօք գեղեցիկ թողուլ լքանել զնոսա. քանզի և զօրավար ընտրեալ կարգեցին զնա և մեծապէս վստահացան 'ի նա հանդերձ իշխանութեամբն: Ոչ որպէս Աղկիբիադէս՝ զոր չարաչար մանաւանդ վարեցին Լակեդեմո-

նոցինք՝ քան վարեցան նոքա, 'ի քաղաքին շուրջ եկեալ յայսկոյս յայնկոյս, և անդրէն միաւանգամ 'ի վեր 'ի վայր յածեալ 'ի բանակին, 'ի վերջէ ուրեմն 'ի Տէ-առափերնեայ ձեռս առեալ ձգէր զանձն ։ Եթէ ոչ ծն և ծն՝ ցանկացեալ նորա միաանգամ դարձին 'ի հայրենի աշխարհն, այնպէս սոցա հարկանէր Տիրապետերնեայ, զի մի յանկարծ ոչխոյն հեծն 'ի վեր տապալեսցին Աթէնք ։

Այլ առակայն վասն Ալկիբիադեայ պատամեն՝ առնուլ նմա բազում անգամ անարգաբար արծաթ 'ի կաշառատուութեանց, զնոյն և անարգաբար ծախել վաճառել 'ի դրդանս և յանժուժկալութեան ։ Իսկ զՄարկոս՝ յորժամ և շքով և պատուով առաջին ընձեռեալ նմա զօրավարք՝ ոչինչ կարացին հաւանեցուցանել զայն առնուլ ։ Վասն որոյ և մեծապէս խուժանին առաւել զատու 'ի պայքարս կռուոյ պատերազմին ընդ ժողովրդեանն, խորու որ ոչ 'ի շահ ինչ օգտի՝ այլ 'ի թշնամանս և յարհամարհութիւն ազքատացն նա թեւակոխեալ իցէ ։

Արդ Անտիպատրոս 'ի թուղթ ինչ իւր արձանագրեալ յաղագս մահուանն Արիստոտէլի իմաստասիրի՝ ասէ, եթէ “Հանդերձ այլովք բազմօք՝ այս այր առաւ ունէր և զյանդուցանելոյն առուեստ” ։ Այլ Մարկոսին գործք և առաքինութիւնք՝ զարուեստ զայս մերձ ոչ ունելով, առաւել արարին զնոսա և նոյնոյն իսկ բարեգործելոցն առ 'ի նմանէ, որք ոչն հանդուրժէին

բարձրայօն արբշռութեան նորա և կերից յա-
մառութեանն՝ զոր բնակակից ընկեր միայ-
նութեան՝ ասաց Պղատոն ։ Իսկ ներհակա-
բար Ալկիբիադէս քաղցրագէտ ՚ի մարդաւա-
րաբէս վարել ընդ կենակից մարդկանն ,
զարմանք չէին՝ եթէ յորս միանգամ առա-
ջինորդ նախահատակեցաւ՝ բարեբաստիկ
ծաղկեցաւ ՚ի փառս համեղերձ մեծարմու-
թեան սիրով և պատուով . որք և ինչ ինչ
՚ի յանցաւորութեանց անտի առն բազում
անգամ շնորհաշուք երևեցան և գեղեցիկ ։
Ուստի և ինքնին թէպէտ և ոչ զուարճաբերեայ
և ոչ սակաւ հատուցեալ քաղաքին վնասն ,
համանայն և այնպէս բազում անգամ առաջ-
նորդ ընտրեցաւ քաղաքին և զօրավար ։ Իսկ
Մարկիոս՝ յետ բազմադէմ առաքինու-
թեանցն և քաջարութեանցն հետամնաց
հիւպատոսական բարձին եղեալ որ քաջա
վայելուչ իսկ էր նմա՝ մերժեցաւ ։ Նոյն այս-
պէս զԱլկիբիադէս՝ թէպէտ և չարիս կը-
րեալք ՚ի նմանէ՝ ոչ կարացին ատել քա-
ղաքացիքն ։ Իսկ զՄարկիոս՝ թէպէտ և հիա-
ցեալ զարմացեալ էին ընդ նա՝ ոչ սիրեցին ։

Քանզի Մարկիոս ոչինչ ՚ի ներքս երբեր
իւրոց հայրենեացն ՚ի զօրավարութեան իւ-
րում , այլ թշնամեացն՝ ընդդէմ հայրե-
նեացն ։ Իսկ Ալկիբիադէս միանգամայն և
՚ի զինուորութեանն բազում անգամ է և ՚ի
զօրավարութեանն գործեալ , ՚ի վայելու
խնդացողաց զԱթենացիսն . և յորժամ մերձն
կայր՝ նկուն առնէր զթշնամիսն՝ որչափ և
կամէր . իսկ յորժամ ՚ի բացեայ կայր՝ ամ-

բռնաւորութիւնք զօրացեալ էին զաւանէն : Իսկ Մարկիոս՝ յորժամ մերժեալ կայր՝ 'ի Հռովմայեցւոց իւրոց զատուակինքն ընկալաւ. դարձեալ և յորժամ մերժեալ կայր՝ Վոլուսկեանքն զնա խողխողեցին, թէպէտ և անիրաւութեամբ և անպարշաւութեամբ : Սակայն և ինքն պատճառս իմն ներելի 'ի ներքս ընծայեաց . քանզի աշխարհաւ 'ի ձեռն հրեշտակացն հաշտութիւն խաղաղութիւն յանձն չառեալ, առաջս մնանաւոր և տանե-ձին 'ի հաւանն ածեալ 'ի կանանց անտի, ոչ եթէ զթշնամութիւն մարտին եղոյծ փակեաց, այլ զպատերազմն յանկատարանի պահեալ՝ կորոյս զդէպս ժամանակին և խաթարեաց միաբանութեանն :

Քանզի պարտ և արժան էր նմա՝ հաւանութիւն նախ 'ի Վոլուսկեանցն առեալ յապաքինելոցն իւրոց, և այնպէս չու առնել անտի առ՝ եթէ մեծապէս փոյթ ինչ էր նմա արդարութեամբ գնալ ընդ նոսա : Իսկ եթէ ոչինչ հոգայր նա զՎոլուսկեանց, այլ զպատուասն բարեկութեանն կամեցեալ ինուլ՝ շարժեաց յուղեաց զմարտ պատերազմին և ապա լուծեալ գաղափարեցոյց, ոչ եթէ 'ի պատճառս մօրն գեղեցիկ էր նմա խնայել 'ի հայրենիսն, այլ ընդ հայրենեացն և 'ի մայրն իւր զխնայելն . քանզի և մայրն ինքնին և կինն մասն էր հայրենեացն՝ զոր պաշարեալ նստէր : Բայց նա աշխարհի պաղատանացն և հրեշտակաց խնդրուածոյքն և քահանայից մաղթանացն խստապարանոց կացեալ, և ապա յետ այնորիկ

մօրն չնորհս արարեալ՝ տեղի տալ մեկնել, այս ոչ մօրն ինչ էր պատիւ, այլ հայրենեացն անպատուութիւն. որ յանդորր եւ փրկութեան 'ի գութ և 'ի խնդրուածս կնոջ միոյ, իբրու որ արժանի չէր փրկութեան անձին առանձին: Քանզի աննուէր չնորհն և անագորոյն և արդարև անշնորհ, և ոչ դարձեալ երկուց կողմանցն դատափարելի: Քանզի չու արար տեղի եւ ոչ 'ի թշնամեաց անտի հաւանեալ, և ոչ զնիզակակիցս իւր հաւանեցուցեալ: Եւ պատճառք ամենայնին անընդդել քաղաքակարութիւն կենաց առն և բարձրայօն գոռոզութիւնն և յամառութեանն կիրք, որ և առանձինն արդեօք՝ առնելի է ժողովրդեան. ապա թէ և զպատուասիրութիւնն մերձ իւր ունիցի, բնաւ իսկ այնուհետև վայրենանայ և դժոխըմբերելի յոյժ է:

Քանզի որ այսպիսիքն են՝ սպաս ոչ հարկանեն խուժանին, իբրու անկարօտք ումանք պատուոյ. իսկ յետ այնորիկ զչարին և սրտնին՝ յորժամ ոչ հանդիպալին պատուոյ: Եւ արդեօք և Մետեղղոս ինքնին և Արիստիդէս և Եպամինոնդաս՝ ոչինչ դրդէին զխուժանն և երբեք պաշտօն չհարկանէին նոցա, այլ և ստուգապէս խոտէին՝ զոր ինչ խուժանն տիրաբար տայր և կամ բառնայր, ուստի և խեցեկոյտ վճիռ առեալք յանձինս և 'ի բաց մերժեալք, և բազում անգամ դատակնիք ևս ընկալեալք, ոչ 'ի ցասումն բրդեցան ընդ անշնորհակալու քաղաքացին, այլ միւսանգամ սիրէին զնո-

տան՝ յորժամ առաջաշաւէինն, և 'ի հաշտ գալ-ին՝ յորժամ ողոքեալք խնդրէին ։ Քանզի որ սաստ չհարկանէ խուժանին, չէ նմա արժան պատուհասակոծ առնել զնա ․ իբ-րև զի մեծապէս զչարեալն և արտնել վասն պատուոյ չհանդուրժելոյ առ 'ի նոցանէ, ընդա-ւորեցաւ 'ի կարծիս ըղձակալթեն լինելոյ առ նա ։

Արդ՝ Աղկիբիադէս ոչինչ առդեալք ժողո-վել բանակաւն էր, եթէ 'ի պատուոյ իւ-րում չինդայր ․ և ոչ զայրացեալ արտնէր Թախծնոյր՝ 'ի զանց առնել զնովաւ ․ սա-ռի և Նիկիասեր Թեսակոսեսեր մեծարեալ զանձն ընծայել և հեշտ և բաղձալի՝ ընդ որոց մի-անգամ քաղաքավարէր ։ Իսկ Մարկիոսի ոչինչ Թոյլ տայր գոռոզութիւնն պաշտօն հարկանել նոցա՝ որ պատուէին զնա կա-րողն էին և եւ բարգաւաճ առնել զնա ․ այլ պատուասիրութիւն նորա՝ յորժամ զնովաւ զանց առնէին՝ ցասումն բարկու-թեան և թաղծութիւն 'ի ներքս բերէր նմա ։ Արդ՝ այսոքիկ են՝ որովք սաստիկ արկցէ ոք առդեաք աւագ առնն, սակայն և այլն ամենայն նորա՝ զեղեցիկ է և հոյակապ ։

Իսկ յողջախոհութեան նորա մասին և 'ի ժուժկալութեան արծաթոյն՝ զնա ընդ քաջաց և առաքինեաց և ընդ անարատիցն Հելլենացւոց արժան է 'ի կշիռ ձգել, և ոչ ընդ Աղկիբիադեայ, որ ո՜ն և ո՜ն Արա-մազդ՝ յոյժ լրբութեամբ անկղբատացեալ էր, և բարւոյն պատկառ կա՛ն ընդու իսկ վեր-ջացեալ 8 ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Սխալանօք զԳայիոս վրիպակաւ սարք-գեալ 'ի Յն, քան անշուշտ պատամ. Հռոմէ. պարտ է ուղղագրել, Անիոս:

2. 'Ի Լատ. Virtus, է միանգամայն՝ Առաքինութիւն և Զօրութիւն, Արիութիւն, եւն. ծագեալ 'ի բառէն Vir, որ է՝ Այր. որպէս և 'ի Հայ՝ Այր և Արիութիւն:

3. Կաստոր և Պողիւքս, եղբարք Հեղինեայ երկուորեակք:

4. 'Ի Յն. Պղուտարք. Մուկիոսի՝ վրիպակ է յայտնի, փոխանակ ասելոյ Լուկիոսի:

5. Գեղեցիկ հրահանգ և յոյժ կարևոր առ Առաջնորդս. յորմէ 'ի հրաժեշտն առ՝ հարկ է առաջնորդին այնուհետև կամ հրաժարել 'ի բարձէն, կամ անկանել:

6. Հոմերոս ասէ զսոսա. յՈդիսականն. Հատուածոյ. Դ:

7. Իսկ 'ի զինուորութեան խորում ոչ-նոր և չքնաղ նախահատակեցաւ և ինքնին Մարկեղոս ախոյեանն Հռովմայեցւոց՝ զան-նման նախահատակութիւնն, վանեալ գոգցես միայնակ զԿորիողանոսն քաղաք: Եւ զի-արդ Պղուտարք զԱղկիբիադեայն յուշ ա-ծէ, և զՄարկեղոսինն՝ ոչ ևս:

8. Բարւոք է: Այլ զիարդ Պղուտարք զանգոսնելիսն զԱղկիբիադեայ՝ այսչափ 'ի համառօտն ամփոփեաց. իսկ զՄարկեղոսինն՝ սակաւ մի յառաջ այնչափ ճոխաբանս ճա-ռեաց 'ի կարգին:

ՊԼՈՒՏԱՐՔԵԱՑ

ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

ՏԻՄՈՂԵՈՆԴԵԱՑ

ԵՒ

ԵՄԻԼԻՈՍԻ ՊԱՒՂՈՍԻ

ՏԻՄՈՂԵՈՆԴ

ՍԻՐԱԿՈՒՍԱՑԻՈՑՆ բանք՝ մինչև Տիմողեւոնդեայ առաքելոյ՝ի Սիկիլիա, օրինակ զայս էին: Իբրև Դիոնն ՝ի բաց վանեալ հալածեաց զԴիոնեսիոս բռնաւոր, անդէն արագ արագ և ինքն նենգաւ սպանաւ. և երկփեղկեալ հերձան յայնժամ՝ որք միաբանեալ ընդ Դիոնի զՍիրակուսացւոցն յազատութիւն փութացին: Իսկ քաղաքն ցանկ ծփեալ և փոփոխեալ ՝ի բռնաւորէ՝ի բռնաւոր՝ յամենայն աղէտից վայրիկ մի ևս յանապատա ամայի կարգեալ էր: Եւ այլ ևս սահմանք Սիկիլիոյ՝ կէս մի վեր ՝ի վայր եղեալ և անքաղաքք հերքացեալ ՝ի մարտից պատերազմաց, իսկ և շատք ՝ի քաղաքացն դրդուեալ կային ՝ի խառնաղանձ բարբարոսաց և յանթոշակ զօրականէն, որ հեշտաբար հակամիտեալն էին փոփոխութիւնս առնել տէրութեանց:

Բայց Դիոնեսիոս յամէն տառանջէր 'ի մի վայր խռնեալ զերկս տասար , և զոր յայնժամ ամրացեալ կայր 'ի վերայ Սիրակուսացւոց զհնազանդութիւն 'ի բաց վանեալ՝ յինքն միաբանեալ տանի զանկրութիւնն , և նմանի անդէն բռնաւոր ։ Եւ որ նորանշան տարապարզու 'ի ձեռն փորձու գնդի 'ի բաց 'ի բռնաւորութենէն անկեալ՝ որ մեծ ևս էր քան զամենայն բռնաւորութիւն , նոյն զարձեալ առաւել նորանշան՝ որ վասարանդէն էր և նկատն և հիքացեալ՝ միաբանեալ հանեալ ամրացաւ 'ի վերայ հալածչացն իւրոց ։ Արդ որ բնակաւորքն էին 'ի քաղաքին Սիրակուսացւոց՝ ծառայութիւն հարկանէին բռնաւորին , որ 'ի լաւագոյնս ինչ փոխեալ չէր . այլ և հանճարն յարկածից անկ- ալ իւրոց վայրապարացեալ ևս էր 'ի հողին ։ Իսկ լաւորեարն և ականաւորքն 'ի նոսա առ Իկետէս ականկառացց եղեալ՝ որ իշխան կացեալ էր 'ի վերայ Լեոնտինացւոց , ամենասատուքս եղեն նմա և զօրավար ևս կարգեցին զնա պատերազմի . ոչ զի լաւագոյն ոք էր նա քան զյայտնի բռնաւորսն , այլ զի ապաստանարան այլ չունէին նոքա , և զի և Սիրակուսացի էր ազգաւ՝ վասն այնորիկ և վստահ 'ի նա լինէին . և զի բաւական էր նա զօրութեամբ ճակատ ընդ բռնաւորին յարդարել ։

Զայսու ժամանակաւ իսկ նաւատորմիղ մեծ Կարքեդոնացւոց եկեալ հասանէր 'ի Սիկիլիա և կամէր ունել զդրաւել զնա , զահի հարեալ Սիկիլիացւոց՝ խոր.

հուրդ 'ի մէջ առին հրեշտակութիւն առաքել յԵլլադա, և 'ի Կորնթացւոց անտի խնդրել ձեռն օգնականութեան. ոչ 'ի պատճառս ազգակցութեանն միայն վըստահացեալք 'ի նոսա, և զի և բազում անգամ յառաջին ժամանակսն բարեգործեալ իսկ էին նոցա. այլ և զի առհասարակ զքաղաքն զայն զԿորնթացւոց գիտէին նոքա ցանգ ազատասէր կացեալ և բռնաւորատեաց. և շատ ինչ և մեծամեծ 'ի մարտից պատերազմաց մղեալ էր նոցա ոչ 'ի տիրապետութեանն սակս և յաւելատացութեանն, այլ 'ի վերայ Հելլենացւոցն ազատութեան: Իսկ Իկետէս՝ որ զօրավարութեամբն զբռնաւորութեան թեկն ածէր և ոչ զՍիրակուսացւոցն ազատութե՛, գաղտաբար առ Կարքեդոնացիս բանադընաց լինէր. իսկ յայտնապէս զՍիրակուսացիսն գովէր, այլ և յիւրոց անտի ևս առեալ ընդ հրեշտակացն առաքէր 'ի Պեղոպոննիսոս. ոչ զի խնդրէր ինչ անդուստ նիզակակից մարտակից, այլ զի եթէ յանկարծ՝ որպէս հաւանեալ էր՝ Կորնթացիք 'ի պատճառս հելլենացի շփոթիցն և անպարապութեանց յետս յօգնականութենէն կայցեն, հեշտին այնուհետև յուսայր առ Կարքեդոնացիս անդր փոխել շրջել զիրսն. և զնոսա նիզակակիցս և պատերազմակիցս 'ի ձեռն առնուլ ընդդէմ Սիրակուսացւոց, կամ թէ ընդդէմ բռնաւորին: Եւ այս ապա յետ սակաւուց 'ի վեր ել:

Արդ իբրև հրեշտակք Սիրակուսացւոցն

յանդիմանն եղեն, յայնժամ Կորնթացիքն՝ որ ընտաւորեցան հանապազ խնամ ածել զաղթականն իւրեանց քաղաքացն և առաւել ևս Սիրակուսացւոց. և զի՝ յայնժամ ժամանակի ըստ գեղեցիկ բաղդին պատահեալ չէին նոքա յերա ինչ Եղլադայ, այլ 'ի խաղաղութեան կային և պարապորդք, վասն երասն մատադիւրագոյնս ձեռն տալ օգնականութեան: Իբրև զօրավարի 'ի խնդիր ելանէին, և իշխանքն գիր ևս հանեալ՝ յառաջ ձգէին 'ի գործն զորս միանգամ Թևակոխեցին անկանաւոր լինել 'ի քաղաքին, անդանօր մի ումն 'ի ժողովրդոց յարուցեալ անուանէր զՏիմողեւոնդ Տիմոդիմեան. այր՝ որ այնուհետև ձեռննամուխ ինչ չէր 'ի հասարակաց գործն, և ոչ դարձեալ յոյս ինչ ակնկալութեան այնպիսի կամ խորհուրդ երբէք անկեալ էր 'ի միտս նորա. այլ դից ուրումն՝ որպէս հաւանեալս եմ՝ արթելով 'ի միտս ժողովրդականին այնորիկ: Եւ ապա անդէն վաղվաղակի և բախտն ինքնին մեծապէս մարդասիրութեամբ հանդիպանայր ընտրութեան նորա յայնժամ, և յապայս՝ յայլոց ևս նահատակութեան գործոց առն անմեկնելի էր շնորհն՝ 'ի զարդ և 'ի շուք առաքինութեան նորա:

Սա այս Տիմողեւոնդ էր 'ի հոյակապ զարմէ 'ի քաղաքի անդ՝ ծնունդ Տիմոդիմոսի և Դեմարիստեայ, հայրենասէր և հեզութեամբ հանդարտութեամբ գերազանցեալ, սակայն բուռն և սաստիկ բռնաւորատեաց էր այրն և չարատեաց: Իսկ 'ի

[illegible]

անդէն ցիրուցան լինէին • և որ առաւելն կայցին միւսացին՝ նուաղումբք ընդ բազմաց 'ի վէգ ելեալք դժուարամտութեամբք լինէին : Իսկ անդրուստ զայն աղէտան յանկն արկանէր Տի-մողեւոնդ, 'ի շատոյ տարապանոցի դիմեալ 'ի վայրն ձեռն տալ օգնականութեան, զառ-աջօք իւր առեալ՝ այնպէս վահանափակ ախրածածուկ հովանաւորս 'ի վերայ Տիմո-փանեայ՝ որ տապալեալ անկեալ կայր • շատ ինչ յայնժամ՝ նետից արձակմունս, շատ և վէրս և հարուածս ձեռաց՝ առեալ 'ի մար-մին իւր և 'ի զէնսն, այնպէս հազիւ ուրեմն 'ի բաց զթշնամիսն փարատէր և ապրեցու-ցանէր զեղբայրն :

Այլ յետ այնորիկ երկուցեալ Կորըն-թացւոց, զի մի թերևս կրեսցեն ինչ մի յայնպիսեաց անտի, ըստ որում երբեմն 'ի նենգականացն կրեցին՝ հաներալք 'ի ձեռաց զքաղաքն, վճռեցին տալ գունդ մի չորից հարիւրոց եկամուտ զօրականին պահել 'ի քաղաքին, և 'ի նոցա վերայ զօրավար իշ-խան կարգեցին զՏիմոփանէս : Իսկ նա լու-ութեան ինչ և արդարութեան զհետ չը-կըթեալ ամենևին, վաղվաղակի ձեռնա-մուխ 'ի գործ՝ հնարէր նկուն ընդ ձեռամբ զքաղաքն առնել, և զբազումս յառաջագոյն անտի քաղաքին առաջնոց իշխանաց դատապա-տանէր 'ի մահ վարեալ, հրապարակագործ անձանց զանձին առնէր իւրն բռնաւոր : Այսպէս սոսկալի իմն զչարեալ Տիմողեւոնդ, և աղէտս անձինն համարեալ զչարութիւն եղբօրն, ձեռն էարկ խօսել ընդ նմա և

խրատէր յորդորէր 'ի բաց թողուլ զանձնա-
տուութեան զերկն զայն և զձախողակ , և
թեւակոխել ինչ մի ուղղութիւն զյանցա-
նացն 'ի ներքս բերել առաջի քաղաքա-
ցեացն ։ Իսկ 'ի նմանէն 'ի բաց մերժեալ
խոստեցաւ , յայնժամ ապա իւր առեալ
Տիմողէոնդ յընտանեաց անտի զԵսքի-
ղոս տագր Տիմոփանեայ , իսկ 'ի բարեկա-
մացն զայրն զուշակ՝ որում Սատիւրոս ա-
նուն կարգայ Թէոպոմպոս , և Որթագո-
րաս՝ Տիմէոս և Եփորոս , և առուրս սակաւ
մի հանդարտեալ՝ անդրէն միւսանգամ յա-
րուցեալ եկանէ առ եղբայրն ։ Ապա շուրջ
զնովաւ կացեալ երեքեան նորա աղաչէին
զանէ այնուհետեւ զգօնանալ միանգամ և
փոխել 'ի խորհրդոց անտի իւրոց ։ Իսկ Տի-
մոփանէս զառաջինն ծաղր արարեալ ծիծա-
ղէր զնոքօք , և ապա 'ի բարկութիւն բըր-
դէր և սպառնացեալ ցասնոյր ։ Յայնժամ Տի-
մողէոնդ փոքրիկ մի 'ի բացեայ 'ի նմանէն
զնացեալ , ծածկեալ զգլուխն՝ այնպէս
կայր և արտասուէր . իսկ նոքա մերկա-
ցեալ ձգեալ զսուսերսն՝ անդէն վաղվա-
ղակի զկոտորապաստ յերկիր արկանէին զՏի-
մոփանէս անզգամն ։

Իսկ զհամբաւ հարկանէր գործն , կէսք
յաւագացն Կորնթացւոց 'ի գովութիւն առ-
նուին զչարատեաց բարուն և զմեծանձնու-
թիւնն Տիմողէոնդեայ . այն՝ որ հեզ և
քաղցր և ընտանէր՝ զհայրենիսն քան զըն-
տանութիւնն նախապատիւ կարգեաց . և
զգեղեցիկն և զարդարն՝ քան զօգտակարն .

զնահատակեալն 'ի վերայ հայրենեաց զեղբայրն իւր՝ փրկեալ ապրեցուցանէր. և ըզնոյն ինքն դարձեալ՝ յորժամ խորամանկեալ զհայրենիսն ծառայեցուցանել կամէր՝ եհար և սպան: Բայց և կէսք դարձեալ՝ որ ոչն կարէին կեալ յընկերհաշտութեանն, և առ ճոխս և առ աւագս անկնկառոյց լինել բնաւորեալքն էին, ընդմահ բռնաւորին խնդացեալ ցուցանէին զանձինս, այլ խոստեալ Թշնամանէին զՏիմողեւոնդ, իբրու 'ի գործ ամբարշտութեան և աստելի մխեալ զձեռն. և այնպէս 'ի տրտմութիւն Թաղծութեան արկանէին զայրն: Իսկ իբրև լուր էառ, եթէ և մայրն զլխովին մեծապէս սրտնեալ է, և ձայնս գժոխըմբերս և անէծս 'ի վերայ նորա կարդայ, զահի հարաւ. յարուցեալ ընԹանայր առ նա սփոփել մխիթարել զնա. իսկ մայրն չհանդուրժեալ և ոչ զերեսս անգամ նորա տեսանել, ելեալ փակէր ընդդէմ նորա զդուռնն. անդ ապա համբուն 'ի Թաղծութիւն անհնարին ընկղմէր Տիմողեւոնդ, և յայլոց խելս եղեալ՝ այնպէս հաստատեաց 'ի միտս իւր՝ անձին մահ ածել անսուաղութեամբ: Բայց բարեկամք նորա անտես չարարին զնա. այլ զամենայն խընդրուածս և զամենայն հարկ առաջի եդեալ նորա, 'ի հաւան ածէին զնա կեալ մնալ առանձինն հեռի 'ի բազմութենէն:

Յայնժամ բնաւ իսկ Թողոյր լքանէր Տիմողեւոնդ զկենցաղակից զկեանսն, և յառաջին ժամանակսն և ոչ 'ի քաղաքն եր-

բեք իշխանէր. այլ թաղծեալ լի տրտմու-
թեամբ թախծեալ շրջէր 'ի վայրս անա-
պատս: Եւ այսպէս դատաստանօք մնայց՝ եթէ
երբէք հաստատութիւն և կորովութիւն ոչ
ինչ առեալ ընկալցին 'ի բանսն և յիմաս-
տասիրութենէն 'ի գործս մեր, շարժին և
դեգերին հեշտանաւ 'ի գովութեանց անտի
և 'ի բարեբանութեանցն՝ որ հանդիպիցեն, 'ի բաց
եդեալ զանազանական զիւր խորհուրդն.
Քանզի ոչ գործոյն միայն պարտ և արժան
է լինել դեգերցիկ և արդար, այլ և կար-
ծեացն գլխովին՝ յորմէ շարժիմք 'ի գոր-
ծել՝ պէտք են անդրդուելի լինել և անայ-
լայլելի. որպէս զի իբրև մասունք գործի-
ցեմք և ընտրողք, և ոչ իբրու զորկորեայսն
և [illegible]; որ յայր կերպակրոցն ան-
յագ ցանկութեամբն զհետ մոլեալք, ան-
դէն յափրացեալք դարշին՝ իբրև յագե-
նան. այսպէս և մեք 'ի վերայ գործոցն՝ զոր
'ի գլուխ տարեալ կատարեցաք՝ արտաքեկ
արտասաւուչ թաղծիմք առ սկարութեան
մերոյ, յորժամ առաջին երեւակութիւնն
գեղեցկութեան գործոյն նուաղեալ թար-
շամեսցի: Քանզի ապաշաւելի՝ նա և զգե-
ղեցկապէս գործեալ զգործն անարգ յար-
գարէ և յօժի. իսկ նախընտրութիւնն՝ որ
'ի ճշգրիտ գիտութենէ անտի և 'ի բանէն
թելադրեալ իցէ՝ ոչ փոփոխի, թէպէտ և
ձախողակի գնասցեն իրքն: Վասն որոյ և
Փոկիոնն Աթենացի՝ որ հակառակ ամբար-
ձեալ կայր խորհրդոց և գործոցն Լէօսթե-
նեայ, իբրև յետ այնորիկ քաջապէս նա-

հաստատկեալ կարծեցաւ նա, և այն ինչ տե-
սանէր փոկիոնն զԱթենացւոցն զոհս զոհել
և բարձրապարանոցս զնալ վասն յաղթու-
թեանն, ասէր՝ եթէ սիրելի է արդեօք նմա
յայսոսիկ նահատակել Լէոսթենեայ, այլ
ինքն գործեալ զառաջինն զայն խորհուրդն
տայ նմա: Իսկ ուժգնակի եւս Արիստիդէս
Լոկրացի մի 'ի մտերմացն Պղատոնի, յոր-
ժամ 'ի կին խնդրէր 'ի նմանէ Դիոնեսիոս
երէց զմի 'ի դստերաց նորա, ետ պատաս-
խանի և ասէ. Հեշտագոյն արդեօք է ինձ տե-
սանել զորիորդն իմ մեռեալ, քան ընա-
կակից բռնաւորի եղեալ: Եւ իբրև յետ
սակաւ ժամանակի սպանանէր զորդիս նո-
րա Դիոնեսիոս, և հարցանէր դարձեալ՝
ոտնհար լինելով նմա՝ եթէ արդեօք տա-
կաւին 'ի նոյն խորհուրդ կացցէ՞ վասն տու-
չութեան դստերն, ետ պատասխանի՝ եթէ
թողեալ կայ ընդ պատահմունն, այլ ընդ-
բանման իւր չապաշաւէ: Այլ այսոքիկ ար-
դեօք կատարեալ առաքինութեան իցեն և
մեծահոգութեան արգասիք:

Իսկ Տիմողէոնդեայ կիրք ընդ եղեալսն՝
եթէ գուցէ գործոյն իցէ 'ի վերայ մեռելոյ
եղբօրն, և եթէ շուք և պատկառանք վասն
մօրն, այնպէս ինքն գրաւեալ կալաւ և նը-
կուն արար զխորհուրդս զառնն, որպէս
զի և զամս քսան՝ գոդցես ողջոյն ոչ 'ի գործ
երեւելի և ոչ 'ի քաղաքական՝ ձեռնամուխ
նա ոչ եղև: Արդ իբրև 'ի զօրավար հրա-
պարակէին զնա, և ժողովուրդն ինքնին մի-
աադիւրադոյնս ընկալեալ ձեռն հաւանու-

թեան տայր, յարուցեալ յայնժամ 'ի մէջ Տելեկլիդէս՝ ըմբռնութեամբ և փառօք այր առաջադասեալ մեծայր 'ի քաղաքին, քաջալերէր 'ի ներքս մատուցանէր Տիմողէոնդեայ՝ մեծապէս արութեամբ քաջալերել և նախանձաւոր 'ի գործն. "Քանզի եթէ գեղեցկապէս՝ ասէ՝ մրցեսցիս, համարձակեսցուք մեք եթէ զբռնաւոր սպանեեր. ապա եթէ վատասցիս՝ զեղբայր,, :

Բայց իբրև կալեալ էր պատերազմ Տիմողէոնդ 'ի նուաճել և խմբէր ժողովէր զզօրականն, նամականի հասանէր առ Կորնթացիս յԻկետասէ, յորմէ և այդ զուշմ ընէր նոցա փոփոխութեան առն և մատնութեանն: Քանզի անդէն վաղվաղակի իբրև գնացեալ մեկնեցան հրեշտակքն, նա յայտնի միաբանեալ ընդ Կարքեդոնացիսն, բան հաստատեալ ընդ նոսա՝ զի զԴիոնեսիոս 'ի բաց վանեալ 'ի Սիրակուսայ՝ ինքն կալցէ բռնաւոր: Եւ զանգիտեալ՝ թերևս կանուխ հասեալ անդր 'ի Կորնթոսէ զօր և զօրավար՝ քաջ ընդ տանն եղիցին գործոց նորա, առաքեալ յղէր նամականի առ Կորնթացիս, ասել՝ եթէ չէին պէտք այնուհետև նոցա աշխատութեան և ծախուց՝ խաղալ նաւել 'ի Սիկիլիա և վտանգել զանձինս: Նա զի՝ և Կարքեդոնացիք ինքնին պահ արկեալ նաւուց բազմութեամբ՝ արգելցեն զնաւատորմիղ նոցա. և զի՝ ինքն 'ի դանդաղել Կորնթացւոցն՝ առնեալ ցաւ ընդ Կարքեդոնացիսն 'ի նիզակակիցս իւր կարգալ ընդդէմ բռնաւորին: Իբրև գտին զայս

ընթերցման նորա, յայնժամ՝ եթէ և որ յառաջին հեղգացեալ գանդաղէր 'ի Կորնթացւոց 'ի զինուորութիւն անդր, առհասարակ ամենեքեան բարկութեամբ սրբոմանեալք 'ի վերայ Իկետասի, որպէս զի և մնացեալքն եւս յօժարութեամբ ետուն միաբագամայն զալեաւմն Ցիմողեւոնդեայ, և անդէն հանդերձեցին կազմեցին 'ի նաւարկել: Իսկ և կազմ և պատրաստ կային նաւքն, և զօրականքն՝ որ ինչ պիտոյն էր՝ բաշխեցաւ տուաւ, անդուստ և քրմանոյշք Օրիորդին կարծէին տեսանել յերազի, իբրու այն թէ դիցուհեացն Ձ հանդերձել ուղւոյ լինել. և ասել՝ եթէ 'ի միասին ընդ Ցիմողեւոնդեայ հասանել նոցա նաւարկեալ լինել 'ի Սիկիլիա: Վասն որոյ և Կորնթացիք եռաթի մի նաւիրական պատրաստեցին դիցուհեացն, և 'ի նոցանէն անուն կարդացին նմա:

Բայց ինքնին Ցիմողեւոնդ յարեաւ չոգաւ 'ի Դեղփիս. անդ զոհս զոհէր աստուածոյն, և իջեալ այնպա 'ի գուշակարան անդր նորա, նշան այսպիսի երևէր 'ի վերայ առն: Քանզի 'ի ձօնից անտի կախելոց վարսակալ մի զերծեալ 'ի վայր՝ ասղնագործ նկարակերտ պսակօք և յաղթութեամբք՝ գայր անկանէր 'ի վերայ գլխոյն Ցիմողեւոնդեայ. իբրու այն թէ՝ 'ի նմին իսկ աստուծոյ պսակեալ այրն՝ այնպէս 'ի գործ նահատակութեանն առաքեսցի: Իսկ էին նաւք կորնթացիք ընդ նմա եօթն թուով, և երկու դարձեալ՝ կերկիւրացիք. իսկ զտասներորդն 'ի ներքս մատուցին Լեւկադացիք.

զօրս և միահամուռ առեալ Տիմոթէոսին անկանէր յայնժամ յուղի ։

Իբրև 'ի գիշերի խաղաղայր նաւ 'ի խորս և հողմն շնչէր զեփիւռեցիկ, թուէր թէ յանկարծածուկ ցնդեալ երկնից 'ի վերայ նաւուն խռովոյ, և հնչուլ թափօրել հուր մեծ և բազմաձայնաձայնչ. յետ այնորիկ և դադարելոյ վերստին բարբառ երևէր նմանութեամբ այնմ՝ որ 'ի խորհրդականն, և զայն ձայնատարութեան հասանէր ընթանայր առ նոքա զամբարուն՝ յիտալիոյ 'ի կոյս դէմ եդեալ, ուր և թևակոխեալ զնաւերն զնկաւառողք ։ Յայնժամ զուշակքն և խղճքն քարոզ կարգայքն՝ եթէ այդ ողջիկ աւանդեն միաբանութիւն 'ի նոցունց բերին երաշխաց քրիստոնէութեան. և զի՝ և զեկուցին ինքնին գլխաւորին նախազանկակից միաբանեալք են 'ի զինուորութիւնն, և նորին զործեալ երևեցուցին 'ի բարձանց զձայնաձայնչն զայն ։ Քանզի և Աղեքսանդրիա ինքնին նախկնական էր Օրինադրին ։ Եւ զի՝ և զհայրապետութիւն նորա կցկցեն անդամ 'ի Աղեքսանդրիա հանդիպեալ, և զնզգին զայն 'ի հայրապետին պաշտտամանական տառերայ նմա ։

Արդ այս նշանք յաստուծոյ անսուտ մեծացեալ յայնժամ քաղաքեր ասային բանակին. և այնուհետ փութացեալ հասանելք զանզուածս՝ եկին հասին յԻտալիա ։ Սակայն որ 'ի Սելևկիոյ լուաք հասին առ նոսա, 'ի մատրանս բազմութեան ասելին զՏիմոթէոսն և 'ի մեծ արտաքսականութեան զզօրականն ։ Քանզի Իպերատոս 'ի մտաւոր պատրաստեալ զՂեոնտիոսս, և զհաստատութեանն մեան զԱնդրակաւոյ

կալեալ, և զնա 'ի գղեկի անդ և 'ի վայրն անուանեալ Նիսա՝ այն է Կղզի՝ արգելեալ փակեալ, մինչեւ զինքն շուրջ պատնշափակ արարեալ նմա : Իսկ Կարքեդոնացւոց պատուէր տուեալ էր փոյթ և պահ ունել, զի մի 'ի Սիկիլիա զօրաթափ լիցի Տիմողեոնդ. այլ 'ի բաց զնոսա վանեալ՝ ինքեանք ապա յանդորրու յերկրանն բաժանեսցեն զկղզին : Յայնժամ Կարքեդոնացիք առեալ արձակեցին քսան եռաթիւ նաւս 'ի Հռեգիոն. 'ի նոյն նաւս ամբարձան և հրեշտակք յԻկետասէ առ Տիմողեոնդ պատգամաւորութք բանից՝ որ նմանօրինակք էին գործոցն : Քանզի վերջին երեսօք բանիքն գեղեցիկք էին, և ներքինք նորա՝ խորամանկութիւն չար : Քանզի աղաչել հանդերձեալ էին նոքա զՏիմողեոնդ, զի թէ կամք իցեն նմա՝ ինքն իբրև խորհրդակից Իկետեայ յարուցեալ գնասցէ առ նա, և բաժանորդ լինիցի ամենայն գեղեցիկ նահատակութեանց նորա. իսկ զնաւսն և զզօրականն առեալ արձակեսցէ 'ի Կորնթոս, իբրև զի վայրիկ մի ևս մնալոյ պատերազմին 'ի վճար իցէ : Առ այս՝ և Կարքեդոնացիք կալեալ պատրաստեալ կան խափանել արգելլուլ զանցս Կորնթացւոց, և մտադիւր ևս կռուել՝ եթէ երբէք բռնան արտասցեն նոցա :

Առդ իբրև եկին հասին Կորնթացիք 'ի Հռեգիոն՝ և անդ համագումարեցան հրեշտակացն, գարշեալ և զփիւնիկեցիսն տեսանէին անդադար ոչինչ 'ի բացեայ արկեալ

խարդախս նաւաւոցն , առաջնորդեան յանձինս իւ-
րեւ աշխարհականացն եղեւ այլք . և առհասա-
րակ 'ի բարեկամութիւն բրդէին ընդդէմ Իկե-
տեայ . առ այս՝ և ցանէր նոցա վասն Միկի-
լէացւոցն , խորև որք անկն յայսմիկ 'ի ձեռս
Իկետեայ անխնամ թողան նոքա մըցա-
նակ և վարձ մասանութեան , իսկ Կարքե-
դոնացւոց՝ բռնաւորութեան : Եւ թուէր
իմն նոցա՝ եթէ չէք հնար յաղթել մեծա-
գամայն և նաւացն բարբարոսաց՝ որ կրկին
եւս զօրութեամբ 'ի վերայ հասանել կայցեն ,
և բանակին Իկետեայ՝ որում զօրավար ե-
կեալ էին նոքա 'ի Կորնթոսէ : Սակայն
Տիմոլէոնդ բանիւ 'ի մէջ ածեալ ընդ հրեշ-
տակացն և ընդ իշխանս Կարքեդոնացւոցն ,
ասէր հեզաբար՝ անսալ ամենայն հրաման-
նացն , (քանզի և զէնչ այլ բաւական էցէ
առնել անսաստանելութե) , բայց կամի ըղ-
բանեալ զայդ խօսել նոցա յերկպառանչիւր
եւս կողմանց լսելով և ասելով յանդիմանն
հեղլենացի քաղաքին Հռեգիոնի , որ հա-
սարակաց բարեկամն է : Քանզի և այսպէս
ոչ անձին միայն օգուտ մեծացուցես էցէ յա-
ներկանանութիւն , այլ և նոցուն զարձեալ՝
հաստատութիւն խոստմանցն առ Սիրա-
կուսացիսն , յորոց ամ խնչնին և ժողովուրդն
մեկայ կացցէ ամենայն դաշանցն կանելոց :

Զայս ինչ առաւելն արկանէր նոցա Տիմո-
լէոնդ՝ նենգ հնարիւքն աշխատանելով
վասն անցանելոյ 'ի Սիկիլիա : Անդանօր
ընդ նմա աշխատանելիցք 'ի նոյն էին և
Հռեգինացւոց զօրավարք առհասարակ .

քանզի և խնդրէին իսկ՝ առ Կորնթացիս փո–
խել զերս Սիկիլիացւոց, և զահի հարեալ
եւս էին 'ի մերձ կալոյ անտի բարբարոսացն։
Վասն որոյ և եկեղեցի խմբեալ և զգուշանան
փափկեալ՝ զի մի՛ ամենեւին 'ի գործ ինչ այլ
ընթասցին քաղաքացիք, և եկեալ հասեալ
յանդիման բազմութեան ժողովոյն, զը–
րոյցս երկայնս 'ի մէջ առեալ բարբառէին.
և այր այր մի զմիոյ զկնի զնոյն իրաց ճառ–
արկեալ խօսէր, ոչ յայլ ինչ պատճառաւ՝
բայց զժամանակն երկայնել ձգել, մինչև
մեկնեալ գնասցեն եռամթիք Կորնթացւոցն.
և Կարքեդոնացիք յառաջեան ժողովոյն առ–
դելեալք մտասցեն անկասկածք՝ անդ յան–
դիման իւրեանց առանելով զՏիմողեւոնդ.
որ այնպէս կարծեցուցանէր նոցա՝ եթէ և
ինքն հաւան ընդ հաւան յարուցեալ հրա–
պարակախօս լինիցի։ Իբրև անդ գաղտա–
բար ոմն մերձեալ ազդ առնէր նմա՝ եթէ
ամենայն եռամթիք Կորնթացւոցն ելեալ
անկան յուղի, և միայն նորա եռամթին նմա
ակնկալեալ սպասէ, յայնժամ Տիմողեւոնդ
սանխթի կաղ 'ի կաղս ապրդեալ 'ի խուռն
ամբոխին, միանգամայն և որք շուրջ զնե–
մին Հռեգինացիք՝ հովանացեալ ծած–
կէին զնա, նա այնպէս զերծեալ արտաքս
էջ 'ի ծովեզրն, և անդէն փութապէս ան–
կանէր յուղի, և նաւեալք հասանէին 'ի
Տաւրոմենիոն Սիկիլիոյ. ուր և մեծապէս
հիւրընկալեալք յԱնդրոմաքոսէ՝ որ և 'ի
վաղնջուց իսկ նոցա հրաւէր կարդացեալ
էր, և ինքն տիրացեալ ունէր զքաղաքն։

Սա այս Անդրոմաքոս հայր էր Տիմէոսի պատմագրողին . սա լաւութեամբ զերադոյն- ցեալ քան զամենեսին՝ որ յայնժամ տի- րացեալք էին 'ի Սիկիլիա , իւրոյ քաղաքա- ցեացն առաջնորդէր խրատաւք և արդա- րութեամբ , և ընդդէմ բռնաւորացն ցանդ- յայտնի հանդիմանայր Թշնամի և ատելի : Վասն որոյ և Տիմողէւոնդեայ յայնժամ զիւր քաղաքն 'ի ներքս մատուցանէր ա- պաստանաւորան մարդոյ . և զքաղաքացիսն ա- ծեալ հաւանեցուցանէր մարտակից նմա- կակից Կորնթացւոցն լինել , և 'ի միասին ընդ նոսա յազատութիւն յանդորր հա- նել զՍիկիլիա առ հասարակ :

Իսկ որք 'ի Հռեգիոն Կարքեդոնացիք , խրդէ անձամբ եւ մեկնեցաւ Տիմողէւոնդ և արձակեցաւ եկեղեցին , արտաքսեալք ցաս- մամբ ընդ խաբմանն՝ զգօսանս յայնժամ ծաղու ընծայէին նոցա Հռեգիոնացիք յա- ւել խաբեալ , եթէ Փիւնիկեցիք գոլով նո- քա՝ չէ արդար [illegible] երբէք ընդ գործս խաբանաց լինել : Յայնժամ նոքա հրեշ- տակ մի առեալ արձակեցին եռաթիով 'ի Տաւրոմենիոն , որ շատ ինչ խօսեալ առ Անդրոմաքոս յոյժ բարբարոսադոյնս և խժդժա- դոյնս , սպառնացեալս 'ի վերջոյ կատակելով թէ ոչ վաղվաղակի 'ի բաց մերժեալ հանցէ զԿորնթացիսն . արդ 'ի վերջէ զափ ձեռին 'ի վեր կոյս ցուցեալ և անդէն 'ի վայր կոյս շրջեալ , կայր և սպառնայր ըստ օրինակին ըստ այնմիկ անցս ընդ քաղաքն նորա ան- ցուցանել : Իսկ Անդրոմաքոս ծիծաղեալ՝

այլ պատուասխանի չէր նմա, բայց զՆեռան անդէն 'ի վեր կոյս սաւառել՝ որպէս նայն տեսաք՝ և անդրէն 'ի վայր կոյս, հրամանն 'ի վերայ կարգէր նորա՝ յառնել նուաղել փութայցես, եթէ չկարէ ինչ ըստ օրինակին ըստ այնմիկ անցա ընդ նմա իւր ամենայն։

Բայց Իկետէս լուր առեալ զանցիցն Տիմոլէոնդեայ 'ի Սիկիլիա և զանհի հարեալ, առաքեաց կոչեաց եպաւթիս նուաց բազում 'ի Կարքեդոնացւոց։ Իսկ յայնժամ ապա դէպ լինէր Սիրակուսացւոցն զկնաւին պատարել յուսահատ լինել 'ի փրկութենէ իւրեանց, զի նուաճեալ դատաց իւրեանց սիրացն Կարքեդոնացիք, և զքաղաքն Իկետէս իւրեանց զրաւեալ ունէր. զնոյն և զդեսակն ընդ ձեռամբ նուաճեալ էր Դիոնեսիոսի։ Իսկ անդ Տիմոլէոնդ՝ իջեալ ընդ գոյղն քաղաքս առանին Տաւրոմենացւոց՝ այնպէս հպեալ ծայրիւ ընդ Սիկիլիայ, յորս անկեալ ուրէք նորա նուաճեալ էր և զօրութիւն նորա հասնատեալ։ Քանզի քան զհազար զօրականս և քան զկարիոր պարէնիւն ոչինչ առելի ունէր ընդ իւր Տիմոլէոնդ։ Սա այս՝ և ոչ քաղաքքն վստահացեալք էին էին, այսչարեալք առհասարակ յարգէս վայրից, և վարձկանացեալք յաւանդեալք ընդդէմ ամենայն զօրավարաց բռնակին, և առեալ եա 'ի պատաճառս ուխտագրուժ զնացիցն Կալլիպպոսի և Փարակոսի, յորոց մին էր Աթենացի, և միւսն՝ Լակեդեմոնացի. քանզի երկաքանչիւր նոքա հաչակ հարեալ ե-

Թէ վասն առաջնորդութեանն Սեւերեայ հա-
ւանեալ զամն և լուծանել քակել զմիաւորեա
բանաւորան, որպէս յետ այնորիկ զվէճսն ա-
ղէտից քաղաքացեացն զոր 'ի բանաւորու-
թենէն՝ նոքա խորհէ ամենի առաջնորդական յա-
ջին Սեւերեայ, և քան զգործեալն և զխո-
խեալն յառաջնորդութիւն՝ երջանկիկ եա ե-
ասան նոքա հաւանեալ զխոչնդունելութեան և
զխափանելեալն 'ի ծառայութեան անդ:
Ուսեալ և այնինչ լուսաւորոյն քան զնոսա հա-
մբերելով և զկարծեցութեն, այլ Թէ և նա
Ինչեն եկեալ հասեալ կայ նովին հնազանդեցաւ
խորհրդով և համբուրեալ բանիւք և քաղաք
յուսով ամբարել զնոսա 'ի փոփոխումն նո-
րոյ ասացեալ, խորհէին խիղճութեան և 'ի բաց
ամենեցին զհրամայական Կարծեցուցն:

Բայց միայն Ակակիանացիք որ 'ի քաղաք
փոխեցին բնակեալ էին՝ նախկրական զհետ
Ակակեանց՝ որում և շունչ մեծապէս ազա-
թեն ազնոյն 'ի Սեւերեա, երկայառնակեալ և
նոքա ընդ միաբանս, կէսք յեկեղեցւոյ հակա-
ռակեալ և 'ի Կաղկեդոնացւոյն, և կէսք
զարմացեալ առաջեալ կոչէին զՏիմոթէոսեանս:
Եւ զկոյս երկու յայնժամ՝ զի յաջորդեալ
անդրա երկոցունց նոցա, 'ի միում անդ ժա-
մանակի երկարաձգեցին նոքա մերձ եղեալ 'ի
քաղաքն: Այլ Իսկէսոս եկեալ հասեալ
զայսր համբերեալ հնդը հայրեր զորակաման.
խոհ Տիմոթէոսեանցն 'ի բաւն այնինչ աւելի
էր քան զհայրեր և երկերիւր: Չաստաւ այստ
առեալ ընդ իւր 'ի Տաւրոսմենեաց՝ որ հեռի
էր յԱղեքսանդրէ երկերիւր և քառասուն

պատարագօքն, յառաջնում աւուրն ոչ բա-
ղում ինչ հատանել ուղի՝ խորան հաստատել
Նաւասու: Իսկ յերկրորդումն աւուր հալա-
ծեալ ուռեալ ճանապարհին և հատանել
անցեալ ընդ գետառաւս վայրաց, անդէն 'ի
տարածանել աւուրն լուր անձոյք՝ եԹէ
այն ինչ և Իկեոնէս մերձ եկեալ հասեալ
կայ ինքնին յաւանն անդր, և բանակ հարկեալ
Նաւակ անգամնօք:

Այդ վաշտապետք և դասապետք ա-
ծեալք զնահատակսն՝ դադար առային նո-
ցա, զի կերակուր առեալ և հանգուցեալ՝
ապա յօժարամիտք եւս եղիցին 'ի գործ:
Այլ Տիմոթէոսի յառաջ անցեալ արգա-
չէր մի առնել զայն բան, այլ 'ի շտապ
տագնապի առնուլ խաղացուցանել զզօ-
րականն յայնժամ 'ի կուիւ ընդ Թշնամեայն՝
որ այն ինչ հասեալ յուղւոյն Թերևս վա-
րատեալ պատրաստեալ 'ի խորամանհարուԹե
իցէ և յանԹերեացն պատրաստուԹիւն. զայս
առաջ՝ և զտապարն առեալ յառաջէր 'ի
յաղԹուԹիւն անսերկեան առաջնորդել նո-
ցա. և առ հասարակ քաջալերեալք զհետ
ընԹացան նորա՝ ապաարէաս իբրև երեսուն
'ի բացեայ 'ի Թշնամեացն: Հասեալք զու-
գին փուԹապէս անկանէին 'ի վերայ. Նո-
քա խառնակեալք ամբոխեալք անդէն 'ի փա-
խուստ խուճապեցան. և յայսմանէ նուա-
ղունք իբրև երեքհարիւր տապաստ անկա-
նէին, և կրկին նոյնչափ 'ի գերուԹեան վա-
րեցան. առակայն առ հասարակ յայնժամ ա-
րացան բանակին նոցա:

Իսկ Ադրանացիք յայնժամ՝ բաժանեալք
զդրունս՝ միաբանք 'ի կողմն ընկէցին Տիմո_
ղեւոնդեայ. և կացեալք պատահեցին նմա ա_
հիւ մեծաւ և զարմանալեօք, զի 'ի ժամու_
կանոյն ինքնին դուրըն նուիրականք տա_
ճարին բացեալք ընկէցին. և նիզակ աստուա_
ծոյն երևէր շօշել 'ի ծայրին, և դէմք ե_
րեսացն՝ քրտան առատիկ հոսել: Եւ էին այս
նշանք՝ թուի թէ՝ յայտարարք ոչ այնմ
միայն յաղթութեանն, այլ և որ յառաջոյ
նահատակութեանց առնն, սկիզբն դեղե_
ցիկ գիտութեան զայն ունելով: Քանզի և քա_
ղաքքն այնուհետև հրեշտակութեամբ առ_
ձակեալք՝ միաբանեցան ընդ Տիմողեւոն_
դեայ. և Մամերկոս բռնաւորն Կատա_
նեայ դաշնաւոր նիզակակից ընկէր ընդ նմա,
այր մարտիկ և բազմահարուստ. և որ առա_
ւել ևս՝ ինքնին Դիոնեսիոս որ վայրիկ մի
ևս նկուն 'ի պաշարմանն՝ յուսահատոյր ե_
ղեալ էր, արհամարհեալ զԻկետեա՝ որ այնև
պէս անարգաբար 'ի պարտութեան մատնե_
ցաւ, և հիացեալ ընդ Տիմողեւոնդ, հրեշ_
տակս արձակեալ առ Կորնթացիս՝ անձնա_
տուր ընկէր համադերձ զղեկաւն: Քաջալերե_
ցաւ Տիմողեւոնդ ընդ անկարծ ընդ դէպսն,
և առաքեաց արձակէր առ նա զԵւկղիդէս և
զՏեղեմաքոս՝ զարս Կորնթացիս 'ի դղեակ
անդր համադերձ չորեքհարիւր զօրականօք,
ոչ միախուռն զամենեսեան և յայտնի, (զի
և չէր հնար՝ դրաւեալ թշնամւոյն զնաւա_
հանգիստն), այլ գաղտագողի և սակաւ:
Որոց և հասեալ կալան զդղեակն և զամե_

-նայն ինչ զբանաւորին կանխեաք և կարասցուք պատերազմին : Զի և էին իսկ անդանօր երիվարք ոչ սակաւք, և ազգ ազգ մեքենայից, և քաղաքակործանեաց և սլաքաց, և զէնք եօթն բիւր 'ի վաղ ժամանակաց. էին անդ Դիոնեսիոսեայ և զօրականք երկու հազար. զորս և միանգամայն ժողովեալ տայր 'ի ձեռս Տիմողեւոնդեայ. և ինքն առեալ զինչս իւր և ոչ շատ ինչ զպատրաստականացն՝ գաղտ յԻկետեայ նաւագնացս լինէր 'ի բանակ անդր Տիմողեւոնդեայ :

Բայց յայնժամ առաջին երևեցաւ Դիոննեսիոս իբրև զմի 'ի ռամկականաց և այլ հեքացեալ, և արձակեցաւ միով միայն նաւաւ և սակաւ ընչիւք 'ի Կորնթոս. այն՝ որ ծնեալ և սնեալն էր 'ի բռնաւորութեանն՝ 'ի մեծ և 'ի հռչակաւորին քան զամենայն, և կացեալ 'ի նոյն նախ զամս տասն, ապա և երկոտասան 'ի միւսանգամ բռնաւորութեանն յետ պատերազմելոյն 'ի Դիոնէ՝ ցանկյաղթեալ 'ի կռուս : Սա այս Դիոնեսիոս և աղէտս կրեաց առաւելս ևս քան զոր ինքն անցոյց ընդ այլս. քանզի զորդիս իւր յարբունս հասեալ՝ ետես սպանեալս, և զկոյս դստերսն՝ լլկեալս, և զքոյրն՝ զկին իւր բռնաբարեալ 'ի թշնամեաց և ապականեալ յոյժ անառակութեամբ, ապա և բռնամահ եղեալ ընդ զաւակացն և ամացեալ 'ի ծով : Այլ այսոքիկ ճշգրտիւ պատմեսցուք 'ի վարսն Դիոնի :

Իսկ իբրև եկեալ հասանէր Դիոնեսիոս 'ի Կորնթոս, հելլենացի այր չէր՝ որ ոչն

խնդրելոյ ամուսնանալ զնա և խոստանալ ընդ նմա, Կէսք խնդացեալք ընդ արկածս ազգականացն առ ամուսնութեանն, մնացեալք դառնագոյնս ընթանային ամենայն լինել առն, զոր բարեխառն իւրեանց զանհնարին կարծանելոյ զնա։ Իսկ կէսք զարմացեալ՝ փափաքեին այլք առ. Նոր այստուհասումն և կարևորից եղեալք, մնացին որոնք 'ի զննին կայծն զորութեան զայրագնելոյ այնուցիկ և առատութ այնոցն պատճառաւ՝ յայտանեալ 'ի մեծրայ առկայր և ասպետկայր մնացականն։ Քամելի և զարմնու ժամանակաւ չէր իսկ անձեալ նոցա փափաքուռութիւն այնուցիւն՝ ոչ 'ի բընութենէն, և ոչ յարուեստէն, արդ լինել ինչ յայտնեալ առ 'ի բարեխառնէն։ Զի որ ասկաւ մի յառաջ Սինկղիտոյ բանաւորնէր, նա շուրջ 'ի Կորնթոս զերզերբէր ընդ մամնաւորն կանանայն, և նառնէր 'ի խանութ խաղաղեցայն, և քաղեր բառնեալ խառնեալ 'ի սպանդանոցպետացն, և զմուծէր կարգեր 'ի հրապարակն ընդ կանանց բաղից և աղաղչանաց, և կըթեր մարմներ յերգս զկառավարս, և 'ի թատերական նուագում արայբարէր ընդ նոսա մասն ներբողաշխարհութեան մերձերգեացն։ Կէսք կարծէին զարծել այսպէս Դիոնիսեայ՝ բոլոր յազգի հասարակ և մերձ անդամոյն զօրով 'ի բնութենէն և անծուծկալութեան։ Իսկ կէսք զարմացեալ, թէ այնպէս անպարտեալ խոնարհեցի, և մի երկեցին Կորնթացիք, և մի ինչ խիթացեալ՝ բոլոր զծովապետեր նմա փոփոխխութիւն կեանցն լինելով, եթէ մեծամեծութեամբ նա խորհ լինեցի բառն զսարծոց հարկանել. ուսանի և ներբհանդարտ բառայ բարբառոյն բա_

ղում խստամտութիւն 'ի դէմս բերելոյ 'ի քաղաքավարութեան իւրում:

Սակայն և են են նորա բանք, որ քաջ իսկ ցուցանեն՝ զի մեծապէս արութեամբ բերէր նա զաղէտս վշտին: Քանզի գնացեալ նորա 'ի Լեւկադէ քաղաքէ զաղթական Կորնթացւոց՝ իբրու զՍիրակուսացւոցն, ասէր՝ եթէ դէպք պատահեն նմա ըստ մանկութեանն՝ որ յանցուցեալսն իցեն. քանզի զորօրինակ նոքա հրճուանօք վարէին ընդ եղբարց իւրեանց, իսկ 'ի հարցն պատակառեալք խորշէին. սոյնպէս և ինքն պատկառէ 'ի քաղաքամօրէն՝ և մատդիւրագոյնս գեղեցիկ առ նոսա: Իսկ 'ի Կորնթոս՝ իբրև ամն յեկաց անտի 'ի սակս խնամոտ կենակցութեան նորա ընդ իմաստասէրս 'ի բռնաւորութեան իւրում՝ զառնապէս խաղ արարեալ, այլա 'ի վերջէ հարցանէր՝ եթէ զի՞նչ օգուտ 'ի նեռքս եբեր նմա իմաստութիւնն Գղատոնի, եւս պատասխանի Դիոնեսիոս, “ Ու կարծիցե՞մք մեք քեզ թերևս, եթէ ոչինչ շահեցաք մեք 'ի Գղատոնէ՝ 'ի տանել մեզ այսպէս համբերութեամբ փոփոխութեան բախտին “: Իսկ հարցեալ յԱրիստոքսենեայ երաժշտէ և յայլոց բազմաց, եթէ ուստի՞ արդեօք և զի՞նչ նա դըժկամակեալ զժտեցաւ ընդ Գղատոնի, ասէր, եթէ՝ Թէպէտ և լի՛ բազմապատիկ չարեօք բռնաւորութիւնդ իցէ, սակայն չարեւս քան զամենայն այն է՝ զի յանուանեալ բարեկամաց չիք ոք ազատախօս. և զի 'ի սադրելոյ այնպիսեացն կորոյս նա զմեր-

մուԹիւնն Պղատոնի ։ Բայց և մի ոմն յայնցանէ՝ որ հանճարախօսացս խնդրէին լինել, խաղ առարեալ ՚ի մտանելն առ Դիոնեսիոս , առեալ Թօթափէր զձորձս իւր՝ իբրու մտեալ առ ոք ՚ի բռնաւորաց 3 . փոխարէն և Դիոնեսիոս խաղ առարեալ զայլն՝ հրամայէր նմա զնոյն բան առնել յելանելն արտաքս , զի մի ինչ Թերևս առեալ տարցէ ընդ իւր ՚ի տանէն ։ Իսկ և առ Փիլիպպոս Մակեդոնացի , որ հեգնաբար ՚ի կոչունս ուրեք բանս արկեալ վասն տաղից և ողբերգութեանց Դիոնեսիոսի երիցու , վարանէր յանձն եԹէ յորժամ ժամու արդեօք պարապեցաւ նա գրել զայնոսիկ , ոչ ինչ տարապաղեալ ետ պատասխանի այս Դիոնեսիոս , եԹէ , " Յորժամ ժամու՝ դու և ես և առհասարակ ամենայն կարծեալ երջանիկքս գեղխեցաք ՚ի բաժակս " ։ Բայց զԴիոնեսիոս չետես Պղատոն ՚ի ԿորնԹոս , քանզի մեռեալ էր ։ Իսկ Դիոգինէս Սինոպացի , հանդիպեալ զառաջինն Դիոնեսիոսեայ, ասէր այսպէս . " Բարեաւ Դիոնեսիէ , զինորդ յանարժանս կեաս դու " . Իբրև նա զանէզի կալեալ ես պատասխանի , եԹէ " Քաջ իսկ Դիոգինէս , ախտակից մերոյս լինիս վշտաց " ։ Կրկնեաց անդրէն Դիոգինէս . " Ոչ զինչ ասես , համարեցիս Թերևս ախտակից լինել քեզ , և ոչ մանաւանդ զայրանալ . զի գերի գոլով քո աւադիկ և արժանի ծերանալոյդ և մեռանելոյդ ՚ի բռնաւորուԹեանդ իբրև զհայր քո , կեաս դու այժմիկ ընդ մեզ ՚ի զբօսանս և ՚ի գգուանս " ։

Որպէս զի և 'ի կշիռ ձգեալ իմ՝ զայսոսիկ ընդ բանիցն Փիլիստոսի՝ զոր ախտակցաչափ ատէր ընդ զաւակումն Լեպտինեայ, որք 'ի վայելչութ բանաւորութեանն անկեալ՝ կեանս վարէին հեշտացեալս, թուի ինձ զմնչալ և զկոծ լսել զկնոջ՝ որ շէշս խնդրեսցէ իւր կշռեալս, և ծիրանիս, և ոսկիս։

Այլ այսոքիկ վասն Դիոնիսեայ բանք՝ թուէին ինձ ոչինչ անտարակուսելք յարմարագրութեանս վարուց, և ոչ յանօգուտս անխուծաւոր և անզգոյշ լսելեացն։ Եւ արդարև նորաբերանչ յոյժ իցէ ձախողակի բանս Դիոնիսեայ, բայց և ոչինչ պատկառ պատճճելի բարեբաստութիւն Տիմոլէոնեայ։ Քանզի ընդ առաւօտս յետոյն հասեալ 'ի Սիկիլիա, ակնարկեաց զոգեկէն Սիրակուսացւոց, և առեալ արձակեալ զԴիոնիսիոս 'ի Պեղոպոննէսոս։ Վասն որոյ և առաւել ևս քաջալերեալ Կորնթացիք՝ երկուս ևս հազարս հետեւակաց առաքեցին առ նա և երիվարս երկերիւր։ Իսկ հասին նոքա 'ի Թուրիոնի, և քանզի զծովն զբաւեալ էր նաւաց բազմաց Կարքեդոնացւոց, ոչինչ յառաջ խաղացեալ անդէն զանեզի առնուլին տարածեալք գէպ ժամանակին. և անդ 'ի պատերազմութեան գործ գեղեցիկ 'ի նորքա բերին նոքա։ Քանզի զպահպանութիւն քաղաքին յանձն առեալք, մինչդեռ Թուրիոնացիք ելեալ կռուեցան ընդ Բրետտացւոց, ողջ և հաւատարիմ պահեցին նոքա զաւանդն՝ իբրու զհեռեանց հայրենի քաղաքէ։

Իսկ անդուստ Իկետէս պաշարումն ա-

ծնեալ գովեսին Սեբաստացւոյ · առաջնորդեցայ ըն-
դհանրական կարգաւորութեան՝ որ վիճակեալ կային
անդրանիկ · առ այս՝ և գերեզման ամենայն յե-
կեղց պաշտօնեաներն հրամայեցեալ նոյնպէս ըն-
դունելով զՏիեզերականն, առնելով զարդարա
րոյ առաջնորդեր գնացա յԱղուանից՝ ուղղա-
նոր Տիեզերականութեան չէին ամենաշնորհա-
դեցինք, և 'ի ժամանակ քահանայապետեալ յա-
ջողեալ՝ անդրանիկ և ամենայնական բնակիչք նոս
'ի մէջ Աղուանիցն : Իսկ որք առաջնորդե-
ցանին, լուր առնելով ըստ գիտելոյ զոր կա-
տարեալ Տիեզերականութեան, չոգան 'ի մեհեան
անդր և գաղտնիք նոցա ընդ ձորաձորս · մե-
նեալք 'ի խաւարին շուրջ զարագայս և առա-
կաւ յառաջեալք կամեցին անդէն առ ըն-
հարուածն · մինչդեռ այնպէս նոքա մե-
ռեալ նշանն ասացին 'ի միասին մնալ 'ի գործն,
անդուստ այր մի 'ի խաւարէն շեշտ զվաղվա-
կասորս առնել խղճահարեր 'ի գլուխ մեռոյ
'ի նոցանէն · և տարապաշտ առնելով զնոսա՝ ոչ
հարկաւորէին զանձեալ առանձին և ոչ ընկեր ըն-
դունելոյն · նա առնելով զվաղվաղակաւորն խոր՝
փախուցեալ ապաւինեալ 'ի մեծ լայ բազմաձու-
մեծի, և առ փութացեալ գիրկս ածեալ
բազմաց՝ աներկեւանութեամբ անձինն խոն-
դրեր 'ի Տիեզերականութեան՝ խոստացեալ պատ-
մել նմա զամենայն · իսկ և զինդրին էառ՝
կայր առաջ պատահեր ոճով եթէ զինչ
լինչն և որ տարապատաւն անկաւ՝ առաջնորդեցան
անդր 'ի տապանատեղ զնոսա : Յայնժամ գնա-
ցեալ խղճահարէին և ապաւինեալն 'ի մէջ
անդր · ձայն բարձեալ աղաղակեր այրն, ե-

թէ ոչինչ անխրատեցաւ, այլ խրատամիջ սպան զայրն զայն փոխանակ մահուն հօրն իւրոյ՝ զոր այն այր յառաջ ժամանակաւ ՚ի Ղեւոնտինոն սպանեալ էր. անդ և որ շուրջն կային՝ վկայէին նմա զայն, յափշութիւն հարեալք ընդ գեղեցիկ հնարիմացութեն բախտին, եւ թէ զիա՞րդ այլ ինչ խոզք զա՛յլ ինչ ՚ի շարժումն ածէ և ՚ի մի ժողովեալ զամենայն զհեռաւորսն և յերիւրեալ ընդ աննմանս ՚ի միմեանց և ընդ օտարս, զայնոսիկ առեալ վարէ իբրև վախճանս միմեանց և պատճառս: Այսպ զայրն զայն առեալ Կորնթացիք պսակեցին տասն մնասիւք, զի զիրաւացին զեւր զկիրսն գործի ՚ի ձեռս ետ Քաջին՝ որ պահապանն էր Տիմողեւոնդեայ. և զոր անգուստ ՚ի վերուստ զպատմութիւն բարկութեան իւրոյ՝ ո՛չ թափեաց յառաջագոյն, այլ առանձին պատճառաւն պահեաց ցայնվայր ըստ գեղեցիկ բախտին և ՚ի փրկութիւն Տիմողեւոնդեայ: Այլ բարեբաստիկ եւք ժամուն խրախոյս մեծապէս ՚ի ներքս տայր և վասն համդերձելոցն. և այնուհետև իբրև զայր սուրբ տեսեալ նոցա զՏիմողեւոնդ, և համդերձ սատուծով եկեալ հասեալ ՚ի վրէժխնդրութիւն Սիկիլիոյ, շուք և պահպանութիւն հարկանէին նմա:

Այլ Իկետեայ ՚ի գերւս ելեալ նենգին, և տեսեալ եւ՝ զի շատք գնացեալ միաբանեցան ընդ Տիմողեւոնդեայ, ընդ անձին ողորէր՝ զի բանակ մեծ այնպիսի կայր ՚ի ձեռին ունելով զԿարքեդոնացւոցն, խո-

նայօրէն վառէր զաղաղակով 'ի ներքս ար-
կանել զօգնութիւն նիզակակցացն ։ Ապա
առաքէր կոչէր զՄագոն զօրավար նոցա
համերկրեամբ ամենայն բանակաւն, հորդան
ատալ առհասարակին զօրութեամբ և 'ի նաւահանգ-
գիստ անդր մտանել համերկրեամբ հարիւր և
յիսուն նաւօք . որ և համեալ 'ի ցամաք
վեց բիւր հետևակաց, բաշխէր նստուցանէր
զնոսա 'ի քաղաքէն Սիրակուսացւոց . յոր-
ժամ և առհասարակ թուէր թէ այնուհետև՝ ե-
թէ եկեալ հասեալ ուրեմն իցէ անշուշտ
նախապատրաստութիւն այն և ապաստանեալն նուա-
ճութիւն Սիկիլիոյ 'ի բարբարոսաց ։ Քան-
զի ցայնվայր 'ի մնացոտս բազմաց ոչ ժամա-
նեցին Կարքեդոնացիք առնուլ Սիրակու-
սայ . իսկ յայնժամ 'ի մատնութենէն Իկե-
տայ հորդան 'ի ներքս՝ անդ էր տեսանել
զքաղաքն լցեալ բանակելով բարբարոսաց ։

Բայց որք 'ի ներքս 'ի դղեկին փակեալ
Կորնթացիք՝ 'ի մեծ վտանգ պաշարեալ կայ-
յին նուաղեալք յամփոփոց . քանզի և նա-
ւահանգստացն պահ թշնամեացն ունէին, և
խնդրեանք ցանկ 'ի կռուի էին շուրջ զպա-
րսպօքն, բաշխեալք 'ի կողմն կողմն զդէմ
ունել հնարիմացութեանց և ազգի ազգի
յարձակմանց Կարքեդոնացւոց ։ Այլ Տի-
մոլէոնդ 'ի զօրավարացն առաքէր նոցա ցո-
րեան 'ի Կատանեայ 'ի նաւակս ձկնորսաց
և յակատս մանունս, որ 'ի յուզել ծովուն
և 'ի մրրկել՝ սպրդեալք ընդ մէջ նաւաց
բարբարոսացն՝ անցանէին զաղաղակով, յոր-
ժամ 'ի կոհակաց անտի և 'ի ծփանացն .

վարեալք 'ի բաց լինէին նաւքն : Իսկ ի-
բաղդման եղեն Մագոն և Իկետաս , խոր-
հեցան համանել ունել զԿատանեիս զամ-
բարանոց պաշարելոցն. այլա այլընտանիր զէնս
ընտանիր ապաստարեալ խաղացին նաւեցին 'ի Սի-
րակուսայ : Իսկ անդուստ զօրավար պաշա-
րելոցն 'ի դղեկին՝ Ղեւոնդ անուն Կորըն-
թացի՝ դիտակին կալեալ 'ի բարձանց , զի
որք մնացինն անդանօր 'ի թշնամեաց՝ յու-
լացեալք յանհոգս կային , յանկարծակի յե-
ղակարծումն ժամու անկանէր ասպատակու-
թեամբ 'ի վերայ ցիրուցան զօրուն , զկէսս
սպառասպառ արկեալ , և զկէսս 'ի փախուստ
դարձուցեալ՝ հասեալ կալաւ զմայրին ան-
ուանեալ Աքրադինէ . և մասն է աս քա-
ղաքին Սիրակուսացւոց ամուր և անառիկ՝
մայր առկայացեալ և կապեալ 'ի բազում
քաղաքաց : Անդանօր լիացեալ Կորնթա-
ցւոցն ցորենովք և արծաթովք , ոչ զմայրն
լքեալ , և ոչ անդրէն 'ի դղեակն անդրի առ-
նեալք , շուրջ ամրութեամբ ածէին Աքրա-
դինեայ և պատնիշօք կապեալ ընդ դղեկին ,
պահէին և զնա : Իսկ անդ Մագոն և Իկե-
տէս մօտ հասեալք 'ի Կատանէ , զուժկան
ձիաւոր 'ի Սիրակուսայ բոթ բերէր նոցա
զառմանն Աքրադինեայ : Յորմէ առհասա-
րակ խռովեալք 'ի շտապ տագնապի դառ-
նային նոքա յետս , ոչ զքաղաքն առեալ՝
զոր աղաղաւ խաղացին գնացին , և ոչ զայն
պահեալք՝ զոր 'ի բուռն ունէին :

Արդ՝ որ ինչ ցայս վայր դէպք , իմաս-
տութեան և քաջութեան 'ի պայքար մնացեն

ընդ [illegible]. [illegible] որ յետ այսորիկ՝ զեկեղե-
ցին [illegible] միայն [illegible]:
[illegible] որ անդ 'ի [illegible] Կորնթացիք՝
[illegible] 'ի նոսա Կապադովկացւոցն՝
յորոց և [illegible] 'ի [illegible]-
թեանն [illegible], [illegible] և 'ի [illegible]-
նացեալ [illegible] ծոմք [illegible] բա-
զանս, [illegible] [illegible] [illegible] խա-
ղաղին ընդ [illegible] ընդ Քրիստոնէիւ. և ան-
ցեալ է [illegible] [illegible], և է ու-
րեք [illegible], երկեալ [illegible] 'ի
Հռովմայեցին, [illegible] [illegible] [illegible]
[illegible] ծոմք: Իսկ [illegible] նոսա Մակ-
կեդոնացւոց Աննէն ոչ էր [illegible] Կորն-
թացւոցն, և կարծեալ եթէ անդ [illegible]-
[illegible] [illegible] կան, Հինգ [illegible]՝
[illegible] կարծէր՝ [illegible] [illegible]:
Եւ [illegible] [illegible] [illegible] [illegible], և
[illegible] [illegible] [illegible] և [illegible]-
[illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] 'ի
Միջագետս. [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible],
'ի կայսեր և 'ի ծառայս և 'ի [illegible] [illegible] [illegible]-
[illegible], եթէ 'ի [illegible] [illegible]
[illegible] 'ի [illegible] նո-
ցա, զի [illegible] [illegible] [illegible] [illegible]-
[illegible]. Մինչդեռ նոյն յայն [illegible] և 'ի
[illegible] [illegible] [illegible], Կորնթացիք
որ ընդ Քրիստոնէից [illegible] [illegible] [illegible]
'ի Հռովմայեցին, [illegible] [illegible] ըն-
[illegible], և [illegible] [illegible] [illegible]
[illegible], զի և [illegible] [illegible] [illegible] [illegible]
և [illegible], [illegible] [illegible] 'ի նո-

ւանկան տարապուլերս եւ 'ի ձկնորսացն՝ որ առ ձեռամբ կային, եղեն 'ի Սիկիլիա անհերկեան եւ մեծապէս խաղաղութեամբ՝ զի եւ զերաստանականն առնել ձգեին 'ի նաւականցն զերկիւղարան՝ որ 'ի լիւղ անկեալ էին : Անդ ժողովեր զնոսա Տիմոլեւոնդ, եւ անդէն ակրոանայր 'ի վերայ Մեսսինայ. ասէր կարէ գնալ չու առնեն գեալ ուղեղ 'ի Սիրակուսա, քան 'ի զօրութիւն չորեքհարիւր զօրականն խոլոյ՝ առաւել 'ի գերեցիկ իւր բանական տարասանոն եւ 'ի յաղթողութիւն նահատակութեանցն :

Իսկ Մամերկոն՝ որ զոհի հայրեալ լուկ էր, լուր առնել զդալստեան Տիմոլեւոնդեայ, առաւել եւ վարանեցաւ : Այդ՝ 'ի ձմեհիձան՝ որ շուրջ կան զքաղաքաւ եւ ջուր շատ քաղցր առնէրն նոքա յաղքերաց անոփ եւ 'ի լճաց եւ 'ի գետոց որ իջանեն 'ի ծովն, բազմութիւն կայտառայ անդամոր օձաձկանց, եւ որոց կամինցինն՝ որս առատ 'ի ներքս մատուցանէ նոցա հանապազ : Այսպէս 'ի վայր անդր զօրականք վարձկանք յերկուց եւ կողմանց՝ 'ի պարապութեան խաբեանց եւ յազատութեան զայլն մտաբան տրոսալ 'ի ձկանց անտի. եւ առ հասարակ նոքա Հելլենացիք 'ի բնէ եւ առանձինն ոչինչ թշնամանացեալք, թէպէտ 'ի ժամ կռուոյն սաստիկ մարտուցեալք ընդ իրեարս, այլ 'ի պարապութեանն յաճախ կենակից խօսակիցք էին միմեանց : Եւ յայնժամ եւ պարապեալ նոքա յորսն հասարակաց՝ խօսակիցք զարմանացեալք ընդ գե_

մերձիկ անդորրութեան ծովուն և ընդ վայել-
չութեան վայրացն, անդ ուր 'ի կործանեալ
դորականանէն ասէր այսպէս. «Եւ ասկայն
ղեկավարք դոյա մեծ և հոյակապ և գեղեց-
կագոյն դուք Խեղճնեն Հեղլենացիք գոլով
խնդրէք 'ի խուժադուժ կարգել, բնակա-
կից մեզ ածելով այսր զվայրենի և զանդ-
դամասուռ Կապադովկացւոցն. ուր զի ցան-
կալի եւ էր՝ եթէ և Սեկեղեայք այլք բա-
րուսք էին 'ի մէջի ընդդէմ գոյա կացեալք
առաքելեալք Եղլադայ: Կամ թէ համարե-
ցիք թերես՝ եթէ գոքա այսր դրդաժողով
անդուստ յարձանացն Հերակլեանց և 'ի
ծովէն Ատլանտեան՝ հասեալ իցեն կառուել
'ի մերում աշխարութեանն Խեթեանց. որ թէ
'ի քաղաքամոլհութեան դորամէտաց որք էր՝ ոչ
էինչ առաջելոց զնահանաձնորդս խառ վանեէր հա-
լածէր, և ոչ զարձեալ զթշնամեան 'ի հայ-
րենեան առնել մուծանէր. այլ շուք զա-
մենայն և զգեղեցիկ առաջութեանն զըն-
ասակս ածեալ էր՝ զհետ կորնթացւոցն
զնացեալ և զՏիմոթէոսեան դեալ»: Արդ զայս
բանս վարձկան դորականաց զվայրոցք առնել
ածէին 'ի բանակեն, յայնժամ Մաղոն՝
որ 'ի վաղնջուց խոկ բարուքն խնդրէր զառ-
նուլ 'ի ասուն, զանդիսակեաց եթէ զաւ ուա-
սեալ լինիցի. բայց Խեթեաէս առաջնէր զնա
կալ մնալ անդէն, ցուցանել քանզի ա-
ռաւել հզօր իցեն նոքա քան զթշնամին.
այլ նա քան 'ի բազմութեան զօրացն մե-
հաղոյն՝ մեծապէս խոնարհագոյն յառա-
ջինութեան և 'ի բախտին քան զՏիմո-

զեւոնդ համարեալ զանձն, անդէն յարու-ցեալ չու առնէր խաղաղայր նաւէր 'ի Լի-բիա. այնպէս անպարտաբար հանեալ յայն-ժամ 'ի ձեռաց զՍիկելիա՝ ոչինչ ունելով այլն 'ի գեղեցիկ խորհրդոց:

Այս յաւուրն երկրորդի յանդիման երեւէր Տիմողեւոնդ ճակատեցուցեալ ըզ-զօրն 'ի կազմ մարտի: Բայց լուր առեալ զփախստեան Կարքեդոնացւոցն և տե-սեալ զամայութիւն զնաւահանգացն, սկսան ունչս առնել անարգի վատութեան Մագո-նին. շուրջ եկեալ զվայրքն ածէին 'ի քա-ղաքին, եթէ որ գուշակն երբեք լինեցի անեղեալ ապաստանեալ Կարքեդոնացւոց նա-ւացն՝ մրցանակ տայցի: Այլ Իկետէս վա-ռեալ 'ի կռուել և 'ի պահել զոր 'ի բուռն ունէր՝ վայրս ամուրս զքաղաքին և զչու-ժուարակռուելիս, սակս և Տիմողեւոնդ բաշխեաց բաժանեաց զզօրն. յինքն առեալ զառաջին գունդն՝ գխմագրաւ յառաջ Նա-հատակեցաւ առ Անապոս գետոյն ընդ վայր դժուարուտ. հրաման տայր երկրորդի գնդին անկանել 'ի կողմանէ անտի Աքրա-դինայ, և էր զօրավար Իսիաս Կորնթացի. իսկ Դինարկոս և Դեմարետոս՝ որ 'ի վեր-ջէ զզօրականն ածին 'ի Կորնթոսէ, հան-գերձ երրորդ գնդաւն խաղացին 'ի կողմն Եպիպողեայ: Արդ՝ եթէ այնպէս արագ առ արագ ըմբռնեալ նուաճեցաւ ողջոյն քա-ղաքն յանդիման գտեալ՝ 'ի կողմանց կող-մանց դառնյթս առեալ և 'ի փախուստ զԻ-կետեանսն վանեալ, քաջութեան զօրա-

կամեին խորտակմամբ որք զայդ ընծայեցին և առաքինութեան զօրավարքն. այլ զի ոչ որք անդ ասպարիզաւ անկեալ և կամ խոյս ձեռաց 'ի Կորնթացւոց անտի, բարեաւն Տիմոլէոնի զեկոյ եղև այս աղբերք, և բարեաւն Նիկիանի բան մեծացեալ ընդ առաքինութեան այն. որպէս զի որք խորտակեցին եղբարք ընկեցին բանին, քան ընդ քաջութիւն նորա՝ ընդ բարեբաստակի նահատակութիւնն հիացեալ զարմանալեացն. քանզի և ոչ միայն ընդ Աղեսիղայոս ոսկեղէն և ընդ Տիմոթէոս մեծութեամբ զհամբաւ համբաւ զործն, այլ և համարձակ Նիկիանի և Եպամինոնդայ հնչեաց յաւետագոյն ձայնիւն. զի և Կորնթոս քաղաքք՝ որ և ոչ զհամանուներս զօրավարութիւն զխնդիր ինչ, միայն զանձնոյն լուր եւս և զհամանուներն և զյաղթութիւնն: Այնպէս նա բարեբաստակ զասան ամենայն նահատակութիւնք նոցա, և ընդ փառաց մեծացանացն 'ի վերայ բարեգործ բարեաւն և զօրաւորութեան գործոյն:

Այսպէս անկրացեալ 'ի վերայ զգեստն Տիմոլէոնի, ոչ զնոյն խորհուրդ կալեալ զԴիոնի, և ոչ խնայեաց ինչ 'ի գեղեցիկ ձեռքն և 'ի հոյակապ աշտարակն. զզուշացեալ յամբարտաւանութենէն զոր ամբարտաւանեցաւ Դիոնն և հեղձաւ. քանզի կարդալ զի որ մեծացեալ 'ի Մեծաւորութեանց կամեցաւ անդր հասցէ երկաթ 'ի ձեռանն՝ քանդել տապալել զամենայն բանաւորացն: Անդամոր ապա առ համարձակ երեւալ 'ի վեր, զպարագ զայն և զոր զայն ակնկալ անդրանակելի առաւօտեան համարձակ քաղաքին, հինն

'ի վեր քանդեցին ո՛չ զդղեակն միայն, այլ և զապարանսն բռնաւորաց և զշիրիմս նոցա: Իբրև նոքա այնպէս փութապէս հիմնայատակ արարին, անդ և Տիմողեւոնդ շինէր դատաստանարան 'ի շնորհս քաղաքացեացն՝ զռամկապետութիւնն յարգեալ քան զբռնաւորութիւնն:

Յետ այնորիկ ողջոյն տիրացեալ քաղաքին, և տեսեալ զի չէր մարդաշատ, քանզի բազումք տապաստ անկան 'ի պատերազմունս և 'ի կռիւս, և շատք ևս էին փախուցեալք առ 'ի բռնաւորաց, ուստի և հրապարակին Սիրակուսայ կարգեալ յամայի՝ խոտոյ և խոտ բազում և թաւ բուսեալ ածեցեալ կայր 'ի նմա. և անդ երիվարք զնայցին յարօտ, և կոյտառուածք անդամոր ընկողմանեալք 'ի թաւուտս հանգիստ առնուին. իսկ այլ քաղաքքն՝ բաց 'ի սակաւուց՝ լի էին առհասարակ բուսովք եղջերուաց և երամակօք կինճից վայրենեաց. և պարապորդք մարդիկն առնէին երբեմն յորս բազմակօք 'ի բուրաստանս և շուրջ զբը պատուարօքն. և 'ի նոցանէն զապաստանեալ՝ որ միանգամ յաշտարակս ամրոցս և յամուրս բնակեալ էին, ո՛չ ոք անսայր և 'ի քաղաքն երթալ իջանէր. այնպէս առհասարակ զատէին և ատէին զհրապարակն և զքաղաքականութիւնն և զատեանս, յորոց 'ի վեր երևեցան բռնաւորք նոցա բազմաց մասնակ: Ապա հաճոյ թուեցաւ Տիմողեւոնդեայ և Սիրակուսացւոցն առաքել առ Կորնթացիս, առաքել նոցա զաղ

[illegible]

կողմին շառաւ 'ի փափկասնելոց անտի, յորդոր-րել հրաւիրել առ հասարակ 'ի Կորնթոս. զի անդրանոր Կորնթացիք խաղալեաց խաղ ծա-խաղուց տարցեն նոցա միանգամայն և պարգևս և նուէրս և զօրավարս ածել զնոսա յանդոր-րութ 'ի Մակեդոնիա։

Իսկ և այս բանիւք զհաւանեալս հայրեն, այլ-նուհետև զԿորնթացւոց քաղաքն զեղե-ցիկս 'ի զուարճութիւն առնել՝ պատուաշաճութեամբն և ափրոդիտէին հետև պատուոյ 'ի բանաստեղծս և զինելիկ 'ի բարբարոսաց, և քաղաքապետաց ըն-ծայութեամբ հայրենեաց։ Իսկ որ յաղթեսցէ եկեղեցի հասանին 'ի Կորնթոս՝ ոչինչ շառաւ, ակնածեն ասպարէզ, զի և 'ի Կորնթոսէ և յՈլ-լոմպայ տարցեն նոցա պարգևատրեա։ Ապա ժողովեալ թուով ոչինչ պատկառ բան ըղ-ձեռ մի, եկեղեցւոյ նաւահին 'ի Մակեդոնիա։ Բայց և յԻտալիոյ և 'ի Սելեւկեայ դարձեալ՝ բարզաւանք ընթացան առ Տիմոթէոսիւ. որ-պէս զի և առ հասարակ բարեպաշտութեամբ մնալով կանգնեն՝ որպէս Աթենաս սակէ՝ լինել հետև րանուրաց միջոց։ Արդ նա բաշխեաց 'ի նո-սա զգեստանն, այլ զառանձին բնակութեան զինոց ասայր. և կուսանաց յայնժամ սա-ղմնագս հայրագ. և շնորհէր նախնի բնակ-չացն Մակեդոնացւոց զառանձին նոցա. և այսպէս ասաց միթերս արծաթոյ պատարագա-նաց ժողովրդեան, որ յառաջատեսութեան հասանել էր՝ անձեռանձնահատ 'ի մարմ և յորդ-ւոյ ևս. որպէս զի և զանհաւատս վաճառել նոցա, և միոյ միոյ յանդգնեաց մեծին 'ի մերայ ածել և ապաշխարութեան՝ հետև յան-

[illegible] դատապարտեալ [illegible]

[illegible]

որ 'ի Կորնթոսէ հասեալն կրկին օրհնաբերք, արձակէր զԴինարքոս և զԴեմարետոս համագերձ զօրականօքն 'ի սահմանս կալուածոց կարքեդոնացւոցն : Նոքա խորև քաղաքս բազումս հասեալն 'ի բարբարոսաց, զաւեն անդանօր պաշտար անկաւ ոչ վասն անձանց միայն, այլ և մթերս արծաթոյ պատերազմականացն վասն մարտի պատերազմի յաւուրց անտի :

Զայսու ժամանակաւ եկեալն հասեալն կարքեդոնացիք 'ի Լիբիականն անձեալ բանակ զօրաց եօթանց բիւրուց, քաղաքս նաւաց երկերիւր, և նաւս այլ հազարս բեռնաբարձ մեքենայից և քառանւոց և անասնոց անասնոց և այլոց հանդերձանաց. ոչ եթէ մարտ դնել կռուել ընդ միայն նոյն առանձին, այլ միանգամայն խոկ զՀելլենացիսն 'ի բաց վանել հանել առհասարակ 'ի Սիկիլիոյ : Եւ արդարօք շատ խոկ էր զօրութիւն նոցա նուաճել առհասարակ զՍիկիլիացիս, թէպէտև չէր խոկ յայն շատ աղխկարութեան հասանել ոչըա և առ 'ի միմեանց վատթարեալք : Անդանօր լուր առեալ կարքեդոնացիք զաւարելոյ կալուածոց իւրեանց, պատճառաւ թերանք և բարկութեամբ լի եղեն. արագ արագ զինեալք խաղացին ընդդէմ կորնթացւոց՝ զօրավար զԱսդրուբաս ունելով և զԱմիլքաս : Իսկ և այս լուր հասանէր 'ի Սիրակուսա, պատրաստել լինէին յանկարծ խուժանէ թշնամեացն, զի և 'ի բիւրուց բազմաց քաղաքին՝ երեք հազարք հազիւ խրախուսեցին 'ի դէն՝ խաղալ

ընդ Տիմողեւոնդեայ։ Իսկ 'ի վարժիչան ըս-րակացն էին չորեքհազարք, և 'ի նոցանէ զարմեալ հազար մի վարդապետացն 'ի չուն՝ զարմանն յետս. համարեցին եթէ ոչ ըմբռնեն առ իւր չունիցի Տիմողեւոնդ, և այնուհետ սարսափեալ 'ի հասարակէն ըստ ան-ցեալ եղէ այլոյն, որ հինգ հազար հեռանա-կացք և հազար այլարմաւեալ խաղաղոյ 'ի գլուխ հարկանելով ընթերցող եւթանց, և զաւակաւոր ձեռան զայն զունդ առնելով խաղացուցա-նէր ուխտ առաքելք 'ի բարձեալ 'ի Սեբաստա-այ, ուր ոչ վարդապետացն արդեօք անձնա-ապսպր երկեւք ընկեցին, և ոչ առաքելոց ան-կեալքն՝ թագաւորին ընկալցին։ Այլ Տիմո-ղեւոնդ մեծամասն խնդրոյն՝ զի յառաջ քան զկաթողին նորա ընձեռին մեկնեցոյց որոշեցան. ձայն առնելով միաբանելոց զորականներն՝ խորա-խոյս բառնայր և 'ի ձեռս առաքելոյն խա-ղացուցանէր զնոսա 'ի գետ անդր 'ի Կրե-մեռոն, ուր լուր էառ զգաւառաւ թշնա-մեացն բարգաւաճութեան։

Այլ՝ յետ լանալ նորա 'ի բլուր մի՝ ան-դուստ հայել զնեմել զքանանց թշնամեայն, պատասխանեցան նմա Հոռոմք որ բարձեալ ըն-թերցին լախտոր. խառնեցան զօրականք իրբև 'ի շարաւղաշաւ նշանէ. քանզի առաջոցեալ հեղեցին նոցայք՝ 'ի լախտր պատեկել զգերեզ-մանս, յորում և առաւել առ մեզ վասն օրհա-սականն հիւանդուի ասել, եթէ՝ Լախերոյ ալեփ էն նմա։ Իսկ յայնժամ Տիմողեւոնդ զանա-պաշտութիւնն վանելով 'ի նոցանէ և զվա-տապարտութիւն, զանեղի առնելով 'ի չուն՝

խօսէր բանս զխրատուորս ժամանակին, և ասէր՝ եթէ քան զյաղթութիւնն կանոնուխ ներբառ Նոցա տարակն՝ ինքնին 'ի ձեռս Նոցա եկեալ հասանել. և անկանէր բանիւն 'ի առաջնորդութիւն անդր Կորնթացւոցն, ապակէլ զյաղթականն Իսթմեան մրցանաց. և զայն բոլորս զլախորդ առ Նուաճականսն ունէին Նոքա և առ հայրենասանդս. քանզի և յայնժամ տակաւին Իսթմեանցն, որպէս և այսօր Նեմեան մրցանացն՝ լախոււր էր տարակն. զոր տապա ոչ 'ի վաղնջուց ինչ յաջորդեաց սարոյն: Արդ Տիմոլէոնդ՝ որպէս ասացի՝ խօսեալ այնպէս ընդ զօրականսն, առեալ 'ի լախորոց անտի ինքն առաջին պսակէր զանձն. զնոյն առնէին և զնդապետքն, զնոյն տապա և զօրականք առհասարակ: Իսկ անդանօր իղձք և զուշակք զեստակն կալեալ յարծուիս երկուս գիմեալ 'ի հանդիպոյ, մին հարեալ 'ի մազիլսն՝ վիշապ մի բարձեալ բերէր, իսկ միւսն կարկաչ մեծ բարձեալ և ձայն խրախուսի, այնպէս ծախորէր խոյանայր. և զայն անեալ զուշակքն մատանանիշ առնէին զօրականսին. Նոքա առհասարակ դարձան 'ի մաղթանս առ գիս և կարդային զնոսա:

Եւր յայնժամ սկիզբն ամառնայնոյն, և 'ի հոլովել Տարգեղիոն ամսոյն՝ 'ի վերայ հասեալ կայր Արեգակնադարձն. և անդ տապա մառախուղ մեծ ամբարձեալ 'ի գետոյն՝ միգապատ ծածկեաց զդաշտավայրութիւնն և երևէր և ոչինչ 'ի բանակէ Թշնամեացն. միայն 'ի բլրին զոռախին խառնաձայն և աղ-

[illegible]

[illegible]

կեալք 'ի համդիպոյ տապարս ահագինս՝ այնպէս 'ի բաց ըլթափման տանէին զտիգաց և զգեղարդանց ։ Այլ իբրև ուսերօք չափ նահատակեցան մրցանքն , և ճարտարութեան արուեստին պէտք էին 'ի տեղւոջն՝ ոչինչ պակաս քան զկորովութիւն բազկաց , դէպ եղև զի անդէն արագ արագ ձայնք ահեղք հնչեցին որոտմանց 'ի գագաթանց լերանց , և փայլատակունք հատանէին հրատեսիլք ։ Անդանօր և մառախուղն պատեալ 'ի բլուրս և 'ի կատարս բարձանց՝ եկեալ գումարեալ 'ի վերոյ դաշտի պատերազմին , տեղատարափք իջին անձրևաց մրրկաւ և կարկտիւ . յետուստ և 'ի թիկանց կուսէ թափէր Հելլենացւոցն , և 'ի համդիպոյ բաղխեալ հարկանէր զբարբարոսացն զերեսս , որպէս զի և 'ի սաստիկ մրրկէ բքոյն և յամպրոպացն անդուլ հատելոյ բոցոյն՝ բլշակնեալ շլացան խուժադուժքն միանգամայն ։

Անդ էր տեսանել զաղէտս ամբաւ տարակուսանաց բարբարոսացն և առաւել զվտանգ զանփորձիցն . բայց որ 'ի շատ մեծի տագնապի առեալ պաշարեաց զնոսա , բոմբիւնք որոտմանցն և կափիւնք վահանացն և շկահիւնք զինուցն՝ հարեալ բաղխեալ 'ի սաստիկ տարափոյն և 'ի կարկտէն , զի և զզօրավարացն անդամ զձայնսն ոչինչ կարէին լսել նոքա ։ Առ այս և մօր վայրացն՝ անհնարին աղէտք այն էին Կարքեդոնացւոցն . զի ոչ քաջագոյն էր զինուորութիւնն նոցա , այլ որպէս ասացի՝

սպառնալեօք վարելով, և տառապանօք նո-
ցա ջլատթաթաւք ծանրացեալք, յորժ զը-
ժուարին մեղէին զմնացեալ. և հեշտին առա-
ջադ յերկիր 'ի Հելլենացւոցն դիմել, ոչ
ինչ այնպէս բաւական էին յառնել առ 'ի
ազնոյն համբերել զմնուքին։ Քանզի և Կըր-
մեռանն յաղթել խոնարհեին անցանելոյ հե-
ղեալ, շատ ինչ և յառաջին յանձինց ան-
ակ յորդեալ, շուրջանակի զհռովմայ՝ յա-
րուած բաղդու էին խոնարհեալ և խորանք՝ ո-
ղորմել 'ի հոսանացն վայրելոց բանութիւ,
Թուալ զգլորրի զԿորնելիոսեանց առանձին և
տառապեալ խուժան տարբմոլ 'ի մերայ նա-
ցա հաստուցանէին։ Նորա տեսանելին զալու-
ցեալ կայր մարմինն, և Հելլենացիք զկարգն
առաջին զխոստացեալ արարին զերկնքհա-
րուր նահատակացն, առաջ և առաւել խու-
ժան նոցա 'ի փախուստ խուժադէր. բայց
անդէն 'ի դաշտին բաղդաւ ընթանալով 'ի
տուր մաշեցան, և բաղդաւ նա զերա-
մեծ տարբերով 'ի յորձանացն՝ 'ի պատա-
հել և յանդհարկանել այլ ընդ ընկերի.
իսկ բազմամբոխն 'ի նոցանէ անձնատուրք
հասանել ունել զբլուրն՝ անդանոր 'ի Թե-
Թեաղէն զօրականէն տառապեալին։

Եւ ասեն՝ եթէ 'ի բիւրուց ամենի ան-
կելոց 'ի մարտին, երկեքհազարեանն բնա-
կանունդք էին Կորնելիոսի, կոծ մեծ և
աշխար վասն քաղաքին. քանզի և չէր իսկ
նոցա այլ իշխող զօրեարն զայն յաղթուա-
կանաց և յանհնաւելոց և 'ի փառաւորաց.
և երբեք յառաջ ժամանակաւ՝ ոչ լուան

նոքա եթէ 'ի միում մարտի որեար այնչափ 'ի մահ վարեցաւ 'ի քաղաքէն յայնմանէ. այլ բազում անգամ Կարքեդոնացիք՝ Լիբէացւովք և Իբերիացւովք և Նումիդացւովք վարեալք 'ի մարտս՝ այնպէս յօտարացն տուգանս նկունք լինէին: Եւ ինքնին Հելլենացիք յաւարաց անտի համօրէն 'ի վերայ կացին աւագութեան որերոյն. քանզի աւարառուացն փոյթ դուզնաքեայ էր յայնժամ վասն պղնձոյ և երկաթոյ. այնպէս իմն առատութեամբ էր անդ արծաթն, առատ և ոսկին. քանզի անցեալք ընդ գետն տիրացան նոքա բուն բանակին և ամենայն աղխին: Իսկ 'ի դերելոց անտի թէպէտ և բազումք գաղտագողի փախեան, հինգ հազարաւ չափ եկին 'ի մէջ անդր. կալան և քառաձիս երկերիւր: Եւ 'ի վրանին Տիմոլէոնդեայ նոր և չքնաղ էր տեսիլն, լի և զեղուն յանկածէ աղխի աղխի և դուճակ դուճակ կահուց կարասեաց, յորս և հազար պատեանք զրահից՝ գործ ճարտարաց և գեղով աննմանք, և բիւրք յասպարաց: Եւ իբրև այնպէս շատ էր աւարն, և սակաւք՝ աւարառուք, և կապուտ կողոպուտ առատ, հազիւ ուրեմն յաւուրն երրորդի յետ մարտին նշան յաղթութեան կանգնեցին:

Յայնժամ Տիմոլէոնդ 'ի միասին ընդ աւետաբեր համբաւոյ յաղթութեանն՝ առեալ առաքէր 'ի Կորնթոս և զգեղեցիկն 'ի զինուց զինուց աւարին. և այնպէս կամէր նա ընձակերտս և համբաւա-

ամենեց զՀելլենսն. քաղաքացն յարդարանել առ-
ամենայն մասանց. զի 'ի մէջ ամենայն քաղա-
քացն Եղլադայ ամենաւոր միայն յանկն
արկցեն նորա մեհեանս հոյակապս՝ ոչ 'ի
հեթանոսացն առատացն զարդարանէ, և ոչ 'ի
նորամեկին ձեռնից կարգելոց՝ յուշարար գծագ-
րականին մեծահոյակաց ընտանեացն և համաքաղաք-
ացն, այլ 'ի բարեբարոյսացն անկանծէ. զե-
ղեցիկ արձանագրութեամբն 'ի գէտս ըն-
ըերրով միանդամայն ընդ արիութեան յաղ-
թականացն և զարդարութեանն, եթէ՝
զհայրդ Կորնթացիք և Նոցուն ղրկուաւոր Տի-
մողէոնդ 'ի ձեռաց խժդժիցն զՀելլենա-
ցիսն փրկեալ ընակաւորս Սիկիլիոյ, զայն
անկած առ 'ի ձեռն կախեցին ամենաւոր 'ի
ընտրհս առատատուածոց։

Սալ յետ այնորիկ թագաւոր Տիմողէոնդ-
յերկրի անդ Թշնամեայն զվարձկանսն զօ-
րականին՝ յառաջի առանուլ քանդել առե-
րել զամենայն զԿարթագենդոնացւոց, ենչն չու-
արար զարձաւ 'ի Սիրակուսա. և անդ մե-
տարանդի հանէր 'ի Սեկելիոյ զհաղարան 'ի
վարձկանացն՝ որ յառաջ քան զկալեմ
զատեալք որոշեցան, և մինչև մեռեալ ա-
ռնուլն՝ 'ի բաց մերժէր 'ի Սիրակուսայ։
Իսկ նորա անցեալք յԻտալիա՝ սատակեցին
զործեալք 'ի Բրետտացւոց, զնոյն պատու-
հաս զմատնութեանն խաբեանց առեալք
յայնժամ 'ի Քաղէն։

Բայց յայնժամ Մամերկոս բռնաւոր
Կատանեայ, և Իկետաս բռնաւորեալք ընդ
նախահատակութեան Տիմողէոնդեայ, և զամե-

գիտեալք են յառնէն , իբրու որ մտերիմ
և դաշնաւոր երբէք չէկացնա բռնաւորացն,
յուխտ նիզակակցութեան մտին ընդ Կար-
քեդոնացւոցն . առաքեցին Թախանձ ար-
կանէին արձակել զօրականս և զօրավար ,
եթէ չկամին նոքա խաղաղ անբաժ մնալ 'ի
Սիկիլիոյ : Գայր ապա հասանէր առ նոսա
Գեսկոն հանդերձ եօթանասուն նաւուք ,
կալաւ 'ի վարձու և 'ի Հելլենացւոց անտի,
Թէպէտև յառաջ ժամանակաւ երբէք չա-
րարին այնպէս Կարքեդոնացիք . այլ յայն-
ժամ հիացեալ իմն էին ընդ նոսա՝ իբրու
որ անվանելիք իցեն և քաջամարտիկ քան
զամենայն մարդ : Ապա 'ի մի վայր խմբեալ
առհասարակ 'ի Մեսսենիա , նախ զչորեք-
հարիւր զօրականսն զեկս կոտորեցին, զոր
անդր 'ի զօրավիգն արձակեալ էր ինքնին
Տիմողէւոնդ . յետ այնորիկ դարանամուտ
եղեալ 'ի սահմանսն Կարքեդոնացւոց մօտ
վայրացն՝ զոր կարդան Եր***, ընդ սուր ըզ-
վարձկանսն հանէին՝ որ էին ընդ Եւթիմո-
սի Լեւկադեան . յորմէ ապա մեծ եւ ըզ-
համբաւի հարկանէր բաղդն Տիմողէւոն-
դեայ : Քանզի սոքա 'ի նոցանէ էին՝ որ 'ի
միասին ընդ Փիլոդեմեայ Փոկէացւոյ և
ընդ Ոնոմարքեայ հասեալ կալան զԴեղ-
փիս և բաժանորդք կացին սեղանակապ-
տութեանն . և ատելիք նոքա այնուհետև
առ ամենեսեան և զարշեալք իբրև նզո-
վեալս ոմանս , աստ անդ Թափառականք 'ի
Պելոպոննիսոս , եկեալ խմբեցան յայն-
ժամ ընդ Տիմողէւոնդեայ , քանզի և այլ

զորս չէին 'ի միջի. և ամենայն ազգ 'ի Սիկելիա, և յամենայն 'ի մարտս ընդ նոսա տարան զյաղթութիւնն. բայց առաջ 'ի մեծամեծ մարտից զարդարեալ՝ արձակեցան նոքա 'ի պահպանութիւն ամրոց ամրոց, և ամենայն ընդ ամբոխին ընկէին ոչ միահամուռ, այլ առանձինն. ցայն մեծ զանազանեալ պատուահասին նոցա 'ի ընտրել բազմացն Տիմոլէոնեանդեայ, որ մեծ թերթս 'ի զանեալ պատերազմացն և ամենապատերազմականացն մեծամեծացն խնչ: Եւ պարանչացեալ մարդկանութեան առաւելածացն առ Տիմոլէոնդ ոչ 'ի յաղթութեան և եթ, այլ և 'ի հնարագիտութեան: Բայց ժողովուրդ Սիրակուսացւոց զարմացեալ էր ընդ առնհանար արհամարհութիւնն 'ի բռնաւորացն. քանզի Մամերկոս՝ այն որ անձին շուք հարկանէր 'ի քերթուածս իւր և յողբերգութիւնս, բարձրացեալ փքացեալ՝ որ եհար կոտորեաց նա զվարձկանսն. և 'ի ձօն դիցն կախեալ զասպարս նոցա, թշնամանագիր ոտս քերթեալ մերկացուցեալ 'ի նոսա, այսպէս. « Զծիրանեկարմիր զասպարսն, և զոսկի յասպիսոյ և 'ի փղոսկրէ և 'ի սաթէ, զինուորանի մեք աժանագինն և զաւղինոտիէութ կուլալ առաջարդ »:

Այսպիսի այսպէս եղելոց, և Տիմոլէոնդեայ զգուշ աւարեալ զօրան 'ի մերրայ Կաղաքոնիայ, անդրդուատ Իկետեսի անկեալ 'ի վերայ սահմանին Սիրակուսացւոց, առաւ մեծ աւարեաց. և դեռ բազում գործեալ անզամոր, դարձաւ յետս քերրեալ առ Կաղաքոնիավ յարհամարհութիւն

Տիմոլէոնդեայ՝ որ սակաւաձեռն գնդաւ հասեալ էր անդր։ Իսկ Տիմոլէոնդ վայր մի թողեալ զնա խաղալ յառաջ, ապա զհետ մտեալ վանէր այրուձիովն և թեթևազէն հետևակօքն։ Զայն տեսեալ Իկետէս, անցեալ զԴամիւր գետ՝ զտեղի կալաւ անդէն առ ափամբն՝ արգելուլ ըզհետամտութիւն. քանզի և 'ի դժուարանցանելն հունն վստահացեալ էր, և զի և թումբք գետոյն երկուստեք աւերեալք քանդեալ էին։ Բայց անդ զմիմեամբք ել և ելք գնդապետացն Տիմոլէոնդեայ՝ յերկարէր զկռիւն. զի և չէր ոք յայնժամ որ հանդարտէր երկրորդ լինել՝ անցանել անկանել 'ի վերայ թշնամւոյն, այլ այր այր զառաջնութեան թեկն ածէր. և կարգ չէր անցիցն, այլ խառնիխուռն այր զարամբ ելանէին։ Ապա հրաման տայր Տիմոլէոնդ վիճակս արկանել. և զառն առն 'ի գնդապետացն առեալ զմատանիսն, և ժողովեալ 'ի քղամիդ իւր և թօթափեալ, առաջինն՝ զոր հանէր 'ի վիճակէն՝ դէպ եղև զի քանդակ զյաղթանակի ունէր 'ի վերայ կնիք մատանւոյն։ Իբրև զայն տեսին պատանիք՝ ձայն բարձեալ ցնծութեան և ոչ ևս հանդուրժեալ այլոցն վիճակաց, առհասարակ շտապաւ անցեալք ընդ գետն՝ խառնեցան 'ի կռիւն. իսկ թշնամիք ոչինչ հանդարտեալք կալ առաջի նոցա յանդուգն յարձակմանն՝ 'ի փախուստ դառնային, և զէնընկեցք զինաթափք՝ հազար մի անդանօր դիտապաստ անկանէին։ Այլ

յետ առաքելոյն՝ և 'ի քաղաքս անդր Լիկաո-նացւոց յարձակեալ Տիմոթէոսիւ, կեն-դանւոյն զինուորեալ ձեռնադրեալ առնելոյ. ընդ-նմա և զօրէն նորա զՆաւարօգեալս, և զՆե-թերթս զօրականս այլոյ Ճիզոյն, 'ի զօրականեալ անձանց կապեալս և ածեալս առ Տիմո-թէոսի: Այն զինեալս և զօրաւարսն մա-հու դատեցին՝ իբրև զչարագործս և զմա-հիկս. ոչինչ խնայեցին և յՆաւթիսն՝ թէ-պէտ և այլք կապեալք յոյժ և դոռ 'ի մեծարոյն. քանզի ամբաստանեն եղեն զառնելն հայ-հոյութեան խօսեալ ընդդէմ Կորնթաց-ւոց. քանզի պատմեն՝ եթէ 'ի խառնել Կորնթացւոց առ նոսա, առ այս Նաւթիսն հրապարակախօս եղեալ 'ի մէջ Լիկաոնաց-ւոց, ասէր, եթէ չէ ինչ աւհասիկն և չիք զարհուրել, յորժամ «Կորնթացի կա-նայքս արտաքս ելանեն 'ի տանց»: Եւ յայս ընտանութեանն քաղաքացիք, քան ընդ-գործս՝ առաւել կոպտեալ ընդ հայրենեաց քանից. և զժողովեալք կա է նոցա թշնա-մանեն՝ քան զկնաւն. քանզի նորեն մեռ-ուց թշնամանեացն՝ իբրև ոչք հարկաւորեալք լինէին 'ի գործն. այլ լռեալ և հայհոյել՝ թուի թէ ծաղրանօք ասացեալ ծննդոց լինէ և չարութեանն:

Այլ իբրև գտան առաջ Տիմոթէոսի, 'ի դատաստանն քաղաքական Սեբաստացւոց և զկամելայս և զզաւէրս զինուորեալ՝ մահու դատապարտեցին: Եւ այս առաջ գժտա-ւոր հինն ամեն յանձնեայն գործոյն Տիմո-թէոսիդեայ. զի թէ ապրելոց ընդդէմ զաւա-

ձեալ էր նորա՝ ոչ զնոյն օրինակ պատու-
հասէին կանայքդ այդոքիկ. այլ ինձ թուի՝
թողուլ նոցա զնոսա այնպէս 'ի ձեռս
սրտմտութեան քաղաքացեացն, զի նոցուն
ապանութեամբ վրէժխնդիր Դիոնի լինի-
ցին՝ որ վանեացն զԴիոնեսիոս. քանզի սա
այս Իկետէս կենդանւոյն ամաց 'ի ծով
զԱրետաս զկին Դիոնի և զԱրիստոմաքէ
զքոյր նորա և զորդայ մանուկ նորա: Եւ
զայս մեր պատմեալ է 'ի վարսն Դիոնի:

Յետ այսորիկ խաղայր գնայր Տիմո-
ղեւոնդ 'ի վերայ Մամերկոսի 'ի Կատանիա,
թէպէտ և ճակատեալ շատ ընդդէմ եկաց
նա առ Աբօղոս գետովն. այլ 'ի պարտու-
թիւն մատնէր զնա, և 'ի փախուստ դար-
ձուցեալ առաւել քան զերկու հազար 'ի
զօրաց նորա տապաստ արկանէր անդէն 'ի
դաշտին, յորոց ոչ սակաւք էին Փիւնիկե-
ցիք՝ զոր արձակեաց Գեսկոն 'ի թիկունս
նմա: Եւ յայսմանէ խաղաղութիւն խըն-
դրէին Կարքեդոնացիք 'ի Տիմողեւոնդեայ,
պայման կռեալ՝ ունել նոցա միայն զսահ-
մանան յայնկոյս Լիւկոսի. և զի որք կամի-
ցին՝ եկեալ բնակեսցեն 'ի Սիրակուսա
հանդերձ ամենայն աղխիւն իւրեանց, և
յուխտ նիզակակցութեան մի ևս մտցեն
նոքա ընդ բռնաւորաց:

Յայնժամ Մամերկոս յուսահատ ե-
ղեալ նաւեաց յԻտալիա, անդուստ ածել
զԼեւկացիս ընդդէմ Տիմողեւոնդեայ և
Սիրակուսացւոց: Այլ իբրև նիզակակիցք
նորա դարձեալք յետս հանդերձ եռա-

Թիովքն 'ի Սիկիլիա՝ մատնառու եղեն կատանիոյ 'ի ձեռս Տիմողեւոնդեայ, խուճապեալ նա ապաւինեցաւ 'ի Մեսսենիա առ Իպպոնն բռնաւոր քաղաքին: Զհետ մտեալ Տիմողեւոնդ և պաշարումն սաստիկ ածեալ քաղաքին ընդ ծով և ընդ ցամաք, ձերբակալ լինէր Իպպոն՝ մինչդեռ 'ի նաւ ամբարձեալ փախչէր: Զնա Մեսսենացիք առեալ, և 'ի Թատրոն ժողովեալ 'ի վարժարանաց զմանկունսն հանդիսատես պատուհասի բռնաւորին, հարուածս գանից 'ի վերայ եդին նորա՝ և այնպէս մահու դատեցին զնա: Ապա և Մամերկոս ինքնին անձնատուր լինէր Տիմողեւոնդեայ, հպատակել դատաստանի Սիրակուսացւոցն՝ անդատախազ 'ի Տիմողեւոնդեայ: Ածեալ 'ի Սիրակուսա՝ բան մի հրապարակախօս լինէր խուժանին՝ զոր 'ի վաղնջուց իսկ գրեալ էր. իսկ անդանօր յուզեալ ռամկին՝ իբրև անողոքելի այնուհետև տեսանէր զեկեղեցին, 'ի բաց զհանդերձն եդեալ և 'ի մէջ տեսարանին ընթացեալ՝ դիմեաց սաստկութեամբ խեթկել զգլուխն ընդ աստիճանսն, և այնպէս անձին առնել. այլ ոչ յաջողեալ նմա մահն, ածեալ անդուստ կենդանի՝ զաւազակացն եղոյծ զպատուհաս:

Զայս օրինակ ապա արմատաքի խլեաց Տիմողեւոնդ զբռնաւորութիւնսն և վանեաց զթշնամիսն. և կղզի մի զանձամբ առեալ համբաւն վայրապագացեալ 'ի կէս չարեաց և դժոխմբերելի խոցոց բնակաց՝ 'ի հեզութիւն ամոքեաց. և այնպէս փոքրեկե

գործեաց աստուածպաշտութեան, որպէս զի և եկք ստացեալք նմանեալ նոցին քահանայութեան ՚ի նոսա, ուստի ընդհանուր յաստուածպաշտութեան ՚ի բազում աշխարհացուցեալ էին։ Քանզի Ալեքսանդրեան և Պետրոս քաղաքաց մեծամեծք՝ քահանայք ՚ի կարգս եպիսկոպոսաց ընդ Աղեքսանդրեան աթոռոյն, ամենայն միաբանեալ ընդունեցան յայնժամ՝ մինչ ՚ի ձեռն Մելիտոնի և Փիլիպպոսի՝ եկեղեցւոյ յԵփեսոսի. և միւսն՝ ՚ի ձեռն Գրիգորեայ՝ եկեղեցւոյ ՚ի Կեսարիոյ. այլ ՚ի մի վայրի ժողովեալ ՚ի քահանայն յայնմանէ գիտէին ընդունելով, մեծամեծս անմերձենալութեանց ընդ այնչափ մարդկան յաւելեալ՝ յանդորրութիւն նոցունց ՚ի ձեռն Տիմոթէոսիցեալ. և այսպէս և խաղաղ մեծ սիրով ՚ի համբերութեան ... , ուստի և ընդունին զնոսա ի կարգն հանդերձ քահանայութեան։ Բայց և այլք աստուածպաշտք զնոյն սէր անընկեան զնոսա. զի և ոչ խոստովանութեան պատուիրանաց, ոչ օրինադրութեանց աստուածոց, ոչ ժողովոց ինչ ընդդիմութեան, ոչ քաղաքաց բնակելոց ... , թողեալ յայնժամ զեկեղեցիս ունել իւր, եթէ նա չկամէր զձեռնն և ասացեալ չթողնէր զնոսա. զորօրինակ եթէ ՚ի Ճշմարտութեան ... ՚ի գործ ինչ որ արդարն ՚ի դիւրին եղեալ իցէ, չնորհս և զեղ յայտ ծանուցեալ և աստուածախօսել ՚ի նոյն ասացեալ բարեգործեալ։

Էին նոքա զայնու ժամանակաւ և շատք ՚ի Հելլենացւոց այլք աւագք՝ որ նախաձեռնութեան գործեցին մեծամեծս. յորս Տիմոթէոս և Աղեքսանդրոս և Փիլիպպիկոս

և Եպամինոնդէս՝ որում մեծարէր նա-
խանձաւոր գոլով Տիմողեւոնդ. սակայն
նոցունն նահատակութիւնք խառն ընդ բըռ-
նութեան և ընդ քրտանց՝ զչուք պայծա-
ռութեանն 'ի դէմս բերէին. զի և ինչ ինչ 'ի
գործոց անտի նոցա բանսարկուաց զհետ
ձգեցին և ապաշաւ։ Իսկ 'ի նահատակու-
թեանն Տիմողեւոնդեայ, (եթէ 'ի բաց
առցես զու զհարկին զայն զնորա առ եղ-
բայրն) չէր ինչ որ աղօղաւ 'ի դէպ ոչ
իցէ զՍոփոկղեանն զայն գոչել բարբառ՝
որպէս ասաց Տիմէոս. « Բա՜րէ աստուածք,
ո՞ր այն արդեօք Կիպրիս, կամ ո՞ր այն
Աստղիկ ձեռն մխեաց 'ի սա »։ Քանզի
զորօրինակ քերթուածք Անտիմաքեայ և
կենդանագրութիւնք Դիոնիսեայ՝ արանց
Կողոփոնացւոց, 'ի նկարել խորեանց 'ի
գործեալ՝ քիրտն աշխատանակիր երևէին թա-
փել. իսկ Նիկոմաքոսին նկարքն և Հոմերո-
սին տաղքն՝ հանդերձ այլ ինչ զեղոյն և
շնորհիւն՝ աշխատասիրութիւն հեշտին 'ի
դէմս բերէին. սոյնպէս և զՏիմողեւոնդեայ
մրցանսն 'ի կշիռ ձգեալ ընդ Եպամինոն-
դեայն և ընդ Ագեսիղայոսին, որք լեալք ոչ
ջախջախիցն բազմավտանգ և դժուարա-
քիրտն վերջինքդ երևեցին. իսկ սորա-
ջինքն 'ի միասին ընդ գեղոյն և դիւրութեան
մեծապէս 'ի ներքս բերցեն, իբրու ոչ բախ-
տին ձեռնտուեալք՝ այլ և բարեբախտ առա-
քինութեանն. Թէպէտ և ինքնին Տիմո-
ղեւոնդ զամենայն զնահատակութիւնսն 'ի
բախտն 'ի վեր հանիցէ։

Քանզի 'ի գրել խորհուրդ առ բարեկամսն 'ի Կորնթոս, դարձեալ և 'ի հրապարակախօսելն խորհուրդ առ Սիրակուսացիս, ասէին երախտապարտութեան զանձն ունել դիցուհւոյն, որ զՍիկիլիա կամեցեալ փրկել՝ յերկր անուան դրեալ, առաջնոյ 'ի գլուխ : Վասն որոյ և 'ի տուն խորհուրդ կառուցեալ մեհեան Նուիրական Քաղաքախաղութեանն, զոհէր զոհս, և զտունն զայն ամենայն ուխտեաց Նուիրական Քաղքին այնմիկ : Զայս տունն ետուն Նմա Սիրակուսացիք 'ի մրցանակ քաջութեանն Նորա 'ի զօրավարութեանն . առ այս՝ և ագարակ յոյժ գեղեցիկ և ընտրելագոյն, ուրանոր Նա զբազմագոյն ժամանակին ազարակեալ Նստէր, առաքեալ ածեալ առ ինքն 'ի Կորնթոսէ զկինն իւր և զորդիս . քանզի ոչ ևս դարձաւ Նա 'ի Կորնթոս, և ոչ յարդարեաց Հելլենաց խռովութեանց ինչ զանձն, և ոչ դարձեալ քաղաքականին այնմիկ մախանաց մատեան եղև անձին՝ (յոր բազմադրոյնք արդեօք 'ի զօրավարաց՝ անկեալ 'ի չուաք առատութեան լինելով և յաւագութեան զօրութեան՝ գնացեալ ընդհարկանեն). այլ անդէն եկաց և բնակեցաւ, վայելեալ 'ի բարիսն զոր անձամբ անձին գործն գործեալ 'ի Նոցին եղեր . յորս մեծագոյնն արդեօք՝ զի քաղաքաց այնչափ և բիւրաւորս մարդկան յամէն արկանէր Նա երջանկացեալ 'ի ձեռն Նորա :

Այլ քանզի այսպէս է՝ զի ըստ Սիմոնիդեայ՝ ոչ մեծայն յամենայն արտուտաց բոլոցին կատարաց 'ի գլուխս, այլ զի և յամե-

նոյն ստամբակապետութեան՝ զբաղաբարակեչ ամն բանաստեղծս, ուստի և ընդդէմ Տիմոթէուսեան գեւոյ յարդեան կերկեն գառաստափառդք, Լափիսափոս և Դեմետեոսու: Այդ ևրդե Լափիսափոս 'ի գառառառանի ուրեք խնդրելը երաշխաւորութեան 'ի Տիմոթէուսնեայ, որքեն Թոյլ ետ նա քաղաքացեացն ազմուկ յուզել և արդելուլ զպանն. քանզի ասէր՝ եթէ քերան այնչափ և մահուանս կամակարութեանց արար յանձն էառ նա, զի Սերապիոնականք աղատութեանց մարթուցին որոնողին խաղեանց: Իսկ ևրդե և Դեմենեաոս բաղումն գառառափառ կայր ընկենակ 'ի մեծի հրապարակին մեան խրոց զըրամարութեանն, նա որքեն ետ պատառափանին. այլ ասէր չնորհս ունել առաստածոյ, որոյ և մաղթեցաց՝ զի Սերապիոնականք 'ի մերձէ ուրեմն ամբառցեալք զեղեցիկ աղատութեան կարգեն խոսելոյ:

Եւ այսպէս աղաս նահատակութեան մեծամեծս ըստ հասարակաց խառատանութեան և գեղեցիկս, քան զամենեցուն որ առ խարանքն ժամանակաց հերքենացոյն՝ նահատակեալ արար, և առ այս միայն մեհագոյնս առաքինացեալ՝ յորս միանգամ խմառատակք անէնախոս ձամանոյատակութեանքն ցանկ խորախորունն զհերքենացիսն, առ այսուսիկ՝ ըստ գեղեցիկ բախտին աղատացեալ ևս և 'ի մաղնչուց անուր աղէտիցն մշտամերել նախնոյն Եղբայրայ, առաւել և անչափաւոր յարկէնէ ընտանեացն, անհերիկ ուստից բանաստորացն և խոսմա-

դուժ ազանցն զքաջութիւն կորովութեան իւրոյ և զահն և զհոյն. իսկ Հելլենացւոցն և բարեկամացն՝ զհեզութիւնն և զարդարութիւնն. և զի՛ և զբազում 'ի յաղթանակաց մրցանացն կանգնեաց նա՝ ոչ յարտասուս լալեաց զքաղաքացիսն համակեալ և 'ի սուգ Թաղծութեան, այլ սրբեալ մաքրեալ զՍիկիլիա՝ չև բոլորեալ ամաց ութից՝ յիւրոց անտի անդուլ և 'ի տնկակից աղետից կարեաց, յանձն արար ետ 'ի ձեռս բնականոնդ մարդկանն :

Բայց 'ի ծերութեն յեցեալ Տիմողեւոնդ՝ վատեցան աչք նորա, ապա յետ սակաւուց և բնաւ կուրացան. ոչ ինքն ինչ պատճառս եղեալ կրից, կամ թէ 'ի բախտէն տնհար եղեալ, այլ՝ որպէս հաւանեալս եմ՝ էր այս ախտ զարմին նորա, միանգամայն և կարիք բազմաժամանակեայ կենացն. քանզի և պատմեն՝ ոչ սակաւուց 'ի նոյն զարմէն կուրանալ՝ վատեալ 'ի ծերութենէն : Իսկ Աթանիս պատմէ՝ եթէ և 'ի մարտի անդ ընդ Իպպոնեայ և Մամերկոսի 'ի Միղէս՝ ախտակրեաց 'ի բանակին աչքն Տիմողեւոնդեայ, և ամենեցուն յայտնի լինել կուրութեանն՝ նա տեղի չտուեալ 'ի պաշարմանէն մարտ եդեալ կռուեցաւ մինչև ձերբակալ զբռնաւորսն առնէր . և ապա դարձ արարեալ 'ի Սիրակուսա՝ հրաժեշտ տայր յիշխանութենէն, 'ի չքմեղս եղեալ աղերսիւ առաջի քաղաքացեացն, իբրև որ զրաւ գեղեցիկ լցէ այնուհետև ամենայն իրաց նոցա :

Եւ արդ ընդ համբերութեան նորա ան-պարտուցեալ ընդ կենաց աղէտիցն վասն մի պա-մանցի որ արդեօք. այլ որ առաւել զգան-չելին՝ զի ցանկ մեծարանս շնորհակալու-ցուցին առ այլն Սերապիոնացիք 'ի կուրու-թեան նորա. յանձանս յայց եկեալք 'ի գրուծս նորա, և յարարս և 'ի տուն նորա ածեալ զերկէին զեկս զտաւարս զպալ տե-սանել զբարերգութիւն նոցա. և ցնծայրն 'ի բարձր պարգևանց՝ զի առ նոսա ընդարձակաց ընակել, և արհամարհեաց զփառաւոր զարձն յեկեղեցւոյ՝ հանդերձեալ նմա վասն առաքինի նահատակութեանցն նորա. Բայց 'ի բազմահնարելան և 'ի մեծամեծան՝ որ անցեա-նապարհեցան և արդիւնացան 'ի պատիւ եկե-ղեց առն, ուրինչ զուարճալեալ էր տարհամն վճռոյն Սերապիոնացեաց ծողովրդեանն, զի յանձնեալն 'ի մարտս ընդդէմ այլազգեաց՝ զօրավար մի որ կացցէ նոցա 'ի կորնթա-ցւոց: Գեղեցիկ էր տեսանել և զչուք նորա յատենական խորհրդոց նոցա. քանզի յա-ղագս զուարճալէից երկաց նոքա առանձինն վճարէին. իսկ յաղագս մեծաց առաքեալ կոչէին զՏիմոթէոսն՝ բարձեալ 'ի կառս ընդ հրապարակն. գայր նա 'ի ատենարանն, և այնպէս բազմեալ 'ի կառսն՝ առանձնակա-նութիւն մեծապէս ընդունէր առ հասա-րակ միաձայն ողջունիւ. և ինքն դարձեալ ողջունիւ նոցա փոխարինեալ, վարէր մի այնպէս անայր զումբութեանց նոցա և բա-րեբանութեանցն. և 'ի վերայ հաստեալ ա-ռաջարկութեան խորհրդոյն՝ առնէր և ինքն

զկարծիսն. որում և ձեռն տուեալք հաւանութեան, ապա պաշտօնեայքն 'ի բաց տարեալ զկառսն ընդ մէջ տեսարանին, և քաղաքացիք յուղարկեալք 'ի կայթս և 'ի ծափս, այնպէս դարձեալք զհասարակաց իրաց զղէտսն առանձին տեսանէին :

Յայսչափ շուք մարդասիրութեան իբրև հայր հասարակաց ծերացեալ Տիմողեւոնդ, գուցնաքեայ խօթութեամբ և բազմաժամանակեայ աւուրքն վախճանեաց զկեանսն : Եւ ապա աւուրք սահմանաւորք շնորհեցան Սիրակուսացւոց հանդերձել զյուղարկաւորութիւն, դարձեալ և շրջակայ եւս այլոց ժողովրդոց գալ 'ի հանդէս անդր. և յարդարեալ յօրինեցաւ հոյակապ պատրաստութեամբ և շքեղ. և պատանիք վիճակաւ ընտրեալք՝ բարձեալ բերէին զդագաղն զարդարեալ գեղեցիկ՝ անցեալ ընդ մէջ արքունեացն Դիոնիսեայ՝ որ քանդեալն իսկ էին. և էին նմա յուղարկաւորք բիւրաւորք բազումք՝ արանց և կանանց, առհասարակ պսակեալք և պատմուճանս սուրբս արկեալ զանձամբք, զմեծի տօնախմբութեան 'ի դէմս բերէին ըզհանդէս. իսկ ձայնք աղաղակին և առուք արտասուաց խառն ընդ դրուատիս և ընդ երանութեանց վախճանելոյն, ոչ զնուէր մեծարանացն և ոչ զաշխարհօրէն սպասարկութիւն 'ի նախահոգակ խորհրդոց յայտ առնէին, այլ զիղձ տենչանաց արդար և իրաւ, և շնորհս զճշմարիտ մտերմութեան : Իսկ իբրև 'ի վերջէ 'ի վերայ խա-

րութեան զգաստացեալ առաւել հանդիսացելն, ամենայնոր Դեմետրիոս՝ քան զամենայն իքա-րոզս առ նորին ժամանակաւ՝ մեծագոչ-այր և առատաձայն, կարդացեալ բարձր զօր-ձանագրութեան վճիռն, որ ունէր զօր-ինակ զայս.

« Ժողովուրդ Սիրակուսացւոց՝ Տիմո-ղէոնի Տիմոդեմեայ Կորնթացւոյ՝ թաղումն ընծայէ երկերիւր մնասից: Սա-այս՝ և շնորհ պատուոյ առհասարակ նմա յա-ւիտեան ժամանակաց 'ի մրցանս երաժշտա-կանաց, և ասպարիզաց, և ըմբշաց․ քանզի սա զբռնաւորս առապականեաց, և զբարբարոսս պատերազմաւ պարտեաց, և զմեծամեծս չէն բնակեցու-ցեալ 'ի հիմնայատակ քաղաքաց, Սիկե-լիացւոց միանգամայն օրէնս աւանդեաց »:

Այսպէս և շիրիմ կանգնեցին մարմնոյն 'ի հրապարակին անդ, և սորա հետ շուրջ ա-ծեցին զնովաւ, և ապարանս ևս շինեցեալ անդ ամենայն՝ առ ի պատանեաց ըմբշամարտու-թեանց, և անուանեցին կարգաւորեալն՝ Տիմո-ղէոնդէոն: Իսկ ինքեանք քաղաքավարե-ցեալ զկարգ և զօրէնսն՝ զոր նա ինքն առհ-մանեալ էր նոցա, հարուստ ժամանակ այն-պէս երջանկացեալ նոքա 'ի կեանս իւրեանց:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Են դիցուհիքն, Դեմետր և Պերսե-փոնէ։

2. Սովորութիւն էր 'ի մտանելն առ թագաւորս՝ թօթափել զձորձս, յայտ ա-րարեալ եթէ չիք զէն 'ի ծածուկ։

ԵՄԻԼԻՈՍ ՊԱՒՂՈՍ

ՅԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ վարուց-
բարուն ձեռնարկանել դէպ եղև ինձ 'ի շնորհս
այլոց 1, այլ այժմ 'ի նոյն յարատևեմ
և մեծապէս անձնական թարթափել. և 'ի
շնորհս անձին առաջեաց: Քանզի իբրու 'ի
հայելւոջ, 'ի պատմութեան առաս զանձն
զարդարել եմ եւ առաջիկ և ըստ վարուց
յարմարել և համեմատական նոցունն առա-
քինութեանցն զարդել: Քանզի և ոչինչ
այլ թուի առաջեաց պատահել բանիւք այս-
զունակ, քան եթէ կենդանակից կենակից
քաղաքացի այնոցիկ լինել և առաքինեացն,
յորժամ զայս այր 'ի նոցանէն 'ի ձեռն
պատմութեանս մերոյ [illegible] հիւր առ մեզ
ժողովել, առանձնական լինելոց նոցա. ա-
պա և նմանել [illegible] [illegible] որ այն
իցէ և քանզի առաջեաց իցէ այրն. և այն-
պէս [illegible] և [illegible] 'ի գե-

ունել՝ ծաղկաքաղ առանձնակ յառաջադիմին նա-
հատակութեանց նորա. «Բա՛ւէ, բա՛ւէ,
և զի՞նչ այլ մեծագոյն քան զայս բերկրու-
թիւն կայցէ քեզ երբէք», գեղեցիկ եւ
մերձեցուցիչ յաղթութեան վարուց:

Քանզի Պերսեւսի Մակեդոնացւոյ, եթէ ա-
ղօթել պարտ է՝ զի պատահեցքն և նմանեա-
թիւնքն բարեգործութեանց համեղինակեացն մեզ.
և զի՝ քան թէ յուսկք լինէ և ձախողակք՝
մեծերինին և լուսոյն մանուանց պատահեցա-
ցին մերոց աչաց 'ի շքեղապատ օրոց առաւ:
Բան ողջեն Ճշմարիտ, և որ ամբառնալոց մտա-
պաշտութեանց պատճառք յիմաստասէր-
րութեան: Այլ մեք 'ի գեղեցիկ մեր 'ի
պատահմանութեանս և 'ի համապատաղորդել յար-
ձանապարութիւնս յարմարեմ, կարող և պատա-
րասա զգուշանալիք անձանց, զի զգաստացն
զայնոցիկ և զառաջինեացն զգեշտակա-
ցանց առաւել ժողովեցուցէք 'ի հոգիս մեր.
խոկ զյոյսն և զհաստատութիւն և զփառաւորեն՝
որ ճարտարեցելոյ թերեւս 'ի մեզ 'ի հարկէ
կենդանեցութեան մերայ ընդ այնոսիկ եղերցն,
զայն ամենայն 'ի մեծն 'ի բաց մերժեցուցէք.
հեղ և համեղագար և հեշտալնեկաւ զմիտս մեր
զգործագործելով յորդեմակս անձինս բարեացն
և առաքինեացն:

Յորոց առեալ և յառաջիկայս բանն
հարցցուք քեզ զՖիլոմելեանդերայ Կորնթա-
ցւոյ և զՏիմոլէոնի Դաւաղոսի արձանագրել
զվարս. որք ոչ միայն խորհուրդս համաձա-
յնեցին, այլ և երբ խնի գեղեցկիկս՝ նմանեալ
մեծամեծաց մեծամեծացն ունել 'ի նախարարու-

կուսութիւնս խաբէութեանց։ Այս որ յերկնաւորեալ տարագիտութեամբ ոչ թերևս, արդարև ՚ի գերագոյն բարձրութեան մնացականաց՝ ևթէ ՚ի համաձայնութեան միաւորին այնպէս ՚ի մեծամեծ գործոցն նախահասութեանցն նորոց։

Զեմիլեանց զօրսն ՚ի հասոյ քաղաքէ ՚ի պատերազմաց անդրէն ընկեալ և ՚ի վերջին ջոկին զօրաւորաց՝ բազմութիւն սպանանողքն միացան։ Իսկ թէ ասացին՝ որ զանտառն զորս եթող արգասահեալն՝ ևկաց Մակեդոնացւոց որդի Պերսեւս դստերաց խաղաղութեան, որպէս ՚ի պատմագրաց տողս բազդաւորայն և շնորհօքն՝ անուան կայրգալոյն Եգիւոս 2, զորս պատմեն ասենք՝ որ զգաստափոփոխութեան փղձածութոյ արքայքն՝ ընծայքին Պերսեթաւորոյ։ Այլ բազմաւորքն ՚ի փառաւորացն զօրքն յանձնջոցան բան գերագոյն բարձրագոյն յաղթանութեանն՝ որպէս պատմութեան կոչեցին, և Լևսկիոս Պաւղոսեան ՚ի ձախողակ հարուածովն Կանեայ քաղ խոյս եղելոց համաձայն և քաջութեան. քանզի ոչինչ կարողացեալ ՚ի բաց ՚ի կառաց անուն քերեալ զօրախաղութեան խոր, բաժանմունս եղև և նիզակ վառանդքն՝ թէպէտ և ընդդիմէմ խաղոյ խորհրդածոյն, այլ ոչ և զխոխոտանմանն. զի ՚ի անդրէ առաջ ընկերքն ՚ի զինուորականեալ վառանդքն, նա հառաստուածն մեծով եղեալ կառաւեցաւ մինչև տապարաւոր անկաւ։ Սորա զօրավար եկաց Եմիլիոս՝ հարանացեալ մեծին Սկիպիոնի, յորում ծնաւ Պաւղոս Եմիլիոս՝ զորմէ ասացեալս եմք զաւրգիս յարգանօքն լինել։

Սա այս Եմիլիոս յարգանօք հասեալ ՚ի

ժամանակի անդ ծաղկեալ արանց ուսու-
քենեաց և հռետորաց, քաջ իսկ գիտաց
իւրքնին բարգաւաճ 'ի փառս լինել, ոչինչ
պէտս կրթեալ մարդկան՝ որոց յայտնաժամ
պատկառ կային մանկունք ազատորդերոյն,
և ոչ զնոյն շահաղաց անդաստին բուռն հա-
րեալ: Քանզի ոչ վարժեցան յասպետա-
կանն, և ոչ զօրաջոյժ զայն և զգզուանան
և զաչզել զգաղափարս յանձին եղեւք կալեալ՝
որով չնթել բնաւորեցան նոքա խոնարհա-
նեին և մարդահաճոյ և պարտաւորութ լինել.
Թէպէտ և բոյս բարուցն Եմիլեայ յերկա-
ւոյն կա չէր իւր անձնավարժութեամբ. այլ նա
լաւ ևս համարեցաւ՝ փառս անձին ժա-
ռանգել զարիութեան և զարդարութեան
և զհաւատոյ, յորս և ամենեքին գերազան-
ցեալ գտաւ քան զամենեսեան՝ որ առ իւ-
րովքն ժամանակօքն:

Արդ առաջին գործ առաջնութեան
կալաւ զամենաբարեաւ, յորում և նախա-
պատիւ ընտրեցաւ նա քան զհետամուտն
երկոտասան Թուով. որք և այսպէս առհա-
սարակ՝ որպէս ասեն՝ կային նոքա հիւպա-
տոսք: Ցետ այսորիկ կացեալ և քահանայ,
մի 'ի նոցանէն՝ զոր կարդան՝ Ավգուր, այն
է՝ Հաւահմայ, լաւ կարգի Հռոմայեցւոցն
դէտ և պահապան 'ի վերայ կալ որ 'ի հա-
ւուց անտի և յԱրամազդեան նշանացն
գուշակութեանց, այնպէս ջանիւ Թեա-
կոխէր 'ի սովորոյթս հայրենեացն, և քննէր
զկարգս բարեպաշտութեան զծերունեացն
յաստուածայինսն, որպէս զի և զկարգ

քահանայութեանն՝ զոր 'ի պատուոյ տանն և եթ տայքն և նմին լրիւ տարրափայքն, նա արդեամբք 'ի ներքս ընծայեաց զայն լրիւ զմի 'ի մեհենայոյն արուեստից. և յինքնեն նա վկայեաց իմաստասիրացն, որ զդասարեպաշ-տութիւն՝ անհամանելին տալ, Սղաուարքու-Բէան տոփոսծոցն Գիփոսբիոն: Քանզի մե-ծապէս խնամով գործէր զամենայն, 'ի բաց զամենայնն դնելով զհոգսն 'ի սպա-սու պաշտամանն. զանց առնէր և ոչինչ, կրկնէր և երեքկնէր և ոչինչ. ցանգ 'ի պայ-քար մտեալ ընդ երիցանկցայն և վասն զուշ-նաքէից, այդ առնէր՝ եթէ թէպէտ և ոք հեշտալուր արկեօք զաստուածակողմն կարծեացէ լինել և անդատախազ մեղաց մերոց, այլ տակայն վասն քաղաքին գծըն-դակ է անփոյթ և զանց զփոփոխութեանն զայ-նօրինաք առնել. նոյն չէք ոք՝ որ անդէն 'ի սկզբանն ծայրայեղ յանցաւորութեանք մեր 'ի վայր զքաղաքն արասցէ. այլ որք միանգամ 'ի փոքունն ճշգրտիք ոչ լիցին, նոքա և 'ի փոյթ պահպանութեան մեծա-մեծացն յանցաւորք են:

Զնոյն ճշգրտութի 'ի ներքս բերէր նա և 'ի պահել քաջիկ զամենայն զսովորոյթս զզինուորութեանն և զվաղնջուց զնուրոց հայրենեացն. ոչինչ մարդելուղէր 'ի զօրա-վարութեանն, և ոչ դարձեալ՝ ըստ որում բազմադոյնք յայնժամ 'ի զօրավարաց՝ յինքն յանդուգանէր և զերկրորդ զունդն, նեքա-զամիտ առ առաջինսան ցուցանելով. այլ նոյն մեհապտունիցն քահանայ խորհրդոց՝

այնպէս և զզինուորական սովորութեան ճշգրտէր. և անսաստից և յանցաւորաց զանձն ահաւոր 'ի ներքս ընծայեալ, 'ի կարգ գեղեցիկ ածեալ ամբառնայր զհայրենիսն. և զպարտութիւն թշնամեացն երկրորդ գնէր նա քաղաքայնոցն իւրոց քաջակրթութեան:

Իսկ 'ի ժամանակին իբրև մարտ եդեալ կռուէին Հռոմայեցիք ընդ մեծին Անտիոքոսի, և 'ի զօրավարաց անտի քաջք և առաքինիք խաղացին ընդդէմ նորա, դէպ եղև և այլում մարտի գրգռել 'ի կողմանց անտի արևմտից, և յուզմունք մեծամեծք էին յԻբերիա: Անդ 'ի մեծի պատերազմին յայնմիկ զօրավար կարգեալ Եմիլիոս, ոչ վեց միայն տապարաւորս՝ ըստ զօրավարացն սովորութեան առնոյր ընդ իւր, այլ կրկին նոյնչափ. որպէս զի և հիւպատոսական շուք ընծայել իշխանութեանն: Ապա երկիցս անգամ վանեալ 'ի պարտութիւն մատնէր զխուժադուժն 'ի ճակատամարտի. և յայտնի իսկ՝ եւք նահատակութեանն յաջողեցան 'ի գեղեցիկ զօրավարութենէն. քանզի վայրս իմն յարմարաւորս ընտրեալ, և յանցանելն ընդ գետ անճապարեալ անկեալ 'ի վերայ թշնամւոյն, այնպէս հեշտին տարաւ զյաղթութիւնն: Առ այս՝ և քաղաքս երկերիւր և յիսուն նուաճէր անդ ընդ ձեռամբ՝ որ մտադիւրագոյնս ժողովեցին զնա. ապա խաղաղութիւն հաստեալ և ապահովեալ, թողեալ զգաւառն դարձաւ եկն 'ի Հռոմ. միով դրամակշռով

ջամբ շահեալ և ոչինչ 'ի զինուորութեանն յայնմիկ. քանզի և ոչ ուրեք այլ՝ օգտածարար երբէք գտաւ նա, որ այնպէս առատ և ճոխապար տայր յիւրոց անտի գոյիցն. Թէպէտ և ոչ շատ ինչ էր նորա, այլ հազիւ ուրեմն յետ վախճանին նորա բաւական եղեն 'ի հատուցանել զպարտս օժտի կնոջն:

Այս Եմիլիոս զՊապիրիա ածեալ էր 'ի կին զդուստր Մասոնիսի 'ի հիւպատոսական կարգէն. այլ հարուստ մի ժամանակ կեցեալ ընդ նմա՝ գիր ապահարզանի տայր նմա. Թէպէտ և զաւակս գեղեցիկս ծնաւ նմա Պապիրիա, զգերահռչակեալն զայն զՍկիպիոն և զՄաքսիմոս Փաբիոս: Իսկ պատճառք արձակմանն կնոջն ոչ հասին առ մեզ: Այլ յաղագս քակելոյ ամուսնութեանցն թուի թէ ճշմարիտ է ասացեալն առն ուրումն Հռովմայեցւոյ, որ 'ի բաց զկինն արձակեալ և նորին աղագաւ ապարանեալ 'ի բարեկամացն, որ ասէին. “Միթէ ոչ 'ի պարկեշտից ոք էր կինդ. և 'ի գեղաւորաց, և ոչ զաւակաւոր էր դա“. Նա կարկառեալ ցուցեալ զիւր կօշիկն, զոր Հռովմայեցիք Քալչէուս 3, կոչեն, եւ պատասխանի և ասէ. “Ո՞չ արդեօք և այս ճարտարագործ է, ո՞չ և նորագործ. այլ սակայն գիտէ և ոչ ոք 'ի ձէնջ՝ եթէ յորում մասին ինձ դա խոչ ընդ ոտն լիցէ“: Եւ արդեօք կէսք 'ի կանանց 'ի բաց արձակեցան վասն մեծաց ինչ և յայտնի յանցաւորութեանց. իսկ կէսք 'ի սակս անհա-

մութեան և անմիաբանութեան բարուցն. յորմէ և գժտութիւնք՝ (թէպէտև գուղնաքեայք այլ յաճախակի. և թէպէտև անյայտք՝ սակայն բնակակցացն անհաշտելի 'ի ներքս բերեն օտարութիւնս։

Եւ այսպէս 'ի բաց զՊապիրիա հաներալ Եմիլիոս, էած այլ կին՝ յորմէ և ծնաւ որդիս երկու կալեալ առ իւր 'ի տան. իսկ զառաջինսն տայր յորդեգրութիւն 'ի տունս աւագաց և քաջազարմից։ Ջերեցն յորդեգիրս առնոյր որդին Մաքսիմոսի Փաբիոսի, այն՝ որ հնգիցս եկաց հիւպատոս. իսկ զկրսերն՝ որդի Ափրիկանոսի Սկիպիոնի՝ քեռի նորա, և անուն կարդաց նմա Սկիպիոն։ Իսկ 'ի դստերաց անտի Եմիլիոսի՝ մին հարսնացաւ որդւոյն Կատոնի, և միւսն Եղիոսի Դուբերոնի՝ այր լաւ և առաքինի, որ 'ի վեր քան զամենայն Հռովմայեցիս յոյժ մեծանձնաբար տարաւ աղքատութեանն։ Քանզի առհասարակ Եղեանք թուով մետասանք՝ ազգականք, 'ի փոքրիկ կալուածի բնակեն նոցա, և 'ի գուղնաքեայ տան բաշխեալ նստէին ընդ միով մարդակաւ հանդերձ յոքնաթիւ զաւակօք և կանամբք. յորոց մին և այս դուստր Եմիլիոսի՝ որ երկիցս եկաց հիւպատոս և յաղթանակս կանգնեաց երկիցս. սակայն դուստրն զամօթի ինչ չհարկանէր ընդ աղքատութիւն առնն, նա և հիացեալ իսկ էր ընդ առաքինութիւնն՝ որով և աղքատն էր։ Իսկ առ մեօք այսօր եղբարք և ազգակիցք՝ եթէ զկալուածս իւրեանց կլիմայիւք

անմարտիկք և զօրաւորք և պատերազմողք ոչ պար-շեալ սահմանեացն, և 'ի միջի չգտուցէ լայնատարածման բազում անվերջակեր ընդ մի-մեանս, երբեք ոչ պատերազմեացն նոցա զժտել և կապել ընդ միմեանս: Այդ զայ-տակիկ խորհել և զինել 'ի նորոքս ընծայէ պատմութիւնն, որոց միաւորեալ զգեղեցիկ կենացն բուռն հասարակ իցեն:

Իսկ յետ այսորիկ Եմիլիոս կարգեալ 'ի հիւպատոս, խաղաց զօրու 'ի վերայ Լի-գիւրացւոցն Ալպեանբնակաց, զոր ոմանք Լի-գիւստացիք կոչեն. ազգ մարտիկ և քաջ 'ի նոցունց. իսկ 'ի Հռոմայեցւոց հմտացեալք 'ի կռուել՝ առհմանակիցք գոլով նոցա: Քանզի և բնակեն իսկ նոքա առ ընդուն-տադիրքն Ալպեանց 'ի վերջին սահմանս Ի-տալիոյ, և 'ի կողմ Ալպեանցն զոր Տիւր-րէնեանն Թալասայ ծով և կայ 'ի հանդի-պոյ Լիբիոյ. ժողովուրդ խառնեալ ընդ Գաղատացւոց և ընդ ծովեզերեայ Իբերաց-ւոցն. և 'ի ժամանակին յայնմիկ յածեալ զնաւսն ընդ ծով նաւք հինից և խցեալ կուրսացուցանէին զվաճառականութիւնն՝ յառաջեալք անգամ աւարառեալ մինչև յար-ձանսն Հերակլեանց:

Արդ 'ի վերայ յարձակեալ Եմիլիոս Լիգիւրացւոցն չորից բիւրուց՝ ութ հազար հեծելովք, խառնեցաւ 'ի մարտ ընդ այն-չափ բազմութեանն և 'ի փախուստ դար-ձուցեալ՝ առեալ փակեաց զնոսա 'ի պա-տուարս իւրեանց. և յայնժամ լուր խնդ հեշտ և բաղձալի զխաղաղութ ածէր առ նոսա

պայմանաց խաղաղութեան. քանզի և կա-մէին իսկ ոչ հռովմայեցիք իսպառ եղծա-նել զՄակեդոնացւոց ազգն. զի պատուարք էին նոքա և թումբ ընդդէմ հիւսի Գաղա-տացւոցն, որ ցանդ ամենկառոյցք էին յի-տալիա: Իբրև նոքա անկանէին Եմիլիոսի և առեալ 'ի ձեռս ետուն նորա զնաւսն և զքաղաքսն իւրեանց, նա զքաղաքսն զար-ձոյց առ նոսա ողջ, միայն զպատուարսն քանդեալ շուրջանակի. իսկ զնաւսն 'ի բաց առեալ առհասարակ, և չեթող նոցա նա-ւակ մեծ քան զերկաթիակարգն. և աղա-նեաց զամենայն զերիսն՝ որ 'ի ծովէ որ 'ի ցամաքէ, յորս էին և բազումք յեկաց օ-տարաց և 'ի հռովմայեցւոց: Եւ այսպէս ապա մեծապէս նահատակեցաւ նա 'ի հիւ-պատոսութեան իւրում:

Իսկ իբրև յետ այնորիկ առէալ ցանկայր նա միւսանգամ առաւագութեանն այնմիկ, և յայտնի եւս միանգամ հետամտեալ ըն-ծայեցաւ և չեղև կամակցեալ, այնուհետև մեկուսացեալ յանդորրու՝ նուիրականացն պատկառ կայր և զաւակացն դաստիարա-կութեան. մարզէր զնոսա 'ի վաղնջուց կարգս հայրենեացն՝ զի և ինքն տեղեակ և հմուտ էր, այլ և 'ի հելլենականն պա-տուասիրագոյնս: Քանզի առեալ զնէր նա առաջի պատանեկացն ոչ զքրամատի-կոսս միայն և իմաստասէրս և հռետորս, այլ և անդրիագործս և կենդանագիրս, և արս հմուտս 'ի վարժս երիվարաց և բարակաց և յորս երէոց և գազանաց. և ինքնին զար-

ձեռաւ՝ պատրաստեալ 'ի գործոցն ցանոց առաջին կայր 'ի կրթանս նոցա, հայր յորժ պրպտեալ կարգադրեալ 'ի հռովմայեցւոցն:

Զայնու ժամանակաւ ըստ հասարակաց գործոցն մարտ եղեալ կառուէին հռովմայեցւոց ընդ Պերսէոսի արքայիւն Մակեդոնացւոց. և էր նոցա առ հասարակ պարտիլ վասն զօրավարացն անհմտութեան և վատութեան, զի այնպէս առաւել նշաւակք լինէին նոքա 'ի մարտսն յայնմիկ, կրեալք 'ի Թշնամեացն՝ քան թէ հարեալք զնոսա: Եւ քանզի ոչ շատ յետ ժամանակի յառաջ 'ի նորին արկեալ հռովմայեցւոց զԱնտիոքոս զանուանեալն Մեծ՝ տեղի տալ յայլոց սահմանացն Ասիոյ, և վանեալ անդր քան զՏաւրոս փակեցին զնա յԱսիոյ, ուրանօր նա յանձն էառ բերել մի և հինգ հազար տաղանդաց զնոց զնել զխաղաղութիւնն: Դարձեալ և վայր մի յառաջ նկուն արարեալ էր նոցա 'ի Թեսաղիա զՓիլիպպոսոս, և փրկեալ զհելլենացիս 'ի Մակեդոնացւոց: Դարձեալ՝ և որում զուգակշիռ ոչ ոք 'ի Թագաւորաց յարիութեան և 'ի քաջութեան՝ զԱննիբաղ 'ի պարտութիւն մատնեցին նոքա: Վասն այսորիկ ապա զժողովրդականսն յորժ էր հռովմայեցւոց յայնժամ 'ի մարտսն հաւասարակշիռ կալ ընդ Պերսէոսի, իբրու որ տեւեալ ընդ Հռովմայեցւոց միայնակ բաւական իցէ. քանզի և հայրուստ ժամանակ այնպէս կայր և կռուէր նա ընդ նոսա հանդերձ զօրականօքն՝ որ մնացին 'ի կոտորածէ անտի հօրն: Այլ

մինչ գիտացին նոքա՝ եթէ Մակեդոնաց-ւոց զօրն յետ հարուածելոյն Փիլիպպեայ՝ հզօր առաւել և մարտնիկ եւս յարդարեցաւ, զոր պարագայնիւք պատմեսցուք՝ անդուստ 'ի վերուստ առնելով զսկիզբն:

Անտիգոնոս հզօր առաւել 'ի զօրավարսն և 'ի պայազատսն Աղեքսանդրի, անուն թա-գաւորի ժառանգեալ անձին և ազգին, ծնաւ որդի Դեմետրիոս անուն, հայր միւ-սոյն Անտիգոնոսի՝ որ կոչեցաւն Գոնատաս. 'ի սմանէ ծնաւ որդի Դեմետրիոս, որ ոչ բազում ժամանակ թագաւորեալ՝ մեռաւ, թողեալ մանուկ փոքրիկ՝ Փիլիպպոս ա-նուն: Յայնժամ աւագորեար Մակեդո-նացւոց զանգիտեալ յանիշխանութենէն, 'ի մէջ մատուցին զԱնտիգոնոս զեղբօրորդի արքային վախճանելոյ, և զուգեալ զնա ընդ մօր մանկանն Փիլիպպոսի, կարգեցին զնա առաջին խնամակալու և զօրավար. բայց սա զփորձ առեալ զչափաւորութե-անն և զհասարակաց շինութեան 'ի ձեռն նորա, թագ կապեցին նմա և յորջորջեցաւ նա Յոսոն, քանզի խոստանայր և ոչ կա-տարէր նա զխոստացեալսն: Յետ մահուն նորա թագ կապեաց Փիլիպպոս. և մինչ-դեռ մանկանն պատանեակ էր, ական-աւոր երեւէր նա քան զթագաւորս հոյա-կապս. և թուէր իմն այնպէս՝ եթէ լինէին նա առնել 'ի վեր տարցի զՄակեդոնիա 'ի նախնին իւր շուք, և միայնակ բաւական է-ցէ նկուն առնել զՀռոմայեցւոց զօրու-թիւն՝ որ 'ի վերայ ամենեցուն ամբառնայր:

Այլ տալս խելքն 'ի մեծի պատերազմին առ Մակեդոնացւոց հաղթեալ խորտակեցաւ նա 'ի Տիտոսէ Փլամինինոսէ, անկաւ թե-կաւ՝ որպէս զի և զամենայնն զիւր 'ի ձեռս տայր Հռոմայեցւոց, և տուգանս եւս չա-փաւոր յանձն էառ տուգանել։ Իսկ յետ ժամանակաց չհանդուրժեալ, և զնոսա ա-ծեալ՝ եթէ Թագ կապել 'ի շնորհէ Հռո-մայեցւոցն, զօրդասէր զերեայ լիցէ մանա-ւանդ՝ քան մեծափառահռութք և աւագ աւն, 'ի կողմն մայրոյ հաստատեցաւ և պատրաս-տէր կազմէր 'ի ծածուկ հնարիմաց խոր-հրդով։ Քանզի անփոյթ առարեալ զքա-ղաքացն առհամանակցաց և զծովեզերեայց, և լքեալ զնոսա այնպէս անկազմ և ամայի, զի արհամարհ երեսեցին և անկարկածք, զոր բազում հասեալ զումարէր 'ի վեր-նագաւառսն, և զմիջերկրեայ զվայրսն և զլեռնայն և զքաղաքսն պատրաստէր լնոյր բազում զինու և արծաթով և քաջառոյգ որերով, և անդ հանդերձէր կազմէր զպա-տերազմն զանխուլ և 'ի ծածուկ։ Քանզի որ անդամոր ամփոփեալ զէնք անգործ՝ շատ էին 'ի պէտս երից բիւրուց զօրականին. և ցորեանն մթերեալ 'ի շտեմարանս՝ էր ութ հարիւր բիւրուց զբուանց. իսկ արծաթոյ մթերքն՝ բաւական զամս տասն թոշակաւո-րել բիւր մի վարձկան զօրականին 'ի պահ-պանութիւն Մակեդոնիոյ։

Այլ ոչինչ կարաց վճարել զոր կամէր, և 'ի գլուխ տանել զոր խորհէր։ Քանզի կանխեալ զբաւեալ՝ յանձկութենէ արծթին՝

զրաւեցաւ 'ի կենացն. քանզի 'ի վերայ ե-հաս ճշգրիտ՝ զի յանիրաւի եւս սպանանել զորդին իւր զԴեմետրիոս 'ի քսութենէ միւսոյ զաւակին՝ որ վատթարագոյն եւս էր քան զնա: Այլ Պերսէոս մնացեալ նմա 'ի զաւակացն՝ յաջորդեաց ընդ արքայու-թեանն և զթշնամութիւնն ընդդէմ Հռո-մայեցւոց, թէպէտ և ապիկար 'ի մրցանան առ վատութեանն և առ վատթարութեան վարուցն. զի էր իսկ նա անկղխտացեալ յախտս բազմադէմս, այլ արծաթսիրու-թիւնն մեծապէս զրաւեալ կալաւ զնա: Առ այս՝ և ասեն զնա ոչինչ հարազատ. այլ կին Փիլիպպոսի զնորածին մանուկն առեալ իցէ 'ի ձեռաց կնոջ ուրումն դեր-ձակի Արգոսացւոյ՝ անուն Գնաթէնիէ, և այնպէս անյայտաբար սնուցեալ. և թուի մանաւանդ վասն այնորիկ՝ նորա մահ նիւ-թել Դեմետրեայ, զանգիտեալ եթէ առ հարազատ պայազատութեամբն՝ նշաւա-կեսցի անհարազատութիւն նորա:

Արդ թէպէտ և այնչափ անարի ոք և վատ, 'ի վեր բերեալ առ 'ի յաջողութէն յայնժամ՝ մխեցաւ 'ի մարտ, և հարուստ մի ժամանակ մարտ եդեալ կռուեցաւ ընդ Հռոմայեցիս. եհար խորտակեաց 'ի նոցա-նէ զօրավարս հիւպատեանս և զօրս և բա-նակս զնաւաց մեծամեծս, և կոտորեաց ժո-ղովեալ եւս բազում գերի: Քանզի 'ի մար-տի այրուձիոյն 'ի փախուստ դարձոյց ըզ-Պոպղիոս Լիկինիոս, որ առաջին մխեցաւ թշնամութեամբ 'ի Մակեդոնիա, եհար

տաղանն զնորա զերկու հազար և զհինգ հարիւր 'ի քաղաքս զօրականնեն, և վեցհարիւր ևս ձերբակալ արար : Եւ յորժամ նաւատորմիղ Հռոմայեցւոց հանդուցեալ կայր առ Ոփլէոնիւ, նա յեղակարծումն անկաւ 'ի վերայ, և առ կալաւ նաւս քսան հանդերձ բեռամբքն. իսկ զցորեանն անդնդասոյզ առնէր՝ բեռնաւորացն ցորենոյ, առնոյր և նաւակս չորս՝ հնգամթիականս : Կռուեցաւ և երկրորդ մարտ պատերազմի, և վանեաց նա յայնժամ զԹառակիղիոս զայր հիւպատեանն՝ որ անցեալ ընդ Եղեմիա բանի միջամուխ կամէր լինել 'ի Մակեդոնիա. իսկ յորժամ և զապստամբն խնդրեաց նա մեռանել անդր ընդ Թեսաղիա, ձայն կարդաց նմա Պերսէոս 'ի կռիւ կոչելով, և զարհուրեցոյց զնա : Այլա արհամարհեալ նա զՀռոմայեցւոցն և պատրաստեալ 'ի նոցանէ, երթե 'ի զօրուլ մարտն արշաւեր ընդդէմ Դարդանացւոց. բերեր մի 'ի բարբարոսացն 'ի սուր սուսերին մաշէր և դառնայր դարձ քաղում աւարաւ : Ար այս՝ և 'ի ծածուկ հրաւիրէրէր նա զԳաղատացին բնակեալս առ Իստրեաւ՝ որ անուանեալ կոչէին Բաստարնացիք. զոր հեծելազօր էին նոքա և մարտիկ : Այլա սատգքեր և Լիւրիկեցւոց 'ի ձեռն Գենթիոսի նոցունն արքայի՝ յուսով զաշխն մտանել ընդ իւր 'ի նոյն մարտ : Եւ լուր ևս զհամբաւ հարաւ՝ եթէ խոստմադրութեան փարձեալք առ 'ի նմանէն, պատրաստեալ կայցեն մինել յիմանալիս ընդ սորին Գաղատիա քերեալ առ Աղորեայիւ :

Իսկ այս ամենայն ազդումն հասանէր առ Հռոմայեցիս, հաճոյ թուեցաւ նոցա յընտրութեան զօրավարի՝ այնուհետեւ ոչ շնորհս ինչ առնել և ոչ երեսս, այլ զայր հանճարեղ և զքաջահմուտ 'ի մեծամեծս յառաջ կոչել 'ի գործն։ Սա ինքն էր Պաւղոս Եմիլիոս լեալ աւուրբք՝ ամաց իբրև վաթսնից, սակայն և ուռոյգ անձամբ և կորովի։ Շուրջ զնովաւ պատեցան մերձաւորք և որդիք պատանիք և բարեկամաց բազմութիւն և ազգականաց՝ ձօնիք և աւագք, առ հասարակ ածէին հաւանեցուցանէին անսալ ժողովրդեան՝ որ յաւագութիւն անդր հրաւիրէին զնա. իսկ նա զառաջինն խուսափէր առաջի ժողովրդեանն՝ խոյս տուեալ 'ի հրաւիրմանէն, իբրու որ առաջնորդութեան անձուկ երբեք չունիցի։ Այլ իբրև այնպէս օր ըստ օրէ բազում որեար խռնէր առ դուռն և 'ի հրապարակ անդր կարդային զնա և 'ի տրտունջ եւս հասանէին, ապա զիջանէր 'ի կամս նոցա։ Ա՛յն ինչ եկեալ երեւեալ նորա 'ի հետամտութեան 'ի հիւպատոսութիւն, թուեցաւ իմն այնպէս ոչ զզօրավարութիւնն առնուլ, այլ թէ 'ի հրապարակէն անդէն չու 'ի բանակ տարեալ՝ զյաղթութիւնն գլխովին 'ի գլուխ տանել. այնպէս անխաբ յուսով զուարթացին առ հասարակ ընկալան զնա և կարգեցին 'ի հիւպատոս այս երկիցս անգամ. և թոյլ չետուն վիճակ հանել վասն գաւառացն ըստ սովորութեանն, այլ անդէն վճիռ ետուն նմա

զառաջնորդութեն 'ի Մակեդոնեան մարտին։ Եւ պատմեն՝ եթէ զօրավար ընդդէմ Պերսէոսի կացեալ և շրջել 'ի ժողովրդոցն յուղարկեալ 'ի տուն, անդ գտանէր նա զդստրիկ իւր զՏերտիա տղայ՝ զի լայր. դիրկս ածեալ նմա Եմիլիոս հարցանէր ըզ պատճառս տրտմութեանն. Նա խաղաղաւորեալ զհայրն և համբուրեալ, ասէր. "Եւ չգիտեցե՞ս դու ո՛վ հայր, զի Պերսէոսն մեր մեռաւ". ասէր վասն ընդառատուն ակնդրին՝ զոր յայն անուն կոչէին։ Իսկ Եմիլիոս, "Վա՜յ, ասէր, դստերցիկ բարեբաստին, ո՛վ դուստր. ընդունիմ զգուշակութիւնդ"։ Եւ զայսոսիկ պատմէ մեզ Կիկերոն հռետոր 'ի գիրս գուշակութեան։

Այլ քանզի սովորութիւն էր, որք հիւպատոսն լինէին՝ փոխատրէին ինչ բարերարել 'ի բերմէն և շնորհս ունել ժողովրդեանն մարդասիրագոյն բանիւք, 'ի մի խմբեալ Եմիլիոս զժողովուրդն՝ ասէր, յառաջնում նուագին իշխանանալ 'ի խնդրոյ անձին՝ արուժ պէտք էին առաջնորդութեանն,։ Իսկ յերկրորդումն՝ 'ի խնդրոյ նոցա որոց պէտք են զօրավարի, ուստի և ո՛չ շնորհս ունել։ Իսկ եթէ երբէք համարեսցին նոքա՝ 'ի ձեռն այլոյ քաջին կա յաջողաւորել մարտին, մտադիւրագոյնս ինքնին ամենայն տալ 'ի զօրավարութենէն. ապա եթէ 'ի նմա վստահ իցեն՝ ո՛չ կամի 'ի զօրավարութեան գործն խառնել նոցա և բանիւք ժամանակաձաւ ընդնել, այլ անդէն լռելի զպէտս պատերազմին լնուլ. քանզի 'ի վերայ զօրավարացն

կամելով զօրավարել, նա ծերացեալք քան յայնժամ՝ եղիցին նոքա 'ի զինուորութեանն : Զայս այսպէս խօսեցաւ Եմիլիոս, և մեծապէս պատկառ կացին նմա ժողովուրդք . և 'ի յոյս հանդերձելոցն առհասարակ ցնծային, զի 'ի բաց զմարդելոյզն առեալ՝ զօրավար ընտրեցին ազատաբարոն և պարզամիտ և քաջախորհուրդ : Զայս օրինակ ասեն առ 'ի տիրանալ զեր 'ի վերոյ ամենեցուն, առաքինութեան և լաւութեան սակս հարկանէր ժողովուրդ հռովմայեցւոց :

Արդ յայն արշաւանան չու արարեալ Եմիլիոս, այն՝ զի այնպէս յաջողակի նաւեալ անցեալ՝ առողջ առողջ ողջամբ եկին եհաս 'ի բանակին, քաջ խոկ բախտին ընծայեմ : Սակայն 'ի զօրավարութեան մասին և 'ի մրցանան, քանզի կէս մի տեսանեմ 'ի զլուխ տարեալ ժիրաժիր առաթեամբ, և կէս մի զեղեցիկ խորհրդովք, կէս մի 'ի ձեռն սպասաւորկաւ և փոյթ բարեկամացն, և կէս մի դարձեալ՝ ինքնին գեմազդրաւ 'ի դժնդակին եղեալ, և հնարիմացութիւնս նա ձահաւորակի 'ի վերայ առկեալ, առաւ և ոչ զմի յառաքինի նահատակութեանց առն զլրեցից եւ խորումն դերահռչակ բախտին, որպէս 'ի նահատակութիւնս այլոց զօրավարացն . բայց թէ ումեք կամք իցեն զլրել զգեղեցիկ բախտին Եմիլիոսի զընչաքաղց արծաթսիրութիւն զՊերսէոսի, որ այնպէս ճղճիմ 'ի ծախսն արծաթոյ՝ առեալ տապալեաց զշքեղ և

զմեծամեծութ հանդերձանօք մարտի զՄակե-
դոնացւոցն՝ յորս յուսով խնդային նոքա ։
Քանզի 'ի խնդրուածոյ նորա եկին հասին
նմա 'ի Թիկունս Բաստառնացիք, բիւր հե-
ծելայք և բիւր հետևակք՝ առ հասարակ
վարձկանք. այսք՝ որ ոչինչ գիտէին ոչ զեր-
կիր գործել, ոչ նաւարկնաց լինել, ոչ 'ի
հօտից խաշանց կերակուր պատրաստել.
այլ էր նոցա գործ և արուեստ միայն՝ մարտ
զնել կռուել և զԹշնամին պարտել ։ Իսկ և
եկեալ խառնեցան ընդ զօրս Թագաւորին
բանակ հարեալ 'ի Մեղիկիա, և էին նոքա
այրք վեԹխարհք յաղԹամարտինք և չքնաղք,
և սքանչելիք 'ի կրԹանս, և բոհմունս տային
յախտուռանախօսս, և հրաւիրայօք գոռային 'ի
Թշնամիս անդր, յայժ քաջալերուԹիւն
զգեցան Մակեդոնացիք. եդին 'ի մտի ե-
Թէ ոչինչ բաւեսցեն Հռոմայեցիք հան-
դարտել առաջի նոցա բուռն յարձակ-
մանն. այլ Թէ առ սոսկալ նոցա միայն, և
'ի խառնել խօլացն այնոցիկ և ահեղիցն՝ զզօ-
րանն հարեալ պակնուցուն ։

Իսկ և օրինակ զայս խրախուսանաց Պեր-
սէոս զմտադրելն, և յուսով բարեացն խրն-
դացուցանէր, այլ առաւ իսկ լուաւ եԹէ
առ մէն մի 'ի զօրականաց խնդրեն նոքա 'ի
նմանէ հազար դահեկան ոսկի, յապուշ
հարաւ՝ մի՛ այլ յայլմէ լինէր Պերսէոս, զմտաւ
ածեալ զյոլովուԹին ոսկւոյն. և 'ի ճղճիմ
կրիցն վարեալ և ստորանայր 'ի նիզակակ-
ցաց անտի և առեալ 'ի բաց արձակէր զնո-
սա. իբրու որ անտես գաւառաւորեր Հռո-

մայեցւոց կացեալ էցէ և ոչ ընդդէմ մարտադիր, և համարս ճշգրիտ զծախուց մարտին համանիցէ նմա 'ի նեղքս բերել նոցա՝ ընդ որոց մարտ եդեալ կռուիցի. ուր և 'ի նոցունց դարձեալ հրահանգել պարտ էր նմա, քանզի բաց յայլոց կազմածոց մարտին՝ զօր տասն բիւր խմբեցին յայնժամ Հռոմայեցիք՝ կազմ և պատրաստ յամենայն 'ի պէտս: Իսկ սա այս Պերսէոս՝ որում հասանէր զայն կախ կռուել ընդ այնպիսումն բանակի՝ որ տարապայման էին ծախք, ինքն նստեալ համարէր թուէր զգլուխն, և առեալ կնքէր և փակէր պահէր, զգուշացեալ մերձենալ իբրու յաւանդ օտարին: Ոչ Լիւդացւոց էր զաւակ այրն և ոչ Փիւնիկեցւոց՝ որ զայս գործէր, այլ որ ազգակցութեամբն գրաւականէր անձին զառաքինութիւն զԱղեքսանդրի և զՓիլիպպոսի, որք արծաթոյ թեակոխեալք գնել զսահմանս, քան թէ սահմանօք՝ զարծաթ, տիրացան առհասարակ. ուստի և 'ի դէպ ասացաւ. եթէ " Ո՛չ Փիլիպպոս նկուն արար զՀելլենաց քաղաքսն, այլ Փիլիպպոսի ոսկին ": Իսկ Աղեքսանդր արշաւեալ 'ի Հնդիկս, իբրև Մակեդոնացիք բեռնաբարձք ամբաւ աւարացն Պարսից՝ յոգնեալք տանէին զբեռնն, ինքն առաջին զարքունի զաղխն հրակեզ առնէր. ապա և ըստ նմանէն և այլք գործեցին, թեթևընթացք անարգելք 'ի կռուին լինել:

Բայց յայնժամ Պերսէոս զանձն միանգամայն և զորդիս և զարքայութիւնն առ-

[illegible]

[illegible]

թիւն նորա. քանզի և էին իսկ Պերսէոսի երիվարք չորք հազարք, և փաղանգ հետևակազօրուն չորիւք բիւրուք չափ. և զանկէշ գործեալ նաւէր ընդ երկայնութիւն ծովափանցն առ լեռնաստանն Ողիւմպիոյ, յամուրս անխառաս շուրջանակի և 'ի վայրս անբածանուկ 'ի պատնէշս և 'ի շերտապատկս. և այնպէս յանդորրութ զանելի առեալ՝ եդ 'ի մտի եթէ 'ի ժամանակէն գլխովին և 'ի մեծաց ծախուցն վատթարեալ ինքնին նըկուն եղիցի Եմիլիոս: Իսկ Եմիլիոս ոչինչ պարապորդ 'ի խորհուրդս մնաց՝ յուզէր խնդրէր և զամենայն հնարս հնարէր. և տեսեալ զի զօրականք անդադարին 'ի պղձանէն արձակերասանք՝ դժկամակեալ կային ընդ դեգերմանն. և զի առ հասարակ ինքնացեալք ճոխաբար խօսէին՝ զինչ գործել պարտ էր և ոչ գործեցաւ, կշտամբէր սաստիկ Եմիլիոս և հրամայէր մի տագնապել մի վարանել, այլ այր այր իւրաքանչիւր կազմ ունել զանձն և զպատրաստութիւնն, և իբրև այր հռոմայեցի շարժել զսուրն 'ի ժամուն՝ աղցեալ 'ի զօրավարէն: Ապա պատուէր տայր գիշերապահ զօրականին անգեղարդունք պահ ունել, զի արթունք զուարթունք առաւել՝ մի պարտեսցին 'ի քնոյ. իբրու որ անզէնք՝ ոչինչ ունիցին պաշտպանել անձանց յանկանել թշնամւոյն 'ի վերայ: Բայց առ անջրդութեան վայրացն սաստիկ տանջեալ զօրականին, (քանզի ջուր սակաւ և չար բղխէր առ ծովեզերըն), դէտ ակն կալեալ Եմիլիոս յՈ-

պճնաւորս 'ի վերայ նոցա՝ ընտանի առհաւաքեն և անտառախաղաց ծառուղս, 'ի պարսպապատեալ մարգագետնաց անտի խոխոջելով ընթանէր ականց ջրոյն և ստորերկրեայ գնացիցն. ընդ զառ 'ի վայր ընթացեալն խորոց բաղխմամբ հաստատէր և փոռս, և անդէն ակնածելի վտակք փառ-թաղեալս խոխոջեալք յորդ և առատ՝ ցայտեն ղիլօրս, ընդ պատուաստուածոյ 'ի գուբս ըն-կեալք ստորակայութեամբ՝ որ անդադարս արա-բանեալ ջուրցն:

Թուեցեալ եղեն ոմանք՝ որ առիցեն, չէին շաղախմամբ ամբարտակաց ջրոյց ամփոփեալ 'ի ներքոյ յարկաւորն՝ բաղխեցուցանել զնո-րա ստորանակերով գլխաւորին. այլ թէ ան-դէն 'ի ժամանակի 'ի փոսան համեգերքին կաղախ ջուր առ 'ի լուծանելոյ խառնեալ նմանութեան. և թէ՝ 'ի ջուր անշարժ փոխեալն գալարաշէք գինձինք հոսեալք 'ի ցուրտն, յորժամ 'ի խորախորքն վայրս անդ արգելեալք՝ լուծա-նէին 'ի ջուր գնացական: Քանզի զորօրինակ ամպինքդ կամարաց՝ առեն՝ չէին արգելեալ կապել զոլորս ըստ ամբառնահաւաքման կաթուածոյ, այլ զործեն կաթեն և անդէն բղխեն՝ 'ի նոյն փոփոխելով զկերպարանս 'ի առաջինսն. առաւելս և վայրք ցրտինք գետոյ և ամպերաբահոսք չուանենին ջուր ընդերկրեայ, և ոչ ծոցս և գոգս 'ի գնացուցանել հոսանս և գետս մեծամեծս 'ի ստորերկրեայ և յամբառ-նեալ ակնանց. այլ ձնշեալ և հոսեալ զցուցին և զօդն՝ առաւել լուծեալք փոխեն 'ի ջուր: Եւ վասն այնորիկ վայրքն պեղեալք հեշտին ցայտեցուցանեն ջուր՝ 'ի հարուլ

նոցա և 'ի քրքջելն (ըստ որում և ամենայն- կանանց դղրդմանն 'ի դիւրն), յորմէ և շոգիքն քնքշեալք շրջին և փոխին 'ի հատանումն: Իսկ վայրք գետանոյ անդորրութիւնքն և անձնաւորութիւնքն՝ անկեալք են 'ի ծնունդ իւրոյ, շնչելով շարժումն ներգործական առ 'ի հատանումն: Այլ որ զայսոսիկ ասեն, պատճառս տան նոցա և կաղապարծ առանձնոյն է, փոխանակ յուզել ցուցանել՝ եթէ և ոչ 'ի կենդանիս դուցէ անշունչ արիւն, այլ թէ անդէն 'ի խուցել և 'ի հարկանել մարմնոյն ծնանելոյն՝ 'ի փոփոխմանէ ինչ ուղղոյն կամ մարմնոյն, յորմէ և հատանուած այդ կաղմեցի առաջ առաջմեծմեալ յայնժամ առաջաքս: Այլ սակայն զդասս ասփ 'ի ընթրան արդեօք արտացեն մարդիկն՝ որք 'ի բանս և 'ի խորափոսս մեծաղոյց պատառհեն հատանմանց դետոց, որ ոչն արդեօք տանկար տանկար եկեալ ժողովեն (ըստ որում 'ի դէպ էր՝ եթէ անդէն 'ի պեղել հողոյն երևեցին դոքա), այլ խոխոջեալք յորդեն 'ի դուրս միահամուռ: Դէպ եղև՝ զի և 'ի ձայթել պատառել լերանց և վիմաց, յորդեաց ջուր առատ, և առաջ ցամաքեցաւ: Սակայն վասն այսոցիկ այսչափ հերիքասցի:

Այդ անդամոր Եմիլիոս այնուհետ եկաց միոյ յանդորրութեան աւուրս ինչ. և ասեն՝ թէ երբէք ուրեք ոչ տեսաւ՝ եթէ կրկին բանակք այնուհետ ահագինք և մեծամեծք 'ի հանդիպոյ այնչափ մերձ ձմեռեալք միմեանց՝ յայնչափ յանդորրութեան երբէք կա-

ցեալքս եկին : Իսկ Լեւկիոս յուղեալ և խաղա-
ղեալ զզանձինս, ընդ որ էառ Եմիլիոս՝ ե-
թէ առեալ մի ամբարտաւանութեան լքեալ կայ 'ի
Թշնամեացն, և անդրդուելի մարթի անկանել
'ի վերայ բանակին՝ անցեալ ընդ մէջ Պերր-
րեբեայ մեա 'ի Պիւթիոն և 'ի [illegible], քա-
ջալերեցեալ յանդգնահաւանութեանն տեղւոյն՝
քան թէ զանձգլխեալ լինել յառաջադրութեց և
'ի դժուարինս՝ որք աղագաւ անխնամ թո-
ղեալ էր ձայն. 'ի խորհուրդ առայս նման
վասն բանիցն այսոցիկ : Անդ 'ի խորհրդեան
նոցա՝ առաջինն նախահասակեցաւ Նասիկա
մականուանեալն Սկիպիոն՝ փեսայ Աֆրի-
կանոսի Սկիպիոնի, որ և առաւ առաջ այս
'ի Սինկղիտոսական. նա յառաջագայեալ ընծայե-
ցաւ առաջնորդ զօրավար 'ի նոյն շրջանա-
հատանել անկանել 'ի վերայ Թշնամեացն.
յետ նորա նախահասակեցաւ զինակցութեան և
Փաբիոս Մաքսիմոս երէց որդի Եմիլիոսի,
Թէպէտ և տակաւին պատանի : Իսկ Եմի-
լիոս յայնժամ յանձն իւր զուարճացեալ՝
առայր նոցա 'ի ձեռս 'ի զօրականնեն, ոչ որ-
չափ լինել պատմէ Պողիբիոս, այլ որչափ
ինքնին Նասիկա ասէ առեալ ընդ իւր՝
գրեալ վասն շահատակութեանն այսորիկ
նամակ առ մի ոք 'ի թագաւորաց 'Ն :
Եւ էին հազարք Թուով աստաղաց կարգին՝
էին յիտալացի զօրականեն, և հինգ հա-
զարք դարձեալ 'ի ձախոյ Թեւին. ընդ սոսա
առեալ Նասիկա և երիվարս հարիւր և
քսան, և երկերիւր եւս որպէս որ յԱրաքա-
դաստն՝ խառն 'ի Թրակացւոց և 'ի Կրետացւոց

ւոց, խաղաց գնաց 'ի ծովակողմն կոյս. բանակ հարեալ նստէր մօտ յՀերակլեոն, իբրու անդուստ շուրջանակի նաւել և պաշարումն 'ի վերայ բանակին թշնամւոյն ածել: Իսկ իբրև ընթերցան զօրականն և մուծին 'ի վերայ հասանէր, 'ի վեր եհան նա զօրապետացն զխորհուրդն. և գիշերի առեալ զզօրն՝ դիմեալ գնայր ընդ հակառակս Ճանապարհի ծովուն, և եկեալ հասեալ 'ի ներքոյ Պիւթիոնին, անդ յանձանձեալ հանգիստ տայր զօրականին: 'Ի նոյն վայր ամպարձաձիգ կանգնի Ողիւմպոս 'ի վեր՝ ասպարիսաց առաւել քան զտասն. զոր յայտ առնէ մեզ Վերտառութիւն աւն՝ որ չափեացն զնա, այսպէս. “Ողիւմպեայ գագաթանն՝ անդուստ 'ի Պիւթեանն Ապողոնի տաճարէն՝ բարձրութիւնն ըստ կարակնածիր չափոյն, տասն ասպարիսաց է, և ընդավար մի՝ չորս ոտնաչափիւ նուազեալ: Եւմիլեայ որդի Քսենագորէս եա զչափն ուղղոյն: Իսկ դու ով Արքայ ողջ լեր, և բարորութիւնս տուր”: Թէպէտ և երկրաչափք ասեն, չիք բարձրութիւն լերին և ոչ խորութիւն ծովու առաւել քան զտասն ասպարիսաց. այլ թուի թէ ոչինչ հարևանցի զնոյն չափ չափեալ իցէ այս Քսենագորէս, արուեստ և գործիս 'ի վար արկեալ 'ի պէտս գործոյն:

Արդ Նասիկաս անդանօր զանեղի առեալ նստաւ զգիշերն ողջոյն. իսկ 'ի զօրաց անտի նորա Կրետացի ոմն ինքնին գաղտագնաց եկեալ յուղւոյն և անցեալ առ Պեր-

սէոս, որ ոչինչ խորագիտած լեալ էր բա-նին՝ սասանեալ 'ի հանդիպելոյ իւր բանակեալ զԵմիլիոս, պատուիրէր նաւս փութան չըջանաւոր-ութեան ուղղոյն՝ զոր հասանէին Հռովմայեցիք: Զանձն հարուստ Պերսէոս. ամենայն զանձս կալեալ՝ առաքէր 'ի ձեռս Միղոնի ընդ իւր մի յեկաց զօրականէն և երկու հազար ևս 'ի Մակեդոնացւոց, հրաման տուեալ խա-ղալ ձեռակալ հասանելոյ ունել զպարապմունս: Այլ Պողիւբիոս պատմէ, եթէ 'ի քուն լի-նել նոցա անկան 'ի վերայ Հռովմայեցիք. այլ Նասիկաս գրէ՝ առաւօտին գոռալ պատա-հել զպարապմանցն, և խիզախել Նասիկաս 'ի վէգ ելեալ ընդ վարձկանին ումեմն Թրա-կացւոյ՝ Թիակ ընդ լանջան անցուցեալ ըղ-ակէզն՝ տապալատ յերկիր արկանել զայրն, և 'ի բուռն յարձակմանէն խուժանել Թշնամեացն և աներկի առել. և Միղոնի խիզ-նին անարգաբար փախուստ խնդրել անդէն միով բաճկոնիւ. և խիզն զհետ մատեալ վա-նեալ՝ ողջակէզ զօր իւր առեալ իջուցանէ 'ի դիւրին միանգամայն:

Բայց Պերսէոս յայն տագնապ զանհի մեծի հարեալ, և գիտէ թէ յաւաղանակ՝ անդէն ժողովեալ զբանակին առնուի առայր 'ի վայրաց. առակայն և վարանեցաւ 'ի կրկին տարակոյս՝ արդեօք զանձինս առեալ յան-դիման Պիւդնայ 'ի գին՞ հարկանել Թըշ-նամւոյն, եթէ ընդ քաղաքաւ քաղաքաւ բաշ-խեալ զզօրն՝ զմարտ պատերազմին 'ի ներքս առնուլ բերել. բայց և միանգամ յաշ-խարհն զկալուած ածեալ բերել՝ հնար չէր

այնուհետեւ սուսանց ամբաւ կոտորածի 'ի բաց գնոյն տանել: Այլա անդանօր բարեկամքն մերձ կայցեալ խորախոյս տայքն նմա, զի բազմագոյն էին նորա զօրք, և նորա զօրականք քաջալերութեամբ լի էին և մառեալք կազմ՝ մարտ գնել կռուել 'ի վերայ որդւոց և կանանց. ուրանօր և զնոցա այդքայն հանդիսատես ումեքն նահատակութեանն, և կորայեա և գիմագրաւ նահատակ: Ցայսպիսեաց սատի Պերսէոսի խորախոյս տայքն բարեկամք. և նա բանակ հարեալ և 'ի կռիւ պատրաստեալ, գետակն կալեալ զիններ զվայրն, կարգէր բաշխէր զգնդապետսն, և երկայնէր ձգէր զճակատն, արագ արագ անդէն խաղալ անկանել 'ի վերայ Հռովմայեցւոցն: Էր անդ հովիտ յարմարաւոր 'ի գետ վասն փաղանգին, զի և էր իսկ դաշտավայրն դիւր և գետոյինն հարթհաւասար. զարձեալ և յայսկոյս յայնկոյս 'ի վայրին գօտիք բլրոց՝ ապաւէնք թեթեւաղէն զօրականին, անդուստ ապաստանել հանել սփռել շուրջանակի: Իսկ 'ի միջոցին գնայլին կրկին գետք՝ Էսոն և Լեւկոս, թէպէտ և սակաւաջուրք յայնժամ (զի վերջ էր ամարայնոյն), սակայն և ոչինչ այնպէս դիւրանցանելի Հռովմայեցւոց:

Այլ Եմիլիոս, թէպէտ եկն եհաս առ նա Նասիկաս, իջեալ 'ի ճակատ զօրուն՝ կամէր անդէն մտել մարտ ընդ թշնամիսն. թէպէտ եւ տես զի այնպէս կարգեալ ճակատեալ կայր ամբաւ բազմութիւն նոցա,

յարգացուց հարսնեալ՝ զանուանի կալանս. այնուհետև կայցէ և խաղհնէր 'ի մէջսա իւր: Իսկ յայնժամ 'ի զօրավարութեանն երկրաշատութեան խորախոր- հեալք վտանգեալք միջամտեալ 'ի մեծութեան ըն- ներ՝ եկեղեալ ազատաբերին զնոսա մի և զանձնա- զեր. առաւելել և Նաւակացն մեծագոյնս քա- ջալերեալ 'ի պետերգեկ մրցանաց, զոր առա- ջաւ յՈղկևմպաս: Յայնժամ Եմիլիոս ժողո- վեալ ասէր. "Քա՛ջ է, եթէ և իմ՝ քո հաւանեն էր. այլ զնա բարդուած յաղթու- թիւնք խոհեմութեան արդարեւն յանեցանանաց [illegible] նեցելոցն. և չաւսն իմն թէոյլ՝ այնուհետև իբրև յաջողոյ անդէն 'ի կայս կարօտել ըն- փառաւորել, որ այնուհետև վասնեան և զերե- ցեալ Մակեդոնեան կայ":

Եւ Թուի թէ՝ սա այս և Սխաղարացւոց որ այր սասացէ վասն Սպարտացւոց՝ եթէ ոչ 'ի մեծաց խնչ չարերաց համբաւեալին նոքա զմեռանելն 'ի մարտի, պատերազմելով նո-քա 'ի բազմաձայնեալ զօրաւորաց և 'ի խառնամ-բերս կենացն։ Այլ սակայն ընդսովորակամ խնէ առաջեւք Թէբացւոցն. խնդացեալք 'ի զօրավար և 'ի փոփոխութեանն՝ կարծեալ ե-թէ որք միաբանեալ յառաջնորդութեանն բե-րեալք և ցանկացեալք փառաս ժառանգե-ցին՝ 'ի մեծահռչակն չերկրեցին, ատանելոյն նո-քա և զինեալքն զզխամին։ Սակայն Լիւ-կերգեսեան առաջեւ էր միաբանեալ և կեանքն և մեռանելն, քանզի զի մինչ առա-ջնորդ նահատակեցին յերկրպագանեցեր-ովն յաղթեալ. ըստ որում քաջաբար կայ 'ի Դասակարգեալ յայտնեալ է, որ ասէր այսպիսի. « Սոքա մեռան. սակայն ոչ ըղ-կեալն համբարեցին զհեռեցուն, և ոչ զպար-ծեալ զմեռանելն. քանզի թէ յորժամ եր-կուցանէին նոքա զհեղեղելոյ առաջնորդութիւն պատմեցին »։ Պատմելի առաջնորդքն չէ առ-ջնոց փախչել 'ի մեծահռչակէ, յորժամ որ ցանկացեալ էցէ առաջնորդ կենացն. և

ոչ դարձեալ գովելի է զխնամդրաւ 'ի մահ լինել, յորժամ արհամարհ ամենայն ըղ-կեանսն։ Վասն որոյ և Հոմերոս ինքնին ցանկ զբուր նահատակին զկորովիս և զքա-ջամարտիկս՝ յառաջարկեալ հանէ 'ի գէն 'ի գործ գեղեցիկ վաստակել։ Եւ օրէնսդիրքն Հելլենացւոց պատուհաս 'ի վերայ կարգեն ամն՝ որ զասպարն ընկեցեալ իցէ, այլ ոչ՝ որ զզրահսն կամ զնիզակն լքցէ. յայտ առնելով զի այր այր՝ քան զվնասել թշնամւոյն՝ զան-ձին պաշտպանութիւն նախապատիւ ա-րարցէ. և առաւել ևս՝ որ միանգամ քա-ջութի կամ բանակի առաջնորդ կացեալ է-ցէ։ Քանզի եթէ (որպէս գեղեցիկ բա-ժանեաց Իփիկրատէս) հետևակազօրք թե-թևազէնք՝ ձեռք և բազուկն են բանակին, և այրուձին՝ ոտք նորա, և փաղանգն՝ լանջք են նորա և կուրծ, իսկ զօրավարն՝ գլուխ է նորա. որ եթէ երկիւղք յանդգնագոյն զխնա-դրաւ եղեւ 'ի վտանգն, անօգուտ ուրեմն իցէ նա ոչ վասն անձին միայն, այլ և ա-հասարակ վասն նոցա՝ որոց փրկութիւնն 'ի նա ինքն հաստատեալ իցէ. դարձեալ և ներհակաբար։

Ուստի և Կալլիկրատիդէս՝ թէպէտ և ա-ւագ այր՝ չէր բարւոք զպատասխանին առ գուշակն որ ասէր նմա զգուշանալ 'ի մա-հուանէն՝ զոր սպառնայքն յուցանէին. զի պատասխանի ետուր. “Չէ Սպարտիա 'ի մի այր հաստատեալ“։ Քանզի Կալլիկրատի-դէս՝ թէպէտ և 'ի կռուել խորուամ և 'ի նա-ւելն և 'ի զինուորելն ընդ այլոց ձեռնաւոր՝

մի ոք էր, ամենայն 'ի զօրավարութեանն՝ յիւրում անձին ամփոփեալ ունէր առ-հասարակ զայլոցն զօրութիւն. զի և չէր իսկ այնուհետև մի՝ ընդ որում 'ի մահ մի-անգամայն մտանէր և ամբաստութիւն զօ-րավարութեանն: Քանզի և երէցն Անտիգոնոս, յորժամ նաւամարտիւ հանդերձեալ էր ելանել մօտ յԱնդրոս, ասէ՝ ոք բազմագոյն ասէր զթշնամեացն նաւս, տայր պատաս-խանի. «Իսկ զիս զիմ անձն քանեա՞ց նա-ւաց ասես արժել»: Եւ բանիւք մեծա-գէս յարգէր զառաջնութիւն զօրավարին՝ որ զհամբերութիւն և զառաքինութիւնն մեծ իւր ունիցի, առաջին գործ ունելով պահել զնա՝ որ պահէին զհասարակաց զամենեսեան: Եւ վասն այնորիկ՝ յորժամ Քարեսոս ա-ռեալ ցուցանէր Աթենացւոց զվէրս մար-մնոյն և զվահանակն եւ ծակոտեալ, զերկերցելոյ պատերազմաւն Տիմոթէոս. «Եւ ես խղճեցի մեծապէս զանձնէ ամօթի հարայ, 'ի պաշարմանն ամիք Սամոսացւոց մօտ իմն անկանելով նետերոյ. քանզի զխնամարկութեան էր իբրեւ երի-տասարդաց յանդգնութիւն, անպատշաճ զօրավարի և առաջնորդի մեծի բանակին»: Քանզի ուր շահ մեծ 'ի ներքս բերցէ վտանգել զօ-րավարին, անդ ամենայն պէտք են նմա անխնա-նայ զխնայողութիւն 'ի գործոյն ընկենուլ. ուրեմն ունիցին մատուցեալ որոց ասենն՝ եթէ քաջի զօ-րավարին առ 'ի ծերութեան մեռանել, 'ի գէթ լինէ, կամ թէ 'ի ծերանալ հասա-կի: Իսկ ուր դուզնաքեայ լինէ շահն 'ի յա-ջողել իրացն, և զեան մեծապէս՝ 'ի չյա-

Ջոզելին, ոչ ոք յայնժամ 'ի զօրավարէն ըղ-ոստիկական զինուորին պահանջեսցէ զգործ վտանգաւորել զօրավարի:

Եւ արդ. մեք զայսոսիկ 'ի դէպ համարեցաք կանխաբանել 'ի վարսն Պեղոպիդեայ և Մարկեղղոսի, զորոց առեալս եմք 'ի գրել. զի երկաքանչիւրք դոքա արք առաքք` անհամձնաբար զինագործեալք 'ի մահ վարեցան: Քանզի կորովիք յոյժ գոլով դոքա 'ի մարտի և յաղթապաղուկք, և պատկեալ զերեանց հայրենիսն գեղեցիկ նահատակութեամբք; և Թշնամիս մեծամեծս 'ի պարտութիւն մատնեալ, մին առաջին` որպէս պատմեն` հարեալ խորտակեաց զՀաննիբաղ զանպարտելին. և միւսն 'ի Ճակատամարտի պարտեաց զՂակեդեմոնացիս` որ յայնժամ միապետութեան ծովու և ցամաքի տիրեսցեալ էին: Իսկ յետ այնորիկ ոչինչ խնայեալ նոցա յանձինս` անխորհրդաբար 'ի կչիռ եդին զկեանս 'ի ժամանակին` յորում մեծապէս պէտք էին կենաց նոցա և զօրավարութեանն: Ուստի և միմեանց նմանողութեանն զհետ գնացեալ մեր, զուգակշիռ կարգեցաք զվարս դոցա:

Պեղոպիդէս Իպպոկղեայ որդի` էր 'ի Թեբայ 'ի հռչակաւոր զարմէ իբրու զԵպամինոնդաս: Սա 'ի բազմահարուստ տան սնեալ, և պատանի տակաւին` ժառանգ կացեալ մեծաշուք և ընչաւէտ ազգատոհմի, նպաստ լինէր կարօտելոցն և խնամակալու. յայտ արարեալ եթէ անշուշտ տէր է ընչիցն, և ոչ ծառայ: Քանզի բազում

այն են 'ի մարդկանէ՝ որպէս Արիստոտէլ ասէ՝ որ կամ առ ճղճիմ բարոյիցն 'ի գործ դնելոյն չկարեն, կամ թէ շռայլութեանցն չարաչար վարեն. վերջինքդ՝ ցանկից գերի են զգայարանաց, և առաջինքդ՝ արծաթսիրութեան: Այդ՝ Թեբայեցիք առհասարակ վայելելով 'ի մարդասէր առատաձեռնութենէն Պելոպիդեայ՝ շնորհս մեծապէս ունէին նմա. սակայն յամենայն բարեկամաց նորա միայն Եպամինոնդաս երբէք յանձին չկամէր առնուլ ինչ 'ի նմանէ. և ինքնին Պելոպիդէս համոզուածաբար աղքատութեանն Եպամինոնդեայ յարգարեաց զանձն, և մասնակցութեամբ նմանեալ լինէր նմա յանպաճոյճ հանդերձն և 'ի սակաւապէտ 'ի կերակուրս, յանխոնջելի վաստակն և յանխարդախ պաշտօնս 'ի զինուորութեան մարտս: Ըստ որում առ Եւրիպիդեայ Կապանեոսն այն՝ որ թէպէտ և ընչաւէտ յոյժ, երբէք յընչաւէտութենէն ոչ մեծամտէր: Նա՝ և զամօթ համարէր Պելոպիդէս, եթէ երբէք վասն անձինն առնել ինչ ծախէր քան զաղքատ մի 'ի Թեբայեցւոց: Այլ Եպամինոնդաս զաղքատութիւն իւրն հայրենի ժառանգութեամբ կալեալ, 'ի ձեռն իմաստասիրութեանն հեշտագոյնս կալաւ և փոքրոգի առաքինեաց ամուրի միայնակեցիկ քաղաքավարութեանն՝ զոր ընտրեաց անձին իւրում: Բայց Պելոպիդէս պայծառ հարսանեաց յաջողեցաւ, և որդիս ևս ծնեալ, 'ի վերայ այսր և ոչինչ պակաս ընչասիրաց էր նա. և զօրհանապազ 'ի պաշտօնաւորու-

թեան քաղաքին Թարթարեան, ծախե_ցան ինչք նորա։ Ուսաւ և խորատասու քաղաքա_կանացն եղեալ նմա, խորոտու ոչ գեղեցիկս անմխիթար առանձին նմա դիպաւորութեանն՝ ըմբռնելոյն, եւ տառապանաւորին. Օ՜ն և օ՜ն՝ կոչէին ար_ջէօ+ Նէֆոջէֆձոյջ ոյջմէֆ. և մնացանանէին ցու_ցանէր անդ զայր ամն կաղ և կոյր։

Բայց երկայնամտութիւնն նորա բոլոր բարուց առնէին անկանելից առ ամենայն առաքինու_թեան. այլ Գեղագիտիկեա յաւէտ ըղձանայր 'ի կրթանս մարմնոյ, և Եղանակամտութեան 'ի հրաշալեաց հոգւոյն. ուստի և 'ի պարա_պել նորա՝ մին գեղեցիկ յառաջադէմ ըմ_բռնեց և յորս, և միւսն՝ 'ի լաւագոյն խոհա_կանութեան։ Իսկ 'ի բաղձանալ և 'ի փառաւորել ծնահասութեան նորա՝ ոչինչ այնպէս արդար և պատուական տեսանէին որք քաջախոհութեամբ, խորոտ զի անդամոքն 'ի սկզբանէ մինչ 'ի կատարած յայնչափ զմնուստութեան և 'ի մարմնոյ և 'ի փառա_ւորութեան քաղաքին՝ մինչ անկեալ կալան նո_րա զզգայական մտաւորութիւնն և զանէր։ Քանզի ե_թէ ոք գտանէին կարգի 'ի քաղաքականու_թեանն Արիստոտելեայ և Թեոփրաստեայ և Կիկերոնի և Գեոլիկեայ և Նիկոլաոսին և Աղ_կիբիադեայ, որք երկայնաւորք այր յանկե_լոյն լի էին նախանձու և մախանօք ընդ_դէմ միմեանց. և առաւ ամենայնցն գարշ_ցի 'ի սէր մեծարանութեանն և մեծարանաց Գեղագիտիկեայ և Եղանակամտութեան առ մի_մեանս, խորտակեալ և աղաղակէս իշխանու_թեանց և նիզակակցաց զաւառ առաւելէ քան

թէ. զմտօք, որք յանձ 'ի վէպ եկին՝ զմի-
մեանս նկատեն առնել, քան թէ զթշնամիսն
'ի պատրաստութիւն մտանել:

Եւ էր պատճառք ճշգրիտ համաձայնու-
թեան սոցա՝ առաքինութիւնն իւրեանց. զի
փառս չխնդրէին նոքա 'ի գործս իւրեանց
և ոչ արծաթ, յորոց նախանձու միշտ բը-
նաւորեցան կերպք խռովութեանց և գժտու-
թեանց. այլ անդադարին երկրորդին նոցա աս-
տուածային իմն զգացեալս վառեալք սիրով,
ոչինչ այլ՝ քան թէ զհայրենեացն սիրեցին
առաւելուլ զշինութիւն և զհասարակութիւն 'ի
ձեռն նոցա, ուստի և միմեանց զօրավիգն 'ի
նահատակութեանն՝ այր զընկերին իւր
համարէր: Այլ բաղդաւորք առեն՝ սերտն և
սերտ միաբանութեան զոյգս սկիզբն ունել
'ի Մանտինեան զինուորութեանն. ուր նա-
քա կռուեցան մարտակիցք Լակեդեմոնա-
ցւոցն. զի յայնժամ զեռ ևս բարեկամք և
նիզակակիցք էին նոցա Թեբայեցիք, որք և
զունդ 'ի Թեբայէ 'ի թիկունս առաքեցին
նոցա յայնժամ: Քանզի երկոքեան նոքա
կարգեալք ընդ հետևակ զինուորաց՝ մի-
մեանց առընթեր մարտ մղեալ ընդդէմ Ար-
կադացւոց, իբրև Լակեդեմոնացւոց թևն
բեկանէր՝ ուր կային նոքա, և շատք յայն-
ժամ 'ի փախուստ խուճապեցան, սոքա զը-
նդեալք զասպարս իւրեանց՝ այնպէս ընդդէմ
կային բուռն յարձակման թշնամեացն. ա-
րանօր Պեղոպիդէս վէրս եօթն առեալ 'ի
մարմինն՝ նուաղեալ անկանէր 'ի դիականս
բարեկամաց և թշնամեացն: Իսկ յայն-

ժամ Եպամինոնդաս՝ Թեբայեա և կարծեալ ևս մեռանել Պեղոպիդեայ, եկեալ արձանանայր առաջի պահպանել զդիակն նորա և զզէնսն. մարտ եղեալ կռուէր միայնակ ընդդէմ բազմաց, կամէր մանաւանդ անդէն 'ի մահ տարածիլ, քան թէ թողուլ լքանել զդիտապատան Պեղոպիդէս։ Սակայն և Եպամինոնդեայ անդէն խուճապ տագնապի 'ի վերայ հասանէր, տիգահար 'ի լանջսն խոցեալ և սուսերահար 'ի բազուկն. մինչև անդուստ Ագեսիպողէս արքայն Սպարտացւոց 'ի միւս թևոյն յաղթութիւն հասեալ՝ զերկոսին միանգամայն ապրեցուցանէր արտաքոյ յուսոյ ակնկալութեան նոցա։

Եւ յայնմ հետէ Լակեդեմոնացիք՝ թէպէտ և բանիւ բարեկամս և նիզակակիցս ունէին զԹեբայեցիս, այլ արդեամբք խիթային ընդ պերճութիւն և ընդ զօրութիւն քաղաքին այնորիկ։ Եւ առաւել ատելութեամբ էին նոքա ընդ կողմն Իսմենիոսի և Անդրոկղիդեայ, որոց և կուսակից էր Պեղոպիդէս՝ իբրու ազատասէր այր և ռամկասէր. ուստի և Արքիաս և Լէոնտիդաս և Փիլիպպոս այրք աւագապետականք և ընչաւէտք և խիզախք 'ի խորհուրդս, 'ի հաւանս ածէին զՓիբիդաս Լակոնացի հանդերձ բանակաւ անկանել յեղակարծումն ժամու և ունել զԿադմիա, և 'ի բաց զհակառակորդսն վանեալ՝ հնազանդել Լակեդեմոնացւոց զքաղաքն ընդ պետութեամբ աւագապետորոյն։ Իբրև նա ունկնդիր եղեալ՝

՚ի սոմանն Դեմերատեան յանակնկալ ժամանա-
նեկեալ ՚ի վերայ Թեբայեցւոց՝ տիրացաւ
դղեկին, Իսմենիոս ձերբակալեալ ածեալ ՚ի
Լակեդեմոնիոս, ոչ հարուստ մի ժամանակ
՚ի վերայ անցեալ՝ սպանաւ: Իսկ Պեղոպի-
դէս և Փերինիոս և Անդրոկլիդաս փախուս-
ցեալ ընդ այլոց բազմաց, դատապարտե-
ցան յաքսոր: Այլ Եպամինոնդաս եկաց
մնաց ՚ի քաղաքին. զի և փոյթ ինչ չարա-
ցին վասն նորա, իբրու որ յիմաստասիրու-
թեան պարապեալ՝ միջնամուխ չէր, և աղ-
քատութեանն՝ անձեռնհաս ՚ի գործ:
Բայց Լակեդեմոնացիք ՚ի բաց ՚ի Փիբիդեայ
առեալ զզօրավարութիւն, տասն բիւր դրամ
մանկչուոյ տուգանեցին զայրն. ՚ի վերայ այսր՝
և կալան նոքա զԿադմիա և կարգեցին անդ
պահակերս: Որք աղաղակ և առհասարակ
Հելլենացիք հիացեալ էին ընդ նորանշան
բանն, զի պատուհաս ՚ի վերայ կարգեցին
նոքա գործողին, և միաբանութեան հաւա-
նեալք հաձնեցան ընդ գործն:

Եւ այսպէս ապա զհայրենասէր քա-
ղաքաւորութիւնն կորուսեալ Թեբայեցիք
և ծառայք Արքիասայ եղեալք և Լէոնտիա-
դեայ, յորս անդամ չմնաց նոցա եւս դատա-
նել ՚ի բռնաւորութենէն, որ անխածածուկ
՚ի տէրութենէ Սպարտացւոցն եղեալ, նկատ-
առնել չէր հնար մինչև զծովուն տէրու-
թիւն և զցամաքին բարձեալ ՚ի Լակեդե-
մոնացւոց անտի: Բայց Լէոնտիադէս լուր
առեալ զդատապարտելոցն՝ բնակել յԱթէնս
և սիրելի լեալ ամենեցին և պատուեալ ՚ի

լու տղերոյն , որոգայթ 'ի ծածուկ լա-րեալ՝ յղէր անդր արս անծանօթս . որք Թէպէտ և զԱնդրոկղիդէս սպանին զաւուրն, սակայն յայլոց անտի վրիպեցան նոքա ։ Նաև Լակեդեմոնացիք նամականի տուեալ առ Աթենացիս , պատուիրէին մի ժողո-վել զփախստականսն և մի զբաղել զնոսա, այլ խրել հասարակաց թշնամիս նիզակակ-ցաց հալածել զնոսա ։ Բայց Աթենացիք՝ բաց 'ի հայրենի և 'ի անկակից բարեաց մար-դասիրութենէն , կամեցան և վարձս փո-խարինել Թեբայեցւոցն ; որք պատճառք եղեն վերստին ռամկապետութեանն յԱ-թէնս . և վճիռ եւս եդուն՝ զի թէ որք յԱթե-նացւոցն զինու զօրու անցցէ ընդ Բիովտ-իա ընդդէմ բռնաւորաց, մի որք 'ի Բիովտ-ացւոց խլրտեսցի լսել ինչ կամ տեսա-նել ինչ . ուստի և ոչինչ անխրաւեցան նո-քա յայնժամ առ Թեբայեցիսն ։

Այլ Պեղոպիդէս՝ Թէպէտ և պատանի, յորդորէր խրախուսէր առանձինն զմի մի 'ի փախստականացն . և 'ի ժողովս դարձեալ խօսէր բոլորեան՝ եթէ ոչ գեղեցիկ ինչ է և ոչ բարեպաշտութիւն , անփոյթ զհայ-րենեացն լինել՝ որ 'ի ծառայութեան կայ-ցէ և կապեալ 'ի պահանորդաց իցէ . չէ պարտ շատանալ միայն փրկութեամբ ան-ձին , և ոչ միայն վճռոյ ունել Աթենա-ցւոցն , և սպասաւորկու լինել հրապարակա-խօս հռետորացն . այլ յաղագս մեծամե-ծացն իրաց զխմանդրաւ 'ի վտանգս լինել արժան է . և յառաջ բերէր ածէր նոցա

զնկարագիրս մեծ զօրութեանն և զառաջինութեանն Թրասիբուլեայ. որպէս նա մեկնեալ ՚ի Թեբայէ՝ խաղաց գնաց հարկանել վանել զբռնաւորսն յԱթէնս, նոյնպէս և նոքա ելեալք յԱթենայ՝ գնասցեալք յանդորր հանգչեն զԹեբայ ։ Իբրև այսպիսի բանիւք ածեալ համոզեցուցանէր զնոսա Պեղոպիդէս, առեալ նոքա արձակեցին զայր ՚ի Թեբայ ազդ առնել բարեկամացն որ անդ՝ զխորհուրդս իւրեանց. Նոքա մեծապէս գովեցին զբանն, և անդ Քարոնն այր ականաւոր զիւրականն իսկ տունն յօժարութ[ե]իւ առաջարկեաց նոցա ։ Իսկ յայնժամ Փիլիդաս հնարս հնարեցաւ, և լինէր ատենադպիր Արքիասայ և Փիլիպպոսի զօրավարաց ։ Մանաւանդ և Եպամինոնդաս ՚ի վաղուց պատրաստեալ էր՝ արութեանն քաջութեան խորհրդովքն վառել բորբոքել ըղպատանիսն ։ Քանզի ՚ի կրթարանսն հրամային տայր Թեբայեցւոց պատանեաց ըմբշամարտիլ և գօտեմարտիլ ընդ Լակեդեմոնացիսն լինել. այսպէս տեսեալ զպատանիսն զի ՚ի բարձր պարանոց զնոսյին՝ իբրու որ առաւել կորովիք և յաղթականք, սաստէր նոցա Եպամինոնդաս՝ իբրև զի քան հպարտանալ՝ նոցա զամօթի հարկանել պարտ էր, զի առ անարի վատութեանն ՚ի ծառայութեան կան նոցա՝ որոց ՚ի կորովութեան վեհագոյն են նոքա ։

Իսկ արդ ժամանակեալ զօրն ձեռնամուխ ՚ի գործն լինել, հաճոյ թուեցաւ վտարանդեալոցն՝ զի Փերենիկաս խմբեալ ՚ի մի զայլսն՝

զօրեղի կայցէ 'ի Թրիասիոն. իսկ որք առաւել քաջառոյգք 'ի նոսա՝ դիմագրաւեացին մտանել 'ի քաղաքն. իսկ թէ երբէք ձախողակս ինչ պատահեսցէ նոցա 'ի թշնամեաց անտի, ապրեալքն խնամակալուք կայցեն որդւոց և ծնողաց նոցա, զի մի 'ի կարեւոր պարէնիցն զրկեալք յաղէտս պաշարեսցին նորա: Անդամոր նախաշաւիղ 'ի նոսա զտանէր յառաջադէմն Պեղոպիդէս, ապա Մեղոնն և Դամոկլիդէս և Թէոպոմպոս այրք աւագք տոհմիկք, սերտիւ ընդ միմեանս յօդեալք 'ի բարեկամութեան և 'ի հաւատս, և առաքինի նախանձաւորք փառաց և քաջութեան: Սոքա թուով երկոտասան՝ զիրկս ածեալ որոց անդէն մնացին և յառաջոյ երկեանց պատուիրակ մի արձակեալ առ Քարոնն, յուղի անկեալ զնայլն զգեցեալք հանդերձս հանդըրձեալս և ածեալ ձգեալ ընդ երկեանս բաբակս որսականս, և բարձեալ ձողս գայառականաց. զի յուղեւոր անցաւորաց անտի ոք մի ինչ զնոցանէն կասկածեսցի, հաստատութեամբ կարծեալ զնոսա իբրեւ թափառականս անձանս և որսորդս:

Հասեալ պատուիրակին առ Քարոն և պատմեալ եթէ յուղի անկեալ գան նոքա, նա՝ և ոչ 'ի մտանել մերձի վտանգին փոխեցաւ ինչ 'ի խորհրդոյն, քանզի և էր իսկ Քարոն այր լաւ և բարի. պատրաստեցաւ ժողովել զնոսա 'ի տուն իւր: Այլ մի ոմն Իպպոսթենիդաս անուն, այր ոչ չարամոյն ոք, նա՝ հայրենասէր և վտարանդեացն մտե_

րեմ, այլ անպաճ յաղթութեանցն 'ի դժուա-
րինան արտաքսահան ժամուն այնորիկ, յայ-
ցոյ խելս եղեալ 'ի մօտալուտ և 'ի մեծ նա-
հատակութեամբն, զենաւ ածեալ յայն-
ժամ եթէ 'ի մէջ գան նոցա աւագին` զան-
րութիւնն առաւնել զԱպորառայուաց և զօ-
րութիւն նոցա վանել վասահացեալք 'ի
յոյսն անկայուն վառարանդելոցն այնոցիկ,
միայնակ մնչիկ գաղտ 'ի տուն արարեալ`
զմի 'ի բարեկամացն տուեալ յղէր առ Մե-
ղոմն և առ Պեղոպիդէս. առել նոցա` եթէ
առ ժամն ձեռնթափ 'ի գործոյն եղեալ`
դարձցին անդրէն յԱթենս` լաւագոյնին
ակնկալեալք ժամուն: Իսկ անուն առն
Քղիդոնէս, որում յանձն եղև հրաշակու-
թիւնն. 'ի շտապ տագնապի հասեալ նա 'ի
տուն իւր, և ձգեալ արտաքս զերիվարն
խնդրէր զասանձն. այլ կին նորա յանհնարս
մնեալ զանանել, ասէր տուեալ զայն մի-
ում ումեք 'ի դրացեաց անտի. որք աղա-
զաւ ակման նոցա զաւաշխեն թշնամանել,
առաւ և յերջանկատաք լինել. մինչև յա-
նէծս և 'ի նզովս մխեցաւ կինն, զի չարեա-
լեցի ուղին նորա և առաջնորդ նորա: Եւ
այսպէս առաջ 'ի սրամտութեան բարեկա-
թեանն ծախեալ Քղիդոնէս զմեծ ժամա-
նակուն 'ի դժուարութեան յայն, և վառուա-
ռար ևս դգէալն զայն համարեալ` քնա-
խակ 'ի բաց եկաց 'ի հրաշակութեանն, և
զնացեալ պատրաստէր 'ի գործ լինել այլ: Եւ
այսպէս վայրիկ մի ևս անդէն 'ի սկզբանն 'ի
գերեկս եղանէր զէպ ժամանակ ձեռնարկու-

կութեան մեծացն այնոցիկ և յոյժ գեղեցիկ նախահաստատութեանցն ։

Այլ Գեղջգիտէս և ընկերք նորա համեգերձս արկեալ զանձամբք զՀնդկաց, և 'ի մեծամեծաց արտաշխարհ՝ մանկն 'ի քաղաքս անդր. կէսք՝ ընդ մի կողմն, և կէսք՝ ընդ միւսն, մինչ ատուր կայր ։ Ենդամնոր յանձնեան և ամբ փափկութեանցն, հողմն շնչէր քաղցրիկ և ձիւնամանայր. և աստուածեալ նա ծածկեցաւ բանիւն, քանզի և մեղադրելն մնացեալ էին յանձնեան ընդ յարկաւ յերկնաւոր մարմնոյն ։ Իսկ որք գետակն կալեալ արկածին նոցա, իրաւոք համայն նոքա՝ ժողովեալք փութային ածելն 'ի սուրբն Քաղաքինն. և եղեւն ընդ մեծապատուեցելոցն յանձնեան աղիք առ հասարակ քաղաքացն և ազգ ։

Իսկ որ ինչ բանիւք յաղագս բանտարկելոցն՝ այսպիսիք ինչ էին յանձնեան ։ Փիլիպպոս առանձնագոյնս՝ գործակից էր և նա յամենայնին՝ որպէս ասացաք, և բանակցաց լինէր ընդ վաճառականացն ։ Եւ այս Փիլիպպոս յառաջագոյն հրաւիրեալ 'ի գինեխումս և 'ի կոչունս վասն ատուրն այնորիկ զԱրգիկոս և զընկերս նորա, առ այս՝ և 'ի կանանց նա արամբեաց ասէր ածել. խորհէր նա առածել նա իրաւունս նոցա անդ առ 'ի պարգևատութեանն և գինեհարկել, և հեշտանաւ այնպէս տալ զնոսա 'ի դատաւորականացն ձեռս ։ Արդ իրքն նոքա ոչ յոյժ ընդ գինի մնացեալ էին, բայց իմն ոչինչ սուտ՝ առակայն անդ յայտարարօք և մեր 'ի մերոյ ազգ լինէր նոցա, իբրու այն թէ վաճառականացն անդէն 'ի

քաղաքին ծածկեալ լերին ։ Անդ ծփծփեալ թէալէս և ջանայր դարձուած զնուագացն արկանել, սակայն Արքեփոս զմի 'ի պաշտօնէիցն առեալ արձակէր առ Քաղաքին՝ հրամանն առեալ փութայէս յառնել գալ առ խնքն ։ Երեկոյացեալ էր օրն, և Պերղոպեդիւտ և որք ընդ նմա 'ի ներքս կացեալ էին վրանեին, և գլդրահան արկեալ խակ.եին զանձամբ և զառատերան առեալք, այն ինչ անգուստ յանձկարծակի լուեալ զպարգևել գրասցն, զխեւղեաց մի ոմն 'ի նոցանէն և լուեալ 'ի հրեշտակէն զկոչ Քաղաքինի 'ի գրասենեակացն, ըն ահիւ ելին և պատասխանեաց 'ի ներքս ։ Նոքա զառաւօտին կարծեալք՝ եթէ խոսյումանեցեալ ուրեմն հարցքն, առհասարակ յուսահատեալ լինէին յանձնանց փորկութեանն՝ մինչև գործ 'ի գլուխ տարեալ արժանի առաքինութեանն ։ Յայսր ամենայնի մերոյ լուու համարեցան նոքա, անձալ Քաղաքինի և զնալ առնէհեր յանդիմանն լինել խնդրանացն ։ Խոկ Քաղաքինն թէպէտ և անդամնին այր հզօր և անպատասխան 'ի զօրութեանն, սակայն 'ի ժամանն պատարակ լինէր քաղին 'ի վասնտք ընկերացն ։ 'Ի խորք խոցեալ զանդգիտեր՝ թերևս խէթ մտանութեան կայլցեն նոքա վասն նորա, եթէ յանձկարծ 'ի կորուստ մնասնեացին այնչափ և այնպիսի որեար ։ Ուստի և 'ի մեկնել անդ խուրսում 'ի նոցանէ, մնեալ 'ի կանանոցն և բարձեալ զորդեակն իւր մնասաղ՝ որ քան զամենայն հասարակութեամբ իւր գերապանցեալ գեղովն և առողջութեամբն, առեալ զնէր

ընա 'ի ձեռաց Պեղոպոնեսեանցն, որ Թէ երկրագ-ործ երբեմն լինէին նոքա վասն իւր խոտորա-նաց ինչ կամ մասնաւորուԹեան, երբեմն զԹրը-նամբ այնուհետև ստեղծեն նոքա զնմանութիւն և մի խառնեսցեն : Անդստին բաղդատեալք 'ի նա-ցանկէն՝ առ մերձան Քաղաքին և առ սաղմա-նաձևեալ խաղհատաբրդա քաջին յաղթանակաւ հասանեն. և ցանէր առ հասարակ նոցա՝ որ կարծէր եթէ ոք 'ի նոսա վասնառեալ և ծանր ծառայութիւն յառաջանկալեան՝ կարևարեցի ինչ վասն նորա, կամ Թէ ընտրել ևս մեզ զինչ նոսա. և առաջ չէին մի Թողուլ զնմանութիւն խառն ընդ նոսա, այլ 'ի բաց առնել 'ի մնալուլ վասնորդէն, որ անձնաւորեալ և յանդգնութեամբ 'ի բռնաւորաց անձեացէ մանուկն, մեծ եր-բեմն խնդրել զքաղաքին և զբարեկամացն :

Այլ Քսենոփոն յանդգնութ չհամեմատել զնմա-նուԹիւն, « Եւ զինչ այլ կերպիւ՝ ասէ, կամ որ այն փորձուԹիւն զերծեցին կամ կարգէ զմա, քան զմահապեաց ընտրել անպարտութեամբ մա-հու 'ի մրցանին ընդ հօրն և ընդ այնչափ բա-րեկամացն »: Այսպես յաղօԹս առ զինս կա-ցեալ և զինքն ամենեցուն ածեալ և խոսա-խուռնեալ՝ մեկնեցաւ 'ի նոցանէ. մեծապէս զղջուցանեալք այնպէս յարդարեալ զանձն և զկենսն և զհամբերաւ Հայրենին, որ և ընտրել իսկ ատարագացուցանել զինքն 'ի հայԹայԹեալ զաւառնացն : Իբրև եկին եհաս 'ի գուռան առ Ագեսիս, ընդդամաւ եկեալ նմա Ագեսիս և Փիլիպպոս, ասեն. « Ո՞րք սմանք ով Քսե-նոփոն, որպէս լուայ, առա 'ի քաղաքէ մե-ռեալ եկին և 'ի Թագաւորան կալցեն. և 'ի

[illegible]

ուանակից էր և հիւր և բարեկամ. մա-տուցանէր նմա նամակ՝ յորում ոչ վայրապար և վեր 'ի վերայ ազդումն, այլ ճըշդրիւ և յայտնի զամենայն 'ի վեր բերէր նմա զդաւն, ըստ որում և առաջ գիտացին. և գրաբերին մերձ եղեալ առ Արքիաս յար-բեցութեան նորա և մատուցեալ զնամակն, ասէր. «Որ զթուղթդ առաքէ առ քեզ այրն, ազդ առնէ փութանակի ընթեռնուլ. զի գրեալ կայ 'ի դմա յաղագս յոյժ կարևորաց»։ Ժպտեցաւ Արքիաս և ասէ. Առ վաղիւն ուրեմն՝ յոյժ կարևորքդ։ Եւ առեալ զթուղթն դնէր 'ի ներքոյ բարձին, և դարձեալ առ Փիւղիդաս՝ խօսէր ընդ նմա։ Այլ զպատմութիւնն զայս Արքիասայ յառակս առաջ ընկալեալ, և մինչև ցայսօր ժամանակի վարեն Հելլենացիք։

Բայց այնուհետև երբև դէպ ժամանակ՝ համարեցան ձեռնարկութեան գործոյն, յարուցեալ ելանէին արտաքս զաշնաւորքն. և յերկուս բաժանեալք՝ Պեղոպիդէս և Դամոկղիդաս յուղան առ Լէոնտիդէս և առ Իւպատէս՝ ընդակականիցք միմեանց։ Իսկ Քարոնն և Մեղոն գնացին առ Արքիաս և առ Փիւղիպպոս արկեալ 'ի վերայ զգահիցն հանդերձս կանանցի, և 'ի քօղ երեսացն չարջանակի բոլորս պսակաց բոլորեալք թաւալ յեղևնին ծառոց և 'ի սարոյ։ Որովք և հասեալ երևեալ նոցա առ դուրս կոչնոցն, ծափահար կոչնականքն բարձրացուցին ըղձայնս, կարծեալք՝ 'ի վերջէ ուրեմն հասեալ առ նոսա կանանցն, որոց ակնկա-

լեալ մնայցեն ։ Այլ կերպարանաւոր կանայքն իբրև շուրջանակի առ հասարակ յածեալք զաշխ՝ մանր և քաջ զննեցին զայր այր 'ի բազմականսն, ձգեալ ասպս և մերկեալ զտուաւորս և 'ի մէջ կոչնոցն 'ի վերայ խոյացեալք Արքեխաայ և Փիլիպպոսի, որ ինչ եւենն՝ յայտնեցան յայնժամ ։ Անդ Փիզիգաս զասկաւս հաւանեցուցեալ 'ի կոչնականացն կալ մնալ համդարտակ, որք միանգամ 'ի վերայ առեալ 'ի նոցանէ և ընդդէմ զաւռնայքն 'ի միասին ընդ զօրավարացն, հեշտեաւ առ հասարակ կոտորեցան, քանզի զի և արբեալք իսկ էին ։

Այլ որք ընդ Գեղոսկեդեայ, մարտ գործունդին հասանէր նոցա կուռեալ ընդ Լեոնէ ափղեայ ։ քանզի այր լուրջ հաւկող էր նա և առհաւըկու ։ Նա քանզի յանկողին մնեալ էր, զատանեէն նորա փափկեալ առնուր ըղձատենն ։ և 'ի բազդեկելոյ զոլացն՝ հարուստ մի ժամանակ խնամոյր և ոչ որք ։ հուսկ առաջ մի ոմն 'ի ծառայիցն լուեալ, եկեալ 'ի նեղքուստ՝ այն ինչ զնկրս զոլացն բառնայր, նորա խուժեալ առասպելեալ՝ փեռեւկեցին զզուրան ։ 'ի նորա վազեալ և զծառայն առասպասս արկեալ, զիմեցին յառագաստ անդր Լեոնտեայ ։ իսկ նա 'ի շառաչմանէն և 'ի արտափականն Թերդմանէ ատեցն Ճշգրիտ խրատուած բանին եղեալ, 'ի վեր վազեալ 'ի մահճէն՝ ձգեալ առ զաւակրն ։ այլ զմասու շածեալ զճրագուանն անցուցանել և 'ի խաւարի առ խաւարեալ զնոսա այր ընդ ընկերի ձգել, այնպէս բա-

զուամ լռւտով նա եկն եւ արձանացաւ առ գուրս առաջապատին. և հարեալ զԿեփիսադոմերոս՝ որ առաջին 'ի գլխի հարաւ՝ զնա անդէն տապալեալ արկանէր. իբրև նա անկաւ՝ սակս երկրորդ 'ի մէջ եկեալ կռուէր ընդ Գեղոսկոդեայ։ Անդանօր բուռն և գըժուարին մարտի եղեալ յանձկուէ զզօացն, և զի և Կեփիստադորեայ զխանն անդ անկեալ քաղրնդոան լինէր, հասակ սակս յաղթանկան եղանէր Գեղոսկոդեա. և զխոսապաստ զՂէոնտեոդէս արկեալ, անդէն զիմեալ զնայր առ Իւլպատէս համդերձ ընկերօքն։ Մտեալ 'ի տուն նորա օրինակ ըղնոյն, իրագէկ նորա եղեալ խուճապեցաւ 'ի փախուստ և ղնացեալ տապաւինէր առ դրացին. սոքա զհետ մտեալ նորա և ձերբակալ առարեալ՝ անդէն սպանանէին։

Իբրև այս եղև, եկին 'ի մի խմբեցան ընդ Մեղոնեանսն. և առաջեալ ապր առնէին այլոց փառաւորագրացն՝ որ յԱրտաքլէ զանազդ կալեալ էին. և հրաւէր ազատութեան կարդացեալ Թեբայեցւոցն, զորս միանգամ ընդ առաջ եկին նոցա՝ 'ի զէն 'ի զարդ վառէին առ հասարակ. առեալ 'ի գաւթաց զձօնան՝ զկապուտս կողոպուտս պատերազմացն, և խորտակեալ բացեալ՝ որ անդ զտանէին՝ զկրպակս ստեղծագործ և զաւսերադործ գործիացն։ Այլս զայլին հասանէին առ նոսա նիզակակիցք 'ի զէն վառեալք՝ Եպամինոնդաս և Գորգիդաս, խմբեալք ոչ սակաւս յերիտասարդաց և 'ի ծերոց կարողեաց։ Իսկ 'ի քաղաքին ողջոյն

որհասակիցք մեծամեծք և հծծիւն և շշնջիւն առ հասարակ. լուցեալ կայծին ծրագրունք 'ի տունս, կէսք աստ և կէսք անդ խուճապեալք ընթանային։ Չև էր ժողովուրդն 'ի մի վայր խմբեալ, այլ մեծապէս արտաքսկութեամբ վասն եղելոց պատահարացն՝ համօրէն ոչ կացեալք 'ի միաբան բանին՝ առաւելին այդուն լինելոյ։ Ուստի և Թուի թէ վտանգեան յայնժամ 'ի խորհրդոց իշխանք Լակեդեմոնացւոց, զի ոչ անդէն 'ի միաբան յարձակեալ կռուեցան. քանզի և էր իսկ ընդ նոսա գունդ մի հազար և հինգ հարիւր զօրականին, և շատք ևս 'ի քաղաքէն առ նոսա խուռն ընթացեալ էին։ Այլ 'ի ձայնէ աղաղակին և 'ի խարուկաց անտի և յամբոխից խուժանին՝ որ այսր անդր վարատէր, ահաբեկ եղեալք՝ այնպէս անշարժք փակեալ մնացին անդ 'ի Կադմիա։

Ապա յառաւօտուն պահու զայլն հասանէին յԱթենիկոյ այլք 'ի վտարանդեալցն զինու վառեալ, և խմբեցան ժողովուրդն յատեան։ Անդ Եպամինոնդաս և Գորգիդաս ածեալ մուծանէին 'ի ներքս զՊեղոպիդէս համադերձ ընկերօքն՝ պատուեալք 'ի քահանայից, որք պսակս նուիրականս տարածեալք 'ի ձեռս, այնպէս խրախոյս քաջալեր կարդային քաղաքին ձեռն տալ հայրենեացն և աստուածոցն։ Յայն ատեանն առհասարակ ատեանն յարուցեալ ծափահարք լինէին, և ձայն ցնծութեան աղաղակին բարձրանայր. և առեալ ժողովէին զորեարն զայն՝ իբրև բարերարս և փրկիչս։

Ցայնժամ Պեղոպիդէս ընդ Մեղոնիդի և ընդ Քարոնիդի կարգեալ Բէոտարքոս՝ Իշխան Բէոտիոյ, անդէն խաղայր զիմեր պաշարուածս ածել զգեկերն. և 'ի կողմանց կողմանց բուսան և տատասկ հրուակ 'ի վերայ հասուցեալ, որ այնպէս 'ի բաց զԼակեդեմոնացիսն հանեալ՝ փրկեցէ զԿադմեա մինչչև զոր 'ի Թիկուռնս հասեալ անդր 'ի Սպարտոյ: Նա արդեօք կանխեաց ածապարեաց Պեղոպիդէս. քանզի յայնժամ 'ի զաշն պարսմանի աղաստացեալ արանցն՝ այն ինչ նոքա շուեալք հասին 'ի Մեգարա, անդուստ ընդառաջ գայր նոցա Կղէոմբրոտոս՝ զունդ ասաւար ածեալ ընդ իւր 'ի Թեբաս: Իսկ Սպարտացիք ատեանն դատաստանի եդեալ 'ի վերայ երից տարիկանացն իւրեանց՝ որք 'ի Թեբաս, մահու դատէին զՆերմիպպիդաս և զԱրկիսոս. իսկ զերրորդն Լիւսանորիդաս՝ տատուկ արծաթոյ տուգանեալ, այնպէս անձամբ անձին տարապէս տարաշխարհիկ եղանէր յայնժամ այլն 'ի Պեղոպոննիսոյ:

Այդ զնահատակութիւն զայս զՊեղոպիդեայ՝ համեմատութիւն Թրասիբուղեայն ըստ քաջաց արանցն և ըստ մեծաց արկածիցն և ըստ մրցանաց մաքառիցն և ըստ նմանե օգնական գեղեցիկ բախտին, քոյր և եղբայր նոքա անուանեալ կարգացին Հելլենացիք: Քանզի և ոչ հեշտին ինչ գտցէ ոք արդեօք որևէ այնպէս տակաւաճեալ՝ ընդդէմ այնչափ բազմութեանն, և այնպէս անբաւականս՝ ընդդէմ հզօր ձեռանն, և արութե

քաղաքաւորութեանց յաղթականս , և պատճառք մեծամեծ բարեաց խրախուսանաց հայրենեացն : Այլ փոփոխութիւն հասարակացն կարգաց 'ի նախահաստատութենէ առաջին՝ մեծ եւ 'ի ներքս եբեր նմա վնաս : Քանզի ասպամարտ պատերազմին՝ որ եղծեալ վատթարեաց զօրութիւնն Սպարտացւոյ, և 'ի ծաղումն ատելութենէ և 'ի ցանկալեացն միաբանելանացն վերջոյ կացոյց զնա , անդադարն 'ի զինէրէ առաւել ունելի զծաղաւոնն . յորում Պեղոպոնեսեան ոչ պարհանէին 'ի ձեռն առնելոյ , ոչ պատուոյստասութ , ոչ գանձել , մինչև երկրատասաներորդ հատեալ 'ի տան , խառնեալ եհասն՝ և թէ փոխառել զծաղկապան ապաժամն եղէ՝ զկարապետս և զզեթոյս զՍպարտացւոց ատէրութեանն , որք անդրուծանելիք ունէին կարծեալս և անխաղելիք :

Հորդամն ապա Լակեդեմոնացւոցն առաեալ 'ի Բիւզանդիա զօրու ծանու , զանձն մեծի հարկեալ Աթենացւոց՝ ոչ կարացին մնացին 'ի միաբանութեանն ընդ Թեբայեցւոց . յառնեան քաղչեալ առ հասարակ զինուորկեցեան Բիւզանդացւոց , էր զօր մարտ զասուցին , և էր զօր վասարանքի առանէին , և ըղկէա զարձեալ առապանք առապանեցին : Ուստի և Թեբայեցւոցն եղք յայնժամ թուէր մեծապէս 'ի տարաւորի , զի և օգնականն ոք չէր ասատէք նոցա : Բայց էր 'ի ժամանակին յայնմիկ Բիւզանդացւոց Պեղոպոնեսս 'ի միասին ընդ Գորդալքեալ 'ի խորհուրդ մտին երկրորդին նորա հնարիւք անդրէն 'ի թշնամութիւն զԱթենացւոց զօր-

դաւել ընդ Լակեդեմոնացիս, և մեքենայե-
ցին նոքա օրինակ զայս : Սփոդրիաս անուն
ոմն Սպարտացի այր 'ի Թեսպեանս մնացեալ նշա-
նաւոր և պայծառ , այլ ծանծաղամիտ և
եռանդայոյս և փառասիրութեամբ անհանճար , էր
կացեալ 'ի Թեսպիա հանդերձ զնդաւ ,
առնուլ ժողովել զփախստեայսն Թեբայե-
ցւոց և օգնել նոցա : Առ սա Սփոդրիաս
արձակէր Պելոպիդէս գաղտնաբար վաճա-
ռական զոմն յիւրոց անտի բարեկամացն՝
տանել նմա արծաթ , և բանս եւ՝ որ առաւ-
ելու քան զարծաթն կաշառեցին զայրն :
Քանզի եկեալ ասէր նմա . քաջ իսկ մե-
ծամեծս նախատակեսցի նա՝ եթէ հա-
մեալ կալցէ զՊիրէան՝ յեղակարծումն ժա-
մու անկեալ 'ի վերայ Աթենացւոցն՝ որ
յանհոգս կան . քանզի և Լակեդեմոնա-
ցւոց ոչինչ այնպէս հաճոյ իցէ՝ իբրու առ-
նուլ Աթենայ . այն զի՝ և Թեբայեցիք
քինելին խռովեալք ընդ Աթենացիսն իբ-
րև ընդ մատնողս , ձեռն օգնականու-
թեան ոչ տայցեն նոցա : Այսպէս Սփոդրիաս
'ի հաւանութիւն բերեալ բանիւն , առեալ
ընդ իւր զհեծեալ զզօրականսն , եկն եմուտ
յԱտտիկէ , և խաղաց եհաս մինչև յԵղեւ-
սինէ . այլ անդանօր պատառեկեալ զօրա-
կանացն՝ զի առաւելեալ նշաւակեցան իրք , և
մասն ոչ դուզնաքեայ ինչ և փոքրոգի յու-
զեալ անդանօր 'ի վերայ Սպարտացւոց ,
անդի առեալ անդրէն միւսանգամ զայր
մատանէր նա 'ի Թեսպիա :

Եւ յայնժամ Աթենացիք մատաղիւրա-

գոյնս զաշնաւորեցան միաբանութեամբ ընդ Թե-
բայեցիս. և յարձակեցան 'ի ծով, և շուրջ
յածեալք՝ յանդուգանեցին առ հասարակ
զհելլենացիսն՝ որ միաբանութեամբ խլրտէին խըն-
դրէին։ Անդուստ և Թեբայեցիք՝ առան-
ձինն զօր ամենայն հրոսակ հանէին 'ի վե-
րայ Լակեդեմոնացւոց 'ի Բէովտիա. Թէ-
պէտ և մարտս դուզնաքեայս կռուէին նո-
քա, սակայն և մեծամեծս մարզէին սովո-
րեալք 'ի կռիւս, վարժեալք և խրախու-
սեալք 'ի յաղթս 'ի մրցանաց անտի, և կորո-
վի կրթեալք 'ի մարտիս։ Ուստի և պատ-
մեն՝ Անտալկիդեայ Սպարտացւոյ առեալ եր-
բեմն առ Ագեսիղայոս՝ որ վիրաւոր դար-
ձաւ 'ի Բէովտիոյ. «Քաջ իսկ արժանաւոր
գեղեցիկ առեր դու զվարժեցդ 'ի Թեբայե-
ցւոց. զի որք կռուել և մարտնչել չկա-
մէին, ուսուցեր»։ Այլ ճշմարտութեամբ
առել՝ ոչ Ագեսիղայոս ինչ եղև Թեբայե-
ցւոցն վարժապետ 'ի բանին յայնմիկ, այլ
արքդ այդպիսիք առաջինիք. որք 'ի դէպ ժա-
մու և խոհականութեամբ՝ առեալ զԹեբայե-
ցիսն իբրև բարակս որսականս՝ հանապազ
արձակէին 'ի վերայ Թշնամեացն. և ապա
զյաղթութեանն առեալ նոցա ճաշակել
ճաշակ և խրախուսեալ, այնպէս այսպէս
յանդորր առնուին զնոսա. յորս և փառս
մեծամեծս Պելոպիդէս ժառանգեաց ան-
ձին իւրում։ Քանզի անդուստ յառաջին
ընտրութեանն անտի նորա, ապա և ամ ըստ
ամէ 'ի նոյն զօրավարութիւն կարգեցին
զնա. և ցորչափ եկեաց, կամ զօրավար

Նուիրական գնդլին լինէր, կամ Բիւզանդարքոս բազում անգամ:

Առդ յայնժամ Լակեդեմոնացիք հարեալ խորտակեցան 'ի Պղատէա և 'ի Թեսպիա և 'ի փախստեան դարձան. անդ տապալեալ անկանէր և Փիբիդաս՝ այն որ հանեալ կալաւ զԿադմիա: Ապա այս՝ և զօր բազում զինուցն մերձ 'ի Տանագրա վանեաց Պեղոպիդէս, և ինքնին նա դիտապաստ արկանէր յայնժամ զՊանթիդէս ոստիկանն: Այլ 'ի մարտից առաջի Թեգէական յոյժ քաջալերեցան յաղթականք, ոչինչ պատուաբեր լինէին յաղթեալքն. զի ոչ ճակատամարտք էին և ոչ մարտ յայտնի և կարգաւոր և ըստ պատերազմական օրինին, այլ ասպատակք՝ զոր ըստ ժամուն սփռէին. է զի անդի առեալք, է զի զհետ մտեալք և յարձակեալք և ընդ թշնամեացն խառնեալք, այնպէս զյաղթութիւնն տանէին:

Բայց մարտ պատերազմին որ 'ի Տեգիւրա, այն՝ որ նախամարտութիւն եկաց Լեւկտրայինոյն, յոյժ 'ի վեր առեալ փառաւորեաց զՊեղոպիդէս. որպէս զի և 'ի գեղեցիկ եղեն ոչ ևս ունէր զտուաւ այլոցն զօրավարաց նիզակակցացն մրցել ընդ փառս նորա, և ոչ թշնամեացն դարձեալ՝ բարուր կարկառել հարուածոյն այնմիկ: Քանզի Պեղոպիդէս ցանգ դարանամուտ եղեալ ապասէր դէպ ժամանակին հասանել ունել զքաղաքն Որքոմենացւոց՝ որ կուսակիցն էր Սպարտացւոց, և գունդս ևս երկու 'ի Թիկունս առեալ էր 'ի նոցանէն:

Այդ լաւր առաւեալ Գեղարդիդէս, զի այն գումնդք չու արարին 'ի Լոկրիդէ, ուր ունէր ամայի զԱրքոմէնոն գաւառնել. առաջա խաղաց զփմեաց անդր ածեալ ընդ իւր զնուրբականն գումնդն, ածեր 'ի նոյն և ոչ շատ ինչ յերկմարաց:

Բայց մերձ 'ի քաղաքն եղեալ և տեսեալ՝ զի այլ գումնդ 'ի Սպարտայ փոխանակեալ էր զպահն, յետս առնեալ տանէր զզօրն ընդ Տեգիւրայ՝ ընդ որ միայն անցանել հնար էր, պատեալ զլեռնոտանսն. քանզի և զետն Մելաս այն ինչ հոսեալ յազգերացն իւրոց՝ 'ի ճահիճս նաւարկելիս և 'ի լիճս ճապաղեալ՝ անանց գործէ զուղին: Անդանօր մերձ 'ի ճահիճան գոյ մեհեան Տեգիւրեանն Ապողոնի, և պատգամախօսութիւն լեալ՝ ոչ 'ի բազում ինչ ժամանակաց. ասկայն էր նա ծաղկեալ մինչև 'ի մարտսն Մարաց՝ յորում ժամանակի գուշակն էր Եքեկրատէս: Եւ անդանօր առասպելաբանեն ծնեալ աստուածըն. և լեառն մերձաւոր վայրացն անուանեալ կոչի Դելոս, և առ նովաւ լճանան ճապաղեքն Մելեայ: Իսկ յետոյ մեհեանին կործին բղխեն աղբերք, և մօտակք սքանչելի են քաղցրութեամբ և առատութեամբ և ցրտութեամբն. յորոց զմին Արմաւենի, և զմիւսն Ձիթենի անուանեալ կարդան մինչև ցայսօր ժամանակի. որպէս զի՝ ոչ 'ի մէջ կործին ծառոցս, այլ 'ի մէջ աղբերացս յղանալ դիցուհւոյն: Եւ մերձ է անդանօր լեառն Պտոոն, ուստի յորդեալ անդրուստ

յանկարծակի վարագոյն՝ ահաբեկեալ ա-նեն զդիցուհին: Իսկ որ ինչ վէպք յաղագս Պիւթոնին և Տիտուեայ, զայնոսիկ դար-ձեալ այսոքիկ վայրք 'ի ճահ յարմարեն ծննդեան աստուծոյն: Բայց եւ աստանօր շատ ինչ 'ի հաւաստեացն 'ի բաց թողում ասել. քանզի և ոչ հայրենատուր աւանդն զաստուածդ զայդ դասէ 'ի կարգս Քաղդէացն՝ որք կանխանցածինք 'ի փոփոխութենէ ան-մահացան, ըստ որում Հերակլէս և Դիո-նիսոս, որք առաքինութեամբն փոփո-խեալք 'ի բաց եդին զմահկանացու և զախ-տակիր բնութիւնն. այլ 'ի յաւերժից ան-տի մի է սա և յանծնից, որչափ ինչ մեզ առդեօք արժան իցէ յիմաստնոցն և 'ի ծե-րունեացն բանից իմաստասիրել քաջիկ վասն այսպիսեաց ամանց:

Արդ մեկնեալ Թեբայեցւոց ընդ Տե-գիւրաս յերկրէն Որքոմենացւոց, 'ի նմին ժամանակի յետս դարձեալ և Լակեդեմո-նացւոցն 'ի Լոկրիդեայ, պատահեցան նո-քա միմեանց: Այն ինչ Թեբայեցիքն տե-սեալ զնոսա անցանել ընդ անձուկն, մի ոմն դիմեալ առ Պեղոպիդէս՝ ասէր. "Ան-կաք մեք 'ի ձեռս թշնամեացն". եւ պա-տասխանի Պեղոպիդէս. "Եւ ընդէր ոչ՝ մանաւանդ նոքա 'ի մեր ձեռս": Զայս ա-սաց և անդէն հրամայեաց ամայր այրուձիոյն փութապէս 'ի թիկանց անցեալ յառաջ 'ի ճակատ անդր՝ անկանել 'ի վերայ թշնա-մեացն. և ինքն առեալ փակեաց յանձուկ վայրի զհետևակազօրն երից հարիւրոց, ակն

ունէր 'ի յարձակելն՝ վանել խորտակել
զբազմութիւն Թշնամեացն. քանզի էին նա-
քա Մասսոյ երկու Լակեդեմոնացւոց. և
զՄասսայն Եփորոս ասէ՝ դումբ արանց
հինգ հարիւրոց. իսկ Կալլիսթենէս՝ եօթն
հարիւրոց. և այլք ոմանք՝ որպէս և Պողիւ-
բիոս՝ ասեն ինն հարիւրոց: Անդ Գորգո-
լէոն և Թէոպոմպոս զօրավարք Սպարտա-
ցւոց մեծապէս արութեամբ յարձակեցան
'ի Թեբայեցիս. և զի էր իսկ յարձակումն
'ի կայից զօրավարացն երկոցունց կողմանց
և բուռն և սաստիկ էր խառնին, յառաջ նա-
հատակեալ զօրավարք Սպարտացւոցն և 'ի
վերայ դիմեալք Գեղարդիկեայ՝ անդէն սա-
պառ անկանէին. ապա հարեալք և որք
շուրջ զնովքօք, զահի հարեալ առ հասարակ
զօրականին և յերկուս հատուածեալ՝ այն-
պէս ապա 'ի միջոցին տայլին ուղի Թեբա-
յեցւոցն խաղալ յառաջ:

Այլ Գեղարդիկես ընդ նոյն ուղի խա-
ղաց դիմեաց 'ի վերայ խմբին նոցա. հա-
րուածս մեծամեծս 'ի վերայ հասուցանէր,
և ապա ուրեմն առհասարակ 'ի փախուստ
խուճապէր զնոսա. այլ ոչ շատ ինչ դհետ
մնալ հալածեաց, քանզի և խիթային իսկ
Թեբայեցիքն յՈրքոմենացւոց անտի մերձա-
ւորաց, և 'ի նորեկ գնդէ Լակեդեմոնա-
ցւոցն: Այնչափ ինչ յայնժամ նահատա-
կեալ բուռն յաղթութեամբն, և անցա-
նէին այնուհետև ընդ մէջ խորտակեալ բա-
նակին նոցա: Ապա նշան յաղթութեան
կանգնեալ, և դիակապուտ արարեալ ան-

կերլոցն, դարձան 'ի տուն խրախուսեալք և քաջալերեալք: Քանզի և 'ի մնացեալ մարտս ընդ Հելլենս և ընդ խուժադուժս, երբէք յառաջ ժամանակաւ ոչ պարտեցան Սպարտացիք այնչափ բազմութեամբ յայնչափ սակաւուց ոմանց. Նա և ոչ 'ի ճակատամարտի հաւասարք ընդ հաւասարս. ուստի և յոյժ 'ի վեր վարկեալ էին զօրութեամբ, և 'ի կառուցին հոյն նոցա և եթ ահաբեկ ըղզթշնամիսն առնէր, որք և ոչ հաւասար զօրու երբէք ժողէին 'ի վէճ ընդ Սպարտացւոցն գալ: Ուստի և այս մնացեալ պատերազմի առաջինն զՀելլենացիսն խելամուտ արար, զի ոչ Եւրոտաս միայն և ոչ որ ընդ Բաբիկեաւ և ընդ Կնակիոնիւ միջնադաշտան միայն՝ այս բուռնցանէ մարտիկս և զօրս, այլ և ամենայն վայր՝ ուր միանգամ պատանիք ծնանիցին ակնածուք 'ի վատութենէ և քաջարիք 'ի նահատակութիւնս. և որքան 'ի վտանգաց՝ առաւել են յանարգութենէ Թիկնապարծոյցք, ուստի և առ 'ի թշնամիսն ահարկուք:

Արդ՝ առաջինն որ կարգեցաւ եգ զՆուէրականն զայն գունդ՝ որպէս ասեն՝ եկաց Գորգիդաս, յերից հարիւրոց ընտիր ընտիր նահատակաց խմբեալ զնոսա. և պէտք կրթանաց և կենաց նոցա լինոյր 'ի քաղաքէն. և էին վանք նոցա 'ի Կադմիա, ուստի և անուանեալ կարգայոյին զնոսա Գունդ քաղաքին. քանզի և զամրոցս կոչէին յայնժամ Քաղաքս: Կէսք ասեն՝ եթէ 'ի սիրողաց և 'ի սիրելեաց խմբեալ կայր գունդն

նուիրական. և առ այս յաւել ածեն՝ զոր առաց Պամմենէս 'ի խաղս. քանզի ասէր՝ եթէ ոչ ճարտարապետս ուրեմն էր մարտի Նեստորն Հոմերոսին, որ հրամայեաց զի ըստ ցեղս և ըստ ժողովուրդս համախմբութք դասաւորեսցին հեծելենայք. "Զի ժողովուրդ ժողովրդեան 'ի թիկունս կայցեն, և ցեղքն՝ ցեղից". քանզի մանաւանդ զսիրողն մերձ դասաւորել արժան էր առ սիրեցեալն: Քանզի ցեղակիցք ժողովրդակիցք ոչինչ կարի փոյթ 'ի դժնդական կացեն արդեօք վասն միմեանց. իսկ դուճոք՝ որ կապանօք մտերմութեան սիրոյն զօդեալ իցէ, անլուծանելի է և անխզելի. քանզի կէսք սիրելով զսիրելիսն, և կէսք ամչացեալք 'ի սիրողացն, վասնորո մեծամեծս յանձն առցեն 'ի վերայ միմեանց: Եւ չէ ինչ զարմանալ ընդ բանս. քանզի նոքա և բացականք գոլով ակնածութք են առ միմեանս առաւել քան զմերձաւոր մարտիկս. զոր և յայտնի 'ի դէմս եթերէր այն այր՝ յորոյ վերայ թշնամին կացեալ 'ի սպանանել՝ մինչդեռ յորսայս անկեալ կայր, աղաչէր 'ի լանջս անդ մխել զսուրն. "Զի մի թերևս՝ ասէ՝ սիրելին իմ զամօթ կրեսցէ վասն իմ, տեսեալ զիս խոցեալ 'ի թիկանց":

Այլ և պատմեն՝ Ցոլէոսի սիրելւոյն Հերակլեայ ցանոց նիզակակից և լանջակից 'ի մրցանսն նորա լինել: Իսկ և Արիստոտէլ պատմէ՝ եթէ և առ իւրովքն ժամանակօք սիրողքն և սիրեցեալքն հաւատս կուէին 'ի վերայ շիրմին Ցոլէոսին: Այսո-

բեկ առաջադաս ապա որպէս հաստատեալ էր՝ Նաւէբրոնեան անուամբ կարգադրին գնդին այն- միկ. ըստ որում և Գրգառան ինքնին՝ Բուրէ- կամ ապաստամբագնդեաց կոչեցեալ զանգուածն: Եւ- սանեն՝ եթէ այս գունդ միշտ անպարտելի եկաց մնաց մինչև 'ի պատերազմն Քերո- նեայ. խոկ յետ մահուանն եղեալ Փիլիպպոս յայլս ապանելոցն՝ զանգին առաջոյ 'ի վայրն ուր դիտապապապատ կային երկքհարիւր մար- տիկքն. որք զինազարդ 'ի գլուխ հարեալք Մակեդոնացւոցն աշտեխցն, այնպէս առ հա- սարակ յանձնուկ վայրս խանեալ անկեալ կային. զարմացաւ Փիլիպպոս, և լուեալ եթէ գունդ այն էր սիրողացն և սիրելեացն՝ յարտասուս հարեալ ասէր. « Չարեաւ կորիցեն, որք կասկածեսցեն՝ եթէ այդ ոսեար արարցեն կամ կրեցեն ինչ մի 'ի յոռեաց »:

Արդ՝ սովորութիւնք այդ սիրողաց և սիրելեաց սկիզբն կալաւ առ Թեբայեցիս՝ ոչ որպէս քերթողքդ ասեն՝ 'ի կրից ան- ուն Լայիոսի. այլ օրինադիրքն ինքնին կա- մեցեալ ամոքել և անուշել զբնակակից վայ- րագութիւն և զխստութիւն նոցա անդս- տին յառաջին տիոցն, միանգամայն յամե- նայն պարապմունս նոցա և 'ի զբօսանսն ա- ռեալ մուծին զաստաւիղն. և շուք և նախա- թոռութիւն ընծայեցին նմա. և յասպա- րէզս ըմբշաց առթեցին գեղեցիկ իմն և ազ- նուական սէր, և նովաւ անուշեցին զբարս պատանեացն. ուստի և քաջիկ խորհրդով նոքա զերեանց քաղաքն պատսպարեցին ընդ հովանեաւ դիցուհւոյն (Ներդաշնա-

կութեան), զոր տեսն ծնեալ յԱրեւէ և յԱստղկանէ. քանզի ուր պատերազմականն և արիասականն աշխոյժք զուգեալ լինին ընդ վայելչութեանն և ընդ շնորհաց, անդանօր պարտ է տեսանել քաղաք գեղայարդար յորմ և բարեկարգ. քանզի և ամենայնն յայնժամ գեղեցիկ ներդաշնակութեամբ կարգեալ և ուղղեալ է։

Արդ Գորգիդաս զգունդն զայս Նուիրական բաշխեալ ընդ առաջին դասս, և կարգեալ յառաջնոյ ողջոյն փաղանգի զօրականին, ոչինչ յերեւան եբեր զքաջութեան որերոյն այնորիկ 'ի նախահատակութեն երեւելի՝ խառնեալն այնպէս ընդ բազմութեան զօրուն։ Իսկ Պեղոպիդէս տեսեալ զհանդէս առաքինութեան նոցա 'ի Տեգիւրաս և զմիայնակ շահատակել նոցա 'ի կռուին, ոչ ևս բաշխեաց զնոսա. այլ իբրու մարմին բոլոր և ողջանդամ՝ այնպէս գործի 'ի ձեռն առեալ զգունդն զայն, զխմագրաւ խաղայր նոքօք 'ի դժուարինս։ Քանզի զորօրինակ երիվարք ամոլք լծեալք 'ի կառս՝ արագ ևս վազեսցեն քան զմենացեալսն. ոչ եթէ զի այնպէս զոյգ թափ տուեալ ամոլիցն՝ հեշտին ևս ճեղքեսցեն և հերձցեն զօդն, այլ զի մրցել և նախանձել զոյգս ընդ միմեանս՝ առաւել ևս վառեսցէ զաշխոյժ նոցա. սոյնպէս խելամտեալ եղև Պեղոպիդէս եթէ և մարտիկք քաջք, այր յընկեր զարթուցեալ զգեղեցիկ նախանձն՝ միախուռն յօժարամիտք ևս զօրանիցեն 'ի հասարակաց գործն։

Բայց յետ Սպարտացւոց հաշտութեան խօսեցեալ առհասարակ ընդ Հելլենացիս, մինչ պատերազմի շարժեցին միայն ընդդէմ Թեբայեցւոց, և Կղէոմբրոտոս արքային հրաման ետ յարձակել նոցա բիւր մի հետևակօք և հազար այրուձիով, 'ի մեծ ևս վտանգ քան զառաջինն պաշարեցան նոքա սպառասպուռ հարուածոյ. ուստի և յարհաւիրս մեծամեծս տագնապեցաւ յայնժամ Բիովտիա: Հապա Պեղոպիդէս ելեալ 'ի տանէն խաղալ գնալ 'ի մարտ պատերազմի, մինչդեռ կին նորա ուղի առկեալ նմա հեղձոյր զարտասուս 'ի մեկնել նորա, և յուշ ևս առնէր աղերսէր փոյթ տանել փրկութեան անձին, ասէ Պեղոպիդէս. "Զայդ բանդ ով կին դու յուշ առնել արժան է տասակական մարդկանդ. իսկ իշխանացն՝ զփոյթ փրկութեան այլոց": Իբրև եկն եհաս 'ի բանակ անդր, և զԲիովտարքս երկպառակս տեսանէր 'ի միմեանց, նա առաջին համաշունչ գնաց Եպամինոնդեայ՝ որ ասէր դիմագրաւ խաղալ կռուել ընդ Թշնամիսն: Չէր Պեղոպիդէս Բիովտարքոս, սակայն իշխան էր Նուիրական գնդին, և մեծապէս ևս վստահ էին 'ի նա, իբրու որ քաջ իսկ խնամոտ էր յազատութեան հայրենեացն: Իբրև առհասարակ համաշունչ գտան յայնժամ 'ի խորհուրդն, և էին նոքա բանակեալ մօտ 'ի Լևկտրա ճակատ առ ճակատ 'ի հանդիպոյ Լակեդեմոնացւոցն բանակի, տեսիլ երազոյ 'ի քուն գիշերի երևութացեալ

Պելոպիդեայ՝ մեծապէս ամբոխեալ խառ-
նեցոյց զոգի նորա 'ի նմա։

Ե՛ն անդ 'ի Լեւկտրեան դաշտին մար-
մինք դստերացն Սկեդասոսի, որք և 'ի տեղ-
ւոջն կոչեցան նոքա Լէւկտրէանք։ Քանզի
անդանօր թաղեցան նոքա բռնաբարեալք
'ի հիւրից ոմանց Սպարտացւոց։ Իսկ երբե
յետ զժնդակ և անիրաւ գործոյն՝ հայր
նոցա ոչինչ կարաց՝ վրէժխնդիր լինել բո-
ղոք կալեալ 'ի Լակեդեմոն, նզովս կար-
դաց ընդդէմ Սպարտացւոցն. և ապա ինք-
նոյն անդ անձին առնէր 'ի վերայ գերեզ-
մանաց կուսիցն։ Ուստի և գուշակութիւնք
և պատգամք հանապազ նախապատուամ
լինէին Սպարտացւոց անձնապահ և զգոյշ
լինել առ 'ի Լեւկտրեան վրէժխնդրու-
թենէն. այլ զբան զայս խուժանն ոչ ջոկ
չիմանային. քանզի և զանեղւոյն յերկբայս
էին, զի և 'ի Լակոնիա է աւան մերձ 'ի
ծով Լեւկտրոս անուն, և յԱրկադիա
դարձեալ մօտ 'ի մեծ քաղաքն գոյ տեղի
համանուն։ Այլ արկած կուսիցդ այդո-
ցիկ յոյժ վաղնջուց է քան զԼեւկտրեան
մարտ պատերազմին։

Արդ Պելոպիդեայ՝ 'ի ննջել իւրում 'ի
դաշտի անդ՝ թուէր տեսանել զաղջկունսն
զայն յարտասուս հարեալ շուրջ զգերեզ-
մանօքն և անէծս կարդալ Սպարտացւոցն.
տեսանէր և զՍկեդասոս ինքնին՝ զի հրա-
ման տայր նմա կոյս մի խարտեաշ յաղել
իւրոց դստերացն, եթէ կամեսցի յաղթել
թշնամեացն։ Զարթուցեալ 'ի քնոյն Պե-

զոպլոդէս, և խոխոս երկեալ նմա հրամանն և անխոռու, պատմէր առաջի զուշակացն և ըղձից և առաջի իշխանացն. կէսք 'ի նոցա_ նէն խորհուրդ տային՝ մի անփոյթ առնել զտեսիլն և անհաւատանալ. և օրինակս ևս զվաղնջուց 'ի ներքս բերէին զՄենեկեա Կրէոնեան, և զՄակարիա Հերակլեան. և 'ի վերջնոց անտի՝ զՓերեկիդէս զիմաս_ տունն զոր սպանին Լակեդեմոնացիք, և զմորթ նորա 'ի պահ ունէին թագաւորք նոցա 'ի պատգամէ իմեմնէ. դարձեալ և զԼէոնիդեա՝ որ 'ի պատգամէ օրինակ իմն զանձն առեալ նուիրեաց 'ի փրկութիւն Եղլադայ. առ այս՝ և որք 'ի Թեմիստոկ_ լեայ յազեցան հումակերին Դիոնիսեայ յա_ ռաջ քան զՍաղամինեան նաւամարտու_ թիւնն: Եւ գործոցն ապա վկայեցին զե_ ղեցիկ ելք լրացն: Ո՛չ այսպէս և Ագեսի_ ղայոս, այն որ 'ի խաղալ զօրու ընդ նոյն վայրան՝ ընդ որ չու արար Ագամեմնոն՝ ընդդէմ նոցուն թշնամեացն, մինչդեռ 'ի քուն խնդրէր 'ի նմանէ յԱւղիդէ զդուստր նորա 'ի զոհ դիցուհին, նա քանզի 'ի հայ_ րենի գորովոյն ո՛չ շնորհեաց զխնդիրն, վասն այնորիկ այնպէս անփառունակ և անկատար արձակէր զզօրն: Իսկ կէսք ներ_ հակառակ ասէին, եթէ ումեք. ամենեւին 'ի դից վեհագոյնից քան զմեզ և լաւա_ գունին վիճակեալ բնութեան՝ երբէք բերկ_ րական ո՛չ իցէ զոհդ դժպհի և անագորոյն. զի և ոչ իսկ իշխեն մեզ առասպելիկ Տի_ փոնեանքն, և ո՛չ դարձեալ Հսկայքդ խօ_

լոյց. այլ ամենեցուն հայրն աստուածոց և մարդկան. և դժպատեհ է կարծել՝ եթէ ընդ արեան ապաժոյժ մարդկան և ընդ մահ բերկրեսցին Քաղքդ. այլ թէ ոչ՝ լինին ուրեմն զորս արհամարհէք՝ որպէս այպա ձեռնէնք. իբրև 'ի վատութենէ ոգւոյն և 'ի անկարութենէ բնաւորեալք հատանեցան այդ գծագրի և գծնդակ խղձք։

Իբրև այսպէս արք առաջք 'ի պայքար մտեալ էին վասն բանին այնորիկ, և առաւել Պեղոպիդէս վարանեալ էր, անդուստ ձի մատակ մարուկ փախուցեալ 'ի կուռէն, և անցեալ ընդ մէջ զօրուն, ընթացաւ վազեաց և զտեղի կալեալ արձանացաւ 'ի հանդիպոյ։ Անդանօր առհասարակ զէտակն ունէին հիացեալք ընդ գեղեցիկ գոյն բաշիցն և ընդ բոցափայլ, ընդ աչխոյժ կերպարանին, և ընդ փռնչիւն խըխնջիւն նորա մէս և յանձնապատան։ Յայնժամ Թէոկրիտոս գուշակն 'ի վերայ կացեալ՝ մեծապէս ձայնէր առ Պեղոպիդէս. "Հաւանեալ կայ աստուածն քեզ զոհդ մ բարեբաստիկ. մի եւս մեք պղծումն ականկալցուք կուսի. առ ընկա՛լ զդա, և յաղթեա՛ զոր ետ քեզ աստուած"։ Այսպէս առեալ զձիարուկն և 'ի գերեզմանս ածեալ կուսիցն և պատշաճս կարգեալ և պսակօք զձիարուկն բոլորեալ, անդ ցնծութեամբ յաղէին զնա. և ընդ բանակն ողջոյն հաչակ հայրին զանեռիլն Պեղոպիդեայ և զնոհն։

Իբրև խառնեալ հանդերձեալ էր խաղքն, առեալ Եպամինոնդ զփաղանգն ձգէր եր-

կայնէր 'ի ձախակողմն առ 'ի շեղ, զի աջոյ Թեւն Սպարտացւոց կարի իմն 'ի բացեայ եղեալ յայլոցն Հելլենացւոց, հեշտեաւ լինէր յայն Թեւ վանեալ հարցէ զԿղէոմբրոտոս թուռն և սաստիկ: Իրազգած խորհրդոյն Թշնամեացն եղեալ, փոփոխեալ և նոքա 'ի կարգսն խուրեանց՝ ձգեալ երկայնէին զաջոյ Թեւն և ածէին պատէին 'ի մէջ առնուլ փակել զԵպամինոնդաս: Հապա զէտաւակն 'ի վեր ամբառնայր Պեղոպիդէս, աճապարեալ զխմբեալ անդր հանդերձ երեքհարիւրովքն՝ մինչչև Կղէոմբրոտեայ երկայնեալ զԹեւն կամ անդրէն առեալ զնա և գումարեալ յառաջին կարգն, յարձակեցաւ 'ի վերայ Սպարտացւոցն՝ մինչդեռ խռով սաստիկ հարեալ եւ էր 'ի Լակեդեմոնացիսն: Արդ՝ Թէպէտ և Սպարտացիք առաւել վարժք և հմուտք յարուեստ պատերազմի, և առաւել ես կիրթք՝ անվարատելի կալ մնալ 'ի շփոթել կարգին, և մէն մի 'ի նոցանէն միանգամայն գիտէր զօրավարել և զինուորել, և 'ի խուճապ եւ տագնապին կարգել զզօրականսն և մարտ դնել կռուել, յայսր ամենայնի վերայ՝ այն լինէր 'ի փաղանգէ անտի Եպամինոնդաս զխմբագրաւ 'ի նոսա առանձին խոյացաւ, անդուստ և Պեղոպիդէս անհնարին արագութեամբ և ուժով զխմբեալ խառնեցաւ 'ի նոսա, այնպէս իմն նոցա ազդեալ շփոթեցաւ ամենայն խորհուրդ և արուեստ, զի և 'ի փախուստ խուճապեալ և հարուածս եւ առին մեծամեծս՝ որպիսի ոչ

երբեք ուրեք յառաջագոյն ։ Ուստի և Գեզերիգէս Թէոդէս և փոքու գնդին իշխան և ոչ Վանդալացւոց՝ խոյս զՎանդալականութեան բոլոր զօրուն ապաստանեալ, հաստատոյ Վանդալացւոյ 'ի յաղթութեանն և 'ի նուաճմակութեանն ժառանգելոց փառաց ։

Այսպէս յետ այնորիկ երկրորդին Ղովսէ կացեալք 'ի մնացին Վանդալացւոց, չու արարեալ նոքին մեծին 'ի Գերզապանիտոս. և ժողովուրդ բազում յանդուգնին վարանջեալ 'ի Սպարտացւոց, զԾովն և զԱնդրոս, և բնաւ խոկ զԱփրիկեայ, և զԼատինիս ևնքնին բազմամբոխ մեծամեծք ։ Եւ Թէոդէս և ձմեռային արեւմտարեան էր, և 'ի լքանել էր վերջին անձն առաւելութեանն նորա և անդէն առաւ հասանէր նորա, և այլոց անձինց փախստականել զօրաց ամպէն յառաջնում ամենեանն, և որ անդէն չապայր՝ գլխաւորաց էր. և յայնժամ այլք 'ի Վանդալացւոց առ ահի օրինացն, այլ և 'ի մեծամեծութիւն փախուցեալք ձմեռայնոյն՝ 'ի տուն զօրն խաղաղացուցանելոյն. առնելոյն Գեզերիգէս՝ առաջինն ևնքն համախորհուրդ Եղպանտինոնդայ՝ խորախորհ ածելով քաղաքայնացն առնեալ ածէր զնոսա յառաջագէմ 'ի կողմն Սպառտաքոյ, անցանէր ընդ Եւրոպաս. քաղաքս բազում հասանէր, և աւերէր քանդէր առ հասարակ զգաւառն մինչև 'ի ծովն ։ Եւ զօրավարէր Գեզերիգէս եօթն հազար զօրականին Հերուլեացւոց, յորոց և ոչ երկրաստանեպրողն էր 'ի Թեսաղեացւոց անուն. քանզի և հանգոյն գերեցին քաղաքն

այնոցիկ անսահման էր, և զնխաղականակիցս առ-
հասարակ խնդրէին անշշունջ առաւել բերէր
զհետ նոցա. քանզի և օրէնք խակ առաւելին
և ախորժագոյն կարօտելոյն փրկութեան բնա-
ւորապէս խնդրեան 'ի վերայ կարգեն զկարողն
'ի փրկել. զոր օրինակ նաւավարք՝ թէպէտ
և 'ի պարզել օդոյն կամ թէ 'ի նաւահանգիստ՝
ըստ այդորինս զնաւոցն ընդ դեկավարաւն և
զքիթն 'ի վերայ տանելոյն, անդէն խորս մղելիկ
և վասանդ պաշարէ զնոսա, զատանան նոքա
խոնհարհին և անձնկաստոյք առ դեկավարաւն՝
զամենայն յոյս հաստատեն 'ի նոսա: Քանզի
զի Արգոնայքք և Եղինայքք և Արկադայքք
թէպէտ և 'ի ժողովս վասն նախաթոռ բազու-
ձի կարգեն ընդ Թեբայեցիս, այլ յայն-
ժամ 'ի տագնապին խուժանաց մտադիւրա-
դոյնս հնազանդեալ անսայլին նոքա զզօրա-
վարացն Թեբայ:

Այսպէս 'ի զինուորութեանն յայնմիկ ող-
ջոյն զԱրկադիոս յիշխանութիւն մի ա-
ռեալ զարձուցին. և զՄեգալինս հանեալ 'ի
ձեռաց Սպարտացւոյն, կոչեցին և անցին
անդր զհին Մեգալինացիսն, և բնակեցու-
ցին զԻթոմէ. ապա զարձ 'ի տուն արա-
րեալ ընդ Կենդրոս, վասնէին հարկանէին և
զԱթենացիսն, որ յանձուկոն կռուեալք
արդելլութին զանեցս նոցա: Եւ յաղագս այ-
նոցիկ առ հասարակ մեծապէս սիրեցին ըղ-
ջախջուքթիւն նոցա, և զարմացան ևս ընդ
զերդեցիկ բարս նոցա: Այլ ամպայն և
քաղաքացոցն և ընտանեաց նախանձ վա-
ռէր բորբոքէր ըստ չափու փառաց քա-

ջացն, և տաղնջականութիւն անբարոյ և դժպատեհ պատրաստէր առաջի նոցա. քանզի 'ի դարձին իւրեանց` 'ի դատաստանէ մահու հազիւ ապրեցան նոքա, իբրև ողք ընդդէմ սահմանի օրինացն` որ հրամայէր յառաջնում ամսեանն` զոր Բուկատիոն կոչէին` տեղի տալ յիշխանութէն, նոքա ողջ և զամիսս չորս իշխանեացան, յորս և զնահատակութիւնսն 'ի գլուխ տարան 'ի Մեսսինա և յԱրկադիա և 'ի Լակոնիա: Ապա առաջին Պելոպիդէս ածեալ 'ի դատաստան, մեծապէս վտանգեցաւ. այլ ապա երկոքին միանգամայն արձակեցան:

Այդ Եպամինոնդաս հեզաբար տարաւ ամբաստանութեանն և մոլեկին յուզելոյ. քանզի և քաջութիւն ազատանձնեայ դիտէր նա զհամբերատար ժուժկալութիւն և զանյիշաչարութիւն յիշխանութեանն: Այլ Պելոպիդեայ բոյս բարուցն ցասմնոտ, առ այս` և 'ի բարեկամացն գրգռեալ 'ի վրէժ թշնամեացն, պատրաստեցաւ յայսմ պատճառաց: Մենեկղիդաս հռետոր մի էր յարանց անուոր` որ 'ի միասին ընդ Պելոպիդեայ և ընդ Մեղոնիւ ժողովեցան 'ի տուն անդր Քարոնի. և քանզի շուք ոչ զնոյն ունէր 'ի Թեբայեցւոց, զի թէպէտ և այր զօրաւոր յոյժ էր նա 'ի ճարտարաբանութեան, այլ անժուժկալ գոլով և չարաբարոյ, գործի 'ի ձեռն առեալ զանկանկից քաջաբանութիւնն, ամբաստան դատախազ լինէր զմեծագունիցն արանց: Եւ ոչ յետ հարցափորձի քննութեան երկոցուն

տոցս գաղափարեցաւ ինչ նա. զի և զԵպա-
մինոնդաս անգամ ետ նա մերժել յիշխա-
նութեան բարձէն, և հարուստ ևս ժամա-
նակ 'ի բաց կացոյց զնա 'ի վարչութենէ
քաղաքին. այլ երբեք ոչինչ ուժեաց նա
դատափետել զՊելոպիդէս առ ժողո-
վուրդն, զոյն գործեաց կռուել ընդ նմա՝
'ի կչիռ զնա ընդ Քարոնիդի ձգելով: Քան-
զի և նախանձու յաջողակացն սփոփանք
իւրն հասարակ ընտաւորեցան լինել, զոնեա
քան զայլսն խոնարհագոյն ցուցանելով
զնոսա՝ քան զորս չունէին լաւագոյնս ե-
րևել: Այսպէս ջանայր Մենեկղիդէս փութով
անդուլութեամբ մեծացուցանել զՔարոնիդի
մրցանսն առ ժողովուրդն, քան 'ի զովու-
թիւն առնել զգինուորութիւնս նորա և
զյաղթութիւնսն. զնոյն և 'ի մարտ այրու-
ձիոյն 'ի Պղատեա՝ ուր յաղթականն եղեն
Թեբայեցիք առ զօրավարութեամբն Քա-
րոնիդի յառաջ քան զԼևկտրեան պատե-
րազմ, յիշատակ 'ի ձօն Թեսալոնեաց նա
կանգնել նմա օրինակ զայս: Անդրոկլիդէս
Կիւզիկեցի՝ ըստ պայմանին կռուելոյ ընդ-
քաղաքին՝ 'ի նկարել տախտակ մի նկարա-
գիր մարտի պատերազմի, անդանօր 'ի Թե-
բս նստեալ պարապէր 'ի գործն. այլ
ապստամբութիւն յայնժամ 'ի վեր երևեալ
և մարտ գրգռեալ, Թեբայեցիք առ իւ-
րեանս կալան զտախտակն, որում և ոչ
շատ ինչ մնայր 'ի լրումն նկարուն:

Արդ Մենեկղիդէս ածեալ հաւանե-
ցուցանէր զԹեբայեցիսն՝ զայն տախտակ

ատենում կախել 'ի ձօն արձանագրեալ 'ի նմա զանուն Քարոնդի, զի այսպէս ապա ատուերածս ածցէ նա փառաց Պեղոպիդեայ և Եպամինոնդեայ։ Եւ արդեօք ծանծաղամիտ էր պատուասիրութիւնն, նախապատիւ քան զքաղաքադէմ մրցանան անուն դասել զպարզութիւն մի զայն՝ յորում միայն Գերանդաս ոմն անուն այր անուանի 'ի մէջ Սպարտացւոց տապաստ անկաւ հանդերձ քաղաքաւուն արտաքս, և ոչ այլ նախատականութիւն. մեծ պատիւն 'ի նմա։ Այսպէս տուաչարկութեամբն այնմիկ Մենեկղիդեայ հակառակ ամբարձեալ Պեղոպիդէս, իբրու որ արտաքոյ օրինաց եղէ քանն, մինդէր անդրժելի զվաղնջուցն սովորոյթ զԹեբայեցւոցն, մի՛ շուք պատուոյ ումեք երբեք տալ առանձինն, այլ հասարակ հայրենեացն զանուն պահել յաղթութեանն։ Իսկ յաղագս Քարոնդի՝ յատենի անդ համբոյն աննախանձաբար գովէր զայրն, 'ի նոյն և ամբաստանեալ ընդունէր զՄենեկղիդէս իբրև յաչաղկոտ այր և չար. և խնդրէր հարցանէր 'ի Թեբայեցւոց, զինչ 'ի բարեաց մասին նոցա 'ի նեղքս երբէք բերեալ իցէ Մենեկղիդէս։ Ուստի ապա և սաստիկ դրամոց տուգանեալ զՄենեկղիդէս, և անբաւական 'ի հատուցանել, զուն գործէր նա այնուհետև վեր 'ի վայր շրջել զքաղաքականութիւնն։ Արդ այսոքիկ ըստ մասնեայ տան ցոյցս զկենաց առն։

Յետ այսորիկ յորժամ Աղեքսանդրոս բռնաւոր Փերացւոց 'ի վերայն երեսս մարտ

պատերազմի շարժեալ ընդդէմ բազմաց Թեսաղացւոց, այլ 'ի ներքոյ խորամանկէր նա առհասարակ վասն ամենեցուն. ապա հրեշտակութեան առաքեցին քաղաքքն 'ի Թեբէ՝ խնդրելին զօր և զօրավար: Անդ Պեղոպիդէս տեսեալ զԵպամինոնդ պատաղեալ յիրս Պեղոպոննէսեայ, յառաջադէմ զանձն ընծայէր Թեսաղացւոց. ոչ հանդուրժէր անդորր զքաջութիւն իւր կքանել և զհմտութիւնն. և ոչ ևս 'ի դէպ համարէր՝ եթէ առ կենդանութեամբն Եպամինոնդեայ այլում զօրավարի պէտք իցեն: Ապա խաղաց գնաց զօրու Պեղոպիդէս 'ի Թեսաղիա, և անդ արագ արագ հանեալ ունէր զԼարիսա. և զԱղեքսանդրոս խնդրելին՝ որ ողոքանօր ընդառաջ եկն նմա՝ ջանայր հնարէր 'ի բռնաւորութենէն փոխեալ զայրն՝ խելամտ հանդարտ և օրինաւոր յարդարել զնա Թեսաղացւոցն: Այլ քանզի դառնաբարոյ էր այրն և ապաստամբ 'ի հնարից ամբոխել զնա, և զի՝ և շատ ևս բողոք կային վասն անագորոյնութեան առն և զօշաքաղութեան, 'ի սաստկութիւն բարկեցաւ Պեղոպիդէս և ցասնոյր ընդ նմա. և նա յայնժամ ահեկի առեալ փախչէր հանդերձ անձնապահօքն:

Իսկ Պեղոպիդէս համաձայնութեամբ ընդ միմեանս զԹեսաղացիսն միաբանեալ, և յանդորրու 'ի բանաւորին կացուցեալ զնոսա, անց գնաց 'ի Մակեդոնիա, ուրանօր Պտողոմէոս մարտ եղեալ կռուէր ընդ միւսում Աղեքսանդրի արքային Մակեդոնացւոց.

անդամանոր յերկոցունց ևս հրաւէր զայր առ նա՝ լինել խրատախոհ 'ի կազմին նոցա, և նիզակակից և զօրավիգն լինել հարստահարելոյն։ Իբրև եկն եհաս նա առ նոսա, հանդարտեալ ամոքէր զկայն, և անդրէն միաբանեալ եւ կոչէր զվտարանդեալսն. և առեալ 'ի պատանդ զՓիլիպպոս զեղբայր արքային հանդերձ այլ ևս երեսուն մանկամբք 'ի յոյժ ականաւորացն, առեալ ածէր ընդ իւր 'ի Թեբէ. հանդէս առաջի Հելլենացւոցն առնելով զմեծապէս անուան զԹեբայեցւոց քաղաքին 'ի փառս զինուց և 'ի հաւատ արդարութեանն։ Սա այս Փիլիպպոս է, որ ապա մարտ պատերազմի յուզեաց 'ի վերայ Հելլենաց նուաճել զնոսա. և յայնժամ մինչդեռ տղային մանուկ էր՝ մնացեալ աճէր 'ի Թեբէ 'ի տան Պամմենեայ, և Թուէր իմն նա նախանձաւոր եղելոյ ընդ Եպամինոնդ՝ զէտ ակն կալեալ նահատակութեան առն 'ի մրցանսն և 'ի զօրավարութեան բանակին. այլ նահատակութիւն այն՝ մասն գուղնաքեայ էր առաքինութեանն Եպամինոնդեայ. իսկ 'ի ժուժկալութեանն մասին և յարդարութեանն և 'ի մեծանձնութեանն և 'ի հեզութեանն՝ որովք քաջ մեծ էր Եպամինոնդաս, ոչինչ բաժանորդ նմա գտաւ Փիլիպպոս, ո՛չ անդստին 'ի բնութենէն և ո՛չ դարձեալ նմանողութեամբն։

Յետ այսորիկ իբրև միաբանեալ բողոք կալան Թեսաղացիք վասն Փերացւոյ Աղեքսանդրի, եթէ խռովեալ ամբոխէ

զքաղաքս նոցա, արձակեցին անդր հրեշտակ զՊելոպիդէս 'ի միասին ընդ Իսմենեայ. և քանզի զօր 'ի տանէն չէառ նա ընդ իւր, զի մարտի ինչ ակն չունէին, հարկ եղև 'ի պէտս զԹեսսաղացիսն վարել: Զայսու ժամանակաւ միաւանգամ յուզեցան շփոթք 'ի Մակեդոնիա, և Պտղոմէոս 'ի կենաց զրկեալ զարքայն և զտէրութիւն զրաւեալ, բարեկամք մեռելոյն առաքեալ անդրէն կոչէին զՊելոպիդէս: Նա ձեռնամուխ 'ի գործն եղեալ, այլ առ որին չունելով յիւրոց անտի զօրականս, վարձեաց զօր 'ի վայրաց անտի, և նոքօք հանդերձ արագ արագ խաղաց ընդդէմ Պտղոմեայ: Իբրև մերձ եղեն, կաշառաբեկ զվարձկանսն արարեալ Պտղոմէոս՝ յինքն յանգուցանէր. սակայն և 'ի փառաց համբաւոյն Պելոպիդեայ զանգիտեալ, եկն ընդ առաջ նորա իբրև առ աւագամեծար ոմն և կալեալ զաջոյն ողջունէր, և խոստանայր ևս նմա պահել զտէրութիւնն՝ եղբարց արքային վախճանելոյ, և բարեկամ և թշնամի զԹեբայեցւոցն՝ ունել և իւր ինքնին. և վասն այսորիկ առեալ տայր նմա 'ի պատանդ և զորդին իւր զՓիլիպպոսն, և յիսուն ևս այլ 'ի դայեկորդաց նորա. զորս առեալ Պելոպիդէս՝ արձակէր 'ի Թեբէ:

Այլ Պելոպիդէս ոչինչ հանդարտեալ յաղագս մատնութեան վարձկանացն, և լուր առեալ զի անդ 'ի Փարսաղոս 'ի պահ եդեալ է նոցա շատ ինչ 'ի գոյից իւրեանց և զորդիս և զկանայս իւրեանց, եդ 'ի մտի

քա՛ջ վրէժ առնուլ զանիրաւութեանն, ե-թէ հասեալ կայցէ զնոսա. ժողովեալ 'ի Թեսաղացւոց անտի և խաղաց 'ի Փարսա-ղոս ։ Իբրև անց նա անդր, երևեցաւ նորա առաջի Աղեքսանդրոս բռնաւոր համօրէն զօրու. իսկ Պեղոպիդէս և որք ընդ նմա՝ զմտաւ ածեալ եթէ զայս նա 'ի չքմեղս լինել, յարեաւ և գնացին ընդ առաջ նորա. Թէպէտ և գիտէր զնա քանիօն էր այրն ա-պառառուսեալ և մարդասպանող, յանդգնութեան կար-ծեաց զանձն 'ի պատճառս հասարակային Թե-բայ, և փառաց առաջնութեան իւրոյ։ Իբ-րև անզգուշա միայնակ զնա յանկն արկանէր Աղեքսանդրոս և անդէն, եւ վաղվաղակի ձերբակալ առնել, և հասեալ տիրացաւ 'ի վերայ Փարսաղեայ ։ Անդ անհար շշուկ և ար-հաւիրք յուզեցան յամենայն հնազան-դելոյս նորա. Իբրու որ յետ այնչափ ան-իրաւութեանն և յանդգնութեանն ոչ ևս նա երկեւս ումեք արասցէ, և ընդ ամենայն մարդ. և յամենայն 'ի գործս այնուհետև խժդժագոյնս վարեսցի՝ իբրև այր յուսա-հատ 'ի կենաց իւրոց ։

Իսկ Թեբայեցիք լուր առեալ զեղելոցն՝ սաստիկ սրտմտեցան, և առեալ զօր փու-թապէս առաքէին անդր. և քանզի ցա-սուցեալ իմն էին յայնժամ ընդ Եպամի-նոնդ՝ զայլս կարգեցին 'ի զօրավար ։ Բայց բռնաւորն ածեալ զՊեղոպիդէս 'ի Փերաս, զառաջինն թոյլ տայր հասարակ ամենե-ցուն խօսել ընդ նմա. համարէր եթէ յա-ղէտից անտի նկուն լեալ իցէ և խոնարհ ։

Այլ Գեղասպիդէս ցանգ քաջալերէր զվշտ-
ացեալս փերացեալն և զտառապեալսն՝ որ
յայց եկեալ էին առ նա, և ասէր նա՝ եթէ
յայնժամ առաքինի մնացելոց առ դուռս
կայ բանաւորին վերժիննդրութիւն. և ա-
ռաքելոց եւ ասել առ Աղեքսանդրոս ինք-
նին, եթէ դժպատեհ յոյժ է և դժնդակ
չարչարել և 'ի մահ վարել զոր ամենայն
զտառապեալ քաղաքացին և զանմեղն.
խակ խնայէ ինքն 'ի Գեղասպիդէս՝ զխաւերով
քաղ զի 'ի ձեռաց զերծեալ նորա՝ վեհժ
ատտրկ խնդրեացէ 'ի նմանէ : Զարմացաւ
Աղեքսանդրոս ընդ անվեհերութիւնն Գե-
ղասպիդեայ և ընդ աներկիւղութիւնն, և
ասէ. "Եւ զի՞ փութայ Գեղասպիդէս 'ի մե-
ռանել". Լուեալ Գեղասպիդէս, ասէր.
"Զի դու վաղագոյն ես կորիցես, առա-
ւել քան զայժմուդ տառապանաց
եղեալ":

Եւ յայնմանէ արգել Աղեքսանդրոս
մնալ առ նա ամէք յարտաքնոյ: Սա-
կայն Թեբի դուստր Ցաւանի կին Աղեք-
սանդրի լուեալ 'ի պահապանացն Գեղո-
սպիդեայ զանձկանք հաստատութիւն և ըղ-
մեծութիւն ոգւոյ զաւանն, ցանկացաւ տե-
սանել զնա և խօսել ընդ նմա: Իբրև չո-
քաւ առ նա, խորու այն որ կին էր՝ ոչ
ժամանեաց անգէն համարէն 'ի վերայ կալ
մեծութեան ոգւոյ նորա յայնչափ աղէտսն.
սակայն և 'ի հերացն խոռոցելոց և 'ի
տարածէ հանդերձիցն և 'ի դուռնապեայ
պարենէն խելամուտ լինէր մեծի վշտաց-

թերութեանն անձնայել յոյժ փառաւոր առն, և յարատատուս հատուածներ. ոյր աղագաւ և Պեղոպիդէս ոչ գիտելով զառաջինն ո՛ ոք կինն իցէ, զարմանայր. ապա ծա-նուցեալ զնա, ակնաւ 'ի հայրենի ա-նուանէն կոչել զնա, խրատու որ մտերիմ յոյժ էր նա Ցասոնի և բարեկամ: Ապա իբրև տեսեր նմա կինն, եթէ "Ողորմիմ կնոջ քում ո՛վ Պեղոպիդէ". եւս պատաս-խանի. "Եւ ես քեզ ինքնին. զի անկապ և արձակ գոլով քո, համբերես Աղեքսանդ-րի": Այս բանք 'ի խոր խոցեցին զկինն. որում և 'ի վաղնջուց գժոխութեանցն էր անագորոյն կեանք և չարութիւն բռնաւորին. այն՝ որ 'ի վերայ այլոց անառակութեանցն յաւելեալ և ունէր առ իւր 'ի մանկունս տար-փաւոր զկրտսերագոյնն յեղբարց կնոջն: Ուստի և առեալ յայց Պեղոպիդեայ եղեալ Թեբէի, և ազատօրէն ընդ նմա խօսեալ յա-ղագս իւրոց թշնամանացն, առաւել ևս լնոյր ստամբութեամբ և ցասմամբ և ատե-լութեամբ ընդդէմ Աղեքսանդրի:

Այլ իբրև զօրավարք Թեբայեցւոց մե-կնեալք 'ի Թեսաղիա, ոչինչ 'ի գլուխ տա-րեալք յանհմտութենէն և 'ի ձախողակ բախտէն՝ այնպէս անարգաբար անդի ե-տուն, յայնժամ զայլ այր 'ի նոցանէն տուգանէր քաղաքն բիւր մի դրամակշռոյ, և առեալ արձակէր անդր զօրու զԵպա-մինոնդաս: Ցայնժամ մեծապէս գովե-ցան Թեսաղիա, և քաջալերութիւն բա-զում զգեցան Թեսաղացիք 'ի համբաւ մե-

ծի զօրավարին. և վայրկեան մի ևս յայնժամ 'ի բուռն էրք բռնաւորին հիմն 'ի վեր տապալեցին. այնչափ իմն արհաւիրք պատեալ պաշարեաց զզօրագլուխս նորա և զբարեկամսն, և այնչափ Թափով յապստամբութե մտաբերեցին նուաճեալքն՝ յոյժ խրախուսիւ ցնծացեալք ընդ ելս փրկութեանն, իբրու այն եթէ առ օրին առեալ նոցա զբերկրութիւն բռնաւորին:

Այլ յայտ ամենայնի վերայ զիւր փառսն 'ի վերջէ գտեալ Եպամինոնդ-քան զփրկութիւնն Պեղոպոնեսեայ, զանդիտեալ եթէ Աղեքսանդրոս վեր 'ի վայր տեսեալ զիրս իւր, գուցէ յանկարծ յուսահատ իբրև գազան մարդախանձ յարձակեսցի 'ի Պեղոպոնեսս, Թարթափեալ դեգերէր 'ի մարտն. և ժամանակաձառ եղեալ իբրու 'ի պատրաստութիւն հանդերձանացն, զանդաղութեամբն յանդուգանէր զբռնաւորն, զի մի զատամբակ լրբութիւն առն՝ ամբարտաւան Թողցէ, և մի զժանտաժուռ վայրագութիւնն առաւել ևս սրբեցէ. քանզի և գիտէր իսկ քաջ Եպամինոնդէս զանտարբերոյն բարս նորա և զարհամարհել նորա զդերդերցինն և զարդարն. իբրու այն՝ որ կենդանիոյն տայր Թաղել բռնաւորն զմարդիկ. և էր զոր վարատեններ և արջեններ շուրջ պատուրեալ, գրգռեր ընդդէմ նոցա բարուկս որոնկանս՝ նետահար առնելով զնոսա, և տայր կեղեքել զնոսա, և ինքն 'ի դիտին խաղուն զուարճացեալ բերկրէր:

Իսկ 'ի 'ի Մեքսիկա և 'ի Սկովտտաստան քա-ղաքան՝ որք դաշնաւորքն էին նմա և բարե-կամք՝ շուրջ կարգեալ անգաւորս 'ի ժո-ղովրդեան, կոտորած 'ի վերայ գնէր նոցա ոչինչ խնայեալ 'ի սեռ հասակաց. այսպէս և զաշտէն իւր՝ որով հալածեալ սպան նա զԳո-զեփիրոն զիւր քեռն՝ նուաճեալ և պատերազ զարդարեալ՝ զոհ զոհէր այնմ իբրու աս-տուծոյ, և անուան կարգեալ այսմիկ՝ Դիւ-փոնէ այն է՝ Բարերարդ: Իսկ էր երբեմն զի 'ի զինին կացեալ ազգերորդեակն ուրունմն գե-րաստանի 'ի խառն Տրովկայուհեացն Եւրոպ-ացւոց, անդէն յարուցեալ եղանէր ապ-ստամբ 'ի Թագաւորանէն. այլ 'ի նոյն աւա-քէր 'ի ներքս տալ քաղաքներս գերաստա-նին՝ մի ինչ վասն եղանելոյն արտաքս՝ վա-տանեալ նմա 'ի խաղաղն. զի ոչ արհա-մարհութեան են եղքն, այլ զի անմաչէ նա ասաւմի քաղաքացեացն յարատաւու լուծանել ընդ այնչափ մշտին Հեկատեայ և Անգղիացւոյ. նա՝ որ երբեք ոչ գո-րովեցաւ 'ի վերայ միոյ ուրուք 'ի սպա-նելոց իւրոց:

Բայց սա այս Աղեքսանդրոս զանձն հա-րեալ 'ի փառաց հանգստեան և 'ի մեծամե-ծաց առաքինութենէն Եզրաէլնոնդեայ զօ-րավարին, "Նկուն լինէր խորի զաքարդակ պարտեալ՝ և 'ի վայր զԹեան անոնոյ". և փութացէս առաքեալ հրեշտակս՝ խօսէր ընդ նմա 'ի չքմեղս անձին: Այլ Եզրաէլ-նոնդ յանձն չառնեալ կալեալ Թերապեացուց խաղաղութիւն և բարեկամութիւն ընդ

տան ընդ այնմիկ, դուլ և դադար մարտին տանէր առաւել երկուսն, և այնպէս փոր-կեալ ապրեցուցանէր զՊեղոպիդէս և զԻս-մենիաս. և ապա ինքն անդի առեալ մեկ-նէր 'ի վայրաց անտի:

Յետ այսորիկ խորազգած եղեւ Թե-բայեցւոց, եթէ Լակեդեմոնացիք և Աթե-նացիք հրեշտակս առաքեցին առ Մեծ Թա-գաւորն յուխտ մտանել ընդ նմա, առեալ արձակէին և նոքա զՊեղոպիդէս՝ քաջա-պէս խորհեալ այնպէս վասն մեծի համ-բաւոյ առն: Քանզի և յառաջագոյն համ-բաւեալ իսկ էր նա ընդ ամենայն գաւառս արքային՝ ընդ որ անցանէր նա. զի և ոչ ա-նագանօք ինչ հռչակ հարաւ ընդ Ասիա համ-բաւ պատերազմին նորա ընդդէմ Լակե-դեմոնացւոցն, այլ յորմէհետէ լուր եհաս անդր Լեւկտրեան մարտին, և երբէք եր-բէք 'ի նոյն յաւելլեալ և այլ ինչ 'ի գեղե-ցիկ նահատակութեանց նորա, որ ըստ օրէ երթալով երթայր յառաջացեալ համբաւ նորա և մինչև 'ի հեռաւոր գաւառս: Ապա և առ դրուռն եկեալ զնա նախարարք և զօրավարք և իշխանք արքային, հիացեալ զարմանային և առ միմեանս բարբառէին. սա այս այր է՝ որ զծովուն տէրութիւն և զցամաքին առ եբարձ 'ի Լակեդեմոնաց-ւոց, և ընդ մէջ Գետասայ և Եւրոտայ փա-կեաց սահմանեաց զիշխանութիւն Սպար-տիոյ, այն՝ որ վայր մի յառաջ առ Ագե-սիղայոսիւ մարտ պատերազմի շարժեաց ընդդէմ Մեծի Թագաւորին և ընդդէմ

Պարսից հանել 'ի ձեռաց նոցա զՇուշ եւ զԵկբատանս:

Որոտի եւ վասն այսորիկ յանձն իւր զուարձացեալ էր Արտաշէս, եւ եւս 'ի վեր առեալ մեծացուցանէր զբարքն Պելոպի-դեայ. պատուասիրէր երեւել պաշտեալ եւ ապաստարկեալ յաւագամեծար արանցն: Այսպ իւրն եւ զկերպարանն Պելոպիդեայ յանկն արկանէր Թագաւորն. եւ լուաւ եւս զխօսել նորա՝ կորովի եւս քան զԱտտիկե-ցւոցն, եւ անպաճոյճ առաւել քան զԼակո-նացւոցն, առաւել եւս սիրեաց զնա, եւ կիրս իմն արքունի կրեալ՝ յայտնապէս ցուցա-նէր զմեծապէս յարգ իւր առ նա. որպէս զի եւ այլք 'ի դեսպանացն խելամուտ եղեն բաղում սիրոյ նորա առ Պելոպիդէս. Թէ-պէտ եւ քան զամենայն Հելլենացիսն ա-ռաւել պատուեաց նա զԱնտալկիտաս Լակեդեմոնացի. քանզի 'ի մեռոն թա-ցեալ արքային զպսակն զոր բարձեալ ըմ-պէր նա 'ի խնճոյսն, առեալ յղեաց զայն առ նա: Բայց ընդ Պելոպիդեայ ոչինչ այնպէս զրգանօք՝ վարեցաւ Թագաւորն, առաքել առաքեաց առ նա ընծայս շքեղ յոյժ քան զսովորեալն եւ արգոյս եւ պայ-ծառս. եւ զխնդրուածս նորա կատարեաց, զի ազատք կացցեն ամենայն Հելլենացիք իւրեանց օրինօք. եւ բնակեալ եղիցի Մեսս-սինէ, եւ Թեբայեցիք բարեկամք հայրենիք համարեսցին արքային:

Զայս հաւանութիւնս առեալ Պելո-պիդէս, այլ ընծայիցն եւ ոչինչ, բայց որ-

չափ ինչ 'ի նշան սիրոյ և մտերմութեան
սրբային, եւ մեկնեցաւ. և այս առաս մե_
ծապէս գործեցին առաւելեաց զայլսն 'ի գեղ_
պանաց: Քանզի Աթենացիք մահու դա_
տեցին զՏիմագորաս. և արդեօք խրատուանք՝
եթէ սրբոյին զայն 'ի պատճառս մեթերից
ընծայիցն: Քանզի ոչ ոսկի միայն և ար_
ծաթ ընկալաւ սա, այլ և անկողին մի ծան_
րագին, և ծառայս եւս անկողնարկս 'ի Պար_
սից, իբրու եթէ անբաւականք իցեն Հել_
լենացիք քաջապէս անկողնարկ լինել. առ_
այս գործեալ՝ էառ նա և կովս ութսուն,
և անդէորդս եւս. իբրու եթէ կաթին նո_
ցա պէտք իցեն նմա 'ի խօթութեան իւ_
րում. առաս 'ի վերջէ 'ի մեկնել իւրում 'ի
Պարսից էջ նա 'ի ծովն բարձեալ բերեալ
շալակաւ. և որք բարձեալ տարան զնա՝
առին վարձս 'ի թագաւորէն մէն մի տա_
ղանդս չորս: Այլ թուի թէ ոչ դշալքա_
գութիւն առն մեծապէս սրտմնեցոյց զԱ_
թենացիսն. (քանզի Երբեմն և Եպիկրա_
տէս այր բեռնակիր զորու ոչ ժխտեաց ըն_
ծայս առնուլ 'ի թագաւորէն. և յանել
անդ նորա, եթէ վճիռ տալ արժան է՝ փո_
խանակ իննուանց իշխանապետաց ամի ամի
գեսպանս ինն 'ի ռամկականաց և յաղքա_
տաց առաքել առ թագաւորն՝ զի հարս_
տասցին, լուեալ զայս ժողովրդեանն՝ 'ի
ծաղր հատանէին). այլ զի մանաւանդ
դժկամակս բերին Աթենացիք, զի ան_
նայն ինչ շնորհեցաւ Թեբայեցւոց: Այլ
զփառսն Պեղոպիդեայ չածին նոքա զմտաւ,

հարկեալ ազդուածի ճնշմամբ նախահաստատեալ յօտարաց անտի, եւ գնաց. Թէպէտ և գուշակք և խղճք ոչ հաւանեցան, և քաջալերեցին նա արգելուլին զնա. քանզի նշան երկնաւորք մեծ և ընդդէմ մեծի ուրուեմն առն համարեցան զայն։

Բայց նա առաւել վառեալ էր ընդդէմ Աղեքսանդրի վասն Թշնամանացն առ 'ի նմանէ. և այն ունէր նա զմտանել զտուն նորա ըլ՛ ախտս և վայլուք, 'ի բանից անտի զոր խօսեալ էր նա առ Թեբէ. իսկ որ առաւել նա 'ի նոյն յանկուցանէր զնա՝ զերեցկութիւն նախահասակութեանն այնմիկ։ Քանզի և ցանկայր և պատուասիրէր՝ զի 'ի ժամանակին՝ յորում Լակեդեմոնացիք զօրավարս և օգնականս առեալ արձակէին առ Դիոնեսիոս բռնաւոր Սիկիլիոյ. և Աթենացիք ինքնին վարձատու ունէին զԱղեքսանդրոս, և դրօշեալ 'ի պղնձոյ կանգնեալ էին նմա երկու բարերարի, ցուցցէ նա Հելլենացւոցն՝ եթէ Թեբայեցիք միայն 'ի զէն 'ի զարդ վառեալ են յայնժամ վասն հարստահարելոցն, և աւերեալ քանդեն նոքա յԵլլադա անիրաւութիւնս զանի-բռնաւորաց և զքռնաւորաց։

Հասեալ արդ 'ի Փարսաղոս Պեղոպիդէս, և անդ զզօրականն խմբեալ՝ անդէն խաղայր ընդդէմ Աղեքսանդրի։ Նա տեսեալ զի նուազունք են 'ի Թեբայեցւոց ընդ Պեղոպիդեայ, և զի զօրականք իւր կրկին են և առաւել են քան զԹեսաղացւոցն, խաղաց գալ 'ի դիմի հարկանել նմա առ առ-

Ճարտարին Թէոդորոսայ։ Իսկ և անդ. ուր տաճար առ Պեղոպլիգէս, եթէ 'ի վերայ յարձանկեալ գայ բանաւորն բազում ամբոխիւ, եւ պատասխանեալ. «Քա՛ջ է, բազմազգունեց ուղեւորն և մեզ ընդդէմ յաղթանակաց»։ Այդ՝ անդամանոր առ անդրեան՝ որ անուանեալ կոչէր Կնիդոսեանցն, 'ի միջոցին ամբարձեալ կան բլուրք կողկին առ 'ի չեղ և բարձրանա-տարք 'ի հանդիպոյ միմեանց. գուն գոր-ծեցին հեռանկարութք երկոցունց եւ կող-մանց հաստատել ունել զբլուրսն։ Այլ Պե-ղոպլիգէս 'ի վերայ հեծելազօրուն Թշնա-մեաց արձանէր զիւր պյրուանն՝ որ բազում-էին և կորուսինք։ Իսկ յաղթանակն եղա-նէին տուքս, և զհետ եւ մնեալ փախստեայն վանեէին 'ի գաշտին, անդուստ Աղեքսան-դրոս կանխեաց կալաւ զբլուրսն, և 'ի գի-մի հարեալ հեռանկարն թշնամեացն՝ որ զինքն հասին անդր և գուն գործէին ե-լանել ունել զամուր վայրս զբարձանցն, հարուածս տայր 'ի վերայ նաւահանգիստն, և վերջ նոցա խոյց և մեքենայր՝ այնպէս 'ի գլուխ տարան և ոչինչ։

Հանապա գէտ ամէն կալեալ Պեղոպլիգէս, զիւր պյրուանն յետոյ ձայնեալ՝ հրաման տայր յարձակել 'ի վերայ մարտիկ զնդին. և ինքն առեալ փութացեալ զմահամն, գի-մեաց խառնեցաւ ընդ նոսա՝ որ առ բլուրքն մարտ եդեալ կռուէին. և անդ ընդ վեր-ջապահն անցեալ յառաջ միջամուխ ե-ղեալ 'ի նաւահանգին՝ այնչափ խիթ այժ պնդութեան և քաջալեր յորդեաց առ-

հասարակ, որպէս զի և Թշնամեացն կար-ծել եթէ այլ յայլմէ եղեալ զօրականին՝ մարտուցեալ կռուէին նոցա միաբանութեամբ և մարմնով և հոգւով։ Թէպէտ և զանազան կա-լեալ ընկերկէին հրոսակութեանս երկուս և երկու, անուանեալ զի հզօրեղագոյն նոցա 'ի գլուխ հարկան, և զի և այրուձին եւս զարձ տարածեալ էր 'ի հետևանութեան ընկերաց, ան-զի եռանդն և ընդ կրունկն միրջանէին։

Իսկ անդուստ Պեղոպիդէս 'ի բարձրա-ւանդակէն անեալ՝ զի չև էր 'ի միախառնեալ ամենայն բանակ Թշնամեացն դարձեալ, Թէպէտ և առհասարակ լի էին խուռնու-Թեամբ և ամբոխիւ, եկաց արձանացաւ և շուրջ հայէր դիտէր՝ խնդրէր զԱղեքսան-դրոս։ Ա՛յն ինչ յանկն արկանէր զնա յա-ջոյ Թևին անդ կարգել զմարձկանս զօրակա-նին և խրախուսեալ, ոչ եւս զպատմութեան բարկութեանն ամենեցուն բանիւն. 'ի նոյն անեալ մառնեցաւ բորբոքեցաւ, և սրտմտու-Թեամբ կրկին 'ի ձեռն զինուորականն առեալ մարմին և զզօրավարութիւն նահատակու-Թեանն, խուճապեցաւ մարտեաց 'ի բաց հարուստ միջոցաւ յառաջագէմ քան զնի-զակակիցսն, ձայն բարձեալ գոչէր և աս-պարէզ բռնաւորին կարդայր։ Իսկ Աղեք-սանդրոս ոչ եկաց մնաց բուռն յարձակ-մանն, չզբաւ խոյս ետ 'ի մէջ տիգաւոր անձնապահացն և ծածկեցաւ։ Բայց 'ի մարձկանաց անտի՝ որ միանգամ առաջին նահատակեցան ընդդէմ նորա, զնոսա առ-պատա արկանէր Պեղոպիդէս, և վկէսս

դարձեալ խոցէր և սատակէր. սակայն և բազում այն էին 'ի նոցանէ որք բացէ 'ի բաց մխեալ զերզաւորդեանցն խոցեալ զզէնս քաջին, մինչ մահու 'ի վերայ գնէին. մինչև անդուստ Թեսաղացիք անձուկ մեծ կալեալ և յոգնս հարեալ 'ի վայր 'ի բլրոյն խուռնապէն ձեռն տալ նմա, այլ Պելոպիդէս դիտապաստ անկեալ կայր: Անդ աստ այրուձին յառաջ անցեալ հարկանէր վանէր առ հասարակ զփաղանգն Թըշնամւոյն, և զհետ եւս մնացեալ յոյժ հարուստ միջոցաւ՝ ընդ որ զդաշտավայրեանն զփախստականսն, սատակեալ ոգիս աւելի քան զեւթն հազարս:

Արդ եթէ Թեբայեցիք յայնժամ լըւեալք 'ի մահուան Պելոպիդեայ՝ ցաւանհնարին ցաւեցան նովաւ, կարդալով զնա հայր և փրկիչ և վարժապետ մեծամեծ և գեղեցիկ առաքինութեանց, չէր ինչ կարի զարմանալ. յորժամ անդուստ և Թեսաղացիք և նիզակակիցք՝ իւրեանց իսկ վճռովք 'ի շնորհս Պելոպիդեայ անցեալ զանցեալ զքննաւ իսկ պատուով զոր երբէք ընծայել իցէ առաքինութեան մարդկան, և առաւել ևս իւրեանց իսկ կրիւքն զառ նա մեծամութիւն սիրոյն իւրեանց 'ի գեմս բերէին: Քանզի պատմեն՝ եթէ որք միանգամ 'ի մարտին յայնմիկ լուր առին զմահուանն նորա, անդէն փութանակի մինչչև զզրահսն մերկացեալք, մինչչև ձիոց զսանձս արձակեալք, և մինչչև զվէրս պատեալք, զինուզարդու այնպէս ջերմաջերմ առ նա ընթա-

ցեալ զձիայսն՝ խուզեալ որ զեռևս ոգիքն 'ի նմա կային. ապա շուրջ զգլխակայանն նորա առեալ կուտէին կարկառ զէնս և զասպարս զԹշնամեացն. և հասակին կտրեցին զմազս զերիվարացն և զջորեացն. և շատք եւս ոմա-նք տուեալ մնացեալք 'ի վրանս ոչ հուր լուցին և ոչ հաց առին. այլ անդ լռու-Թեան անշշունջ և Թաղծութեան մեծապէս զրուցեալ կալաւ առհասարակ զբանակն. իբրև որ ոչ յաղԹութեան տարեալ նոցա նշանաւոր և մեծ, այլ 'ի բռնաւորէ անտի 'ի պարտութեան մատնեալ նկուն եղեալ իցեն: Այլ ապա և 'ի քաղաքաց քաղաքաց, ուր միաբանեալ զոյժ եհաս մահուանն, անդր զխմեր աղաղակէին և ընդ նոսա երի-տասարդք և ծերք, և քահանայք խնկենին զլխաւորն, շքով առնուլ ժողովել զմարմին նորա, ածեալք ընդ իւրեանս Ախոյեանս յաղԹանակս և բոլորս պսակաց և պա-ռակինութեանս ոսկիս:

Իբրև 'ի գլխահասեան համեղերձեցան, յա-ռաջ մատուցան արք հինն ատուրց 'ի Թեսա-ղացւոց անտի, խնդրէին 'ի Թեբայեցւոց Թաղել զմեռեալն. և անդ մի ոմն 'ի նո-ցանէ էն եկաց խօսեցաւ այսպէս. "Շնորհս մի մեզ նեղականեցէք խնդրեմք մեք աւա-զին 'ի ձէնջ, որ փառս յաւէտ աղէտս մեր համբերելացէ մեզ և քաջալեր: Ո'չ ուրեք՝ կենդանւոյն Պելոպիդեայ հոգաբար-ձեն Թեսաղացիք, և ոչ շուք նմին քաջա-վայելուչ ձօնեսցեն նմա յիմանեալ նորա. այլ Թէ երբէք մեկնակեցի մեզ հալել 'ի

մեռանելութիւն նորա, և զարդարել պատ-
կել և մեղէն զմարմին նորա թաղել, ստա-
ցուք տալով ատեսանել ձեզ, եթէ քան Թե-
բայեցւոցն՝ առաւել ևս Թեսաղոնացւոց
դժոխպարծանքներնն իւրեն կիրք առնելով պայտ-
ցեկ. քանզի զգեկեցայք դուք 'ի քաջէն դը-
րաւկարն և եթ, իսկ մեք խնդրեմն 'ի նմանէ,
միաբանութեան և յաղթութեանէ: Քանզի
զեփորդ այլ հաւանութեամբ մեք խնդրել
'ի ձէնջ այլ զօրաւոր, մինչև մեր զօրձու-
ցեալ առ ձեզ զՊեղոպոնեցեաս":

Հաւանեցան Թեբայեցիք: Նա արդեօք
յուղարկաւորութիւն այլ փառաւոր եր-
բէք ևս քան զնորայն չառաւել ոք, որ ոչ 'ի
փողոտակ և ոչ յաւէտ և ոչ 'ի ծիրանեխ խնա-
տանկուեցէ զշուք պայծառութեանն, բաց
որում Փիղիպոսս 'ի գովութիւն առնել
զարմանալ ընդ հանդէս թաղմանն Դիո-
նեսեայ, որ երբ վասեմանեին երկև մեծին
այնմիկ ողբերգակ ատեսարանեին բանաւո-
րութեանն: Իսկ Աղեքսանդր մեծն 'ի մա-
հուն Եփեսատիոնի՝ ոչ զմարմնա միայն եա
փոխբերել զերիվարացն և զջորւոցն, այլ և 'ի
պատուարացն զպարսպեն տայր բառնալ. զի
և քաղաքք խնդրեին զառաջին կերպարանն
զգեցեալ այլ զկարեալն և զանփառու-
նակն, երկեւեցին 'ի առաջ հանդերձել: Այլ
քանզի այդպէսի 'ի ուէրանից անոնց հրա-
մայեալ հարկիւ գործեցան, միաբանութեան
և նախանձու պատուավորեցոյն, և առաջ-
նութեանց բանապաշտեցոյն, ցոյցք էին ա-
պա չէին զորքա մեծարութեան և ոչ մեծա-

րանաց. Խորոտ որ զգեղեցկութիւն տեսանել զզգայարանացն տեսանելեացն և զներդաշնակութիւն և զամէն բարոյականութիւնն 'ի դէմս բերելեան զնո_ ցա՝ որ զգայուն 'ի մտայղացումն մարմնո_ ցին և յաւելուածս: Այլ թէ այր մի ծա_ ղորմական, մեռանել 'ի սուր աշխարհի, յանդուգութեան բարձրակայ և 'ի զաւակաց և յարդարակացն, ոչ ուրուք թախանձեալ ծանեալ, կամ թէ հարկ 'ի մերոց ածեալ, այլ ինքնին մեծագործութեամբ և այն զարմանք այնչափ ծաղրածուութք և այնչափ քաղաքք առաւել հարկեալ յուղարկաւորք լինելոյն նմա և բոլորովին պատկերացն, արդեօք այս նմա մեծապէս խրատական զանմահութեան համեմատելոյ երանութիւն:

Քանզի և չէ խիկ արդեօք՝ բառ որում Եպամինոնդայ ասաց՝ զծովակալութեան մահն բարեբաստիկ մարդկանն, նա և յայժմ եր_ ջանիկ է. քանզի զգեղեցիկն նահատակու_ թիւնս զատուցելեացն յանդգունք հանէ, և 'ի փոփոխութեանց բախտին անկողմնելի պահէ: Ուստի և քաջ խիկ Ղակեդեմոնացին այն դիպուկս ածեալ Ողոմպիադայաղթին Դիա_ գորայ, զի եանես եւ նա յՈղիմպիականսն պսակեալ զորդիսն, եանես և զթոռունսն՝ որ յորդւոցն և որ 'ի դստերացն, բարբառ_ եալ առ նա այսպէս. « Վախճանեսց ուրեմն ով Դիագորաս. ոչ ելցես դու 'ի վեր յՈղիմպոս »: Այլ ինձ թուի, եթէ որ 'ի միասին զուգեալ և զինքն մրցանակս զՈղիմպիականացն և զՊիւթեանցն՝ ար_ ժան եղիցի չհամարեալ 'ի կէտս ձգեալ բնոյ

միում միայն մարտի մրցանացն Պեղոպի-դեայ, այն՝ որ 'ի բազում մրցեալ և մրցանակս տարեալ, և կեանս հարուստ կեցեալ 'ի փառս և 'ի պատուի, և տակաւ ուրեմն Բէովտարքս կացեալ երեքտասաներորդ-անգամ, և նահատակութիւն մեծապէս նահատակեալ և նկուն զբռնաւորն տապալեալ, մեռաւ նա 'ի վերայ ազատութեան Թեսաղացւոցն:

Եւ արդեօք մահ նորա կոծ և աշխար մեծապէս առթեաց նիզակակցացն, սակայն և օգուտ յոյժ գործեաց նոցա: Քանզի իբրև լուան անդէն Թեբայեցիք եթէ անկաւ Պեղոպիդէս, վրէժ անյապաղ խնդրեալ՝ փութապէս արձակեցին անդր բանակ եօթն հազար զօրականին և եօթն հարիւր այրուձիոյ, և էին զօրավարք Մաղկիտաս և Դիոգիտոնէս: Եւ այնպէս տագնապ 'ի նեղն արկեալ զԱղեքսանդրոս և 'ի զօրութենէն վանեալ, հարկ 'ի վերայ եդին նորա դարձուցանել առ Թեսաղացիս ըզքաղաքս նոցա. և 'ի բաց կալ 'ի Մագնետացւոց և 'ի Փթիովտացւոց և յԱքայեցւոց, և զպահականորդ զօրն 'ի բաց տանել. և երդուիլ ևս կուել՝ ըստ հրամանին Թեբայեցւոց անսալ և խաղալ 'ի կուիւ ընդդէմ թշնամեաց: Այդ Թեբայեցիք օրինակ զայս շատացան յայնժամ:

Այլ մեք, զոր վայրիկ մի առաջ զպատուհասն ելոյծ նա զկցն վասն Պեղոպիդեայ, պատմեսցուք: Էր խակ անդամոյն վարժեան Պեղոպիդեայ՝ որպէս ասացաքն՝

զԹեբէի զկին Աղեքսանդրի, մի ինչ առհամարհել լինել 'ի շքոյ և 'ի փառաց բանաւորութեանն, որ զկնաւք չափ է և 'ի գունդ ելուզակացն: Այսպէս և ինքն Թեբէի զանգիտեալ յուխտադրուժ բարոյիցն, և յատելութիւն բերեալ անագորոյն կրիցն Աղեքսանդրի, համաձայնութեամբ դաշնադիր լինէր ընդ եղբարց իւրոց երից՝ ընդ Տիսիփոնեայ և Պիւթողայոսի և Լիւկոփրոնեայ, զատել զնա օրինակ զայս: Որդւոյն ապարանեիցն բռնաւորին զդաւաճանեալ էին պահանորդք գիշերապահք, բայց 'ի բարձու սրահկապանէն՝ յոր ելեալ ննջէր նա. և էր պահապան մեկից սրահկապանին շուն կապեալ անդանօր՝ բնաւից ահաւորիւ, բայց երկուց անտարցն ընդել, և ծառայիսն՝ որ զկերսն տայր նմա:

Այլ յաւուր յորում զատել զնա համարձեալ էր Թեբէի, առեալ 'ի տուէ զեղբարս իւր թաքուցանէր 'ի սենեակ մի մերձաւոր. և ապա ինքն միայնակ՝ որպէս սովորն էր՝ մտեալ առ Աղեքսանդրոս որ 'ի քուն էր, և յետ սակաւու ելեալ արտաքս միւսանգամ՝ հրամանն տայր ծառայիցն 'ի բաց զշունն տանել, իբրու կամել Աղեքսանդրու յանդորրու անշշուկ անմենին ննջել: Բայց և խիթացեալ՝ եթէ և զդղրդիւն աստիճանացն սանդուղք յելանել 'ի վեր պատանեացն, առեալ սաստիկ պատէր 'ի վերայ. ապա ածեալ զնոսա 'ի վեր տուներաւորս, և առ դրանն կացուցեալ զնոսա, ինքն մտանէր 'ի ներքս, և կորզեալ 'ի բաց զսուրն կախեալ 'ի վերայ գլխոյն

Աղեքսանդրի՝ զի և քաջ իսկ խոր 'ի քուն ննջէր այրն, բերեալ ցուցանէր նոցա զայն ։ Անդ 'ի ժամուն զահի զդողանի հարեալ պատանեացն և 'ի գործն վերջանանեալք , սպառնացեալ կինն Թշնամանօք և յերդմունս տայր նոցա և երդնոյր եւս՝ ինքնին գնալ զարթու-ցանել զբռնաւորն և մատնել զգործոյն լինել . յորմէ նոցա զարհուրեալք և յամօթոյն ևս պարտեալք , առեալ ածէր զնոսա 'ի ներքս և կարգէր կացուցանէր շուրջ զանկող-նովքն , ինքն 'ի ձեռին զճրագն ունելով ։ Անդանօր մին 'ի նոցանէ առեալ զբռ-նաւորին զոտիցն՝ պնդապնդոյնս ունէր . իսկ միւսն կալեալ զվարսիցն՝ ձգէր զգլուխն . իսկ երրորդն՝ հարեալ 'ի նա զսուսերն և ան-դէն խողխողէր ։ Եւ այսպէս արագ արագ մահու , որ 'ի դէպ իսկ Թերևս չէր , վճարեաց զոգին ամբարշտին ։ Այլ քանզի սա առա-ջին բռնաւոր՝ որ յամուսնոյն իւրմէ 'ի մահ վարեցաւ , և զի և յետ մահուն մարմինն նորա Թշնամանեալ՝ արկեալ 'ի բացի ա-ռաւթուր 'ի Փերացւոցն հարան , որպէս Թուի Թէ զարժանիսն կրեաց ամբարշտու-Թեանցն ։

ՄԱՐԿԵՂՂՈՍ

Ո ՄԱՐԿՈՍ կղզաբնակս որ հնդկեցս անգամ եկաց հիւպատոս Հռոմայեցւոց՝ ամեն որդի եղեալ Մարկոսի ։ Իսկ առաջին՝ սա այս Մարկոս յիւրում ազգատոհմին անուանեալ կոչեցաւ Մարկեղղոս, այն է՝ Արքեան, որպէս ասէ Գոնիգոմինիոս ։ Քանզի կիրթ և հմուտ էր ՚ի մարտս պատերազմաց, և մարմնով կորովի, և ձեռօքն ուժաւոր, իսկ բնութեամբն՝ պատերազմասէր ։ Այլ զերկուս բարուց զայս զաշխոյժ և զքաջն և սատարէկն՝ միայն ՚ի մրցանս մարտից ՚ի գէտս բերէր նա ․ իսկ յայլն ամենայն ցած էր նա և մարդասէր, և Հելլենական վարժիցն և զպրութեանց սիրող այնչափ, զի և զարմանայր և մեծապէս եւս յարգէր զյառաջադէմսն առ ՚ի նոյն ։ Թէպէտ և ինքն վասն մեծաց անպարապութեանց, ոչ որչափ յօժարեալն էր՝ ժամանեաց

վարժիլ և հրահանգիլ 'ի նոսա ։ Քանզի զոր այլոց 'ի մարդկանէ եւ Աստուած, որպէս Հոմերոսն ասաց, «Անդստին 'ի պատանեկ տիոցն մինչև յալևոյթ ծերութեան՝ պատերազմունս նիւթել գոռս», զնոյն եւ որոց յայնժամ այրք աւագք 'ի Հռոմայեցիս ։ Քանզի պատանիք գոլով, ընդ Կարքեդոնացիս մարտ եղեալ կռուեցան 'ի վերայ Սիկիլիոյ. իսկ երիտասարդք՝ ընդ Գաղատացիս՝ 'ի վերայ Իտալիոյ. և ապա ուրեմն ծերացեալք՝ դարձեալ միւանգամ կռուեցան ընդ Աննիբաղայ և ընդ Կարքեդոնացւոց. չունելով նոքա՝ 'ի ծերացեալ հասակին՝ իբրու զզբաղումս գոլ և հանգիստ 'ի գործոց մարտին, այլ իբրև առաջնորդք և իբրև զօրավարք ածեալք 'ի մրցմունս յաղթուականութեանն կերից և յառաքինութենէն ։

Այդ Մարկեղղոս՝ թէպէտ և յամենայն տեսակս մարտից ժիր և կիրթ, այլ 'ի մենամարտի՝ վեհագոյն անձին իւրում եղեալ՝ երբէք խոյս չետ նա յախոյեանէն. և առ-հասարակ տապաստ արկ՝ որք միանգամ ձայն ետուն նմա ։ Իսկ և 'ի Սիկիլիա ապրեցուցանէր զեղբայր իւր Ոտակիլիոս՝ որ 'ի մահ վտանգեցաւ, հովանի եղեալ նմա վահանաւն և սատակեալ զախոյեանս նորա ։ Ուստի թէպէտ և տակաւին պատանիկ, տարաւ նա և պսակս մրցանակս 'ի զօրավարաց. և եւս քան զևս անուանաւոր եղեալ, 'ի ժողովրդոյն ընտրեալ կարգեցաւ Անգարապետ 'ի նշանաւոր կարգի. իսկ 'ի

քահանայիցն՝ հաւահարց. և է այս առք-
քահանայութեան՝ յօրինացն առաջութենէ
ստանիկան 'ի միրայ կալ դուշակութեանցն,
առաւել ևս որ 'ի հաւուց անօրի:

Բայց մինչդեռ ամբարտաւանեալ էր, բըռ-
նադատեցաւ նա յանկամայս ամբաստան լի-
նել: Քանզի որդի մի էր նորա անուանա-
կից, դիմօք գեղեցիկ՝ քաջառողջ հասա-
կաւ, ոչինչ պակաս և պարկեշտութեամբն
և պատուհասականութեամբն սքանչացեալ առ
քաղաքացիսն: 'Ի սէր մանկանն հարեալ
Կապիտոլինոս համիշխան Մարկեղղոսի
այր պագշոտ և լիրբ, հրապուրեաց զմանուկ.
զառաջինն մերժեաց մանուկն առանձին
զմեղսն. իսկ և միւսանգամ 'ի նոյն առաջադր-
ցաւ, չոգաւ 'ի վեր հանէր հօրն զբանն:
Զայրացաւ հայրն, և 'ի Սենեկլիտոսին ամ-
բաստան կայր զիշխանակիցն: Նա Կապի-
տոլինոս խոյս տուեալ, և հնարիմացութիւն
բազում նիւթէր 'ի դերև զամբաստանու-
թիւնն հանել, և բողոք ևս բառնայր առ
ժողովրդապետսն. իսկ նոքա բողոքոյն
երեսս չարարին, ապա և բնաւ խակ յու-
րասս լինէր վասն մնասան: Եւ քանզի
վկայ 'ի միջի չգոյր բանիցն առ մանուկն,
հաճոյ թուեցաւ զառաջեաւ զմանուկն
ինքնին կոչել: Իսկ և եկն նա յանդիմանի-
եալ, յանկն արկեալ Սենեկլիտոսին զնորա
շառագունել զդէմսն և զարտասուսն, և
խառն ընդ մեծապէս արանութեան ման-
կանն՝ զամօթն, ապա հաւատոյս և ոչինչ
այլ խնդրեալ՝ դատապարտեցին այրն և տուգա-

թոյ առաքինութեան զկատարեալ լինելոյ. և յար-
ծանօթոյ անուանս Մարկեղլոս ներքին լուսաւորա-
փոխեաց շինեալ՝ նուիրելոյ գեղն:

Բայց յայնժամ 'ի դէպ առաջնոյն մար-
տին Կարքեդոնացւոց 'ի քահանայութենէ երկ-
րորդի ասին, անդրէն միաբանեալ յարե-
ցաւ սկզբանն պատերազմին՝ Գաղատացւոց
'ի վերայ Հռովմայ: Իսուբրացիք բնակաւորք
յԱլպաստանն Իտալիոյ, որք 'ի Կեղտաց՝ ազ-
րաւորք լինելով, կոչեցին և յայլոց ևս 'ի
թիկունս վարձկանս 'ի Գաղատացւոց ան-
ուն, որ անուանեալ կոչին Գեսատացիք:
Իսկ որ սքանչելին յայնժամ 'ի գեղեցիկ
բախտէն, զի այս մարտ Կեղտաց ոչ շար-
ժեցաւ՝ միաբանութեան 'ի վերայ Հռոմայեցւոց
ընդ մարտին Լիբէոյ. այլ կացին մնացին
յայնժամ Գաղատացիք 'ի մեծամասն յան-
դորրու՝ խաղաղ 'ի զինէն կացեալք մարտի
նոցա. և խաղացին ապա 'ի վերայ յաղթու-
կանացն և ձայն եդին մարտի՝ մինչ ցերե-
նոքա պատրաստեալքն էին: Սակայն և այն-
պէս յոյժ մեծ ընդդիմեցան Հռոմայեցիք 'ի
մերձաւորութեանն, զի 'ի սահմանակից
վայրաց յուղեցաւ մարտն 'ի վերայ նոցա.
միանգամայն և 'ի վաղնջուց անտի նախա-
տակութեանցն Գաղատացւոց, յորոց
թուի թէ քան յայլոց, 'ի նոցանէն ա-
ռաւել զահի հարեալ էին Հռոմայեցիք.
խլրտու որք և զնոցա քաղաքն երբեմն 'ի նո-
ցանէն հանեալ էին. և յայնց ժամանակաց
հետէ օրէնս կարգեալ էր Հռոմայեցւոց,
ազատ 'ի զինուորութենէ լինել քահա-

[illegible]

[illegible]

[illegible]

'ի վերայ Նեստորականացն, առաւելեալն ազգաւն դնել ընդ դեսան՝ որ անուանեալ ընդ Պենտե-ներան դասուան. և հաշտեալ ևս հարաւ՝ եթէ լուսինք երեք երանեցան առ քաղաքական Աղեքսանդրեայ 2. և քահանայք իմբենին՝ որ հաստահաստացեալ պաշտօնեայքն են, յաղթութեան հիւպատոսացն՝ հաստատութեանք մեկայելին՝ ձախողակի և չարահաւ լինել յայտնեալ ընտրութեանն: Վասն որոյ և Սինկղիտոսն փութացեալ Նասանկանին արարել 'ի բանսակն՝ յետ կոչէր դհիւպատոսան, դալ և հրաժեշտ յերկասնութենէն տալ. և մի հիւպատոսատարար յինչ մի ձեռնամուխ լինել ընդդէմ թշնամեացն: Իսկ Փլաւիանոս առնել զՆասանկանին՝ ոչ կամեցաւ բանալ մինչև կատարել և 'ի փախուստ զընդդիմամարտն դարձուցեալ և ըղդաւաւ նոցա առաջ հալածեալ: Այսպէս զօրօք 'ի Հռոմ արտաքսեալ բաղդում աւարաւ, ընդառաջ նորա ոչ չոքան ժողովուրդք. և քահանայք ոչ ամբոխէին 'ի կոչն հնազանդեցաւնա և ոչ անհնազանդ գործոյն, այլ անդադարեցան և արհամարհեցան, վասյրինկ մի ևս զբանսանքն նոքա զյաղթանականն. բայց յետ յաղթանակին առնալեցին զնա 'ի բաց 'ի հիւպատոսութենէն կալ համաբերձ իշխանական, և կենանս վարել զառականանին: Ըւ այսպէս ասաց զամենայն դդարձս յառաջոյն 'ի վեր համենքն Հռոմայեցիք. և ոչ դարձեալ 'ի յաջողութիւնս մեծամեծս անզամ՝ երբեք համբարանէին նոքա զանց դդաշնակութեանցն առնել և զհայրենի առվորու-

թեամբքն. լաւ համարէին 'ի փրկութիւն քաղաքին բարեպաշտել Իշխանաց յաստուածակոչումն անդր, քան 'ի մարտի յաղթական լինել թշնամւոյն։

Արդ այս և Տիբերիոս Սեմպրոնիոս, այր՝ որ քաջութեամբ լաւութք սիրելի յոյժ էր Հռոմայեցւոց, 'ի հիւպատոսութեան անդ իւրում ընտրեալ էր 'ի յաջորդ ընդ Սկիպիոն Նասիկաս և զԳայիոս Մարկիոս. և յետ մեկնելոյ նոցա 'ի կուսակալութիւս իւրեանց՝ իբրև ըստ դիպաց առեալ 'ի ձեռս զյիշատակարանս նուիրականացն, գտանէր 'ի նմա սովորութիւն հայրենի զոր ոչն գիտէր. և էր այսպիսի։ Զի՝ եթէ 'ի տան ուրեք կամ 'ի վրանի 'ի վարձու կալեալ, նստեալ հիւպատոսին արտաքոյ քաղաքին 'ի գիտողութիւն հաւահմայից, հարկ լինէ իցէ նմա դառնալ 'ի քաղաք անդր՝ մինչև երևեալ նշան ստոյգ, պարտ է նմա յայնժամ լքանել զառաջին բնակութիւնն և առնել այլ, և անդ միւսանգամ սկիզբն առնել գիտողութեանցն։ Արդ այսմ՝ որպէս լինի թուի՝ ոչ ուշ եդեալ Տիբերիոս, երկիցս զնոյն ունելով կալեալ՝ այնպէս ընտրեաց 'ի հիւպատոս զարսն՝ զոր ասացաք. բայց ապա խելամուտ սխալանացն եղեալ՝ իրազգած զՍինկղիտոսն առնէր։ Այլ և ոչ Սինկղիտոսն ինքնին զանց արար, թէպէտ և դուզնաքեայ էր վրիպակն, այլ առեալ գրէր առ հիւպատոսսն. նոցա թողեալ զկուսակալութիւնն և փութապէս դարձեալք 'ի Հռովմ, 'ի բաց դնէին զիշխանութիւնն։

Այլ այս բանք՝ զոր պատմեցաք՝ յետոյ ու-րեմն պատահեցան։

Իսկ յայնժամ 'ի բաց հանեալ 'ի քահա-նայութենէն քահանայք երկու յականա-ւորաց անտի Կոռնելիոս Կեթեգոս, զի ոչ մատոյց առաւօտի զպատարագս զոհէին ըստ օրի-նին. և Կուինտոս Սուլպիկիոս, զի 'ի զո-հել իւրում՝ անկաւ 'ի գետին 'ի ծայրից գլխոյն արտախուրակն՝ զոր տանէին Փլամի-նեանքն։ Նաև յորժամ Մինուկիոս 3 իշ-խանապետ կարգէր իշխան այրուձիոյ ըզ-Դայիոս Փլամինիոս, քանզի ճիկ յայնժամ լսելի եղև մկան, զոր Սօռէքս անուանեն Հռոմայեցիք, վասն այնորիկ 'ի բաց հա-նեալ զնոսա յիշխանութենէն, զայլս 'ի տեղին կացուցանէին։ Այլ նոքա 'ի դուզ-նաքեայս յայսոսիկ փոյթ պնդութեան ու-նելով, անապաշտութիւն և ոչ մի խառ-նէին 'ի նոսա, անփոփոխ զհայրենի սովո-րութիւնն պահելով և անվթար։

Արդ հանեալ յայնժամ զՓլամինիոս 'ի հիւպատոսութենէն, առաքարձաւ 'ի նոյն Մարկեղղոս 'ի Միջարքայից անտի. առեալ զիշխանութիւնն՝ արար և Գնէյոս Կոռնե-լիոս կարգեցաւ նմա համիշխան։ Իբրև ան-դուստ Գաղատացիք պայմանս դաշին ա-ռաջի առնէին, և Մինկղիտոսն ինքնին յօ-ժարեցաւ 'ի հաշտութիւն, թելադիր խոր-ժանին լինէր Մարկեղղոս 'ի մարտ պատե-րազմի, սակայն և հաստատեցաւ հաշտու-թիւնն։ Իսկ յետ այնորիկ մարտ պատե-րազմին՝ որպէս թուի՝ բորբոքեցաւ 'ի Գաղ-

սատացւոց անուն, որք անցեալ զԱլպեան լերն ամբոխիւ բիւրուց երից, և 'ի մի ընդ Ինսուբրացւոցն գումարեալ՝ որ բազմագոյն ևս էին քան զնոսա, անդէն խրախոյս բարձեալ չու արարին խաղացին 'ի վերայ Ակերրայ, քաղաք շինեալ 'ի վերայ գետոյն Պադոսի. և անդուստ ապա արքայն Բրիտոմարտոս բիւր մի զօրահատոյց արարեալ 'ի Գեսատացւոց անուն, յաւարի առնոյր զշրջատուն շուրջ զՊադոսիւն:

Լուր հասեալ առ Մարկեղղոս, անդէն յԱկերրա թողոյր զիշխանականցն հանդերձ հետևակազօրուն, ողջոյն և զապառազէնս զօրականենն և զերրորդ մասն զայրուձիոյն, և ինքն հանդերձ մնացելովքն հեծելովք և վեց հարիւր թեթևազէն զօրականօք, խաղայր գնայր չուայր գուլ ոչ զցայգ և ոչ զցերեկ. մինչև եկեալ հասանէր առ բիւր Գեսատացիսն մերձ 'ի Կլաստիդիոն աւան Գաղատացւոց, զոր վայր մի յառաջ ունէին Հռովմայեցիք: Անդանօր Մարկեղղոս ոչ ժամանեաց ոչ կերակուր տալ զօրականենն և ոչ հանգիստ. քանզի արագ բարբարոսք իրազեկ եղեալ գալստեանն, և արհամարհեալ զսակաւաձեռն զնդաւն, և ոչ այրուձիոյն նորա երևս ինչ արարեալ կեղաքն, իբրու որք յոյժ կորովիք 'ի հեծելամարտի. և 'ի նոյն՝ թուի թէ յոյժ նշանաւորք են նոքա, և զի և բազմութիւն յոյժ էր նոցա յայնժամ քան զՄարկեղղոսին, մեծաւ բռնութեամբ 'ի վերայ յարձակեցան, իբրու անդէն գէշ արկանել զնա՝ սաստիկ և

ահագին պատառնալեօք. և զխմբագրաւ արքային նոցա նահատակէր ապաշէն յառաջոյ նոցա : Իսկ Մարկեղղոս՝ որ մի սակաւաձեռն զնդաւն 'ի միջոցին փակեցի, առեալ ձգէր առարածեր զԹեւս այրուձիոյն՝ ցան և ցիր գործելով ընդ երկվարսն, որ և հաւասար գոգցես բանակին Թշնամեաց ձգէր երկայնէր զԹեւն :

Այն ինչ հանդերձեցաւ կազմեցաւ ստատկութեամբ անկանել 'ի վերայ, դէպ լինէր երիվարին նորա 'ի ձայնէ խնդալուելոյ Թշնամեացն խրտնուլ, և պակուցեալ դառնայր յետս և զինա բուռն ընդ կրունկն առնէր : Յայնժամ Մարկեղղոս խիթացեալ՝ գուցէ 'ի ստապաշտութենէ իմեմնէ խռով 'ի Հռովմայեցւոցն հարցէ բանն, փութապէս ձգեալ զերասանակ սանձին և անդրէն 'ի ճակատ անդր շեշտ առեալ զերիվարն, երկիրպագանէր աստուածոյն, իբրու եթէ ոչ բռն զխոյաց՝ այլ կամօք 'ի պատճառս երկրպագութեան գործել զճախորն. քանզի և սովորութիւն իսկ է Հռովմայեցւոց՝ ճախր առեալ երկրպագութիւն առնիցն : Իսկ խառնուրդքն հանդերձեալ էին լինել, ուխտս դնէր նուիրել Փերետրեանն Արամազդայ զզեղեցիկն առնել 'ի զինուց անտի Թշնամեացն :

Յայնմ պահու դէտակն 'ի նա ամբարձեալ արքային Գաղատացւոց, և 'ի նշանաց անտի համարեցաւ՝ եթէ իշխանին զօրավարն Հռովմայեցւոց իցէ, մորակ 'ի կուշտ երիվարին՝ հարուստ միջոցաւ յառաջ քան

զնիզականկիցան նահատակեալ արձանացաւ, և բարձր 'ի ձայն ասպարէզ նմա կարդայր, կայր և գոռայր և ճօճէր զնիզակն. զի և էր իսկ ինքն յաղթահասակ բարձր քան զամենայն Գաղատացիսն. և յայլոց անտի ընդ հատ իբրև փայլակն բոցակէզ քաջ իսկ շողէր շողշողէր նա 'ի զէն 'ի զարդ համակ յոսկի և յարծաթ, և 'ի նկարս խայտա-ճամուկ պէսպէս ներկոտից: Անդուստ Մարկեղղոս շուրջ զակն զփաղանգայն յա-ծեալ, զզէնսն զայն արքային ետեսանէր զե-զեցիկ ևս քան զայլոցն ամենեցուն. զմտա-ածեալ՝ եթէ ուխտք իւր ուրեմն առ աս-տուած 'ի զէնսն անդր կատարեսցին, խոյա-ցաւ ընդդէմ արքային և շեշտ թափ ընդ դրահս նորա անցուցանէր զաշտէն. իսկ 'ի հարուածին և մղոն սաստիկ առեալ յե-րիվարէն, զնա ողջ թաւալգլոր յերկիր կործանէր, և կրկնեալ և երեքկնեալ զհա-րուածն, անդէն զխոստացեալ սատակէր: 'Ի վայր առեալ յերիվարէն վազեալ, և բուռն զզինուցն հարեալ արքային, ասէր հայե-ցեալ ընդ երկինս. "Ո՛վ, որ մեծաց նա-հատակութեանց 'ի զինին կաս զօրավարաց և ամենայն մարտից մրցանաց զօրագլխաց, Արամա՛զդ Փերետրիէ, վկայեմ քեզ. զի երրորդ ես Հռոմայեցւոց իշխան՝ զիշխանն, և զզօրավար՝ զարքային զթշնամեացն պար-տեալ և իմով իսկ ձեռամբ սպանեալ, քեզ զերեխայրիս և զգեղեցիկսն աւարաց նուիրեալ պարգևեցի: Դու մեզ զնոյն օրինակ շնորհեսցես բաղդ և 'ի մնացուած մար-

ախս՝ յորում նահատակեալ կամք աւադինկ՛՛։

Բայց անդուստ և այրուձին միջամուխ 'ի կռիւն եղեալ ոչ ընդ այրուձիոյն միայն, այլ և ընդ հետևակազօրուն որ խառն 'ի միասին մարտ եղեալ կռուէին, այնպէս յաղթութիւն մեծ 'ի գլուխ տարան յայնժամ մանաւանդ և նորանշան և անկարծ. քանզի ասեն՝ ոչ յառաջ ժամանակաւ երբէք և ոչ զկնի դարձեալ՝ այնչափ այրուձի 'ի պատրաստութի մտանելոց զայնչափ ստուար զունդ զայրուձիոյ և զհետևակաց։ Այսպ շատ զօրք 'ի Նոցանէ տապաստ արկեալ Մարկեղոսս և զառ և զաւարս ժողովեալ զզինուց և զարծաթոյ, դառնայր առ իշխանակիցն. որ 'ի մարտ պատերազմի տագնապէր ընդդէմ Կեղտացն շուրջ զքաղաքաւն՝ ընդարձակատարր և բազմամարդով յոյժ քան զամենայն քաղաքս Գաղղատացւոց. և անուն կարգային քաղաքին Մեդիոլան. և Կեղտք որ անդ՝ ունէին զայն իւրեանց Մայրաքաղաք. ուստի և 'ի վերայ նորա մարտ եղեալ կռուէին նոքա մեծապէս զօրութեամբ և քաջութեամբ. և քան թէ ինքեանք պաշարեալք՝ պատեալ պաշարէին նոքա զԿոռնելիոս։ Իսկ 'ի վայր անդր գայր հասանէր Մարկեղոսս, և 'ի լուր հարուածոյն և մահու արքային անդի տային Գեսատացիքն, առնոյր յայնժամ Մեդիոլան. առաւ և զայլս 'ի քաղաքաց և զամենայն զոյս ինքնին Կեղտք 'ի ձեռս տային Հռոմայեցւոց. և անդանօր հաշ-

տուլթիւն խաղաղութեան յայնժամ գե-
ղեցիկ շնորհեցաւ նոցա :

Յետ այսորիկ՝ յաղթանակի հանդէս հրամայեալ 'ի Սենեկղետուէն Մարկեղղոսի միայն, մեծ և սքանչելի էր հանդէսն 'ի շուք փառացն և 'ի ճոխութիւն աւարացն և 'ի տեսիլ հարստի և անդրիլ մարմնոց գերեացն : Իսկ որ քան զընաւն՝ նոր և չքնաղ տեսարան էր ինքնին Մարկեղղոս, որ բարձեալ բերէր աստուծոյն զապառազինութիւն զբարբարոսին . քանզի սա մի յաղթ և ուղղորդ կտրեալ 'ի գեղուրահերձ կաղնւոյ, և 'ի ձև Ախոյենի ճշգրտեալ զնա, առեալ 'ի նա կապէր հանդուցէր և կախէր զաւարն զամենայն, և յարեալ յարմարէր զայն 'ի ձահ և գեղեցիկ կարգաւ : Ապա իբրև հանդէսն յուղի անկաւ, եւ նա 'ի քառաձիւն, և ինքնին բարձեալ զզէնն՝ 'ի տեղ ախոյանաբեր, գեղեցիկ եւ տեսանելով քան զամենայն փառս յաղթանակին, այնպէս մեծաւ շքով անցանէր ընդ քաղաքն : Նորա զհետ գային զօրականք վառեալք զարդարեալք 'ի զէնս գեղեցիկս, նուագս առեալք մեղեդեաց, և գովատիս յաղթական աստուծոյն և զօրավարին : Զայս օրինակ ապա յառաջ խաղացեալ, և հասեալ 'ի տաճար անդր Փերետրեանն Արամազդայ, անդ անկէր և նուիրեալ սրբէր զախոյեանն . եղեալ նա երրորդ և վերջին զօրավար մինչև առ մեզ՝ որ օրինակ զայս նահատակեալ իցէ :

Քանզի առաջին եկաց Հռոմուլոս, որ

բարձեալ երեր զաւարն զԱկրոնի Կե-նինացւոյ. երկրորդ՝ Կոսսոս Կոռնելիոս, որ զՏողոմնիոսին Տիւրրենացւոյ. և ա-պա յետ սորա Մարկեղղոս այս՝ զԲրիտո-մարտոսի արքային Գաղատացւոց. բայց զկնի Մարկեղղոսին՝ ոչ ոք այլ։ Իսկ ո-րում ածեալ լինէին աւարքն, անուն կար-դան՝ Ֆէ'ռէտրիոս Արամազդ, որպէս կէսք ա-սեն՝ քանզի ածեալ բերէր յաղթանակն 'ի Ֆէ'ռէտրոն՝ 'ի կառս, ըստ Հելլէն լեզուին՝ որ ցայնժամ տակաւին շատ խիստ խառնեալ էր ընդ Լատինացին։ Իսկ որպէս այլք՝ այդ-անուն մականուն գոյ Արամազդայ՝ երրու-ակել՝ Շանթահար. քանզի զհարուածն՝ Հռո-մայեցիք Ֆէռիրէ ասեն։ Իսկ կէսք դար-ձեալ՝ զանուն զայն առնուն 'ի հարուածոց անտի 'ի մարտս. քանզի և մինչև ցայսօր ժամանակի 'ի հալածել զթշնամիսն՝ մի-մեանց խրախոյս կարդան նոքա ասելով տակաւ, Ֆէ'ռի Ֆէ'ռի, այս է՝ Հա'ր և խո-ցեա'ց։ Իսկ զամենայն աւարս՝ հասարակ կո-չեն նոքա Սփօլիա. և մասնաւոր զայսոսիկ կոչեն՝ Օփիմա։ Եւ թէպէտ և ասեն՝ Նու-մայայ Պոմպիլեայ 'ի յիշատակագիրս իւր յիշատակ առնել աւարին և երկրորդ և երրորդ Օփիմայիցն. զառաջնաւարն տրել Արամազդայ Փերետրիոսի, և զերկրորդն Արէսի, և զերրորդն Կուիրինեայ. և 'ի վարձ առաջնոյն առնուլ դահեկանս երեք-հարիւր. և երկրորդին՝ երկերիւր, և եր-րորդին՝ հարիւր. այլ ըստ հասարակ համ-բաւոյն՝ այն են արդոյ և պատուական Օ-

վկայեալքն , զոր 'ի Ճառընտրականաց առաւելին առաւօտէ զօրավարին 'ի զօրավարէ անտի Թըշ-նամեացն՝ ինքնին սպանեալ գնաց : Այլ յաղագս այսոցիկ այսչափ :

Բայց ընդ յաղթութիւն ընդ այս և ընդ գեղեցիկ եղև մարտին յայժ խրախուսեցեալք խնդացին Հռովմայեցիք , զի և 'ի փրկանաց անտի գերոյն նոցա ընծայական ոսկի ա-ռեալ յղեցին 'ի Դելփիս 'ի շնորհակալու-թեան ձօն Պիւթեայ . և յաւարաշխն հանեին բաժինն յաւարացն՝ նիզակակցաց քաղաքաց . և շատ ինչ եւս ետուն տանել նոցա Հերոնի արքային Սիրակուսայ՝ որ բարեկամ և նի-զակակից էր նոցա :

Այլ յետ այսորիկ հօրդանն տուեալ Աննիբաղ յԻտալիա , առաքեցին զՄար-կեղղոս նաւաց հանդիսիւ 'ի Սիկիլիա : Բայց յետ հարուածոյն Կաննեայ , յորում բիւ-րաւորք բազում 'ի Հռովմայեցւոց սատակեալ անկեալ , նուազունք ապրեցան փախստեայ անկեալք 'ի Կանուսիոն , և խիթային եւս այնուհետև գէպ ուղիղ 'ի Հռովմ խաղալ Աննիբաղայ՝ մեծապէս վատթարեալ նորա զօրութիւն նոցա . անդուստ յայնժամ Մարկեղղոս զառաջինն հազար և հինգ հա-րիւր այր առաքէր 'ի յերկրապահաց 'ի պահպանութիւն քաղաքին , և ինքն 'ի հրա-մանէ Սինկղիտոսին եկեալ անցանէր 'ի Կա-նուսիոն . անդանօր առեալ նա ընդ իւր զամենայն փախստեայսն և արտաքոյ պա-տուարացն հանէր զնոսա . ոչ կամէր ամայի թողուլ զզաստան : Այլ սակայն արք

ատալք զօրավարք և կորուսք 'ի Հռոմայե֊ցւոց տապաստ անկեալ էին 'ի մարտս. իսկ Փարթոս Մաքսիմոս Թէպէտ և արդոյ և պատուական յայնժամ 'ի քաղաքին իբրև այր հաւատարիմ և հանճարեղ, սակայն և նորա մեծապէս զգուշաւորութիւն զխնա֊դրաւել 'ի վտանգս՝ 'ի յուլացելոց իմն կարգէ գնէր զայրն և անարի 'ի շահատա֊կութիւնս մրցանաց:

Այլս զմասն ածեալ, որ ըստ չափու քաղցութեանն իւրոյ յանհերկեանութիւն անգղր, այնչափ և մերձոմնեալ էր նա քան զՄարկեղղոս յարձակել 'ի թշնամիսն և վանել, ուստի և 'ի միասին խառնեալ և ներդաշնակեալ զարիութիւն շահատակու֊թեանն Մարկեղղոսի ընդ նախահայեաց զգուշաւորութեանն Փաբեայ, է ուրեք զի միանգամայն զնոսա կարգէին հիւպատոս, և է զի զմին առեալ արձակէին հիւպատո֊սութեամբ, և զմիւսն 'ի փոխանակ հիւ֊պատոսի: Եւ Պոսիդոնիոս պատմէ, եթէ Փաբեայ՝ անուն կարգայլին Վահան, և Մար֊կեղղոսի՝ Սուսեր. և ինքնին Աննիբաղ ա֊սէր, 'ի Փաբեայ զանգիտել՝ իբրև 'ի դաս֊տիարակէ, և 'ի Մարկեղղոսէ՝ իբրև 'ի հա֊կառակամարտէ. քանզի 'ի նմանէ խափա֊նէր 'ի վնասելոյ, և 'ի սմանէն՝ վնասէր:

Բայց յետ յաղթութեանն Աննիբաղայ, իբրև աստ և անդ ցան և ցիր նորա զօրա֊կանք յանդուգն գնային և արձակերպառեան, անդուստ Մարկեղղոս գխմէր անկանէր 'ի վերայ երասանակարձակ վարատելոցն 'ի բա֊

նակէն և սապատակաւորաց 'ի գաւառին ․ Հարկանէր սատակէր 'ի նոցանէ, և նուաղ առնէր զզօրութիւնն Աննիբաղայ ։ Ապա խաղայր գնայր յօգնութիւն Նէապօլսոյ և Նոլայի, և առաւել յանդուգնանէր զՆէապօլսեցիս, որք և անքակք իսկ էին նորա յուխտէն Հռովմայեցւոց ։ Բայց 'ի Նոլայա գտանէր նա հերձեալ զծերակոյտն 'ի ժողովրդոց՝ որ Թիկունս տային Աննիբաղայ, և ձեռնհաս չէր ծերակոյտն սանձակոծել զնոսա ։ Քանզի և էր իսկ անդամնօք այր ոմն 'ի զօրմէ աւագաց քաղաքին և ուժով անհնարին, Բանդիոս անուն նորա ․ սա այս Բանդիոս մարտ եղեալ մեծապէս քաջութեամբ 'ի Կաննայ և զբազում տառապանս արկեալ 'ի Կարքեդոնացւոց, ապա 'ի խուռն բազմակոյտ դիականցն գտանէին զնա, որջ ծածկեալ զմարմինն նետիւք և վիրօք ․ որպէս զի և զարմացեալ հիացեալ էր ընդ նմին Աննիբաղ ընդ այնչափ քաջութիւն առն ․ ուստի և առեալ ոչ միայն յազատութիւն արձակէր զնա առանց փրկանաց, այլ և ընծայաւոր եղեալ նմա՝ մտերմութեամբ զաշն կռէր ընդ նմա ։ Իսկ Բանդիոս 'ի փոխարէն երախտեացն մեծապէս հակամիտեալ յԱննիբաղ՝ անդապէս ոյժ տուեալ յայնժամ խուժանին յապստամբութիւն դրդէր զնոսա ։

Յայսր ամենայնի վերայ ոչինչ արժան համարեցաւ Մարկեղղոս 'ի մահ մատնել զայնպիսի ականաւոր այր, որ մարտս մեծամեծս դիմադրաւ ընդ Հռովմայեցւոց

մերեալ խակ էր նա. այլ քանզի բնութեամբ մարդասէր էր նա և 'ի քաղաքավարութեան խորում հնազանդեալց էր յանդգնացանել և ըղ-պատռուատեկրս, իբրև յաւուր միում ողջու-նեաց զնա Բանտիոս, հարցանէր Մարկեղ-ղոս՝ ո՞ ով իցէ այրն. նա 'ի վաղնջուց իսկ քաջ ճանաչէր զայրն, սակայն զի ժամ խնդրէր և պատճառս զգանելիք անկանել ընդ նմա. իբրև ասաց՝ եթէ ինքնին Լու-կիոս Բանտիոսն եմ, խնդաց Մարկեղղոս, և զարմանացմամբ եւս ասէր. « Թերևս դու ինքնին Բանտիոսն իցես, զորմէ բազում զրոյցք են 'ի Հռոմ քաղաքի վասն նահա-տակութեանցն նորա 'ի Կաննեան մրցանսն. և զի միայնակ դու ոչ լքեր թողեր զՊաւ-ղոս զԷմիլիոսն՝ իշխան անձնապահապետ նմին արժանացեալ, և շատ ինչ որ ընդդէմ նորա 'ի նետաւեցն առեր 'ի քոյին մարմին »: Իբրև նա կրկնեաց՝ եթէ քաջ նոյն ինքն Բանտիոսն եմ, և բանայր եւս ցուցանէր նմա զասպիս վիրացն, ասէ Մարկեղղոս. « Եւ առ ի՞նչ ապա, հաւատարիմ այնչափ զառ-մեզ քոյին բարեկամութեան տուեալ քո, ոչ վաղվաղակի առաջի մեր ընծայեցար դու: Թերևս կարծեցո՞յք մեզ քեզ չարակ-նեայք ոմանք. և չգիտացե՞ք մեզ փոխա-րինել առաքինութեան բարեկամացն, ո-րոց և Թշնամիք ինքնին շուք ընծայեցին »: Զայս ինչ մտերիմ սիրով խօսեալ և կա-լեալ զաջոյն, ընծայ նմին 'ի ներքս մա-տուցանէր երիվար մի մարտիկ, և հինգ հա-րիւր եւս դրամանկշիռ արծաթոյ: Եւ յայն-

մինչ ապա ցանդ առընթեր Մարկեղղոսի կայր Բանդիոս նիզակակից նորա, և մեռան և գուշակ անապաշաւ լինէր հակառակ կողմանն։

Ցորոց շատք ոմանք խորհուրդ հաստատեցին յայնժամ՝ 'ի դաւաճանել Հռոմայեցւոց ընդդէմ Թշնամեացն՝ յառաջի առնուլ զպաղեստամնաղս նոցա. վասն որոյ և Մարկեղղոս 'ի ներքս 'ի քաղաքին զզօրականսն դասաւորեալ, զաղխսն առեալ կուտէր առ դրունսն, և պատուէր ետ տայր 'ի ձեռն քարոզին առ քաղաքացիսն Նովլայի՝ մի հուպ լինել ամենեւին 'ի պատուարսն։ Այսպէս իբրև զէն և ոչ մի յակն ուրեք արկանէր անդուստ Աննիբաղ, խրախուսեալ մերձ խաղալ անկարգ հրոսակաւն. համարելով՝ եթէ զաղմկաւ և զխռովութեամբ գայցէ քաղաքն։

Արդ ապա յայնժամ Մարկեղղոս բացեալ զդրունն՝ կազմութեամբ զիմէր արտաքս համագերձ կորովի այրուձիովն, և յարձակեալ 'ի Թշնամին՝ մարտ եդեալ կռուէր։ Ջկնի և հետեւակազօրն հորդան տայր ընդ դրունն երկրորդ. մինչդեռ անդ Աննիբաղ խուճապեցաւ և բաշխէր զատուանէր զգանակն 'ի դիմի հարկանել կրկնակի հրոսակին, բանայր և դրունն երրորդ և միացուած զօրականին խուժեալ արտաքս, այնպէս յամենայն կողմանց 'ի վերայ անկանէին Թշնամեացն. նոքա շփոթեցեալք ընդ անկարծ դիպման, տագնապեցան զդէմ ունել կռուոզհետ միմեանց յարձակմանցն. և այնպէս այս առաջին նուաղ տեղի ետուն Հռոմայեցւոց՝ զօրք Աննիբաղայ, և ահաբեկք և

խոցք և վիրաւորք ընկրկեցան 'ի բանակետեղ իւրեանց: Եւ ասեն՝ արանց աւելի քան զհինգ հազարաց ստապատ անկեալ 'ի նոցանէ. իսկ 'ի Հռոմայեցւոց ոչինչ աւելի քան զհինգ հարիւր: Այլ Լիվիոս ոչինչ այնպէս մեծ ասէ զհարուածն և զթիւ սպանելոցն. սակայն և վկայէ եթէ քաջ փառս մեծապէս այնուհետև ժառանգեաց Մարկեղղոս. և Հռոմայեցիք ինքնին յետ մարտին այնորիկ՝ 'ի սրտաբեկ աղէտիցն ողն առեալ քաջալերեցան, իբրու որ ոչ անձանելի ուրեմն իցէ և անպարտանելի թշնամին՝ ընդ որում մարտ եղեալ կռուէին:

Զայնու ժամանակաւ 'ի մեռանել միոյ 'ի հիւպատոսացն, շուք տուեալ Մարկեղեայ ժողովուրդք՝ կոչեցին զքաղաքականն փոխանորդել զմեռեալն, և յակամայ կամս աւագանւոյն յերկարեցին զընտրութիւնն, մինչև դարձաւ նա 'ի բանակէն. և առհասարակ ամս քուէայս արկեալ ընտրեցաւ 'ի հիւպատոս: Այլ 'ի ժամուն որոտ հանեալ աստուծոյ՝ ձախողակի զբանն համարեցան քահանայք. այլ յահէ ժողովրդեանն ոչինչ յայտնի զդէմ կալան ընտրութեանն, բայց Մարկեղղոս անձամբ անձին հրաժեշտ տայր 'ի հիւպատոսութենէն: Սակայն յինքն զզօրավարութիւնն առեալ՝ և փոխանակ հիւպատոսի անուանեալ՝ անդրէն 'ի Նոլա դարձ առնէր 'ի բանակն, և անդ հարկանէր վանէր զկուսակիցսն Փիւնիկեցւոյն: Զօրավիգն նոցա կացեալ Աննիբաղ՝ ձայն տայր Մարկեղղոսի 'ի

ճակատամարտ պատերազմի․ իբրև հրաժարեցաւ Մարկեղղոս, և Աննիբաղ որ եար բազում 'ի բանակէն արձակէր 'ի պէտս հանճարոյ պաշարոց աներկեան 'ի մարտէն, եւ ապա արտաքս Մարկեղղոս և անկանէր 'ի վերայ իւրոցն հետևակօքն՝ զորս և վառեալ իսկ էր և վարժեալ 'ի տէգս երկայնատեգս նաւամարտից՝ շեշտ 'ի նպատակն հարկանել խոցել 'ի բացուստ զԿարքեդոնացիսն, որք տեգընկէցքն չէին՝ այլ սուսերս իմն վարէին նոքա կարճս հարկանել միայն 'ի մօտոյ․ ուստի և որք միանգամ յայնժամ 'ի վէգ եկին ընդ Հռոմայեցիսն՝ Թիկնադարձոյցք եղեն և 'ի փախուստ խուճապեցան․ և գիտապաստ անկանէին յայնժամ ոգիք հինգ հազար․ արկին տապաստ և ըղձորս 'ի փղաց, և զերկուս ևս այլ 'ի նոցանէ կալան կենդանիս։

Իսկ որ մեծապէս էր յայնժամ, զի և յաւուրն երրորդի յետ մարտին՝ այրուձի յԻբերաց և 'ի Նումադացւոց աւելի քան երեք հարիւր մարդիկ լքեալ զԿարքեդոնացիսն, ինքնակամ անցանէին առ Հռոմայեցիսն․ և երբէք այնպիսի ինչ ցայնվայր չէր տեսեալ Աննիբաղայ․ որ Թէպէտ և յայլակրօնից ազգաց խմբեալ զխուժադուժ բանակն, սակայն և հարուստ ժամանակ այնպէս ցանգ համաշունչ և միակրօն պահեաց զնոսա։ Եւ ապա նոքա ցանգ հաւատարիմ կացին մնացին առ Մարկեղղոսի, և որ զկնի զօրավարացն։

Բայց Մարկեղղոս կարգեալ 'ի հիւպա-

տոս երրորդ անգամ, նաւելով 'ի Սիկիլիա. քանզի 'ի յաղթողութեանց մարտիցն Աննիբաղայ դարձեալ միւսանգամ քաջալերեցան Կարքեդոնացիք նուաճել զկղզին. քանզի և Սիրակուսացիք յայնժամ դաշնակացեալ էին յետ մահուն Հերոնիմոսի բռնաւորին. ուստի և Հռոմայեցիք յառաջագոյն արձակեալ խաղ էին անդանօր զօր և զօրավար զԱպպիոս: Արդ զօրուն այնմիկ առաջնորդ կացեալ Մարկեղղոս, եկին յայնժամ անկան յասս նորա քաղաքսն 'ի Հռոմայեցւոց անտի արք վաճառականք. որք 'ի կանխեան մարտին ընդ Աննիբաղայ՝ կէսք փախուցեալք և կէսք դարձեալ 'ի գերութիւն մատնեալ քաղաքսն յայժ, զի և թըուէր ոչ էինչ բաւել յայնժամ Հռոմայեցւոց 'ի պահակերութիւն պատառաւորացն. 'ի վերայ այսր և մեծախորհուրդք Հռոմայեցիք և մեծանձինք՝ յանձին չկալան փրկանաւորել զգերիսն՝ զոր դիւրագնի տայր նոցա Աննիբաղ. և փոյթ չարարին՝ եթէ 'ի մահ վարեսցին կամ թէ արտաքոյ խաղալեօք վաճառականուր լինիցին. իսկ զնազաւորս զերծեալսն 'ի նոցանէ արձակեցին 'ի Սիկիլիա՝ հրաման տուեալ երբէք մի դառնալ յԻտալիա՝ 'ի մղել մարտն պատերազմի ընդ Աննիբաղայ:

Արդ սոքա վտարեալք խուռն դիմեալք յոտս Մարկեղեայ և 'ի ծունկս անկեալ պաղատէին արտասուօք, զի չքավ միւսանգամ կալցեն նոքա տեղի 'ի զինուորութեանն. խոստումն կամէին ցուցանել արդեամբք,

եթէ քան յանուրն վաստութենէ՝ առաւել 'ի ձախողակ բախտէն Թիկնադարձոյցք եղեն նոքա յայնժամ ։ Աթոռակից Մարկեղղոս հիւպատակցելոյն եղեալ՝ գրէր առ Սենեկղետոսն ; խնդրէր 'ի նոցանէն լինել միշտ զգակատարութեան զօրականներն խորոյ ։ Իսկ Սենեկղետոսն խելք չառ 'ի խորհուրդ. եմուտ վասն խնդրոյն Մարկեղղեայ, եւ վճիռ՝ եթէ Հռոմայեցւոց չէին ինչ պէտք արանց այգոցիկ անարժանից՝ 'ի գործս քաղաքին. Իսկ թէ Մարկեղղեայ կամք իցեն 'ի գործ դնելոյ վարել, ոչ տայցեն դուքա 'ի զօրավարէն ոչ պատակ, ոչ մրցանակ ինչ զքաջութեանն ըստ պատերազմական օրինին ։ Բայց Մարկեղղոս 'ի խոր խոցեալ ընդ վճիռն, 'ի գարձին յետ Սիկիլեան մարտին բողոք բառնայր ընդդէմ Սենեկղետոսին՝ զի չէր նմա զինուորեալն 'ի շնորհս իւրոց մեծամեծ և բազմաց էն նահատակութեանցն՝ դիւր առնել աղէտից այնչափ բաղձանօք քաղաքացւոցն հիւպատելոց ։

Իսկ յայնժամ նա 'ի Սիկիլիա հաստատահաստատութիւն կրեալ յԻտալականութեան զօրավարէն Սերվիլիոսեանց, որ կուսակից Կարքեդոնացւոց՝ թեկն ածէր գրաւել զնորդեն, և բազում Հռոմայեցիս տապանեալ էր 'ի ատեանին Լէոնտացւոց, պաշարմանն ածեալ բուռն զօրութեամբ առաւել զԼէոնտացւոց քաղաքն. մինչ և ոչ մի հաստացանէր Լէոնտացւոց, միայն 'ի հաստատածս գանելոց և 'ի մահ մատնելոց զդատաւորսն 'ի զօրականներն ։ Առ Իպպոկրատես հաչակ

հասեալ 'ի Սիրակուսաս՝ եթէ 'ի սուր սուսերի մաշէ Մարկեղղոս զԼեոնտացւոց զերիտասարդս , ինքն անձապարտեայց խաղաց 'ի վերայ Սիրակուսացւոցն՝ մինչ դեռ նոքա ահաբեկ էին 'ի համբաւոյն , եւ տկարեայց . եւ ապա Մարկեղղոս շուրջ պատէր հանդերձ ամենայն բանակաւն 'ի Սիրակուսաս , եւ վայր մի 'ի բացեայ բանակ հարեալ՝ հրեշտակս առձակէր 'ի ներքս՝ առաւել նոցա ծանօթս հաւաստի վասն իրացն Լեոնտացւոց : Սակայն օգտեալ եւ ոչինչ , եւ հաւատս նոցա չընծայեալ Սիրակուսացւոցն , (քանզի հզօրացեալ էր անդ Իպպոկրատէս) , եդ 'ի մտի հրաման ընդ ծով եւ ընդ ցամաք ածել 'ի վերայ քաղաքին . հրաման տայր Ապպիոսի խաղալ յառաջ հանդերձ հետեւակազօրուն , եւ ինքն առեալ ընդ իւր նաւս վաթսուն հնգաթիոց , յորս ամենայն ազգ զունակ զանազանակ զինուց եւ ամբարութիւնն նետից . առեալ ընդ իւր եւ հաստահարուստ Բազման կառուցեալ 'ի վերայ ութ նաւուց զուգապակցելոց , այնպէս խաղայր մարտնչէր 'ի պատուար անդր . խրախուսեալ 'ի մթերս պատրաստ կահուց կարասեաց , 'ի մեծ կազմած պատրաստութեանն , եւ 'ի գեղեցիկ համբաւ անձինն :

Բայց մեծապէս պատրաստութեանն յայնժամ երբեք ինչ չառնէր ոչ Արքիմիդէս եւ ոչ Արքիմիդեայ մեքենայից հնարիմացութիւնքն . յորս եւ պարապէր այրն ոչ իբրեւ 'ի գործ արժանի գեղեցիկ ջանիցն , այլ բազմագոյն մասամբ իբրեւ 'ի զբօսանս

խմն Երկրաչափականին խորոյ ։ Քանզի և անդադար 'ի մերուստ պատուաստիլեալ Հերովնի արքայի և համանեցուցեալ խակ էր դնա, զի զարուեստն զնոր զայն և զհանճար յիմանալեաց անտի դիտողութեանցն՝ 'ի մարմնականսն դարձուցեալ, այնպէս ինչ ըղդալիս կենդանագործութեան առնեալ երևեցուցէ աշխարհի ։ Քանզի առաջինն զառակս զերեցին այսմ և համբաւաւորեինչ Մենեքենականին կացին Եւդոքսոս և Արքիտաս՝ զարդ 'ի նուրբս բերելով Երկրաչափականին, և գործարանաւոր և զգալի օրինակօք հաստատելով զառաջարկութիւնն զժուարիմացն 'ի ձեռն բանական և գործնական ապացուցութեն ։ ըստ որում և զոր յաղագս երկուց միջնոցն զառաջարկութիւնն խոր, և զոր կարևոր վասն այլոց բազմաց երկրքին գտեալ լուսաբանեցին 'ի ձեռն գործարանաւոր կազմածոց՝ գործիս խմն միջնագիծս յարմարելով 'ի կոր գծից և 'ի հատածոց ։ Այլ յետ այնորիկ խորև Պղատոն պատմեալ հակառակ ամբաստանէ նոցա՝ խորտ որք ապականեալ եղծանէին զլաւն Երկրաչափականին, որ յանմարմնականաց անտի և յիմանալեացն 'ի վայր խոնարհեալ յզգալիս, 'ի գործ վարէր զմարմին բազմապիտան և վաստակաբեկ տաժանմանց, յայնժամ ապա անուանց զատեալ Մեքենանականն և որոշեալ յԵրկրաչափականէն և ընդ զինուորական արուեստն զասեալ՝ հարուստ մի ժամանակ այնպէս խոտեցան յիմաստասիրականէն ։

Այլ Արքիմիդէս ասեալ երբեմն գրեաց առ Հերոնի արքայ իւր ազգակից և բարեկամ, եթէ՝ Զամի մի ուժով՝ մարթի նմա շարժել զծանրութիւն որ և իցէ. և խրնդայր Արքիմիդէս (որպէս ասեն) ընդ հաւատոյս մեծ բանին իւրոյ. և համարձակէր եւ ասել նմա, զի եթէ էր 'ի միջի այլ աշխարհ, ինքն անցեալ 'ի նմա, ձեռն 'ի գործ՝ դրդուեցուցանէր զայս աշխարհ: Հիացեալ Հերոնին՝ աղաչէր արդեամբք երեւեցուցանել զբանն, և 'ի գործնաբեայ ուժոյ շարժել մարմին մեծ: Յայնժամ Արքիմիդէս գնեալ նաւ մի բեռնաբարձ յաղթ յարքունեաց անուանի՝ զոր 'ի ցամաք քարշել էր հնար մեծաւ աշխատութեամբ և բազմաց ձեռօք, և լցեալ զայն մարդկամբք և սովորական ծանրութեամբն, ինքն նըստաւ 'ի բացէ. և շարժեալ ոչ բռնութեամբ՝ այլ մեղմով իւրովք իսկ ձեռօք ծայր մի զբազմաճախարական մեքենայի, այնպէս ձգէր գնացուցանէր զնաւն հանդարտիկ և անընդոստ, իբրու եթէ ընդ ջուր անցեալ գնայցէ: Ընդ յապուշ հարեալ արքային՝ մանաւանդ լինէր ընդ զօրութիւն արուեստին, և թախանձէր զԱրքիմիդէս մեքենայս կազմել նմա 'ի պէտս յարձակման մարտից և պաշտպանութեան յամենայն ազգս պաշարմանց: Այլ մեքենայից այնոցիկ չեղեն պէտք Հերոնին՝ որ անպատերազմ և 'ի մեծապէս յանդորրու անցոյց նա զկեանսն. իսկ յայնժամ պիտանացուք յոյժ եղեն Սիրակուսացւոցն այն կազմածք,

և 'ի միասին ընդ այնոսիկ ճիգնին և ճար-
տարապետան գլխովին ։

Արդ իբրև համամայեցեք ընդ ծով ընդ
ցամաք այնպէս գայլթ եռուն 'ի վերայ
քաղաքին, մինչև բեկան Սիրակուսացիք՝
և յափշտակութիւն հարեալք վերջոսնեցան 'ի
գիմի հարկանել սաստիկ հրոսակին ։ Բայց
անդադար երբև զիւր մեքենային յառաջ
ձգեալ Արքիմիդէս կարգեալ դասեաց ,
անդ էր աղա սեսանել զաղդ աղդ տարա-
փոյ նետից սեղալ 'ի վերայ հեռաւակայ զօ-
րուն , և անարդի մնմայ որձաքարայ հոսել
'ի վայր բռնութեամբ յահագին բռնկեւն ,
որպէս զի և բաւական չէր մարդ բերել
սաստիկ թափոյն և կշռոյն , և անձին պաշտ-
պանել ․ այլ տապալել յերկիր առհասա-
րակ կործանէին հարեալքն , և ճակատուն
կարգք խառնակեալ շփոթէին ։ Այլս և
'ի նաւաց վերայ յակամ թօթափել ձգէ-
ին երկայնէին 'ի պատուարացն զերանք
յաղթք ․ զկէսս 'ի նաւացն ջրասոյզ առ-
նէին 'ի սաստիկ բռնութեանն ճնշելոյ զնո-
սա 'ի բարձանց անտի ․ և զկէսս՝ յառաջա-
կողմանէ նաւացն առեալ 'ի վեր ամբար-
ձեալ երկաթի կարթիւք կամ ցռկօք ա-
մանդիք 'ի ձև կռունկաց խորդեց , ծովասոյզ
առնէին 'ի խեղանց կողմանէն ։ Դարձեալ և
հանդիպաձիգ մեքենայք կարթեալք 'ի
մէջ անդր նաւացն և պտտեալ բռնու-
թեամբ՝ եկեալ խորտակէին նաւքն ընդ
ժայռն և ընդ պարեխսն՝ որ ընդ պատուա-
րօքն ․ 'ի միասին և նաւաստիքն սատակապէս

հարեալք Չաղկեդեն։ Անդանօր առեալ և 'ի նաւաց անտի նաւ մի յանկարծ, անսխալ ահաւոր, 'ի վեր առեալ 'ի ծովէն ասա անդ երերեալ տատանէր ընդ օդն 'ի գիլ և 'ի գիլ, մինչև 'ի բաց զմարդիկն արկեալ բռնութեամբ և պարապաքարեալ 'ի մեծ հեղասաման, ինքն ապա Թափուր գայր ընդհարկանէր խորտակեալ ընդ պատուարս պարսպացն. կամ Թէ 'ի բաց զերծեալ 'ի ճիրանացն՝ այնպէս 'ի ծովն ամայր։

Իսկ և ընդդէմ հաստատահարուստ Բաբանին, (զոր յառաջ խաղացուցանէր Մարկեղղոս 'ի վերայ նաւացն աղխաղխելոց, և անուն կարգային մեքենային՝ Սամբուկէ, այն է՝ Սրինգ, զնմանութիւն բերեալ զձևոյ զերաժշտական գործւոյն) մինչդեռ 'ի բացեայ ևս էր 'ի պատուարէն, անդուստ վէմ մի բարանաքար տասն տաղանդաց կշռոյ արձակեցաւ ընդդէմ. ապա և միւս ևս, ապա և երրորդ վէմ. և հոսեալք 'ի վերայ բռնութեամբ 'ի մեծ բոմբիւն և 'ի սաստիկ ղողորդիւն մեքենային՝ հարեալ փշրեցին ըղխարիսխն. և այնպէս սասանեալք քայքայեցան աղխք նաւացն, որպէս զի 'ի խուճապ տագնապի յայնժամ վարանեալ Մարկեղղոս փութապէս անդի տայր, և հետևակազօրուն ևս հրաման արձակէր չուել 'ի բաց [4]։ Ապա խորհուրդ հաստատեցին Հռոմայեցիք՝ գիշերի եթէ հնար իցէ՝ յառաջ խաղալ մատչել ընդ պատուարօքն. և քանզի զօրութիւնքն Արքիմիդեայ ուժեալք բռնութեամբ 'ի հեռաստան անդր, ար-

զերդ անգործք նաւավարացն հարուածքն՝ չուանելով զձիգ անվրիպակեան:

Սակայն 'ի վաղնջուց իսկ՝ որպէս հաւանեալն եմ՝ կազմեալ էր Արքիմիդէս և մեքենայս այլ համաչափս առ ամենայն քաղաքան վայր. այլ և փոքրիս կարծս, և զերանս ոչինչ յաղթս. և 'ի կռուս և 'ի խուռն ծերպս կարգեալ էր և Կարիճս իմն անուանեալ՝ մատամբս, որ հարեալ խոցէին ըզմերձեցեալսն՝ աներևակք 'ի թշնամեաց: Այլս իբրև մերձեցան նոքա 'ի պարիսպ անդր և քաջ յապահովս կարծեցին զանձինս, անդադար 'ի ներքոյ և յայնժամ հարան նոքա 'ի տեղատարափ ամբաւակից նետից և 'ի վիմաց հոսելոց 'ի վերայ գլխոց. իբրու եթէ առ հասարակ 'ի կողմանց կողմանց պարսպին մրրիկ նետահար յուզեալ շեշտ կշիռ 'ի վերայ նոցա. իբրև խուժառեցան ընդ կրունկն՝ դարձեալ մրրիկ այլ նետից և փոքունց արձակեալ 'ի հեռաստանէ ուժեր զնոսա. և բազումք յոյժ 'ի նոցանէն անդադար տապաստ անկանէին, և շատք ևս 'ի նաւաց ջախջախեալ խորտակեցան. և Սիրակուսացւոցն զեան և ոչ մի կարացին հասուցանել նոքա. քանզի Արքիմիդէս շատ ինչ 'ի մեքենայից անտի իւրոց կարգեալ կազմեալ էր 'ի վայրս ամրածածուկս պատուարին: Եւ քանզի 'ի ծածուկ յաներևոյթս հարեալք՝ 'ի բիւրուց աղէտից պաշարեցան, թուէր իմն այնպէս Հռոմայեցւոց՝ եթէ համբուն այնուհետև աստուածամարտք կռուեսցին: Ցայսր ամե-

նաւին վերայ ողջանդամ վերծեալ Մարկեղղոս, յերգ առնեալ զծաղրաբանութեան իւր և զմեքենայագործութեան, ասէր այսպէս. « Իսկ ո՛չ ապա տեղի տացուք մեք մարտնչել կռուել ընդ Բրիարէոսի Երկրաչափիս ընդ այդմիկ, որ ծովամոյն զմեր նաւսն տաւղեալ այնպէս խաղ առնելով կորանեալ ընկրկեալ զմեզ։ Եւ արդեօք զաս 'ի վերայ կայ և քան զառասպելեալն Հարիւրաձեռնեանն, միահեծան ընդդէմ մեր այնչափ տարափս արձակելով նետից »։

Քանզի և արդարև 'ի ժամանակին Սիրակուսացիք առ հասարակ՝ իբրև մարմին մի կարգեցան կայցին՝ կազմածոցն Արքիմիդեայ, իսկ որ ոգւոյն կենդանութիւն և շարժումն տայր անդամոյն, էր ինքն հոգի միակ. քանզի յայնժամ նոքա անգործ 'ի բաց զայլն ամենայն եդեալ զզէնսն, զնորայսն և եթ վարեցին 'ի գործ 'ի պաշտպանել և 'ի հարկանել։ 'Ի վերջէ ապա տեսեալ Մարկեղղոս ահաբեկ յոյժ զՀռոմայեցիսն, զի և 'ի տեսանել միայն զուզնաքեայ առասանի կամ փոքրիկ չերտի կարկառելոյ ընդ պարսպաւն՝ անդէն աղաղակ բարձեալ, եթէ մեքենայ ինչ արդեօք անդանօր շարժեսցէ Արքիմիդէս ընդդէմ նոցա, թիկնադարձ ոյքք 'ի փախուստ խուճապէին. խորհուրդ խորհեցաւ բնաւ իսկ այնուհետև 'ի բաց կալ 'ի մարտից և յարձակմանց, և միայն ժամանակեայ պաշարմամբ ունել զքաղաքն։

Բայց Արքիմիդէս այնչափ իմն ազնուա-

կամ 'ի միտս և 'ի հանճար, և բաղձանհա-
րուստ 'ի նկատողութեան, զի և հանճարա-
ւորաց գեղեցիկ ժառանգեաց նա՝ ոչ
ընտրողականին, այլ զարտասանողին զորա-
ցես հանճարոյ. և ինչ մի արժան չհամա-
րեցաւ թողուլ արձանագրութեանց վասն
ձեռնարկերտացն. առ ծառայականս ունե-
լով զՄեկենականին ճարտարութիւն
և զամենայն զարուեստ զմխիթարիցն, ընդու-
նել պատուաւորեալ պատուակալ. եկաց նա
այնոցիկ՝ որոց գեղն և շուք փառացն ան-
խառն է 'ի կարգեաց, և որոց և ոչ մի ինչ
համեմատական ոչ է նոցա. և յորս ել և ելը
ատենեն նիւթն և առաքինութիւնն, մին
վասն մեծութեանն և գեղոյն, և միւսն՝
վասն հաստատութեան և անխախտ խելամտու-
թեանն։ Քանզի և չէր զատանել յՆերկայա-
չափականին խնդիրս զժողովրդականն և խո-
րինս՝ պարզաբանեալ ես և հեշտընկալ ոճով
բանիւք արձանագրել և լուսաբանել՝
իւրով զՄարկելլեանն. զոր կէսք ընծայեն
գեղեցիկ բուսոյ բարուց հանճարոյն նորա,
և կէսք զարձեալ՝ առատաձեռն հրահանգ նորայն
Ջանիցն՝ 'ի գէսմ ընծայել զամենայնն իւ-
րու եթէ անվատասանաւ գործել և հեշտին։
Քանզի և հետամուտ ըստ առաքինութեան
ինչ խնդրոյ, զառաւելին ոչինչ արդեօք ան-
ձամբ անձին զատանիցէ. այլ ապա միան-
գամ ուսանել զնորայն, անդէն և զանձն
այնուհետև բաւական կարծեցէ առ 'ի
նոյն. այսչափ նա ընդ արտահետ և ընդ գիւր
ուղի առնել ածէ յառաջադիմութիւն իւր։

Ուստի և ոչինչ անհաւատալի էին, զոր զնմանէն պատմեն՝ եթէ ցանկ նա 'ի մտե_րիմն և 'ի բնակակցութեան Սիրէնայէ իւրմէնէ յանկուցեալ և զմայլեալ, և հաց ուտել անգամ մոռանայր, դադարեալ և խնամ յինչ չածէր մարմնոյն. ուստի և բռնի բա_զում անգամ ածեալ նա օծանել իւղով և լուանալ 'ի բաղանիս, ձեռն իւր երկրաչա_փական հոլովանագրեր 'ի մոխրատեղւոջն. և ասեալ մատամբքն գիծս ևս գծէր ընդ օ_ծութիւն մարմնոյն. այնչափ իմն ածեալ ձգէր նա 'ի մեծէ հեշտութենէն, և ար_դարև զՄուսայիցն մոլեալ զմոլութիւն։ Եւ թէպէտ և բազմաց և գեղեցիկ հնարի_մացութեանց գտօղ, ասեն՝ եթէ աղա_չեաց նա զբարեկամսն և զազգականսն 'ի մահուն կանգնել 'ի վերայ շիրմին ոչինչ այլ՝ բայց գլան մի և 'ի վերայ գնդոյ, ար_ձանագրեալ զհամեմատութիւն աւելա_ւորութեանն ընդ հաստատութեան պարունակողին և ընդ պարունակելոյն։ Արդ այսպիսին որ գոլով Արքիմիդէս, եւրոպացւոցն անպարտելի պահեաց զանձն և զքաղաքն իւր։

Իսկ մինչդեռ 'ի պաշարման կայր Սիրա_կուսա, խաղաց գնաց Մարկեղղոս և բռնա_զօրութեամբ առնոյր զՄեգարա քաղաք վաղնջուց զՍիկիլիացւոց. հասեալ կալաւ յԱկիղա և զբանակեալ զԻպպոկրատեայ, և տապաստ արկանէր զնորա աւելի քան զութ հազարս զօրականն՝ անկեալ 'ի վերայ մինչդեռ նոքա պատնշափակ լինէին. դի_մեաց ապա և յաւարի առնոյր զսահմանս

բարուոմ զՍինկղիտացւոց, և շատ եւս 'ի քաղաքաց տապաստամեծացոյց 'ի Կարքեդոնացւոց. և յաղթական լինէր յամենայն 'ի մարտս պատերազմի:

Ապա յետ ժամանակաց իրիք մերձակալ 'ի գերութիւն մատնեաց նա զԴամիպպոս Սպարտացի նաւեալ 'ի Սիրակուսայ, զհետ եղեն Սիրակուսացիք փրկանաւորել զայրն: Մինչդեռ առէպ առէպ վասն տուցին իրաց պայմանիւք անկանէին նոքա ընդ միմեանս, գէտ աչքն կալեալ Մարկեղղոս աշտարակ մի թողեալ յանհոգս, ուր և ընդ հեշտին պատուարն պարսպաբար մարթէր 'ի վեր առնուլ զօրականս: Արդ իբրև բազում անգամ մերձեալ յայն աշտարակ խօսել վասն բանիցն այնորիկ ընդ պաշարեալսն՝ մանր զննեաց նա զվայրն և խելամուտ լինէր բարձրութեանն, համգերձեաց կազմեաց սանդուղս յարմարաւորս, և ժամ գտեալ՝ յորում Սիրակուսացիք տօն կատարէին զԱրտեմեայ, և առ հասարակ ընդ գինեբրուս մտեալ էին և խրախացեալք, նա ոչ միայն զաշտարակն հասեալ կալաւ գաղտ յամենեցունց, այլ և մինչև ծագեալ առաւօտն՝ զինու զարգունոյր շուրջանակի և զպարիսպն, և խրամատէր եւս գուռն մի զԵքսապիլեայ: Իբրև իրազգած քաղաքացիքն լինէին՝ խռովեալք անհնարին աղմկաւ, նա անդէն յամենայն կողմանց միանգամայն հնչեցուցեալ զփողսն, այնպէս ահաբեկ արար՝ զի և յայսկոյս յայնկոյս 'ի փախուստ խուճա-

պեալ նոցա, համարեցան եթէ և բնա զամենայն կողմն քաղաքին թշնամիք կալեալ իցեն։ Սակայն յականատեսի կայր տակաւին կողմն քաղաքին՝ մեծ առաւել և պերճեցին և քաջամուր, որում անուն կարդան Աքրադինա. կայր նա անառիկ՝ քանզի և էր իսկ պարսպապատեալ զատեալ ՚ի քաղաքէն. զկէս նորա կոչէին՝ Նոր քաղաք, և զկէսն՝ Տիւքէ։

Իսկ և այս եղև, ՚ի ծագել առաւօտուն. մտանէր Մարկեղղոս ընդ Եքսապիղեան ՚ի ձայն ցնծութեան առհասարակ զօրացելոցն։ Այլ ասեն՝ ՚ի բարձրաւանդակէ շուրջ զանկն յածեալ Մարկեղղոսի ընդ մեծութիւն քաղաքին և ընդ գեղն՝ շատ ինչ արտասուել ախտակցաբար վասն հանդերձելոցն, զի վայրկեան մի ևս կերպարանս փոխ համանէր նմա լինել յաւարառու զօրականէն. քանզի և ոչ ՚ի զօրավարացն ոք յայնժամ ժամեցաւ ընդդէմ կալ զօրականացն, որ ձայն բարձեալ խնդրէին աւարել զքաղաքն. էին էին և ոմք հրոյ ևս ճարակ առնել խնդրէին զնա և հիմն ՚ի վեր տապալել։ Բայց Մարկեղղոս ոչինչ յանձն առեալ, յակամայս և բռնի թոյլ ետուր նոցա աւարել միայն զինչս և զգերիսն, պատուէր տուեալ ՚ի վերայ ածել մի ինչ ամենևին մերձենալ յազատ մարմինս, մի սպանանել, մի հարստահարել, և մի զոք գերել ՚ի Սիրակուսացւոց անտի։ Այլ թէպէտ և այնպէս պերճեցին չափաւորութեամբ զնոյն Մարկեղղոս, ՚ի վերայ այսր և ա-

զետս անձնուրին համեմատեցաւ զփիրս քաղաքին. և յայնչափ մեծի խնդութեանն քաշ 'ի գետնս բերէր նա զզօրով պատին և զզաւն՝ զի այնպէս 'ի սուղ ժամու անշքացեալ խորտակեցաւ Սիրակուսա 'ի գեղեցիկ փառաց երանութեան իւրոյ։ Քանզի ասեն՝ եթէ փառաւորութիւնք՝ զոր յայնժամ առաւելցին, չէին պակաս քան զառ և զաղաւաղ՝ զոր առա ժողովեցին նոքա 'ի Կարքեդոնի. քանզի և յետ ոչ բազմաց ինչ աւուրն նոքա մատնութեամբ և զինակցորդս քաղաքին և առաւր հարկին. և միայն զանձ թագաւորին առաւ յարքունիս։

Իսկ որ առաւել քան զամենայն մեծապէս ցաւեաց Մարկեղղեայ, աղէտք կորստեան Արքիմեդեայ։ Կայր յայնժամ Արքիմեդէս ընդ գծագրաց պարապեալ մտախոհ 'ի ծրագրութեան. և այնչափ ուշով 'ի նոյն պարապեալ խորհրդոցն և անքթիթ ակամբքն, զի և ոչ զվազվազել Հռոմայեցւոցն լսէր նա, և ոչ զարձեալ՝ եթէ առաւ քաղաքն՝ զգայր ինչ նա։ Անդանօր յանկարծ 'ի զօրականէն ոմն 'ի վերայ հասեալ նորա, հրամայէր յառնել գալ ընդ իւր առ Մարկեղղոս. իսկ յանձն չառնոյր յառնել մինչեւ կատարեալ զառաջարկութիւնն և 'ի վերայ ածեալ զապացուցութիւնն, 'ի սրտմտութիւն բորբոքեցաւ զօրականն, և ձգեալ զսուրն սպանանէր զնա։ Իսկ կէսք ասեն՝ եթէ զսուրն մերկացեալ զինուորին և դէպ ուղիղ դիմեալ 'ի վերայ նորա, զայն տեսեալ Արքիմեդէս յաղաչ

անկեալ պաղատէր վայրիկ մի թոյլ տանել նմա, մի անկատար և անիմանալի թողուլ զառաջարկեալ զխնդիրն. իսկ զօրականն ոչինչ միտ եդեալ՝ հարեալ սպանանէ զնա: Այլ պատմեն զայս և երրորդ օրինակ զայս, եթէ մինչդեռ տանեալ տանէր Արքիմիդէս առ Մարկեղղոս գործիս իւրն երկրաչափականս՝ Սոււերաչափակս և դուռնոս և անկիւնս, որովք զարեւուն մեծութիւն յարեալ յարմարէր նա մերոցս աչաց, պատահեցան նմա 'ի զօրականէն և կարծեալք եթէ յանօթ գործեացն բարձեալ տանի ոսկի, հարեալ սպանանեն զնա: Այլ զինչ օրինակ և իցէ արկած մահուն Արքամիդեայ, զայս միաբան առհասարակ ասեն մատենագիրք, եթէ կարի յոյժ 'ի խոր խոցեցաւ Մարկեղղոս, և զսպանողն երբէք չկամեցաւ յակն արկանել իւրև զմի 'ի նզովելոց. և զի՝ խնդիր արարեալ ազգականացն Արքիմիդեայ՝ առատութեամբ մեծարեաց զնոսա:

Արդ թէպէտ և ցայնժամ իւրև քաջակորովս և քաջամարտիկս և զօրս այլք յազգաց համարէին զՀռոմայեցիսն, այլ չև նոքա հաւաստախս 'ի նշոյս բերեալ զարդարութեան, զմարդասիրութեան և զքաղաքականին առաքինութեան, թուի թէ յայնժամ առաջին Մարկեղղոս եցոյց Հելլենացւոց զՀռոմայեցիս իբրու արդարս առաւել: Քանզի օրինակ զայն վարեցաւ նա առ ապաշխարեալսն իւր, և այնչափ քաղաքաց բարեգործեաց նա, և չասիցեմ ես 'ի

սոսկականաց. զի եթէ երբէք Եռանացիք և Մեգարացիք և Սիրակուսացիք ինչ մի կրեցին 'ի պժնդականաց, թուի թէ քան չարչարողքն՝ չարաչարելեալքն մանաւանդ կայցին պատճառաւք բանին :

'Ի բազմադէմ հաւատարեաց մարդաւարութեան առն զմի զայն յուշ արասցուք 'ի ժամուս: Է՛ 'ի Սիկիլիա քաղաք Ենգուինոն անուն ոչինչ մեծ, այլ վաղնջուց յոյժ, պարծեալ և փառաւոր 'ի պատճառս յայտնելոյ աստուածոց դիցուհեացն՝ որոց անուն կարդան Մարք. և զմեհեան նոցա ասեն շինեալ Կրետացւոց. և ցուցանեն անդանօր և տէգս և գլխանոցս պղնձի. և վերտառութիւնքն էին կէս մի Մերիոնեան, և կէս մի՝ Ուղիսեսեայ, այս է՝ Ոդիսեւսեայ, զոր կախեցին նոքա անդ 'ի ձօն դիցուհեացն: Եւ զի այս քաղաք բնաւ իսկ հակամիտեալ էր 'ի Կարքեդոնացիս, Նիկիաս ոմն այր աւագ 'ի քաղաքացեացն զուն գործէր յորդորել յանկանել 'ի Հռոմայեցիսն. խօսէր համարձակաձայն յատեանս ժողովոց և յայտ յանդիմանութեամբ նոչաւանէր զհակառակ կողմն: Այլա զանգիտեալ նոքա 'ի զօրութենէ և 'ի փառաց առաջ առն, խորհուրդ խորհեցան ձերբակալ առնել զայրն և 'ի ձեռս Փիւնիկեցւոցն տալ:

Իմացեալ Նիկիաս եղեւ, և ծածուկ հնարիմացութեամբ կամեցեալ ապրեցուցանել զանձն, սկսաւ 'ի հրապարակի բանդագուշել ընդդէմ Մարցն, և չառ

եւ խառնէր ընդհատատեցեալ կարծիս գրգռու-
թեան զգեցուհեացն զայնոցիկ, խրատու-
որ անհնարին լցէ բանին եւ ունէր եւ ա-
րասցէ զնովաւ։ Իսկ անդուստ Թշնամիքն
մեծամասնես խնդրայքն, զի ի ներքնեն նա սպառ-
նային շատ տարր նոցա կուանել՝ ի նա զինս-
թեալ չարախօսն։ Իբրեւ ձերբակալեալ հանդեր-
ձեալ էին ածել զայրն, յերկեղեցանեալ
զտաղտապացելոցն մինչդեռ ինքնեն Նիկիաս
հրապարակաւ խօսս լինէր վասն խորոց ինչ
խնդրոյ, անդէն յերկրակործանեալն անկեալ
զանազանելինն՝ ձգեր 'ի գետնին. եւ այնուհետեւ վայր
մի անշշունջ կացեալ եկեղեցին, (քանզի եւ
'ի միասին բնաւ տարեալ էին՝ ապշութիւն եւ
լռութիւն), նա ապա 'ի վեր զգլխոյն ամ-
բարձեալ եւ շրջշրջեալ, մեղմիկն արձակէր
ահագնակ եւ բարձր, եւ սակաւ առնեալ սաստ-
կացուցանէր զձայնն. Իսկ իբրեւ ետես զի
ամենայն ատեանն զարհուրեալ էր եւ լռեալ
կայր, 'ի բաց զգեստուցն ձգեալ եւ զպատ-
մուճանն պատառեալ՝ վազեաց 'ի վեր այն-
պէս կիսամերկ եւ ընթանայր 'ի դուռն ա-
տարանին, ձայն բարձեալ եթէ լքեալ
այսահարի 'ի Մարց անտի։ Իսկ անդանօր
խելխեալ եւ ոչ ոք հուպ լինել 'ի նա կամ
դպչել ունել առ սնապաշտութեանն եւ
անդէն տուեալ առ հասարակ, խնդրեն ամենեցեան
զինքն 'ի դուռն քաղաքին. ոչ ձայն արձա-
կեաց այնուհետեւ եւ ոչ կերպս ինչ երկիր
յանձին զցնորաբանեաց եւ զմոլեգնելոյ։

Իսկ կին նորա՝ որ խրատեցեալ էր հնարի-
մացութեան առնն եւ գործակից, առեալ

զմանեկոտնեան՝ նախ յորդոր անկեալ պաղատէր առաջի մեհենի դիցուհեացն, առաջ կերպարանաւորեալ յառաջնել 'ի խնդիր Թախառականն անմտանոյն, ամենայն անհերկեանութեամբ երկանէր արտաքս 'ի քաղաքէն, և արգելեալ զնա և ոչ ոք. և այսպէս օրինակ զայս անկեալ առաքեցան նոքա 'ի Սիրակուսա առ Մարկեղղոս: Այլ յորժամ Մարկեղղոս խաղացեալ անդր՝ 'ի պատուհաս բազում հարստահարութեանց և անօրէնութեանց Ենգիոնացւոց՝ կապեաց զամենեսեան 'ի խոշտանգել, անդանօր Նիկիաս յարտասուս հարեալ եկեաց առաջի Մարկեղղոսի և զայլոյն և զծնողացն բուռն հարեալ՝ աղերսէր վասն քաղաքացեացն ակնեալ 'ի Թշնամեացն: 'Ի գութ շարժեցաւ Մարկեղղոս և յազատութիւն արձակէր զամենեսեան, և զնոսա և ոչ մի հատուցանէր քաղաքին. առ այս՝ տայր և Նիկիասայ զատտակերպս մեծ և պարգևս բազումս: Զայսոսիկ մեզ պատմագրէ Գաւիզանձիուս խմատատակէր:

Բայց յետ այնորիկ 'ի Հռովմայեցւոց հրամայէր առ Մարկեղղոս եկեալ 'ի մարտ պատերազմի ընաշխարհիկ և ընտանեօք, առնեալ ածէր նա 'ի Սիրակուսացւոց անտի բազում և գերեցին յոյժ ձօնս և կահս 'ի տեսիլ շքեղ խորուսն յաղթանակին և 'ի զարդ Հռոմայեցւոց Հայրենեացն. այն՝ որ ցայն վայր չուանէր և չէր երբէք տեսեալ զարհեստս այնպիսիս գեղեցկից և քերթուածս, և չգայր ինչ նորա 'ի չքնաղից անտի և 'ի բազմանկարքանդակին

նազելերաց. այլ խուժդուժ զինուք լի էր և արիւնաշաղախ աւարօք, և յաղթանակացն շուրջ պատկերաւ յիշատակարանօք և ախոյեանիւք. ոչ զուարթ ինչ և ոչ անահ էր անդէն՝ վասաց և զերդ հանդիսատեսացն. այլ ըստ որում Եպամինոնդաս կոչեաց զԲեովտական դաշտն՝ Որքեստրայ Արէոսի, և Քսենոփոն զԵփեսացւոց քաղաքն Հանուռն պատերազմի, սոյնպէս և ինձ թուի՝ 'ի ժամանակին յայնմիկ զՀռոմ՝ 'ի դէպ կոչել ընդ Պինդարոսի. Գործ պատերազմամոլին Ահեղան Արէոսի:

Ուստի և մեծապէս 'ի գովութեան առին ժողովուրդք զՄարկեղղոս, իբրու որ այնպէս զարդարեաց զքաղաքն նոցա 'ի բերկրականաց ամենայն և 'ի Հելլենական գերագոյն արուեստիցն և 'ի զանազան զանազան նազելեացն. Այլ սակայն և որ արք հինաւուրց 'ի նոսա՝ առաւել ևս զգովէին զՓաբիոս Մաքսիմոս. քանզի առաւել զքաղաքն Տարանտացւոց՝ ինչ մի յայնպիսեաց առեալ ոչ փոխադրեցոյց 'ի նմա և եբեր. և 'ի բաց զդրամամն հանեալ և զինչսն՝ զդրօշեալսն եթող անդէն, ասելով զՀամբաւեալն բանն, եթէ Թողցուք Տարանտացւոցն զբարկացեալ աստուածս դոցա: Առ այս՝ և մեղ ևս դնէին Մարկեղղեայ, առաջին՝ զի ատելի եդ նա զՀռոմ. զի 'ի հանդէս յաղթանակին ոչ մարդիկ միայն ածեալք երևէին, այլ և աստուածքն գլխովին 'ի գերութիւն վարեալք. և երկրորդ անգամ՝ զի զժողովուրդն սովորեալ 'ի մարտս կամ յերկրագործութենէ,

և որ անփորձն էր գործանաց և վարութեն, և որ արդարև էր երբեմն զԵւրոպացւոցն Հերակլէս «Խոշոր անպաճոյճ, այլ ՚ի մեծամեծս՝ քաջ և արի», զնա յայնժամ Մարկեղղոս առաւել ձգէր ՚ի դատարկութիւն և ՚ի շատախօսութիւն. զի և զմեծ ժամս աւուրն ծախէին նոքա ՚ի շաղակրատել վասն արուեստից և արուեստաւորաց. Այլ ամենայն և քաջ իսկ պատճառն եկաց նա առ Հելլենացիս, իբրու որ ուսոյց Հռովմայեցւոց շուք տալ և հիանալ ընդ գեղեցիկ և պաճուճելի ձեռակերտսն Եղլադայ, զոր ոչ գիտէին :

Այլ երբև ընդդէմ Մարկեղղոսի յաղթեան յայնժամ Թշնամիք արգելուլ զհանդէս յաղթանակին, և քանզի և ինչ ինչ յերկուցն Սիկիլիոյ չև էր յանձնեալ զործոյն ժամանեալ, և յերկրորդ յաղթանակէն մնախանիք նախանձուն յուզէին, առաւ և ինքն զպատիւն զիջեալ աւելի տայր. շատ համաբերեաց անձին զվաստակերտութեան յաղթանակ և զմեծն անել յԱլբանեան լերինն, իսկ ըղձիցն անել ՚ի Հռովմ, զոր Հելլենք Իշխան կոչեն, և Հռովմայեցիք Օվան : Որ միանգամ որինակ զայս յաղթանակէ, ՚ի քառաձիս չկերթելակէ, և պսակ ՚ի դափնւոյ չառանի, և չունի փողարս շուրջանակի. այլ զնայ հետի սանդալով յոտս, և որինգահարք շուրջ են զնովաւ, և պսակ ունի ՚ի մրտենւոյ. որպէս զի և յայտ անպատերազմ և հեզ է հանդէսն, և բերկրալի՝ քան եթէ ահարկու : Բայց ՚ի բանէս մեծապէս խելամուտ

լինիմ ես, եթէ 'ի նախանձումն' յօրինակէ գործոյն և ոչ 'ի մեծութենէ հանդիսին արտաքին այս յաղթանակաց: Քանզի որք մրցանակաւ յետ մարտին և կատարածին յաղթականք երևին, ածեն զԱրեւեանն զայն յաղթանակ և զաւհարեկն' պսակեալ մրցանակաւորայն և զգէնս և զարս 'ի թաւ գափնւոյ. զոր և 'ի սրբեալ անդ զզօրն' այնպէս ամփոփեալ էին: Իսկ որք մրցանակաւ 'ի զօրավարաց ոչ մարտիւ, այլ զաւշնակութեան բանիւ և խելամտութեամբ կամ թէ ճարտարապայմանութեամբ' այնպէս գեղեցիկ 'ի գլուխ տանէին զիրսն, այնպիսեացն շնորհէին օրէնք զանպատերազմն զայն յաղթանակ և զօծանախնձականն: Քանզի արինդդխաղաղութեան հրաւիրակ է, և մրտենի' տունկ է Աստղկանն, այն' որ առաւել քան զամենայն գիտէ ատելայ զսպանութիւն և զպատերազմ:

ԱՒԼՕվլոս, ոչ 'ի Հելլենականէն Իվլածոս, անուանի յաղթանակս այս' որպէս կարծեն բաղդուակք, իբրև զի նոյն օրինակ ազաղակք և զայլայլնկք լինին և 'ի Դիոնիսեանսն. այլ Հելլենացիք ծերքեցին զանուանս 'ի բնակաւորն խաբեանց հնչումն. կարծեայք եթէ այս հանդէս 'ի ճահ գայցէ մրցանակաւորայն և Դիոնիսեայ տօնախմբութեանն' զոր մեք Իվլեօս և Թրիամբօս կարդամք: Այլպս չէ այս ճշմարտութիւնն. այլ քանզի ավարութեամբ հայրենի յաղէն զօրավարք նոցա երգն մի 'ի մեծի յաղթանակսին, և ոչխար մի' 'ի փոքրումն. և զի Օվէս

կոչէին նոքա զխաշն, վասն որոյ և յաղթա-նակդ կոչեցաւ Օշոս: Այլ արժան է և Լակոնեան օրինագրին մեզ գնել, որ զոհ-առ այս սահմանեաց ներհակաբար Հռով-մայեցւոցն. քանզի 'ի Սպարտիա որ խա-ռագիտութեամբ կամ համոզակեր բանիւք զգործն 'ի գլուխ տարեալ իցէ զօրավարն, յաղէ եզն մի. իսկ որ մարտիւ պատերազ-մի 'ի նոյն նահատակեալ իցէ, աքաղաղ մի: Քանզի թէպէտ և են գոռ պատերազմողք Սպարտացիք, համայն և այնպէս՝ մեծ ևս նահատակութիւն մարդոյ ճահաւորակի զխելամտութեանն համարէին գործ և ըղ-հանճարոյն, քան զքաջութեանն և զզօրու-թեանն: Եւ այսպէս 'ի դէպ իցէ ար-դեօք ումեք խորհել՝ եթէ որ այն յերկուց անտի առաւել արդոյ և պատուական իցէ:

Արդ մինչդեռ հիւպատոս կայր Մար-կեղղոս չորրորդ անգամ, անգուստ թշնա-միք նորա թելադիր լինէին Սիրակուսաց-ւոցն գալ 'ի Հռոմ և ամբաստան զնմանէն լինել, բողոք բարձեալ առ Սինկղիտոսն՝ եթէ հակառակ ընդ Հռոմայեցւոց գաշին նոցա՝ չարաչար վարեցաւ ընդ նոսա Մար-կեղղոս: Իսկ Մարկեղղոս ըստ դիպաց զոհ-կատարէր 'ի Կապետոլիոն 'ի ժամուն, յորում յատեան ծերակուտին յառաջ մա-տեան Սիրակուսացիք. յորդորք անկեալք խնդրէին ունկնդրութիւն և արդարութի. 'ի բաց մերժեաց զնոսա հիւպատոսն իշխա-նակից Մարկեղղեայ, 'ի սրտմտութիւն բրդեալ՝ զի բողոքք կարդային մինչդեռ մերձ

ոչ կայր Մարկեղղոս ։ Իսկ Մարկեղղոս լուր առեալ, փութանակի երթեալ անդր՝ և առաջին բաղձեալ յաթոռակին՝ պարապէր յիւր պաշտամանն հիւպատոսութեն . Իսկ և վճարեաց, իջեալ յաթոռակէն երթա. զի որ 'ի սոսկականաց եկեալ եկաց 'ի վայրն՝ ուրանօր սովորութիւն էր խօսել զատախազեալ մարդկանն, և թոյլ տայր յայնժամ Սիրակուսացւոցն առաջի ատենել դատախազութիւնսն ։

Յայնժամ նոքա մեծապէս յոգնիս ապաստանն 'ի սեպհլ աստուածածար փառաց նորա և անեղծական վսեմութեանն, և զի՝ և շուք զինուն զարդուն նորա յոյժ ահըն-կէց սեաւ նոցա 'ի ծիրանի պատմուճանէն նորա, որպէս զի և ոչինչ հանդարտէին կալ առաջի ։ Յայսր ամենայնի վերայ քաջալեր առեալ 'ի հակառակորդացն՝ Մարկեղղեայ, ակիզբն արարին ամբաստանութեանն, խրատարանեցին և 'ի նոյն խառնեցին զանդատանս և հեծութիւնս . և զլուխ բանին, զի նիզակակիցք գոլով նոքա հռովմայեցւոց և բարեկամք, եւ նոցա Մարկեղղոս կրել աղէտս՝ յորոց այլք 'ի զօրավարաց մարդասիրապէս ազատ առնէն և զբաղում 'ի թշնամեաց իւրեանց ։ Իսկ Մարկեղղոս տայր պատասխանի ամբաստանութեանն, եթէ փոխանակ բազում անիրաւութեանց նոցա ընդդէմ հռոմայեցւոց, ոչինչ այլ 'ի չարեաց մասին կրեցին նոքա՝ բայց զանհրաժեշտն նկուն եղելոց մարտիւ պատերազմի . և նոքա օրէ

Նաև զայս ընկալեալ անձամբ անձին, զի ոչինչ կամեցան ունկն մատուցանել հրաւէրանաց բանից Նորա. զի ոչ եթէ բանի քարոզեցան 'ի բանաւորացն մարդ գտնել կամաւ, այլ անձամբ զանձինս ընդ լծով արկին բանաւորաց՝ 'ի կամաւ:

Իբրև այնպէս ամենայն բանք եղան առաջի, ելին արտաքս յատենէն Սերակուսացիք ըստ սովորութեան կարգին. եւ և Մարկեղղոս՝ իշխանակցին յանձն զՍինկղիտոսն արարեալ, և եկեալ եկաց առ դուրսն խորհրդարանին. ոչինչ ամենևին 'ի բնաւորեալ պերճութենէն փոխեալ՝ ո՛չ առ ահի վճռոյն և ո՛չ դարձեալ առ սրտմտութեանն ընդդէմ Սերակուսացւոցն, այլ համբուն հեզ և պարկեշտ այնպէս կայր մնայր անդ ելից դատաստանին: Իբրև վճար լինէր խորհրդոյն, յաղթական ելանէր Մարկեղղոս: Ընդ այս յոտս Նորա արտասուալից Սերակուսացիքն անկեալ պաղատէին 'ի բաց գնել զամենայն սրտմտութիւն բարկութեանն ընդդէմ Նոցա, և կարեկից լինել մնացորդաց քաղաքին իւրեանց, որ անմոռացք Նորայն բարութեանցն ցանգ շնորհակալուք եղիցին Նմա: 'Ի գութ շարժեցաւ Մարկեղղոս, և հաշտ և համբոյր ընծայեցաւ Նոցա, և երբէք ոչինչ դադարեցաւ բարեգործել մնացորդացն Սերակուսացւոց. զնոյն և Սինկղիտոսն անդորժելի պահեաց Նոցա զազատութիւնն՝ զոր Մարկեղղեայ շնորհեալ իսկ էր Նոցա. առ այս՝ և զկարգ սովորութեան օրինաց

նոցա, և զժառանգութիւն գոյիցն՝ զոր յափշտակեալ ունէին նոքա ։ Վասն այսորիկ ամենայնքն՝ Սիրակուսացիք բաց 'ի մեծաց փառացն զոր ձօնեցին նմա, օրէնս ևս հաստատեալ կարգեցին, զի 'ի գալ հասանել Մարկեղղեայ 'ի Սիկիլիա կամ թէ ումեք այլ 'ի սերընդոց նորա, հանդերձեալ Սիրակուսացիք պսակաւք պսակեսցեն և զոհ զոհեսցեն զնա ։

Իսկ յետ այնորիկ խաղաց գնաց Մարկեղղոս ընդդէմ Աննիբաղայ. և քանզի այլք 'ի հիւպատոսաց և 'ի զօրավարաց յետ Կաննեան հարուածոյն միայն հնարիմացութեամբք խոյս տուեալ 'ի թշնամւոյն՝ ոչինչ ճակատէին ընդդէմ, առ այս Մարկեղղոս ներհակաբար կամեցաւ խորհուրդ՝ եթէ այնուհետև ժամանակաձգանաւն ընկճելով, քան թէ Աննիբաղ վաստակեալ յուժոյն՝ Իտալիա հիւծի 'ի վեր տառապանելոյ 'ի նմանէ, եղ 'ի մտի եթէ Փաբիոս այնուհետև ցանկայ անձնապահ ընկճելով ոչինչ յաղթողեսցի առաքել զիւրութիւն հայրենեացն, այն՝ որ 'ի կարավարութենէն վաստակեալ շիջցի 'ի միասին ընդ մարտի պատերազմին. զորօրինակ եթէ 'ի բժշկաց ոմանք անարիք և վասնաւորք՝ զանդամալուծոյն բերելցին 'ի բուժումն ախտակին՝ յարժամ ախտացեալքն խնջելին այնուհետև յուժոյն վաստակեալք եղեն ։

Այլա անդէն զաւուրքնին հասեալ կալաւ նա քաղաքս մեծամեծս զՍամնիտացւոց զապստամբեալսն. անդանօր զատանէր նա անթիւ բազում ցորենոյ և զարծաթոյ, և

գերի վարէր երկոս հազար զօրականս զԱն-նիբաղայ 'ի պահականորդաց անտի : Իսկ Աննիբաղ տապաստ արկեալ յԱպուլիա ըզՓուլվիոս Գնէյոս զփոխանորդն հիւպատոսին համագերձ մետասան հազարապետօք , և 'ի սուր սուսերի մաշեալ զբազումս 'ի զօրացն , անդէն Մարկեղղոս Սամնիականի տայր 'ի Հռոմ՝ քաջալերէր կարգայր մի՛ վհատել , զի ինքնին չու արարեալ խաղայ վանել հանել զԱննիբաղ 'ի գաւառաց անտի : Այլ Լիվիոս պատմէ , եթէ 'ի Սամնականեայ անտի Մարկեղղեայ ոչինչ հանգստեցին Հռոմայեցիք 'ի թաղծութէն , և ահ երկիւղին անձնաց 'ի նոսա . և զաղէտս վտանգին մեծ ևս համարեցան քան զանցելոցն , որչափ քաջ ևս քան զՓուլվիոս էր զօրավար Մարկեղղոս :

Բայց Մարկեղղոս զհետ մտեալ վանել զԱննիբաղ՝ ըստ իւրում բանին , եկն եմուտ 'ի Լեւկանիա . անդ գտանէր զնա յակաստանի առ Նումիստրոնիւ քաղաքաւ 'ի վերայ անխուռ բարձանց , և ինքն զբանակ իւր հարկանէր 'ի գիւղի : Անդ յաւուրն երկրորդի առաջին նա կարգ տուեալ պատերազմին , և 'ի վայր Աննիբաղ 'ի բարձանցն իջեալ , անդանօր ահագին գոռ մարտին խառնեցաւ և սաստիկ յոյժ , այլ վճարեցաւ և ոչինչ . քանզի յերկուց ժամէ աւուրն խառնեցան և հազիւ ուրեմն 'ի մութն գիշերոյն զատան 'ի միմեանց : Իսկ 'ի ծագել առաւօտուն միւսանգամ Մարկեղղոս 'ի թանձրութեան դիականցն պատուարեալ զզօրն ,

ձայն առաջի Անկիւրացւոյ 'ի կանխ մնացեալ առաջ-
մանել պայազատութեան. Իսկ Անկիւրայ առա-
ջի առաջի, Մարկեղղոս կատարեալ կորովութեամբ
զդիւականս թշնամեաց արարեալ և զնախանձ
թափեալ, զի հեռի արկեալ նորա. և ցանկ-
անձկացեալ 'ի բազմամբոխ հալածիցն նորա,
և յայժ յաղթական յամենայն նախանձաւորու-
թեանն, մեծապէս փառօք յայնժամ
պսակեցաւ Մարկեղղոս : Ուստի և յա-
ւուրս ընտրութեան նորայ հիւպատոսացն
հաճոյ թուեցաւ Անկիւրացւոյն կոչել 'ի
Սելեւկիայ զեպիսկոպոսացն նորա, քան եթէ
զՄարկեղղոս զօրաւորացուցանել՝ որ 'ի նմին
ընտրեաց զԱնկիւրայ :

Իսկ եկին նա 'ի Սելեւկիայ, հրամանն առաջի
նոցա անուանել յեպիսկոպոսութեան՝ զԿոստանդիոս
Փառքոս : Քանզի չէ ժողովրդեան ընտրել
զնա և ոչ Սեւկիակոստանին. այլ 'ի հիւպատոս-
սաց անտի ումն կամ 'ի զօրավարաց 'ի մէջ
եկեալ առէ և անուանէ զնա ըստ կամի. և
անուանեալն մեծն այնորիկ կոչի Տեւդո-
դոս. քանզի զասելն՝ Տեւթոս կոչեն Հռո-
մայեցիք : Իսկ կէսք ասեն՝ եթէ կոչի այն-
պէս, զի այլոցն մնձայ կամ ընտրութեան
նա 'ի նեռքոյ չէ, այլ ինքն անձամբ նոսին
ըստ կամի առանի ընտրէ զամենայնն. քանզի
զխորդ և զհրաման զաւագանեայն Հեղլենք
կոչեն՝ Տեւդողոմոդոս, և Հռովմայեցիք՝ Էտ-
փելդոս :

Այլ եպիսկոպոսն Մարկեղղեայ իսկն
զայլ ոք խնդրէր անուանել, և յանձն չա-
ռնեալ քանութեան կալել 'ի բանին, եկեալ

գիշերի եմուտ 'ի նաւ և դարձաւ անդրէն 'ի Սիկիլիա։ Իսկ ժողովուրդքն անուանեալ իշխանապետ զԿուինտոս Փաբիոս, դնէր և ծերակոյտն առ Մարկեղղոս՝ զնա ասել. Հնազանդեալ միաբանեցաւ նա 'ի կամս ժողովրդեանն. և հաստատեցաւ ինքն 'ի փոխանակ հիւպատոսի վասն ամին երկրորդի։ Այլա խորհուրդ կալեալ ընդ Փաբիոսի Մաքսիմոսի, խաղալ նմա 'ի վերայ Տարանտացւոց, և ինքն 'ի դիմի հարեալ ընկճեալ Աննիբաղայ մի տալ նոցա ձեռն օգնականութեան, չու արար դիմեաց 'ի վերայ նորա մօտ առ Կանուսիոն. և ցանգ ամենայն ուրեք ընդ առաջ ելանէր նմա, մինչդեռ նա աստէպ աստէպ փոխէր զբանակետղն, և խոյս տայր 'ի կառուցն։ Հուսկ ապա 'ի վերայ յարձակեալ նորա՝ ուր ամրացեալ կայր, և նահատակութեամբ դրդէր զնա 'ի կախս մարտի. այլ 'ի սաստիկ խառնել պատերազմին, 'ի վերայ հասեալ գիշերոյն՝ լուծանէր զկռիւն։

'Ի ծագել առաւօտուն կայր անդրէն Մարկեղղոս վառեալ 'ի զէն՝ կազմ ճակատեալ զզօրն. 'ի խո՛ր խոցեցաւ Աննիբաղ, և 'ի մի վայր զԿարքեդոնացիսն խռմբեալ՝ աղաչէր զմարտն զայն մղել 'ի վերայ առաջինոց մարտիցն առ հասարակ. "Քանզի քաջ իսկ աւադիկ տեսանէք դուք, ասէր, զի յետ այնչափ յաղթութեանցն ո՛չինչ աւասիկ մեք ոգի առաք՝ թէպէտ և յաղթեցաք. եթէ ոչ և զայրդ զայդ մեք 'ի միջոյ բարձցուք"։ Իբրև մարտն խառնե-

ցաւ, յորոց անտի իւրոցն թուէր թէ վտան-գաւոր գործեաց յայնժամ Մարկեղղոս՝ հնարախնամութեան տարածեալ 'ի գործ ար-կեալ: Քանզի հարեալ և նկուն զաւրոյ թեւն արտաքսեալ, հրամանն տայր վերջապահ գնդին յառաջ խաղալ. և արար այն փու-փոխութիւն խառնակ հարեալ 'ի մարտակից զօրա-կանսն, յաղթութեան 'ի ձեռն տայր թշ-նամեացն. տապալեալ անկեալ յայնժամ 'ի Հռովմայեցւոց ոտիք երկու հազար և եօթն հարիւր:

Տեղի տուեալ յայնժամ Մարկեղղոսի 'ի դաշտէն անդր և ժողովեալ զզօրն, ասէր՝ չտեսի զէնս Հռովմայեցւոց անտանել և մար-մինս, այլ 'ի նոսա Հռովմայեցիս և ոչ զոք: Իբրև նա զայս ասաց, առհասարակ նե-րումն խնդրեալ նոցա, կրկնեաց Մարկեղ-ղոս՝ ոչ ներել 'ի պարտիլ նոցա, այլ 'ի պարտելն. և առ վաղիւն պատրաստ լինել նոցա անդրէն մարտ մղել, զի մինչև զխա-բուսեալսն՝ զյաղթութեանն լուր առցեն 'ի Հռոմ: Զայս ասաց, և թիկնապահաց գնդացն հրամանն տայր փոխանակ ցորե-նոյն՝ տալ գարի: Իսկ 'ի բազմութիւն զօրա-կանացն՝ որ վէրս առեալ էին 'ի մարտին այնմ, ասեն՝ եթէ չեկաց ոք զոր ոչ կա-րեվէր քան զվէրսն ցաւեցուցին բանք Մար-կեղղոսին:

Իբրև առաւօտն մերձեցաւ, հանեալ ե-լին անդէն սպառազինութեանն ծիրանի բառ առաջնորդութեանն՝ նշան մօտալուտ պատե-րազմին. յայնժամ գունդքն անձնկորեալք՝

դիմադրաւք խնդրեցին և կարդեցան կացին 'ի նահատակս զօրուն . զհետ նոցա և հազարապետք յառաջ մատուցեալ՝ Ճակատ յարդարէին միացորդաց բանակին ։ Զայն իբրև լուաւ Անիբաղ, ձայն բարձեալ գոչէր . «Բարէ Հերակլէս, և զխմորդ ասա բերցէ ոք առնդ այդմիկ, որ ոչ ձախողակ բաղդին և ոչ գեղեցկին երեսս ինչ գա ոչ առնէ ։ Քանզի դա միայն չտայ զիւր՝ եթէ յաղթէ . և չառնու՝ եթէ յաղթի ։ Անգուլ ուրեմն հասանէ կռուել ընդ դմա . այր՝ որ 'ի յաջողելն՝ անդրէն դրդի և քաջալերի 'ի խնդութեննէն . և 'ի վրիպելն՝ 'ի յամօթոյն» ։ Իբրև բանակք երկոքին խառնեցան 'ի մարտ, և քաջ քաջի պատահեալ՝ միայն անպարտելիք, հրաման տայր Աննիբաղ յառաջ զփիղսն խաղացուցանել 'ի Ճակատն Հռովմայեցւոց ։ Իբրև այնպէս թափ անհնարին և խռով սաստիկ 'ի գազանաց անտի հարկանէր յառաջին կարգ զօրուն, յայնժամ 'ի հազարապետացն անուն Փլամինոս դրօշակ մի յափշտակեալ խաղայր ընդդէմ գազանացն . հարեալ սաստկութեամբ զառաջին փիղն 'ի սայր նիզակին՝ յետս զնա ընկրկէր, ուստի և այնպէս անհնարին աղմկեցան գազանքն՝ որ աղխաղխեալ գայլին զհետ ։

Ապա դէտակն 'ի վեր ամբառնայր Մարկեղղոս՝ հրաման տայր այրուձիոյն փութալ 'ի Ճեպ տագնապի հասանել յաղմուկ անդր, և առաւել 'ի վեր 'ի վայր խառնել զգունդս թշնամեացն ։ Նոքա բուռն և սաստ

ունի 'ի վերայ յարձակեալ՝ վանեալք ըն-
կրկէին զԿարքեդոնացիսն, և հարուածս
'ի վերայ հասուցանէին մինչև 'ի զանկիշ-
անդրն նոցա. սակայն և շատք ևս էին ապա-
նեալքն 'ի զաղթականացն՝ այն քինչ խոյք և
մեքենաւոր նոցա Թուալչըր խաղայինն ։ Եւ
ասեն յայնժամ մեռանել աւելի քան զութ
հազար. իսկ 'ի Հռովմայեցւոց՝ երեք հա-
զար. և զօրացեալ առ հասարակ մեքենայքն ։
Այսպէս ժամ գտեալ Աննիբաղ՝ անշշուանջ
գիշերայն ժողովեալ զզաւանակն զնոյս տա-
րադէմ 'ի Մարկեղղոսէ. որում ոչ կա-
րացեալ նա զհետ ընթանալ 'ի բազմութենէ
վիրաւորացն, գէմ եղեալ և ինքն յաւելին
զնոյս 'ի Կաստղանիա. և անդադար 'ի Սի-
նուէսսա զատառոս. Ջերմինս անդուցանէր և
յանձանձէր զզօրականն ։

Բայց Աննիբաղ 'ի բացեալ աղաստացեալ
'ի Մարկեղղոսէ, առեալ զմնացեալն զօր
ամբողջն և զարձակեալ բանակն՝ 'ի հուր և 'ի
սուր զատանէր առհասարակ շուրջ զԻտալիա-
ուսոն և ամբարտաւանութիւնք 'ի Հռովմ
յուղարկան ընդդէմ Մարկեղղոսի ։ Դա-
տախազ Թշնամիք նորա յարուցին 'ի վերայ
նորա զՊուբլիկիոս Բիբղոս զժողովրդա-
պետ, զայր բանիբուն զօրաւոր և բուռն ։
Սա այս Բիբղոս յաճախ 'ի մի վայր զհասա-
ժամնն խմբեալ, զանն զործէր այպանել ու-
մեք տալ 'ի ձեռս զօրավարութիւն բա-
նակին. քանզի Մարկեղղոս՝ ասէր՝ վայր մի
ձեռն 'ի գործ արկեալ և կռուեալ, իսկ
զայրոյթս իբրու յըմբշարանէ իմեմնէ ան-

ցեալ չոքաւ նստաւ 'ի բաղանիս ջերմին՝ տապաս առնուլ անձին ։

Իբրև այսմ իրազգած լինէր Մարկեղղոս, անդէն Թողեալ 'ի բանակին տեղակալս՝ դառնայր 'ի Հռոմ պատասխանի առնել ամբաստանութեանն, այն ինչ հանդերձեալ էին տալ դատակնիք ընդդէմ նորա ։ Այլ 'ի ժամանակեալ աւուրն խռոմբեալ խուժանին 'ի Փղամինեան ձիրնԹացսն, Բիբղոս 'ի բեմէն առաջի առնէր զամբաստանութիւնն ․ իսկ Մարկեղղոս բանս անդամոր դուզնաքեայս անպաճոյճս խօսէր վասն անձին ․ սակայն 'ի քաղաքացեաց անտի յայնժամ արք փառաւք և ականաւորք աղաղակէմ բարբառեցան վասն նորա, և յորդորէին մի քան զԹշնամին՝ եւս չարաշուք նստել դատաւոր, և իբրև անարի և վատ զՄարկեղղոս դատել, յորմէ միայն ցանգ զանգիտեալ խոյս տայ Աննիբաղ ․ և որչափ նա հեռամուտ է կռուել ընդ այլոց, այնչափ և անձնապահ է 'ի վէգ գալ ընդ Մարկեղղեայ ։

Իբրև զայն բանս ասացին, և յայնժամ ամբաստանն յամօթ լինէր գլխովին ․ զի և ոչ 'ի դատաւորացն միայն, այլ և ողջոյն յամբաստանութեանցն արձակեալ՝ ընտրեցաւ հիւպատոս այս հնգիցս անգամ ։ Առեալ զիշխանութիւնն՝ նախ քան զամենայն գնացեալ 'ի Տիւրրենիս, հանդարտէր զաղմուկ մեծ զապստամբութեանն ։ Այլ կամեցեալ ուխտել նուիրել զտաճարն զՓառաց և զԱռաքինութեանն, զոր նա ինքնին կա-

ուղեւորեալ իսկ էր յառաջագոյն անտի Սիկի-
լիացւոց, իբրեւ յանձին չառին քաղաքացիքն՝
եթէ անձնահաս զենս կռուելին 'ի մտումն փառակերտու-
ցին տաճարին, ակնյայտն առնէր նոցա չքնաղութիւն
և երկրորդ տաճարին. ամենայն զժխկաւանկս
երկիր զհնակառուակութիւնն, և վաստակաւորս
եւ վարդիկաւ զզանին: Իսկ քաղ իսկ և այլ եւս
չատա նշանս մեծամեծս առանձինն զենս. քանզի
և մեհեանս ինչ չանթահաղք երկին. գաղ-
ձեալ և մեռանք կործեցին զոսկին 'ի մեհե-
նին Սիրակուսացւոց: Այլ և պատուաւորեցին յայս-
ժամ, արձանակեալ երկին ձայն զմեծագոյն, և
մանեկան մտայ ծնանեալ և առաջնեալ՝ զկոչեն ու-
նելով զգեղս: Նա և 'ի նաւակեալն և 'ի քաղաքա-
թիանան էին ՚ձախաողակի զամաշակութիւնք.
ուսոյ և խոնչք և զուշակք արդելեալ պա-
հէին զայլն 'ի Հռոմ. Թէպէտ և նոքա ան-
հնարին 'ի տոսկ անեկեալ էր Ջանին և վառեալ
'ի չու անդր. զի և ոչ ով այնպէս յեր ինչ
զանկատեցաւ տարօրինակս, իբրու Մարկեղ-
ղոս 'ի մէջ ընդ Աննիբաղայ կռուեալ պահ-
մանեալ մարտին:

Զայս նա յերբաղանայր գնչերոփ, և վասն
առոյնն 'ի խորհուրդ մտանէր ընդ բարեկամս
և ընդ իշխանակիցս իւր. և այս միայն էր
նորա ձայն առօթից առ զինն՝ 'ի ծնակատա-
մարտ պատերազմի հասանել ունել զԱնիբ-
բաղ: Եւ յինձ թուի՝ եթէ երկարանչեալ էս
զօրաց փախեալ 'ի պատանեկին կամ 'ի զօրի,
մատաղխիտապարոյն ևս էր զոռն: Այլ եթէ
չէր Մարկեղղոսի այնպէս 'ի ծայրին հա-
սեալ փառաց և պատուոյ, և թէ չէր նա-

րաս հաստատուն բազում 'ի նորքս ընթերաւ զքաջութեն և զհանճարոյն առաւել քան զամենայն զօրավարս, անշուշտ էր ասել զնա յերկրասարդական ընթերաւ աշխու-ժից և 'ի պատուասիրութեան՝ անձնահաճ բաղ-ձամեայ տան . քանզի և 'ի հինգերորդ ընդրութեանն զկաթմնամնիխաք ուղեմն անցեալ էր: Յայսր ամենայնի վերայ կա-տարեալ զբոհան և զորութիւնն ըստ գրու-շակացն հրամանի, եւ արտաքս 'ի մարտ պատերազմի հանդերձ իշխանակցաւն և բանակ հարեալ ընդ մէջ Բանդիոյ քաղա-քին և Բենիսեայ՝ առեալ ձայն տայր Աննի-բաղայ . խակ նա երբէք չիջանէր 'ի կռիւն . առակայն լուր առեալ եթէ գունդ հասա 'ի Հռոմայեցւոց 'ի վերայ արկանելոյ Լո-կրացւոց, յինքն դարձան գործեալ ընդ Պե-տիլեան ըլլորմն, սպան 'ի նոցանէ ոչ խո եր-կու հազար և հինգ հարիւր: Յայնմանէ մեծապէս գրգռեալ Մարկեղղոս 'ի կռիւն, ժողովեալ զբանակն եկն մօտ բանակեցաւ ընդդէմ Աննիբաղայ:

Եւր անդանօր ընդ մէջ երկուց բանակացն բլուր քաջամուր անտառախիտ, և գիտա-ւորանք 'ի բլրին աստի և անտի, և աղբիւրք ջրոյ հոսէին 'ի նմա: Զարմացան Հռոմայե-ցիք, զի Աննիբաղ կանուխ հասեալ՝ ոչ կա-լաւ զգետղան վայրն, թողեալ 'ի թշնա-մեացն ձեռս: Այլ Աննիբաղ քան վասն բանակին՝ լաւ եա 'ի դարան զվայրն համա-րեալ, եւլից անդանօր զանտառն և զան-ձաւսն բազում աղեղնաւորօք և տիգաւո-

րաց. եւ 'ի մօտ եղեալ վայրացն քաղաքա-պետութեան յինքն ձգեալ յանձնառուացն ըղ-Հռոմայեցւոցն, և չփախուցեալ 'ի յուսոյն: Քանզի անդէն փառամոլութիւն ամենայն ընդ քանակին Հռոմայեցւոց այս ձայն ընթա-նայր, համարձակել ուժեղ զմարդն. եւ առ հա-սարակ նոքա յայնժամ խրատու զօրավարաց ոմանց անհնարինեալ խօսեցան, մեծապէս ամաչեցեալ թշնամեաց եթէ ամենայն զքանակին հարցեն անդադար, կամ թէ ամբողջ պա-տերազմին զզօրութիւն:

Այսպէս համարձակ թուեցաւ Մարկեղղոսի գնալ անդր առաջ այրուձիովն և զինել զվայրն. կոչեաց զնոյն և զոհեաց: Իսկ փողոտեաց զաւագին ասպանդին՝ անդ կոչին ցուցանէր զերաժշտն ամենայնին. ապա փող-ահար և զերկրորդն՝ անուանելին զմուծանէ մեծ յոյժ անուանութիւն. զարթնեաց և այլն ա-մենայն ցուցաւ յայնժամ կարգ քերթողա-կան, որ և հայտնաբերեալ 'ի գերեզմանին նշա-նաց աւանդ խորհուրդ նահապետաց երկնաւորին՝ որ յառաջնոց ժամանակաց. այլ խոչընդ 'ի վերջնոց ասաց առ առակել եւ զարդարեալ անուն զանձինս, ամպեալ եթէ 'ի քարտէ-զեան զոհից յետ ժամանակաց՝ կատարած ե-ղի է աստուածոյ այլայլութիւնն: Այլ ա-կայն. "Չկարող ահաւորին ոչ հուր արգե-լուլ և ոչ պատուական երկաթի", որպէս Պինդարոս ասաց: Ուստի և Մարկեղղոս առեալ ընդ իւր զԿոռնելիոս զօրավարա-կիցն, և զորդին իւր զհազարապետն, եւ առ-նալեօ 'ի զանձինս և այլուստ ընդ նմա երկնե-

ընդ և յետոյն միայն, յորոց և ոչ մի ոք 'ի նոցանէն հաւանեցաւ, այլ առ հասարակ Տիեզերականացն. պատմութիւնք միայն փոր-դաղացիք` բանիք և հաստատութիւնք ցանկ-կացեալք առ Մարկեղղոսի:

Եւ քանզի անաստուածութեան էր բռնաւորն և [illegible], դէտ մի 'ի Կապադովկացւոց անուանի կարգ 'ի ծագմանէն և ըստ ազգի. [illegible] ա-նեբեւակ 'ի Հռոմայեցւոց` աւերանաց ողջոյն դատնական նոցա. երդուեալ առ դպրատանս-ամուսնութիւն աղագալեալ փառանս բանին, նոքա Թագ-աւորաց մեծաւ Մարկեղղոսի, անդէն յե-ղանակարծութեան յարուցեալ և շուրջ 'ի մէջ փոխեալ դաշտանցն` նեստուրիոս ընդէմն և հայր կանոնին, և հետաւանեալ դէմս փոփոխութեանն ընդէմն, 'ի նոյն` 'ի մէջ երկեալ կոռւելոյն և ընդ դիմամակարտանն. և նմին քառասունք այն Փրեգաղացիք` որ 'ի փոխառու խոստմունս Տիեզերականացն յառաջինն կալուածն` առաջ երկեալք նեղեալք ընդ միմեանս մնալ ե-դեալ կոռւելոյն 'ի մերոյս հետաքրքրութեանն. մինչև Կոստանդիանոս նեստուհար 'ի կրկին նե-ռեց` 'ի փոխառու դատանայր երկփեղկեալ: Իսկ Մարկեղղոս անդէն անդրահարս եղեալ` շեշտ Թէոփի ընդ կողմ նորա երկանեալ առէջն ըմբռնեալ, զոր Լանդիկոս կոչէն 5: Ցայն-ժամ Փրեգաղացիք ողջունագրութեամբ 'ի մնացեալն Թողեալ անդամոր զՄարկեղղոս գիտա-պատ` առ նոյն յանփշտանեցին զորդն նոյա մերուաւոր և փոխանուլ անկանելոյն 'ի բա-նակին խուռնանց: Եւ անկանի տապատառ ան-դէն քառասնիւ շարժ. և դառնաղղայնեցին

հինգ թուով և հնձեալք ոմն և առանց վաստակեցան 'ի գերութիւն: Բայց և Կրկնա-սպանեալ ոչ չատ ինչ առատապս կեցեալ՝ մեռա-նելը 'ի միջոց ամսոյ: Եւ եղև այս առաջին նուագ՝ անհնարին աղետք Հռովմայեցւոց, 'ի միում ժամանակի կորուսանել միանգամայն զերկրորդն հիւպատոսաւն:

Իսկ Աննիբաղ յաղթեալ զայլն ամե-նայն առ դրանդիաղեայ գրեալ, այն ինչ լուաւ եթէ և ինքնին Մարկեղղոս զխաղա-ղաղ անկեալ կայ, յարուցեալ փութա-ցեալ ընթանայր 'ի Նոլայ անդր. և մերձ կա-ցեալ մեռելոյն՝ այնուհետև հաստատուն մի ժամ զխաղաղ զինապատրութիւն ժողովրդեան և զերկր-սպասաւորն, ոչ յաղթողեալ ապստամբեաց քաղա-քաւն, և ոչ ապստամբութեան ժողով ծնաւ 'ի դէմս նորա, բայց օրամ և 'ի դէպ ար-դեօք մարդոյ՝ զմեծն զնուր թշնամին և ըզ-քաղաքն զխաղաղական անտանաւ. այլ կայցեալ հիացեալ ընդ անկարծ մահն և ընդ դըժ-պատահ առանն առապէ՝ սանձոյն 'ի բաց ըզ-մատատանին, և գերեզմանիս զառաջարկեալ ըզ-զխաղաղն և շուրջ եղեալ այնուհետև այլոց ըզ-մարդկինն, և 'ի պատերս արծաթի արկեալ զոսկրանն և 'ի մեծուն պսակ մի եդեալ ամիք առաջադէր առ որդի նորա: Այլ 'ի Նամա-գացւոց անտանի պատահեալ աստուածքն որ առա-նեին զայն, 'ի մեծուն զխլեալ յանկշտա-կել զառաւօտն, խորհ նոցա զդէմ զարձեալ հասարակութեան՝ հեղեալ ցնդէր ասձիւնն ընդ երկիր: Լուեալ Աննիբաղայ առեր՝ ոչ զերագոյն կայթն. Իւչ մի չնորհութի լինել առ-

տարբոյ կամացն աստուածոյ։ Եւ Թէպէտ ընտմանդամացին զայն պատուհասանաց, ոչինչ փոյթ կալաւ այնուհետեւ ժողովել զաձիւնն եւ տալ տանել. իբրու որ 'ի գլուխ աննի մնալ ունէք կամք իշխեն՝ այնպէս դըժպատեհ և մեռանել Մարկեղղեայ և անԹաղ մնալ։ Օրինակ զայս պատմեն մեզ Կոռնելիոս Նեպոս և Վալերիոս Մաքսիմոս։ Այլ Լիվիոս և Կեսար Սեբաստոս պատմեն, եթէ սափորն տարեալ ողջ առ որդին Թաղեցաւ շքով։

Իսկ Զօնք նուիրացն Մարկեղղոսի՝ Թո՛ղ զորս միանգամ նորա 'ի Հռոմ՝ են ըմբշարան մի 'ի կատանիա Սիկիլիոյ, անդրիք և պնակք սիրակուսացիք 'ի Սամոթրակէ 'ի մեհենին դիցն՝ որոց անուն կարդան կաբիրք. և 'ի Լինդոն 'ի մեհենին Աթենասայ. ուրանօր ըստ Պոսիդոնիսիոսի էր և արձան նորա, և մակագրութիւն այսպիսի. "Ահա քեզ ով հիւր, Աստղն մեծ Հռովմայ հայրենեացն, Մարկեղղոս Կղաւդիոս 'ի հոյակապ նախնեաց։ Նա՝ եօԹնիցս անգամ զաւագութիւնն հիւպատեան տարաւ, 'ի մոլել անդ Արէսի, և ախոյեանիցն մահուչս եդ ամբաւ"։ Այլ որ զվերտառութիւնն գրեաց, ընդ հնդեակ հիւպատոսութեանն ընթերցեաց և զկրկին նորա կալ փոխանակ բղեշխի։

Բայց սերունդ նորա հոյակապ եկաց մնաց մինչև ցՄարկեղղոսն քեռորդի Կեսարու. զի էր նա որդի քեռն Կեսարու Հոկտաւեայ 'ի Գայիոսէ Մարկեղղոսէ. և փե-

[illegible] մեռանել՝ [illegible] էր ընդ նմին [illegible]_
[illegible] [illegible], ոչ [illegible]_
[illegible] [illegible] ընդ [illegible] Կեսարու :
Եւ [illegible] [illegible] [illegible] նորա [illegible]
'ի [illegible] և 'ի [illegible] նորա՝ Մ[illegible]_
[illegible] մի, և Կեսար՝ Ց[illegible] մի [illegible]_
[illegible] 'ի [illegible] Մ[illegible] :

ԶՈՒԳԱԿՇՌՈՒԹԻՒՆ

ՊԵՂՈՊԻԴԵԱՑ
ԵՒ
ՄԱՐԿԵՂՂՈՍԻ

ԱՅՍ արդ՝ որչափ ինչ արժանապատմութեան թուեցաւ մեզ 'ի գրել 'ի բանից անտի Մարկեղղոսի և Պեղոպիդեայ, այդ ոքիկ են: Բայց ըստ բնաւոյ բարուցն և վարուցն զուգահաւասարք գոլով սոքա, երբոր ե-թէ այր զարմանք ելեալս ասնիցեն. և քան-զի երկոքեին գոլով քաջք էին և կորովիք և վաստակաւորք և արիասիրտք և մեծան-ձինք, յայս ինչ միայն երևին զանազա-նեալք, զի Մարկեղղոս 'ի քաղաքս բա-զումս՝ զոր ընդ ձեռամբ գրաւեաց՝ հա-րուածս 'ի վերայ եդ. իսկ Եպամինոնդաս և Պեղոպիդաս ոչ զոք 'ի պարտելոցն 'ի մահ վարեցին, և ոչ զքաղաքս 'ի գերու-թեան կացուցին: Այլ և Թեբայեցիք ինք-նին ասեն, եթէ և ոչ Որքոմենացիք զըւ-

խաւլին զնոյն անցս կրէին, եթէ ողքս երկո-քին անդամոր մերձ կային:

Իսկ 'ի գործս նահատակութեանց սոցա՝ արդարև հրաշալիք են և մեծամեծք Մար-կեղլոսինն՝ որ առ Կեղտան. զի եհար վա-նեաց զայնչափ բազմութիւն զայրուձիոյն և զհետևակացն սակաւաձեռն այրուձիով. զոր և հեշտին կատարեալ առ այլովք զօ-րավարօք չէք գտանել 'ի պատմութիւնս: Առ այս՝ զի և զզօրավար նոցուն դիտա-պաստ կացուցանէր. յորում կարգի և ինքնին Պեղոպիդէս կամելով նահատակել, ինքն առաջին տապաստ անկաւ 'ի բռնա-ւորէն. և մինչև գործեալ՝ ինքն կրեաց: Այլ սակայն այդոցիկ զուգակշիռ 'ի դէպ է գործել՝ և զՊեղոպիդեայն նահատակու-թիւնս որ 'ի Լևկտրա և 'ի Տեգիւրա՝ զմե-ծամեծսն և զականաւորսն:

Բայց զծածուկ ինչ և զդարանամուտ գործ նահատակութեան չունիմք 'ի ներքս բերել զՄարկեղեայ և կշռել ընդ Պեղո-պիդեայն, որչափ միանգամ գործեաց նա յետ դարձին յաքսորանաց. և զմահուանն զբռնաւորացն 'ի Թեբս, զի և թուի թէ այն նահատակութիւն յոյժ գերազանցեալ կայցէ քան զամենայն գործ զգաւանաց և զգաղտնեաց:

Այլ անշուշտ Աննիբաղ ահարկու էր թշնամի և բուռն և սաստիկ, ընդ որում և Լակեդեմոնացիք յայնժամ՝ Թեբայեց-ւոց: Բայց անաղարտելի է պատմութիւնն՝ եթէ Պեղոպիդաս 'ի պարտութիւն մտա-

նեաց զնոսա 'ի Տեգիւրա և 'ի Լեւկտրա: Իսկ Մարկեղղոս զԱննիբաղ, ըստ որում Պողիւբիոս ասէ, և ոչ միանգամ 'ի պարտութիւն մատնեաց. այլ թուի թէ անպարտելի՝ եկաց մնաց նա մինչև ցաւուրս Սկիպիոնի: Այլ մեք Լիւկուլլոսն ընծայեմք հաւասար և Կեսարուն և Ներոնն, և 'ի Հելլենացիս՝ ազգային Ցոպայ, եթէ երբեք 'ի պարտութիւն մատնեցան Աննիբաղեանք և 'ի փախուստ դարձան 'ի Մարկեղղոսէ. բայց այսուքիկ կշիռ ինչ մեծ չգործեցին. նա մանաւանդ թուի թէ կեղծաւորեցաւ իմն այնպէս Լիբէացին 'ի մարտան յայնոսիկ:

Իսկ որ խրախուսականս և արժանաւորս ազգաց ընելին՝ այն է զի այնչափ 'ի փախուստ խուճապեալ զօրուն և ապականեալ զօրավարացն և 'ի վեր 'ի վայր շարժեալ ամենայն Հռոմայեցւոց իշխանութեանն, սա այս Մարկեղղոս քաջալերեաց խրախուսանաց զնոսա կալ 'ի գլուխ հարկանել թշնամւոյն: Քանզի զի որ 'ի վաղնջուցն և 'ի հին անհաղթելութեանն և յարհաւրացն՝ միանգամ 'ի վեր կանգնեալ խրախուսանաց վասնեաց 'ի զօրն զգեղեցիկ նախանձ և զհրցանսն ընդդէմ թշնամեաց, և զայն եւս՝ զի մի այնպէս հեշտեաւ զյաղթութիւն 'ի ձեռս թողցեն թշնամւոյն, այլ զի եւեթս առանելով մղցեցին պատուաւորաբար, սա այս Մարկեղղոս եկաց միայն: Քանզի որք առ վշտամբերութեան աղէտիցն ստիպեցան Հռոմայեցիք մերթ փախստեամբ անձնատուր լինել յե-

րեւոոց Աննիբաղայ, սա այս Մարկեղղոսս ուսոյց նոցա զանձնեթի հարկանել 'ի ձողոպրե- լել խուսեանց յետս պարտութեանն. և կորովեալ՝ եթէ վերջք մի ամերք ասացին Թըղ- նամեայն. և պատնէլ՝ եթէ 'ի պարտութեան չմնասնեսցեն։

Այլ քանզի Պելոպիդէս յամենայն խակ 'ի մարտս անպարտելի մնաց 'ի զօրավարու- թեանն իւրում, իսկ Մարկեղղոս յաղթու- թիւնս քաղաքաւ 'ի դիւրին տարաւ առաւել. քան զամենայն հզօրագոյնս որ առ իւ- րովքն ժամանակօք, թուի թէ զօրավարա- սաստար կայցէ զժամապատերազմութիւնս այս ընդ անպարտելւոյն ընդ այնմիկ 'ի պատճառս քաղմնացեալ նահատակութեանց իւրոց։

Իսկ թէ Մարկեղղոս հաւանեալ կալաւ զըստեւեաց զՍիրակուսաս, իսկ Պելոպիդէս վրիպեալ եկաց 'ի Լակեդեմոնացւոց քաղա- քէն. սակայն ես այնպէս համարիմ՝ եթէ մեծ էր քան զառնուլ Սիկիլիոյ լինել մե- րձել 'ի Սպարտա, և առաջին քան զամե- նայն մարդ՝ մարտիւ պատերազմի անցանել ընդ Եւրոտաս։ Թէ ոչ՝ ճն և ան Արա- մազդ՝ ասասցէ ոք արդեօք, եթէ քան Պե- ղոպիդեայ՝ մանաւանդ Եպամինոնդեայ 'ի ձեռն վՃարեցաւ գործն, որպէս արդեամբ և Լեւկտրեան նահատակութիւնն։ Իսկ Մար- կեղղոսին նահատակութեանցն անհաղոր- դական է փառքն. քանզի միայնակ առ կալաւ զՍիրակուսաս, և զԳեղղեան զօր- ձեռն՝ զոր յերկուանակցէն 'ի փախուստ դարձոյց. և ընդդէմ Աննիբաղայ՝ ոչ զըզ

ունելով 'ի նիզակակից, նա և յորժամ առհասարակ ամենեքին զնա յայնմանէն 'ի բաց քեցէին, ինքն ճակատեցաւ ընդդէմ նորա, և փոփոխեալ զդէմս կերպարանաց մարտին, ինքն առաջին հորդեաց ճանապարհ արիութեան:

Բայց զմահ վախճանին գովեմ և ոչ զմիոյ ուրուք քաջացդ այդոցիկ. այլ ցաւէ է ինձ և աշխարհեմ ես զտարադէպն զայն և զտարաժամ արկածն: Բայց և հիացեալ եմ՝ զի յայնչափ մարտս պատերազմաց՝ որչափ ինչ դք վտանգեացի 'ի հաշիւ նոցա, և ոչ վէրս անգամ ընկալաւ Աննիբաղ:

Եւ զարմացեալ է իմ ընդ Քրիւսանդէան ընդ այն 'ի Դաստիարակութեան գիրսն 6 (Քսենոփոնեան), որ մերկացեալ զսուրն և 'ի վեր առեալ հարկանել զԹշնամին, իբրև ձայն փողոյն նշան տայր տեղի տալ 'ի մարտէն, եթող անդէն զայրն՝ և ինքն մեծապէս հեզութեամբ և պարկեշտութեամբ մեկնէր 'ի վայրացն: Այլ սակայն զՊեղոպիդէան ներելի գործէր 'ի պահու մարտին՝ աշխոյժ եռանդանն և սրտմբտութիւն նորա 'ի վրէժխնդրութիւն ոչինչ անարի. "Քանզի լաւ է յաղթական զոլով ապրել զօրավարին. դարձեալ և մեռանել, յառաքինութեան վճարելով ըզկեանսն". որպէս ասաց Եւրիպիդէս: Քանզի այսպէս ուրեմն մահ վախճանելոյն, ոչ կիրք են, այլ գործ: Նա և բաց 'ի սրտմբտութենէն Պեղոպիդեայ, և նոյն ինքն վախճան յաղթութեանն զոր նկարէր նա 'ի

զ[illegible] [illegible] [illegible], որչափ զ[illegible] [illegible] զօրս 'ի Թ[illegible] յայտն։ Քանզի և գծուագին [illegible] առաջնորդ ճանաչելութեան այլ 'ի ներքոյ ընդերն՝ որ այնպիսին զերծեցին և փառաւորը ամենայն պատուհասեալ։

Իսկ Մարգերդդան՝ ոչ 'ի առաջնորդ ինչ կարգաւոր ալիւսոյեց, և ոչ յարաժամ 'ի խաւ- ձաւով [illegible] բաղձալ անձկամ զերծե- ցին մտաւորութիւնն միջոց կարգեալ՝ այլ յայտնի ամենեւին, այնպիսի [illegible] զխնամողութեան 'ի վաստակոցն երկրաւ՝ ոչ [illegible] անձկանձն անձկութեն, այլ զյառաջընթացն սրբոյն կայ բազմերանգ կամս զընծայան. և զշնորհեալ զերը հիւսքաղաքավարութիւն և զերըլերեան յաղթա- նակած, և զսան և զ[illegible], և զբանիւ յաղ- թութեան առաքելոց 'ի Թագաւորաց, առաքելութեամբ եւ ընդ ամբոխ կայսերականաց- ւոցն վարչականաց, իշխանաց, և համա- զգայնոց. որպէս զի և նոյնպէս Թշնամեացն զմեկնաբանիս ընդերն ընդ ճանաչողութեան խորհրդոց, զի այլ այնպիսին 'ի հոգեւորեցեալ քաղցրութեամբ առաքինութեամբ զեր 'ի վերայ, և առաքելութեամբ զօրութեամբ մեծ- հանդիպն, և փառօք և պատուով անկանո- նութեան յայս, 'ի խաւարին ամեն յառաջընթաց զանազան փրկչազգաց այնպիսի զխոստո- վանութեան անձկեալ կայցէ։

Այլ առաջին պատրանք է զզաստանեկ ոչ եղեւ անկարաստածութիւն ինչ համամարտ վասն արարողութ այլազգին, այլ աստղագուշ- ութեանց զանձկալեցաւ և համամարտութիւն

'ի շնորհս անձանց նոցա և 'ի շնորհս քաջութեան արութեան նոցա՝ որ աղաղաւառեալ ծախեցին նոքա զայլ ինչ աւաքինութիւնս իւրեանց, ոչինչ խնայեալ 'ի կեանս և 'ի հոգիս իւրեանց. իբրու անձանց մեռեալք՝ և ոչ մանաւանդ հայրենեացն և բարեկամացն և նիզակակցացն։

Բայց յետ մահու վախճանին՝ Պեղոպիդէս Թաղումն առնու 'ի նիզակակցացն վասն որոց 'ի մահ մատնեցաւ. իսկ Մարկեղլոս 'ի նոցուն իսկ 'ի թշնամեացն՝ յորոց 'ի մահ վարեցաւ։ Եւ արդեօք Պեղոպիդայն նախանձելի է և երանելի. սակայն քան զշնորհապարտ փոխարէնս երախտեացն՝ վեհագոյն ևս է և մեծ հիանալ պատուել նոցուն իսկ թշնամեացն զառաքինութիւնն առնանիչ նոցա։ Քանզի 'ի վերջնումդ լոկ առաքինութիւնն անխառն ունի զպատիւն. իսկ յառաջնումն՝ պատուասիրութիւն է և 'ի շահ օգտի և 'ի պէտս առաքինութեանն։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Ողորմելի Գաղղիացիս գրէ, ոչինչ պա-կառ եկին նորա քան զեօթն հարիւր հա-զար հետևակաց, և եօթանասուն հազար այրուձիոյ :

2. Այսպիսի հրէշք՝ որ կոչին Արեգա-կունք և Լուսնակունք, բազմանգամ երևեալք յայտ-նին Թուով ՚ի մերում Քննասիրութեան : Քեպլեր և Գասենդոս գրեալ չերևեալ տես-նել քան զերկուս, բայց Գասսենդոս պատմէ յամին 1625, երևեալ վեց Թուով ՚ի Գողա-նիա. և Շէյնէր ՚ի 1629, երևեալ ՚ի Հռոմ հինգ Թուով. և ՚ի յաջորդ ամի ՚ի 26. Յունիս. երևեալ եօթն Թուով. և ասէ եթէ չէր հակառակել եթէ երևեցին և երկո-տասանք Թուով Արեգակունք և Լուսնա-կունք :

3. Պլուտարք. Մինուկիոս ասէ. այլ ըստ պատմ. Հռոմ. պատերն լինել Կ. Փա-բիոս Մաքսիմոս :

4. ՚Ի կարգի նորահրաշ մեքենայիցն Արքիմիդեայ, է լսել ՚ի համբաւոյ՝ է ան-

սանել և 'ի նկարս՝ նա և զգերահռչակեալ զայն Հայելիս կիզանողականս զնորա, որովք ասեն այրեալ նորա զնաւահանգէմն Հռովմայեցւոց: Սակայն Թուի անհիմն համբաւն. քանզի և ոչ մի ոք 'ի նախնի մատենագրաց յիշատակ չարար Հայելեացն այնոցիկ. մանաւանդ որ մանրամասն պատմեցին զիրսն՝ Պողիւբիոս, Լիւիոս, և առաւել՝ մերս Պլուտարքոս:

5. Պլուտարք՝ յունացուցեալ Λαγκεα կոչէ զլտ. այն է՝ Lancea, որ է՝ Տէգ:

6. Էր այս Քրիսանդէ մի 'ի զօրագլխացն Կիւրոսի 'ի մեծ աշխատանոն Քսենոփոնեայ. և նա ինքն Քսենոփոն պատմէ զայս 'ի սկիզբն Դ գրոցն, որ անուանեալ կոչի Քիւռօփէդիա, այն է՝ Դաստիարակութիւն Կիւրոսի:

ՊԼՈՒՏԱՐՔԵԱՑ

ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

ՓԻԼՈՊԻՄԵՆԵԱՑ

ԵՒ

ՏԻՏՈՍԻ ԿՈՒԻՆՏՈՍԻ ՓԼԱՄԻՆԻՈՍԻ

ՓԻԼՈՊԻՄԷՆ

Էր Կասանդրոս 'ի Մանտինիա 'ի նախապատիւ զարմէ, և ճոխ առաւել քան զամենայն քաղաքացիսն ։ Սա ձախորդակի պատահեալ բաղդի, և փախստեալ յիւրոց հայրենեացն գնացեալ՝ եկն եհաս 'ի Մեգաղէպօլիս, յաւէտ իմն 'ի պատճառս Կրաւսեայ հօրն Փիլոպիմենեայ. զի էր Կրաւսիս այր հոյակապ գլխովին և մտերիմ՝ բարեկամ՝ նորա ։ Արդ մինչդեռ կենդանի էր Կրաւսիս՝ յամենայնին բաժանորդ էր Կասանդրոս. այլ ապա 'ի մեռանելն, տրի-տուր նա զհիւրընկալութեան հատուցեալ Կրաւսեայ՝ առեալ սնուցանէր զորբացեալ նորա զորդին, ըստ որում 'ի Փիւնիկեայ ասէ Հոմերոս սնուցեալ զԱքիլլէս ։

Ապա անդստին յառաջին տիոցն Փիլոպիմէն աճէր և զարգանայր ազնուական և արքենի բարոյիւք ։ Իսկ յարբունս հա-

ներալ՝ խնամակալութք նմա լինէին Եկդեմոս և Դեմոփանէս Մեգաղէպօլսեցիք, որք մտերիմք կեննակիցք յԱկադեմիա ընդ Արկեսիղայոսի. և առաւել քան զամենայն իմաստասէրս ժամանակին նոքա զիմաստասիրականն առեալ պատշաճէին քաղաքականին. 'ի նոյն՝ յանդորր 'ի բռնաւորութենէն հանին նոքա զհայրենիսն, Թելադիր եղեալ 'ի ծածուկ՝ սպանանել զԱրիստոդեմոս. նոքա գործակից լինէին և Արատոսի վանել զՆիկոկղէս բռնաւոր զՍիկիոնացւոց. առ այս՝ և նոքա 'ի Թախանձանաց Կիւրենացւոց՝ որոց խռովութեամբք լի էր քաղաքն և խօթ էր, անդր եկեալ նուաճեցին՝ օրէնս դնելով հաստատելով նոցա, և յարդարեցին զքաղաքն։ Եւ առքա գործեալ՝ յամենայնի խնամով պատրաստեցան 'ի դաստիարակութիւն Փիլոպիմենեայ՝ վարժելով յիմաստասիրականն՝ 'ի պէտս առհասարակ Եղլադայ։ Եւ որպէս զոյս զաւակ անդադանի ծնեալ յետոյ ծերութեանն՝ 'ի լոյս մեծութեանց Եղլադա յետ նախնի իւրոց զօրավարացն քաջաց, սիրեցին և զնա մանաւանդ իմն սիրեաց, և փառաւոր ևս արար. իսկ 'ի Հռոմայեցւոց ոմն 'ի գովութիւն առեալ զնա, կոչեաց՝ ՎԵՐՋԻՆՆ ՀԵԼԼԷՆԱՑՒՈՑ. իբրու որ յետ նորա այլ ոչ ծնաւ Եղլադա զայր առաջ և իւր արժանի։

Այլ ո՛չ՝ որպէս կարծեն ոմանք՝ անգեղեցիկ էր նա. քանզի և մինչև ցայսօր ցուցանեն 'ի Դեղփիս պատկեր նորա։ Իսկ

պատճառք ո՛չ ճանաչելոյն զնա հիւրընկալու ուրումն կնոջն Մեգարացւոյ՝ ասեն՝ զանպաճոյճ և զանպերճ կերպարան նորա։ Քանզի լուր առեալ կնոջն՝ եթէ Աքայեցւոց զօրավարն առ իւր գայ իջավանել, գոտեպինդ կազմէր նմա զընթրիսն՝ ո՛չ գոլով անդանօր առն իւրոյ։ Իսկ յանկարծ յայնժամ 'ի ներքս մտեալ Փիլոպիմէն՝ քղամիդ դուզնաքեայ զանձամբ արկեալ, կարծեալ կնոջն եթէ ո՛չ ինքնին Փիլոպիմէն իցէ, այլ 'ի պաշտօնէից նորա ոք և կարապետ, աղաչէր զնա օգնել նմա. իսկ Փիլոպիմէն անդէն 'ի բաց զքղամիդն եդեալ, սկսաւ պատառել զփայտն։ Յայնմ պահու հասեալ անդր տանուտէառնն՝ և տեսեալ զնա այնպէս, ասէր "Զի՞նչ է այդ ով Փիլոպիմէն.,, նա եւ պատասխանի 'ի բարբառ Դորիացի. "Եւ զի՞նչ այլ իցէ, բայց՝ զյոռի կերպարանին լուծանեմ զվրէժն"։ Այլ և Տիտոս ծանակեալ զմասն զայլ զմարմնոյն՝ ասէր. "Ով Փիլոպիմէն, զի՞արդ քո գեղեցիկ են ձեռք և ոտունք՝ այլ քո չի՛ք որովայն". քանզի 'ի միջին մարմնոյն վտիտ յոյժ էր նա։ Այլ հեղնութիւնդ առաւել 'ի դէմս զօրուն նորա յանդգեսցի արդեօք. զի էին իսկ նորա քաջք հեծեալք և այրուձի, սակայն պարէնք բազում անգամ պակասէին նոցա։ Արդ այսոքիկ վասն Փիլոպիմենեայ պատմին 'ի վարժարանս։

Իսկ յաղագս բարոյից նորա, քանզի պատուասէր էր՝ չէր զխստմին անքաժ 'ի

յանձնառութիւնէ և 'ի ցասմանէ. այլ թէ-
պէտ և առաւել Եպամինոնդեայ զուգա-
կէտ թեւակոխէր նա և նմանողական նմա
յանչափս և 'ի զգօնութեան և յանշահա-
սէր 'ի բարս, սակայն և 'ի քաղաքականն
ոգւոց համբերողաբար նա կայր 'ի հեզութեան
և 'ի ծանրութեան և 'ի քաղցրութեան՝ 'ի
պատճառս ցասմանց և խառնմանց բա-
րուցն, և քան 'ի քաղաքականն՝ զխաղաղա-
գոյն կա 'ի զինուորականն երևէր նա: Զի
և յառաւելին սիրոյն սիրելեաց նա զզինուո-
րութիւն. և մանաւանդ կա վարժէր 'ի հրա-
հանգս նորա՝ զինու զարդու վառելով և
յերիվար աշխատանելով: Եւ քանզի ան-
գրաւոր նա քաղաքական երևէր և 'ի զօրա-
կութիւն, 'ի նոյն յորդորելով և 'ի բարեկա-
մացն և 'ի խնամածուացն, նա հարցանէր
ասէր՝ եթէ առողջագ զօրէկութիւնն
ձիաւորացն իւր զինուորականին. իբրև նո-
քա ասացին զմշմարիտն, եթէ ընտու խիկ
առողջերելով է ընծիչն 'ի զինուորէն. և
կերանք և կերակուր և կրթանք միոյն՝ սոսր
է 'ի միւսմէն. քանզի ընծիչք յերկարեն 'ի
քուն և յագեցմանն 'ի կերակուր, և պայ-
մանն մի ունելով զշարժմանն և զհանգստեան,
այնպէս յարգել գործեն նոքա զմարմինն.
յորում և 'ի խուն մի բանութենէ և 'ի
վերջազակէ սովորութեանն հեշտանա մեռա-
նին. իսկ զինուորաց պէտք են սովորել յա-
մենայնն միանգամայն, և առաւել յան-
առաջութիւն և 'ի աղքատութիւնս բազումս:
Զայսոսիկ լուեալ Փիլոպիմէն, ոչ միայն 'ի

բայց այնուհետեւ կայր 'ի կրթանաց զօրէ-
կաւառութեանն և յինչաց ևս քերէր զնա,
այլ և առաւ 'ի զբօսավարութեանն՝ զդեհչաց
արուեստն յանդարգաց աանկի զնեղ և ան-
փոփոխանական գործ, եղեւ որ զմանրմկնս առ-
կարեւոր մրցանաւն անպիտանս յարդարեցէ։
Իսկ յետ այնորիկ 'ի մարժարակեաց ա-
զատացեալ նա և 'ի պատահարակաց, եղեւ
քաղաքացիք հրատակս արձակէին յաւարի
առնուլ զԼակոնիա, ենքն յառաջապահակին
ցանդ առաջին էր 'ի խաղալ, և վերջին՝ 'ի
դառնալ։ Բայց պարապեալ՝ կրթէր նա
զանձն կամ 'ի յորս՝ կորովի գործել ըղ-
մարմինն և թեթեւութեանց, և կամ 'ի մշա-
կութիւն։ Քանզի և էր իւր նորա կալուած
գեղեցիկ քաղն աապարիսք հեռի 'ի քա-
ղաքէն. ուր գնայր նա զօր ամենայն յետ
ճաշուն կամ ընթրեացն, և անդանոր 'ի
գուղնաքեայ խշտի ընկողմանեալ 'ի քուն
լինէր ընդ մշակացն. և յառուցեալ վաղ
քաղ՝ գործէր ընդ այգորդան և ընդ ան-
դէորդան. և դառնայր առա 'ի քաղաքն՝
պարապեալ յիրս հասարակաց ընդ բարե-
կամացն և ընդ իշխանաց։ Իսկ 'ի շահից
զինուորութեանն գնէր նա զէնս և երի-
վարս և փրկանաւորէր զգերին. բայց զտունն
իւր լիացուցանէր 'ի հասից մշակութեանն,
շահավաճառութիւն անարատ քան զայլն
ամենայն. և խնամով պարապէր 'ի նոյն,
քանզի և համարէր իսկ արժանապէս զիւրան
ժառանգել մարդոյ՝ որ անձնապահն լցէ
յօտարին գոյից։

[illegible]

Եւ էր Փիլոպիմէն ամաց երեսնից, յոր-ժամ Կղէոմենէս արքայ Լակեդեմոնա-ցւոց յանկարծուստ գիշերի անկեալ 'ի վերայ Մեգաղեպօլեայ և վանեալ զպա-հանորդսն, եմուտ 'ի ներքս և կալաւ զհրա-պարակն : Յայնժամ Փիլոպիմէն դուն գործեալ 'ի Թիկունս հայրենեացն, և ոչ ինչ յաջողեալ վանել զԹշնամին, Թէպէտ և քաջաբար մարտ եդեալ կռուեցաւ նա-հատակեալ, սակայն և գաղտ գողացաւ զքաղաքացիսն 'ի քաղաքէն՝ տեղի և ժամ տուեալ նոցա ելանել արտաքս, ինքնին արձանացեալ ընդդէմ հետամտիցն և քար ընդ ոտն եդեալ Կղէոմենեայ. մինչև յետ ամենեցուն հազիւ ուրեմն ելանէր և ինքն խոց և վիրաւոր՝ տապաստ անկեալ իւրոյ երիվարէն : Իսկ իբրև Մեգաղեպօլեցիք ապաստան կալան զՄեսսենէ, առաքէր առ նոսա Կղէոմենէս և ասէր դարձուցանել առ նոսա զքաղաքն և զկալուածսն : Յայն-ժամ տեսեալ Փիլոպիմէն զիւրսն մտա-դիւրագոյնս ընդունել 'ի բանսն Կղէոմենեայ և փոյԹ անդրէն 'ի դարձն, յորոն եկաց՝ խօսէր և խելամտուս առնէր՝ եԹէ Կղէոմե-նէս ոչ եԹէ զքաղաքն խնդրէ դարձու-ցանել առ նոսա, այլ մանաւանդ և զքա-ղաքացիսն ընդ ձեռամբ ունել, զի այնպէս աներկեան ևս տիրասցէ նոցա. զի և օգուտ ինչ նմա չէ անդէն կալ միայն 'ի պահպա-նուԹիւն Թափուր տանցն և պատուա-րացն. այլ հարկ է և զայնոսիկ Թողուլ լքանել առ ամայուԹեանն : Այսպիսիք

[illegible]

տղքայլին. եւ նորա ոչինչ հաւանեցան նմա, եւ ուռչս եւս արարին եւ ցնորելոյ, զի եւ չեւ էր ծանուցեալ նախատակութիւն տան, նա անդէն զեւր քաղաքացիսն 'ի բաց առեալ՝ նորօք հանդերձ խաղայր անկանէր 'ի վերայ հեստեակացն. եւ անդէն խռովեալ սաստիկ հարեալ 'ի նոսա՝ 'ի փախուստ եւս խուճապեցուցանէր, եւ հարուածս անհնարին 'ի վերայ հասուցանէր:

Այսպէս խորախոյս առաւել առեալ զօրաց արքունի՝ անդէն խաղայր 'ի դիմի հարկանել խռովելոց Թշնամեացն, Թողուր զերիվարն եւ այնպէս հետի 'ի դժուարս անդ ուղխալիցս եւ անդնդախարս՝ մինչդեռ մարտ եդեալ կռուէր վաստակեալ մեծաքիրտն այրուծի սպառազինութեամբն, անդուստ Թափ երկոքին բարձք նորա նետահար լինէին միջամտուխ սլաքաւն, ոչինչ մահացու՝ սակայն կարեվէր: Եւ ոչինչ զոտն յառաջնէ փոխել կարէր Փիլոպիմէն՝ այնպէս ոտնակապեալ, անհնարին տագնապեցաւ այրն. քանզի եւ ճարմանդ փքնոյն դժնդակ գործէր զեւլն՝ 'ի բաց 'ի վիրացն քարշել զնետն: Իսկ եւ որ առ նովաւն կային՝ ոչինչ իշխեցին մերձենալ 'ի նա, եւ խաղմն սաստկացեալ յոյժ էր, գուցայր Փիլոպիմէն մղձկեալ առ զայրոյց ցասմանն եւ 'ի պատուասիրութենէն մրցանաց. ճիգն ուժգին Թափեալ շարժել քայլել եւ ըղպրտունսն ռանափոխեալ՝ այնպէս միջաբեկ խորտակէր 'ի մարմնոյն զնետն, ապա տայր զնետաբեկսն զերկոսին 'ի բաց քարշել. եւ

ինքն ոտնաւորացեալ՝ մերկեալ զզօրավարականն վերարկուն յարձակէր 'ի մէջ նահատակացն, և խրախոյս տայր յաղթել և նախանձ քաջութեան յորդորէր զօրականսն:

Այսպէս յաղթութիւնն առեալ Անտիգոնոս, փորձ փորձեալ զՄակեդոնացւոցն հարցանէր, առ ի՞նչ նոքա զայրուձին շարժեցին առանց հրամանին. իսկ նոքա 'ի չքմեղս լինէին՝ իբրու առակեալք 'ի խոանել 'ի Մեգալոպօլսեցւոյ յերիտասարդէ, որ զխնդութիւն նահատակեցաւ 'ի միում թշնամեացն, ժպտեալ Անտիգոնոս՝ ասէր. "Երիտասարդդ այդ ուսեալ զգործ նահատակեցաւ զմեծի զօրավարի": Եւ ապա յետ այնորիկ յոյժ գեհանփառաւ հարցու Փիլոպիմէն. և Անտիգոնոս ինքնին խնամով պահեալ զնա ընդ ձեռամբն՝ պարծանօք և զօր 'ի նորա մատուցանէր նմա. այլ նա չհաւանեցաւ. զխնդէր խակ քաջ զօրս բարուց անձին՝ իբրու զժուարոյեամբ ընդ ձեռամբ լինել այլոց:

Բայց և չկամեցեալ կալ անգործ 'ի կրթանս զինուորականին, չոգաւ 'ի Կրետէ և անդ անդ 'ի զինուորութեան հարուստ ժամանակ վարժեալ ընդ արս մարտիկս յամենայն ազգ կռուոյ, և ժուժկալ առվարժեալ և աոկասութեամբ, դարձեալ մեծանունն առ Աքայեցիս մեծաւ շքով. զի և անդէն կարգեցին զնա զօրավար այրուձիոյն: Զայրուձին զայն առեալ զանձնաւոր Փիլոպիմէն, և անեալ երիվարս վարել նոցա փոքունս և վատնեալս ըստ ընդունելն

յարշաւանս զինուորութեանն. և զի՝ և բազում անգամ նոքա խոյս տուեալք, զայլս 'ի տեղին փոխանակէին՝ և անփորձ և անարիք էին առհասարակ. զի և այլք 'ի զօրավարացն ցանգ այնպէս անհոգացեալք էին 'ի բանին՝ զանգիտեալք 'ի մեծ զօրութենէ այրուձիոյն Աքայեցւոց, որ իշխանք զատտուորք էին պատկաց և պատուհասից: Զայս ամենայն տեսեալ Փիլոպիմէն՝ ոչինչ թուլացաւ, քաղաքէ 'ի քաղաք ընթացեալ գեղեցիկ նախանձու զոգիս վառէր զերիտասարդաց. և որոց պէտք էին՝ պատուհաս եւս 'ի վերայ կապէր, և տուեալ կրթէր զնոսա 'ի հանդէս փառաց և 'ի մրցանս առաջի բազմութեան հանդիսատեսացն: Եւ այնպէս 'ի սուղ ժամանակի առհասարակ զամենեսեան կորովիս գործեաց և քաջարիս, և որ մեծ եւս 'ի զինուորական կարգին՝ շոյտս և թեթևս. զի և 'ի դարձուածսն և 'ի շրջանսն և 'ի քայլսն միոյ միոյ, դարձեալ և միահամուռ այրուձիոյն՝ այնպէս քաջիկ վարժեաց, զի առշպտութեանն փոխելոյ 'ի կայից 'ի կայս և 'ի ձևոց 'ի ձևս առհասարակ գնդին՝ թուէր իմն միոյ մարմնոյ գործն:

Իսկ երբեմն 'ի գոռ պատերազմի շահատակեալ նորա առ Լարիսաւն գետովն ընդդէմ Ետովլացւոց և Եղիացւոց, Դամոփանտոս զօրավար այրուձիոյն Եղիացւոց մտրակ 'ի կուշտ երիվարին յարձակէր սաստկութեամբ 'ի վերայ Փիլոպիմենեայ. իսկ սա 'ի դիմի արձանացեալ քաջութեամբ և

զառաւելս առնելով հարուածոյն՝ մեծազահաց զԼակեդեմոնացիսն զխաթանալով յերկիր կործանէր։ Զայն տեսեալ 'ի փախստեան զառաջնոյն թշնամիք. և բարձրանայր այնուհետև յորժ Փիլոպիմէն, իբրու 'ի կատարութեան ձեռինն՝ ամենայն երկրաւորագ մեհագոյն, և յանձնառութեան՝ ամենայն ծերունեաց զեր 'ի վերոյ, ըստ ամենայն քաջութեանց 'ի կռուել և 'ի զօրավարել։

Սակայն առաջին Արատոս առնելով բարձրացոյց զժողովուրդ Աքայեցւոց յառաջադիմութիւն և 'ի զօրութիւն յանկարծ մեծամեծն նոցա. քանզի և ընկալեալ իսկ էին Աքայեցիք ցրուեալ 'ի քաղաքս, և նա առնելով միաբանութիւն կարգելով նոցա քաղաքականութիւն՝ արդարև Հելլենական և ըստ մարդասիրութեան։ Եւ զոր օրինակ է տեսանել 'ի հոսանս ջուրց՝ կառուցեալ դուզնաքեայ յինչ նիւթոց զառաջինն, և զհետ եկեղեցն զարձեալ կռուել յառաջինսն, և առաջացելով զանազուած հաստատել կուռ, նմանապէս գինչ եղև և յԵլլադա. զառաջինն քաղաքքն ցրուեալ գիտակցութեանց էին, և միացեալ Աքայեցիսն և յանդուգնեցեալ զչըջակայ քաղաքացն յերկրեանս, կիսոց ձեռամբ տալով միութեան 'ի ընդ ըստ նուաճեացն, և զկէսս միաբանական անդամ և քաղաքականութեանց առնելով, խորհուրդ խորհեցան՝ մարմին մի և տէրութիւն մի զՊեղոպոննեսոս գործել։ Այլ առ կենդանութեանն Արատոսի, նոքա բազում մասամբ նուաճեալ կային ընդ

զօրութեանն Մակեդոնացւոցն. և իշխէր նոցա Պտղոմէոս, ապա Անտիգոնոս, ապա Փիլիպպոս, որ ցանկ միջամտեալ էին յիրս Հելլենացւոց:

Իսկ երբ և Փիլոպիմէն իշխանացաւ, ինքնին այնուհետև նոքա բաւականք 'ի մարտ, օտար զօրավարաց չէին նոցա պէտք: Քանզի Արատոս՝ որպէս երևի՝ այր վատամարտիկ, զինուոր գործովն քաղաքականոյն մասամբ յառաջ վարեաց ամէնք բարոյիւքն և բարեկամութեամբ ընդ արքայից՝ որպէս գրեալ կայ 'ի վարս նորա: Իսկ Փիլոպիմէն այր մարտիկ հզօր և աշխոյժ, առ այս՝ և յաջողեալ յառաջին 'ի մարտսն, ընդ զօրութեանն և խրախոյս մեծ յորդեաց յԱքայեցիս՝ որ ընդ նորա ձեռամբն յաղթեցին 'ի բազում պատերազմունս: Այլ առաջին առնել փոխեաց Փիլոպիմէն զձախողակ կարգ զինուց զԱքայեցւոցն և զզասաւորութեանն. զի վարէին նոքա ասպարս փոքրագոյնս, զի և առ անձկութեանն՝ մարմինքն չէին ամփոփածուկ. և զնդարդունս ունէին փոքրիկունս քան զպայխոնս մակեդոնացիս. և թեթևագէնք այնպէս՝ հարեալ խոցէին նոքա 'ի բացուստ, բայց 'ի խառնել գունդն՝ վերջռամնէին:

Իսկ կարգ դասաւորութեան նոցա չէր զօրաւոցեալ[1], այլ կարգեալ 'ի փաղանգ, որոյ և ոչ ծակառ գոյր ձգել երկայնել զզօրագնդունս. և ոչ դարձեալ կուռ վահանափակ որպէս՝ ըստ օրինաց Մակեդոնացւոցն. աւասիկ և հեշտին վանեալք ցիր ու

ցան ըմպէին։ Այլ Փիլոպիմէն կարգ ե-
դեալ՝ փոխեաց զասպազապան զայն 'ի վա-
հանս, և զզեղզարդուածն զայն 'ի զարդարանս.
և վարժեալ զնոսա զգլխանոցօք և բանձրացու-
ցանելոց զրահից և ոտնապանօք, փոխանակ
առասպարազարդաց վարդիցն և արշաւանացն՝
վարժեաց զնոսա 'ի մեծամասնութ մարտ ար-
ձանանալ և կռուել։ Եւ այնպէս զինուո-
րեալ զզատուածնական՝ յայնչափ քաջալերք
խրախուսեաց զնոսա, զի և անպարտելիք
անձինք կարծէին։ Այլա փոխեաց 'ի զեղե-
ցիկ կա այէսա զնոցա զզարդանն. և զզարդա-
հանդերձ զծախսն։ Քանզի զոլով նոցա
սիրոյդ այծնասպասծոյծ հանդերձից և ծի-
րանանների զորոց և պատուանայէրք 'ի մե-
ծամեծար ընթրիս և 'ի խնջոյս, հնար չէր
խալաս զնոսա 'ի բաց քերել 'ի մնոյ և 'ի
զժպատուեհ ցանկութեանցն, յորոց կարե
'ի կրկից ախտից նոցա 'ի վարնջուց իսկ էին
զբաւեալք. բայց Փիլոպիմէն զայծնասէր
բարոյն յաւերորդաց անձն 'ի պիտանեքն
չքնեալ և 'ի պարկեշտան, անանձեալ զնոցա
զծանրադէին զզարանս զմարմնոյն, այլ և նա-
ցա զարդարել և վայելչանալ յանօթս պա-
տերազմի և 'ի հանդերձանս նորա։ Եւ
անդ էր տեսա տեսանել հանրութ զերդեալ՝
հարուլ խոշորանալ բաժակս և ընկալանակս
զսպաս ոսկւոյ և զարծաթոյ, և ասնդաղ
պատուել յարծաթ և յոսկի զբահս և վա-
հանս և սանձս. զարձեալ և յասպարէզս
խոնելեալ զմարտուկս երիվարաց՝ 'ի կրթանս,
և զամէնայն պատանեացն՝ 'ի վարժս ասպա-

ռազէն մարտից։ Անդ և 'ի կանանց ձեռս Թարթափէին տաղաւարօք դաւանադրոյն նա-բօտիք գեղեցիկ ոճ՛ նել զզգուշան ըղ-պատմուճանս ոսկուձիոյն , և զըղամիդս զոր ականներն ծաղկանկար յօրինել։

Եւ արդ այս տեսիլ ինքնին խրախոյս յորդէր և զաչխոյժան վառէր զերիտասարդ-դաց զխմադրաւ նահատակել 'ի վտանգս։ Քանզի այլք 'ի բազմահանդերձ ապաստանց զխումբն զորդացուցանել , և 'ի վարել նոցա մեղկանայ բնութեան , խօսու 'ի հաղթից ոմանց և 'ի հրապուրից զգայութեանցն՝ վարակեալ միանգամայն միտք և ոգի. առ-կայն որ յանօթս պատերազմին զարդք և զրդանք՝ ոյժ առալ բնաւորեցան նահատա-կութեան ոգւոյն. բայց որում և ինքնին Հոմերոս 'ի զինին տեսլեան նորակերպ զէ-նուցն յանդիման աչաց Աքիլլեայ , զորդէն արծարծէր զցխուցանելին՝ վառել ցանկու-թեամբ 'ի դէտս զինուցն այնոցիկ։ Եւ իբ-րև այսպէս առնել զարդարեաց նա զառա-տանին , կրթէին մարզէին նոքա այնու-հետև կամակար յօժարութեամբ և այլ զարդարք յամենայն իսկ 'ի մրցանս զոր հրա-մայէր նոցա. զի և յոյժ սիրեցին նոքա զայն կարգ դասատուութեան զՓիլոպիմե-նեայ՝ խելք մեծամուր իմն պատուաւորական. և եղեն զէնքն 'ի ձեռս նոցա՝ փոքրոգիք առաւել և հեշտալիք , զի և 'ի փայլիւն զէ-նուցն և 'ի շուքն և 'ի գեղն խնդամտեալք առ հասարակ՝ հեշտապար շարժէին ձօձէին և տանէին բերէին. ցանկային փութայէս

մարտ զինել կռուել նոքօք ընդ թշնամեացն ։

Բայց էր յայնժամ մարտ պատերազմի Աքայեցւոց ընդ Մաքանիդասայ բռնաւորին Լակեդեմոնացւոց. այն որ բռնակալ հարեալ զօրու ծանու խնդրէր ամբառնալ համօրէն 'ի վերայ Պելոպոննեսոսի ։ Իբրև լուաւ հասանել զաւրացեալ նորա 'ի Մանտինէա, փութանակի և Փիլոպիմէն զիւր բանակին խաղացուցանէր ընդդէմ ։ Եկին և ճակատեցան մօտ 'ի քաղաքն. և էր նոցա երկոցունց առաջոք բազում երկաց զօրականին, և զօրք ևս ամենայն քաղաքացն էին ընդ նոսա ։ Իբրև մարտն խառնեցաւ, և Մաքանիդասայ երկրին խորտակէ 'ի փախուստ զարձակունեցեալ զօրակցունեկեցան և զՏարենտացիսն՝ որ ճակատեալ կային յառաջոյ Աքայեցւոցն 'ի ձախոյ թևէն, ոչինչ փոյթ կալեալ, պատել պաշարել զմնացեալսն և վանել զմանկանցն, այլ հետամուտ լինէր անկարգ փախստէիցն՝ դառնայր յիւրմէ փաղանգէն և թողոյր այնպէս զԱքայեցիսն աւերակեալ յիւրեանց կարգէն ։ Իսկ յայնժամ Փիլոպիմէն այնպէս կանուխ ձախողակի պատահեալ եղեալ, թէպէտ և թուէր ինձ 'ի վատթարութիւն դարձեալ իւրոց իրացն, 'ի վերայ այսր՝ և ցուցանէր զանձն իբրև 'ի դուզնաքեից ասէր զինել զղամին ։ Այսպս տեսեալ զմեծամասն վերջապէս զթշնամեացն, զի հետամուտ անկանէրն զառաջեաւ 'ի փախստականսն և վաշխ արձակ 'ի միջոցին թողին, եթող զնոսա այնպէս անձանկ արձակ հարուստ մի ապաստանեալ զնոսա.

և անդէն փութանակի յարձակեցաւ 'ի վերայ մնացելոյ փաղանգին Սպարտացւոց՝ շուրջանակի պատելով պաշարելով, մինչդեռ 'ի բացեայ կայր զօրավարն և փաղանգն առկն հրոսակին չունէր, այլ և յաղթութիւնն ինքնին կարծեաց ստանել և խաղաղաւ զթշնամիսն վանել՝ որոց հետամուտ իսկ էր Մաքանիդաս։

Անդանօր աստ Փիլոպիմէն ընկրկեալ զԼակեդեմոնացիսն, հարուածս մեծամեծս ածէր 'ի վերայ նոցա. քանզի և տեսն՝ աւելի քան չորից հազարաց յայնժամ սապատառ անկեալ. ապա խաղայր ընդդէմ Մաքանիդասայ՝ որ դարձ առարեալ գայր հանդերձ իւրովքն 'ի հետամտութենէն լինելոյն։ Իսկ էր անդանօր խրամ մեծ և խոր ընդ մէջ նոցա, և խաղային զնային կողմանց երկոքեան առ ափամբն 'ի հանդիպոյ միմեանց. հնարս հնարէր Մաքանիդաս անցանել զխրամն և փախչել, և Փիլոպիմէն անդուստ խոյս ընդ առն լինէր նմա։ Եւ անդ էր աստ տեսանել զնոսա ոչ որպէս զօրավարս 'ի կռուի մատուցեալ, այլ գազանաց նմանեալ վայրենեաց՝ որք 'ի խուճապ տագնապին հզօրագոյնս կռուեսցին. յորժամ անդուստ Փիլոպիմէն՝ որպէս որսորդ քաջ 'ի վերայ կացեալ առն՝ գուն սաստիկ գործէր։ Յայնժամ երիվար բըռնաւորին յաղթահարուստ և գոռ, ընդ քէրոսն և ընդ ապառաժոյժ եկեալ 'ի կուշտն 'ի մտրակաց սաստի և անտի, խրախուսեաց անցանել ԶԷ հուսն և քաջալանջ վազեալ ընդ

խորամանկն՝ բուռն առնէր որ յառաջոյ անբա-
կացին կռուելոյ յաւէն 'ի հանդիսից ։ Իսկ
անդստին Սխոմիոս և Գորգիէնոս անձնա-
պարհաւորեալք Փիլոսոփայութեան և վահանա-
փառկեք նորա, այն ինչ 'ի վայր գլխիվայր-
գործեան առեալ 'ի հարկանել՝ միաբան յար-
ձակեցան, անձնապարեալ Փիլոսոփայեն ընդ-
դէմ Մաքանիդեայ՝ մինչդեռ երկիւղ նո-
րաս գլուխ 'ի վեր ամբարձեալ էր 'ի հան-
դիսից նորա, ինչն վայրկ մի գիտուն թե-
քեալ՝ ձօձեալ զնիզակն արձակէր առաս-
կուլթեամբ և թամբ հարեալ զմիջավայրն ան-
դէն յերկիր թաւալէր ։ Եւ յաղագս այ-
սորիկ առաքս նման պատկեր պղնձի 'ի Դեղ-
փիս կանգնեցին Աքայեցիք՝ 'ի սոյն նման-
նութեան շահատակութեան այնմիկ, մե-
ծապէս հրաշացեալք ընդ ահագին գործ
քաջութեանն, և ընդ գեղեցիկ զօրավա-
րութիւն առն 'ի մարտին ։

Եւ ասեն՝ եթէ 'ի հանդիսին Նեմեան
մրցանակացն, և երկրորդ զայն նուագ զօրա-
վար բանակին կացեալ Փիլոսոփայեն՝ ոչ շատ
ինչ զկնի Մանտինեան յաղթութեանն, 'ի
տօնի անդ հանդէս առնէր նա առաջի
Հելլենաց զփառաց զնւրոյ փաղանգին 'ի
զէն և 'ի զարդ վառեալ. և սոյր զօրակա-
նին անդանոր շուտափոյթս և յաղթս շա-
փաբերեալ զքայլս գործել զկրթանացն
նոցա՝ ըստ խրոխտ զօրաւորութեանն.
ապա 'ի հանդէս նուագաց քնարահարացն
մտեալ նա 'ի թատրոն անդր և ընդ իւր
պատանեակք արկեալք զինուորականն քղա-

միգան և զծիրանի բանձկոնսն, առհասարակ քաղաքաւոյդք և ծաղկահասակք՝ պատկառա-կացեալք խուրեանց զօրավարին, և զերիտա-սարդական աշխուժիցն զզէնսն բերեալք ձոխ և ակերձ ՚ի բազմադէմ նահատակու-թեանց անտի խուրեանց, և մտեալ նոցա անդր՝ յորժամ ըստ դիպայց Պիւղադէս քնարերգակ երգէր զՊարսան զՏիմոթեայ, սկիզբն առնելով եթէ "՚Ի հոյակապն ա-զատութեան զարդարեալ ես ՚ի զարդ զմեծն Ելլադա". ասեն՝ եթէ յորժամ Պիւղա-դէս քաղցրութեամբ ձայնին տպաւորա-գոյնս ճշգրտէր զքերթուածոյն ազնուու-թիւն, անդանօր առհասարակ տեսարանն դարձաւ ակնկառոյց ՚ի Փիլոպիմէն՝ ծափս նմա հարկանելով հրճուանօք. մեծապէս յուսային Հելլենացիք ՚ի նորա ձեռն միւ-սանգամ վայելել ՚ի վաղնջուցն խուրեանց աւագութիւն, և վայրիկ մի ևս զնոյն նա-հատակութիւն նահատակել իբրու զա-ռաջինն:

Բայց ՚ի մարտս և ՚ի վտանգս՝ զոր օրի-նակ երիվարք սովորեալք սիրեն զընտանաւոր զհեւրեանց վերելեական ունել, և թէ եր-բեք յօտարաց ոք ՚ի նոսա աշտանակել իցէ, նոքա սրտմտուցեալք ՚ի վեր վազեն և ընդվզեալք հեստեն, սոյնպէս և բանակ Աքայեցւոցն այլովք զօրավարօքն անկա-նէր բեկանէր. այլ ապա ակնկառուցեալք ՚ի Փիլոպիմէն՝ տեսանելով միայն չափ զնա պատրաստանդեալ քաջանայր, զօրավար զնա միայն դիտելով անկուռուելի ՚ի թշնամեաց,

յորոյ և 'ի փառաց և 'ի հանճարոյն սաս-տէին նոքա, որպէս և յայտ յանդիմանու-թեամբ ցուցին: Քանզի Փիլիպպոս արքայ Մակեդոնացւոց 'ի մեծի եղեալ՝ զի եթէ զՓիլոպիմէն միայն 'ի միջոյ բարձցէ, ահըն-կէց այնուհետև յԱքայեցիսն լինիցի, առաքեաց գաղտաբար յԱթէնս առ ջնջել 'ի կենաց զՓիլոպիմէն. սակայն խայ-տառակեալ հալածեցին՝ վասն անուան աստե-ղութեանն ժառանգեալ Փիլիպպոս առ-ամենայն Հելլենացիս: Իսկ յորժամ և Բիովտացիք պաշարեալ նուաճէին զՄեգա-րեան՝ ակնկալեալք անդէն տիրանալ քա-ղաքին, անդադար լուր յանկարծ զհամ-բաւ հարեալ՝ թէպէտ և սուտ՝ եթէ Փիլո-պիմէն առ դուռս հասեալ կայ զօրավիգն քաղաքին, խուճապեցան և արագ արագ թողեալ զամենայնն՝ զոր առեալ խել էին 'ի պատերազմ, զոյս արձակեալ փախ-չէին տարադէմ:

Այլ այս՝ և Նաբիզոս բռնաւոր Լակե-դեմոնացւոց յետ Մաքանիդեայ՝ յեղա-կարծումն կալեալ զՄեսսինէ, մինչդեռ 'ի տանկականաց որք էր Փիլոպիմէն և չէր նորա իշխանութիւն 'ի ձեռս, իբրև ոչինչ կարաց առ հաւանեցուցանել զԱքայեցւոց զօրա-վարն զԼիւսիպպոս յօգնութիւն Մեսսե-նացւոց, իբրև ողջոյն քաղաքն առեալ էր և թշնամեացն 'ի ներքս խուժեալ իսկ էր, չոգաւ ինքնին Փիլոպիմէն 'ի թիկունս նոցա՝ առեալ ընդ իւր զքաղաքացիսն միայն. որք ոչ օրինաց մնացին և ոչ քուէարկութեան

և ինքնահրամանք իշխանացուցին զՓիլոպիմէն, 'ի նոյն բերկրանս 'ի բնութենէն՝ որ ցանոր զհետ քաջի երթալ զօրավարի սադրել բնաւորեալ է։ Այդ լուր զՓիլոպիմէնեայ առեալ Նաբիդոս, ոչ համբարձեալ զանեղի ունել՝ թէպէտ և զօրուն 'ի ներքս 'ի քաղաքն հորդան տուեալ էր. անձնատուր ընդ այլ զրուցս քաղաքին ելեալ արտաքս՝ չու վաղվաղակի հրամայէր բանակին. մեծ համարէր զփախուստն, որպէս և եղև իսկ, և յազատութեան թողուր զՄեսսէնէ։

Եւ այդքան են այդքանիկ գեղեցիկք վասն Փիլոպիմենեայ. այլ ոչ նոյնպէս և երթն նորա երկրորդ 'ի Կրետէ, հրաւիրեալ անդր 'ի Գորտինացւոց 'ի զօրավարութիւն. քանզի առդիւտ զնովաւ արկանէին յայնժամ, զի եթող ելեալ նա զհայրենիսն՝ մինչդեռ Նաբիդոս մերձաւոր առդուրս հասեալ էր՝ խոյս տուեալ ինքն մարտս դնել կռուել 'ի վերայ հայրենեացն, կամ թէ 'ի գժապատեհ ցանկութենէ փառաց և համբաւոյ բերեալ 'ի մէջ օտարաց։ Եւ արդեօք նեղեալ յոյժ էին յայնժամ Մեգաղէպօլսեցիք, զի և լուռ պատուարն իւրեանց ելանել իշխան չէին նոքա. և առնպեցան եւ նոքա վարել սերմանել և զանձուկս փողոցաց քաղաքին՝ գտանել հաց. զի յաղարտ վարեալ էին անդէք նոցա 'ի թշնամեացն՝ որ բանակ հարեալ նստէին առ դուրս նոցա. ուստի և յայնպիսում ժամանակի մարտ եղեալ Փիլո-

պիմէն ընդ Կրիտոլայիւ՝ զօրավար կացեալ օտար քանակի որ յայնկոյս ծովուն, անդէն եւ ամբաստանութեան անձինն՝ իբրու խոյս տուեալ 'ի մարտէ իւրոյ գաւառին :

Սակայն և կէսք ասեն, եթէ այլք յայն ժամ յԱքայեցւոց ընտրեալք 'ի զօրավար և Փիլոպիմէն կացեալ ընդ առակականս, ոչինչ կամեցեալ կալ պատերազմ, եղեալ զբօնոյք 'ի զօրավարութիւն Գորտինացւոց 'ի հրաւիրմանէ նոցա : Քանզի և բնաւ իսկ օտար էր այժմ 'ի պատերազմ կենաց, և խնդրէր որպէս զայլն ամենայն որ 'ի պէտս, անընդէս և զգինուորականն և զզօրավարութեանն յանդ 'ի գործ արկանել. քան որում և յայտ առնէր բանիւն վասն Պտղոմեայ արքայի : Քանզի 'ի դադարութիւն առեալ զնա կիրառցն երբեմն վասն հանապազորդելոյ կրթանաց զօրականին նորա. և զի՝ և զինուր մարմինն ինքնին արքային փոյթ վարժէր աշխատասիրաբար 'ի զէնս, եւ պատասխանի Փիլոպիմէն և ասէ. « Իսկ մի՞ որ զարմանալի երբէք ընդ այդ թագաւոր, որ յայնպիսութիւն հասակի ոչ արդիւնացուցանէ զուսեալն, այլ յանդ ուսանի » :

Այլ Մեգալոպօլսեցիք զրգռեալք ընդդէմ նորա՝ կարծեալք դաւաճանեալ առ 'ի նմանէ, պատրաստեցան վտարանդի առարաշխարհիկ զնել զնա. այլ թողլ չետուն Աքայեցիք՝ առաքեալ առ նոսա զօրավար զԱրիստենետոս. որ թէպէտ և խռովեցեալ ընդ Փիլոպիմէն վասն քաղաքին, արգել յայնժամ զպատժակնիքն նո-

րա։ Իսկ անդուստ Փիլոպիմէն սկսեալ գլխաւորել իւր 'ի քաղաքացեացն, ուսանէր բաղդատել զշրջանակայս գնդերոց 'ի ձեռարան_ ջութիւն. առաջնէր նոցա՝ եթէ անդ 'ի նախնեացն ոչ հարկաւորք ինչ էին նոքա և ոչ դարձեալ զաստատակերպք նոցա։ Իբրև յայս առպատտան եղեն նոքա, ապայն և ինքն արձանացեալ յարմանի պաշտպանէր բանիւն նոցա, և ըսուղէր հերձուածս ընդդէմ քա_ ղաքին առ Աքայեցիսն։ Սակայն յետոյ ուրեմն գէտ եղև բանիցդ այդոցիկ։

Իսկ յայնժամ Փիլոպիմէն մարտ եղեալ կռուէր 'ի Կրետէ հանդերձ Գորտինա_ ցւոցն՝ ոչ անխաբդաբ և աղատաղծեալ կարգօք որպէս այր Պեղոպոննեսեան և Արկադացի, այլ անդանօր զկառուցայն զգե_ ցեալ զԿրետացւոցն, և ընդդէմ նոցուն դարձեալ զամեն հնարեալ և խաբանս և յափշտակութիւնս և գաղտնիս՝ յոր մեան_ գամ բնաւորեցան Կրետացիքդ, իբրև տղայ մանկութիւն խայտառակէր զնոսա՝ որոց խո_ րամանկութիւնք ծիծաղելիք էին և սնո_ տիապաշտութեանք առ ճշգրտութեամբ զի_ նուորականին։

Անդանօր այս 'ի գեղեցիկ նահատա_ կութեանց անուն իւրոց զհամբաւն հա_ րեալ և առհասարակ սքանչացեալ, դարձ արարեալ գայր 'ի Պեղոպոննեսոս, և գտա_ նէր զՓիլիպպոս 'ի պարտութիւն մատնեալ 'ի Տիտոսէ, և զԱքայեցիս և զՀռոմայեցիս միահամուռ 'ի մարտ պատերազմի ընդդէմ Նաբիդեայ։ Այսպէս փութայէր 'ի զօրավար

կարգեալ Փիլոպիմէն և միջամտուկս 'ի նաւամարտութիւն եղեալ, գրեն եթէ իբրու ընդդիմամարտնողական ձախողակին և ինքն հանդգնակեր բաղդի, նուաճեալ յոյժ 'ի փառաց և 'ի հանճարոյ քաջութեանն. քանզի նկուն եղեալ կորանայր 'ի ծովամարտին. Թէպէտ և կէսք ասեն՝ եթէ խըթացեալ Եպամինոնդեայ՝ գուցէ ճաշակս առեալ խորոց քաղաքացւոցն զշահուց ծովուն՝ փոխանակ ապաւարինացն ևանգակալաց՝ ըստ Պղատոնին, դարձցին և եղիցին նոքա ծածուկ 'ի նմանէն նաւաստիք և ախտատեկլովք. վասն որոյ և ինքնակամ առանց ինչ գործոյ մնացելոյ դարձ առնէր նա յԱսիոյ և 'ի կղզեաց անտի: Այլ Փիլոպիմէն այնպէս ինքն կարծեալ եթէ զինուորութիւն իւր 'ի ցամաքին՝ շատ և ածուփական իցէ նմա՝ կատարել քաջութեանց, քանզի խակ խելամտաւ եղև եթէ կրթութիւնն և փորձ քաննիւն իցէ նշանաւ առ առաքինութիւնն, և քաննիւն իցէ զօրութիւն նորա յամենայն իսկ իրս:

Քանզի և ոչ միայն նկուն եղեալ պարտեցաւ նա 'ի նաւականին, այլ և մեծապէս յանցեաւ՝ քարշեալ 'ի ծով նաւ մի յաղթահարուած, առկայծ հնացեալ և զանձ քառասուն այնպէս լքեալ ամայի, և 'ի նմա ամբարձեալ զքաղաքացիսն. որ և ոչ հանդարտեալ կալ յականատեսն՝ 'ի մտանելս մեծամեծս այնուհետև արկանէր զնաւամատոյց քաղաքացիսն: Իսկ և զիտաց Փիլոպիմէն՝ եթէ այնպէս ծանակեալ առ-

համարձակեցաւ նա 'ի թշնամեացն, զի և համբաւն 'ի ծովէն այնուհետև 'ի բաց խուսեսցէ, և լուր եհաս զի Նաբիս Ճախաբար զանեղի կալեալ՝ կայր 'ի պաշարման Գիւթիոյ 2, անդրադարձեալ փութանակի 'ի նաւս՝ գէմ եդեալ խաղայր 'ի վերայ նոցա յանակնկալ ժամու՝ որք յանհոգս առա անդ վստահացեալ կային՝ իբրու զյաղթութիւնն տարեալք. իսկ նա գիշերի թափեալ 'ի ցամաք զզօրականն, հրձիգ լինէր 'ի վրանս թշնամեացն և հրդեհակէզ առնէր ողջոյն զբանակն, և հարուածս եւս 'ի վերայ հասուցանէր նոցա։

Այլ յետ սակաւ աւուրց յեղակարծումն ընդդատեալ նմա եղեալ յուղւոջ Նաբիդոս 'ի դժուարս ինչ վայրաց, և ահաբեկ զԱքայեցիսն տագնապեալ և յուսահատուր՝ ապրել 'ի դժուարինս անտի զոր կալեալ իսկ էին թշնամիքն, անդանօր վայրկեն մի զանեղի կալեալ Փիլոպոմենն զտեղին յածեալ և մանր զվայրսն զննեալ, յայտ արար՝ եթէ հմտութիւն զօրաստուորութեան զօրու՝ ծայր և պսակ է արուեստի զինուորականին։ Քանզի անդէն սուղ ինչ դարձուածով զձև փոխեալ զփաղանգին, այնպէս իմն յարդեաց յարմարեաց զնա վայրացն, զի և անշփոթ դիւրեաց ողջոյն ասպանակին՝ յոր պաշարեցաւ զօրականն. ապա և 'ի վերայ յարձակեալ թշնամեացն 'ի խուճապ տագնապի արկանէր զնոսա։ Իբրև ետես զի ոչ դէպ ուղիղ 'ի քաղաք անդր փախուցեալ գնային, այլ ցան և ցիր

առոտ անդ ընդ գաւառն անտառախիտ և ընձնուտ, որ անկոխ եւս էր յայրուձիոյն առ 'ի դժուարոց հոսանաց և 'ի ձորոց, առ-դեւլ զերամն ընթանել հետամուտ, և բանակ հարեալ նստաւ նախ քան զերեկոյն: Ան-դանօր մտախորհ եղեալ՝ գուցէ գիշերին մա-խաղանեայքն մի մի և երկու երկու առաւե-նեսցին 'ի քաղաքն, առեալ զօրանա-մասամբ առնէր առ ձորակօքն և առ բլրովքն շուրջ զքաղաքաւն առաւ բազումս յԱ-քայեցւոց վտանգեալս 'ի դաշտին. և յաղթո-ղէր նոցա շատ զոք 'ի Նաբիդեանցն կոտո-րել, որք ոչ 'ի միասին՝ այլ օժանդակք այն-դես և ցանեալք մի զկնի միոյ անկեալն թա-կարգեցան 'ի թշնամեացն ձեռս խոյս. թռ-չունք 'ի վարսն ըմբռնեալք շուրջ զքա-ղաքաւն: Այսպէս վասն այսորիկ ըղձակաթ-առ Փիլոպիմէն Հելլենացւոցն եղեալ, և 'ի թատերսն շուրջ առանձինն առնել նմա, անգոսնեալ Տիտոս 'ի պատուասիրութենէն վայր մի դառնէր. քանզի և խնդրէր իսկ՝ իբրև հիւպատոս էր Հռոմայեցւոց՝ շուք յԱքայեցւոց առնուլ առաւել քան զայր մի Արկադացի, որպէս ոչ փոքու ինչ վեհագոյն գնէր զանձն՝ զի և բարեգործ-եալ էր ինքն առ նոսա. քանզի և միով հրովարտակաւն յանդորր ազատութեան եհան նա ամենայն զաւառն զայն Ելլադայ՝ զոր ծառայեալ ունէին Փիլիպպոս և Մակեդո-նացիք:

Իսկ յետ այնորիկ վճռեալ եղեալ մար-տին՝ խաղաղութեան առնէր Տիտոս ընդ

Նաբիդեայ, զոր և ապա մատնութեամբ սպանանէին Ետողացիք։ Ցայսմանէ աղմուկ չփոթից յուզեալ 'ի Սպարտա, դէպ ժամանակ գտեալ Փիլոպիմէն դիմեաց անդր հանդերձ զօրու, և զկէսս 'ի քաղաքացեացն բռնի, և զկէսս՝ հաւանական բանիւք ածէր 'ի միաբանութիւն Աքայեցւոց Այսորիկ այսպէս եղելոյ՝ զքանչելապէս առաւ համբաւ Փիլոպիմենեայ յորդեաց յԱքայիա, զի զայնպիսի քաղաք աւագ և հարուստ յաւել 'ի նոսա. և արդեւք ոչ դուզնաքեայ ինչ էր՝ զի Լակեդեմոնիա համարեցաւ մասն Աքայիոյ։ Առ այս՝ և զլաւ և զաւագ որ էր զԼակեդեմոնացւոցն յինքն յանգուցանէր Փիլոպիմէն. զոր և պահապան իւրեանց ազատութեանն կալեալ, զտունն և զգոյս զամենայն զՆաբիդեայ 'ի վաճառ հանեալ և քանքար հարիւր և քսան կուտեալ անտի՝ վճիռ տային ձօն պարգևաց տանել Փիլոպիմենեայ՝ առաքեալ առ նա հրեշտակս։ Յորում և յայտնի ցուցաւ՝ զի անարատ այն այր ոչ կարծեալ միայն, այլ և էր իսկ արդարև աւագ այր և անկաշառ. քանզի զառաջինն 'ի Լակեդեմոնացւոց և ոչ ոք կամեցաւ երթալ խօսել ընդ նմա վասն պարգևացն, այլ առհասարակ զանգիտեալք տեղի տային 'ի բանէն, մինչև ապա սահմանեցին արձակել առ նա զՏիմոլայոս 'ի հիւրոց անտի նորա։

Այլ սա հասեալ 'ի Մեգաղեպօլիս և մեծապէս հիւրընկալեալ 'ի Փիլոպիմենեայ,

[illegible]

ներալք՝ վէր 'ի վայր առնէին զՊեղոպոննիսոս : Բայց Փիլոպիմէն ողոքեաց զԴիոփանէս ուշ առնել 'ի ժամանակն՝ զոր Անտիոքոս եւ Հռոմայեցիք առ դրուս Եղլադայ զօրուծանէին հանեալ կան, եւ մի յընտանիս անդր առնուլ յուզել, եւ թէ եւ ինչ մի վրիպակ գործեալ իցեն՝ անփութութիւն կեղծաւորել : Իսկ սա առնէին նմա չմտադրեալ Դիոփանէս եւ միաբանեալ ընդ Տիտոսի մեկնեցաւ թշնամութեամբ 'ի Լակոնիա, եւ յառաջադէմ եւ խաղացայր 'ի Նեբրիս, 'ի ցասումն բորբեալ Փիլոպիմէն եւ ձեռն արկեալ 'ի գործ մի՝ ոչ ինչ արժանաւոր եթէ քաջ զինեացն՝ եւ ոչ արդարոյ արդեօք, այլ այն մեծ եւ արիական յոյժ, անց չոքաւ 'ի Լակեդեմոնիա, իբրեւ 'ի սատակականաց ոք էր նա. եւ արգել կնքեաց անդամնոր զմուտս զօրավարին Աքայեցւոց եւ զհիպպարխոսին Հռոմայեցւոց. փէջայց հանդարտեաց ողջոյն զաղմուկ քաղաքին, եւ անդրէն զԼակեդեմոնացիս առեալ յանդուգանէր 'ի հասարակ միաբանութիւնն իբրեւ զառաջինն :

Բայց յետ այսորիկ կացեալ Փիլոպիմէն զօրավար, եւ պատճառս ինչ առեալ զօրավարութեան ընդդէմ Լակեդեմոնացւոց, դարձուցանէր 'ի Սպարտա զվտարանդեալսն. եւ սպան 'ի մահ վարել՝ ըստ Պողիբեայ՝ ութսուն արս 'ի Սպարտացւոց. իսկ ըստ Արիստոկղեայ՝ երեքհարիւր եւ յիսուն. եւ քակէր պարսպակէր զպատուարս նոցա, եւ հատեալ շատ ինչ 'ի նոցա գետանոյն, առնեալ յաւելոյր 'ի Մեգաղոպոլիս-

ջիս անդր. առ այս՝ և զորս միանգամ 'ի քաղաքացիս Սպարտացւոց գրեալ իսկ էին բանտարկեալք՝ չուոյ հրամանս տայր նոցա յԱքայիա, բայց յեւթն հազարացն՝ որոց ոչ կամեցեալ անսալ, հանէր զնոսա 'ի վաճառ. և 'ի գնոյն՝ իբրու ամենհար եղեալ նոցա՝ կանգնէր սրահ մի 'ի Մեգաղէպօլիս. առաջս և 'ի լրումն անարգութեանն ընդդէմ Լակեդեմոնացւոց և բնաւ իսկ յառաւաթուր կոխել զնոսա՝ թէպէտ և նոքա նկունք մեղադրեալք եղեն տառապանաց արժանեաց, գործ մի գործեաց անագորոյն յոյժ և անիրաւ ընդդէմ քաղաքավարութեանն նոցա: Քանզի եղծանէր աղարտէր զօրէնս կարգին զԼիկուրգեայ, և հարկ 'ի վերայ ածէր մանկանց և պատանեացն փոխանակ հայրենականին՝ առնուլ զդաստիարակութիւն Աքայեցի՝ իբրու ոչ ցուցանել յօրէնսն յայն կայցեն Լիկուրգոսին, երբէք նոքա խոնարհագոյնս ինչ չխորհեսցին զանձանց: Եւ այնպէս յաղէտս անհնարինս յայնժամ պաշարեալ Սպարտացիքն 'ի հարկէ անտի Փիլոպիմենեայ՝ իբրու որ զջիղս զօրին զքաղաքին իւրեանց հատեալ վատթարէր, հեղգացեալք ընկճէին. այլ առաջս ժամ զանեալ և թախանձ արկեալ Հռոմայեցւոց՝ թողին լքին զԱքայեանն քաղաքականութիւն, և միանգամ 'ի բուռն առկեալ հաստատութիւն զհայրենաւոր կարգացն՝ ըստ բաւականին՝ որք առեալ յանկարծ աղէտից անտի իւրեանց և 'ի նորէց:

Բայց 'ի ժամանակին մեծագունի պատերազմին

Հռոմայեցւոց ընդ Անտիոքոսի յԵլլադա, էր Փիլոպիմէն 'ի սոսկականաց անտի. և տեսանել նորա՝ զի Անտիոքոս զանեղի կա_լեալ 'ի Քաղկիդէ պարապորդ զեղեւրէր 'ի տօնս հարսանեաց և 'ի սէր կուսից 'ի տարաժամ հասակին, անգործ և Սիւրա_ցիք խառնակեցիկք և զանտեալք 'ի զօրա_վարէն Թափառեալ գնային ընդ քաղաքս և սստահանկէին, յորժ ցաւէր առն՝ զի չէր 'ի ժամուն Աքայեցւոց զօրավար, և ասէր խանդալ յաղթութեանն Հռոմայեցւոց. "Զի Թէ իմ կացեալ էր՝ ասէր՝ այժմ զօրավար, զդոսա առհասարակ ընդ սուր հանեալ 'ի կպակելայս իւրեանց": Իսկ յոր ժամ 'ի պարտութիւն մատնեցին Հռո_մայեցիք զԱնտիոքոս, և զօրացան յԵլլադա և պաշարումն ածէին Աքայեցւոց և յան_դուգին ևս զհռետորս խուժանին, և յառ_տուածակողմանէն ձգէր տարածէր յայն_ժամ զօրութիւն նոցա 'ի ծայր անդր առա_ջութեան՝ յոր ածեալ ձգէր բաղդն հո_սանուտ, յայնժամ Փիլոպիմէն իբրև զե_կավար ծառաւոր կռուեալ ընդդէմ ամե_հի ալեացն՝ Թէպէտ և ուրեք անզի տու_եալ խոնարհէր ժամանակին, սակայն և բաղում ինչ իրաց ընդդէմ դարձեալ՝ գուն գործէր յազատութիւն հանել՝ զօրս ա_ռաւել վեհք էին 'ի բանս և 'ի գործս: Իսկ իբրև անդանօր Արիստենետոս Մե_գաղէպօլսեցի՝ այր աւագանեծար յԱ_քայեցիս՝ ցանգ կուսակից Հռոմայեցւոց խօսէր յատենի մի ինչ Աքայեցւոցն ընդ

դէմ դառնալ Հռոմայեցւոց անձնուրհա-կալու մտօք, պատասխանի՝ եթէ լուեալ զայն Փիլոպիմէն զառաջինն լուռ կայր՝ թեպէտ և զայրացեալ ոգւով· այլ հուսկ ապա չհան-դուրժեալ և ըն ցասմամբ ասէր առ նա· « Եւ զի՞ է քո այր դու՝ այդչափ շտապել ստանձնել զօրահրամանն զԵլլադայ »։

Այլ յորժամ Մանիոս հիւպատոս Հռոմայեցւոց պարտեալ զԱնտիոքոս՝ խնդրէր յԱքայեցւոց զգաղթական-դեացն Լակեդեմոնացւոց, զնոյն ժամէր և Տիտոս· ընդդէմ եկաց Փիլոպիմէն ոչ առ թշնամութեան ինչ տարագրելոցն, այլ զի յիւր ձեռն և յԱքայեցւոց կամէր վճա-րել բանին, և ոչ ՚ի Տիտոսին և ՚ի Հռո-մայեցւոցն. ուստի և ՚ի գալ տարւոյն կա-ցեալ ինքն զօրավար, ինքնին զվտարան-դեալսն դարձուցանէր։ Եւ զայս վարէր նա օրինակ առ հպարտութեան ոգւոյն՝ ընդդէմ դառնալ իշխանութեանց և ՚ի վեր-դալ։

Այլ ամաց եղեալ նա եօթանասնից և կարգեալ զօրավար Աքայեցւոց զայս ու-թերորդ անգամ, ակն ունէր ոչ անխռով միայն զժամանակն զայն անցուցանել, այլ և բնաւ եւս յանդորրու և ՚ի խաղաղու-թեան կալ այնուհետև զնշխարեալ կեանսն։ Քանզի զորօրինակ ՚ի վատել մարմնոյն բնա-ւորեցան և ախտքն վատել, սոյնպէս ՚ի քա-ղաքսն Ելլադայ ՚ի նուազել ուժոյն՝ նուա-զէր և ցանկութիւնն կռուոյ պատերազմի։ Այլ սակայն և ՚ի Քաղաց ամն խեթացե-

լոց՝ հար կործանեաց զՓիլոպիմենին լերդու-
ղըմեւոյն քաղցրնթացս՝ 'ի ծիր սահմանի կե-
նացն նորա ։

Քանզի պատմեն եթէ աւրէք յանկմանի 'ի գումելը բազմականաւորին ղայր ոք երգև զօրավար քաղջ և առաքինի, կրկնեաց Փիլոպիմէնն և ասէ. « Նա զխաղող տալա զովութեան էջէ այլոց, որ կենդանութեան ձերբակալ 'ի Թշնամեացն եղև 3 ։ Նա եղև յետ առուրց՝ դուժկան համանէր եթէ Դինոկրատես Մեսսենացի այր ոխերիմ Փիլոպիմենեայ, և ատելի ամենեցուն վասն չար և զեղխ կենացն, ապստամբեցոյց զՄեսսենէ յԱքայեցւոց, և առ զուրս կայ համանել ունել զաւանն Կողոնիդաս անուն ։ Էր յայնժամ ընդ ջերմաց Փիլոպիմէն յԱրգոս խոԹացեալ ջերմամբ. 'ի լուր դուժկին շտապաչոքաւ 'ի Մեգալոպօլիս՝ տասնորէից աւելի քան զչորեքհարիւր ընթացեալ 'ի միում աւուր. առեալ անտի զայրուձին իւր հապակապ 'ի պատանեաց անտի քաղաքացեաց՝ 'ի փառս և 'ի սէր Փիլոպիմենեայ ինքնակամ նահատակեալք ընդ ձեռամբ նորա, անդէն չու առնէր խաղայր ընդդէմ ապըստամբացն դէպ ուղիղ 'ի Մեսսենէ ։ Անդ պատահեալ Դինոկրատեայ մերձ 'ի բլուրն Եւանդրոն, 'ի դիմի հարեալ միմեանց՝ 'ի փախուստ դարձոյց զԴինոկրատէս ։ Այլ անդէն երեւ 'ի վերայ խուժեցին զօրականք հինգ հարիւր՝ պահանորդք երկրին, և 'ի նոյն յայնժամ և փախըստեայքն միաբանեալ խռնեցան 'ի բլուր

անդր, երկեաւ Փիլոպիմէն եթէ 'ի ներքս փակեսցի. խնդրէր ապրեցուցանել զայրուձին իւր և անդր տայր ընկրկէր ընդ դժուարս և ընդ առապարս վայրաց՝ յանձանձեալ զկաց և զձիոց զօրականէն. և դառնայր ինքն առեալ և զխմէր 'ի թշնամիսն՝ խնդրէր ախոյեան ընդդէմ իւր առնուլ զնոսա. որք և վհատացեալք 'ի զխմի հարկանել նմա, բացէ 'ի բաց շուրջանակի զնովաւ վարս առեալ ընթանայքն բարձեալ աղաղակ մեծ:

Իբրև այսպէս առեալ առեալ արշեալ նա յեւրոց պատուականացն, զնոսա մի առ մի յառաջ արձակեալ և յանդորր հանէր, մնայր տայս ինքն միայնակ՝ ոչինչ մեա եղեալ՝ փակեալ 'ի խառան թշնամեացն. սակայն և նահատակեցաւ և ոչ ոք 'ի մէջ գալ ընդ քաջին. այլ 'ի բացուստ հարուած մի առեալ Փիլոպիմէն, տագնապեցաւ զնալ ընդ ափափայս մեծ և ընդ անկոխս, և դըժոխըմբերս վարէր նա յայնժամ զերիվարն և զոգին քաղէր և հարեալ միրաւորէր: Եւ արդեօք նմա ոչ ծերութիւն հասակին առնանէր առ զեղեցիկ կրթութե մրցանացն և ոչ խոչընդոտն լինէր փրկութեան նորա, սակայն նորա վատեալ էր մարմինն առ խօթութեանն և խոնջ և պարտասեալ էր յուղւոյն, զի և ծանրաքայլ յոյժ և դանդաղ զոտն յառաջէն փոխել դժուարէր. և երիվարին ևս յայնժամ գթեալ՝ անկանէր յերկիր Փիլոպիմէն զանկումն դժուարին, զի և հարեալ ջաղխե-

ցուց գլուխն. և այնպէս հարուստ ժամանակ տապաստ կայր լռութեան անշշունչ, մինչև թշնամեացն կարծեալ եթէ մեռաւ Փիլոպիմէն՝ եկեալ թաւալգլոր զմարմինն առնէին կողոպտել զնա։ Իբրև նա զգլուխն ամբարձեալ եբաց զաչսն, նոքա միախուռն 'ի վերայ անկեալ՝ յետս կոյս առեալ կապէին զձեռսն և այնպէս ածէին զքաղքն լուտանօք և թշնամանօք, զի և ոչ յերազի անգամ մտայր նմա արդեօք այնչափ տանջարութեանն 'ի Դինոկրատեայ։

Բայց իրազգածք բանին 'ի քաղաքաց քաղաքաց բնակիչք մեծապէս զուարթացեալք և հպարտացեալք՝ խուռն ընթանային առ դուռն. և տեսեալ զՓիլոպիմէն յայն կերպարան ածեալ՝ դժպատեհ իւրոց փառացն և գեղեցիկ նահատակութեանցն և յաղթական ախոյեանիցն, անդանօր բազումք ախտակիցք կարեկիցք գորովեցան, զի և յարտասուս հատանէին. և անգոսնեալ խօսէին այնուհետև զմարդկեղէն զօրութիւնն իբրու դաւաճան անհաւատարիմ և ոչինչ անունն։ Եւ էր անցեալ առ հասարակ զնմանէ բանս բարեաց և մարդասիրութեան և գթոյ, անմոռաց զնորա բարիսն առ նոսա յուշի կալեալք և զազատութեանն զշնորհս՝ զոր ինքնին Փիլոպիմէն ատացեալ զնոսա՝ վանեալ ըզՆաբիդոս բռնաւոր։ Էին էին անդ և նուաղունք ոմանք, որ 'ի շնորհս Դինոկրատեայ խնդրէին 'ի խոշտանգանս տալ զՓիլոպիմէն և 'ի մահ վարել՝ իբրու անհաշտ թշնամի.

որ անձնատուր եղելք եղեալ՝ արհամարհօ այնուհետեւ 'ի վերայ ածցէ Դինոկրատեայ մեծամեծս վասն այնչափ անհնարութեան։ Բայց առ ժամն ածեալ զնա 'ի ներքս մի գուր Թէսաւրոն կոչէին՝ վայր ստորերկրեայ անպարտ յօդոյ եւ լուսոյ իսկ անկայս, որոյ եւ դրունս չէր, այլ վէմ մի մեծ թաւալեալ՝ խնուին զմուտսն. անդ ածին զՓիլոպիմէն, եւ զվէմն 'ի վերայ բերեալ փակեցին, եւ արս սպառազինեալս առ անդեանն 'ի պահ կացուցանէին։

Իսկ այլուստ Փիլոպիմենեայ յանկարծ եղեալ, եւ ոչ ուրեք զերծանելոյ զօրավարին անձնեալ, համարեցան անշուշտ եթէ մեռեալ իցէ. սակայն եւ հարուստ ժամանակ զանեալ կալեալք այնուհետեւ 'ի ձայն բարձր կոչէին կարգացն զՓիլոպիմէն, եւ առ միմեանս գարշեալ բարբառեալք ասէին, ընդ վայր ուրեմն այնուհետեւ եւ անարգաբար իցէ վրիպութիւն նորա՝ այնուհետեւ զերծանելոց զօրավարին 'ի ձեռս թողեալք թշնամեացն, որ զանձինս 'ի կշիռ եդ նահատակեալ 'ի վերայ նոցա։ Եւ սակս յառաջ եա ընթացեալք եւ տարափանաց հետախոյզ մանկտւոյն եղեալք, 'ի վերջէ ուրեմն լուր առեալք զձերբակալ լինելոյն, յարակայս յայնկոյս ընթացեալք հաշակ հարկանէին զաւանն ընդ քաղաքս քաղաքս Աքայեցւոց։ Նոքա անձնաւորին համարեցան զաղէտն, եւ խորհեցան կարգեցին 'ի խորհրդեան առաքել հրեշտակս եւ խնդրել զՓիլոպիմէն 'ի Մեսսենացւոց անտի, 'ի նոյն եւ 'ի մարտ

պատերազմի կազմեցան վառեցան։ Զայս ինչ արարին Աքայեցիք. իսկ անդուստ Դիոնոկրատէս մեծապէս զանգիտեալ՝ եթէ երբէք ժամանակին գեղգեղանք փրկութիւն առնիցեն Փիլոպիմենեայ, աճապարեաց կանխեաց քան զխնդիր և զխաղալ Աքայեցւոց։ Իբրև գիշերն 'ի վերայ հասանէր և ամբոխ Մեսսենացւոցն 'ի բաց փարատէր, ետ բանալ զապարանջաններն զբանտին. յղեաց 'ի ներքս զպաշտօնեայ քաղաքին՝ 'ի ձեռս բարձեալ զթոյնն. հրաման տայր նմա մատուցանել Փիլոպիմենեայ, և անդէն պահ ունել մինչև ցարբումն բաժակին։

Այրն էր անդանօր Փիլոպիմէն ընկողմանեալ արկեալ 'ի ներքոյ վերար քղամիդն, ոչ 'ի քուն՝ այլ 'ի մղձկելոյ արտոյն և 'ի ծփանաց ալեաց ողբոյն թառաչէր. Իբրև լոյս ետես 'ի խաւարին և զայրն զայն մօտ իւր կացեալ՝ բաժակ գեղոյն 'ի ձեռին, հազիւ՝ ուրեմն առ վառել ուժոյն 'ի վեր կանգնեալ նստաւ, և 'ի ձեռին զդեղն առեալ՝ հարցանէր ցպաշտօնեայն վասն իւրոյ այրուձիոյն, յաւէտ իմն վասն Լիւկորտասայ. իբրև նա պատասխանի առնէր՝ եթէ շատք 'ի նոցանէն ապրեցան, նա ակնարկի գլխոյն ցուցանէր զհաճութիւնն, և 'ի դէմս առնն հայեցեալ հեզաբար՝ ասէր. «Քա՛ջ խօսիս, եթէ արդարև ոչ դըժխոյլքն ձախողակի ընթացան մեր իրք»։ Եւ ոչինչ այլ խօսեալ և ոչ ձայն մի հանեալ՝ այնպէս առեալ ըմպէր զդեղն, և անդրէն ընկողմանեցաւ։ Այլ ոչ բազում

ժամ տուեալ գերզյն բանութեան, իսկ և իսկ անշնչանայր յայնժամ Փիլոպիմէն առ մեծի տկարութեանն։

Իբրև լուր մահուն գուժեալ տարածեցաւ առ Աքայեցիս, 'ի Թաղծութիւն մեծ և յողբ և յաշխար պաշարեալ նոտան քաղաքք առհասարակ։ Յայնժամ ամենայն մարդ յարբունս հասեալ՝ միահամուռ ընդ աւագ խորհրդականացն եկեալ ժողովեցան առհասարակ 'ի Մեգաղէպօլիս, և անդէն արագ արագ խնդրէին հանել զվրէժ քինուն. կարգեալ իւրեանց զօրավար զԼիկորտաս՝ հորդան եռուն 'ի Մեսսինէ. քանդէին աւերէին զգաւառն, մինչև խորհուրդ գեղեցիկ 'ի մէջ առեալ քաղաքացիք՝ հաստատեցին առնուլ ժողովել զնոսա 'ի ներքս, և յայնժամ անձապարեալ Դինոկրատէս գնայր զիւրովին։ Իսկ որք միանգամ խորհրդոց եռուն մահուն Փիլոպիմենեայ, սպանան նոքա յԱքայեցւոց անտի. և որք 'ի խոշտանգանս տալ խնդրեցին զնա, ձերբակալք 'ի հրամանէն Լիւկորտասայ՝ կատանոցք չարչարեցան։

Ապա զմարմինն այրեալ զՓիլոպիմենեայ և զնշխարսն հանդուցեալ 'ի սափորի, յարեան Աքայեցիք և 'ի չու անկանէին՝ ոչ անկարգս և խառն 'ի խուռն, այլ միահետ միաբայլք իբրև 'ի յաղթանակի հանդէս և 'ի յուղարկաւորութեան։ Քանզի էր իսկ տեսանել զնոսա յայնժամ բոլորեալս պսակաւ, միանգամայն և արտասուալիցս. անդ և զԹշնամիսն կապաքամակ

ածեալս ձգեալս 'ի շղթայս. անդ և զսափոր մոխրոյն 'ի խիտ վարսակալաց և 'ի պսակաց ծածկեալ, զոր բարձեալ բերէր պատանին Պողիւբիոս 4 որդւոյ զօրավարին, և զնովաւ շուրջ աւագք Աքայեցւոց, և զկնի զօրականք 'ի զէն 'ի զարդ վառեալք՝ յերիվարս զարդարեալս, ոչ զգլխովին թաղծեալք սրտառուչք 'ի կոծ մեծ, և ոչ ամենևին զուարթք և բարձրապարանոցք 'ի յաղթութիւն գեղեցիկ։ Իսկ 'ի քաղաքաց քաղաքաց և յաւանաց որ 'ի միջոցին՝ ելանէին գունդ գունդ ընդառաջ նշխարացն Փիլոպիմենեայ, ըստ որում և ընդառեալ իսկ էին նորա յառաջագոյն ընդառաջ գալ ժողովել զնա՝ յորժամ 'ի մարտից նահատակութեան դարձ արարեալ գայր Փիլոպիմէն. և եկեալ հուպ շօշափէին զսափորն, և յուղարկաւորք լինէին մինչև 'ի Մեգաղէպօլիս։ Իսկ իբրև անդանօր եկեալ խառնեցան և ծերունեաց դաս և մանկանց երամ և կանանց ժողով, ձայն կոծոյն բարձրանայր ողջոյն 'ի բանակին և ողբ և աշխար մեծ, և երթայր յառաջացեալ ձայնն մինչև 'ի քաղաքս անդր. անգուստ և քաղաքն դառնապէս հեծոյր զզերատօսըն ընդ մահ քաջին՝ ոչինչ հանդուրժեալ անհնարին վշտին. տեսանէր միանգամայն 'ի մահուն նորա և զինքն խրթնացեալ 'ի բարձերէց փառացն Աքայիոյ։ Ապա առեալ շքով թաղէին զնա, և անդ շուրջ զշիրմաւն նորա քարկոծ առնէին զգերիսն 'ի Մեսսինացւոց անտի։

Բայց քանզի և պատկերք բաղդում կանգնեցան նմա, և բաղդում շուք պատուոյ քաղաքն սահմանեաց նմա, անդուստ այր ոք Հռոմայեցի զուն գործեր 'ի ժամանակի անդ աղէտիցն Եղլադայ որ 'ի Կորնթոս՝ 'ի միջոյ 'ի բաց բառնալ զայն անձնայն, և հալածել զՓիլոպիմենն ամբաստանն կացեալ իբրև զպարապաբանեալ թշնամւոյ Հռոմայեցւոց, որպէս եթէ տակաւին կենդանի իցէ այնն ։ Սակայն ամբաստանին չարախօսին ընդդէմ զարգանալ Պոլիբիոս յաղթահարեր․ որպէս զի և ոչ Մոմմիոս և ոչ պատուիրակքն երբէք յանձն առին այնմահետև աղաւաղել ինչ 'ի փառաց քաջին առն, թէպէտ և ոչ սակաւ նա ընդդիմացեալ իսկ էր ընթացիցն Տիտոսի և Մանիոսի․ սակայն նոքա յայնժամ խտիր արկանէին ընդ պէտան և ընդ առաքինութիւնն, ընդ գեղեցիկն և ընդ օգտակարն՝ ուղղապէս և վայելուչս․ քաջապէս զմտաւ ածեալք՝ եթէ ցանկ փոխարինելի և շնորհակալու մնաց պէտսք է ցեն բարերարելոցն առ երախտաւորսն, և զի ցանկ պատուել առաջին լաւք 'ի լաւաց ։

Այսչափ ինչ յաղագս Փիլոպիմենեայ ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Վրաստանցւոց կոչէ զայս կարգ դասաւորութեան Σπήρα. այս է՝ Ոլորտաձև, պարոյրաձև։ Այլ մեկնիչք ոչ ունին համօրէն 'ի վերայ կալ այսօրինակ դասաւորութեան զինուորականին։

2. Գիւթիա, էր Զինարան և Նաւահանգիստ Սպարտիոյ, ոչինչ հեռի 'ի քաղաքէն։

3. Որ զայս ասաց՝ և նմա զգլխովին նոյն պատահեցան դէպք յետ սակաւուց։

4. Սա՛ այս է երևելին Գոգիւլիոս պատմագիր. լեալ յայնժամ իբրև ամաց քսան և երկուց։

ՏԻՏՈՍ ԿՈՒԻՆՏԻՈՍ ՓԼԱՄԻՆԻՈՍ

ԻՍԿ զոր 'ի կշիռ համեմատութեան
ձգեմք այժմիկ ընդ Փիլոպիմենեայ, այն է՝
Տիտոս Կուինտիոս Փլամինիոս։ Եթէ որ֊
պիսի ինչ արդեօք դէմք կերպարանաց ի֊
ցեն առն, գո՛յ աւադիկ կամեցողացն զնա
տեսանել 'ի պղնձի անդ պատկերի՝ որ 'ի
Հռոմ կանգնեալ կայ առընթեր մեծին
Ապողոնի՝ որ 'ի Կարքեդոնէն՝ 'ի հանդի֊
պոյ ձիընթացիցն՝ հանդերձ հելլենական
արձանագրութեամբք։ Բայց ըստ բնաւոյ
բարուցն ասեն զՏիտոս զայս՝ վառ և բոր֊
բոք, ո՛չ 'ի սրտմտութիւն միայն, այլ և 'ի
շնորհաբաշխութեան. սակայն ո՛չ զնոյն օ֊
րինակ յերկուսեանն. այլ 'ի պատուհա֊
սելն՝ համբոյր և յեղյեղուկ, իսկ 'ի շնոր֊
հաբաշխելն հաստատուն. և էր նա առ
բարերարեալսն ցանգ հեշտ և բաղձալի,
իբրու որք անձին իւրում գլխովին բարե֊

բաղդք էին. որ և գեղեցիկ յոյժ համարէր մեծաւ երախտաւորեալ պահել զնոսա : Այ-այս՝ և պատուասէր յոյժ գոլով այլոց և յոյժ փառասէր, զոր ոչ գործէր առաւելորդ մեծամեծ լինել ողջութեանց, և քան ընդ կարողան 'ի բարերարել՝ առաւել սիրէր կենակից կենցաղակից լինել կարօտելոցն բարերարութեան. Համարէր զառաջինսն՝ իբրև նախանձաւորս իւրոց փառացն, և զվերջինսն՝ իբրև նիւթ առաքինութեան արդեանցն :

Այլ վարժեալ կրթեցաւ Տիտոս 'ի զինուորականն. և քանզի էին Հռոմէայ 'ի ժամանակին պատերազմունք բազում. և մեծամեծք, զինեալքն խաղաղայինն անդր պատանեկք՝ անդստին յառաջին հասակէն ճշդրիտ 'ի վերայ կալ առաջնորդել զօրավարութեան բանակաց. յղեաց և նա առաջին 'ի մարտ պատերազմի ընդդէմ Աննիբաղայ առ հազարապետութեամբն Մարկեղղոսի՝ իբրև հազարապետ : Իսկ 'ի թակարդել Մարկեղղեայ 'ի վարանս թշնամեացն և 'ի մեռանելն, կարգեցաւ Տիտոս կուսակալ գաւառին Տարանտեայ և նորուն իսկ Տարանտեայ, որոյ յայնժամ կալան նորա այլ երկիցս անդամ. և զհամբաւն հարկանէր Տիտոս յիշխանութեան անդ իւրում ոչ միայն արդարութեանն միայն, այլ և վասն քաջութեանն 'ի զօրավարութեան : Ուստի և 'ի տալ անդ Հռոմայեցւոց գաղթականս յերկուս քաղաքսն՝ յԱրնեայս և 'ի Կոնսան, սա այս Տիտոս կարգեցաւ յայնժամ ա-

առաջնորդ նոցա. և տալով այս ազատութիւն այնչափ իմն հռչակ եհար զնմանէ, զի և անցեալ զանցեալ նա զայլովք ազատութեանքն զպատասխանեացն՝ յորոց սակի ժողովրդականութիւնն և զօրականութիւնն և ամբարտաւանութիւնն, դէտակն կչիռ կալաւ նա 'ի հիւպատոսութիւն անդր և հետամուտ լինէր, և նպաստ զօրավիգն էր նմա որեար կրկին գաղթականին:

Իսկ իբրև նորա ընդդէմ դարձան Փուլվիոս և Մալլիոս ժողովրդականքն, և ասէին իրս իմն օտարս՝ եթէ պատանի չև նուիրեալ յառաջին նուիրականսն և 'ի խորհուրդս քաղաքին՝ այնպէս արտաքոյ օրինաց ձեռնարար խնդրեսցէ զծագ աւագութեանն, յայնժամ Սենկղիտոսն 'ի քուէ այս ժողովրդեան ատպատասան զգանն տարեալ, կարգէին զնա ժողովուրդք՝ թէպէտ և ոչ երեսնամեայ տակաւին՝ հիւպատոս 'ի միասին ընդ Քսեստոսի Եղիոսի: Բայց արկեալ վիճակս, պատահէր Տիտոսի խաղալ զնալ 'ի մարտ պատերազմի ընդդէմ Փիլիպպոսի և Մակեդոնացւոց. և արդեօք 'ի դեղեցիկ բաղդէն վիճակեցաւ այս Հռոմայեցւոց. քանզի ընդ որերոյն ընդ այնմիկ 'ի դէպ չէր իշխանին զէնս յամենայնի վարել և բռնութիւն, այլ որ էր մանաւանդ համոզակեր բանիւք և մարդասիրագոյնս յանդուգնանել զնոսա:

Քանզի և էր իսկ Փիլիպպոսի զօրավիգն Մակեդոնիա մարտնիկ որերորդ, առ այս՝ և Հելլենացիք Թեկուլոս տայլին նմա՝ զդէմ

կալ. երկարաժամանակեայ մարտից՝ պա- շարօք և ամրութեամբ, և զօրավիգն ամե- րով փառաւորգին նորա. ուստի եթէ չէր նա- ցա ատրուցեալ 'ի Փիլիպպոսէ, չէր ար- գեօք յայնժամ վճարեալ մարտին միով պատերազմաւ: Եւ քանզի Եղլադա չև էր այնչափ խնի 'ի Հռոմայեցիս անդր հակա- միտեալ, և այն խնչ նա ձեռնամուխ ընդ- նոսա 'ի գործն լինէր յայնժամ. արդ՝ ե- թէ յանկարծ զօրավար Հռոմայեցւոց մար- դասէր չէր հանդիպեալ և համբոյր, և չէր քաղցրախօսութեամբ գործի 'ի ձեռն ա- ռեալ քան զկռուեղն՝ առաւել զխօսելն, և եթէ համոզակեր չէր ընդ այս և հեզ առ ապաւինեալսն, և թէ չէր նորա ճշգրիտ ստորագոյնս 'ի վերայ կացեալ դէմ և պահա- պան արդարութեան, արդեօք ոչինչ այն- պէս հեշտին Եղլադա թողեալ յայնժամ զիւրն սեպհական՝ յանձն առնոյր զօտարին տէրութիւն. և քաղցայայս կայ այս 'ի նոյն իսկ յարգեանցն Տիտոսի:

Արդ սեսեալ Տիտոսի, զի որ յառաջ քան զինքն զօրավարքն Սուլպիկիոս և Պուպ- լիոս՝ անապատն ուրեմն մնեցան 'ի Մակե- դոնիա, և յուշիկ յամբրընթաց մարտ ե- դեալ կռուեցան՝ ժամանակաւառ 'ի պահ- պանութիւն բանակետեղն լինելով, և մեկ- նակազէնք միայն ընդ Փիլիպպոսի լինելով 'ի պատճառս անցից և անպարոց. նա 'ի դէպ չհամարեցաւ նմանել նոցա՝ որք զհի- պատոսութեան տարին անցուցեալ նախ 'ի հայրենիսն 'ի շուք պատուոյն և յառաջ

նորդութեան քաղաքին, տալով խաղաղին զնոյին 'ի մարտ պատերազմի. ոչինչ համ-դարտեաց նա տարի մի վատնել 'ի շուքն և 'ի քաղաքին գործս, և տարի մի այլ 'ի զօրավարութեան. զառաջինն հիւպատոսութեան տալով, և զերկրորդն' մարտից պատերազմաց. այլ պատուաստեալ բուռն և սաստիկ անդէն 'ի մարտն մտել, թողոյր լքանէր զշուքն և զաւագութիւնն 'ի քաղաքին, և աղերս արկեալ Սենեկղետոսին տանել ընդ իւր զՂեւկիոս զեղբայր իւր զօրավար նաւաց, և առեալ ևս ընդ իւր յամրութիւն բանակին երիս ևս հազարս 'ի քաջաց և յառոյգ զօրականէն այրընտիրս' որք առ Սկիպիոնիւ 'ի պարտութիւն մատնեցին յԻբերիա զԱսդրուբաղ և 'ի Լիբիա զԱննիբաղ, անց գնաց յաջողութեամբ յԵպիրոս: Անդ գտանէր նա զՊոպլիոս բանակ հարեալ 'ի հանդիպոյ Փիլիպպոսի, որ անդ հարուստ ժամանակ կացեալ պահէր զանձուկն և զերբան գետոյն Ապսոնի. այլ չէր Պոպլիոսի յառաջ խաղացեալ և ինչ մի վճարեալ առ դժուարութեան վայրացն. առնոյր ապա յինքն զզօրավարութիւնն և զնա 'ի բաց արձակեալ, կայր և զննէր զդիրս վայրացն, որ ոչինչ պակաս անխաղք էին որքա քան զՏեմպեայն վայրան. անտառք և անբաւք 'ի վայելուչ ծառոցն և 'ի գալարեաց մայրեաց և 'ի զբօսանաց և 'ի մարգաց նոցա, այլ էին անդ տատ և անտի լեռինք երկայնանիստք և բարձրաբերձք. և առ լեռնոտամբն ձոր մեծ և

խորք, ուր գնայ Ապսոն՝ ձեւովն և սրընթա-ցութեամբն նմանեալ Պենեայ. և ձգեալ ողջոյն զլեռնոտամբքն՝ թողու մի միայն պը-ղտորայ անկոխ առապար և անձուկ առ ա-փամբն. ընդ որ՝ և ազատ վայրացն գոլով դժնդակ են անցք բանակի. իսկ 'ի պահ կալեալ՝ և բնաւ իսկ անհնարին ։ Արդ յայնժամ կէսք խնդրէին առնուլ ածել զՏիտոս շրջանաւ ընդ Դասսարեացիս առ Լիկոս գետովն՝ ցուցեալ նմա դիւրագնացն զայն կուռ և լայն. այլ նա զանգիտեալ՝ գուցէ տարագէմ ձգեալ 'ի ծովէն և մի-ջամուխ 'ի վայրսն եղեալ անպէտս և ա-մուլս, և յանկարծ մնալ Փիլիպպոսին, ինքն 'ի նուաղելոյ ամբարոցն միասանգամ ստիպեսցի վերջնոյնիլ 'ի ծով անդր՝ իբրու զնախորդ իւր զօրավարն, եդ 'ի մտի դի-մադրաւ զօրութեամբ յառաջ խաղալ 'ի կատարսն լերանց, և ուժգին անդուստ բանալ իւր անցս ։

Արդ յորժամ Փիլիպպոս իւրով փա-ղանգաւ հասեալ կալաւ զլերինսն, և 'ի կողմանց առհասարակ տարափք տեղային նետից և նիզակաց 'ի վերայ Հռոմայեցւոց, և մարտ պատերազմին սաստկանայր և դի-տապատառ անկանէին աստի և անտի, և վճար մարտին չերևէր 'ի միջի, յայնժամ եկին կացին առաջի Տիտոսի արք խաշնարա-ծանք 'ի մերձակայ վայրացն. ցուցանել նմա լինէին շրջանաւոր իմն անցից՝ անմայր 'ի Թշնամեացն լքեալ, և խոստանային ածել ընդ այն զզօրն իբրև գնացս երից աւուրց

'ի կատարածն անգր, և 'ի հաւասար մատուցա-
նէին նա նմա 'ի պատասխանի. զԿորնթոս զոր-
Մակեդոնացւոյ զատն առեալ 'ի մէջ Եղի-
ասացւոց, այլ՝ բարեկամ Հռոմայեցւոց
և կռուակից 'ի ծանծաղ վասն ահին Փիլիպ-
պոսի: Այսպ վստահ յայտն եղեալ Տի-
տոս, առեալ հազարապետս մի արձակեր
համանգերձ չորեքս հազարօք հետեւակաց և
այրուձի չորեքհարիւր, և յառաջոյ ընթա-
նային նոցա հոմանեան ձեռնասկայեալք:
Զերբեկ հանդիսացեալք պատգամբերեին 'ի գա-
ղափարս և 'ի մատչաւորաւոս, և ընդդէմ խա-
ղալեն զնոյին 'ի լուսնականն՝ քանզի կրաւոր-
եալ էր: Իսկ յառաւօտն յայնժամ յետ
արձակելոյ զնոսա՝ ընդէմ համելեաց առաջ
զօրականելին, և մեծամեծագիզեսն միայն հա-
նեալ՝ ժամանակաւ առնելը զԹշնամին:
Բայց 'ի պատմչանեալ առաւր ժամանակոյ
հասատուածի զօրուն 'ի կատարածն, վաղ քաջ
ընդ առաւօտն հողմն առալ Յունաս առ
հասարակ թեթեւագէն զօրուն և կռո-
սապաշտպանեալն, և յառաջոյ երկու բաժա-
նեալ զնոսա՝ ընդ ընդ անձուկ պողոտայն
առ ափամերձ յառաջադէմ զինոր գունդն
տանէր ուղիղ 'ի վեր անգր՝ 'ի սարբանոն
նեաց Մակեդոնացւոցն, մինչ եղեալ
կռուեալ արք 'ի գժուարին զդէմ ունէին
նմա: Իսկ այլ առաջին զինեալք եւ և
երս առնելով ընդ ափափայն 'ի վեր խա-
ղային քաջութեամբ:

Իբրև արշաւեալք արձակէին, և ան-
դուստ 'ի բազում ծուխ ամբառնայր ոչ

ինչ տարոյք, այլ եւս մեջ. երկնէր և մնաւ-
խաւղ 'ի Լերանց անտի. որում և ոչինչ
խրադդած եղեն Թշնամիքն, զի որք զկա-
տարած կալան՝ 'ի Թիկանց կայլին Նոցա :
Այլ Հռոմայեցիքն 'ի բարձրաւանդակութեան մրցանսն՝
'ի միասս կատակածուաս Լէին վասն այնորիկ,
տակայն և ըստ ըղձին յուսոյ խնդալին :
Իսկ անդ իբրև ծուխին յորդ և Թանձր
մրրկեալ բարդէր և մնայլ օդոցն արկա-
նէր, և վերստանայր բարձրանայր, քաջ իսկ
յայնժամ 'ի վերայ կարգին խառնակածին
նշանին բարեկամացն : Հանդար աղաղակ մեծ
բարձեալ՝ բռնադոյն եւս 'ի վեր կոյս խա-
ղալին Հասանել արշաւել զԹշնամին և
վարել վանել 'ի վայրս խիթ անկարիս և դը-
ժուարինս. յայնժամ և զօրականին Հա-
սեալ 'ի կատարոյց անտի 'ի Թիկանց կոլ-
ակ Թշնամեացն՝ աղաղակին Նոցա կրկնեալ
տային արձագանգ : Մինչև տաղնապեցան
Մակեդոնացիքն և անդէն 'ի փախուստ
խուճապեցին. և քանզի 'ի դժուարոց վայ-
րացն վերջնանեցան Հետամուտ Նոցա լի-
նել, ոչինչ աւելի քան զերկուս Հազարս
տապարաց անկան 'ի Նոցանէն յայնժամ :
Բայց Հռոմայեցիքն տիրացեալք 'ի վերայ
խորանաց և մԹերից զանձուն և զերուոյն,
Հասեալ կալան զանձուկն, և անցեալ
գնացին ընդ Եպիրոս մեծապէս պարտեշ-
տացեալք. որպէս զի Թէպէտ և 'ի բացեայ
էին 'ի Նաւաց իւրեանց և 'ի ծովէն, և
չզոյր եւս Նոցա ամսօրեայ պարէն և Հերչէին
եւս չէր պատրաստել զայն, Համայն և այն-

պէս ժուժկալեցին նոքա մերձենալ յինչ մի. Թէպէտ և աշխարհն լի էր բարեօք 'ի զօրաց նոցա: Քանզի բուռն առեալ Տիտոս, զի Փիլիպպոս 'ի փախչել խուռամ ընդ Թեսաղիացիս՝ հրաման տայր չուոյ մարդկան 'ի քաղաքաց 'ի լերինս, և 'ի հուր զքաղաքսն տայէր, և յաւար տայր՝ զոր միանգամ չկարացին 'ի բաց տանել առ անհնարութեանն կամ առ ծանրութեանն, և այնպէս թողու 'ի Հռոմայեցւոց ձեռս տայր զաշխարհն. վասն այնորիկ Տիտոս պատուասիրեալ ներհակաբար, հրաման տայր զօրականին անցն ածել աշխարհին յանցանել խուռանց՝ իբրև սեպհական և անձնատուր գաւառի: Զոր և զկնի դէպք՝ քաջ խիկ ցուցին Հռոմայեցւոց, զի օգուտ մեծապէս գործեաց նոցա արդեօք պարկեշտութիւն նոցա:

Քանզի անդէն 'ի մերձել նոցա 'ի Թեսաղիա, անձնատուր նոցա լինէին քաղաքք. և Հելլենացիք որ 'ի Պիւղոս՝ անձկացեալ մնային Տիտոսի, և ըղձակաթք յոյժ էին առ նա. և Աքայեցիք լքեալ ուխտեալք 'ի նիզակակցութենէն Փիլիպպոսի՝ վճիռ տային զաշնաւոր Հռոմայեցւոց լինել ընդդէմ Փիլիպպոսի. և Ոպունտացիք ոչինչ համձեալ ընդ Եստողացիս նիզակակիցս Հռոմայեցւոց՝ 'ի կամել նոցա զպաշտպանութիւն քաղաքին խնդրեաց, Տիտոսի հրաւէր յղեալ՝ նմա անսերկեան անձնատուրք լինէին: Իսկ պատանին՝ եթէ Պիւռոս զառաջինն 'ի դիտանոցէն տեսեալ

զՀռովմայեցւոց զօրն խաղաղ գնալ դէպ դե-
ցիկ զաստատութեամբ, առաջ յանդիմանս. Ոչ բարեբարոյականն ինչ երևէր բարեբարոյութեանց Ճանապարհագնացութեան: Նա և առհասարակ որ զառաջինն առասանէին զՏիտոս, զնոյն տանէին: Քանզի լուր առեալ Մակեդոնացւոց, եթէ զօրագլուխ տալ հասանել զայլ զօրավար անձն բարեգործութեան բանակին, և զինուոյ բանութեամբ քանզի առնէ զամենայնն և 'ի դերութիւն մնասնէ առհասարակ, եկեալ առաջ անսանել զՏիտոս զայլս երկրաւորս. Հեշտ և հանգիստ 'ի դէմս, և 'ի ձայն և 'ի բարբառ Հելլենացի, և Ճշմարիտ պատուոյն առաքինութեան, ընձայեցաւ յոյժ չքնաղին առ նա և ընթացեալք ընդ քաղաքս քաղաքաց՝ մեծարիցեն առ նա յարդարեցին. խնդրանօք ամենեքին 'ի նորա ձեռն յազատութիւն 'ի վեր ելանել:

Իսկ յետ այնորիկ Տիտոսի բանակցեալ ընդ Փիլիպպոսի եղեալ՝ որ 'ի խնդիր էր զօրքին, յանձն առնոյր Տիտոս և պայման զնէր նմա թողուլ զՀելլենացիս 'ի կալանս ազատութեան նոցա և 'ի բաց առնուլ 'ի նոցանէ զպահապանութիւն. այլ Փիլիպպոս յանձն չառնէր զպայմանսն, առհասարակ առաջ հաշտ հարան. Եւ առ նկատելիսն անկանել Փիլիպպոսի, եթէ ոչ 'ի մարտ ընդ Հելլենացւոց հասանել գայն Հռովմայեցւոց, այլ ընդ Մակեդոնացիս՝ 'ի վերայ Հելլենացւոց. վասն որոյ և մարտնչելութեամբ 'ի նորա կողմն ասացին զամենեսին առհասարակ: Եւ անկեալ Տիտոս խաղաղու-

թեւանք ընդ Փիլիպպոսիւ՝ ընդ առաջ նմա գային արք աւագք 'ի Թեսաղիացւոց անտի. Թէպէտ և կուսակիցք էին նոքա Մակեդոնացւոց 'ի պատերազմս Փիլիպպեայ 4, սակայն և Տիտոսի սպասաւոր կային՝ երբև բարեկամք հասարակաց: Ընդ Տիտոս առեալ զաղջիկն նոցա, և հանեալ բանիւք յուշիկ և տանկաւ ընդ նոսա հասարակեր զուզին. էր զի հարցանելով ինչ 'ի նոցանէ և լսելով, և էր զի խնդրելն պատմելով ինչ մի նոցա, և այնպէս դեղդերեալ զքաղցուցանէր, մինչև յուղւոյ անտի ողջ առնուլ զօրականսն. մինչև եկեալ մտանէր 'ի քաղաքն անդր 'ի միաբանն ընդ Թեսաղիացւոցն. Թէպէտ և նոքա ոչինչ հաւանեցան, սակայն և ոչ իշխեցին արգելուլ նմա զմուտն՝ անեալ զզգուշութիւն զօրականացն նորա: Իսկ 'ի ներքս 'ի քաղաքի անդ Տիտոս՝ խօսեցաւ ընդ առաջնորդս քաղաքին, կամ և հաւանեցուցանէր զԹեսաղիացիսն զկողմն ունել զՀռովմայեցւոց, յորում և նոքա ընկեր լինէին Ելլենին արքային Աստուածոյ 'ի նոյն զԹեսաղիացիսն յորդորելով: Բայց անդրանիկ առ այս Աստուածոյ պատմութեամբ ձայնաւորական քաղ եկեալ առաջի Տիտոսի, և ուժգնակի յայտ բարբառեալ գժտասէրն ծերութեան հասակին, անդէն 'ի խօսելն տագնապեալ 'ի պատուաւոր կամս 'ի հնարելոյ ինչ, և զզայրացեալ յերդակարծութիւն եղեալ անհնարինք յերկիր. և առաջի ամենայն ռամկաւ տարեալ նաւու յԱսիա, անդ մեռանէր: Բայց և Փիլիպպոս ցեց յայնժամ անձնատուր լինէին Տիտոսի

Իսկ Փիլիպպոսի արձակեալ դեսպանս 'ի Հռոմ, առեալ և Տիտոս արձակէր անդ-արս խօսել վասն իւր և տալ Սինկղիտոսին կարգել դարձեալ զՏիտոս 'ի զօրավար 'ի յաւերժանալ մարտին . և 'ի վճարելն՝ 'ի նա անդրէն յանձն առնել զպայմանս խաղաղութեանն : Քանզի և յայժ իսկ վառեալ էր 'ի պատերազմն . զանգիտանէր 'ի գալուստ այլում զօրավարի՝ վրիպել 'ի փառացն : Ապա ջան գործեալ բարեկամացն նորա 'ի Հռոմ 'ի դերևս զՓիլիպպոս հանել 'ի խնդրոյն և զՏիտոս դարձեալ հաստատել 'ի զօրավար, իբրև զայս հրաման Սինկղիտոսին առնոյր Տիտոս, մեծապէս ցնծացեալ՝ խաղայր 'ի Թեսաղիա ընդդէմ Փիլիպպոսի ածեալ ընդ իւր զօր աւելի քան բիւրս երկու և վեց հազար . այլ չորեքհարիւր այրուձիոյ և վեց հազար հետևակաց՝ էին յԵտոլացւոց անտի . 'ի նոյն չափ զօրացեալ էր և բանակ զօրուն Փիլիպպոսի : Զու արարին բանակք երկոքին և հասեալք մօտ 'ի Սկոտուսա՝ ուր և խառնելոց իսկ էին նոքա, ոչինչ զանգիտեցին զօրավարք՝ այնչափ մօտ ճակատեալք առ միմեանս . նա՛ և մեծապէս քաջացեալք՝ զմիմեամբք ելանէին . զմտաւ ածէին Հռոմայեցիք շուք մեծ ժառանգել անձանց 'ի պարտութեան Մակեդոնացւոց, որք՝ որք առ Աղէքսանդրիւ այնչափ զհամբաւ հարան քաջութեամբ . անդուստ և Մակեդոնացիք ակն ունէին՝ եթէ 'ի պարտութեան Հռոմայեցւոցն՝ զօրս քան զպարսիկս ա-

ռաւել գրեցին, քան զԱղեքսանդրոս պայ-
ծառ ևս յաղթահարեցեն զՓիլիպպոս:

Այսպէս Տիտոս յաղթողական խոստացաւ առ զօրականն քաջանալ 'ի հանդիսին, եւ որու-որք մնայր եղեալ կառուցեալն 'ի գեղեցիկ անտառաւորին Ելլադայ և ընդդէմ քաջազօր Թշնամեաց. անդուստ և Փիլիպպոս կամ ըստ գիտաց կամ Թէ առ խուժադուժն ոչ միա եղեալ՝ եղեալ 'ի բարձրաւանդակ մի չնչին արտաքոյ զամէշին՝ հրապարակախօս լինէր զայն ինչ՝ զոր նախ քան զկռիւն առ-մոլեցան զօրականք 'ի խրախոյս զօրականին. բայց նոքա մեծապէս սրտապնդեալ որ-տառնուշ կայլին ընդ վատախասար չնչամին գեղեցն. ինքնին և Փիլիպպոս խառնեցաւ յարդին, զայն որ յաջինչ լինէր ձեռնմանուանս:

Իսկ յաւուրն երկրորդի վաղ քան ընդ-այգն, առ գիշերին և Թանձրութեան գիշերոյն՝ 'ի մառայլ և 'ի մառախուղ չքթեալ ամպոցն, առհասարակ զաշտապետալին պատերէր 'ի մէջ աղջամղջին. և անդէն ընդ լուսանալ առաւօտն 'ի բարձանց անտի օդ Թանձրամած իջանէր ծաւալէր ընդ մէջ երկոցունց բանա-կացն և զմայրան առհասարակ ծածկէր: Իսկ որք մնացեալ յերկոցունց կողմանց արձակեցան յայնժամ զօրականք 'ի լրտե-սել զմայրն և զարտաքնամուտս լինել, անդէն պատահեցան միմեանց խառնեցան 'ի կռիւ՝ 'ի տեղիսն՝ զոր անուանեալ կոչէին Քինոսկէ-ֆալաս, այն է՝ Շանագլուխք. և են նոքա կա-տարք սեպացեալք զառեալ բլրոցն՝ ամբար-ձեալք հանդէպ միմեանց, և անուն զայն

կարգադրեն նոցա առ 'ի ձեռյն նմանութեանն ։ Անդ այսպէս 'ի կղզւոջն բազմամարդկանի փոփոխեսցէ 'ի գծուագրան մայրաց, փոխանակեալք և հեռաւորութեամբ միանգամայն յերկրացւոց եւ ընկերովն կողմանց, և անդուլ յերկրուց եւ բանակաց Թիկունս տարածելով առ մեծ մի 'ի նոցանէն 'ի վասնանկել նոցա և 'ի սեւգէ տալ, մինչ այս մինչ այն՝ երկոց խոյացն գտեալ անկն կալեալք, զի և այն խնդիրին մաքրեալ պատուէր, այսպէս և ողջոյն բանակք նոցա յայնժամ խառնեցան 'ի մարտ ։ Անդ զանոր Փիլիպպոս առաւել բռնանայր 'ի Թեան աջոյ՝ 'ի վայր 'ի դարպասանդեցին ելեալ և Թափի 'ի մերայ Հռոմայեցւոց անկեալ մտահամբուռ փառաւորդամն՝ աստուր առ աստուր անվեհանելի և գծուխեալքեր ատեալ Չաւկասու, որպէս զի և կորովեքն անհնարինք ոչինչ համեմատեսցին բռնութեանն ։ Ցաւկային և 'ի կայից բլրոցն հերձեալ ձախոյ Թեւոյն Չաւկասու նոցա, Թողուր Տիտոս զխողխն ապատեալ զեւրոյ զօրուն և շտապաւ գիմեալ 'ի միւս այլ՝ պատուէր առաջնորդեր զՄակեդոնացիսն. որք և 'ի վայրացն յանհարթութեանն ոչինչ բաւեալք կարգեալ Չաւկասունել 'ի փաղանգեն անմանկանեն խոռ և հոծ (որ բնութեամբ ամրութիւն այն է զօրուն նոցա), և ոչ եւս զօրեալք միայն ընդ միոյն 'ի մէջ գալ առ ծանր և կուռ սպառազինութեան, այնպէս կառուցեալք արգելեալ մնային ։ Քանզի փաղանգն՝ անվեհանելի և անհնարունի գազանի նման է, յարձակեալ առաջադրափակ 'ի մի մարմին զօդեալ կցէ. այսպէս ե–

թէ երբեք հերձցի՝ այր քաջեկաց յունկե֊րէն, անկանի 'ի զօրութենէն առ զձայա֊ռեհութեան զինուցն. և զի՝ առաւել ակա֊ռանացու է 'ի միութեան ոգւոյն մարմնոյն, քան անձին առանձին:

Այսպա յայնմ կարգեալ էր նկուած Մակեդո֊նացիքն եղերայք, կէսք 'ի Հռոմայեցւոցն հետևակուացն փախստէիցն լինէին, և կէսք դարձեալ առ 'ի կողմանէ 'ի միւսոյ անկեալ՝ որոց մարտ եղեալ կռուէին, հարուած առ 'ի կողմն 'ի միւսոյ ածէին նոցա, զի և յաղթականքն՝ զինուորութեամբ դատա արձա֊կեալ փախչէին: Եւ անկանէին յայնժամ զխառապատաս ոչինչ պակաս քան զութ հա֊զար՝ 'ի գերութիւն վարեալ ոգիս իբրև հինգ հազար, իսկ Փիլիպպոս մազապուր զերծանէր. և պատճառք եղեն Ետոլա֊ցիքն, քանզի 'ի հետամտութեա մտանել Հռո֊մայեցւոցն, սոքա դիմեցին յառաջ և 'ի կա֊պուտ կողոպուտ բանակին. դարձեալ առա֊ջեալ Հռոմայեցւոցն և գտեալ և ոչինչ, յերեգնապառուս միաբանեալ լինէին և կռուէին ընդ միմեանս.

Յետոյ որ մեծս հանդիսապատրաստեալ էր Տիտոսի, որ դաշնադրութեանն զայն անձանց զրեցին Ետոլացիքն, և այնպէս հռչակ հայր֊եալ կանխեցին կալուած զՀելլենացիս. որ֊պէս զի և քերթողք նոցա զԵտոլացիսն նա֊խապատիւ երգեցին, զնոյն և ռամիկն 'ի նուագել զվերջանութն զայն. յորոց 'ի քերթողացն առ հասարակ էր մեծապէս միջոսուա֊թեան պայանիվրևն.

Մեզ ո՛չ ողբք, ո՛չ գերեզմանք,
Ո՛վ անցաւոր մեզ չեղեն.
Բիւրք երեք Թեսաղացիք
Տապաստան ահա կամք աստէն ։
Մեք նըկուաք յԵտովլացւոց
Լեալ 'ի խոշխեն Արեսեան,
Եւս շըշուէն և Լատինաց
Հարուա գաւառիս 'ի գաւանեան .
Զոր Տիտոս՝ լայնատարածմանն
Յիտալիոյ առեալ էած ,
Եմաթեայ Մակեդոնեայ
Բանակէ անհնարին մեծ համբաւաւ ։
Իսկ յայնժամ Փիլիպպոսին
Ոգին խորագոյն փշրուեցայց ,
Խուճապեալ փախստեաւ արագ
Քան ըզթեթեւ եղջերուս ։

Զայս յինչ քերթեաց Աղկէոս, և այնչափ իմն առնէր զթիւ անձեղանցն 'ի Թշնամանս Փիլիպպոսի։ Եւ առաւել այս մերատասութիւն 'ի բազմաց տանէր և 'ի բազում անդրէս 'ի նուագս առնել, քան Փիլիպպոսի՝ մեծար առնել հաստատուանէր Տիտոսի ։ Քանզի և Փիլիպպոս կատակերգելով զԱղկէոս, որք անընթեր արձանագրեաց եղ այսպիսի .

Անցաւոր, այս անտաղտալթ
Ըերսն առաջեալ յայս արարեան ,
Խաչ է սա Աղկէոսին՝
Երկնապերձ 'ի բարձրաբերձն ։

Այլ Տիտոս՝ որ փառաւոր զհետ կրթէր

առ Հելլենացիս, դրդուեալ դժարէր վասն այսոցիկ ։ Ուստի ապա ինքնին միայնակ կատարէր զնախահաստատութիւնն՝ առ ոչինչ զԵտոլացիսն դրեալ․ յորմէ և մեծապէս տրտմեալ Ետոլացւոց, և հրեշտակութիւն ևս առնեալ Տիտոս 'ի Մակեդոնացւոց վասն կռուելոյ դաշինս, նոքա ընդ քաղաքս քաղաքս ընթացեալք բողոքս բամբասելին, եթէ վաճառականք խաղաղութեան լինէին Փիլիպպոսի, մինչդեռ առ դուրս հասեալ կայր վճարել մարտին և եղծումն ազատութեանն՝ որ առաջին ընդ լծով արկ զԵլլադա։ Մինչդեռ այս բանք հռչակ հարեալ յԵտոլացւոց՝ առաջնոյ ևս չփոթից յուզէր առ Նիկականիցս Հռոմայեցւոց, ինքնին Փիլիպպոս եկեալ 'ի հաւանողէլ դիկացն՝ 'ի դերիս հանէր զամենայն կացուած, և 'ի կամս Տիտոսի և Հռոմայեցւոց զամենայնն ապաստանեալ առնէր, և ապա օրինակ զայս վճարէր Տիտոս զմարտն ։ Զմակեդոնացւոց զարքայութիւնն եթող 'ի Փիլիպպոս, այլ պատուէր տուեալ նմա 'ի բաց չուել յԵլլադայ․ առ այն՝ և տուգանէր զնա հազար քանքարաց․ բառնայր 'ի նմանէ զամենայն զնաւսն՝ բաց 'ի տասանց․ և առեալ 'ի պատանդի զԴեմետրիոս՝ զմի յերկուց որդւոցն Փիլիպպոսի առաքէր 'ի Հռոմ, քաջապէս խորհրդով վարեալ ընդ ժամուն ապագայից և նախահայեաց հանդերձելոցն եղեալ ։

Քանզի Անիբաղ Լիբիացի այր ոխերիմ Հռոմայեցւոց և վտարանդի յիւրոց հայրենեացն՝ անկեալ յայնժամ առ Անտիոքոս՝

առաջարկէր նմա զքաջամարտութիւն ժամանա-կին. որ և [illegible] Անտիոքոս 'ի մեծամեծ նաւահանգստութեանց անտի [illegible]` յորոց և մակեդոնացւոց նա [illegible], անկեալ էր 'ի համաշխարհական [illegible], նա և պատրաստ և կազմ էր նա եղջիւր ածել ընդդէմ Հռովմայեցւոց: Ուստի եթէ և Տիտոս քաջիկ խորհրդովն ընդ հակառա-կել 'ի հաշտութեան անդր, և թոյլ տայր Անտիոքոսի և Փիլիպպոսի ապրեցուցանել երկոց հզօրաց նորադարձից յառնել ընդդէմ Հռով-մայեցւոց, անշուշտ 'ի մերձաւորս վտանգս մեծ անկանէր պատերազմ Հռովմ` որչափ պատկա-ռան զԱնտիոքոսեան: Այլ Տիտոս կարծիքն գերգերչելով զհաշտութեան 'ի մէջ արկեալ երկուց պատերազմացն, և կարծեաւ զա-ռաջիկայն` մինչև զերդաւելի հանդերձե-լոյն, 'ի միոջ[illegible] յուսոյն պակաս առնէր զՓիլիպպոս, և յառաջնոյն` զԱնտիոքոս:

Իսկ յետ այնորիկ իբրև հրեշտակք տասն թուով առաքեալք 'ի Սենկղիտոսականէն առ Տիտոս, պատուիրեալ ընդհանուր յազատու-թեան յանձնարար հանել զՀելլենացիս և պահ-պանութեան առնուլ կարգել 'ի Կորնթոս և 'ի Քաղկիդոն և 'ի Դեմետրիադ ընդդէմ Անտիոքոսի, անդանօր Ետոլացիք բամբասա-նօք մեծ` մեծամեծս գրգռել զքա-ղաքսն զայնոսիկ, հրամայեալ առ ի Տիտոսէ լուծանել արձակել զոտնամն Ելլադայ (քան-զի այսպէս իսկ անուանէր Փիլիպպոս կոչել զքաղաքսն զայնոսիկ). ասա այս և հարցա-նէին Ետոլացիք զՀելլենացիսն, եթէ ա-

նոր այժմ ունելով նոքա ծանրագոյն եւս՝ Թեսալեա և տղայկագոյն եւս քան զառաջինն՝ արդեօք խնդացին ինչ. և ընդ Տիտոս եղեւ ընդ բարեգործ հիացեալք հայեցին, զի յաւուր եկեալ զԵլլադա՝ և ընդ պատերազմացն ուրեալ կարելեաց զնա. 'ի բանից առաջի առ. մեծապէս վասն չհանդուրժելոյ Տիտոս , խաւսէր անձնէր և հաւանեցուցանէր զնոսա հրաժարեալ՝ թողուլ զքաղաքն զայն առ- ռանց պահպանողաց. զի այնպէս առաւել յիւր ձեռն նոր զշնորհն կալցեն Հելլենացիք :

Այդ յայնժամ 'ի կատարել Իսթմեան մրցանակացն, բազմութիւն յոյժ մարդկան յասպարիսին 'ի զնին նստէր ընթրչացն . քանզի 'ի ժամանակաց հետէ Ելլադա պա- րապեալ 'ի մարտից՝ ակն ունելով վայելից ազատութեանն, և յայնժամ 'ի յայտնի խաղաղութեանն՝ ախոյանհանդիպով կատա- րէր տօն : Այլա անդամնօր լռութեան հրա- մանն եղեալ 'ի ձայն փողոյ՝ և 'ի մէջ եկեալ արձանագեալ Քարոզին , բարձր բարբա- ռով աւետեաց, եթէ Սենեկլիտոս Հռոմայեց- ւոց և Տիտոս Կուինտիոս զօրավար հիւպա- տոս 'ի պատերազմութիւն զարքայն մանանեալ Փիլիպպոս և զՄակեդոնացիսն , անհար- կանորդս այնուհետև թողուն և ազատս և անհարկս և հայրենատուր օրինօք վարելաս զԿորնթացիս և զԼոկրացիս և զՓոկէացիս և զԵւբէացիս և զԱքայեցիս և զՓթիովտա- ցիս և զՄագնեսացիս և զԹեսաղացիս և զՊերրեբացիս : Այլ զառաջ բառ. զայս ոչինչ յայտնի զառաջինն խմացան ամենեքին . և

սաստկումն խառնաձայնին և շշնջիւնն ամբոխին ըն-
թանային յայնժամ յառաջապահիցն, յորժամ կէսքն հրաշալեօք զարմանային, և կէսքն զմխիթարանս հարցանէին ուսանէին, իսկ և կէ-սոցն թախանձ ասելով միանգամ բառնայ քարոզն։ Իսկ երկրորդ անգամ 'ի լռութիւն դարձան, և քարոզն բարձրա-գոյն ևս կարդաց զամենայն 'ի լուր ամենե-ցուն, այնպէս ձայն ամբոխին ուժգին և աղաղակ ցնծութեան, զի և 'ի ծով անդր լսելի լինէր. յարուցեալ առհասարակ հանդիսականքն՝ ոչինչ զմրցողաց մտադնէին փոյթ արարեալ, խուռնադիմեցան ընդառաջ վազել Տիտոսի. առնուլ զողջոյն ունէին զնա, և ողջունեալք՝ փրկիչ Ելլադայ և ա-խոյեան կարդային զնա։

Իսկ յայնժամ դէպ եղև երևելի իրացն, զոր շատ խօսին պատմողքն վասն ուժգնահնչման և բարձրաձայնութեան ձայնին. քանզի ագռաւք ո-մանք՝ որք ընդ վերոյ անդ անցանէին պատրաստա-ծեալք թռչելոյն՝ 'ի վայր յասպարէզն անդր թօթափեալք անկան։ Եւ պատճառք բա-նին՝ հերձումն օդոյն է. քանզի ձայն սաս-տիկ և բազում հարեալ ընդ օդոյ, ցնդու-զնա՝ ոչինչ բաւական այնուհետև 'ի վեր զթռչունս ունել. սասանի և նոքա խրտու-ողք 'ի թափուր միջոցին թռչին արձա-կեալք՝ վայրապարտին. եթէ ոչ՝ ծն և ծն հարուածս իմն ևս առաջին դաղզա արդեօք 'ի շառաչմանէդ՝ իբրև 'ի փքնոյ խուլ ձայնէ. և այնոքիկ աղաղակս անընդհատ կացեալ անկանէ-ցին։ Այս այս՝ թերևս և մերձիկ փոթորկեալ

յայնժամ յարիցէ յօդս, եւրեւ յորձա-
նուտ 'ի ծովուն, եւ 'ի լայնատարր խորում
սահմանին՝ անհնարին յուզմամբ ծփացի։ 2

Արդ եթէ 'ի պահուն 'ի խուռն յառա-
ներ հանդիսատեսացն՝ նախահայեաց Տի-
տոս Թափոյ խուժանին՝ չէր տեղի տուեալ
'ի վայրացն, անշուշտ հնար չէր նմա զգէմ
կալ բռնութեանն. այնչափ իմն 'ի կողմանց
կողմանց խռնեալք ամենեքին նեղէին զայրն։
Իբրեւ վստահեցան յաղաղակէն շուրջ զխո-
րանաւն նորա, ապա 'ի գալ գիշերոյն
գաղտնայքին յետս ողջագուրեալք զորս եւ
զատանէքին՝ 'ի բարեկամաց եւ 'ի քաղաքակ-
ցացն. եւ 'ի կոչունս եւ 'ի գինեբրբուս խրա-
խացեալք ընդ միմեանս, եւ մեծապէս հըր-
ճուեալք ըստ ժամանակին, ոչինչ այլ բայց
զԵլլադայ զերծ առնէին. այն՝ զի 'ի մարտս
բազումս եւ յառաջագոյն երբէք նմա ոչ
յաջողեցաւ ունել զազատութիւն մեծա-
պէս անխռովութեամբ եւ ցնծութեամբ.
տարեալ յայնժամ անարիւն եւ անկոծ
մրցանակ՝ գեղեցիկ յոյժ եւ քաջամարտիկ։
Եւ զայն ինչ դարձեալ զմտաւ ածէին, ե-
թէ արութիւն եւ հանճար՝ առաքինու-
թիւնք արդոյք են 'ի մարդիկ. իսկ արդա-
րոց այր՝ յոյժ արդոյ եւ պատուական է քան
զամենայն բարիս. քանզի Ագեսիղայոսք եւ
Լիւսանդրոսք եւ Նիկիասք եւ Ալկիբիադէսք՝
թէպէտ եւ քաջապէս նահատակեալք ընդ
ծով եւ ընդ ցամաք, սակայն երբէք զնա-
հատակութիւնսն ոչինչ վարեցին 'ի գեղե-
ցիկ կէտ նպատակի։ Եւ թէ՝ 'ի բաց զՄա-

ռաթոնեան առեալ մրցանսն և զնուա-
ճարոն զՍաղամինայ և զՊղատեայն և
զԹերմոպիւղեան՝ և զոր յԵւրիմեդոն և 'ի
Կիւպրոս զԿիմոնինն նահատակութիւնս,
զայլ մարտսն առ հասարակ մղեաց Ելլադա
ընդդէմ իւր 'ի ծառայութիւն. և ամե-
նայն յաղթանակք նորա աղէտք էին և նա-
խատինք. քանզի և շատ ինչ 'ի գործոց նո-
րա եղծեալ խաթարէր առ անքաղտութեան
և ամբարտաւանութեան զօրավարացն: Իսկ
այս արք այլազգիք կայծս ունելով առ-
կայծեալ և զօդ գուզնաքեայ զվաղնջուց
ազգակցութեանն ընդ Հելլենացիս, որոց
և բանիւք չափ միայն և խորհրդովք օգնել
Ելլադայ՝ արդեօք պատշաճել էր, սոքա այ-
սոքիկ մեծապէս վտանգաւ 'ի փրկութիւն
Ելլադայ՝ 'ի ձեռաց աննուէր տէրանց և
բռնաւորաց այսպէս յանդորր ազատու-
թեան հանէին զնա:

Զայսոսիկ Հելլենացիք յայնժամ զը-
րուցէին. բայց և եկքն այն և օտարք՝ առ
'ի նոցանէն գովութեանցն քաջ իսկ զու-
գակշիռ գայլին արդեամբք իւրեանց: Քան-
զի անդէն միանգամայն առեալ Տիտոս
զՂենտղոս արձակէր յԱսիա, յազատու-
թիւն հանել անդանօր զԲարգիւղիացիս.
և զՏիտեղիոս 3 'ի Թրակիա՝ վտարել զպա-
հանորդսն զՓիլիպպոսի 'ի քաղաքաց անտի
և 'ի կղզեաց նորա. զնոյն և Պուպլիոս Վիլ-
լիոս նաւէր առ Անտիոքոս խօսել ընդ նմա
վասն ազատութեան Հելլենացւոցն՝ որ ընդ
ձեռամբ նորա. նա և ինքնին Տիտոս ան-

ցեալ 'ի Քաղկիդէ և անտի 'ի Մագնեսիա, 'ի բաց արձակէր անտի զպահապան զօրսն, և անդրէն թողլ առնէր ժողովրդոցն վարել զօրէնսն հայրենիս :

Իսկ յետ այսորիկ եղեալ Տիտոսի յԱրգոս հանդիսադիր Նեմեան մրցանաց, գեղեցիկ յոյժ կարգեաց զտօնն. և անդ դարձեալ տայր հռչակ հարկանել 'ի ձեռն քարոզին զազատութիւնն առ ամենայն Հելլենացիս. առաւ և քաղաքացն յայց ելեալ՝ կարգս հանճարեղս սահմանէր. հաստատեաց զարդարութիւն. առատ միաբանութիւն. յորդեաց սէր քաղաքացեաց. համոզեաց հերձուածս. և դարձոյց զվտարանդիսն 'ի հայրենիսն: Ցանձն իւր զուարճացեալ բերկրէր Տիտոս՝ զի 'ի խաղաղութիւն կրթեաց զՀելլենացիսն, ոչինչ պակաս՝ զի 'ի պարտութիւն զՄակեդոնացիսն մատնեաց. որպէս զի և Հելլենացիքն առ այլովք երախտեօքն՝ 'ի դուզնաքեայց սակի զազատութեանն շնորհսն գրեցին: Էր երբեմն՝ զի Լիւկուրգոս հռետոր ապրեցուցեալ զՔսենոկրատէս իմաստասէր 'ի ձեռաց մաքսաւորաց՝ որ բռնադատէր տանէլին զիմաստասէրն վասն հասուցման սակին, և մաքսաւորայն ես ընդ կառաւքն հանէր զխեռութիւնն նոցա, պատմեն՝ եթէ յետ այնորիկ հանդիպեալ իմաստասէրին՝ որդւոցն Լիկուրգոսի, ասէր առ նոսա. „ Գեղեցիկ դարձ փոխարինի, ով մանկունք, հատուցանեմ ես հօր ձերում՝ զի ամենեքին աւադիկ գովեն զնա վասն որոց յետն գործեաց ":

Այլ զարձ փոխարինին առ Տիտոս 'ի Հելլենացւոց անտի՝ ոչ զամուլթեամբ չափ միայն էր, այլ և զի առհասարակ այնուհետև մեծապէս վստահացան 'ի Հռոմայեցիսն. և նոցուն ուէրութիւն յամենեսեան ձգեալ տարածեցաւ: Քանզի այնուհետև ոչ մնացիւրս միայն առեալ ժողովէին զոստիկանս և զզօրավարս Հռոմայեցւոց, այլ և 'ի խնդիր եւս եկեալ հրաւէր կարգային նոցա, և ինքնակամ անձնատուրք լինէին. ոչ ժողովուրդք միայն և քաղաքք նոցա, այլ և թագաւորք ինքնին զլխովին՝ հարստահարեալ երբէք յայլոց արքայից՝ երթեալ ապաւինէին առ նոսա. զի և վայրկեան մի եւ՝ ոչինչ թերես առանց աստուածակողմանն՝ և յընդհանուրս ամենայնն նուաճեցաւ ընդ ձեռամբ նոցա:

Եւ ապա ինքնին յոյժ ցնծացաւ Տիտոս 'ի վերայ ազատութեանն Ելլադայ. քանզի և 'ի Դեղփիս 'ի ձօն կախեալ ասպարս արծաթիս 'ի միասին ընդ խորունն վահանի, զայս ինչ 'ի վերայ արձանագրեաց.

„ Բոմէ զոյք՝ Որոճըզգայ
Ճեռ Քաջին՝ սերընդեան,
Խայտացեալք՝ յարադառն
'Ի վարժից՝ ձիականն,
Գանծալի՝ Սաղաղռնոյ
Ո՛վ Արքայք՝ Տինդարեան:
Ձեզ Տիտոս՝ Էնէեան
Գերաշուք՝ ձիր ձօնեաց,
Կեանս ազատ՝ քաջ մանկանց
Ընծայեալ՝ Հելլենաց:

Ու այս՝ և 'ի ձօն կանխեաց նա պսակ ոսկի Ապողոնի, և 'ի վերայ արձանագրեաց այսպէս .

„ Ընծայաբերէք՝ քո անմահ
Ղէտոնեանդ՝ դու Զաւակ,
Ենէեան՝ մեծ Բդեաշխ
Զոսկեփայլն՝ եդ Պսակ :
Այլ ո՛վ դու՝ Քաջաղեղն
Հաստատամտիդ՝ 'ի բարդի,
Կորովին՝ տուր ընդ շուք
Քաջազգին՝ Տիտոսի :

Արդ դէպ եղև քաղաքին Կորնթացւոց երկիցս անգամ լինել նոյն հրատարակ բանին 'ի շնորհս Եղլադայ : Քանզի յայնժամ Տիտոս, և արդ միւսանգամ Ներոն յաւուրս մեր նոյնպէս յիսթմեան հանդիսին՝ յազատութիւն կարգեաց զՀելլենացիս, և թոյլ ետ վարել խաղաղութեան օրինօք : Այլ Տիտոս 'ի ձեռն քարոզին՝ որպէս ասացաք . իսկ Ներոն անձամբ անձին հրապարակախօս եղեալ 'ի բեմէն : Այլ այս յետոյ է ժամանակաւ :

Բայց յետ այսորիկ սկսեցաւ Տիտոս մարտ մղել գեղեցիկ և իրաւացի ընդդէմ Նաբիսայ մարդախողխող և եղեռնաւոր բռնաւորի Լակեդեմոնացւոց . այլ 'ի վախճանի 'ի դերևս հանեալ զյոյս ակնկալութեանն զԵղլադայ . քանզի ձեռնհաս գոլով 'ի բուռն զբռնաւորն արկանել, զանց արար . և խաղաղութիւն ընդ նմա արարեալ՝ թողոյր

զՍպարտացւոցն ընդ ընտրեալ քաղաքացւոցն։ Կամիմ զի զանդգնութեանց եւ թէ մեծախորհրդութեան ձգեալ մարտնչին՝ այլ զգուշանայր 'ի Հռովմէից եկեալ առաջել զփառս նորա, կամ թէ զպարտեալ խաղաղութեան նա զշուք փառացն Փիլոպիմենեայ՝ որ ակնածութբ յաղթանակին և պատուութեանց մեծ հանգոյն Հելլենացւոց՝ յաւէտ եւս 'ի մարտին յայնմիկ անհաւանին քաջութեանց շահատակեալ, զհանդարտ հայեցեալ առ Աքայեցիս և շուք եւ 'ի թատերս առնել էր հասարակ Տիտոսի. և սպանէր Տիտոս՝ զի Հռովմայեցւոց հիւպատոսացն մարտ մղեալ 'ի մէջ այլոց Ելլադայ՝ համեմատապատիւ. նոքա այլ մի կարգէ Աքայեցւոց՝ զգուշացեալ 'ի մարտս փառացն և 'ի ատահանչանակիցս Այլ [illegible] Տիտոս վասն խաղաղութեանն այնմիկ 'ի չքմեղս ընկեր՝ խոյսս անձեռնհաս նկուն զքաղաքացին առնել առանց մեծայել առաջանաց այլոցն Սպարտացւոց։

Բայց յաղթանակն շուք պատուոյն Տիտոսի առ 'ի յԱքայեցւոց առաւել՝ ոչինչ այլ զաւագահասարակ ապրեցոյց եղանակաւոյն նաքաղ զատուն, բայց պատերազմ մի ընծայեաց՝ զոր յոյժ սիրեաց նա, և էր այսպիսի. Հռովմայեցւոց գերեալն 'ի մարտին Աննիբաղայ՝ վաճառեալք ցանն և ցիր կայեալն 'ի ստրկութեան 'ի տեղիս տեղիս. էր 'ի նոցանէն և յԵլլադա թիւ հազարաց երկերիւրոց. և էին նոքա հեծեալք յոյժ, մանաւանդ 'ի ժամանակի անդ առ Տիտոսիւ՝ յորժամ պատահէին նոքա միմեանց յԵլլադա, որդիք՝ հարց, և եղբարք՝ եղբարց, և բարե-

կառքք՝ բարեկարգաց. կէսք՝ ոսկեայք, և կէսք՝ արծաթիք, կէսք՝ յաղթեալք, և կէսք՝ յաղթողք: Թէպէտ և մեծապէս վշտացեալք վասն Նորա Տիտոս, այլ ոչ կամեցաւ հանել զգեղեցին զայն 'ի ձեռաց ատեաց իւրեանց: Այլ Աքայեցիք փրկանաւորեալ զնոսա հնգեկց մնացից առ մեծն մի 'ի գերւոյն, և 'ի մի վայր խմբեալ զնոսա առաջի ընծայեցին Տիտոսի՝ մինչդեռ Նա ամբառնայր 'ի Նաւս. և այնպէս մեծապէս զուարթութեամբ զարդ առնէր Տիտոս, զգեղեցիկ Նահատակութեանցն առաւել գեղեցիկ զարդ փոխարինի ըստ արժանի առաքութեանն և վերոյն առ իւրն քաղաքացիս:

Եւ յայսմանէ՝ առայս պայծառ են յարգարէր հանդէս յաղթանակի Նորա. քանզի այն գերի՝ ըստ որում ծառայք ազատեցեալք ընտրեցան գերծուլ զպղնձիս և առնել պատմութիւնս՝ զնոյն արարին և նոքա, և այնպէս ուղեկից լինէին Տիտոսի 'ի յաղթանակին: Եւ այս և շուք եղաւ հանդիսին Նորա՝ և կապուտ կողոպուտ թշնամեացն, ապալուարուք հելլենացիք, և վահանք մակեդոնացիք, և գայլխունք Նոցա. ոչ Նուազ էին և մթերք ընչից. քանզի գրէ Խոսանոս՝ եթէ ձոյլ ոսկի 'ի յաղթանակին էր ընդերաց երեք հազար և եօթն հարիւր և երեքտասան, և արծաթ՝ քառասուն և երեք հազար՝ երկերիւր և եօթանասուն. իսկ ոսկի դրամահատ Փիլիպպեանք՝ էին անդ բիւր մի և չորեք հազար հինգհարիւր և չորեքտասան. արտաքոյ այսոցիկ՝ և հազար

եւ քանքարաց տուգանացն Փիլիպպոսի. զոր և ըստ միջնորդելոյն Տիտոսի շնորհեցին նմա Հռոմայեցիք. ետուն եւ զձին՝ և իւրեանց նիզակակցաց գրեցին զՓիլիպպոս, և դարձուցին 'ի նա զորդին՝ որ կայր 'ի պատանդի :

Իսկ յետ այսորիկ հրաս հանեալ Անտիոքոս յԵլլադա բազում նաւուք և զօրու ծանու՝ խռովել հարկանէր 'ի քաղաքս քաղաքս , և յապստամբութիւն գրգռէր . և էին նմա առաջնորդք 'ի նոյն՝ Ետոլացիք , այն որ անդստին խեթիւ հայէին ընդ Հռոմայեցիս և յօժարեալ եւ էին 'ի մարտ , պատճառս առնեալք յուսանելեաս զազատութիւն Հելլենացոց՝ քանզի և ազատք իսկ էին նոքա յայնժամ. այլ քանզի 'ի պատերազմէց ինչ չէր 'ի միջի՝ զնոյն բարբառ գեղեցիկ առաջարկեցին նոքա Անտիոքոսի : Իսկ անդուստ Հռոմայեցիք կարի զանգիտեալք ընդ կերպս ապստամբութեանն և 'ի համբաւոյ զօրութեանն Անտիոքոսի շրջապատեալք՝ առեալ արձակէին անդր 'ի զօրավար զՄանիոս Ակիլիոս հիւպատոս , և զՏիտոս դարձեալ՝ իբրեւ դեսպան վասն գեղեցիկ համբաւոյ առն առ Հելլենացիս, որոց յերեւան միայն եկեալ առաջի՝ զկէսս որ տակաւին միաբանեալ կային առ նոսա՝ առաւել եւս պնդէր . և զկէսս՝ որ յերերուն կային, միաբանգամ արծարծէր 'ի սէրն. իբրեւ ճարտարար՝ որ 'ի ժամու զդեղն խոլթացելոցն տայցէ , այնպէս զախտն կարճէր և զկիրսն սանձէր: Սակայն և նուազունք ամանք կացին ան-

բաւմեալքն, որ գրաւեալ իսկ էին 'ի Հռո-
պոյլոս Եռոտղացւոցն. զորս առեալ ինքնին Տի-
տոս՝ թէպէտ և պատանեալ էր՝ յետ մար-
տին յանձնաձեռեալ պաշտօնականէր: Քանզի
Անտիոքոս 'ի պատրաստութիւն մտանեալ 'ի
խուճապս տագնապին և փոխանակ Նաւ-
ևեալ յԱսիա, Մանիոս հիւպատոս ինքնին
զինեալ հասանել ունել զԵտողացիս, զկէսս
ինքն պաշարեալ պահէր, և զկէսս Թողուր
Փիլիպպոսի եղծանել աւերել: Իբրեւ Մա-
կեդոնացին յաւարի առեալ կալաւ կա-
լապուտ Թողուլ զԴոլոպացիս և զՄագնե-
սացիս և զԱթամանացիս և զԱպերանթա-
ցիս, և անդուստ ևս Մանիոս հինն 'ի վեր
առապարեալ զՀերակլէա՝ պաշարէր զՆաւ-
պակտոն կալեալ զԵտողացւոցն, 'ի գութ
շարժեցաւ Տիտոս վասն Հելլենացւոցն
այնոցիկ, և նաւարկեալ 'ի Պեղոպոննէ-
սեայ՝ դէմ եդեալ չոգաւ առ հիւպատոսն:
Անդ ղառաջինն կացեալ կշտամբէր զնա,
զի յաղթական ինքն գոլով զմրցանակն ե-
թող առնել Փիլիպպոսի. և զի՝ 'ի ընդու-
զայրացութիւն բարկութեանն անդէն կայ
մնայ ժամանակաձևու՝ պաշարումն միոյ ա-
ծեալ քաղաքի, յորժամ անդ Մակեդո-
նացիք յաւաշխարհէին՝ ժողովուրդ ոչ սա-
կաւ և արքայս ընդ ձեռամբ նուաճեն:

Իսկ իբրեւ անդուստ պաշարեալքն 'ի
պատուարաց անտի զՏիտոս յանկն առկեալքն՝
ձեռս համբառեալ ողջոյն և ձեռս տարածեալ
առ նա՝ պաղատէին, նա առ ժամն ոչինչ
խօսեալ, այլ զդէմսն դարձուցեալ և ար-

տառապեալ հեղեալ, մեկնէր 'ի վայրացն : Եւ
յետ այնորիկ զգաւնիւք ընդ Մանիոսի ան-
կեալ, ամոքէր զպատուհասն և ժամանակ սրա-
րաւորս տայր տալ Եսոդացւոցն՝ առաքել
հրեշտակս 'ի Հռոմ և խնդրել պայմանս
հաշտութեան չափաւորս : Այլ քերան մե-
ծապէս այն էր Տիտոսի օգնել զՄանիոս
վասն Քաղկիդացւոցն. քանզի 'ի սպառնալու-
թիւն մեծ բրդեալ էր Մանիոս վասն
հարսանեացն Անտիոքոսի՝ զոր ածէր 'ի
Քաղկիդացւոց անտի 'ի ժամանակի անգ-
պատերազմին՝ 'ի տարաժամ հասանելն.
քանզի անցեալ ուրեմն նա զաւուրբք՝ հա-
րու 'ի սէր օրիորդի գանէրն Կղէոպտղո-
մեայ՝ չքնաղագեղ յոյժ՝ որպէս ասեն յա-
մենայն օրիորդս. և առեալ այս տարփանք ե-
տուն Քաղկիդացւոցն բնաւ խնկ 'ի թա-
գաւոր անդր հակառակեալ. և 'ի ձեռն նո
տալ նոսա զերդուանց քաղաքն 'ի նոցա մաս-
անի պատերազմին : Իսկ իբրև հասու Ան-
տիոքոս, ձեռամբ փախստեայ 'ի Քաղկիդէ
եղեալ և առեալ յինքն զօրիորդ. հասանէ և
զընչիցն մթերս և զպարեկամս իւր, նա-
ւեաց անդ յԱսիա: Այլ Մանիոս դիմնեալ
'ի սպառնալութիւն քաղկութեան՝ վաղվաղա-
կի դիմեալ խաղայր 'ի վերայ Քաղկիդաց-
ւոց : Իսկ Տիտոս զհետ զնացեալ նորա՝
զունն զործեալ բարեխօսէր վասն Հելլե-
նացւոցն այնոցիկ և ամոքէր զՄանիոս. և 'ի
վերջէ ապա յորդոր անկեալ ածէր հաւա-
նեցուցանէր զնա և զայլս ևս յաւագացն
Հռոմայեցւոց :

Եւ այնպէս առաջ փրկեալ Քաղկիդացւոցն՝ առեալ ձօնէին Տիտոսի զգեղեցիկն և զհոյակապան 'ի ձօնից քաղաքին իւրեանց, յորոց և 'ի միում մինչև ցայսօր ժամանակի է տեսանել արձանագրութիւն զայս. Ժողովուրդք՝ Տիտոսի և Հերակլեայ զայս Ասպարէզ: Եւ 'ի միւսում այլ դարձեալ՝ այսպէս. Ժողովուրդք՝ Տիտոսի և Ապողոնի Դելփինիոն: Եւ առ ևս յաւուրս մեր կարգեն ընտրութեամբ Քաղկիդացիք քուրմ Տիտոսի. և զոհ յաղեալ նորա նմա յետ նուիրաց ձօնիցն, Տաղ 'ի նուագ՝ առնուն 'ի գրուատ նորա. զոր 'ի բաց զայլսն թողեալ մեր՝ զի երկայն է յոյժ, ասասցուք զվերջ նուագին՝ զոր երգեն նոքա այսպէս.

Մեք անխառն՝ հաւատայն՝ Հոռոմոց,
Մեծապէս՝ շուք պաշտօն՝ հարկանեմք.
Մեք 'ի նոյն՝ և երդումն՝
Ցուց ունել՝ արդ կրկնեմք:
Երգ առէք՝ Օրիորդք
Ըզմեծին՝ Արամազդայ.
Տուք նուագ՝ և Հառովմայ
Եւ 'ի նոյն՝ Տիտոսի.
Երգեցէք՝ միաբան
Եւ զհաւատ՝ Հոռոմոց:
Քեզ Պէան՝ ով Փրկէ,
Քեզ Տիտոս՝ ով փրկիչ:

Շուք գեղեցիկ էառ նա և յայլոց ևս Հելլենացւոց, և ընդ սոյն իսկ՝ էր ճշմարիտ և յանկեղծաւոր սիրոյ մեծարութեան նոցա առ

նա վասն հեշտ և հանդարտ բուսոյ բարուց ան. որով եթէ և երբէք 'ի վէգ գայր նա կամ վասն ինչ գործոյ կամ թէ 'ի կրից ինչ նախանձաւորութեան (ըստ որում ընդ Փիլոպիմենեայ և ընդ Դիոփանեայ զօրավարացն Աքայեցւոց), ոչ աննուէրս ինչ վարէր, և ոչ զպատուհասն արդիւնացուցանէր. այլ փութով բանականս շատ էր նմա ասել ազատօրէն և գեղեցիկ յանդըգնութեամբ: Երբէք նա խստութեամբ ոչ գնայր. սակայն և թուէր իմն բազմաց ցակոտ այլ և թեթևաբարոյ: Այլ էր նա հեշտ և բաղձալի առաւել քան զամենեսեան 'ի վարսն և զուարթամիտ, միանգամայն և 'ի խօսսն՝ պերճ:

Քանզի էր երբեմն զի 'ի բաց զԱքայեցիսն կամելով քեցել 'ի տիրանալոյ կղզւոյն Զակինթացւոց, ասէր՝ եթէ 'ի մեծապէս վտանգ արգելօք պաշարեսցին նոքա՝ թէ երբէք ըստ Պեղոպոննիսոս արտաքս կարկառեսցեն զգլուխս իւրեանց՝ իբրու զկրիայս ոմանս: Իսկ և զառաջին նուագն յորժամ վասն բանի պայմանացն երևեցան միմեանց Տիտոս և Փիլիպպոս, յասել անդ Փիլիպպոսի վասն իւր զի միայնակ եկն, և ընդ Տիտոսի բազումք են, եա պատասխանի Տիտոս. Դու ինքնին զքեզ միայնակ կացուցեր՝ 'ի մահ զբարեկամաց և զազգականաց մատնելով: Իսկ և երբեմն գինեհարեալ Դինոկրատէս Մեսսենացի 'ի կոչունս ուրեք 'ի Հռոմ՝ յարեաւ կաքաւել 'ի բազմականին 'ի հանդերձ կանանցի. և

սակս յերկրորդութեան ատուր եկեալ աղաչէր զՏիտոս օգնել 'ի խորհրդեան նորա՝ զի կամէր նա զՄեսսենէ ապստուցանել յԱքայեցւոց ուխտի. եւ պատասխանի Տիտոսի՝ խորհել վասն բանին այնորիկ. սակայն և զարմացեալ իմն ասէր զանձն՝ զիա՞րդ այր այնպիսի 'ի մեծամեծս ձեռնամուխ՝ 'ի կաքաւս զինեբրուաց տայցէ զանձն և 'ի ցուցս: Առ այս՝ և յորժամ դեսպանք Անտիոքոսի պատմեալ Աքայեցւոց զբազմութիւն մեծ զօրաց արքային, յանուանս իմն բազմազգիմակս ընդ համար արկանէին զնոսա, ասէր Տիտոս. եթէ էր երբեմն յընթրել իւրում առ ումեմն կոչնականն և 'ի զարմանալն և 'ի յանդիմանելն՝ զի այնչափ բազմամթեր մսովք լցեալ էր սեղանն, և պատրաստեալ գունակ գունակ կերակրովք, եւ պատասխանի կոչնատէրն՝ եթէ առ հասարակ կերակուրքդ զմի միայն ունին զխոզենին. և բազմազգիմակք են՝ զի բազմօրինակ խոհարարութեամբք ամոքեալ են. " Մի՛ ուրեմն և դուք իմքնին, ասէր Տիտոս, մի՛ զարմանայցէք ո՛ արք Աքայեցիք ընդ բազմաձեռն զօրութիւն Անտիոքոսին՝ 'ի լսել անդ ձեր զնիզակաւորաց, զտիգաւորաց, և զհեծելակաց. քանզի Ասորիք են դոքա առ հասարակ, և զինուք չափ և եթ զանազանեալք են ":

Բայց Տիտոս յետ նահատակութեանց իւրոց յԵլլադա և յետ մարտին ընդդէմ Անտիոքոսի ընտրեալ կարգեցաւ համարակալ. աւագութիւն՝ ընտրեցն այլ մեհա-

գոյն, և ծայրաւոր կատար քաղաքականու-
թեանն. և կալաւ իւր իշխանակից զորդին
Մարկեղղոսի՝ այն որ հնգիցս եկաց հիւպա-
տոս։ Որք և՛ի բաց 'ի Սինկղիտոսէն հանին
նոքա յայնժամ խորհրդականս չորս՝ ոչ
յոյժ յականաւորաց անուանց. առ այս և 'ի
քաղաքացիս ընկալան զամենայն աշխատա-
ծին մարդիկ որ միաբանգամ խնդրեցինն. և
'ի նոյն առաջնորդեցան նոքա 'ի Տերենտիոսէ
ժողովրդապետէ՝ որ զնոյն մխիւ տայր
ժողովրդեանն առնել 'ի ներքս ընդ հակա-
ռակս շքոյ աւագանւոյն։ Իսկ յերկուց
անուանց արանց ականաւորաց և աւագաց
յայնժամ 'ի քաղաքին, որ 'ի կագի էին ընդ
միմեանս, այն են Սկիպիոն Ափրիկանոս և
Մարկոս Կատոնն, զառաջինն նախաթոռ
Սինկղիտոսին բազմեցոյց Տիտոս՝ իբրև այր
քաջալաւ և առաջ. իսկ ընդ Կատոնի դէպ
եղև նմա խեթանալ 'ի գիպուածոյ իմեքէ,
որ էր այսպիսի։ Ղեւկիոս Փղամինիոս եղ-
բայր Տիտոսի՝ ոչինչ 'ի գեղեցիկ բոյս բա-
րուցն նմանեալ նմա՝ գրգասէր և անպատ-
կառ, ունէր իւր 'ի տարփածու պատա-
նեակ մի. զոր և ընդ իւր շրջեցուցանէր 'ի
զօրավարութեանն և 'ի կուսակալութեան։
Դէպ եղև 'ի կոչունս ուրեք յաղուաբանել
պատանեկին առ նա, ասէր ըղձակաթ յոյժ
առ նա լինել՝ որպէս զի և վասն նորա թո-
ղուլ լքանել զմենամարտկաց տեսարանն,
թէպէտ և երբէք 'ի զնին սպանութեան
չէր կացեալ. և այնպէս նախապատիւ զնա
քան զբերկրանս արար տեսարանին։ Առ

այս Լեւկիոս խնդաղին առէր ցպատա-
նեակն. « Մի՛ ինչ քեզ այդ ծանր թուեսցի. գո՛յ ինձ զարմանն ըղձին քում տանել »․
այսպէս հրաման տայր Լեւկիոս զառաջեաւ-
ածել 'ի կապապարանէն զմի ոք 'ի մահապար-
տաց. և կոչեալ զպաշտօնեայն 'ի նոյն վայր
կոչնոցն հրամայէր գլխատել զնա ։ Այլ
Վալերիոս Անտիաս ասէ՝ գործել զայն
Լեւկիոսի ոչ 'ի շնորհս պատանւոյ, այլ
երփնատարդուհւոյ՝ զոր սիրէր ։ Իսկ Լիվիոս
պատմէ՝ արձանագրեալ 'ի Կատոնէ յիւ-
րում զպրութեանն, եթէ Գաղատացի
ոմն փախստեայ եկեալ հանդերձ որդւովք
և կնաւն 'ի դուռս անդ կոչնոցն՝ ժողովելի
'ի Լեւկիոսէ, այսպէս 'ի նորուն ձեռացն
սպանանի 'ի շնորհս տարփածուին ։ Այլ
թուի զայս այսպէս ասացեալ Կատոնի
յաձեցուցանել զամբաստանութիւնն, իսկ
թէ ոչ Գաղատացի ոք էր փախստեայ՝
սպանեալն յայնժամ, այլ մի ոք 'ի մահա-
պարտաց անտի, զայս մեզ վկայէ բաց յայ-
լոց բազմաց և ինքնին Կիկերոն հանդէպ 'ի
բանին յաղագս Ծերութեանն, տալով զնոյն
պատմել Կատոնի ։

Եւ արդ յայս պատճառաց՝ կարգեալ
Կատոնի համարակալ և սրբեալ զՍինկղի-
տոսն, 'ի բաց 'ի ծերակուտէն մերժէր ըզ-
Լեւկիոս՝ թէպէտ և այր աւագ հիւպա-
տեան, և գործն՝ անփառունակ գտաւ և
նմին իսկ Տիտոսի եղբօրն. ուստի և յանդի-
մանեալք ժողովրդեան Տիտոս և Լեւկիոս
սրտաբեկք և ստորնացք՝ արտասուօք թա-

խանձ արկանէին քաղաքացեացն յիրաւացի՝ ըն-
հատատեալս զանշխութիւն զայնորիկ զհոյա-
կայս զօրմին առաջի առնել Կատոնի։ Ան-
գամնոր Կատոնի պարգեւրս արձանացեալ
համբերեալ իշխանակցաւն, հարցանէր զՏի-
տոս՝ եթէ խրազգամ ինչ ինքն լեալ իցէ
բանի կոչնոցն. խրախ պատասխանի ետ Տի-
տոս՝ եթէ ոչ, եկաց Կատոնի և ոխով պատ-
մէր զամենայնն. և ձայն ետ տալ Լեւկիոսի
յերդումն՝ եթէ սուտ կայցէ 'ի բանսն.
խրախ Լեւկիոս պապանձեցաւ, տուաւ դա-
տակնիքն 'ի վերայ նոցա, և Կատոնի շքով
ուղեկից լինէին 'ի տուն յառնենէ ամենի:
Այլ Տիտոս 'ի խոր յոյժ խոցեալ ընդ ա-
ղէտս եղբօրն, շրջաւ միաբանեցաւ ընդ վաղըն
ջուց ոսոխին Կատոնի, և զօրացեալ 'ի
Սինկղիտոսին՝ ետ անվաւեր առնել և 'ի
բաց ջնջել զամենայն իսկ զնորա վասն քա-
ղաքին զծախսն՝ և զի վարձու տայն և
գնեալն, և ամբաստանութիւնս ես մեծ յու-
զեաց ընդդէմ նորա. այլ չգիտեմ իսկ
եթէ ողջախոհ քաղաքականութեամբ այն
այնպէս 'ի թշնամութիւն անհաշտ եկեալ
ընդ օրինաւոր իշխանին և ընդ առաքինի
քաղաքացւոյ մարդասիրելով առ եղբայրն՝
անարժան ազգատոհմին և պատուհասին
արժանի։ Այլ սակայն 'ի Թատերական տե-
սարանի երբեմն 'ի խմբել ժողովրդոցն, և
Սինկղիտոսին 'ի բազմել 'ի կայանի իւրում
շքեղ և երևելի ըստ սովորութեանն, այն
ինչ զԼեւկիոս յանկեան արկեալ ժողովրդոց
նստեալ անփառաւորապէս 'ի յետին տեղւոջ.

'ի գութ շարժեալ աղաղակաւ ասէին այլ հրամայէին նմա, մինչև նա անցեալ գայր բազմէր 'ի մէջ հիւպատեան աւագանւոյն:

Այլ Տիտոսին անկանելից պատուասիրութիւն՝ զոր վայր շատ խոկ ունէր նիւթ ըղձալոյն՝ զոր պատմեցաք, շուք հանդերձեաց նմա.(քանզի և հաղորդապետս միւսանգամ յետ հիւպատոսութեանն խնդրեաց ինքնին կալ անհրաւէր և անկոչ) : Սակայն [illegible] անցեալ նա և գժպատեհ այնուհետև յառաջնորդութեան, անշքանայր 'ի պատուասիրութեան անդ. խուրում, ոչ սանձահարելով զանձն 'ի փառասն. և սակաւ ինչ զհետ երիտասարդական ըմբռնով աշխուժից, յորժամ պարտ և արժան էր նմա զնշխարեալ աւուրսն անդրոս անցուցանել: Նա թուի [illegible] կրից ըմբռնեալ նորա գործել զբանն զայն առ Աննիբաղ, որով և գժպհի գտաւ նա բազմաց:

Քանզի Աննիբաղ գաղտ փախստեայ 'ի Կարքեդոնէ՝ եկեալ ապաւինեալ էր առ Անտիոքոսի. իսկ յետ և Անտիոքոս անկարեկաւ 'ի Փռիւգիա, և 'ի հաշտութիւն եկեալ մասագիւր յանձն առնոյր զդաշինսն, միւսանգամ Աննիբաղ փախստեայ յայս կոյս յայն կոյս թափառական՝ հուսկ ապա եկեալ դադարէր 'ի Բիւթինիա՝ և անդ սպաս հարկանէր Պրուսիասայ արքայի, և գիտէին զայն Հռոմայեցիք առհասարակ, այլ զանց առնէին զնովաւ. զի և 'ի ծերութիւն յեցեալ խոկ էր այրն և յուժոյն վատեալ. իսկոյն որ [illegible] առ

'ի բաղդէն եղեալ էջէ : Արդ գեսպան Տիտոս 'ի Սինկղիտոսէն առաքեալ առ Պրուսիաս վասն ինչ գործոյ, անդ առ արքային տեսեալ նորա զԱննիբաղ՝ 'ի մեծ բարկութեան բրդեր զի տակաւին կենդանի կայր Աննիբաղ. իսկ Պրուսիաս թէպէտ և յոյժ յաղերս անկեալ պաղատէր վասն ողջքաւոր առն և խորում ընտանւոյ՝ ոչինչ կարաց վճարել : Էր իսկ վաղնջուց պատգամ զհամբաւուի հարցեալ վասն մահուան Աննիբաղայ՝ օրինակ այսպիսի. եթէ՝ Լիբիւսսա ծածկեսցէ գետնին՝ զԱննիբաղայ զմարմին : Այլ Աննիբաղ կարծեալ Լիբիւս զայն երկիր, մնայր թաղումն առնուլ 'ի Կարքեդոն՝ անդանօր զկեանսն վճարելով : Բայց է 'ի Բիւթանիա վայր աւազոտ առ ծովուն, և մօտ անդ է շէն ոչինչ մեծ՝ որում անուն կարդան Լիբիւսսա՝ յորում և գաղտեալ իսկ էր Աննիբաղ. ուր և ցանգ 'ի կասկածի առ 'ի տկարութենէն Պրուսիասայ և յահէն Հռոմայեցւոց՝ ուղիս եօթն ստորերկրեայ հատեալ էր, որ 'ի տանէ բնակութեանն հանէին 'ի վայրս ինչ այլ և այլս և բացաձիգս :

Արդ լուր առեալ յայնժամ Աննիբաղ զհրամանին Տիտոսի՝ 'ի փախուստ խուռնապեցաւ ընդ գաղտուղի անցսն. այլ անկեալ 'ի ձեռս զօրականաց արքային, խորհեցաւ երթալ զինքն : Կէսք ասեն՝ եթէ զվերարկուն իւր տարեալ զպարանոցաւն, հրամանն տայր միում 'ի ծառայիցն պնդել զայն ընդ ծունկն և յետս ընդ կռունկն ստատեկ

և բուռն քաղցեալ կործանել զնա, մինչև հեղձամղձուկ եղեալ մեռանէր: Իսկ և կէսք ասեն՝ եթէ Թեմիստոկղեայ զնմանութիւնն բերեալ և զՄիդեայ, ըմպէր ցլու արիւն: Իսկ Լիվիոս պատմէ՝ եթէ զեղ մահու ունելով նա առ իւր՝ խառնեաց զայն յորդուածն և բաժակ 'ի ձեռին՝ ասէր այսպէս. "Ա՛ղէ հանգուսցուք մեք միանգամ զՀռոմայեցիսդ 'ի բազմամեայ հոգոցդ, որոց երկարաձիգ և դժուարամբեր Թուէր՝ մեռանել օրահասին առն ծերունւոյ՝ զոր ատեան դոքա: Սակայն ինքնին Տիտոս ոչ տարցի յիմ մերոյ յաղթանակ նախանձելի, և ոչ իւրոցն նախնեաց արժանի. որք անդ 'ի կռուել Պիւռոսի ընդ նոսա և 'ի յաղթել, գաղտ առաքեցին իրազեկ առնել զնա վասն դեղոյն՝ զոր խառնէին նմա": Եւ օրինակ զայս ասեն մեռանել Աննիբաղայ յայնժամ:

Իսկ իբրև լուր բանին հասանէր առ Սինկղիտոսն, շատոց անհաճութեան արժանի երևէր Տիտոս, և ծայրայեղ յոյժ և անագորոյն. զի սպան զայրն՝ որ արդէն իսկ հեքացեալ կեայր իբրու հաւ լքեալ 'ի ծերութեանէն անփետուր և անձեռ. և զի՝ և ոչ ինչ բռնադատեալ՝ առ 'ի փառացն ձգեալ պատուասիրեաց Տիտոս 'ի մահն Աննիբաղայ: Առ այս զարմացեալ՝ 'ի յուշ բերեալ նոցա և զհեզութիւն և զմեծանձնութիւն զՍկեպիոնի Ափրիկանոսի՝ առ Տիտոսիւ յոյժ առաւել հրաշացեալ կային նոքա ընդ աւագ այրն, որ 'ի պարտութիւն զԱննիբաղ

մատնեալ 'ի Լիբիա՝ զահարկի թշնամին և զանձկութեան, ոչինչ 'ի հայրենեացն տարագիր հանէր նա զայրն, և կամ խնդրէր ինչ զնա 'ի քաղաքացեացն. այլ զպանիւք անկեալ ընդ նմա մինչև կռուեալ, մարդասիրապէս հիւրընկալէր զնա. և ապա յետ կռուոյն՝ 'ի հասանել ընդ նմա խաղաղութեան՝ ոչինչ հարստահարեաց զնա կամ տանհար ինչ լինէր ձախողակ բաղդին նորա: Եւ ասեն՝ եթէ և յԵփեսոս է զի գտան 'ի միասին Աննիբաղ և Սկիպիոն. և զառաջինն 'ի ճեմել անդ ուրեք նոցա, ըղբարձերկեց կողմն այնպէս անձին կալեալ Աննիբաղայ՝ հեզաբար տարեալ զայն Աֆրիկանոս և այնպէս ճեմ առնել չոքէր ընդ նմա. ապա զբանիւք անկեալ նոցա վասն զօրավարաց, իբրև Աննիբաղ զԱղեքսանդր նախաթոռ ասէր իբրև քաջավարի քան զամենայն զօրավարս, և երկրորդ կարգէր զՊիւռոս, և երրորդ դասէր զանձն իւր, անդ Սկիպիոն մանր ժպտեալ՝ ասէր. "Եւ զի՞նչ ասայր, եթէ չէր իմ պարտեալ զքեզ". Եւ պատասխանի Աննիբաղ և ասէ. "Իսկ յայնժամ ոչ Սկիպիոն, ոչ երրորդ, այլ առաջին զիս դասէի զօրավարաց": Ապա ընդ քաղաքավարութիւն ընդ այս Սկիպիոնի զարմացեալ հռոմայեցւոց, անարգեալ լինէր Տիտոս՝ զի ձեռն մխեաց 'ի դիակն օտարականն:

Այլ յայսր ամենայնի վերայ էին էին և որք 'ի գովութիւն առնուին զՏիտոսի գործն. և համարէին զԱննիբաղ՝ ցորչափ

կենդանի էր՝ երբեւ հուր որում արծարծո-ղի միայն պէտք իցեն. և ասէին ևս՝ եթէ և ոչ յորժամ 'ի ծաղկի էր Աննիբաղ և յուժի, նորա էին մարտիքն և ձեռք ահ-ընկէց Հռոմայեցւոցն էին, այլ մեծապէս ուշիմութիւն առն և հմտութիւնն զօրա-ընդ անկանելեաց խելթին և առաքինութեանն՝ որ ոչ վատանեցին արդեօք 'ի ծերութենէն, երբեւ բնութիւնն յաւերժացեալ կայ մնայ 'ի բարոյս իւր. և զի և բախտն ինքնին չէր միշտ 'ի նոյն կայի, այլ 'ի հիքանալն՝ դարձէ վառէ յուսով անկանկալութեանն՝ փորձ զնորոց փորձել մեքենայս, զորս միանգամ առ առաքինութեանն անդորրութ 'ի կռուել իցեն ընդ այլս:

Եւ արդեօք որ յետ այնորիկ դէպք եղանցն՝ մեծ ևս միայնութիւն 'ի նեղքս բե-րին 'ի կողմն Տիտոսի. քանզի և Արիստո-նիկոս որդի Կիթառերգակի ուրումն որ-ջոյն զԱսիա մեր 'ի վայր առնուլ յաղթուես շփոթեաց և 'ի մարտս պատերազմաց վասն փառացն Եւմենեայ: Առ այս և Միհրդատ ինքնին զգլխովին յետ հարուածոյն 'ի Սիղ-ղայէ և 'ի Փիմբրեայ և յետ մահուց ամ-բաւից իւրոյ զօրականին և զօրապետաց, դարձեալ միւսանգամ խաղաց զխմբաց զօ-րու ծանու ընդ ծով և ընդ ցամաք ընդդէմ Լուկուղղեայ: Դարձեալ առ այս՝ չէր ինչ Աննիբաղ առաւել հիքացեալ քան զԳայիոս Մարիոս. քանզի էր իսկ նորա բարեկա-մութիւն ընդ արքայի ումեմն, էին նորա զօրավիգն և ընտանեակք, և խնամակալ

եւ 'ի վերայ կարգեալ էր նոցա և այլու-
ձիոյ և զօրականի. իսկ անդ Մարկոս Թա-
փառական և մուրիկ ընդ Ափրիկէ՝ զօր և
Հռոմայեցիք ինքեանն յանձաց քերէին ըղ-
բախտն նորա, առակայն և յետ ոչ բազմաց
ինչ երկեալ մեռեալ նոյն այր 'ի Հռոմ քա-
ղաքի՝ մահուամբ և չարչարանօք ածէր 'ի վե-
րայ նոցա, և նոքա այնպէս ընկճեալ սպա-
սաւորութիւն հարկանէին առաջի նորա :
Եւ այսպէս ասպա չէր ինչ յառաջիկայիցդ՝
որ մեծ և կամ փոքր իցէ առ համոզերձե-
լոյն. իսկ չէր վախճան փափկութեան
նոցա, բայց թէ յորժամ վախճան լինի
գոյութեան նոցա: Եւ վասն այսորիկ կէսք
ասեն եթէ ոչ անձամբ անձին գործեաց
զայն Տիտոս, այլ զեսպան առաքեալ նա
ընդ Լեւկիոսի Սկիպիոնի միայն 'ի պատ-
ճառս մահուն Աննիբաղայ :

Եւ արդ քանզի յետ այսորիկ՝ ոչինչ
այլ պատմութիւն գիտեմք մեք զգործոց
Տիտոսի քաղաքական կամ զինուորական,
այլ թէ խաղաղականսն վախճանեցաւ նա
մահու, ժամ է այսուհետև բուռն զզու-
գակշռութեանն հարկանել :

ԶՈՒԳԱԿՇՌՈՒԹԻՒՆ

ՓԻԼՈՊԻՄԵՆԵԱՅ
ԵՒ
ՏԻՏՈՍԻ ՓԼԱՄԻՆԻՈՍԻ

Այժ արդ՝ ըստ բազմադէմ երախտեացն առ Հելլենացիս՝ զուգակշիռ. Տիտոսի երբէք ոչ գայ Փիլոպիմէն. նա և ոչ բազումք այլ յառաջագոյն անտի՝ լաւագոյնք քան զՓիլոպիմէն։ Քանզի այլք ոմանք Հելլենացիք գոլով՝ մարտ եդեալ կռուեցան ընդ Հելլենացիս. իսկ սա՝ որ Հելլենացի չէր՝ մարտեաւ 'ի վերայ Հելլենացւոց։ Եւ յորժամ Փիլոպիմէն ոչինչ յաջողեալ օգնել 'ի կռուելն իւրոց հայրենեացն՝ անց չոքաւ 'ի Կրետէ, Տիտոս 'ի պարտութիւն զՓիլիպպոս մատնեալ անդէն յԵլլադա, յազատութիւն 'ի վեր հանէր յայնժամ զազգս և զքաղաքս։

Այլ ապա 'ի քննել առեալ զմարտս պատերազմաց երկոցունց գոյա, տեսանեմք՝ հարուածս մեծ ևս Փիլոպիմենեայ 'ի վերայ Հելլենացւոցն ածեալ 'ի զօրավարու-

թեանն Աքայեցւոց, քան զՏիտոս 'ի վերայ Մակեդոնացւոց՝ յաղթականութեանն Հելլենացւոց :

Իսկ ըստ խակութեան նոցա՝ Տիտոս 'ի պատուասիրութենէն գրգռէր և վառէր . և Փիլոպիմէն 'ի կռուասայրայր բարոյիցն . ուժոյ և 'ի պատճառութեան բարկութեանն՝ առաջինն հեշտին անկցի այր . և երկրորդն յամենա՝ հաւէլս ուրեմն զեղջանէր : Քանզի Տիտոս զարքունի զպատիւն պահեաց եթող Փիլիպպոսի և մարդասիրապէս ներումն արար Ետողացւոց : Իսկ Փիլոպիմէն առ պատճառութեան ցասմանն՝ զրկէր զհայրենի աշխարհն 'ի հարկաց անտի արուարձաննեացն նոցա :

Այլ այս զարմեալ՝ առաջինոյ ցանդ անկեղծ եկաց բարեկամ խորոց բարերարացն . իսկ վերջինոյ՝ ցանդ պատրաստ առ ցասմանն ապաքանել զհուրն երախտեաց : Քանզի զառաջինն երախտաւոր Լակեդեմոնացւոցն զոլով Փիլոպիմէն, տալա հիմն 'ի վեր առնէր և զպատուարս պարսպաց նոցա և յաւարի առնոյր զերկիրն, և հատուկ ապա փոխէր խաթարէր և զքաղաքականնութեան կարգ նոցա : Եւ թուի թէ՝ և առ թշուի ցասմանն և կռուասայրայր կրիցն զխանգարանեցաւ նա 'ի մահն, 'ի տարապարհեալ ժամու զիմեալ 'ի Մեսսինէ և յառանցն զժպատեհ՝ ոչ 'ի ձահ զզուշացեալ զորավարներն :

Այլ ասեկոյն ըստ բազմամաղեմ պատերազմացն և յաղթանակացն քան իսկ 'ի

գտեալ եւեթ Փիլոսոփայիցն զերեւելին մարմնոյ. քանզի ընդ Ցենոնա եւ ընդ Փիլիսոփայս կարծեն՝ 'ի մարմնոյ յերկուս սահմանեսցեն . իսկ Փիլոսոփայիցն նախահաստատեալ քաջութեանն յամէ բաւութեան ըմբռնող մարմնոց , չեթող անգի յերկուանանց՝ առաւելք 'ի բաժանէն մտանաւանդ. այնպէս զերեւելիս յաջողեցան նման էրք , եթէ առ 'ի մարմնոց հաստատութեանն : Առ այս դարձեալ՝ մին փառաւ անձին ժառանգեաց 'ի զօրութենէ անտի իւրոցն Հռոմայեցւոց՝ որ հզօրացեալք իսկ էին 'ի ժամուն. իսկ միւսն ծաղկէր՝ յորժամ ինքնին Եղլադա խառնեալ իսկ էր . որպէս զի եւ միոյն զերեւելի նախահաստատութիւնք ողջ նորա առանձին զատան . իսկ միւսոյն՝ հասարակաց. քանզի մին՝ լաւ եւ քաղաքերոյն զօրավար եկաց. իսկ միւսն՝ այնպիսիս ոմանս առաջնորդեաց զնոսա 'ի զօրավարել իւրում :

Բայց քանզի ընդդէմ իւրոցն Հելլենացւոց յարդարեցան մարդքն Փիլոսոփայենեայ, անշուշտ առաս 'ի բանին յայնմիկ ոչինչ երջանկացաւ նա. այլ առակայն եւ հաւատոյք զերեւելի կայցէն նոքա առաքինութեան նորա. քանզի որք միանգամ յամենայնին զուգահաւասարք էցեն, միայն առաքինութեամբն առաւելք բաւական էցեն այնպիսեացն ականաւոր լինել. ուստի եւ նա մարթ ընդ քաղաքավարականն մզեալ Հելլենացւոց՝ որպիսիք ոմանք Կրետացիքն էին եւ Լակեդեմոնացիք, խորամանկութեամբ պարտեաց զառաջինն՝ որ խորամանկա-

գոյնք են էին քան զամենայն մարդիկ . և առաւելութեամբքն՝ նկուն առնէր զվերջինսն՝ որք կարողք յոյժ էին ։

Դարձեալ առ այս՝ վանէր պարտաւէր Տիտոս առ ձեռն պատարագամատուցութեամբքն , զէնս 'ի գործ առնել և զօրինակ զաստուածասիրութեան՝ զիւրոցն նախնեաց . իսկ Փիլոպիմէն՝ ինքնագլուխ հանդերձանօքն , նոյն 'ի ներքոյ ըմբռնելով , և զձեռն փոխելով զդաստաւորութեան զիւրոյ ժամանակին . ուստի միութիւն պէտք եղեն ճարտարապետել զորս չէինն՝ գործիս առ 'ի յաղթութիւն . իսկ միւսումն 'ի վերայ միայն արկանել՝ զորս էինն 'ի միջի ։

Իսկ ըստ շահաստակութեան ձեռին նոցա՝ բազում ինչ և մեծամեծք պատմին յաղագս Փիլոպիմենեայ . և յաղագս Տիտոսի՝ ոչինչ այնպիսի . նա զի և Արքեդեմոս ոմն Եաովլացի ծանակէր զՏիտոս , զի ինքն 'ի խաղալ գնալ առ սուսերամերկ 'ի խուռնն անդր Մակեդոնացւոցն մարտկաց , անդուստ Տիտոս ձեռս յերկինս 'ի վեր ամբարձեալ կայր և աղօթս մատուցանէր ։

Առ այսուիկ՝ և գեղեցիկ զամենայնն գործեաց Տիտոս 'ի զօրավարութեան իւրում և 'ի դեսպանութեանն . իսկ Փիլոպիմէն զոյգ առաւելագոյնս և քաջագոյնս միանգամայն և 'ի ռամկականութեանն իւրում և 'ի զօրավարութեանն Աքայեցւոց . քանզի զի զօրավար կացեալ՝ 'ի բաց 'ի Մեսսենեայ վանեաց զՆաբիս և զքաղաքն յազատութիւն հանէր . և այլս ռամկական՝ փակեաց զՍպարտիա ընդդէմ Դիոփանեայ

զօրավարին և Նորուն իսկ Տիտոսի՝ որ զի-մեռալ զայլն և փրկեաց զՂակեդեմոնացիսն : Եւ այսպէս առաւ անդստին 'ի բնութենէն Նա կիրթ և յաջողակ՝ ոչ միայն առաջնորդել զիրաւէր ըստ օրինացն , այլ և զօրինացն ինքնին գլխովին՝ 'ի դէպ և 'ի պէտս ժամանակին . ոչինչ այսպիսեալ առնուլ զանձամբ զիշխանութիւնն յիշխեցելոց անտի , այլ զնոյն 'ի վերայ Նոցա վարելով յորժամ դէպն պահանջէր . զի և համարէր՝ եթէ մանաւանդ պիտանացուն Նոցա՝ զօրավար իցէ Նոցա , քան զընտրեալն Նոցա :

Իսկ անշուշտ ազատանձնեայ ազնւոյն էին՝ մարդասիրութիւն և քաղցրութիւնն Տիտոսի առ Հելլենացիս . այլ նա ազատանձնեայ արդեօք կացին Նահատակութիւնք Փիլոպիմենեայ ընդդէմ Հռոմայեցւոց և ազատասիրութիւնքն . քանզի և հեշտին յոյժ իցէ արդեօք մարդասէր առ կարօտեալսն լինել , քան զխմամարտութեամբ զզօրաւոր մարդիկն աշխատ առնել :

Այլ քանզի՝ զայսօրինակ մեր 'ի քննին զատս առնել՝ զժուարագնին իցէ Նոցա առ 'ի միմեանց տարբերութիւնն , քա՛ջ միտ դիր՝ զի եթէ Հելլենացւոյն զպատերազմական վարժիցն և զզօրավարութեանն տացուք մեք զպսակ , և Հռոմայեցւոյն՝ զարդարութեանն և զբարութեանն , ոչինչ ձախողակս արդեօք դատաստան 'ի ներքս բերցուք :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Այս այր սուրբ, զոր Գրիգորիոս կոչէ Բրազիլլաս, էր 'ի հոյակապից անուանի արանց Բիւզանդիոյ՝ սերտ կուսակից Փիլիպպոսի : Եկաց սա և զօրավար մեծ Բիւզանդացւոց. և ապա դաւաճանեալ՝ սպանաւ :

2. Այս օրինակ ընտանեկան խնամատարութեան առ ժամանակօքն Պղուտարքեայ՝ ասէ ոմն յարգել հեղինակաց՝ շատ մեծամեծս ընծայէ նմա, և յերկան եւ կու-ցուցանէ մեզ զընդարձակութիւն հմտութեանց զօրանն :

3. Զայս Տիմոթէոս, Գրիգորիոս և Եւսեբիոս կոչեն՝ Սատուրնինոս :

ՑՈՒՑԱԿ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐՈՅՍ

